Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ռուս գրականություն, Վեպ, Արձակ

13+

Թարգմանեց Արփիկ Վարդապետյան

Իվան Գոնչարով

Սովորական պատմություն

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Մի անգամ ամռանը, Գրաչի գյուղում, ոչ հարուստ կալվածատիրուհի Աննա Պավլովնա Ադուևայի տանը բոլորը վեր կացան ծեգին, սկսած տանտիրուհուց մինչև շղթայակապ Բարբոս շունը:

Միայն Աննա Պավլովնայի միակ որդին՝ Ալեքսանդր Ֆյոդորիչը, քնել էր ինչպես վայել է քնել քսանամյա պատանուն, դյուցազնական քնով, իսկ տանը բոլորը ոտ ու ձեռ էին ընկել ու իրար անցել: Բայց ման էին գալիս ոտների ծայրերին և խոսում էին շշուկով, որպեսզի չարթնացնեն երիտասարդ տիրոջը: Հենց որ մեկը մի թխկոց էր հանում, սկսում էր բարձրաձայն խոսել, իսկույն, կատաղած առյուծի պես, հայտնվում էր Աննա Պավլովնան և անզգույշին պատժում խիստ նկատողությամբ, վիրավորական մականունով, երբեմն էլ, նայած իր ցասմանն ու ուժին՝ նաև հարվածով:

Խոհանոցում եփում էին երեք հոգի, կարծես տասը հոգու համար, թեև տերերի ամբողջ ընտանիքը բաղկացած էր ընդամենը Աննա Պավլովնայից և Ալեքսանդր Ֆյոդորիչից: Սարայում

սրբում ու յուղում էին սայլակառքը: Բոլորն զբաղված էին և աշխատում էին քրտնամխած: Միայն Բարբոսը ոչինչ չէր անում, բայց նա էլ յուրովի մասնակցում էր ընդհանուր շարժմանը: Երբ նրա մոտով անցնում էր լակեյը, կառապանը կամ վզզում էր սպասուհին, նա թափահարում էր պոչը և ուշադիր հոտոտում մոտով անցնողին, իսկ աչքերով, կարծես, հարցնում էր. վերջապես կասե՞ն ինձ, թե այսօր ինչ եռուզեռ է մեզ մոտ:

Իսկ եռուզեռը նրանից էր, որ Աննա Պավլովնան որդուն Պետերբուրգ էր ուղարկում ծառայության, կամ, ինչպես ասում էր Աննա Պավլովնան, մարդկանց տեսնելու և իրեն ցույց տալու: Նրա համար սպանի՛չ օր: Դրանից է, որ նա այդպես տխուր ու հուզված է: Հաճախ, հոգսերով տարված, նա բացում է բերանը, որ մի բան հրամայի, և հանկարծ խոսքի կեսին կանգ է առնում, ձայնը նրան դավաճանում է, նա շուռ է գալիս և սրբում արցունքը, եթե հասցնում է, իսկ եթե չի հասցնում, ապա կաթեցնում է ճամպրուկի մեջ, որտեղ ինքն է դասավորում Սաշենկայի սպիտակեղենը: Արցունքները վաղուց եռում են նրա սրտում, նրանք բարձրացել են կոկորդը, ճնշում են կուրծքը և պատրաստ են գետի պես հոսել, բայց նա կարծես դրանք պահում էր հրաժեշտի պահի համար և երբեմնակի ծախսում էր մեկ-մեկ կաթիլ:

Միայն նա չէր, որ ողբում էր անջատումը. խիստ վշտացած էր նաև Սաշենկայի սենեկապան Եվսեյը: Նա տիրոջ հետ մեկնում էր Պետերբուրգ, թողնում էր տան ամենատաքուկ անկյունը, վառարանի պառկելատեղի հետև, Ագրաֆենայի սենյակում, Ագրաֆենայի, որը Աննա Պավլովնայի տնտեսության մեջ առաջին մինիստրն էր և, որ ամենից կարևորն էր Եվսեյի համար, նրա առաջին մառանապետուհին:

Պառկելատեղի հետևում ընդամենը այնքան տեղ կար, որ դրվեր երկու աթոռ ու մի սեղան, որի վրա պատրաստում էին թեյ, սուրճ, խորտիկներ: Եվսեյը հաստատուն կերպով գրավում էր և տեղը վառարանի հետևում, և Ագրաֆենայի սրտում: Մյուս աթոռին բազմում էր Ագրաֆենան ինքը:

Ագրաֆենայի ու Եվսեյի պատմությունը արդեն հին պատմություն էր այդ տանը: Դրա մասին, ինչպես աշխարհում ամեն բանի մասին, խոսեցին, երկուսին էլ չարախոսեցին, իսկ հետո, ինչպես և ամեն բանի մասին, լռեցին: Տիրուհին ինքը վարժվել էր նրանց միասին տեսնել, և նրանք ամբողջ տասը տարի երանության մեջ էին: Արդյոք շատե՞ր իրենց կյանքի տարիների հանրագումարում կկարողանան հաշվել տասը երջանիկ տարի: Բայց փոխարենը՝ ահա և հասավ կորուսման ակնթարթը: Մնաս բարո՛վ, տաքուկ անկյուն, մնաս բարո՛վ Ագրաֆենա Իվանովնա, մնաս բարո՛վ թղթախաղ, և սուրճ, և օղի, և մրգօղի, ամեն ինչ, մնաք բարո՛վ:

Եվսեյը լուռ նստել էր և խիստ հոգոց էր հանում: Ագրաֆենան, խոժոռված, ոտ ու ձեռ էր ընկել, տնտեսությամբ էր զբաղված: Նրա վիշտը արտահայտվում էր յուրովի: Նա այդ օրը կատաղած լցրեց թեյը և փոխանակ թունդ թեյի առաջին գավաթը, ըստ սովորության, մատուցեր տանտիրուհուն, դուրս թափեց, այսինքն՝ «ոչ ոքի բաժին մի ընկնի», և քաջաբար դիմացավ նկատողությանը: Նրա սուրճը շատ եփելուց փչացել էր՝ սերը խանձրահամել, գավաթները ձեռքից ցած էին ընկնում: Նա մատուցարանը ոչ թե դնում էր սեղանին, այլ շրմփացնում, պահարաններն ու դռները ոչ թե բացում էր, այլ շրխկացնում: Բայց նա ոչ թե լալիս էր, այլ բարկանում ամեն ինչի և ամենքի վրա: Ասենք, դա ընդհանրապես նրա բնավորության գլխավոր գիծն էր: Նա երբեք գոհ չէր լինում, ոչ մի բան նրա սրտով չէր. միշտ փնթփնթում էր, գանգատվում: Բայց իր համար այդ ճակատագրական րոպեին նրա բնավորությունը դրսևորվեց ողջ պաթոսով: Ամենից ավելի, կարծես, նա բարկանում էր Եվսեյի վրա:

— Ագրաֆենա Իվա՛նովնա,— ասաց Եվսեյը խղճալի ու քնքուշ, որ այնքան էլ չէր սազում նրա երկար ու ամուր կազմվածքին:

— Ի՞նչ ես փռվել նստել էստեղ, բացբերա՛ն,— պատասխանեց նա, կարծես Եվսեյը առաջին անգամն էր այստեղ նստում:— Ճամփա՛ տուր, պետք է սրբիչը վերցնեմ:

— Է՛խ, Ագրաֆենա Իվանովնա…— կրկնեց նա ծուլորեն, հոգոց հանելով և աթոռից վեր կացավ ու անմիջապես նորից նստեց, հենց որ Ագրաֆենան սրբիչը վերցրեց:

— Մի գլուխ թնգթնգում է: Կպե՛լ է խելառը: Էս ի՛նչ պատիժ է, տեր աստված: Պոկ էլ չի գալի՛ս:

Եվ նա գդալը զրնգոցով գցեց թասի մեջ:

— Ագրաֆենա,— հանկարծ հնչեց մյուս սենյակից:— Դու երևի ցնդել ես: Չգիտե՞ս, որ Սաշենկան քնած է: Կռվեցի՞ք, ինչ է, սիրածիդ հետ հրաժեշտի ժամին:

— Մարդ քեզ համար տեղից պիտի չշարժվի, մեռածի պես պիտի նստի,— օձի պես ֆշշաց Ագրաֆենան, երկու ձեռքով սրբելով գավաթը, կարծես ուզում էր փշրել, կտոր-կտոր անել:

— Մնաք բարով, մնաք բարո՛վ,— ահագնահառաչ ասաց Եվսեյը:— Վերջի՜ն օրն է, Ագրաֆենա Իվանովնա:

— Եվ փառք աստծու: Թող սատանաները ձեզ տանեն էստեղից. տեղներս կլայնանա: Դե, ճամփա տուր, ոտք դնելու տեղ չկա. ո՛նց է մեկնել ոտքերը:

Եվսեյն այն է՝ ուզում էր ձեռքը դնել Ագրաֆենայի ուսին, բայց սա այնպե՛ս պատասխանեց նրան: Եվսեյը նորից հոգոց հանեց, բայց տեղից չէր շարժվում. և իզուր էլ կլիներ շարժվելը. Ագրաֆենան այդ չէր ուզում: Եվսեյն այդ գիտեր և չէր շփոթվում:

— Տեսնես ո՛վ է նստելու իմ տեղը,— ասաց նա, շարունակ հառաչելով:

— Չա՛րքը,— կտրուկ պատասխանեց Ագրաֆենան:

— Տա աստված: Մենակ թե Պրոշկան չլինի: Իսկ ո՞վ պիտի ձեզ հետ դուրակ */Թղթախաղի տեսակ:/* խաղա:

— Ասենք թե հենց Պրոշկան, հետո ի՞նչ,— չարությամբ նկատեց Ագրաֆենան:

Եվսեյը վեր կացավ:

— Չխաղաք Պրոշկայի հետ, աստված վկա, չխաղաք,— ասաց նա անհանգստությամբ և գրեթե սպառնալիքով:

— Իսկ ո՞վ է ինձ արգելողը: Չլինի՞ թե դու, դարձվո՛ր:

— Մե՛րս, Ագրաֆե՛նա Իվանովնա,— սկսեց Եվսեյն աղաչական ձայնով, փարվելով նրա, ես կասեի, իրանին, եթե նա նվազագույն չափով իրան հիշեցնող մի բան ունենար:

Ագրաֆենան փարումին պատասխանեց կրծքին հասցրած արմունկի հարվածով:

— Մե՛րս, Ագրա՛ֆենա Իվանովնա,— կրկնեց Եվսեյը:— Պրոշկան ձեզ կսիրի՞ այնպես, ինչպես ես: Մտիկ արեք, թե ինչ երես առածն է. կին չի լինի, որ ձեռքից բաց թողնի: Իսկ ե՛ս: Է-Է՛խ: Դուք ոնց որ աչքիս լույսը լինեք: Թե որ տիրուհու կամքը չլինե՛ր... Է՛խ...

Նա տնքաց ու ձեռքը թափ տվեց: Ագրաֆենան չդիմացավ.

վերջապես նրա վիշտն էլ արտահայտվեց արցունքներով:

— Վազ չե՞ս գալու, անիծված,— ասում էր նա լաց լինելով:— Ի՞նչ ես դուրս տալիս, ցնդած: Պրոշկայի հետ կկապվե՞մ: Ինքդ էլ չե՞ս տեսնում, որ նրանից մի խելոք խոսք չես լսի: Մենակ էն գիտի, որ թաթերն է բանեցնում...

— Ձեր վրա է՞լ է թաթերը բանեցրել: Ախ, սրիկա: Իսկի չեք է՞լ ասել: Ես նրա...

— Բանեցրած լիներ, կտեսնե՛ր: Սպասավորների մեջ բացի ինձնից, ուրիշ կանացի սեռ չկա՞: Պրոշկայի՜ հետ պիտի կապվեի: Տես թե ինչ հնարեց: Նրա կողքին նստելուց էլ մարդու սիրտն է խառնում: Խոզի մեկն է: Նա, մեկ էլ տեսար, առիթ է փնտրում մեկին խփելու կամ որևէ բան լափելու տերերի բաժնից. ձեռքիդ տակից էնպես կթռցնի, որ չես էլ տեսնի:

— Թե որ էդպիսի դեպք լինի, Ագրաֆենա Իվանովնա,— չէ՞ որ սատանան զորեղ է,— ավելի լավ է Գրիշկային նստեցնեք էստեղ. ինչքան չլինի նա հանդարտ տղա է, աշխատող, ծաղր անող չէ...

— Բա՜ն ասացիր,— հարձակվեց նրա վրա Ագրաֆենան:— Ի՞նչ ես ինձ ամենքի վզին փաթաթում: Ես հո մի ինչ-որ... Գնա կորի՛ էստեղից: Ձեզպեսները շատ են, էդ էր պակաս, որ ամենքիդ վզից կախվեի. էդ տեսակներից չեմ: Երևի մեղքերիս համար սատանան խաբեց, մենակ քեզ հետ խճճեց, և էդ էլ զղջում եմ... Թե չէ բա՜ն հնարեցիր:

— Աստված ձեզ հատուցի ձեր առաքինության համար: Ոնց որ քարն ընկավ ուսերիցս,— բացականչեց Եվսեյը:

— Ուրախացա՛վ,— նորից գազանի պես բղավեց Ագրաֆենան:— Բա՜ն գտավ ուրախանալու, ուրախացի՛ր:

Եվ նրա շրթունքները զայրույթից գունատվեցին: Երկուսն էլ լռեցին:

— Ագրաֆենա Իվանովնա,— երկչոտ ասաց Եվսեյը քիչ անց:

— Է, ի՞նչ կա:

— Ախր մոռացել էի. այսօր առավոտվանից բերանս պատառ չեմ դրել:

— Գործիդ անունն ի՞նչ էր:

— Դարդից, մե՛րս:

Ագրաֆենան պահարանի ցածի դարակից, գլուխ շաքարի հետևից դուրս բերեց մի բաժակ օղի և երկու մեծ կտոր հաց ու ապուխտ: Այդ բոլորը նրա հոգածու ձեռքով վաղուց էր պատրաստված Եվսեյի համար: Նա ուտելիքը Եվսեյի առաջը նետեց այնպես, ինչպես չեն նետում նույնիսկ շան առաջ: Մի կտորն ընկավ հատակին:

— Առ, կե՛ր, խեղդվիր: Օ՜, գրողը... դե կամաց, չփչփոցդ տնով մեկ ես գցել:

Նա Եվսեյից շրջվեց կարծես ատելության արտահայտությամբ, իսկ վերջինս սկսեց դանդաղորեն ուտել, աչքի պոչով նայելով Ագրաֆենային և մի ձեռքով բերանը ծածկած:

Մինչ այդ դարպասում հայտնվեց կառապանը՝ եռաձի կառքը լծած: Քեղաձիու գլխին կամար էր գցած: Լծաթամբիկին կապած բոժոժը խուլ ու անազատ շարժում էր լեզվակը, ինչպես կապկապած և պահակատուն նետած հարբածը: Կառապանը ձիերին կապեց սարայի ծածկի տակ, գդակը հանեց, այնտեղից վերցրեց կեղտոտ սրբիչը և սրբեց երեսի քրտինքը: Աննա Պավլովնան տեսնելով նրան լուսամուտից, գունատվեց: Նրա ոտները թուլացան և ձեռները կախ ընկան, թեև նա սպասում էր դրան: Ուշքի գալով, նա կանչեց Ագրաֆենային:

— Ոտներիդ ծայրին, կամացուկ, մի գնա՛ տես, թե Սաշենկան քնա՞ծ է,— ասաց նա:— Նա, իմ աղունակը, հավատաս, վերջին օրն էլ քնով կանցնի: Ժամանակ չի մնա, որ երեսին նայեմ, նայելուց կշտանամ: Բայց չէ, դու չես կարող: Մեկ էլ տեսար, կովի պես ներս կընկնես: Լավ է՝ ես ինքս...

Եվ գնաց:

— Գնա դո՛ւ, ինքը կով չի՛,— փնթփնթաց Ագրաֆենան, իր տեղը վերադառնալով:— Տեսա՞ր դու, կո՛վ գտավ: Շատ ունե՞ս էսպիսի կովեր:

Աննա Պավլովնային ընդառաջ եկավ ինքը Ալեքսանդր Ֆյոդորիչը, ծաղկուն տարիքի, առողջությամբ և ուժով լեցուն խարտյաշ մի երիտասարդ: Նա ուրախ բարևեց մորը, բայց, հանկարծ տեսնելով ճամպրուկն ու կապոցները, շփոթվեց, լուռ հեռացավ դեպի լուսամուտը և սկսեց մատով գծել ապակու վրա: Մի որպե անց նա արդեն նորից խոսում էր մոր հետ և, անհոգ, նույնիսկ զվարթ նայում ճանապարհի պատրաստություններին:

— Այդ ի՞նչ է, բարեկամս, այդպես քնով անցար:— Ասաց Աննա Պավլովնան,— նույնիսկ երեսիկդ ուռել է: Արի մի աչքերդ ու թշերդ վարդաջրով սրբեմ:

— Ոչ, մայրիկ, պետք չէ:

— Ի՞նչ ես ուզում նախաճաշելու. առաջ թե՞յ թե սուրճ: Ես պատվիրել եմ նաև ծեծած միս սերուցքով՝ տապակած, ի՞նչ ես ուզում:

— Միևնույն է, մայրիկ:

Աննա Պավլովնան շարունակում էր սպիտակեղենը դարսել, հետո կանգ առավ և որդուն նայեց թախիծով:

— Սա՛շա...— ասաց նա որոշ ժամանակ անց:

— Ի՞նչ եք կամենում, մայրիկ:

Մայրը հապաղում էր խոսել, կարծես ինչ-որ բանից վախենում էր:

— Ո՞ւր ես գնում, բարեկամս, ինչո՞ւ,— վերջապես հարցրեց նա ցածրաձայն:

— Ինչպե՞ս թե ուր, մայրիկ: Պետերբուրգ, նրա համար... նրա համար, որ...

— Լսիր, Սաշա,— ասաց մայրը հուզված, ձեռքը դնելով որդու ուսին, ըստ երևույթին մտադիր լինելով վերջին փորձն անելու,— դեռ ժամանակը չի անցել, մտածիր, մնա:

— Մնա՛լ: Ինչպե՞ս կարելի է: Ախր արդեն... սպիտակեղենս էլ դարսած է,— ասաց նա, չիմանալով, թե ինչ հնարի:

— Սպիտակեղենդ դարսա՛ծ է: Դե ահա... ահա.. ահա... տե՛ս էլ դարսած չէ:

Նա երեք շարժումով ճամպրուկից հանեց ամեն ինչ:

— Ինչպե՞ս կլինի, մայրիկ: Պատրաստվեցի՝ ու հանկարծ նորի՛ց: Ի՞նչ կասեն...

Նա տխրեց:

— Ես ոչ այնքան ինձ, որքան հենց քեզ համար եմ համոզում: Ինչո՞ւ ես գնում: Երջանկություն որոնելո՞ւ: Բայց մի՞թե այստեղ վատ է քեզ համար: Մի՞թե մայրդ օրնիբուն չի մտածում, թե ինչպես գոհացնի քո բոլոր քմահաճույքները: Իհարկե, դու այն տարիքին ես, որ միայն մայրական սիրաշահումները երջանկություն չեն կազմում. ես այդ չեմ էլ պահանջում: Հապա, նայիր շուրջդ. բոլորը աչքերիդ մեջ են նայում: Իսկ Մարիա Կարպովնայի աղջի՞կը՝ Սոնյուշկան: Ի՜նչ... կարմրեցի՞ր: Ինչպե՞ս է, նա, աղավնյակս — աստված նրան պահի — քեզ սիրում, արդեն երեք գիշեր է չի քնում:

— Ի՜նչ եք ասում, մայրիկ: Նա այնպես...

— Հա, հա, կարծես թե ես չեմ տեսնում... Ախ, հանկարծ չմոռանամ. նա վերցրել է քո թաշկինակները շրջակարելու — «Ես — ասում է,— ինքս, ինքս, ոչ ոքի չեմ տա, նշան էլ կանեմ»,— տեսնո՞ւմ ես, էլ ի՞նչ ես ուզում: Մնա:

Որդին լսում էր լուռ, գլխահակ և խաղում էր իր խալաթի ծոպերի հետ:

— Ի՞նչ կգտնես Պետերբուրգում,— շարունակեց մայրը:— Կարծում ես այնտեղ այնպիսի կյանք կունենա՞ս, ինչպես այստեղ: Է՜, բարեկամս: Աստված գիտի, թե ինչե՜ր կտեսնես, ի՜նչ կքաշես. և՛ ցուրտ, և՛ քաղց, և՛ կարի՜ք, ամեն ինչ կտեսնես: Չար մարդիկ ամեն տեղ շատ են, իսկ բարի մարդկանց շուտ չես գտնի: Իսկ հարգանքը՝ թե գյուղում, թե մայրաքաղաքում նույն հարգանքն է: Պետերբուրգի կյանքը որ չտեսնես, այստեղ ապրելով քեզ կթվա, թե աշխարհում դու առաջինն ես. և ամեն բանում էլ այդպես է, սիրելիս: Ախր դու դաստիարակված ես, և ճարպիկն ես, և լավը: Ինձ, պառավիս, միայն ուրախանալ կմնար, վրադ նայելով: Կամուսնանայիր, աստված քեզ բալիկներ կտար, իսկ ես կխնամեի նրանց, և կապրեիր անդարդ, անհոգս, և կյանքդ կանցկացնեիր խաղաղ, հանգիստ, ոչ ոքի չէիր նախանձի, իսկ այնտեղ գուցե և լավ չի լինի, գուցե և հիշես իմ խոսքերը... Մնա՛, Սաշենկա, հը՞:

Որդին հազաց, հոգոց հանեց, բայց ոչ մի խոսք չասաց:

— Հապա մի այստե՛ղ նայիր,— շարունակեց մայրը, բացելով պատշգամբ տանող դուռը,— չե՞ս ափսոսում, որ լքելու ես մի այսպիսի անկյուն:

Պատշգամբից սենյակ փչեց թարմություն: Տնից բավական հեռուն տարածվում էր ծեր լորենիների, խիտ մասրենու, թխենու և յասամանի թփերով հարուստ այգին: Ծառերի միջև խայտագունում էին ծաղիկները, զանազան կողմեր էին սահում արահետներ, ավելի հեռուն մեղմիկ ափերն էր կոծում լիճը, որը մի կողմում ողողված էր առավոտյան արևի ոսկի ճառագայթներով, հայելու պես ողորկ էր. մյուս կողմում՝ մուգ կապույտ էր ինչպես երկինքը, որն արտացոլվում էր նրա մեջ, և թեթևակի ծածկված էր կոհակներով: Իսկ դենը արտերն էին ծփացող գույնզգույն հացաբույսերով, որ ամֆիթատրոնի ձևով հարում էին մութ անտառին:

Աննա Պավլովնան մի ձեռքը աչքերին հովանի անելով, մյուս ձեռքով որդուն հերթով ցույց էր տալիս ամեն մի առարկան:

— Մի տե՛ս,— ասում էր նա,— ի՜նչ գեղեցիկ է զուգել աստված մեր դաշտերը: Ահա այն արտերից միայն հաճար 500 չետվերտ կհավաքենք. տես, ցորեն էլ կա, հնդկացորեն էլ. միայն թե հնդկացորենը այս տարի անցյալ տարվանը չէ, կարծես թե վատը կլինի: Բա անտա՛ռը, անտառը ոնց է աճել: Մարդ մտածում է, թե որքան մեծ է աստծու իմաստությունը: Մեր անտառամասից պակաս-պակաս մի հազար ռուբլու փայտ կծախենք: Իսկ որսը, որսը ինչքան է: Եվ ախր այդ բոլորը քոնն է, սիրելի որդյակս. ես միայն քո գործակատարն եմ: Մի լճի՜ն նայիր. ի՜նչ հրաշալիք է: Ճշմարիտ երկնայի՜ն: Ձկները վխտում են. միայն թառափն ենք գնում, իսկ աքերինները, ծածանները, պերկեսները զեռում են, համ մեզ է հերիքում, համ սպասավորներին: Հրեն քո կովերն ու ձիերն են արածում: Այստեղ մենակ դու ես ամեն ինչի տերը, իսկ այնտեղ, գուցե ամեն մեկը սկսի գլխիդ իշխանություն բանեցնել: Եվ դու ուզում ես փախչել այս լիությունից, դեռ հայտնի չէ, թե ուր, գուցե հորձանուտ, տեր քեզ մեղա... Մնա:

Որդին լուռ էր:

— Դու չես լսում,— ասաց մայրը:— Այդ ո՞ւր ես հառել հայացքդ այդպես:

Ալեքսանդրը լուռ ու մտախոհ ձեռքով ցույց տվեց հեռուն: Աննա Պավլովնան նայեց, և նրա դեմքն այլայլվեց: Այնտեղ, դաշտերի մեջ օձի պես գալարվում և անտառի հետևն էր փախչում ճանապարհը դեպի ավետյաց երկիր, դեպի Պետերբուրգ: Աննա Պավլովնան մի քանի րոպե լուռ էր, որպեսզի մտքերը ժողովեր:

— Ուրեմն, ահա թե ինչ,— վերջապես ասաց նա վհատ:— Դե, բարեկամս, աստված քեզ հետ: Գնա, եթե այդքան ուզում ես, ես չեմ պահում: Գոնե չես ասի, որ մայրդ թունավորում է երիտասարդությունդ ու կյանքդ:

Խե՜ղճ մայր: Ահա և վարձատրությունը քո սիրո համար: Մի՞թե այդ էիր սպասում դու: Բանն էլ այն է, որ մայրերը վարձատրություն չեն սպասում: Նրանք սիրում են անշահախնդիր և անքնին: Եթե դուք մեծ եք, հռչակավոր, գեղեցիկ, հպարտ, ձեր անունը բերնեբերան է անցնում, ձեր գործերը թնդում են աշխարհում, պառավ մոր գլուխը ցնցվում է ուրախությունից, նա լալիս է, ծիծաղում և աղոթում երկար ու ջերմեռանդ: Իսկ որդյակը մեծ մասամբ չի էլ մտածում իր փառքը կիսել ծնողի հետ: Եթե դուք հոգով ու մտքով աղքատ եք, եթե բնությունը այլանդակության խարան է դրել ձեր վրա, տկարության խայթն է մաշում ձեր սիրտը կամ մարմինը, վերջապես, ձեզ վանում են մարդիկ իրենցից, և դուք տեղ չունեք նրանց մեջ՝ առավել ևս մեծ տեղ ունեք մոր սրտում: Նա ավելի ամուր է սեղմում կրծքին իր այլանդակ, ձախողակ զավակին և աղոթում է ավելի երկար ու ջերմեռանդ:

Ինչպե՞ս անզգա անվանենք Ալեքսանդրին, որ վճռեց անջատվել: Նա քսան տարեկան էր: Կյանքը դեռ խանձարուրից ժպտում էր նրան, մայրը գուրգուրում ու երես էր տալիս նրան, ինչպես երես են տալիս միակ զավակին. դայակը միշտ երգում էր նրա օրորոցի վրա, որ նա ոսկու մեջ կլվլվա և չի իմանա ինչ է վիշտը. պրոֆեսորները պնդում էին, թե նա շատ առաջ կգնա, իսկ երբ տուն

վերադարձավ, նրան ժպտաց հարևանուհու աղջիկը: Նույնիսկ ծեր Վասկա կատուն էլ, կարծես, դեպի նա ավելի քնքուշ էր, քան դեպի որևէ մեկը տան մեջ:

Վշտի, արցունքների, դժբախտությունների մասին նա գիտեր միայն ուրիշների ասածից, ինչպես գիտենում են որևէ վարակի մասին, որը չի դրսևորվել, այլ խուլ թաքնված է ինչ-որ տեղ ժողովրդի մեջ: Դրանից է, որ ապագան նրան պատկերանում էր պայծառ լույսի մեջ: Նրան մի բան ձգում էր դեպի հեռուն, բայց թե ինչը՝ նա չգիտեր: Այնտեղ առկայծում էին հրապուրիչ ուրուներ, բայց նա չէր կարող պարզ տեսնել դրանք. լսվում էին խառը հնչյուններ՝ մերթ փառքի ձայնը, մերթ սիրո. այդ բոլորը նրան գցում էր քաղցր սարսուռի մեջ:

Շուտով նրա համար անձուկ դարձավ տան աշխարհը: Բնությունը, մոր փաղաքշանքները, դայակի և բոլոր սպասավորների ակնածանքը, փափուկ անկողինը, համեղ խորտիկները և Վասկայի մռլտոցը՝ այդ բոլոր բարիքները, որոնք այնպես թանկ են գնահատվում կյանքի մայրամուտին, նա ուրախությամբ փոխում էր գրավիչ ու խորհրդավոր հմայքով լեցուն անհայտության հետ: Նույնիսկ Սոֆիայի սերը, առաջին, քնքուշ ու վարդագույն սերը չէր պահում նրան: Նրա ինչի՞ն էր այդ սերը: Նա երազում էր վիթխարի կրքի մասին, որը չի ճանաչում ոչ մի պատնեշ և շռնդալի սխրանքներ է գործում: Սոֆիային սիրում էր առայժմ փոքր սիրով, մեծ սիրո սպասումով: Նա երազում էր նաև այն օգուտի մասին, որ բերելու է հայրենիքին: Նա ջանասիրությամբ և շատ բան էր սովորել: Նրա վկայականի մեջ ասված էր, որ գիտի մի դյուժին գիտություններ և կես դյուժին հին ու նոր լեզուներ: Իսկ ամենից առավել նա երազում էր գրողի հռչակի մասին: Նրա առաջ փռված էին բազմաթիվ ճանապարհներ, և մեկը մյուսից լավ էր թվում: Նա չգիտեր, թե դեպի որը նետվի: Աչքից թաքուն էր մնում միայն ուղիղ ճանապարհը. եթե դա նկատեր, գուցե այդ դեպքում չէր էլ մեկնի:

Ախր ինչպե՞ս մնար: Մայրն ուզում էր՝ դա նորից ուրիշ և շատ բնական բան է: Մոր սրտում մարել էին բոլոր զգացմունքները, բացի մեկից՝ դեպի որդին տածած սիրուց, և սիրտը ջերմորեն կառչեց այդ վերջինից: Եթե դա էլ չլիներ, հապա ի՞նչ էր անելու նա: Մնում էր մեռնել: Վաղուց արդեն ապացուցված է, որ կնոջ սիրտը չի ապրում առանց սիրո:

Ալեքսանդրը երես առած էր, բայց ոչ շփացած ընտանեկան կյանքից: Բնությունն այնքան լավ էր ստեղծել նրան, որ մոր սերը և շրջապատի երկրպագումը ներգործեցին միայն նրա լավ կողմերի վրա, օրինակ, նրա մեջ վաղաժամ զարգացրին սիրո հակում, անտեղի դյուրահավատություն դեպի ամեն ինչ: Թերևս, այդ նույն բանն էր, որ նրա մեջ արթնացրեց ինքնասիրություն. բայց չէ՞ որ ինքնասիրությունը ինքնըստինքյան լոկ ձև է. ամեն ինչ կախված կլինի այն նյութից, որ կլցնես դրա մեջ:

Նրա համար ավելի մեծ դժբախտություն էր այն, որ իր ամբողջ քնքշությամբ հանդերձ, մայրը չէր կարող նրան տալ իսկական հայացք կյանքի նկատմամբ և նրան չէր նախապատրաստել պայքարելու այն բաների դեմ, ինչ սպասում էր նրան և սպասում է յուրաքանչյուրին կյանքում: Բայց դրա համար հարկավոր է վարպետ ձեռք, նուրբ խելք և գյուղական նեղ հորիզոնով չսահմանափակված մեծ փորձառության պաշար: Պետք էր նույնիսկ պակաս սիրել նրան, ամեն որպես չմտածել նրա փոխարեն, նրանից չհեռացնել ամեն մի հոգս և տհաճություն, չլացել ու չտառապել նրա փոխարեն նաև մանկության հասակում, որպեսզի նա ինքն զգար փոթորկի մոտենալը, տիրապետեր իր ուժերին և մտածեր իր ճակատագրի մասին, մի խոսքով, իմանար, որ ինքը տղամարդ է: Որտեղի՞ց կարող էր Աննա Պավլովնան հասկանալ այդ ամենը և, մանավանդ, կատարել: Ընթերցողը տեսավ, թե նա ինչպիսին է: Հաճո՞ է արդյոք մի քիչ էլ տեսնել:

Նա արդեն մոռացել էր որդու եսասիրությունը: Ալեքսանդր Ֆյոդորիչը նրան գտավ իր սպիտակեղենն ու զգեստները կրկին անգամ դարսելիս: Չարչարանքի ճանապարհի պատրաստության մեջ նա կարծես բոլորովին չէր հիշում վիշտը:

— Տես, Սաշենկա, լավ հիշիր, թե որտեղ ինչ եմ դնում,— ասում էր նա:— Ամենատակը՝ ճամպրուկի հատակին, սավաններն են, մի դյուժին: Մի տես, այդպե՞ս է գրանցված:

— Այդպես է, մայրիկ:

— Բոլորը քո նշանով են, տեսնո՞ւմ ես՝ Ա. Ա.: Էս բոլորը Սոնյուշկան՝ աղավնյակս է արել: Առանց նրա մեր հիմարները շուտ չէին ժաժ գա: Հիմա՞ ինչ է: Հա, բարձի երեսները: Մեկ, երկու, երեք, չորս, այսպես, ամբողջ դյուժինը այստեղ է: Ահա շապիկներդ, երեք դյուժին, ի՜նչ քաթան է, մարդու աչքը վրան է մնում: Սա հոլանդական է, ինքս եմ գնացել Վասիլի Վասիլևիչի ֆաբրիկան, նա ընտրեց եղած ամենաընտիր երեք թոփը: Ուրեմն, սիրելիս, ամեն անգամ ցուցակագրիր լվացարարուհուց ընդունելիս. բոլորը նոփ-նոր են: Այնտեղ այսպիսի շապիկները թափած չեն, հավատա, կարող են և փոխել. ախր կան այդպիսի սրիկա լվացարարուհիներ, որ աստծուց չեն վախենում: Գուլպաներդ քսաներկու զույգ են... Գիտե՞ս ինչ մտածեցի: Գուլպաներիցդ մեկի մեջ դնեմ փողով դրամապանակդ: Մինչև Պետերբուրգ քեզ փող պետք չի լինի, ուրեմն, աստվա՛ծ չանի, եթե հանկարծ դեպք լինի, քրքրեն էլ՝ չգտնեն: Հորեղբորդ հասցեագրած նամակներն էլ այդտեղ եմ դնում. ա՛յ թե կուրախանա, երևի: Ախր տասնյոթ տարի է, մի խոսք չենք փոխանակել, հանա՞ք բան է: Ահա գլխակապերը. ահա թաշկինակները, դեռ մի վեցյակ էլ Սոնյուշկայի մոտ է մնացել: Թաշկինակներդ չկորցնես, հոգիս. հրաշալի կիսաբատիստ է: Միխեևից եմ վերցրել երկուս ու քառորդով: Դե, սպիտակեղենդ պրծավ: Հիմա շորերդ... Բա Եվսե՞յն ուր է: Ինչո՞ւ չի նայում: Եվսե՛յ:

Եվսեյը ծուլորեն ներս մտավ:

— Ի՞նչ կբարեհաճեի՞ք,— հարցրեց նա է՛լ ավելի ծուլորեն:

— Ինչ կբարեհաճեի՞ք,— ցասկոտ ասաց Ադուևան:— Ինչո՞ւ չես նայում, թե ինչպես եմ դասավորում: Իսկ այնտեղ ճանապարհին հենց որ մի բան պետք լինի հանել, կսկսես ամեն ինչ տակն ու վրա անել: Չի կարող պոկ գալ սիրուհուց. մի գանձ էլ լինի՛: Օրը երկար է, կհասցնես: Դու այնտեղ է՞լ պարոնիդ մասին այսպես պիտի հոգաս: Տե՛ս, հա՛: Ահա նայիր, սա լավ ֆրակն է, տեսնո՞ւմ ես ուր եմ դնում: Իսկ դու, Սաշենկա, լավ պահիր սա, ամեն օր մի հագնի. ախր մահուդը տասնվեց ռուբլով ենք առել: Որ կարգին մարդու մոտ գնալու լինես, հագիր և ավելորդ տեղը մի նստիր ուր որ պատահի, ինչպես մորաքույրդ, որ կարծես դիտմամբ չի նստում ազատ աթոռին կամ բազմոցին, այլ աշխատում է թրմփալ այնտեղ, որտեղ գլխարկ կամ որևէ ուրիշ բան է դրած. անցած օրը մուրաբայով ափսեի վրա նստեց, այնպիսի խայտառակություն բացեց: Որ ավելի հասարակ մարդու մոտ գնալու լինես, ահա այս մասակա ֆրակդ հագիր: Հիմա՝ ժիլետներդ. մեկ, երկու, երեք, չորս: Երկու շալվար: Է՜: Շորերդ մի երեք տարվա կբավականացնի: Ա՜խ: Հոգնեցի: Հանա՞ք բան է, ամբողջ առավոտը չարչարվում եմ: Գնա, Եվսեյ: Սաշենկա, մի ուրիշ բանի մասին խոսենք: Հյուրերը կգան, ժամանակ չենք ունենա:

Նա նստեց բազմոցին և որդուն նստեցրեց կողքին:

— Դե, Սաշա,— ասաց նա քիչ լռելուց հետո,— դու հիմա գնում ես օտար երկիր...

— Պետերբուրգը ի՞նչ «օտար» երկիր է. ինչ եք ասում, մայրիկ:

— Սպասիր, սպասիր, լսիր, թե ինչ եմ ուզում ասել: Աստված գիտի, թե քեզ այնտեղ ինչ կպատահի, ինչ լավ ու վատ բան կտեսնես: Հուսամ, նա, իմ երկնավոր հայրը քեզ կամրապնդի. իսկ դու, բարեկամս, ամենից ավելի չմոռանաս նրան, միտդ պահիր, որ առանց հավատի փրկություն չկա ոչ մի տեղ և ոչնչում: Այնտեղ բարձր աստիճանների հասնես, ազնվականության մեջ մտնես,— չէ՞ որ մենք ուրիշներից վատ չենք. հայրդ ազնվական էր, մայոր,— համենայն դեպս հնազանդվիր ամենակալ աստծու առաջ. աղոթիր և երջանկության, և դժբախտության պահերիդ, այլ ոչ թե «ամպը չգոռա՝ գյուղացին երեսը խաչ չի հանի» առածի համաձայն: Մարդ կա, քանի հաջողության մեջ է, ոտքը եկեղեցի էլ չի դնում, իսկ երբ ճարը կտրվում է, գնում է ռուբլիանոց մոմեր վառելու և աղքատներին ողորմելու. դա մեծ մեղք է: Որ աղքատների մասին խոսք եղավ, ասեմ. դատարկ տեղը նրանց վրա փող մի ծախսի, շատ-շատ մի տուր: Ի՞նչ կարիք կա երես տալու: Նրանց չես զարմացնի: Նրանք կխմեն, դեռ վրադ էլ կծիծաղեն: Ես գիտեմ, որ դու փափուկ սիրտ ունես. մեկ էլ տեսար տասական կոպեկ էլ կտաս: Ոչ, դա պետք չէ, աստված կտա: Աստծու տաճարը կայցելե՞ս: Կիրակի օրերը պատարագի կգնա՞ս:

Նա հոգոց հանեց:

Ալեքսանդրը լուռ էր: Նա մտաբերեց, որ համալսարանում սովորելիս, երբ ապրում էր նահանգական քաղաքում, նա այնքան էլ ջանասիրությամբ չէր հաճախում եկեղեցի. իսկ գյուղում, միայն մոր սիրտը շահած լինելու համար էր նրան ուղեկցում պատարագի: Նա ամաչում էր խաբել: Ուստի լռում էր: Մայրը հասկացավ նրա լռությունը և նորից հառաչեց:

— Դե, ես քեզ չեմ ստիպում,— շարունակեց նա,— դու երիտասարդ ես. որտեղի՞ց պիտի այնքան ջերմեռանդ լինես դեպի աստծո եկեղեցին, ինչպես մենք՝ ծերերս: Ով գիտե, դեռ պաշտոնդ էլ կխանգարի կամ երկար կնստես լավ մարդկանց շրջանում և քնով կանցնես: Աստված կխղճա քո ջահելությանը: Դարդ մի անի. դու մայր ունես: Նա քնով չի անցնի: Քանի դեռ իմ մեջ կմնա թեկուզ արյան մի կաթիլ, քանի աչքերումս արցունքը չի չորացել և աստված համբերում է մեղքերիս, ես սողալով կհասնեմ, եթե քայլելու ուժ չունենամ, մինչև եկեղեցու շեմքը. վերջին շունչս կտամ, արցունքներիս վերջին կաթիլը կթափեմ քեզ՝ իմ բարեկամի համար: Քեզ համար կաղերսեմ և առողջություն, և աստիճաններ, և խաչեր, և երկնավոր ու երկրային բարիքներ: Մի՞թե նա, բարեգութ հայրը կանտեսի խեղճ պառավիս աղոթքը: Անձամբ ինձ ոչինչ պետք չէ: Թող ինձնից առնի ամեն ինչ, առողջությունս, կյանքս, թող աչքերս կուրացնի, միայն թե քեզ տա ամենայն ուրախություն, ամենայն երջանկություն ու բարիք...

Նա խոսքը կիսատ թողեց, արցունքները կաթեցին նրա աչքերից:

Ալեքսանդրը տեղից վեր թռավ:

— Մայրիկ...— ասաց նա:

— Դե նստիր, նստիր,— պատասխանեց մայրը, շտապ սրբելով արցունքը,— ինձ դեռ ասելու շատ բան է մնացել... էն ի՞նչ էի ուզում ասել: Մտիցս ելավ... Տես թե ինչ է դարձել հիշողությունս... Հա՛: Պասերը պահիր, բարեկամս. դա մե՛ծ բան է: Չորեքշաբթի և ուրբաթ օրերը. աստված կների. իսկ մեծ պասը՝ աստվա՛ծ փրկի: Հրեն Միխայլո Միխայլիչը խելացի մարդ էլ է համարվում, իսկ նրա մեջ ի՞նչ կա: Ուտիս լինի, թե չարչարանաց շաբաթ, նույն բանն է լափում: Նույնիսկ մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում: Նա աղքատներին էլ է օգնում, բայց մի՞թե տերն ընդունում է նրա ողորմությունը: Ասում են, մի անգամ մի ծերուկի կարմիր տասանոց է տվել, սա վերցրել է, բայց շուռ է եկել թքել: Բոլորը նրան գլուխ են տալիս և երեսին աստված գիտի, թե ինչեր են ասում, իսկ հետևից նրա անունը որ տալիս են, կարծես շեյթանի մասին են խոսում:

Ալեքսանդրը նրան լսում էր որոշ անհամբերությամբ և ժամանակ առ ժամանակ լուսամուտից նայում էր հեռավոր ճանապարհին:

Մայրը մի րոպե լռեց:

— Ամենից առավել՝ առողջությունդ պահպանիր,— շարունակեց նա:— Աստված մի արասցե, հենց որ ծանր հիվանդանաս, գրիր... Ես բոլոր ուժերս կհավաքեմ և կգամ: Այնտեղ ո՞վ պիտի քեզ խնամի: Դեռ կփորձեն կողոպտել հիվանդին: Գիշերը փողոցներում ման մի գա, գազանի տեսքով մարդկանցից հեռու կաց: Փողդ խնայիր... Օ՛խ, խնայիր սև օրվա համար: Խելացի ծախսիր: Էդ անիծված փողիցն է ամեն բարիք ու ամեն չարիք: Մի վատնիր, ավելորդ քմահաճույքների մի վարժվիր: Կանոնավոր կերպով ինձնից կստանաս տարեկան երկու հազար հինգ հարյուր ռուբլի: Երկու հազար հինգ հարյուր ռուբլին հանաք բան չէ: Ոչ մի շռայլություն չանես, ոչ մի էդպիսի բան, բայց ինչ էլ որ կարելի է, քեզ մի զրկիր. կուզենաս մի համով բան ուտել՝ ժլատություն չանես: Գինով չտարվես, օխ, նա մարդու առաջի՛ն թշնամին է: Մեկ էլ (նա այստեղ ձայնը ցածրացրեց) զգուշացիր կանանցից: Գիտեմ ես նրանց: Այնպիսի անամոթներ կան, որ իրենք կկախվեն վզով, հենց որ մի էսպիսին տեսնեն...

Նա սիրով նայեց որդուն:

— Բավական է, մայրիկ. գուցե նախաճաշեի՞,— ասաց որդին գրեթե բարկությամբ:

— Հիմա, հիմա... մի խոսք էլ...

— Ամուսնացած կանանց վրա աչք չդնես,— շտապեց նա խոսքը վերջացնել,— դա մեծ մեղք է: «Մերձավորիդ կնոջը մի ցանկար», ասված է աստվածաշնչում: Իսկ եթե մեկն ու մեկը հարսանիքի կնգտի՝ աստված չանի, մտքովդ էլ չանցկացնես: Նրանք պատրաստ են չանթել, հենց տեսնեն, որ մեկը փողով է ու սիրունիկը: Միայն եթե քո պետի կամ որևէ անվանի հարուստ մեծատան ախորժակը գրգռվի քեզ տեսնելով, և ուզենա իր աղջիկը քեզ տալ, էհ, այն ժամանակ կարելի է, միայն գրիր, ես մի կերպ քարշ գալով կհասնեմ, տեսնեմ, որ չխաբեն, վրադ չսաղացնեն մի պառաված օրիորդի կամ անպետքի մեկին: Ամենքն էլ կուզենան այսպիսի փեսացու ճանկել: Դե, եթե դու ինքդ սիրեցիր, և մի լավ աղջիկ պատահեց, էն ժամանակ,— այստեղ նա ավելի ևս ցածրացրեց ձայնը...— Սոնյուշկային կարելի է և թողնել: (Պառավը դեպի որդին տածած սիրուց պատրաստ էր հոգուն մեղք անել): Իսկապես, ի՞նչ է երազում Մարիա Կարպովնան. դու նրա աղջկա թայը չես: Գյուղացի աղջիկ է: Քեզնով դեռ նրա՛ նմաններն են հրապուրվելու:

— Սոֆիայի՞ն: Ոչ, մայրիկ, ես նրան երբեք չեմ մոռանա,— ասաց Ալեքսանդրը:

— Դե, դե, բարեկամս, հանգստացիր: Ես հենց այնպես: Ծառայիր վերջացրու, վերադարձիր այստեղ, և այն ժամանակ ինչ որ աստված տա. հարսնացուները չեն փախչի: Թե որ չես մոռանա, ուրեմն... է, իսկ...

Նա ինչ-որ բան էր ուզում ասել, բայց չէր վստահում, հետո թեքվեց նրա ականջին և կամացուկ հարցրեց.

— Իսկ մորդ... կհիշե՞ս:

— Այ թե մինչև ուր հասաք,— ընդհատեց որդին:— Հրամայեցեք շուտով մատուցել ինչ որ ունեք. ձվածե՞ղ է, ինչ է: Ձեզ մոռանա՛մ: Ինչպե՞ս կարողացաք մտածել: Աստված ինձ կպատժի...

— Վե՜րջ տուր, վե՜րջ տուր, Սաշա,— խոսեց մայրը շտապով,— ի՞նչ ես գլխիդ փորձանք բերում: Ո՛չ, ո՛չ: Ինչ էլ լինի, եթե պատահի, որ այդպիսի մեղք գործես, թող մենակ ես տուժեմ: Դու ջահել ես, նոր ես սկսում ապրել, և ընկերներ կունենաս, կամուսնանաս՝ ջահել կինդ կփոխարինի և՛ մորդ, և՛ ամեն ինչի... Ո՛չ: Թող աստված օրհնի քեզ, ինչպես ես եմ օրհնում:

Նա համբուրեց որդու ճակատը և դրանով եզրափակեց իր խրատները:

— Այս ինչո՞ւ ոչ ոք չի գալիս,— ասաց նա,— ոչ Մարիա Կարպովնան, ոչ Անտոն Իվանիչը, ոչ քահանան չեն գալիս: Կարծում եմ, պատարագն արդեն վերջացած կլինի: Ախ, ահա ինչ-որ մեկը գալիս է: Կարծես Անտոն Իվանիչն է... Նա է որ կա. անունը տուր՝ սուփրեն փռիր:

Ո՞վ չի ճանաչում Անտոն Իվանիչին: Դա թափառական հրեան է: Նա գոյություն է ունեցել միշտ և ամենուրեք, ամենահին ժամանակներից և երբեք չի վերացել: Նա ներկա է եղել և հունական, և հռոմեական խրախճանքներին, իհարկե, կերել է և պարարտ արջառը, որ մորթել է երջանիկ հայրը անառակ որդու վերադարձի առթիվ:

Մեզ մոտ, Ռուսաստանում, նա այլազան է լինում: Նա, որի մասին խոսվում է, այսպիսին էր. նա ուներ գրավ դրած և վերագրավ դրած մոտ քսան ճորտ. ապրում է գրեթե խրճիթում կամ արտաքուստ ամբարի նմանվող ինչ-որ տարօրինակ շենքում, մուտքը ինչ-որ հետևից է, գերանների վրայով, հենց ցանկապատին մոտիկ. բայց նա մոտ քսան տարի է, շարունակ պնդում է, որ գալ գարնանից կսկսի նոր տան կառուցումը: Տանը տնտեսություն չի վարում: Նրա ծանոթներից մեկը չկա, որ նրա տանը ճաշած, ընթրած լինի կամ մի բաժակ թեյ խմի, բայց նաև չկա մի մարդ, որի տանը ինքը այդ արած չլինի տարեկան մի հիսուն անգամ:

Առաջ Անտոն Իվանիչը հագնում էր լայն շալվար ու կազակին, հիմա լի օրերը հագնում է սերթուկ և պանտալոն, տոն օրերը՝ աստված գիտի, թե ինչ ձևի ֆրակ: Տեսքով նա չաղ է, որովհետև ոչ վիշտ ունի, ոչ հոգս, ոչ հուզմունքներ, թեև ցույց է տալիս, թե ամբողջ կյանքն անց է կացնում ուրիշի դարդ ու ցավերով, բայց չէ՞ որ հայտնի է, ուրիշի դարդ ու ցավերը մեզ չեն մաշում. դա միշտ այդպես է եղել:

Ըստ էության, Անտոն Իվանիչը ոչ ոքի պետք չէ, բայց առանց նրա տեղի չի ունենում ոչ մի ծես՝ ոչ հարսանիք, ոչ թաղում: Նա ներկա է բոլոր հրավերքներին ու երեկույթներին, բոլոր ընտանեկան խորհուրդներին. առանց նրա ոչ ոք մի քայլ չի անում: Գուցե կկարծեն, թե նա շատ օգտակար է, որ այնտեղ մի կարևոր հանձնարարություն կկատարի, այստեղ մի լավ խորհուրդ կտա, մի գործ գլուխ կբերի՝ ամենևին: Նրան ոչ ոք ոչ մի բան չի հանձնարարում. նա ոչինչ չգիտի, ոչինչ չի կարող՝ ոչ դատարաններում գործ տեսնել, ոչ միջնորդ լինել, ոչ հաշտարար, ուղղակի ոչինչ:

Բայց փոխարենը, օրինակ, նրան հանձնարարում են մոտով անցնելիս այսինչից բարև տանել այնինչին, ու նա անպայման կտանի և, ի դեպ, այդտեղ էլ կնախաճաշի, այսինչին տեղեկացնել, որ այնինչ թուղթը ստացված է, բայց թե ինչ թուղթ է, այդ նրան չեն ասում, այսինչ տեղը մի տակառիկ մեղր հանձնել կամ մի բուռ սերմ, պատվիրելով, որ չթափի ու շաղ չտա, հիշեցնել, թե երբ և ով է անվանակոչիկ: Անտոն Իվանիչին օգտագործում են նաև այնպիսի գործերում, որոնք անհարմար են համարում հանձնարարել սպասավորին: «Չի կարելի Պետրուշկային ուղարկել,— ասում են,— մեկ էլ տեսար՝ շփոթեց: Չէ, ավելի լավ է թող Անտոն Իվանիչը գնա»: Կամ՝ «Անհարմար է ծառային ուղարկել. այսինչը կամ այնինչը կվիրավորվի, այ, ավելի լավ է Անտոն Իվանիչին ուղարկենք»:

Ինչպես կզարմանային բոլորը, եթե հանկարծ նա չլիներ որևէ տեղ ճաշին կամ երեկույթին:

— Իսկ ո՞ւր է Անտոն Իվանիչը,— անպայման կհարցներ ամեն մեկը զարմանքով:— Ի՞նչ է պատահել նրան: Ախր ինչո՞ւ չկա:

Եվ ճաշը ճաշի նման չի լինում: Այդ դեպքում արդեն նույնիսկ որևէ մեկին պատվիրակ են ուղարկում նրա մոտ, իմանալու, թե ինչ է պատահել, արդյոք չի՞ հիվանդացել, մի տեղ չի՞ մեկնել: Իսկ եթե նա հիվանդ է, ապա նույնիսկ հարազատին չեն ուրախացնի այդպիսի հոգատարությամբ:

Անտոն Իվանիչը մոտեցավ Աննա Պավլովնայի ձեռքին:

— Բարև ձեզ, Աննա Պավլովնա, մերս, պատիվ ունեմ շնորհավորելու ձեր նորոնը:

— Ի՞նչ նորոն, Անտոն Իվանիչ,— հարցրեց Աննա Պավլովնան, ոտից գլուխ իրեն զննելով:

— Հապա դարպասի մոտի կամրջա՛կը: Երևի հենց նո՞ր եք սարքել: Ասում եմ, էս ի՞նչ է, տախտակները անիվների տակ պար չեն գալիս: Տեսնեմ՝ նոր է:

Նա ծանոթների հետ հանդիպելիս սովորաբար նրանց շնորհավորում է որևէ բանի համար. կամ պասի, կամ գարնան, կամ աշնան. եթե ձնհալից հետո սառնամանիք լինի, սառնամանիքն է շնորհավորում, սառնամանիքից հետո ձնհալ լինի՝ ձնհալը:

Այս անգամ ոչ մի նման բան չկար, բայց նա մի որևէ բան պիտի հնարեր:

— Ձեզ բարևում են Ալեքսանդրա Վասիլևնան, Մատրյոնա Միխայլովնան, Պյոտր Սերգեյիչը,— ասաց նա:

— Խոնարհաբար շնորհակալ եմ, Անտոն Իվանիչ: Նրանց մանկիկներն առո՞ղջ են:

— Փա՛ռք աստծու: Ես ձեզ աստծու օրհնությունն եմ բերում. իմ հետևից գալիս է տեր հայրը: Իսկ լսե՞լ եք, տիրուհի. մեր Սեմյոն Արխիպիչը...

— Ի՞նչ է պատահել,— վախեցած հարցրեց Աննա Պավլովնան:

— Ախր արևը ձեզ բաշխեց:

— Ի՞նչ եք ասում: Ե՞րբ:

— Երեկ առավոտյան: Ինձ նույն երեկոյան հայտնեցին. մի տղայի հետ լուր էին ուղարկել. ես էլ գնացի ու ամբողջ գիշերը չեմ քնել. բոլորը արցունք են թափում. պետք է և մխիթարել, և կարգադրություններ անել. այնտեղ բոլորը ջուրն էին քաշվել. արցունք ու արցունք. ես մենակ էի:

— Տեր աստված, տեր իմ աստվա՛ծ,— ասում էր Աննա Պավլովնան գլուխն օրորելով:— Ի՜նչ է մեր կյանքը: Ախր ինչպե՞ս կարող էր պատահել: Նա անցյալ շաբաթ հենց ձեզ հետ բարև էր ուղարկել:

— Այո, մե՛րս: Դե, նա վաղուց տկար էր, ծեր-ծերուկ. դեռ զարմանալի է, թե ինչպես մինչև հիմա ոտից չէր ընկել:

— Ի՜նչ ծերուկ: Նա միայն մի տարով էր մեծ իմ հանգուցյալից: Էհ, աստված հոգին լուսավորի,— երեսը խաչակնքելով ասաց Աննա Պավլովնան:— Մեղք է խեղճ Ֆեդոսյա Պետրովնան. երեխաները ձեռքին մնաց: Հանա՞ք բան է, հինգ երեխա և համարյա բոլորը աղջիկ: Իսկ թաղումը ե՞րբ է:

— Վաղը:

— Երևի ամեն մարդ իր դարդն ունի, Անտոն Իվանիչ. ահա ես որդուս եմ ճանապարհ դնում:

— Ի՜նչ արած, Աննա Պավլովնա, մենք բոլորս մարդ ենք: «Համբերի՛ր», ասված է սուրբ գրքում:

— Մի բարկանաք, որ անհանգստացրել եմ ձեզ, կանչել՝ վշտերս մեկտեղ փարատելու. դուք մեզ այնպես եք սիրում, ինչպես հարազատը:

— Է՜խ, մե՛րս, Աննա Պավլովնա: Ձեզ որ չսիրեմ, հապա ո՞ւմ պիտի սիրեմ: Շա՞տ ունենք ձեզ նման: Դուք ձեր արժեքը չգիտեք: Ինչքան ասես հոգս ու ցավ ունեմ. սեփական շինարարությունս էլ մտքիցս դուրս չի գալիս: Երեկ ամբողջ առավոտ գլուխ էի ցավացնում կապալառուի հետ, բայց ոչ մի կերպ համաձայնության չենք գալիս... Բայց, մտածում եմ, ինչպե՞ս չգնամ... մտածում եմ՝ ի՞նչ է անելու նա էնտեղ մենակ, առանց ինձ: Ձահել չի, ով գիտի, գլուխը կորցնի:

— Աստված ձեզ կյանք տա: Անտոն Իվանիչ, որ մեզ չեք մոռանում: Իսկապես էլ, ինքս ինձ կորցրել եմ. գլխումս այնպիսի դատարկություն է, ոչինչ չեմ տեսնում: Արցունքից կոկորդս բոլորովին չորացել է: Խնդրեմ մի բան ճաշակեք. հոգնել եք, համ էլ, երևի, սոված եք:

— Խոնարհաբար շնորհակալ եմ: Խոստովանանք լինի, Պյոտր Սերգեյիչի տան մոտով անցնելիս մի փոքրիկ թաս կոնծեցի և մի պատառ դրի բերանս: Բայց դա չի խանգարի: Տեր-հայրը հասնի, թող օրհնի: Դե, ահա նա մուտքի մոտ է:

Եկավ քահանան: Կառքով եկավ նաև Մարիա Կարպովնան դստեր՝ ժպտադեմ արտասվաթոր աչքերով մի չաղ ու կարմրաթուշ աղջկա հետ: Սոֆիայի աչքերն ու դեմքի ողջ արտահայտությունը պարզորոշ ասում էին. «Ես կսիրեմ պարզ, առանց հնարանքների, ամուսնուս կխնամեմ դայակի պես, ամեն ինչում կլսեմ նրան և երբեք նրանից ավելի խելոք չեմ երևա. և ինչպե՞ս էլ կարելի է ամուսնուց ավելի խելոք լինել: Դա մեղք է: Ձանասիրությամբ կզբաղվեմ տնտեսությամբ, կար կանեմ, մի վեց երեխա կբերեմ նրա համար. նրանց ինքս կկերակրեմ, կխնամեմ, կհագցնեմ ու կկարկատեմ»: Նրա այտերի չաղությունն ու թարմությունը և կրծքի փարթամությունը հաստատում էին երեխաների մասին տված խոստումը: Բայց աչքերի արտասուքը և տխուր ժպիտը այդ րոպեին նրան տալիս էին ոչ այդպիսի պրոզաիկ հետաքրքրություն:

Ամենից առաջ մաղթանք արին, ըստ որում, Անտոն Իվանիչը կանչեց բոլոր սպասավորներին, մոմ վառեց և քահանայի ձեռքից ընդունեց գիրքը, երբ նա դադարեց կարդալուց և հանձնեց տիրացուին, հետո օրհնած ջրից մի քիչ լցրեց մի սրվակի մեջ, պահեց գրպանում և ասաց. «Սա Ագաֆիա Նիկիտիշնային»: Սեղան նստեցին: Բացի Անտոն Իվանիչից ու քահանայից, ոչ ոք, ըստ սովորականի, ոչ մի բանի ձեռք չտվեց, բայց փոխարենը՝ Անտոն Իվանիչը լիակատար պատիվ մատուցեց այդ հոմերական նախաճաշին: Աննա Պավլովնան շարունակ լալիս էր ու թաքուն սրբում արցունքները:

— Հերիք է, Աննա Պավլովնա, արցունք վատնեք,— ասաց Անտոն Իվանիչը շինծու բարկությամբ, բաժակը թրմոցի լցնելով:— Նրան սպանդանո՞ց եք ուղարկում, ինչ է: Հետո բաժակի կեսը խմելով, շրթունքները չփչփացրեց:— Ի՜նչ թրմոցի է: Ի՜նչ բուրմունք ունի: Էսպիսի թրմոցի, մե՛րս, մեր ողջ նահանգում էլ չես ճարի,— ասաց նա մեծ բավականության արտահայտությամբ:

— Դա եր...րորդ տար...վա՛ է,— հեկեկալով ասաց Աննա Պավլովնան:— Այսօր միայն... ձեզ... համար բացի:

— Է՛խ, Աննա Պավլովնա, ձեզ նայելն էլ անտանելի է,— նորից սկսեց Անտոն Իվանիչը,— այ, մեկը չկա, որ ձեզ ծեծի. ծեծեր հա ծեծե՛ր:

— Ինքներդ դատեցեք, Անտոն Իվանիչ, մի որդի ունեմ, նա էլ աչքիցս հեռու լինի. կմեռնեմ՝ թաղող չի լինի:

— Բա մենք ինչացո՞ւ ենք: Ես ձեզ օտա՞ր եմ, ինչ է: Համ էլ ո՞ւր եք շտապում մեռնել: Մեկ էլ տեսար՝ մարդու էլ գնացիք: Ա՛յ թե կպարեի ձեր հարսանիքին: Դե հերիք լաց լինեք:

— Չեմ կարող, Անտոն Իվանիչ, իսկապես, չեմ կարող. ինքս էլ չգիտեմ, թե արցունքներս որտեղից են գալիս:

— Էսպիսի կտրիճին փակի տակ պահե՛լ: Հապա մի նրան ազատություն տվեք, նա թևերը բաց կանի և ի՞նչ հրաշքներ կգործի. ի՞նչ աստիճաններ ձեռք կգցի այնտեղ:

— Աստված բերանիցդ լսի: Այդ ինչո՞ւ կարկանդակը քիչ վերցրիք, էլի վերցրեք:

— Կվերցնեմ. այ էս կտորը ուտեմ, հետո:

— Ձեր կենացը, Ալեքսանդր Ֆյոդորիչ: Բարի ճանապարհ: Եվ շուտ վերադարձեք. և ամուսնացեք: Այդ ինչո՞ւ շիկնեցիք, Սոֆիա Վասիլևնա:

— Ես ոչինչ... ես այնպես...

— Օխ, ջահելներ, ջահելնե՛ր: Խե, խե, խե՛:

— Ձեզ հետ մարդ վիշտ չի զգում, Անտոն Իվանիչ,— ասաց Աննա Պավլովնան,— այնպե՛ս կարողանում եք մխիթարել. աստված ձեզ առողջություն տա: Էլի թրմօղի անուշ արեք:

— Կխմեմ, մե՛րս, կխմեմ, ինչպե՞ս չխմեմ հրաժեշտի առթիվ:

Նախաճաշն ավարտվեց: Կառապանն արդեն վաղուց լծել էր սայլակառքը: Այն մոտեցրին անդաստակին: Սպասավորները մեկը մյուսի հետևից դուրս էին վազում: Մեկը ճամպրուկն էր տանում, մյուսը՝ մի պարկ և նորից գնում էր որևէ բանի: Ինչպես ճանճերը քաղցր կաթիլը, ծառաները շրջապատել էին սայլակառքը, և ամենքը իր ձեռքը խոթում էր այնտեղ:

— Ավելի լավ է, ահա այսպես դնել ճամպրուկը,— ասում էր մեկը,— իսկ պարենով տուփը՝ այստեղ:

— Բա ոտները ո՞ւր պիտի դնի,— պատասխանում էր մյուսը:— Ավելի լավ է ճամպրուկը երկարությամբ դնել, իսկ տուփը՝ կարելի է կողքից:

— Ախր էդ ժամանակ փետրադոշակը կսահի, եթե ճամպրուկը երկարությամբ դրվի, ավելի լավ է լայնքին դրվի. էլ ի՞նչ մնաց: Սապոգները դրի՞նք:

— Ես չգիտեմ: Ո՞վ է դրել:

— Ես չեմ դրել: Գնա մի տես, էնտեղ վերևում չե՞ն:

— Ինքդ գնա:

— Բա դու ի՞նչ ես: Չե՞ս տեսնում, ես ժամանակ չունեմ:

— Ահա էլի, ահա, սա էլ չմոռանաք,— բղավում էր աղախիններից մեկը, կապոցով ձեռքը ներս խոթելով գլուխների արանքից:

— Դեսը տուր:

— Էս էլ մի կերպ ճամպրուկը խոթեցեք, մոռացել էին,— ասում էր մյուսը, սայլակառքի ոտնդիրին կանգնելով և պարզելով խոզանակն ու սանրը:

— Հիմա ո՞ւր խոթենք,— բարկացած նրա վրա գոռաց մարմնեղ լակեյը:— Քաշվիր գնա՛, տեսնո՞ւմ ես, ճամպրուկը ամենից տակն է:

— Տիրուհին հրամայեց. իմ ի՞նչ գործն է, թեկուզ նետիր: Այ քեզ սատանաներ:

— Դե շուտ արա, դեսը տուր տեսնեմ, սա կարելի է ահա էսպես կողքանց գրպանը դնել:

Քեղաձին անընդհատ բարձրացնում ու թափահարում էր գլուխը: Բոժոժն ամեն անգամ անջատումը հիշեցնող սուր ձայներ էր արձակում, իսկ կողաձիերը կանգնած էին մտախոհ, գլխահակ, կարծես հասկանում էին իրենց սպասող ճանապարհորդության ողջ հմայքը, և երբեմնակի պոչերն էին թափահարում կամ ներքևի շրթունքը երկարում քեղաձիուն: Վերջապես վրա հասավ ճակատագրական րոպեն: Մեկ էլ աղոթեցին:

— Նստեցեք, նստեցեք բոլորդ,— հրամայեց Անտոն Իվանիչը:— Բարեհաճեցեք նստել, Ալեքսանդր Ֆյոդորիչ: Դու էլ նստիր, Եվսեյ: Դե, նստիր, նստիր:— Եվ ինքը կողքանց, մի վայրկյան, հազիվ նստեց աթոռին:— Դե, հիմա աստված ձեզ հետ:

Ահա այստեղ արդեն Աննա Պավլովնան ձայնը գցեց ու կախ ընկավ Ալեքսանդրի վզից:

— Գնաս բարո՛վ, գնաս բարով, բարեկամս,— լսվում էր հեկեկոցի միջից:— Արդյոք մեկ էլ կտեսնե՞մ:

Այնուհետև ոչինչ չէր կարելի հասկանալ: Այդ րոպեին լսվեց մի ուրիշ բոժոժի հնչյուն, բակ սլացավ մի եռաձի սայլ: Սայլից ցած թռավ ամբողջովին փոշու մեջ կորած մի երիտասարդ, ներս վազեց սենյակ և նետվեց Ալեքսանդրի վիզը:

— Պոսպելով...— Ադուև...— բացականչեցին նրանք միաժամանակ, իրար սեղմելով գրկում:

— Դու որտեղի՞ց, ինչպե՞ս:

— Տնից, մի ամբողջ օր ու գիշեր քշել եմ, որ հրաժեշտ տամ քեզ:

— Ընկե՛ր, ընկե՛ր: Իսկական ընկե՛ր,— ասաց Ադուևը արցունքն աչքերին:— 160 վերստ քշել գալ, գնաս բարով ասելու համար: Օ, աշխարհում կա՛ ընկերություն: Առհավետ, այնպես չէ՞,— ասաց Ալեքսանդրը խանդավառ, սեղմելով ընկերոջ ձեռքը և վրա պրծնելով:

— Մինչև մահ-գերեզմա՛ն,— պատասխանեց մյուսը, ավելի ամուր սեղմելով ձեռքը և վրա պրծնելով Ալեքսանդրին:

— Գրի՛ր ինձ:— Այո, այո, դու էլ գրիր:

Աննա Պավլովնան ուղղակի չգիտեր, թե ինչպես փայփայի Պոսպելովին: Մեկնումը հետաձգվեց կես ժամով: Վերջապես պատրաստվեցին:

Բոլորը ոտքով գնացին մինչև պուրակը: Սոֆիան և Ալեքսանդրը, երբ անցնում էին մութ սրահով, նետվեցին իրար գիրկ:

— Սաշա՛: Սիրելի՛ Սաշա...— Սո՛նիչկա...— շշնջացին նրանք և բառերը մարեցին համբույրի մեջ:

— Դուք այնտեղ կմոռանա՞ք ինձ,— արտասվախառն ասաց Սոֆիան:

— Օ՛, որքան քիչ եք ճանաչում ինձ: Ես կվերադառնամ, հավատացեք, և ոչ մի ուրիշը...

— Ահա վերցրեք շուտով. իմ մազերն ու մատանին է:

Ալեքսանդրը ճարպկորեն թաքցրեց թե մեկը և թե մյուսը գրպանում:

Առջևից գնացին Աննա Պավլովնան որդու և Պոսպելովի հետ, ապա՝ Մարիա Կարպովնան դստեր հետ, վերջապես՝ քահանան Անտոն Իվանիչի հետ: Նրանցից փոքր-ինչ հեռու գնում էր սայլակառքը: Կառապանը հազիվ էր զսպում ձիերին: Դարպասի մոտ սպասավորները շրջապատեցին Եվսեյին:

— Գնաս բարով, Եվսեյ Իվանիչ, գնաս բարով, հոգյակ, մեզ չմոռանաս,— լսվում էր ամեն կողմից:

— Մնաք բարով, եղբայրներ, մնաք բարով, ավել-պակաս հալալ արեք:

— Գնաս բարով, Եվսեյուշկա, գնաս բարով, աչքիս լույս,— ասում էր մայրը, գրկելով նրան:— Ահա քեզ մի սրբապատկեր. սա իմ օրհնությունն է: Հիշիր հավատդ, Եվսեյ, անօրեն չդառնաս այնտեղ: Թե չէ կանիծեմ: Հարբեցողություն չանես, գողություն չանես, պարոնին ծառայիր հավատով ու ճշմարիտ: Գնաս բարով, գնաս բարո՛վ...

Նա դեմքը ծածկեց գոգնոցով ու մի կողմ քաշվեց:

— Մնաս բարով, մայրիկ,— ծուլորեն փնթփնթաց Եվսեյը: Դեպի Եվսեյը նետվեց մի տասներկու տարեկան աղջիկ:

— Քրոջդ մնաս բարով արա,— ասաց մի կնիկ:

— Դու Է՛լ ես մեջ խառնվել,— ասաց Եվսեյը, քրոջը համբուրելով:— Դե, մնաս բարով, մնաս բարով: Իսկ հիմա խրճիթ գնա, բոբի՛կ:

Բոլորից անջատ, վերջինը, կանգնել էր Ագրաֆենան: Նրա դեմքը կանաչել էր:

— Մնաք բարո՛վ, Ագրաֆենա Իվանովնա,— ծորուն ձայնը բարձրացնելով, ասաց Եվսեյը և ձեռքերը պարզեց նրան:

Ագրաֆենան թույլ տվեց, որ նա փարվի, բայց փոխադարձաբար չփարվեց նրան, միայն դեմքը աղավաղվեց:

— Ըհը՛, առ.— ասաց նա, գոգնոցի տակից պարկով ինչ-որ բան հանելով ու նրա ձեռքը խոթելով:— Ով գիտի, ոնց պիտի քեֆ քաշես պետերբուրգցիների հետ,— ավելացրեց նա, խեթ նայելով Եվսեյին: Եվ այդ հայացքի մեջ արտահայտվեց նրա և ողջ թախիծը, և ողջ խանդը:

— Ես քեֆ քաշե՞մ, ե՞ս,— սկսեց Եվսեյը:— Թող աստված հենց տեղնուտեղը ինձ պատժի, թող աչքերս կուրանան: Թող գետինը մտնեմ, թե էնտեղ մի էդտեսակ բան լինի...

— Լա՛վ: Լա՛վ,— անվստահ փնթփնթում էր Ագրաֆենան:— Մի սրա տեսքը, ո՛ւ:

— Ախ, քիչ մնաց մոռանայի,— ասաց Եվսեյը և գրպանից հանեց խաղաթղթի մի կեղտոտ կապուկ:— Վերցրեք, Ագրաֆենա Իվանովնա, ինձնից հիշատակ, ախր էստեղ չեք ճարի:

Ագրաֆենան ձեռքը մեկնեց:

— Ինձ նվիրի, Եվսեյ Իվանիչ,— ամբոխի միջից բղավեց Պրոշկան:

— Քե՛զ: Ավելի լավ է վառեմ, քան քեզ նվիրեմ,— և նա խաղաթղթերը գրպանը դրեց:

— Դե ինձ տուր, դմբլո,— ասաց Ագրաֆենան:

— ՉԷ՛, Ագրաֆենա Իվանովնա, ինչ ուզում եք արեք, չեմ տա. դուք նրա հետ կխաղաք: Մնաք բարով:

Նա առանց ետ նայելու, ձեռքը թափահարեց և ծուլորեն գնաց սայլակառքի հետևից, որը, կարծես, Ալեքսանդրի, կառապանի և ձիերի հետ մեկտեղ կարող էր տանել իր ուսերի վրա:

— Անիծված,— ասաց Ագրաֆենան, նայելով նրա հետևից և գլխաշորի ծայրով սրբելով աչքերից կաթող արցունքները:

Պուրակի մոտ կանգ առան: Մինչ Աննա Պավլովնան հեկեկում էր և հրաժեշտ տալիս որդուն, Անտոն Իվանիչը թփթփացրեց ձիերից մեկի վիզը, հետո բռնեց քթածակերից և դես ու դեն ցնցեց, որից ձին, ինչպես երևում է, բոլորովին գոհ չէր, որովհետև ատամները ցցեց և անմիջապես փռնչաց:

— Քեղաձիու փորքաշն ամրացրու,— ասաց նա կառապանին,— չե՞ս տեսնում, թամբիկը թեքվել է:

Կառապանը նայեց թամբիկին և, տեսնելով, որ նա իր տեղում է, նստիքից չշարժվեց, այլ միայն մտրակով մի փոքր ուղղեց լանջափոկը:

— Դե, ժամանակն է, աստված ձեզ հետ,— ասաց Անտոն Իվանիչը:— Հերիք է, Աննա Պավլովնա, ձեզ տանջեք: Իսկ դուք նստեցեք, Ալեքսանդր Ֆյոդորիչ. պետք է լուսով հասնեք Շիշկով: Գնաք բարով, գնաք բարով, աստված ձեզ երջանկություն տա, աստիճաններ, խաչեր, ամենայն լավ բան ու բարիք, ամենայն կայք ու կարողություն: Դե, աստված հետներդ, քշիր, բայց տես, էնտեղ, սարալանջին զգույշ գնա,— ավելացրեց նա, դիմելով կառապանին:

Ալեքսանդրը, ամբողջովին լացակումած, կառք նստեց, իսկ Եվսեյը մոտեցավ տիրուհուն, խոնարհվեց նրա առաջ և ձեռքը համբուրեց: Տիրուհին նրան մի հինգ ռուբլիանոց թղթադրամ տվեց:

— Տե՛ս, Եվսեյ, միտդ պահիր, եթե լավ ծառայես, կամուսնացնեմ Ագրաֆենայի հետ, թե չէ...

Նա չկարողացավ խոսքը շարունակել: Եվսեյը բարձրացավ նստիքին: Կառապանը երկար սպասումից ձանձրացած, կարծես կենդանացավ. նա գդակը գլխին սեղմեց, ուղղվեց տեղում և սանձերը ձգեց. ձիերը շարժվեցին նախ թեթև վարգով: Նա մտրակեց կողաձիերին իրար հետևից, նրանք ոստնեցին, ձգվեցին, և եռալուծ կառքը ճանապարհով սլացավ դեպի անտառ: Ճանապարհողների ամբոխը մնաց փոշու ամպի մեջ լուռ ու անշարժ, մինչև սայլակառքը բոլորովին չքացավ աչքից:

Անտոն Իվանիչը առաջինը ուշքի եկավ:

— Դե, հիմա ցրվենք տներս,— ասաց նա:

Ալեքսանդրը, քանի հնարավոր էր, կառքից նայում էր ետ, հետո երեսնիվայր ընկավ բարձերին:

— Մի թողեք ինձ, թշվառիս, Անտոն Իվանիչ,— ասաց Աննա Պավլովնան,— այստեղ ճաշեցեք:

— Լավ, մերս, ես պատրաստ եմ, հավատա, ընթրիքին էլ կմնամ:

— Դե միանգամից գիշերեիք:

— Ինչպե՜ս կլինի. ախր վաղը թաղումն է:

— Ախ, հա՛: Լավ, ձեզ չեմ ստիպի: Բարևեցեք ինձնից Ֆեդոսիա Պետրովնային, ասացեք, որ սրտանց վշտացած եմ նրա վշտով և ինքս այցելության կգնայի, բայց, տեսեք, աստված ինձ էլ է վիշտ ուղարկել. որդուս ճանապարհ դրի:

— Կասեմ, կասեմ, չեմ մոռանա:

— Աղավնյա՜կս, Սաշենկա՛,— մրմնջում էր նա շուրջը նայելով:— Արդեն չկա, աչքիցս ծածկվեց:

Ադուևան ամբողջ օրը լուռ նստեց, չճաշեց և չընթրեց: Փոխարենը՝ խոսում, ճաշում և ընթրում էր Անտոն Իվանիչը:

— Հիմա տեսնես որտե՞ղ է, աղավնյակս,— միայն երբեմնակի ասում էր Աննա Պավլովնան:

— Հիմա արդեն պետք է որ Նեպլյուևոյում լինի: Չէ, ի՞նչ եմ ասում: Դեռ Նեպլյուևոյում չի, այլ մոտենում է, այնտեղ թեյ կխմի,— պատասխանում էր Անտոն Իվանիչը:

— Ոչ, նա այս ժամանակ երբեք չի խմում:

Եվ այսպես Աննա Պավլովնան մտովի ճանապարհորդում էր նրա հետ: Հետո, երբ նա մոր հաշվով արդեն պետք է Պետերբուրգ հասներ, մայրը մերթ աղոթում էր, մերթ թուղթ բացում, մերթ նրա մասին խոսում Մարիա Կարպովնայի հետ:

Իսկ որդի՞ն:

Նրա հետ մենք կհանդիպենք Պետերբուրգում:

2

Պյոտր Իվանովիչ Ադուևին, մեր հերոսի հորեղբորը նույնպես, ինչպես Ալեքսանդրին, քսան տարեկան հասակում Պետերբուրգ էր ուղարկել ավագ եղբայրը, Ալեքսանդրի հայրը, և Պյոտր Իվանովիչն առանց դուրս գալու այնտեղ էր ապրում տասնյոթ տարի: Եղբոր մահից հետո նա հարազատների հետ նամակագրություն չուներ և Աննա Պավլովնան նրա մասին ոչինչ չգիտեր այն ժամանակից ի վեր, երբ տագրը վաճառեց իր փոքրիկ կալվածքը, որ հեռու չէր Աննա Պավլովնայի գյուղից:

Պետերբուրգում նա փողավոր մարդու համբավ ուներ ու, թերևս, ոչ առանց պատճառի. մի ինչ-որ կարևոր անձի մոտ աշխատում էր որպես հատուկ հանձնարարությունների աստիճանավոր և ֆրակի մերակում մի քանի ժապավեն էր կրում. ապրում էր մեծ փողոցի վրա, լավ բնակարան էր զբաղեցնում, պահում էր երեք սպասավոր և նույնքան էլ ձի: Նա ծեր չէր, այլ ինչպես ասում են «տղամարդու փայլուն տարիքում»՝ երեսունհինգից քառասունի միջև: Ի դեպ, նա չէր սիրում շատ խոսել իր տարիքի մասին ոչ թե մանր ինքնասիրությունից դրդված, այլ ինչ-որ մտածված հաշվով, կարծես նա մտադիր էր որքան կարելի է թանկ ապահովագրել իր կյանքը: Համենայն դեպս, իր իսկական տարիքը թաքցնելու ձևի մեջ չէր երևում գեղեցիկ սեռին դուր գալու սին հավակնություն:

Նա բարձրահասակ, համաչափ կազմվածքով տղամարդ էր, թուխ-փայլատ դեմքի խոշոր կանոնավոր գծերով, համաչափ գեղեցիկ քայլվածքով, զուսպ, բայց հաճելի շարժուձևով: Այդպիսի մարդկանց սովորաբար անվանում են bel homme /Գեղեցկատես մարդ (ֆրանս.):/: Դեմքին նույնպես նկատելի էր զսպությունը, այսինքն՝ ինքն իրեն տիրապետելու, դեմքը հոգու հայելի դառնալը չթույլատրելու կարողությունը: Նա այն կարծիքի էր, որ դա անհարմար է թե իր, թե ուրիշների համար: Այդպես էր նա հասարակության մեջ: Սակայն չէր կարելի նրա դեմքը քարացած անվանել, ոչ, նա միայն հանդարտ էր: Լոկ երբեմն նրա վրա երևում էին հոգնածության հետքեր՝ ըստ երևույթին ջանադիր աշխատանքից: Նա գործունյա և բանիմաց մարդու համբավ ուներ: Միշտ հագնվում էր խնամքով, նույնիսկ մի քիչ պճնագեղ, բայց ոչ չափից ավելի, այլ միայն ճաշակով, հիանալի սպիտակեղեն էր հագնում, ձեռքերը գեր ու սպիտակ էին, եղունգները՝ երկար ու թափանցիկ:

Մի անգամ առավոտյան, երբ նա արթնացավ ու զանգ տվեց, սպասավորը թեյի հետ բերեց երեք նամակ և զեկուցեց որ եկած է եղել ինչ-որ երիտասարդ պարոն, որն իրեն անվանել է Ալեքսանդր Ֆյոդորիչ Ադուև, իսկ նրան՝ Պյոտր Իվանիչին, հորեղբայր, և խոստացել է անցնել ժամը տասներկուսի մոտ:

Պյոտր Իվանիչը, ըստ սովորականի, այդ լուրը լսեց հասգիստ, միայն մի քիչ սրեց ականջները և հոնքերը բարձրացրեց:

— Լավ, գնա,— ասաց նա սպասավորին:

Հետո վերցրեց նամակներից մեկը, ուզեց բացել, բայց կանգ առավ և մտածմունքի մեջ ընկավ:

— Եղբորորդիս գավառից, այ քեզ անակնկա՛լ,— փնթփնթաց նա:— Իսկ ես հույս ունեի, թե այն կողմերում ինձ մոռացել են: Ասենք, ինչ պիտի նրանց հետ ձևականություն անեմ. գլուխս կազատեմ...

Նա նորից զանգահարեց:

— Այդ պարոնը, որ գա, ասա, որ ես վեր կացա ու անմիջապես մեկնեցի գործարան և կվերադառնամ երեք ամսից հետո:

— Լսում եմ,— պատասխանեց ծառան,— իսկ նվերնե՞րը ինչ կհրամայեք անել:

— Ի՞նչ նվերներ:

— Նրանց սպասավորը բերեց. ասում է, տիրուհին գյուղական նվերներ է ուղարկել:

— Նվերնե՞ր:

— Այո, մի տակառիկ մեղր, մի պարկ չորացրած մոշ...

Պյոտր Իվանիչը ուսերը թոթվեց:

— Մեկ էլ երկու թոփ քաթան, և մուրաբա...

— Պատկերացնում եմ, երևի լավն է քաթանը...

— Քաթանը լավն է, մուրաբան էլ շաքարի է:

— Դե գնա, ես հիմա կտեսնեմ:

Նա վերցրեց մի նամակը, բացեց և աչք ածեց էջին: Ասես խոշոր սլավոնական այբուբեն. **վ** տառին փոխարինում էին վերևից ու ներքևից վրան խազ քաշած երկու ցուպիկ, իսկ **կ** տառին՝ ուղղակի երկու ցուպիկ, գրված էր առանց կետադրական նշանների:

Ադուևն սկսեց կարդալ.

«Ո. Տ. Պյոտր Իվանիչ.

Ձեր հանգուցյալ ծնողի հետ մոտիկից ծանոթ ու բարեկամներ լինելով, և հենց ձեզ էլ մանուկ հասակում քիչ չեմ զվարճացրել և ձեր տանը հաճախ աղ ու հաց եմ ճաշակել, ուստի և համոզված հույս եմ տածում դեպի ձեր ջանադրությունը և բարի կամեցողությունը, որ չեք մոռացել ծերուկիս՝ Վասիլի Տիխոնիչին, իսկ մենք այստեղ ձեզ և ձեր ծնողներին միշտ բարի ենք հիշում և աստծուն աղոթում...»

— Սա ինչ օտարոտի բան է, այս ումի՞ց է,— ասաց Պյոտր Իվանիչը, նայելով ստորագրությանը:— Վասիլի Ձաեզժալով: Ձաեզժալով... թեկուզ սպանես, չեմ հիշում: Ի՞նչ է ուզում ինձնից:

Եվ շարունակեց կարդալ:

«Իմ ամենախոնարհ և ձեզ ձանձրույթ պատճառող խնդրանքը մի մերժեք, հե՛րս... ձեզ համար Պետերբուրգում էն չի, ինչ որ մեզ, էստեղացիներիս համար, ով գիտի, ամեն ինչ հայտնի է և ամեն ինչ սեփական է ու հարազատ: Մի անիծված դատական գործ է վզիս փաթաթվել և ահա յոթերորդ տարին է չեմ կարող պոկ գալ. բարեհաճո՞ւմ եք հիշել այն անտառակը, որ իմ գյուղակից երկու վերստ հեռու է: Պալատը սխալ է արել գնման կայքագրի մեջ, իսկ իմ հակառակորդը՝ Մեդվեդևը, շեշտը դրել է դրա վրա. կետը, ասում է, կեղծ է, ու վե՛րջ: Մեդվեդևը, հենց նա, որ ձեր ամառանոցում առանց հարցնելու ձուկ էր որսում. ձեր հանգուցյալ հայրիկը վռնդում էր նրան ու խայտառակում, ուզում էր նրա ինքնագլխության համար նույնիսկ նահանգապետին գանգատ տալ, բայց բարության շնորհիվ, աստված հոգի՛ն լուսավորի, ներում էր, բայց պետք չէր խնայել այդպիսի չարագործին: Օգնեցեք, հե՛րս, Պյոտր Իվանիչ. գործը հիմա կառավարական սենատում է. չգիտեմ որ դեպարտամենտում և ում մոտ է, բայց ձեզ, հավատա, իսկույն ցույց կտան: Գնացեք քարտուղարների սենատորների մոտ, նրանց հակեցեք իմ օգտին, ասացեք, որ սխալից, կայքագրի մեջ եղած իսկական սխալից եմ տուժում. ձեզ համար ամեն ինչ կանեն: Ի դեպ, հենց այդտեղ էլ ինձ համար երեք աստիճանի արտոնագիր ձեռք բերեք և ուղարկեցեք ինձ: Մեկ էլ, հե՛րս, Պյոտր Իվանիչ, հույժ կարևոր մի գործ ունեմ ձեզ հետ. սրտալի կարեկցություն արեք անմեղ ճնշյալ տառապյալիս և օգնեցեք խորհուրդով ու գործով: Մեր նահանգական վարչությունում Դրոժժով անունով մի խորհրդական կա, մարդ չէ՛, ոսկի՛ է, կմեռնի, բայց յուրայինին չի մատնի. քաղաքում

ուրիշ տուն չգիտեմ, բացի նրանից. հենց որ գալիս եմ՝ ուղիղ նրա մոտ. շաբաթներով ապրում եմ, և աստված չանի, որ մտածեմ մի ուրիշի մոտ իջևանել. մինչև կոկորդ ուտեցնում-խմեցնում է. իսկ բոստոնը՝ ճաշից մինչև ուշ գիշեր: Եվ մի այդպիսի մարդուն զրպարտել են ու հիմա հարկադրում են դիմում գրել պաշտոնաթողության մասին: Գնացեք, հարազատ հերս, այդտեղ բոլոր մեծամեծների մոտ, ներշնչեցեք նրանց, թե ինչ մարդ է Աֆանասի Իվանիչը. մի գործի կպչի՝ գործը եռ կգա ձեռքին. ասացեք՝ էսպես ու էսպես, նրա մասին արած մատնությունը կեղծ է, նահանգական քարտուղարի բանսարկություններով. ձեզ կլսեն. և առաջին փոստով գրեցեք ինձ: Մեկ էլ տեսնվեք իմ հնամենի պաշտոնակից Կոստյակովի հետ: Ես լսել եմ մի եկվորից՝ Ստուդյոնցինից, որը ձեր պետերբուրգցիներից է, գուցե բարեհաճում եք ճանաչել, որ նա ապրում է Պեսկիում. այնտեղ երեխաները ձեզ ցույց կտան տունը. նույն փոստով գրեցեք ինձ, չծուլանաք, արդյոք ողջ-առո՞ղջ է նա, ի՞նչ է անում, ինձ հիշո՞ւմ է թե ոչ: Ծանոթացեք և բարեկամացեք հետը. հիանալի մարդ է, սրտաբաց, և այնքան զվարճասերն է: Նամակս վերջացնում եմ ևս մի փոքրիկ խնդիրքով...»:

Ադուևը դադարեց կարդալուց, նամակը դանդաղ պատռեց չորս մասի և գցեց սեղանի տակի զամբյուղը, հետո ձգվեց ու հորանջեց:

Նա վերցրեց մյուս նամակը և սկսեց կարդալ նույնպես կիսաձայն:

«Սիրելի եղբայր, ողորմած պարոն, Պյոտր Իվանիչ»:

— Ա՞յս ինչ քույրիկ է,— ասաց Ադուևը նայելով ստորագրությանը.— «Մարիա Գորբատովա...» — նա դեմքը դարձրեց առաստաղին, ինչ-որ մտաբերելով...

— Ի՞նչ պիտի լինի սա: Ինչ-որ ծանոթ բան է... Վա՛հ, այ հրաշալի բա՛ն, չէ՞ որ եղբայրս ամուսնացած էր Գորբատովայի հետ: Սա նրա քույրն է, սա նա՛ է... ա՛: Հիշում եմ...

Նա խոժոռվեց և սկսեց կարդալ:

«Թեև ճակատագիրը մեզ բաժանել է, գուցե առհավետ և անդունդ է ընկել մեր միջև. տարիներ են անցել...»

Նա բաց թողեց մի քանի տող և շարունակեց կարդալ.

— «Մինչի մահ-գերեզման պիտի հիշեմ, ինչպես մենք միասին զբոսնելով մեր լճի մոտ, դուք, կյանքի ու առողջության վտանգով, մինչև ծնկներդ մտաք ջուրը և եղեգնուտի միջից ինձ համար պոկեցիք մի մեծ դեղին ծաղիկ, ինչպես նորա ցողունից հոսում էր ինչ-որ հյութ և կեղտոտեց մեր ձեռքերը, իսկ դուք կարտուզով ջուր վերցրիք, որպեսզի մենք կարողանանք լվացվել: Մենք այն ժամանակ շատ ծիծաղեցինք: Որքան երջանիկ էի ես այն ժամանակ: Սույն ծաղիկը հիմա էլ պահված է գրքիս մեջ...»

Ադուևը կանգ առավ: Երևում էր, որ այդ հանգամանքը նրան չափազանց դուր չէր գալիս. նա նույնիսկ թերահավատությամբ գլուխը երերեց:

«Իսկ դուք պահե՞լ եք այն ժապավենը (շարունակում էր նա կարդալ), որ հանեցիք կոմոդիցս, չնայած իմ բոլոր ճիչերին ու աղերսանքին...»

— Ես ժապավե՞ն եմ հանել,— ասաց նա բարձրաձայն, խիստ խոժոռվելով: Փոքր-ինչ լռելուց հետո մի քանի տող բաց թողեց ու շարունակեց կարդալ:

«Իսկ ես ինձ դատապարտեցի չամուսնացած կյանքի և ինձ չափազանց երջանիկ եմ զգում, ոչ ոք չի արգելի մտաբերել այն երանելի ժամանակները...»

«Ա՛, պառաված օրիո՛րդ է,— մտածեց Պյոտր Իվանիչը:— Զարմանալի չէ, որ նրա մտքում դեռ դեղին ծաղիկներ են: Էլ ի՞նչ կա այստեղ»:

«Արդյոք ամուսնացա՞ծ եք, սիրելի եղբայր, և ո՞ւմ հետ: Ո՞վ է այն սիրելի ընկերուհին, որը իրենով զարդարում է ձեր գոյության ուղին, ասացեք ինձ նրա անունը, ես կսիրեմ նրան ինչպես հարազատ

քրոջ և երազանքներիս մեջ նրա պատկերը կմիացնեմ ձեր պատկերին, կաղոթեմ: Իսկ եթե ամուսնացած չեք, ապա ի՞նչ պատճառով, գրեցեք անկեղծ. ձեր գաղտնիքները ոչ ոք չի կարդա, ես դրանք կպահեմ կրծքիս վրա, դրանք ինձնից կպոկվեն միայն սրտիս հետ: Չհապաղեք. անհամբերությունից այրվում եմ կարդալու ձեր անմեկնելի տողերը...»

«Չէ, ա՛յ քեզ անմեկնելի տողե՛ր»,— մտմտաց Պյոտր Իվանիչը:

«Ես չգիտեի (կարդում էր նա), որ մեր սիրելի Սաշենկան հանկարծ կմտածի այցելել ձեր հոյակապ մայրաքաղաքը,— երջանի՛կ մարդ: Կտեսնի սքանչելի տներ խանութներ, կճաշակի ճոխությունը և իր կրծքին կսեղմի պաշտելի հորեղբորը, իսկ ես, ես այդ ժամանակ արցունք կթափեմ, մտաբերելով երջանիկ ժամանակը: Եթե ես իմանայի նրա մեկնելու մասին, գիշեր-ցերեկ կնստեի և ձեզ համար բարձ կասեղնագործեի՝ արաբը երկու շան հետ. դուք չեք հավատա, թե որքան անգամ եմ լաց եղել, նայելով սույն նախշանկարին. ի՞նչը կարող է բարեկամությունից ու հավատարմությունից ավելի սուրբ լինել... Այժմ ինձ զբաղեցնում է միայն սույն միտքը. դրան կնվիրեմ իմ օրերը, բայց այստեղ լավ բուրդ չունեմ, ուստի խոնարհաբար խնդրում եմ, ամենասիրելի եղբայրս, ուղարկել ահա այս նմուշներով, որ դրել եմ այստեղ, եղած անգլիական ամենալավ բրդյա թելերից, ամենամոտ ժամանակներս, առաջնակարգ խանութից: Բայց ի՞նչ եմ ասում: Ի՞նչ սարսափելի միտք է կանգնեցնում գրիչս: Գուցե դուք արդեն մոռացել եք մեզ, և որտեղի՞ց պիտի հիշեք խեղճ տառապյալիս, որը հեռացել է հասարակությունից և արցունք է թափում: Բայց ո՛չ: Ես չեմ կարող մտածել, որ դուք կարող եք վայրագ լինել, ինչպես բոլոր տղամարդիկ, ո՛չ: Սիրտս ինձ ասում է, որ դեպի մեզ բոլորս դուք պահել եք ձեր նախկին զգացմունքները հոյակապ մայրաքաղաքի փարթամության և բավականության մեջ: Սույն միտքը բալասան է իմ տառապյալ սրտի համար: Ներեցեք, չեմ կարող այլևս շարունակել, ձեռքս դողում է...

Մինչև գերեզման մնամ ձեր

Մարիա Գորբատովա:

P.S. Արդյոք լավ գրքեր չունե՞ք, եղբայրս: Ուղարկեցեք, եթե ձեզ պետք չեն. ես ամեն մի էջի վրա կհիշեի ձեզ, լաց կլինեի, կամ կրպակից վերցրեք նորերը, եթե թանկ չեն: Ասում են, շատ լավն են պարոն Զագոսկինի և պարոն Մառլինսկու երկերը — թեկուզ դրանք. կամ թե չէ, ես լրագրերում տեսել եմ այսպիսի վերնագիր՝ Նախապաշարմունքների մասին պ-ն Պուզինայի երկերը. ուղարկեցեք, ես տանել չեմ կարող նախապաշարմունքները»:

Կարդալով, Ադուևն ուզում էր այդ նամակն էլ նույն տեղն ուղարկել, բայց կանգ առավ:

«Ոչ,— մտածեց նա,— կպահեմ, կան այսպիսի նամակների սիրահարներ, ոմանք ամբողջ հավաքածուներ են պահում. գուցե առիթ կլինի մեկն ու մեկին նվիրելու»:

Նա նամակը գցեց պատից կախած հուլունքազարդ զամբյուղը, ապա վերցրեց երրորդ նամակը և սկսեց կարդալ.

«Հույժ սիրելի տագր իմ, Պյոտր Իվանիչ.

Հիշո՞ւմ եք, թե ինչպես տասնյոթ տարի առաջ մենք ճանապարհ դրինք ձեզ: Ահա աստված տվեց, որ հեռավոր ճամփու համար իմ օրհնությունը տայի նաև հարազատ զավակիս: Նայեցեք նրան, հերս, և մտաբերեցեք հանգուցյալին, մեր աղավնյակ Ֆյոդոր Իվանիչին. ախր Սաշենկան տեղով նա է: Աստված գիտի միայն, թե ինչ քաշեց իմ մայրական սիրտը, նրան օտար երկիր թողնելիս: Ուղարկում եմ նրան, իմ բարեկամին, ուղղակի ձեզ մոտ, թույլ չեմ տվել ոչ մի տեղ իջևանել, բացի ձեր մոտից...»

Ադուևը նորից գլուխը շարժեց:

— Հիմար պառավ,— փնթփնթաց նա և շարունակեց կարդալ.

«Նա, ո՛վ գիտի, անփորձությունից կանգ առներ իջևանում, բայց ես գիտեմ, թե դա ինչպես կարող է վշտացնել հարազատ հորեղբորը, և հորդորեցի գալ ուղղակի ձեզ մոտ: Ա՛յ թե ուրախ կլինեք

նրան հանդիպելիս: Մի՛ թողնեք նրան, սիրելի տագրս, առանց ձեր խորհուրդների և ձեր հովանավորության տակ վերցրեք, ձեռքից ձեռք նրան հանձնում եմ ձեզ»:

Պյոտր Իվանիչը նորից կանգ առավ:

«Չէ՞ որ այդտեղ մենակ դուք եք նրա հարազատը (կարդում էր նա այնուհետև): Հետևեցեք նրան, շատ երես մի տվեք, բայց շատ էլ խիստ մի եղեք. պատժող շատ կճարվի, պատժել օտարներն էլ կարող են, իսկ փայփայող չկա, բացի հարազատից. նա ինքը այնքան սիրազեղ է, դուք հենց որ տեսնեք, նրանից պոկ չեք գա: Եվ պետին էլ, ում ծառայելու լինի, ասացեք, որ պահպանի իմ Սաշենկային և ինչքան կարելի է քնքուշ վարվի հետը. նա շատ քնքուշ է: Զգուշացրեք նրան գինուց և թղթախաղից: Գիշերը, ախր դուք, կարծում եմ, որ միևնույն սենյակում եք քնելու. Սաշենկան սովոր է մեջքի վրա պառկել, դրանից սիրասունս խիստ հառաչում և դես-դեն է նետվում: Դուք կամացուկ զարթեցրեք նրան և խաչակնքեցեք. անմիջապես կանցնի. իսկ ամառները բերանը թաշկինակով ծածկեցեք. նա քնի մեջ բերանը բացում է, իսկ անիծած ճանճերը լուսադեմին ուղղակի բերանն են մտնում: Կարիքի դեպքում նրան մի թողեք նաև անփող...»

Ադուևը մռայլվեց, բայց շուտով նրա դեմքը նորից պայծառացավ, երբ նա շարունակեց կարդալ.

«Իսկ ես կուղարկեմ ինչ որ հարկավոր է, և հիմա էլ կանխիկ նրան տվել եմ հազար ռուբլի, միայն թե նա այդ փողերը դատարկ բաների վրա չծախսի, և որ նրանից շողոքորթները չկորզեն, ախր այդտեղ, ձեզ մոտ՝ մայրաքաղաքում, իմանալովս, սրիկաներ ու անխիղճ մարդիկ շատ կան: Եվ ապա ներեցեք, թանկագին տագրս, բոլորովին ետ եմ վարժվել գրելուց: Մնամ սրտանց

ձեզ հարգող հարս՝

Ա. Ադուևա:

P.S. Սրա հետ մեկտեղ ձեզ ուղարկում եմ մեր գյուղական նվերներից՝ մեր այգու մոշը, սպիտակ մեղր՝ արցունքի պես մաքուր, երկու դյուժին շապիկի համար հոլանդական քաթան և տնական մուրաբա: Բարով ուտեք ու հագնեք, իսկ որ վերջանա՝ էլի կուղարկեմ: Հետևեցեք նաև Եվսեյին. նա հնազանդ և չխմող է, բայց ով գիտի, այդտեղ՝ մայրաքաղաքում, երես առնի. այդ դեպքում կարելի է և ծեծել»:

Պյոտր Իվանիչը նամակը դանդաղ դրեց սեղանին, ավելի դանդաղ մի սիգարեթ վերցրեց և կլորելով ձեռների մեջ, սկսեց ծխել: Երկար մտմտում էր նա այդ խաղը, ինչպես ինքն էր մտովի անվանում, որ նրա գլխին խաղացել էր հարսը: Նա մտքում խստորեն քննարկեց և այն, թե ինչ էին արել իրեն, և այն, թե ինչ չպետք է աներ ինքը:

Նա այդ ամբողջ դեպքը բաշխեց ահա թե ինչ նախադրյալների: Նա իր եղբորորդուն չի ճանաչում, հետևաբար և չի սիրում, ուստի և սիրտը նրա վրա ոչ մի պարտականություն չի դնում. գործը պետք է վճռել բանականության և արդարության օրենքների համաձայն: Նրա եղբայրը ամուսնացել է, վայելել ամուսնական կյանքի հաճույքները, ուրեմն ինչո՞ւ պետք է նա՝ Պյոտր Իվանիչը, իրեն ծանրաբեռնի եղբորորդու մասին հոգալով, նա, որ չի վայելել ամուսնության օգուտները: Իհարկե, ոչ մի պատճառ չկա:

Բայց մյուս կողմից պատկերանում էր ահա թե ինչ. մայրը որդուն ուղարկել է ուղիղ նրա մոտ, նրա ձեռքն է հանձնել չիմանալով, թե կուզենա՞ ինքը իր վրա վերցնել այդ բեռը, նույնիսկ չիմանալով՝ արդյոք ո՞ղջ է տագրը և ի վիճակի՞ է արդյոք որևէ բան անել իր եղբորորդու համար: Իհարկե, դա հիմարություն է, բայց եթե գործն արդեն արված է, և եղբորորդին Պետերբուրգում է, առանց օգնության, առանց ծանոթների, նույնիսկ առանց հանձնարարական նամակների, ջահել, առանց որևէ փորձառության... արդյոք ինքը իրավունք ունի՞ նրան թողնելու բախտի քմահաճույքին, ձգել ամբոխի մեջ, առանց խրատների, առանց խորհրդի, և եթե նրա հետ մի վատ բան պատահի, արդյոք ինքը չի՞ պատասխանելու խղճի առաջ...

Այստեղ ի դեպ Ադուևը հիշեց, թե ինչպես տասնյոթ տարի առաջ հանգուցյալ եղբայրը և նույն Աննա Պավլովնան հենց իրեն ճանապարհ դրին: Նրանք, իհարկե, ոչինչ չէին կարող անել նրա

համար Պետերբուրգում, նա ինքը ճանապարհ գտավ իր համար... Բայց նա հիշեց հարսի արցունքները հրաժեշտի ժամին, նրա մայրական օրհնանքները, նրա գուրգուրանքը, նրա կարկանդակները և, ի վերջո, նրա վերջին խոսքերը. «Երբ Սաշենկան մեծանա — այն ժամանակ նա եռամյա մանուկ էր — գուցե դուք էլ, եղբայր, հոգ տանեք նրա մասին...»: Այստեղ Պյոտր Իվանիչը վեր կացավ և արագ քայլերով գնաց նախասենյակ...

— Վասիլի,— ասաց նա:— Երբ իմ եղբորորդին գա, չմերժես նրան: Մեկ էլ գնա նայիր, թե այնտեղ վերևում ազատ է այն սենյակը, որ վերջերս վարձով էր տրվում, և եթե զբաղված չէ, ասա, որ ինձ եմ թողնում դա: Ա՛: Սա նվերնե՛ր են: Է, ի՞նչ ենք անելու սրանք:

— Քիչ առաջ մեր խանութպանը տեսավ, թե ինչպես վերև էինք բերում. նա հարցրեց, թե չե՞նք զիջի իրեն մեղրը. «Ես, ասում է, լավ գին կտամ», մոշն էլ է վերցնում...

— Հրաշալի՛ է: Տուր նրան: Է, իսկ քաթա՞նն ինչ անենք: Ծածկոցների համար պետք չի՞ գա... Ուրեմն պահիր քաթանը, մուրաբան էլ պահիր, կարելի է ուտել, կարծես կարգին մուրաբա է:

Հենց նոր էր Պյոտր Իվանիչը նստել ածիլվելու, երբ հայտնվեց Ալեքսանդր Ֆյոդորիչը: Նա ուզում էր հորեղբոր վզովն ընկնել, բայց հորեղբայրը, հզոր ձեռքով սեղմելով նրա պատանեկան քնքուշ ձեռքը, նրան պահում էր իրենից որոշ տարածության վրա, իբր նրա համար, որ կարողանա մի լավ նայել նրան, բայց կարծես ավելի շատ նրա համար, որպեսզի կանգնեցնի նրա պոռթկումը և սահմանափակվի ձեռքը սեղմելով:

— Մայրդ ճիշտ է գրում,— ասաց նա,— դու հանգուցյալ եղբորս կենդանի պատկերն ես. ես քեզ փողոցում էլ կճանաչեի: Բայց դու նրանից լավն ես: Դե, ես առանց ձևականության կշարունակեմ ածիլվել, իսկ դու նստիր ահա այստեղ, դիմացս, որպեսզի կարողանամ քեզ տեսնել, և արի զրուցենք:

Դրանից հետո Պյոտր Իվանիչը սկսեց իր գործը, կարծես այդտեղ ոչ ոք չկար, և այտերն էր օճառում, լեզվով ձգելով մերթ մեկը, մերթ մյուսը: Ալեքսանդրը շփոթվել էր այդ ընդունելությունից և չգիտեր ինչպես սկսի խոսակցությունը: Նա հորեղբոր սառնությունը վերագրում էր այն բանին, որ ուղղակի նրա մոտ չէր իջևանել:

— Ինչպե՞ս է մայրդ, առո՞ղջ է: Կարծում եմ ծերացած կլինի,— հարցրեց հորեղբայրը, հայելու առաջ զանազան ծամածռություններ անելով:

— Մայրիկս, փառք աստծու, առողջ է, բարևում է ձեզ, և մորաքույր Մարիա Պավլովնան նույնպես,— երկչոտ ասաց Ալեքսանդր Ֆյոդորիչը:— Մորաքույրս պատվիրեց, որ գրկեմ ձեզ...— Նա վեր կացավ և մոտեցավ, որ համբուրի հորեղբոր այտը կամ գլուխը, կամ ուսը, կամ, վերջապես, որտեղ որ հաջողվի:

— Ժամանակն է, որ մորաքույրդ տարիքի հետ խելոքանար, իսկ նա, ինչպես տեսնում եմ, նույն հիմարն է, ինչ որ քսան տարի առաջ...

Տարակուսած Ալեքսանդրը ետ-ետ գնալով վերադարձավ իր տեղը:

— Դուք ստացա՞ք նամակը, հորեղբայր...— ասաց նա:

— Այո, ստացա:

— Վասիլի Տիխոնիչ Զաեզժալովը,— սկսեց Ալեքսանդր Ֆյոդորիչը,— շատ խնդրում է ձեզ, որ տեղեկանաք և հոգ տանեք նրա գործի մասին...

— Հա, նա ինձ գրում է... Ձեզ մոտ դեռ չե՞ն վերացել այդպիսի ավանակները:

Ալեքսանդրը ուղղակի չգիտեր, թե ինչ մտածի, այնպես ապշեցրել էին նրան այդ որակումները:

— Ներեցեք հորեղբայր...— սկսեց նա գրեթե դողալով:

— Ի՞նչ:

— Ներեցեք, որ ուղղակի ձեզ մոտ չեկա, այլ իջևանեցի դիլիժանսների գրասենյակում... Ես ձեր բնակարանը չգիտեի...

— Այստեղ ներողություն խնդրելու ի՞նչ կա: Դու շատ լավ ես արել: Աստված գիտի, թե մայրիկդ ինչեր է հնարել: Ինչպե՞ս պիտի ինձ մոտ գայիր, չիմանալով՝ կարելի՞ է ինձ մոտ իջևանել թե ոչ: Ինչպես տեսնում ես, իմ բնակարանը ամուրիի է, մի հոգու համար. դահլիճ, հյուրասենյակ, ճաշարան, առանձնասենյակ, մի հատ էլ աշխատանքային առանձնասենյակ, զգեստարան և զարդասենյակ. ավելորդ սենյակ չկա: Ես քեզ նեղած կլինեի, դու էլ ինձ... իսկ ես քեզ համար հենց այս տանը բնակարան եմ ճարել...

— Ախ, հորեղբա՛յր,— ասաց Ալեքսանդրը:— Ինչպե՞ս շնորհակալ լինեմ ձեզ այդ հոգատարության համար:

Եվ նա կրկին վեր թռավ տեղից, իր շնորհակալությունը խոսքով ու գործով ապացուցելու մտադրությամբ:

— Կամաց, կամաց, չկպչես,— ասաց հորեղբայրը,— աթելիները շատ սուր են, մեկ էլ տեսար ինքդ էլ մի տեղդ կկտրես, ինձ էլ կկտրես:

Ալեքսանդրը տեսավ, որ չնայած բոլոր ջանքերին, իրեն չի հաջողվելու այդ օրը ոչ մի անգամ գրկել և կրծքին սեղմել պաշտելի հորեղբորը, և այդ մտադրությունը հետաձգեց մի ուրիշ անգամվա:

— Շատ զվարթ սենյակ է,— սկսեց Պյոտր Իվանիչը:— Լուսամուտները մի քիչ պատին են նայում, բայց դու հո ամբողջ ժամանակ լուսամուտի մոտ չե՞ս նստելու. եթե տանն ես, ուրեմն մի բանով կզբաղվես, իսկ լուսամուտի մոտ հորանջելու ժամանակ չի լինի: Եվ թանկ չի, ամիսը քառասուն ռուբլի: Սպասավորի համար նախասենյակ կա: Սկզբից և եթ պետք է վարժվես մենակ ապրելու, առանց դայակի, մի փոքրիկ տնտեսություն ստեղծես, այսինքն՝ տանն ունենաս քո սեղանը, թեյը, մի խոսքով, սեփական անկյունը, un chez soi, ինչպես ասում են ֆրանսիացիները: Այնտեղ դու ազատ կարող ես ընդունել ում որ կուզես... Ասենք, երբ ես տանն եմ ճաշում, ապա շնորհ արա դու էլ, իսկ մնացած օրերը՝ երիտասարդներն այստեղ սովորաբար ճաշում են պանդոկում, բայց ես քեզ խորհուրդ եմ տալիս ճաշը տուն բերել տալ. տանը և ավելի հանգիստ է, և ռիսկ չես անում ընդհարվելու աստված գիտի թե ում հետ: Այնպես չէ՞:

— Ես, հորեղբայր, շատ շնորհակալ եմ...

— Ի՞նչ շնորհակալություն: Չէ՞ որ դու ինձ ազգական ես: Ես իմ պարտքն եմ կատարում: Դե, հիմա ես կհագնվեմ ու կգնամ. համ պաշտոնն է վզիս, համ գործարանը...

— Ես չգիտեի, հորեղբայր, որ դուք գործարան ունեք:

— Ապակու և ճենապակու, բայց ես մենակ չեմ, երեք ընկեր ենք:

— Գործերը լա՞վ են գնում:

— Այո, կարգին վաճառում ենք մեծ մասամբ ներքին նահանգներում և տոնավաճառներին: Վերջին երկու տարին շատ լավ էր: Եթե մի հինգ տարի էլ այդպես գնա, այն ժամանակ... Ճիշտ է, ընկերներից մեկը այնքան էլ հուսալի չէ, շարունակ վատնում է, բայց ես կարողանում եմ նրան ձեռքումս պահել: Դե, ցտեսություն: Դու հիմա դիտիր քաղաքը, մի քիչ շրջագայիր, ճաշիր որևէ տեղ, իսկ երեկոյան եկ ինձ մոտ թեյ խմելու, ես տանը կլինեմ, այն ժամանակ կզրուցենք: Է՛յ, Վասիլի: Պարոնին ցույց կտաս սենյակը և կօգնես այնտեղ տեղավորվելու:

«Ահա՛ թե ինչպես է այստեղ, Պետերբուրգում...— մտածում էր Ալեքսանդրը, իր նոր կացարանում նստած: Եթե հարազատ հորեղբայրս այսպես է, հապա ուրիշներն ի՞նչ են...»:

Երիտասարդ Ադուևը խիստ մտախոհ երթևեկում էր սենյակում, իսկ Եվսեյը, ինքն իր հետ խոսելով, հավաքում էր սենյակը:

«Էս ինչ ապրուստ է էստեղ,— փնթփնթում էր նա,— Պյոտր Իվանիչի խոհանոցում, ասում են ամիսը մի անգամ է կրակ վառվում, մարդիկ ուրիշ տեղ են ճաշում... Հեյ, տեր աստվա՛ծ: Այ քեզ ժողովո՛ւրդ, խոսք չկա, հլա անուններն էլ պետերբուրգցի՛ է: Մեզ մոտ նույնիսկ ամեն մի շունը սեփական ամանից է լակում»:

Ալեքսանդրը, կարծես, համամիտ էր Եվսեյին, բայց լռում էր: Նա մոտեցավ լուսամուտին և տեսավ միայն ծխնելույզներ ու տանիքներ ու տների սև, կեղտոտ, աղյուսե կողեր… և համեմատեց այն բանի հետ, ինչ տեսել էր երկու շաբաթ առաջ իր գյուղական տան լուսամուտից: Նա տխրեց:

Նա փողոց դուրս եկավ՝ իրարանցում, ամենքը ուր-որ վազում են, զբաղված միայն իրենցով, հազիվ նայելով անցվորի վրա, և այն էլ միայն նրա համար, որ իրար չընդհարվեն: Նա հիշեց իր նահանգական քաղաքը, որտեղ ամեն մի հանդիպումը, ում հետ էլ որ լիներ, որևէ պատճառով հետաքրքիր էր: Մե՛կ ահա Իվան Իվանիչն է գնում Պյոտր Իվանիչի մոտ, և քաղաքում բոլորը գիտեն, թե ինչու: Մե՛կ Մարիա Մարտինովնան է վերադառնում երեկոյան ժամասացությունից, մե՛կ Աֆանասի Սավիչն է գնում ձկնորսության: Մեկ էլ նահանգապետի կողմից ժանդարմ է գլխապատառ քշում ձին բժշկի մոտ, և ամեն մեկը գիտի, որ նորին գերազանցություն տիկինն է բարեհաճում ծնել, թեև զանազան սանամերների ու տատիկների կարծիքով դրա մասին նախօրոք չպետք է իմանալ: Բոլորը հարցնում են՝ ի՞նչ է, աղջի՞կ է, թե տղա: Տիկինները պատրաստում են տոնական գլխադիրները: Հրեն Մատվեյ Մատվեյիչը տնից դուրս եկավ հաստ գավազանը ձեռքին, երեկոյան ժամը վեցի մոտ, և բոլորին հայտնի է, որ նա գնում է երեկոյան զբոսանքի, որ առանց այդ նրա ստամոքսը չի մարսում և որ նա անպայման կանգ կառնի ծեր խորհրդականի լուսամուտի մոտ, որը, նույնպես հայտնի է, այդ ժամանակ թեյ է խմում: Ում հանդիպես, ողջույն և մի երկու խոսք, իսկ ում էլ չես բարևի, միևնույն է, գիտես ով է, ուր է գնում և ինչու, և նրա աչքերում էլ գրված է՝ ես էլ գիտեմ, թե դուք ով եք, ուր և ինչու եք գնում: Եթե, վերջապես, հանդիպեն դեռևս իրար չտեսած անծանոթներ, ապա հանկարծ երկուսի դեմքերն էլ դառնում են հարցական նշաններ. նրանք կանգ կառնեն և մի երկու անգամ ետ կնայեն, իսկ տուն գնալով, կնկարագրեն նոր անձնավորության և զգեստը, և քայլվածքը, և կսկսվեն դատողություններ ու ենթադրություններ, թե ով է, որտեղացի է, ինչացու է: Իսկ այստեղ ուղղակի հայացքով ճանապարհից դեն են վանում, կարծես բոլորը միմյանց թշնամի են:

Ալեքսանդրը սկզբում գավառական հետաքրքրասիրությամբ ուշադիր զննում էր ամեն հանդիպածի և ամեն մի կարգին հագնված մարդու, նրանց մերթ որևէ մինիստրի ու դեսպանորդի, մերթ գրողի տեղ դնելով. «Արդյոք սա չէ՞,— մտածում էր նա,— արդյոք այն մյուսը չէ՞»: Բայց շուտով դա ձանձրացրեց նրան. մինիստրներ, գրողներ, դեսպանորդներ հանդիպում էին ամեն քայլափոխում:

Նա նայեց տներին ու ավելի ևս տխրեց. նրա վրա թախիծ էր իջնում այդ միօրինակ քարե հսկաներից, որոնք ինչպես վիթխարի դամբարաններ, համատարած զանգվածով ձգվում են մեկը մյուսի հետևից: «Ահա փողոցները կվերջանան և աչքերիս առաջ ազատ տարածություն կբացվի,— մտածում էր նա,— կամ մի բլրակ, կամ կանաչ, կամ փլված ցանկապատ»,— ոչ, նորից սկսվում է չորս շարք լուսամուտներով միատեսակ տների նույն քարե պատնեշը: Այս փողոցն էլ վերջացավ, նրան կտրում է դարձյալ նույնը, և ապա սկսվում է նույնպիսի տների նոր կարգը: Աջ նայես, ձախ նայես, ամենուրեք հսկաների զորաբանակի պես շրջապատում են տներ, տներ ու տներ, քար ու քար, շարունակ նույնը և նույնը... ելք ու ընդարձակություն չկա հայացքի համար. փակված եք ամեն կողմից, կարծես մարդկանց մտքերը, զգացմունքները նույնպես փակված են:

Ծանր են գավառացու առաջին տպավորությունները Պետերբուրգում: Նրա համար տարօրինակ է, տխուր. նրան ոչ ոք չի նկատում, նա կորսվել է այստեղ, ո՛չ նորությունները, ո՛չ բազմազանությունը, ո՛չ ամբոխը չեն զբաղեցնում նրան: Նրա գավառական եսասիրությունը պատերազմ է հայտարարում այն ամենին, ինչ նա տեսնում է այստեղ և ինչ չէր տեսել իր մոտ: Նա մտածմունքի մեջ է ընկնում և մտովի փոխադրվում իր քաղաքը: Ինչպիսի՛ զվարթ տեսարան: Մի տունը սրածայր տանիքով է և ակացիաների նախապարտեզով: Կտուրին վերնաշենք կա, ապաստարան աղավնիների համար, վաճառական Իզյումինը աղավնի թռցնելու սիրահար է: Դրա համար էլ նա վերցրել կտուրին աղավնատուն է շինել. առավոտներն էլ, իրիկուններն էլ, թասակը

գլխին, խալաթով, ձեռքին մի գավազան, որի ծայրին մի փալաս է կապած, կանգնում է կտուրին ու շվշվացնում է, գավազանը թափահարելով: Մի ուրիշ տուն՝ կարծես լապտեր լինի, բոլոր չորս կողմից լուսամուտներով ու տափարակ կտուրով, հինավուրց տուն է. թվում է, էս է, փուլ կգա կամ կվառվի ինքնաբռնկումից. բարակ տախտակը ինչ-որ բաց մոխրագույն երանգ է ստացել: Սարսափելի է այդպիսի տան մեջ ապրելը, բայց այնտեղ ապրում են: Ճիշտ է, երբեմն տանտերը նայում է թեքված առաստաղին ու գլուխն է օրորում, ասելով՝ տեսնես մինչև գարուն կանգուն կմնա՞: Գուցե՛,— ասում է հետո, և շարունակում է ապրել, երկյուղ կրելով ոչ թե իր, այլ գրպանի համար: Դրա կողքին սեթևեթող գեղեցկությամբ երևում է բժշկի՝ կիսաշրջանաձև փռված արտասովոր տունը, բուդկայի նմանող երկու կցաշենքերով, իսկ այս մեկը ամբողջովին թաքնվել է կանաչների մեջ. այն մյուսը մեջքը շուռ է տվել դեպի փողոցը, իսկ այստեղ երկու վերստ ձգվում է ցանկապատը, որի հետևի ծառերից նայում են կարմիր խնձորները՝ փոքրիկ տղաների գայթակղությունը: Տները եկեղեցիներից նահանջել են պատկառելի հեռավորության վրա: Նրանց շուրջը փարթամ խոտ է աճում, ընկած են շիրմաքարեր: Պաշտոնատները՝ ուղղակի երևում է, որ պաշտոնատներ են. անհարկի ոչ ոք չի մոտենում: Իսկ այստեղ, մայրաքաղաքում, դրանք չես տարբերի սովորական տներից, և դեռ, ամոթ է ասելը, կրպակ էլ կա այդ տանը: Իսկ եթե այնտեղ քաղաքում երկու-երեք փողոց անցնես, արդեն կզգաս ազատ օդը, սկսվում են ճյուղահյուս ցանկապատերը, նրանց հետև՝ բոստանները, իսկ դրանից էլ այն կողմ՝ մաքուր դաշտը գարնանացանով: Իսկ լռությո՛ւնը, իսկ անշարժությո՛ւնը, իսկ ձանձրո՛ւյթը՝ և փողոցում, և մարդկանց մեջ նույն երանելի անշարժությունն է: Եվ բոլորն ապրում են ազատ, սրտաբաց. ոչ ոքի համար անձուկ չէ. նույնիսկ հավերն ու աքլորները ազատ շրջում են փողոցներում, այծերն ու կովերը խոտ են պռճոկում, տղաները ֆռռան են բաց թողնում:

Իսկ այստեղ... Ինչպիսի՜ թախիծ է: Եվ գավառացին հառաչում է և իր լուսամուտների դիմացի ցանկապատի, և՛ փոշոտ ու կեղտոտ փողոցի, և խարխուլ կամուրջի, և խմիչքեղենի կանտորայի ցուցանակի կարոտը քաշելով. նրա համար տհաճ է խոստովանել, որ Իսահակի տաճարը ավելի բարձր ու լավ է իր քաղաքի տաճարից, որ ազնվական ակումբի դահլիճն ավելի մեծ է այնտեղի դահլիճից: Նա բարկացած լռում է նման համեմատությունների ժամանակ, իսկ երբեմն ռիսկ է անում ասելու, թե այսինչ կտորը կամ այնինչ գինին իրենց մոտ կարելի է ձեռք բերել և՛ ավելի լավ, և՛ ավելի էժան, և որ անդրծովյան հազվագյուտ բաների, այդ խոշոր խեցգետինների խեցիների և կարմիր ձկնիկների վրա այնտեղ չեն էլ նայի, և ձեր կամքն է օտարերկրացիներից գնել զանազան կտորներ ու զիզի-բիզիներ. նրանք ձեզ պլոկում են, իսկ դուք ուրախ եք ոչխարի դերում լինել: Փոխարենը՝ ինչպե՜ս է հանկարծ ուրախանում, երբ համեմատում և տեսնում է, որ իր քաղաքում խավիարը, տանձը, կալաչը ավելի լավն է: «Ուրեմն է՞ս է ձեր տանձը,— ասում է նա:— Ախր սա մեզ մոտ ծառաներն էլ չեն ուտի...»:

Է՛լ ավելի կտխրի գավառացին, երբ մտնի այդ տներից մեկը, հեռավոր տեղից նամակը ձեռքին: Նա կարծում է, թե ահա նրա առաջ լայնորեն կբացեն իրենց գիրկը, չեն իմանա ինչպես ընդունեն նրան, որտեղ նստեցնեն, ինչպես հյուրասիրեն. կսկսեն վարպետորեն խոսք դուրս քաշել, թե որն է նրա սիրած կերակուրը, ինչպես նա անհարմար կզգա այդ փաղաքշանքներից, ինչպես նա ի վերջո մի կողմ կթողնի բոլոր ձևականությունները, կհամբուրվի տանտիրոջ ու տանտիրուհու հետ, նրանց կսկսի դու ասել, կարծես քսան տարվա ծանոթներ լինեն. բոլորը թրմօղի կխմեն, գուցե կսկսեն խմբովի մի երգ երգել...

Որտեղի՜ց: Նրա վրա հազիվ են նայում, կնճռոտվում են, ներողություն խնդրում զբաղված լինելու համար. եթե գործ կա, ապա այնպիսի ժամ են նշանակում, երբ ոչ ճաշում են, ոչ ընթրում, իսկ ուտել-խմելու ժամ բոլորովին չունեն՝ ոչ օղի, ոչ ուտեստ: Տանտերը ետ-ետ է քաշվում գրկախառնությունից, հյուրի վրա նայում է մի տեսակ տարօրինակ: Հարևան սենյակում զնգզնգացնում են գդալները, բաժակները. հենց տեղն է, որ հրավիրեին, իսկ նրան վարպետ ակնարկներով աշխատում են ճամփու դնել... Ամեն ինչ փակի տակ է, ամեն տեղ զանգակ. մի՞թե սա ողորմելի բան չէ: Եվ ինչ-որ սառը, մարդախույս հայացքներ: Իսկ այնտեղ, մեզ մոտ, մտի՜ր համարձակ. եթե արդեն ճաշել են, հյուրի համար նորից կճաշեն. ինքնաեռը առավոտ-իրիկուն սեղանից չի վերանում, իսկ զանգակներ խանութներում էլ չկան: Գրկախառնվում, համբուրվում են բոլորը, հանդիպող-չհանդիպող: Այնտեղ հարևանը իսկական հարևան է. ապրում են ձեռք ձեռքի,

սիրտ սրտի. այնտեղ ազգականը իսկական ազգական է. կմեռնի յուրայինի համար… Է՜խ, տխո՜ւր է:

Ալեքսանդրը հասավ մինչև Ադմիրալտեյսկայա հրապարակ և քարացավ: Նա մոտ մի ժամ կանգնած մնաց **Պղնձե հեծյալի** առաջ, բայց ոչ հոգու մեջ դառն կշտամբանք, ինչպես խեղճ **Եվգենին**, այլ հիացական խոհերով: Նայեց Նևային, նրան շրջապատող շենքերին, և նրա աչքերը շողացին: Նա հանկարծ ամաչեց խարխուլ կամուրջների, նախապարտեզների, քանդված ցանկապատերի նկատմամբ ունեցած իր կողմնակալությունից: Նա ուրախ ու թեթև զգաց: Եվ իրարանցումը, և ամբոխը՝ ամեն ինչ ուրիշ նշանակություն ստացան նրա աչքում: Նորից առկայծեցին հույսերը, որ առժամապես ճնշվել էին տխուր տպավորությամբ. նոր կյանքը նրա առաջ բացել էր իր գիրկը և հրապուրում էր դեպի ինչ-որ անհայտություն: Նրա սիրտն ուժգին բաբախում էր: Նա երազում էր ազնիվ աշխատանքի, բարձր ձգտումների մասին և շատ ծանրումեծ քայլում էր Նևսկի պողոտայով, իրեն համարելով նոր աշխարհի քաղաքացի... Այդ երազանքներով նա վերադարձավ տուն:

Երեկոյան ժամը 11-ին հորեղբայրը մարդ ուղարկեց նրան թեյի կանչելու:

— Ես հենց նոր թատրոնից եմ գալիս,— ասաց հորեղբայրը, բազմոցին պառկելով:

— Ափսոս, որ այն ժամանակ ինձ չասացիք, հորեղբայր, ես կգայի ձեզ հետ:

— Ես բազկաթոռի էի նստած, դու ո՞ւր, ծնկների՞ս պիտի նստեիր,— ասաց Պյոտր Իվանիչը:— Այ, վաղը գնա մենակ:

— Մենակ տխուր է ամբոխի մեջ, հորեղբայր. մեկը չկա, որին հաղորդես տպավորություններդ...

— Եվ կարիք էլ չկա: Պետք է կարողանաս և զգալ, և մտածել, մի խոսքով, ապրել մենակ. ժամանակին պետք կգա: Եվ մեկ էլ մինչև թատրոն գնալը դու պետք է վայելուչ հագնվես:

Ալեքսանդրը նայեց իր զգեստին և զարմացավ հորեղբոր խոսքերից: «Ինչո՞վ եմ անվայելուչ հագնված,— մտածում էր նա:— Կապույտ սերթուկ, կապույտ շալվար...»

— Ես, հորեղբայր, շատ շորեր ունեմ,— ասաց նա,— Քյոնիգշտեյնն է կարել, նա մեզ մոտ նահանգապետի համար է կարում:

— Հոգ չէ, միևնույն է, դա պիտանի չէ. մոտ օրերս քեզ կտանեմ իմ դերձակի մոտ, բայց դրանք դատարկ բաներ են. ավելի կարևոր բաներ կան խոսելու: Ասա տեսնեմ, ինչո՞ւ ես եկել այստեղ:

— Ես եկել եմ... ապրելու:

— Ապրելո՞ւ: Այսինքն՝ եթե ապրել ասելով նկատի ունես ուտելը, խմելը և քնելը, դրա համար չարժեր նեղություն քաշել այսքան հեռու գնալու. քեզ այստեղ չի հաջողվի ոչ այնպես ուտել, ոչ քնել, ինչպես ձեր տանը. իսկ եթե դու մի ուրիշ բան էիր մտածում, ապա բացատրիր…

— Կյանքից օգուտ քաղել, ուզում էի ասել,— ավելացրեց Ալեքսանդրը ամբողջովին կարմրատակելով:— Գյուղն ինձ ձանձրացրել էր, շարունակ միևնույնը…

— Ա՛: Ահա՛ թե ինչ: Ուրեմն դու Նևսկու վրա գեղեցկահարկ կվարձես, կառք կգնես, ծանոթների մեծ շրջանակ կստեղծես և ընդունելության օրե՞ր կսահմանես:

— Բայց չէ՞ որ դա շատ թանկ կնստի,— միամտաբար նկատեց Ալեքսանդրը:

— Մայրդ գրում է, որ քեզ հազար ռուբլի է տվել. դա քիչ է,— ասաց Պյոտր Իվանիչը:— Իմ ծանոթներից մեկն էլ վերջերս եկել էր այստեղ. նա էլ էր ձանձրացել գյուղից, նա ուզում է կյանքից օգտվել, բայց նա իր հետ բերել է հիսուն հազար և ամեն տարի նույնքան կստանա: Նա իրոք որ կօգտվի կյանքից Պետերբուրգում, իսկ դու՝ ոչ: Դու դրա համար չես եկել:

— Ձեր ասելով, հորեղբայր, դուրս է գալիս, որ կարծես թե ես չգիտեմ, ինչու եմ եկել:

— Համարյա թե այդպես. դա ավելի լավ է ասված, այդտեղ ճշմարտություն կա. միայն դեռ բոլորովին լավ չի ասված: Մի՞թե երբ դու պատրաստվում էիր այստեղ գալու, այդ հարցը քեզ չտվիր. ինչո՞ւ եմ գնում: Դա ավելորդ չէր լինի:

— Նախքան այդ հարցն ինձ տալը, պատասխանն արդեն պատրաստ էր,— հպարտությամբ ասաց Ալեքսանդրը:

— Բա ինչո՞ւ չես ասում: Դե, ինչո՞ւ:

— Ինձ քաշում էր ինչ-որ անհայտ ձգտում, ազնիվ գործունեության ծարավը. իմ մեջ եռում էր ցանկությունը պարզաբանել և իրագործել…

Պյոտր Իվանիչը փոքր-ինչ բարձրացավ բազմոցից, բերանից հանեց սիգարը և ականջները սրեց:

— Իրագործել այն հույսերը, որոնք խռնվում էին…

— Արդյոք բանաստեղծություններ չե՞ս գրում,— հանկարծ հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Եվ արձակ, հորեղբայր. կիրամայե՞ք բերեմ:

— Ոչ, ոչ... Հետո երբևէ. ես հենց այնպես հարցրի:

— Իսկ ինչո՞ւ:

— Դու այնպես ես խոսում, որ...

— Մի՞թե վատ:

— Ոչ, գուցե շատ լավ, բայց տարօրինակ:

— Մեր էսթետիկայի պրոֆեսորն այդպես էր խոսում և համարվում էր ամենապերճախոս պրոֆեսորը,— շփոթվելով ասաց Ալեքսանդրը:

— Իսկ նա ինչի՞ մասին էր այդպես խոսում:

— Իր առարկայի մասին:

— Ա՛:

— Հապա ինչպե՞ս խոսեմ, հորեղբայր:

— Պարզ, ինչպես խոսում են բոլորը, այլ ոչ ինչպես էսթետիկայի պրոֆեսորը: Ասենք, դա միանգամից բացատրել չի լինի. հետո դու ինքդ կտեսնես: Դու, կարծեմ, ուզում ես ասել, որքան կարող եմ մտաբերել համալսարանական դասախոսությունները և թարգմանել քո խոսքերը, եկել ես այստեղ կարիերայի և բախտ որոնելու համար, այդպե՞ս է:

— Այո, հորեղբայր, կարիերա…

— Եվ բախտ,— ավելացրեց Պյոտր Իվանիչը:— Ի՛նչ կարիերա առանց բախտի: Լավ միտք է, միայն... զուր ես եկել:

— Ինչու որ: Հուսամ, դուք սեփական փորձից ելնելով չե՞ք ասում այդ,— ասաց Ալեքսանդրը իր շուրջը նայելով:

— Խելացի նկատողություն է: Ճիշտ է, տունս լավ է կահավորված և գործերս էլ վատ չեն: Բայց, ինչքան տեսնում եմ՝ իմ և քո մեջ մեծ տարբերություն կա:

— Ես բնավ չեմ համարձակվում ինձ համեմատել ձեզ հետ:

— Բանն այդ չի, դու, թերևս, տասն անգամ ավելի խելացի ու լավ ես ինձնից… բայց կարծես քո բնությունն այնպես չէ, որ ենթարկվի նոր կարգին. իսկ այնտեղի կարգը՝ օ՛յ, օ՛յ: Տես, մայրդ քեզ նրբացրել ու երես է տվել, դու որտեղի՞ց կդիմանաս այն ամենին, ինչին ես դիմացել եմ: Դու, ըստ

երևույթին, երազող ես, իսկ այստեղ երազելու ժամանակ չկա. մեզ նմանները այստեղ գալիս են գործ տեսնելու: — Գուցե ես ի վիճակի եմ որևէ բան անել, եթե ինձ չմերժեք ձեր խորհուրդներն ու փորձառությունը…

— Խորհուրդ տալ վախենում եմ: Ես երաշխավոր չեմ քո գյուղական բնության համար. հիմար բան ստացվի՝ ինձ ես մեղադրելու. իսկ իմ կարծիքն ասել՝ խնդրեմ, չեմ հրաժարվում. դու լսիր կամ մի լսիր, ինչպես ուզում ես: Բայց ոչ: Ես հաջողության հույս չունեմ: Դուք այնտեղ ձեր հայացքն ունեք կյանքի նկատմամբ. ինչպե՞ս պիտի վերամշակես այն: Ձեր խելքը գնում է սիրո, բարեկամության, կյանքի հրապույրների, երջանկության համար. կարծում եք, թե կյանքը հենց դրանում է կայանում՝ ախ ու վա՜խ: Լալիս են, թնգթնգում են ու սիրաբանում, իսկ գործ չեն անում… Ինչպե՞ս պիտի քեզ ետ վարժեցնեմ այդ ամենից: Դժվա՜ր բան է:

— Ես կաշխատեմ, հորեղբայր, հարմարվել ժամանակի հասկացողություններին: Արդեն այսօր, նայելով այս հսկա շենքերին, հեռավոր երկրների պարգևները մեզ բերող նավերին, ես մտածեցի ժամանակակից մարդկության հաջողությունների մասին, ես հասկացա այս խելացի, գործունյա ամբոխի հուզմունքը, պատրաստ եմ ձուլվելու նրա հետ...

Պյոտր Իվանիչը այդ մենախոսության ժամանակ նշանակալի բարձրացրեց հոնքերը և ուշադիր նայեց եղբորորդուն: Սա կանգ առավ:

— Բանը, կարծես, պարզ է,— ասաց հորեղբայրը,— իսկ սրանք, աստված գիտե, թե ինչեր են մտածում... «խելացի, գործունյա ամբո՜խ»: Իսկապես, ավելի լավ կլիներ այնտեղ մնայիր: Կյանքդ հրաշալի կանցկացնեիր. այնտեղ կլինեիր բոլորից խելացի, գրողի ու պերճախոս մարդու համբավ կունենայիր, կհավատայիր հավերժական ու անդավաճան բարեկամությանն ու սիրուն, ազգակցությանը, երջանկությանը, կամուսնանայիր և աննկատելի կապրեիր մինչև ծերություն, և իսկապես էլ յուրովի երջանիկ կլինեիր. իսկ այստեղի ձևով դու երջանիկ չես լինի. այստեղ այդ բոլոր հասկացողությունները պետք է գլխիվայր շուռ տալ:

— Ինչպե՜ս, հորեղբայր, մի՞թե բարեկամությունն ու սերը, այդ բարձր ու սրբազան զգացմունքները, որոնք կարծես հանկարծակի երկնքից ընկել են երկրային կեղտի մեջ…

— Ի՞նչ...

Ալեքսանդրը լռեց:

— «Սերն ու բարեկամությունը ընկել են կեղտի մե՜ջ»: Դե, ինչպե՞ս պիտի այդպիսի մի բան դուրս տաս այստեղ:

— Մի՞թե դրանք այստեղ էլ նույնը չեն, ինչ որ այնտեղ, ուզում եմ ասել:

— Այստեղ էլ կա սեր և բարեկամություն, որտե՞ղ չկա այդ բարիքը: Միայն ոչ այնպիսին, ինչպես այնտեղ, ձեզ մոտ. ժամանակի ընթացքում ինքդ կտեսնես: Դու ամենից առաջ մոռացիր այդ **սրբազան** ու **երկնային** զգացմունքները, այլ գործին նայիր այնպես, ավելի պարզ, ինչպես որ նա կա, իսկապես ավելի լավ է, ավելի պարզ էլ կխոսես: Ասենք, դա իմ գործը չէ: Այստեղ ես եկել, ետ հո չե՞ս վերադառնալու. Եթե որոնածդ չգտնես, ինքդ քեզ մեղադրիր: Ես քեզ կնախազգուշացնեմ, թե իմ կարծիքով ինչն է լավ, ինչը՝ վատ, իսկ ինքդ՝ ինչպես կուզես... Փորձենք, գուցե հաջողվի քեզ մի բան դարձնել: Հա, մայրիկդ խնդրել է, որ քեզ փող հայթայթեմ... Գիտե՞ս ինչ կասեմ քեզ. ինձնից փող մի խնդրի. դա միշտ խախտում է օրինավոր մարդկանց բարի հարաբերությունները: Ասենք, մի կարծիր, որ քեզ կմերժեի, ոչ, եթե այնպես պատահի, որ ուրիշ միջոց չլինի, ճար չկա, դիմիր ինձ... Միշտ էլ ավելի լավ է հորեղբորից վերցնել, քան օտարից, գոնե առանց տոկոսների կլինի: Բայց որպեսզի այդ ծայրահեղությանը չդիմես, ես քեզ համար շուտով տեղ կգտնեմ, որպեսզի կարողանաս փող ունենալ: Դե, ցտեսություն: Առավոտյան անցիր, կխոսենք, թե ինչ ու ինչպես անենք:

Ալեքսանդր Ֆյոդորիչը գնաց տուն:

— Լսիր չե՞ս ուզում ընթրել,— նրա հետևից ասաց Պյոտր Իվանիչը:

— Այո, հորեղբայր... ես կուզենայի...

— Ես ոչինչ չունեմ...

Ալեքսանդրը լուռ էր: «Էլ ինչո՞ւ համար էր այդ պարտադիր առաջարկությունը»,— մտածում էր նա:

— Ես տանը բան չեմ պահում, իսկ պանդոկները հիմա փակ են,— շարունակեց հորեղբայրը:— Ահա քեզ դաս առաջին անգամվա համար, վարժվիր: Ձեզ մոտ վեր են կենում և պառկում են արևի հետ, ուտում-խմում են, երբ հրամայում է բնությունը. ցուրտ է՝ ականջակալներով գլխարկ են դնում՝ և իսկի պետքներն էլ չի. եթե լույս է՝ ցերեկ է, մութ է՝ ուրեմն գիշեր է: Ահա քո աչքերը կպչում են, իսկ ես դեռ պետք է նստեմ աշխատելու. մինչև ամսվա վերջը պետք է հաշիվները հանրագումարել: Դուք այնտեղ տարին բոլոր թարմ օդ եք շնչում, իսկ այստեղ այդ բավականությունն էլ փող արժի. և ամեն ինչ էլ այդպես է: Կատարյալ հակոտնյաներ: Այստեղ ահա չեն էլ ընթրում, հատկապես սեփական հաշվին, նաև իմ հաշվին: Դա քեզ նույնիսկ օգտակար է. գիշերները չես հառաչի ու դես-դեն նետվի, իսկ քեզ խաչակնքելու ես ժամանակ չունեմ:

— Դրան, հորեղբայր, հեշտ է վարժվելը...

— Լավ է, եթե այդպես է: Իսկ ձեզ մոտ էլի առաջվա պե՞ս է. կարելի է գիշերը հյուր գալ և իսկույն ընթրի՞ք կպատրաստեն:

— Ի՞նչ կա որ, հորեղբայր, հուսով եմ, այդ գիծը չի կարելի պարսավել: Ռուսների առաքինությունը...

— Հերի՛ք: Այստեղ ի՞նչ առաքինություն կա: Ձանձրույթից այնտեղ ամեն մի սրիկայի հայտնվելուն ուրախ են. «Ողորմած եղեք, կեր ինչքան ուզես, միայն որևէ կերպ զբաղեցրու մեր պարապությունը, օգնիր ժամանակն սպանելու և թող քեզ տեսնենք. համենայն դեպս ինչ-որ նոր բան է. իսկ ուտելիքը չենք խնայի. դա մեզ համար այստեղ ոչինչ չարժի...»: Զզվելի՛ առաքինություն:

Այդպես էլ Ալեքսանդրը պառկեց քնելու և աշխատում էր կռահել, թե ինչ մարդ է հորեղբայրը: Նա վերհիշեց ամբողջ խոսակցությունը. շատ բան չէր հասկացել, ուրիշ բաների էլ շատ չէր հավատում:

«Լավ չեմ խոսո՛ւմ,— մտածում էր նա:— «Սերն ու բարեկամությունը հավերժական չե՞ն»,— արդյոք ինձ վրա չի՞ ծիծաղում հորեղբայրս: Մի՞թե այստեղի կարգն այդպես է: Հապա իմ ի՞նչն է Սոֆիային առանձնապես դուր գալիս, եթե ոչ՝ խոսելու ձիրքը: Իսկ նրա սերը մի՞թե հավերժական չէ... Եվ մի՞թե իսկապես այստեղ չեն ընթրում»:

Նա դեռ երկար շուռ ու մուռ էր գալիս անկողնում. անհանգիստ մտքերով լիքը գլուխը և դատարկ ստամոքսը չէին թողնում, որ նա քնի:

Անցավ մի երկու շաբաթ:

Պյոտր Իվանիչը օրեցօր ավելի գոհ էր մնում իր եղբորորդուց:

— Նա տակտ ունի,— ասում էր նա գործարանի իր ընկերներից մեկին,— մի բան, որ ես բոլորովին չէի սպասում գյուղացի պատանուց: Նա զահլա չի տանում, առանց իմ կանչելու մոտս չի գալիս, և երբ նկատում է, որ ինքն ավելորդ է, անմիջապես գնում է: Փող էլ չի խնդրում. նա հանդարտ տղա է: Տարօրինակություններ ունի... խցկվում է համբուրելու, խոսում է սեմինարիստի պես... բայց դրանից ետ կվարժվի. այն էլ լավ է, որ վզիս չնստեց:

— Կարողություն ունի՞,— հարցրեց ընկերը:

— Ոչ. մի ինչ-որ հարյուր հոգի:

— Ի՞նչ կա որ: Եթե ընդունակություններ ունի, այստեղ առաջ կգնա... Չէ՞ որ դուք էլ փոքրից սկսեցիք, բայց ահա, փառք աստծո...

— ՉԷ՛: Որտեղի՜ց: Ոչինչ չի անի: Այդ հիմար խանդավառությունը ոչ մի բանի պետք չէ, ախ ու վա՜խ: Չի վարժվի նա այստեղի կարգին. որտեղի՞ց պիտի կարիերա անի: Զուր է եկել... Դե, սա արդեն իր գործն է:

Ալեքսանդրը իր պարտքն էր համարում սիրել հորեղբորը, բայց ոչ մի կերպ չէր կարողանում վարժվել նրա բնավորությանն ու մտածելակերպին:

«Հորեղբայրս, թվում է, բարի մարդ է,— գրում էր նա մի առավոտ Պոսպելովին,— շատ խելացի է, միայն չափազանց պրոզաիկ մարդ է, շարունակ գործերի ու հաշիվների մեջ... Նրա հոգին կարծես գամված է երկրին և երբեք չի խոյանում մինչև մարդու հոգևոր բնության երևույթների մաքուր, երկրային հոգսերից մեկուսացած հայեցողության: Նրա համար երկինքը անխզելիորեն կապված է երկրի հետ, և, թվում է, իմ ու նրա հոգիները երբեք լիովին չեն ձուլվի: Այստեղ գալիս, ես ենթադրում էի, որ նա, որպես հորեղբայր, ինձ տեղ կտա իր սրտում, այստեղի սառն ամբոխի մեջ ինձ կջերմացնի բարեկամության տաք գրկում. իսկ բարեկամությունը, դու գիտես,

երկրորդ նախախնամությունն է:

Բայց նա էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ ամբոխի արտահայտությունը: Ես մտածում էի ժամանակս կիսել նրա հետ, ոչ մի րոպե չբաժանվել, բայց ինչի՞ հանդիպեցի: Սառը խորհուրդներ, որոնք նա անվանում է խելացի. բայց ավելի լավ է դրանք լինեն ոչ խելացի, սակայն լի ջերմ, սրտագին կարեկցությամբ: Նա, հպարտը հպարտ չի, բայց թշնամի է ամեն տեսակ անկեղծ զեղումների. մենք չենք ճաշում, չենք ընթրում միասին, ոչ մի տեղ չենք գնում: Տուն վերադառնալով, երբեք չի պատմի, թե որտեղ էր, ինչ էր անում և նույնպես երբեք չի ասում, թե ուր է գնում և ինչու, ովքեր են նրա ծանոթները, մի բան դուր գալիս է նրան թե ոչ, ինչպես է անցկացնում ժամանակը: Երբեք առանձնապես բարկացած չէ, ոչ էլ սիրալիր, ոչ տխուր, ոչ ուրախ: Նրա սրտին օտար են սիրո, բարեկամության պոռթկումները, բոլոր ձգտումները դեպի գեղեցիկը: Հաճախ խոսում ու խոսում ես ինչպես ոգեշնչված մարգարե, գրեթե ինչպես մեր մեծ, անմոռանալի Իվան Սեմյոնիչը, երբ նա, հիշո՞ւմ ես, որոտում էր ամբիոնից, իսկ մենք ոգեշնչված սարսռում էինք նրա հրացայտ հայացքից ու խոսքից. իսկ հորեղբա՞յրս. ունկնդրում է հոնքերը բարձրացրած և նայում է այնքան օտարոտի կամ ծիծաղում է այնպիսի ծիծաղով, որը սառեցնում է արյունս, և՝ մնաս բարո՜վ ոգևորություն: Ես երբեմն կարծես թե նրա մեջ տեսնում եմ պուշկինյան դևը... Չի հավատում նա **սիրուն** և այլն. ասում է, որ երջանկություն չկա, որ ոչ ոք էլ չի խոստացել այդ երջանկությունը, այլ կա ուղղակի կյանք, որը բաժանվում է բարու և չարի, բավականությունների, հաջողության, առողջության, անդորրի, հետո դժգոհության, անհաջողության, անհանգստության, հիվանդությունների և այլն, որ այդ բոլորին պետք է նայել պարզ, գլուխը չմտցնել անօգուտ — ինչպե՞ս է, անօգո՜ւտ — հարցեր այն մասին, թե մենք ինչու ենք ստեղծված, և ինչի ենք ձգտում, որ դա մեր հոգսը չէ և, որ, այդ պատճառով մենք չենք տեսնում, թե ինչ է կատարվում քթներիս տակ, և մեր գործը չենք կատարում... Մի գլուխ գործի մասին ես լսում: Նրանից չես հասկանա՝ արդյոք նա որևէ վայելքի ազդեցության տակ է գտնվում, թե պրոզաիկ գործերի. և հաշիվներ անելիս, և՛ թատրոնում միատեսակ է. ուժեղ տպավորությունն ինչ է՝ չգիտի և, կարծես թե, չի սիրում նրբագեղը, դա օտար է նրա հոգուն. ես կարծում եմ, որ նա չի կարդացել նույնիսկ Պուշկինը...»:

Պյոտր Իվանիչը անսպասելիորեն մտավ եղբորորդու սենյակը և նրան գտավ նամակ գրելիս:

— Ես եկա տեսնելու, թե ինչպե՞ս ես տեղավորվել այստեղ,— ասաց նա,— և գործի մասին խոսելու:

Ալեքսանդրը վեր թռավ և հապճեպ ձեռքով ծածկեց ինչ-որ բան:

— Պահիր, պահիր գաղտնիքդ,— ասաց Պյոտր Իվանիչը,— ես շուռ կգամ: Դե, պահեցի՞ր: Իսկ սա ի՞նչ էր, ընկավ: Սա ի՞նչ բան է:

— Դա, հորեղբայր, ոչինչ...— սկսեց Ալեքսանդրը, բայց շփոթվեց ու լռեց:

— Կարծես, մազե՛ր են: Ճշմարի՛տ ոչինչ: Այս մեկը ես արդեն տեսա, դե, ցույց տուր և այն, որ ձեռքումդ պահեցիր:

Ալեքսանդրը, ինչպես հանցանքում բռնված աշակերտ, ակամա բաց արեց բուռը և ցույց տվեց մի մատանի:

— Սա ի՞նչ է: Որտեղի՞ց,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Սա, հորեղբայր, իրեղեն նշաններ են... անիրեղեն հարաբերությունների...

— Ի՞նչ: Ի՞նչ: Հապա մի այստեղ տուր այդ նշանները:

— Սրանք գրավականներ են...

— Հավանաբար գյուղի՞ց ես բերել:

— Սոֆիայից, հորեղբայր, հիշատակ է... հրաժեշտ տալիս...

— Հենց այդ է որ կա: Եվ դա բերել ես հազար հինգ հարյուր վերստ հեռվի՞ց:

Հորեղբայրը գլուխն օրորեց:

— Ավելի լավ էր, դու էլի մի պարկ չորացրած մոշ բերեիր. դա գոնե խանութում կսաղացնեինք. իսկ այս գրավականները...

Նա դիտում էր մերթ մազերը, մերթ մատանին. մազերը հոտոտեց, իսկ մատանին ծանր ու թեթև արեց ձեռքում: Հետո սեղանից մի թուղթ վերցրեց, դրա մեջ փաթաթեց երկու նշանն էլ, այդ ամենը պինդ սեղմեց, գունդ արեց և հո՛պ լուսամուտից դուրս:

— Հորեղբա՛յր,— մոլեգնած բղավեց Ալեքսանդրը, բռնեց նրա ձեռքից, բայց ուշ էր. գունդը թռավ հարևան կտուրի անկյունի վրայով, ընկավ ջրանցքը, աղյուս բարձած բեռնակիր գետանավի եզրին, ետ թռավ ու ընկավ ջուրը:

Ալեքսանդրը լուռ, դառն կշտամբանքի արտահայտությամբ նայում էր հորեղբորը:

— Հորեղբա՛յր,— կրկնեց նա:

— Ի՞նչ:

— Ինչպե՞ս կոչեմ ձեր արարքը:

— Անիրեղեն նշանների և ամեն տեսակ զիբիլի ու դատարկ բաների նետումը լուսամուտից, ինչ որ հարկավոր չէ պահել սենյակում…

— Դատարկ բաների, դրանք դատարկ բանե՛ր են:

— Իսկ դու կարծում էիր՝ ի՞նչ են:— Քո սրտի կեսը... Ես նրա մոտ եկել եմ գործով, իսկ նա ահա թե ինչով է զբաղվում՝ նստել է անպետք բաների մասին է մտածում:

— Մի՞թե դա խանգարում է գործին, հորեղբայր:

— Շատ: Ժամանակն անցնում է, իսկ դու մինչև հիմա դեռ խոսք էլ չես արել քո մտադրությունների մասին. արդյոք ուզում ես պաշտոնավարել, թե՞ մի ուրիշ զբաղմունք ես ընտրել՝ ոչ մի խոսք: Իսկ բոլորը նրանից է, որ մտքումդ Սոֆիան է ու նշանները: Ահա, դու, կարծեմ, նրան նամակ ես գրում: Այնպես չէ՞:

— Այո... ես սկսեցի...

— Իսկ մորդ գրե՞լ ես:

— Դեռ ոչ, ես ուզում էի վաղը գրել:

— Իսկ ինչո՞ւ վաղը: Մորդ վաղը, իսկ Սոֆիային, որին պետք է մի ամիս հետո մոռանալ՝ այսօր...

— Սոֆիայի՞ն: Մի՞թե կարելի է նրան մոռանալ:

— Պետք է: Եթե գրավականներդ դուրս չնետեի, ով գիտե, մեկ էլ տեսար, մի ավելորդ ամիս էլ նրան կհիշեիր: Ես քեզ կրկնակի ծառայություն մատուցեցի: Մի քանի տարի հետո այդ նշանները քեզ կհիշեցնեին հիմարությունդ, որից կկարմրեիր:

— Կարմրել այդպիսի մաքուր, սրբազան հիշողությունի՞ց: Դա նշանակում է չընդունել պոեզիան...

— Ի՞նչ պոեզիա կարող է լինել հիմարության մեջ: Պոեզիա կա, օրինակ, մորաքրոջդ նամակում: Դեղին ծաղիկ, լիճ, ինչ-որ գաղտնիք... հենց որ կարդացի, այնպես վատ զգացի, որ ասել չի լինի: Քիչ մնաց կարմրեի, ես, որ կարծես մոռացել եմ կարմրել:

— Դա սարսափելի է, սարսափելի է, հորեղբայր: Նշանակում է, դուք երբեք չե՞ք սիրել:

— Նշանները տանել չէի կարող:

— Դա ինչ-որ փայտացած կյանք է,— խիստ հուզված, ասաց Ալեքսանդրը:— Բուսական կյանք է, ոչ թե կյանք: Գորշ կյանք վարել **անհերշնչում, անարցունք, անկյանք, անսեր ու անհույզ...**

— Եվ առանց մազերի,— ավելացրեց հորեղբայրը:

— Ինչպե՞ս կարող եք, հորեղբայր, այդպես սառնորեն ծաղրել այն ամենը, ինչ որ լավագույնն է աշխարհիս երեսին: Չէ՞ որ դա հանցագործություն է... Սերը... Սրբազան հուզումները...

— Գիտեմ ես այդ սրբազան սերը. քո տարիքում հենց որ տեսնեն մի խոպոպ, կոշիկ, ծնկակալ, դիպչեն ձեռքին, ամբողջ մարմնով կհոսի սրբազան, վեհ սերը, իսկ որ ազատություն տաս, էնիքը... Ցավոք սրտի, քո սերը առաջիկայում է. դրանից ոչ մի կերպ չես խուսափի, իսկ գործը կխուսափի քեզանից, եթե նրանով չզբաղվես:

— Բայց մի՞թե սերը գործ չէ:

— Ոչ. հաճելի զվարճություն է, միայն հարկավոր չէ չափից ավելի տարվել դրանով, թե չէ հիմար բան կստացվի: Դրա համար էլ վախենում եմ քեզ համար:

Հորեղբայրը գլուխն օրորեց:

— Ես գրեթե գտել եմ քեզ համար տեղ. չէ՞ որ դու ուզում ես ծառայել,— ասաց նա:

— Ախ, հորեղբայր, որքա՜ն ուրախ եմ:

Ալեքսանդրը նետվեց և համբուրեց հորեղբոր այտը:

— Վերջը առիթ գտար,— ասաց հորեղբայրը, այտը սրբելով:— Ինչպես եղավ, որ չզգուշացա: Դե, լսիր, ուրեմն: Ասա, թե ինչ գիտես, ինչի՞ ընդունակ ես համարում քեզ:

— Ես գիտեմ աստվածաբանություն, քաղաքացիական, քրեական, բնական և ժողովրդական իրավունք, դիվանագիտություն, քաղաքատնտեսություն, փիլիսոփայություն, էսթետիկա, հնագիտություն...

— Կաց, կա՛ց: Իսկ դու գիտե՞ս կանոնավոր ռուսերեն գրել: Հիմա դա ամենից կարևորն է:

— Ի՜նչ հարց է, հորեղբայր. գիտե՞մ ռուսերեն գրել,— ասաց Ալեքսանդրը և վազեց դեպի կոմոդը, որտեղից սկսեց հանել զանազան թղթեր, մինչդեռ, հորեղբայրը սեղանից վերցրեց ինչ-որ նամակ և սկսեց կարդալ:

Ալեքսանդրը թղթերը ձեռքին մոտեցավ սեղանին և տեսավ, որ հորեղբայրը կարդում է նամակը: Թղթերը նրա ձեռքից թափվեցին:

— Այդ ի՞նչ եք կարդում, հորեղբայր,— ասաց նա վախեցած:

— Ահա այստեղ մի նամակ էր դրված, հավանաբար ընկերոջդ հասցեագրած: Ներիր, ես ուզում էի տեսնել, թե ինչպես ես գրում:

— Եվ դուք կարդացի՞ք:

— Այո, գրեթե ահա միայն երկու տող է մնացել, հիմա կվերջացնեմ. իսկ ի՞նչ կա որ, չէ՞ որ այստեղ ոչ մի գաղտնիք չկա, այլապես նա այստեղ գցած չէր լինի...

— Ի՞նչ եք մտածում հիմա իմ մասին...

— Կարծում եմ, որ դու կարգին գրում ես, ուղիղ, կոկիկ...

— Նշանակում է, դուք չկարդացի՞ք այն, ինչ որ այստեղ գրված է,— աշխուժորեն հարցրեց Ալեքսանդրը:

— Ոչ, կարծեմ կարդացի բոլորը,— ասաց Պյոտր Իվանիչը, նայելով թերթի երկու էջին էլ:— Նախ նկարագրում ես Պետերբուրգը, քո տպավորությունները, իսկ հետո՝ ինձ:

— Աստվա՛ծ իմ,— բացականչեց Ալեքսանդրը և ձեռքերով ծածկեց երեսը:

— Այդ ի՞նչ է, քեզ ի՞նչ պատահեց:

— Եվ դուք այդ ասում եք հանգի՞ստ: Դուք չե՞ք բարկանում, չէ՞ք ատում ինձ:

— Ոչ: Ինչո՞ւ պիտի կատաղեմ:

— Կրկնեցեք, հանգստացրեք ինձ:

— Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

— Հավատալս չի գալիս. ապացուցեք, հորեղբայր:

— Ինչո՞վ կհրամայես:

— Գրկեցեք ինձ:

— Ներիր, չեմ կարող:

— Իսկ ինչո՞ւ:

— Որովհետև այդ քայլի մեջ խելք, այսինքն՝ իմաստ չկա, կամ, քո պրոֆեսորի խոսքերով ասած, գիտակցությունս ինձ չի դրդում այդ անելու. այ, եթե դու կին լինեիր, ուրիշ բան. դա այնտեղ արվում է առանց իմաստի, ուրիշ մղումով:

— Զգացմունքը, հորեղբայր, ձգտում է դրսևորման, պահանջում է պոռթկում, զեղում...

— Իմ զգացմունքը չի ձգտում ու պահանջում, եթե նույնիսկ ձգտեր էլ, ես կզսպեի, և քեզ էլ խորհուրդ եմ տալիս:

— Իսկ ինչո՞ւ:

— Նրա համար, որ հետո, երբ մոտիկից դիտես մարդուն, որին գրկել ես, չկարմրես քո գրկախառնության համար:

— Մի՞թե չի պատահում, հորեղբայր, որ վանես մարդուն և հետո զղջաս:

— Պատահում է. դրա համար էլ ես երբեք ոչ ոքի չեմ վանում:

— Դուք ի՞նձ էլ չեք վանի իմ արարքի համար, հրեշ չե՞ք անվանի:

— Քո ասելով, ով որ ցնդաբանություն գրի, նա հրեշ է: Այդպես որ լիներ, հրեշների թիվը անչափ ու անսահման կլիներ:

— Բայց իր մասին կարդալ այդպիսի դառն ճշմարտություններ, և այն էլ ումի՞ց: Հարազատ եղբորորդո՛ւց:

— Դու երևակայում ես, թե ճշմարտությո՞ւն ես գրել...

— Օ՜, հորեղբայր... իհարկե, ես սխալվել եմ... ես կուղղեմ... ներեցեք:

— Ուզո՞ւմ ես, քեզ թելադրեմ ճշմարտությունը:

— Շնորհ արեք:

— Նստիր և գրիր:

— Ալեքսանդրը մի թերթ թուղթ հանեց և վերցրնց գրիչը, իսկ Պյոտր Իվանիչը նայելով իր կարդացած նամակին, թելադրում էր.

«Սիրելի բարեկամ»:

— Գրեցի՞ր:

— Գրեցի:

«Պետերբուրգն ու իմ տպավորությունները քեզ չեմ նկարագրի»:

— «Չեմ նկարագրի»,— ասաց Ալեքսանդրը, գրելով:

— «Պետերբուրգը վաղուց նկարագրված է, իսկ ինչը չի նկարագրված, մարդ պետք է իր աչքով տեսնի: Իմ տպավորությունները քեզ պիտանի չեն: Կարիք չկա զուր տեղը ժամանակ և թուղթ վատնելու: Ավելի լավ է նկարագրեմ հորեղբորս, որովհետև դա անձնապես ինձ է վերաբերվում»:

— «Հորեղբորս»,— ասաց Ալեքսանդրը:

— Դե, ահա, դու գրում ես, որ ես շատ բարի ու խելացի եմ. գուցե դա ճշմարիտ է, գուցե և ոչ. ավելի լավ է, վերցնենք միջինը, գրիր.

«Հորեղբայրս ոչ հիմար է, ոչ չար, ինձ բարին է կամենում...»

— Հորեղբա՛յր: Ես գիտեմ գնահատել ու զգալ...— ասաց Ալեքսանդրը և ձգվեց նրան համբուրելու:

«Թեև վզիցս չի կախվում»,— շարունակեց թելադրել Պյոտր Իվանիչը: Ալեքսանդրը առանց նրան հասնելու, շտապով նստեց իր տեղը:

«Իսկ ինձ բարին է կամենում, որովհետև պատճառ ու առիթ չունի չարը կամենալու, և նրա համար, որ իմ մասին նրան խնդրել էր մայրս, որը ժամանակին նրան բարիք էր արել: Նա ասում է, որ ինձ չի սիրում և միանգամայն հիմնավոր. երկու շաբաթում չի կարելի սիրել. ես էլ նրան չեմ սիրում, թեև հավատացնում եմ հակառակը»:

— Ինչպե՞ս կարելի է այդ,— ասաց Ալեքսանդրը:

— Գրիր, գրիր:

«Բայց մենք սկսում ենք վարժվել իրար: Նա նույնիսկ ասում է, որ կարելի է բոլորովին յոլա գնալ առանց սիրո: Նա ինձ հետ չի նստում, գրկախառնված, առավոտից իրիկուն, որովհետև դա ամենևին պետք չէ, և նա ժամանակ էլ չունի»:

— «Թշնամի է անկեղծ զեղումների»,— սա կարելի է թողնել. սա լավ է: Գրեցի՞ր:

— Գրեցի:

— Դե, էլ ի՞նչ ունես այստեղ: «Պրոզայիկ հոգի, դև...»: Գրիր:

Մինչ Ալեքսանդրը գրում էր, Պյոտր Իվանիչը սեղանի ինչ-որ թուղթ վերցրեց, փաթաթեց, կրակ վերցրեց ու սիգարը վառեց, իսկ թուղթը ցած գցեց և ոտքերով տրորեց: «Հորեղբայրս ոչ դև է, ոչ հրեշտակ, այլ նույնպիսի մարդ, ինչպես բոլորը,— թելադրում էր նա,— բայց այնքան էլ նման չէ ինձ ու քեզ: Նա մտածում ու զգում է ինչպես երկրաբնակ, գտնում է, որ եթե մենք ապրում ենք երկրի

վրա, ուրեմն պետք էլ չէ նրանից թռչել երկինք, որտեղ դեռևս մեզ չեն կանչում, այլ զբաղվել մարդկային գործերով, որոնց մենք կոչված ենք: Դրա համար էլ նա խորամուխ է լինում բոլոր երկրային գործերի և, ի միջի այլոց, կյանքի մեջ այնպես, ինչպես նա կա, այլ ոչ այնպես, ինչպես մենք կցանկանայինք: Հավատում է բարուն և միաժամանակ չարին, գեղեցկին և արատավորին: Սիրուն ու բարեկամությանը նույնպես հավատում է, միայն չի կարծում, թե դրանք երկնքից ընկել են ցեխի մեջ, այլ գտնում է, որ դրանք ստեղծվել են մարդկանց հետ և մարդկանց համար, որ դրանք այդպես էլ պետք է հասկանալ և առհասարակ իրերը դիտել ուշադիր, նրանց իսկական կողմից, ոչ թե երևակայել աստված գիտե թե ինչ: Ազնիվ մարդկանց միջև նա հնարավոր է համարում համակրանքը, որը հաճախակի հարաբերություններից և սովորությունից վերածվում է բարեկամության: Բայց նա գտնում է նաև, որ անջատման մեջ սովորությունը կորցնում է իր ուժը, և մարդիկ մոռանում են միմյանց, և որ դա ամենևին էլ հանցանք չէ: Ուստի նա հավատացնում է, որ ես քեզ կմոռանամ, իսկ դու՝ ինձ: Դա ինձ, ինչպես հավանաբար և քեզ, թվում է օտարոտի, բայց նա խորհուրդ է տալիս վարժվել այդ մտքին, որից երկուսս էլ չենք մնա հիմար վիճակում: Սիրո մասին նա նույն կարծիքին է, փոքր երանգավորումներով. չի հավատում անդավաճան և հավերժական սիրուն, ինչպես չի հավատում տնային ոգիներին, և մեզ էլ խորհուրդ չի տալիս հավատալ: Ասենք, այդ մասին նա ինձ խորհուրդ է տալիս մտածել որքան կարելի է քիչ, իսկ ես քեզ եմ խորհուրդ տալիս: Դա, ասում է, կգա ինքն իրեն, առանց կանչի. ասում է, թե կյանքը միայն դրանում չի կայանում, որ դրա համար, ինչպես և մնացած ամեն ինչի համար, լինում է իր ժամանակը, իսկ ամբողջ կյանքում երազել միայն սիրո մասին՝ հիմարություն է: Նրանք, ովքեր որոնում են այն, և ոչ մի որոպե չեն կարող առանց դրա յոլա գնալ, ապրում են սրտով և էլի մի ինչ-որ ավելի վատ բանով, ի հաշիվ գլխի: Հորեղբայրս սիրում է զբաղվել գործով, որ խորհուրդ է տալիս և ինձ, իսկ ես՝ քեզ. մենք պատկանում ենք հասարակությանը, ասում է նա, որը մեր կարիքն է զգում. զբաղվելիս նա չի մոռանում և իրեն. գործը փող է հայթայթում, իսկ փողը՝ բարեհարմարություն, որը նա շատ է սիրում: Ընդսմին, նա, գուցե, ինչ-որ մտադրություններ ունի, որի հետևանքով, հավանաբար, ես չեմ լինի նրա ժառանգը: Հորեղբայրս միշտ չէ, որ մտածում է ծառայության և գործարանի մասին, նա անգիր գիտի ոչ միայն Պուշկինին...»

— Դո՞ւք, հորեղբայր,— ասաց զարմացած Ալեքսանդրը:

— Այո, երբևէ կտեսնես: Գրիր:

«Նա երկու լեզվով կարդում է ամեն մի նշանակալի բան, որ լույս է տեսնում մարդկային գիտելիքների բոլոր ճյուղերում, սիրում է արվեստները, ունի հրաշալի հավաքածու ֆլամանդական դպրոցի նկարների,— դա նրա ճաշակն է,— հաճախ լինում է թատրոնում, բայց տակն ու վրա չի լինում, դես ու դեն չի նետվում, ախ ու օխ չի անում, մտածելով, որ դա երեխայություն է, որ պետք է զսպել իրեն, իր տպավորությունները, ոչ ոքի վզին չփաթաթվել, որովհետև ոչ ոք դրա կարիքը չունի: Նա չի խոսում նաև օտարոտի լեզվով, որ խորհուրդ է տալիս և ինձ, իսկ ես՝ քեզ: Մնաս բարով, ինձ նամակ գրիր, որքան կարելի է ուշ-ուշ և դատարկ տեղը ժամանակ մի կորցրու: Քո բարեկամ այսինչ: Դե, ամիս ու ամսաթիվ»:

— Ինչպե՞ս կարելի է այսպիսի նամակն ուղարկել,— ասաց Ալեքսանդրը.— «գրիր ուշ-ուշ» — գրել մի մարդու, որ հատկապես հարյուր վաթսուն վերստ ճանապարհ է կտրել, որպեսզի վերջին մնաս-բարովն ասի «Խորհուրդ եմ տալիս այս, այն, երրորդը...» նա ինձնից հիմար չէ. նա երկրորդ թեկնածու էր:

— Հոգ չէ, դու համենայն դեպս ուղարկիր. գուցե նա ավելի խելոքանա. դու նրան զանազան նոր մտքերի առիթ կտաս. թեև դուք դասընթացն ավարտել եք, բայց ձեր դպրոցը նոր է սկսվում:

— Ես չեմ կարող սիրտ անել, հորեղբայր...

— Ես երբեք չեմ խառնվում ուրիշի գործերի մեջ, բայց դու ինքդ խնդրեցիր, որ քեզ համար մի բան անեմ. ես աշխատում եմ քեզ իսկական ճանապարհ դուրս բերել և թեթևացնել առաջին քայլդ, իսկ դու համառում ես, դե, ինչպես ուզում ես. ես ասում եմ միայն իմ կարծիքը, բայց չեմ հարկադրի. ես քեզ համար դայակ չեմ:

— Ներեցեք, հորեղբայր. ես պատրաստ եմ հնազանդվել,— ասաց Ալեքսանդրը և անմիջապես նամակը կնքեց:

Մի նամակը կնքելով, նա սկսեց որոնել մյուսը՝ Սոֆիային գրածը: Նա նայեց սեղանին՝ չկա, սեղանի տակ՝ նույնպես չկա, արկղում՝ հետքն էլ չկա:

— Դու ինչ-որ բա՞ն ես փնտրում,— ասաց հորեղբայրը:

— Ես որոնում եմ մյուս նամակը… Սոֆիային գրածը:

Հորեղբայրն էլ սկսեց որոնել:

— Բա ո՞ւր է,— ասում էր Պյոտր Իվանիչը:— Ճշմարիտ, ես դա լուսամուտից դուրս չեմ գցել...

— Հորեղբա՛յր: Այս ի՞նչ եք արել: Ախր նամակով վառել եք ձեր սիգարը,— վշտալի ասաց Ալեքսանդրը և բարձրացրեց նամակի այրված մնացորդները:

— Մի՞թե,— բացականչեց հորեղբայրը:— Այդ ինչպե՞ս եղավ: Չնկատեցի էլ. տես, ով գիտի ինչ գանձ եմ վառել... Բայց, ասենք, գիտե՞ս ինչ: Դա, մի կողմից, նույնիսկ լավ է...

— Ախ, հորեղբայր, աստված վկա, ոչ մի կողմից էլ լավ չէ…— նկատեց Ալեքսանդրը հուսահատված:

— Իսկապես, լավ է. այսօրվա փոստով չես հասցնի նրան գրել, իսկ հաջորդ փոստին հավանաբար միտքդ փոխես, զբաղվես ծառայությամբ. նամակ գրելու ժամանակ չես ունենա և այդպիսով մի հիմարություն պակաս արած կլինես:

— Իսկ ի՞նչ կմտածի նա իմ մասին:

— Ինչ ուզում է, թող մտածի: Բայց ես կարծում եմ, որ դա օգտակար է նրան: Չէ՞ որ դու նրա հետ չես ամուսնանալու: Նա կմտածի, որ դու իրեն մոռացել ես, ինքն էլ քեզ կմոռանա և իր ապագա փեսացուի առաջ ավելի քիչ կկարմրի, երբ կսկսի հավատացնել նրան, որ բացի նրանից, ոչ ոքի չի սիրել:

— Դուք զարմանալի՜ մարդ եք, հորեղբայր: Ձեզ համար գոյություն չունի հարատևություն, չկա խոստման սրբություն... Կյանքն այնքա՜ն լավ է, այնպե՜ս լիքն է հմայքով, երանությամբ. նա, ասես, հանդարտ, սքանչելի լիճ լինի...

— Որի վրա դեղին ծաղիկնե՞ր են բուսնում, ինչ է,— ընդհատեց հորեղբայրը:

— Ինչպես լիճը,— շարունակեց Ալեքսանդրը:— Նա լի է ինչ-որ խորհրդավոր, հրապուրիչ, իր մեջ այնքան շատ թաքցրած բանով...

— Տիղմով, սիրելիս:

— Իսկ ինչո՞ւ եք դուք, հորեղբայր, քաշում տիղմը, ինչո՞ւ եք այդպես քանդում ու ոչնչացնում բոլոր ուրախությունները, հույսերը, բարիքները… նայում եք սև կողմից:

— Ես նայում եմ իսկական կողմից, և քեզ էլ խորհուրդ եմ տալիս, հիմարի վիճակում չես լինի: Ըստ քո հասկացողությունների, կյանքը լավ է այնտեղ, գավառում, որտեղ այն չեն ճանաչում, այնտեղ ապրողներն էլ ոչ թե մարդիկ են, այլ հրեշտակներ, ահա Զաեզժալովը սուրբ մարդ է, քո մորաքույրը՝ վսեմ, զգայուն հոգի: Սոֆիան, կարծում եմ, նույնպիսի հիմարն է, ինչպես և մորաքույրդ, և մեկ էլ…

— Վերջացրեք, հորեղբայր,— ասաց կատաղած Ալեքսանդրը:

— Եվ մեկ էլ քեզ նման երազողներ. քթերը ման են ածում, թե մի տեղից արդյոք անդավաճան բարեկամության ու սիրո հոտ չի՞ փչում... հարյուրերորդ անգամ կասեմ, զուր էիր գալիս:

— Նա կհավատացնի փեսացուին, որ ոչ ոքի չի՜ սիրել,— ասում էր գրեթե ինքն իրեն Ալեքսանդրը:

— Իսկ դու շարունակ քոնն ես ասում:

— Ոչ, ես համոզված եմ, որ նա ուղղակի, ազնիվ անկեղծությամբ նրան կտա իմ նամակները և...

— Եվ նշանները,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Այո, և մեր հարաբերությունների գրավականները... և կասի. «Ահա, ահա թե առաջինն ով է արթնացրել իմ սրտի լարերը. ահա թե ում անունը լսելիս առաջին անգամ թրթռացին նրանք...»:

Հորեղբոր հոնքերն սկսեցին բարձրանալ և աչքերը լայնանալ: Ալեքսանդրը լռեց.

— Հապա ինչո՞ւ դադարեցիր նվագել քո լարերը: Դե, սիրելիս, և իսկապես հիմար է քո Սոֆիան, եթե մի այդպիսի բան անի. հուսով եմ, նա ունի մայր կամ որևէ մեկը, որը կարող էր նրան արգելել:

— Դուք, հորեղբայր, սիրտ եք անում հիմարություն անվանել հոգու այդ սրբազնագույն խոյանքը, սրտի այդ ազնիվ զեղո՞ւմը. ի՞նչ կհրամայեք մտածել ձեր մասին:

— Ինչ որ կամենաս: Նա իր փեսացուին կստիպի կասկածել աստված գիտի թե ինչ. ով գիտի, դեռ հարսանիքն էլ խափանվի, և ինչո՞ւ: Նրա համար, որ այնտեղ միասին դեղին ծաղիկներ են քաղել... Ոչ, գործերն այդպես չեն արվում: Դե, ուրեմն, դու ռուսերեն գրել կարող ես, վաղը կգնանք դեպարտամենտ. ես քո մասին արդեն ասել եմ իմ նախկին պաշտոնակցին, բաժնի պետին. նա ասաց, որ ազատ տեղ կա. ժամանակ կորցնել պետք չէ... այդ ի՞նչ կապոց ես դուրս քաշել:

— Սրանք իմ համալսարանական գրանցումներն են: Ահա, թույլ տվեք մի քանի էջ կարդալ Իվան Սեմյոնիչի դասախոսություններից՝ Հունաստանի արվեստի մասին...

Նա արդեն սկսել էր ճարպկորեն շրջել էջերը:

— Օ՛խ, շնորհ արա, ազատիր,— կնճռոտվելով, ասաց Պյոտր Իվանիչը:— Իսկ սա՞ ինչ է:

— Սրանք իմ դիսերտացիաներն են: Ես կուզենայի սրանք ցույց տալ իմ պետին. առանձնապես՝ այստեղ մի նախագիծ կա, որ ես մշակել եմ...

— Ա՛, մեկն այն նախագծերից, ոլոնք արդեն հազար տարի է կատարված են կամ որոնք չի կարելի և պետք չէ կատարել:

— Ի՜նչ եք ասում, հորեղբայր: Ախր այս նախագիծը ներկայացված է եղել մի նշանավոր մարդու, լուսավորության սիրահարի. սրա համար նա մի անգամ ինձ և ռեկտորին հրավիրել է ճաշի: Ահա մի ուրիշ նախագծի սկիզբը:

— Երկու անգամ ճաշիր ինձ հետ, միայն թե մյուս նախագիծդ մի՛ գրի վերջացրու:

— Իսկ ինչո՞ւ:

— Հենց այնպես, դու հիմա ոչ մի լավ բան չես գրի, իսկ ժամանակդ կանցնի:

— Ինչպե՜ս: Դասախոսություններ լսելո՞վ…

— Դրանք քեզ պետք կգան ժամանակին, իսկ հիմա նայիր, կարդա, սովորիր ու արա, ինչ որ քեզ կհարկադրեն:

— Հապա պետը ինչպե՞ս կիմանա իմ ընդունակությունների մասին:

— Անմիջապես կիմանա. նա վարպետ է իմանալու: Բայց դու ինչպիսի՞ տեղ կուզենայիր գրավել:

— Ես չգիտեմ, հորեղբայր, թե ինչպիսի...

— Կան մինիստրների տեղեր,— ասաց Պյոտր Իվանիչը,— նրանց օգնականների, դիրեկտորների, փոխդիրեկտորների, բաժինների պետերի, սեղանավարների, նրանց օգնականների, հատուկ հանձնարարությունների աստիճանավորների, ո՞րն ասեմ:

Ալեքսանդրը մտածմունքի մեջ ընկավ: Նա գլուխը կորցրեց և չգիտեր, թե որն ընտրի:

— Սկզբի համար լավ կլիներ սեղանավարի պաշտոնը,— ասաց նա:

— Այո, լա՛վ կլիներ,— կրկնեց Պյոտր Իվանիչը:

— Ես ուշադիր կլինեի գործին, հորեղբայր, հետո, մի երկու ամիս անց, կարելի է և բաժնի պետ դառնայի…

Հորեղբայրն ականջները սրեց:

— Իհարկե, իհարկե,— ասաց նա:— Հետո մի երեք ամիս անց՝ դիրեկտոր, դե, մի տարի հետո էլ՝ մինիստր, այնպես չէ՞:

Ալեքսանդրը շառագունեց ու լռեց:

— Բաժնի պետը հավանաբար ձեզ ասե՞լ է, թե ինչպիսի ազատ տեղ կա,— հարցրեց նա հետո:

— Ոչ,— պատասխանեց հորեղբայրը:— նա չի ասել, բայց ավելի լավ է, հույսերս նրա վրա դնենք. տեսնո՞ւմ ես, ինքներս դժվարանում ենք ընտրել, իսկ նա գիտի, թե ուր նշանակի: Դու նրան մի ասա դժվարանալու մասին և նախագծերիդ մասին էլ ոչ մի խոսք չասես, ով գիտի՝ կվիրավորվի, որ իրեն չենք վստահում, և կարգին կվախեցնի. նա խիստ է: Ես քեզ խորհուրդ չէի տա նաև **իրեղեն նշանների** մասին խոսել այստեղի գեղեցկուհիների հետ. նրանք չեն հասկանա այդ. նրանց ի՞նչ խելքի բանն է: Դա նրանց համար խիստ բարձր է. նույնիսկ ես հազիվ ըմբռնեցի, իսկ նրանք դեմքերը կծռմռեն:

Մինչ հորեղբայրը խոսում էր, Ալեքսանդրը ձեռքում ինչ-որ կապոց էր շուռումուռ տալիս:

— Դա՞ ինչ է:

Ալեքսանդրն անհամբերությամբ սպասում էր այդ հարցին:

— Սա... ես վաղուց էի ուզում ձեզ ցույց տալ... բանաստեղծություններ են. դուք մի անգամ հետաքրքրվեցիք...

— Ինչ-որ չեմ հիշում. կարծեմ՝ չեմ հետաքրքրվել…

— Գիտե՞ք ինչ, հորեղբայր, ես կարծում եմ, որ ծառայությունը չոր զբաղմունք է, որին չի մասնակցում հոգին, իսկ հոգին ծարավի է արտահայտվելու, մերձավորներին հաղորդակից դարձնելու զգացմունքների ու մտքերի հորդությանը, որով լեցուն է ինքը...

— Հետո՞ ինչ,— անհամբերությամբ հարցրեց հորեղբայրը:

— Ես իմ մեջ ստեղծագործելու կոչում եմ զգում...

— Այսինքն, բացի պաշտոնավարությունից, դու ուզում ես էլի ինչ-որ բանով զբաղվել, կարծես այսպե՞ս պետք է թարգմանել քո ասածը: Ի՞նչ կա որ, շատ գովելի է: Իսկ ինչո՞վ: Գրականությա՞մբ:

— Այո, հորեղբայր, ես ուզում էի խնդրել ձեզ, դուք հնարավորություն չունեի՞ք որոշ բաներ զետեղել...

— Դու համոզվա՞ծ ես, որ տաղանդ ունես: Չէ՞ որ առանց այդ դու սևագործ կլինես արվեստի մեջ, դրանում ի՞նչ լավ բան կա: Տաղանդն ուրիշ բան է. կարելի է աշխատել. շատ լավ բաներ կանես, ըստ որում, դա կապիտալ է, արժի քո հարյուր հոգուն:

— Դուք ա՞յդ էլ փողով եք չափում:

— Իսկ ինչո՞վ կհրամայես: Քեզ որքան ավելի են կարդում, այնքան ավելի են վճարում:

— Իսկ փա՞ռքը, փա՞ռքը: Ահա երգչի իսկական վարձատրությունը…

— Նա հոգնել է երգիչներին դայակություն անելուց. չափից ավելի են հավակնորդները: Այդ առաջ էր, որ փառքը կնոջ նման սիրահետում էր ամեն մեկին, իսկ հիմա, նկատո՞ւմ ես արդյոք, նա կարծես բոլորովին չկա կամ թաքնվել է. այո՛: Կա հանրահայտություն, իսկ փառքի մասին ինչ-որ չենք լսում կամ, գուցե, նա դրսևորման մի ուրիշ ձև է հնարել՝ ով լավ է գրում, նրան ավելի փող, ով ավելի վատ՝ մի բարկանա: Բայց փոխարենը՝ հիմա կարգին գրողը կարգին էլ ապրում է, ցրտից չի սառչում և քաղցից չի մեռնում ձեղնահարկում, թեև նրա հետևից չեն վազում և մատով ցույց չեն տալիս, ինչպես ծաղրածուի: Հասկացել են, որ բանաստեղծը ոչ թե չաստված է, այլ մարդ, նույնպես նայում է, քայլում, մտածում և հիմարություններ անում, ինչպես մյուսները. այստեղ նայելու ի՞նչ կա…

— Ինչպես մյուսնե՛րը, ի՞նչ եք ասում, հորեղբայր: Ինչպե՛ս կարելի է ասել: Բանաստեղծի ճակատին հատուկ կնիք է դրված. նրանում թաքնված է գերագույն ուժի առկայությունը...

— Ինչպես երբեմն և ուրիշների մեջ՝ մաթեմատիկոսների, ժամագործների, և մեր ախպեր՝ գործակատարների մեջ: Նյուտոնը, Գուտենբերգը, Վատտը նույնպես օժտված էին գերագույն ուժերով, ինչպես և Շեքսպիրը, Դանթեն և այլն: Եթե ես որևէ պրոցեսով մեր պարգոլովյան կավը հասցնեի այն աստիճանին, որ նրանից ստացվեր ավելի լավ ճենապակի, քան սաքսոնականը և սևրյանը, կարծում ես, սրանում չէ՞ր լինի գերագույն ուժի առկայությունը:

— Դուք խառնում եք արվեստը արհեստի հետ, հորեղբայր:

— Աստվա՛ծ չանի: Արվեստը ինքնըստինքյան, արհեստը ինքնըստինքյան, իսկ ստեղծագործությունը կարող է լինել թե մեկի, թե մյուսի մեջ, ճիշտ այնպես, ինչպես որ կարող է և չլինել: Եթե այդ չկա, ուրեմն արհեստավորը այդպես էլ կոչվելու է արհեստավոր, այլ ոչ թե ստեղծագործող, բանաստեղծն էլ առանց ստեղծագործության ոչ թե բանաստեղծ է, այլ հորինող… Բայց մի՞թե այդ մասին ձեզ չեն ասել համալսարանում: Հապա ի՞նչ եք սովորել այնտեղ...

Հորեղբայրն ինքն էլ զայրացավ, որ սկսեց բացատրություններ տալ այնպիսի բաների մասին, որոնք համարում էր հանրահայտ ճշմարտություններ:

— «Սա նման է անկեղծ զեղումների»— մտածեց նա:— Ցույց տուր տեսնեմ, ի՞նչ ունես այդտեղ,— հարցրեց նա:— Բանաստեղծությունն՞ր են:

Հորեղբայրը վերցրեց կապոցը և սկսեց կարդալ առաջին էջը:

Ուսկի՞ց է մեկ-մեկ թախիծն անհուն

Խուժում ինչպես ամպը հանկարծ,

Եվ սիրտը կյանքի հետ գժտելով...

— Մի կրակ տուր, Ալեքսանդր:

Նա սիգարը կպցրեց ու շարունակեց.

Փոխում տենչանքներն անվերադարձ:

Ինչո՞ւ է հանկարծ մրրկի պես

Հոգուն իջնում ծանր մի քուն,

Ի՞նչ անհայտ վիշտ է արդյոք այդպես,

Որ խռովում է, նեղում հոգուն…

— Միևնույն բանը առաջին չորս տողում ասված է, և ջուր է ստացվել,— նկատեց Պյոտր Իվանիչը և կարդաց.

Ո՞վ կիմանա, թե ինչի՞ց է, ախ,

Հանկարծ գունատվող ճակատը մեր

Պատում արցունքով առատ ու պաղ…

— Այդ ինչպե՞ս: Ճակատը քրտինք է պատում և ոչ թե արցունք. չեմ տեսել:

Եվ կատարվում են մեզ հետ ինչե՞ր:

Այնժամ երկրի անդունդը խոր

Սարսափելի է և ահավոր...

— Սարսափելի և ահավոր՝ միևնույն բանն է:

Նայում եմ երկինք՝ լուսնին մոլոր...

— Անպայման լուսին. առանց նրա ոչ մի կերպ չի կարելի: Եթե այստեղ ունես **երազանք և կույս,** կորած ես. ես կհրաժարվեմ քեզանից:

Նայում եմ երկինք՝ լուսնին մոլոր,

Որ լողում է լուռ ու լուսավոր,

Եվ այդ լուսնի մեջ, թվում է ինձ,

Թաղված է մի խոր գաղտնիք դարից:

— Վատ չէ՛: Մեկ էլ կրակ տուր... Սիգարս հանգել է: Որտե՞ղ էի, հա՛:

Երկնում աստղերը դարան մտած,

Դողում են, փոխում փայլ ու երանգ,

Կարծես իրար հետ խոսք մեկ արած,

Նենգ լռություն են պահում նրանք:

Այդպես աշխարհում ամեն ինչ մեզ

Դժբախտություն է միշտ սպառնում,

Եվ օրորում է մեզ մշտապես

Խաբուսիկ անդորրն այս աշխարհում,

Եվ անուն չունի վիշտն այդ կար...ծես…

Հորեղբայրը սաստիկ հորանջեց և շարունակեց.

Թախիծն այդ կանցնի, չի թողնի հետք,

Հանց անապատի հողմն է խելառ

Գազանի հետքը լիզում իսպառ:

— Է, գազանի՝ այստեղ շատ վատ է: Իսկ այս գի՞ծը ինչի համար է: Հա: Սա տխրության մասին էր, իսկ հիմա ուրախության մասին...

Եվ նա սկսեց արագախոսությամբ կարդալ համարյա մտքում.

Սակայն, երբեմն էլ լինում է, որ

Մի ուրիշ դև է մտնում մեր մեջ,

Եվ ցնծությունը արտասվոր

Բռնի խուժում է մեր սրտի մեջ...

Եվ թրթռում է կուրծքը անվերջ... և այլն:

— Ոչ լավ է, ոչ վատ,— ասաց նա վերջացնելով:— Ասենք ուրիշներն սկսել են ավելի վատ. փորձիր, գրիր, զբաղվիր, եթե ցանկություն ունես. գուցե և տաղանդը կդրսևորվի. այն ժամանակ ուրիշ բան:

Ալեքսանդրը տխրեց: Նա բոլորովին այդպիսի կարծիք չէր ակնկալում: Նրան մի քիչ մխիթարում էր այն, որ հորեղբորը նա համարում էր սառը, գրեթե անհոգի մարդ:

— Ահա թարգմանություն Շիլլերից,— ասաց նա:

— Բավական է, տեսնում եմ. իսկ դու լեզուներ է՞լ գիտես:

— Ես գիտեմ ֆրանսերեն, գերմաներեն և մի քիչ անգլերեն:

— Շնորհավորում եմ քեզ, վաղուց պիտի ասած լինեիր. քեզնից շատ բան կարելի է ստեղծել: Քիչ առաջ ահագին բան ասացիր քաղաքատնտեսության, փիլիսոփայության, հնագիտության և աստված գիտի, թե էլ ինչի մասին, իսկ գլխավորի մասին՝ ոչ մի խոսք. անտեղի համեստություն: Ես քեզ համար անմիջապես գրական զբաղմունք կճարեմ:

— Մի՞թե, հորեղբայր: Այ թե կպարտավորեցնե՛ք. թույլ տվեք ձեզ գրկել:

— Սպասիր, երբ որ գտնեմ:

— Իմ ապագա պետին որևէ բան ցույց չե՞ք տա իմ գրածներից, որպեսզի պատկերացում տաք:

— Ոչ, հարկավոր չէ. եթե պետք լինի, ինքդ էլ ցույց կտաս. բայց գուցե և պետք չլինի: Ավելի լավ է, ինձ նվիրիր քո նախագծերն ու ստեղծագործությունները...

— Նվիրե՞մ: Խնդրեմ, հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը, որին շոյեց հորեղբոր այդ պահանջը:— Չե՞ք կամենա, ես ձեզ համար բոլոր հոդվածների ժամանակագրական ցանկը կազմեմ:

— Ոչ, հարկավոր չէ... Շնորհակալություն նվերի համար: Եվսե՛յ: Այս թղթերը տար Վասիլիի մոտ:

— Ինչո՞ւ Վասիլիի մոտ: Ձեր առանձնասենյակը:

— Նա ինձնից թուղթ էր խնդրել ինչ-որ շրեշելու համար...

— Ինչպե՛ս, հորեղբայր...— սարսափահար ասաց Ալեքսանդրը և ետ խլեց թղթերի կույտը:

— Չէ՞ որ դու նվիրեցիր, էլ քո ի՞նչ գործն է, թե ինչի վրա կգործադրեմ քո նվերը...

— Դուք չեք խնայում ոչինչ… ոչի՜նչ...— հուսահատ հառաչում էր նա, երկու ձեռքով թղթերը կրծքին սեղմած:

— Ալեքսանդր, լսիր ինձ,— ասաց հորեղբայրը, նրա ձեռքից խլելով թղթերը,— հետո չես կարմրի և շնորհակալ կլինես:

Ալեքսանդրը թղթերը ձեռքից բաց թողեց:

— Ահա, տար, Եվսեյ,— ասաց Պյոտր Իվանիչը:— Դե, ահա, հիմա քո սենյակում մաքուր ու լավ է. դատարկ բաներ չկան. քեզնից կախված կլինի աղբ լցնես, թե որևէ խելացի բան: Գնանք գործարան, մի քիչ զբոսնենք, ցրվենք, թարմ օդ շնչենք և տեսնենք, թե ինչպե՞ս են աշխատում:

Առավոտյան Պյոտր Իվանիչը եղբորորդուն բերեց դեպարտամենտ, և մինչ ինքը խոսում էր իր բարեկամի, բաժանմունքի պետի հետ, Ալեքսանդրը ծանոթանում էր նրա համար այդ նոր աշխարհին. նա դեռ շարունակ երազում էր նախագծերի մասին և գլուխ էր կոտրում, թե իրեն ինչպիսի պետական խնդիր կառաջարկեն լուծելու, ընդսմին կանգնել և շարունակ դիտում էր:

«Կարծես հորեղբորս գործարանը լինի,— վճռեց նա վերջապես:— Ինչպես այնտեղ մի վարպետ վերցնում էր զանգվածի մի կտոր, նետում մեքենայի մեջ, երկու-երեք անգամ պտտում, մեկ էլ տեսար՝ ստացվում է կոնուս, ձվածիր կամ կիսաշրջան, հետո փոխանցում է մյուսին, նա

չորացնում է կրակի վրա, երրորդը ոսկեզօծում է, չորրորդը նկարազարդում, և ստացվում է գավաթ կամ անոթ, կամ պնակ: Այստեղ էլ. գալիս է մի կողմնակի խնդրատու, կիսահակված, խղճալի ժպիտը դեմքին տալիս է թուղթը, վարպետը վերցնում է, հազիվ գրիչը կպցնում է ու փոխանցում մյուսին, սա նետում է հազարավոր այլ թղթերի զանգվածի մեջ, բայց այդ թուղթը չի կորչում. համար ու ամսաթիվ դրոշմված, այդ թուղթը անվնաս կանցնի քսան ձեռքով, բազմանալով և իր նմանները ծնելով. երրորդը վերցնում է այն և չգիտես ինչու ձեռքը պահարանն է խոթում կամ մատյանն է նայում, կամ մի ուրիշ թուղթ, մի քանի մոգական խոսք է ասում չորրորդին, և սա սկսում է գրիչը ճռճռացնել: Մի քիչ ճռճռացնելով, ծնողին նոր զավակի հետ հանձնում է հինգերորդին, սա իր հերթին ճռճռացնում է գրիչը, և ծնվում է էլի մի պտուղ, հինգերորդը սիրունացնում է դա և հանձնում է առաջ, և այդպես թուղթը գնում, գնում է, երբեք չի կորչում, մեռնում են դրա ստեղծողները, իսկ թուղթը շարունակում է գոյություն ունենալ ամբողջ դարեր: Երբ, վերջապես, նրան պատում է դարավոր փոշին, դեռ այն ժամանակ էլ անհանգստացնում են նրան և խորհուրդ հարցնում նրանից: Եվ ամեն օր, ամեն ժամ՝ և՛ այսօր, և՛ վաղը, և՛ ամբողջ կյանքում, բյուրոկրատական մեքենան աշխատում է ներդաշնակ, անընդհատ, առանց հանգստի, կարծես չկան մարդիկ, միայն անիվներ ու զսպանակներն են…

«Իսկ ո՞ւր է թղթերի այս ֆաբրիկան կենդանացնող ու շարժող բանականությունը,— մտածում էր Ալեքսանդրը:— Արդյոք գրքերո՞ւմ, բուն թղթերի մե՞ջ, թե մարդկանց գլուխներում»:

Եվ ինչպիսի՜ դեմքեր տեսավ նա այստեղ. փողոցում այսպիսիները կարծես չեն էլ հանդիպում և լույս աշխարհ դուրս չեն գալիս. կարծես նրանք այստեղ ծնվել են, մեծացել, սերտաճել իրենց տեղերին, այստեղ էլ կմեռնեն: Ադուևը ուշադիր նայեց բաժանմունքի պետին. ասես շանթաձիգ Յուպիտերը լինի. հենց որ բերանը բաց է անում, անմիջապես վազում է Մերկուրիոսը պղնձե վահանակը կրծքին. պարզում է թուղթ բռնած ձեռքը՝ տասը ձեռք պարզվում են դա վերցնելու:

— Իվան Իվանի՛չ,— ասաց նա:

Իվան Իվանիչը դուրս թռավ սեղանի հետևից, մոտ վազեց Յուպիտերին և կանգնեց նրա առաջ ինչպես խոտին դեմ առած հողմավար տերևը: Եվ Ալեքսանդրն էլ վախվորեց, ինքն էլ չիմանալով թե ինչու:

— Ծխախոտ տվեք:

Իվան Իվանիչը ծառայամտորեն երկու ձեռքով բռնած մոտեցրեց բաց ծխախոտատուփը:

— Եվ փորձեցեք ահա նրան,— ասաց պետը, ցույց տալով Ադուևին:

«Ահա՛ թե ով պիտի ինձ փորձի»,— մտածում էր Ադուևը, նայելով Իվան Իվանիչի մաշված արմունկներով դեղնած կերպարանքին: «Մի՞թե այս մարդն էլ է պետական հարցեր լուծում»:

— Ձեր ձեռքը լա՞վն է,— հարցրեց Իվան Իվանիչը:

— Ձե՞ռքը:

— Այո, ձեռագիրը: Ահա նեղություն քաշեցեք արտագրելու այս թուղթը:

Ալեքսանդրը զարմացավ այդ պահանջից, բայց կատարեց: Իվան Իվանիչը կնճռոտվեց, նրա աշխատանքին նայելով:

— Վատ է գրում,— ասաց նա բաժանմունքի պետին:

Պետը նայեց:

— Այո, լավ չէ. մաքրագիր չի կարող անել. դե, թող առայժմ արտագրի պատճենները, իսկ հետո, երբ վարժվի մի քիչ, նրան զբաղեցրեք թղթերի կատարմամբ. գուցե պիտանի կլինի. նա համալսարանում է սովորել:

Շուտով Ադուևն էլ դարձավ մեքենայի զսպանակներից մեկը: Նա գրում էր, գրում, գրում անվերջ և արդեն զարմանում էր, որ առավոտները կարելի է մի ուրիշ բան անել. իսկ երբ հիշում էր իր նախագծերը, ամոթից դեմքը շառագունում էր:

«Հորեղբայր,— մտածում էր նա:— Մի բանում դու արդեն իրավացի ես, անգթորեն իրավացի, մի՞թե ամեն բանում էլ այսպես է: Մի՞թե ես սխալվում էի նվիրական, ոգեշունչ խոհերումս, սիրո, բարեկամության... մարդկանց... և սեփական անձիս նկատմամբ ունեցած ջերմ հավատիս մեջ... այդ դեպքում ի՞նչ է կյանքը»:

Նա խոնարհվում էր թղթի վրա ու ավելի ուժգին էր ճռճռացնում գրիչը, իսկ արտևանունքների տակ արցունքներ էին շողում:

— Քեզ վճռականորեն ժպտում է բախտը,— ասում էր Պյոտր Իվանիչը եղբորորդուն: — Ես սկզբում մի ամբողջ տարի առանց ռոճիկի էի ծառայում, իսկ դու միանգամից անցար ավագ դրույքի. չէ՞ որ դա 760 ռուբլի է, իսկ պարգևադրամի հետ 1000 կանի: Հրաշալի է սկզբի համար: Բաժանմունքի պետը քեզ գովում է. միայն ասում է, որ դու ցրված ես. մեկ ստորակետները չես դնում, մեկ մոռանում ես գրել թղթի բովանդակությունը: Խնդրեմ, ետ վարժվիր. գլխավորն այն է՝ ուշադրություն դարձրու նրա վրա, ինչ որ աչքիդ առաջ է, և ոչ թե վերացիր այ թե ուր:

Հորեղբայրը ձեռքով ցույց տվեց դեպի վեր: Այդ ժամանակվանից նա ավելի սիրալիր էր դարձել դեպի եղբորորդին:

— Ի՜նչ հրաշալի մարդ է իմ սեղանի պետը, հորեղբայր,— մի անգամ ասաց Ալեքսանդրը:

— Իսկ ինչի՞ց գիտես:

— Մենք մտերմացել ենք նրա հետ: Այնպիսի՜ բարձր հոգի, մտքերի այնպիսի՜ մաքուր, ազնիվ ուղղություն ունի: Օգնականի հետ նույնպես. սա, կարծես, հաստատուն կամքի, երկաթե բնավորության տեր մարդ է...

— Դու արդեն հասցրե՞լ ես նրանց հետ մտերմանալ:

— Այո, հապա ինչպե՜ս...

— Սեղանի պետը քեզ չի՞ հրավիրել հինգշաբթի օրերը:

— Ախ, շատ. ամեն հինգշաբթի: Նա կարծես դեպի ինձ առանձին հակում ունի...

— Իսկ օգնականը փոխարինաբար փող խնդրե՞լ է:

— Այո, հորեղբայր, մի չնչին բան... ես նրան տվել եմ 25 ռուբլի, ինչքան որ մոտս կար. նա խնդրում էր էլի 50 ռուբլի:

— Արդեն տվե՜լ ես: Ա՜,— զայրույթով ասաց հորեղբայրը:— Այստեղ մասամբ ես եմ մեղավոր, որ քեզ չեմ զգուշացրել. բայց ես կարծում էի, որ դու այն աստիճան պարզամիտ չես, որ ծանոթության երկու շաբաթից հետո փող պարտք կտաս: Ճար չկա, մեղքը կես անենք, տասներկուսուկես ռուբլին իմ վրա հաշվիր:

— Ինչպե՞ս, հորեղբայր, չէ՞ որ նա կվերադարձնի:

— Ո՞նց չէ: Ես նրան ճանաչում եմ. նրա մոտ կորել է իմ 100 ռուբլին այն ժամանակվանից, երբ ես այնտեղ էի ծառայում: Նա բոլորից վերցնում է: Հիմա, եթե խնդրի, ասա, որ ես խնդրում եմ մտաբերել ինձ տալիք պարտքը, վազ կգա: Իսկ սեղանի պետի մոտ մի գնա:

— Ինչո՞ւ, հորեղբայր:

— Նա թղթամոլ է: Քեզ կնստեցնի իր նման երկու կտրիճի կողքին, իսկ դրանք թաքուն խոսքը մեկ կանեն ու քեզ առանց գրոշի կթողնեն:

— Թղթամո՛լ,— զարմացած ասում էր Ալեքսանդրը։— Հնարավո՞ր բան է։ Թվում է, այնպես հակված է անկեղծ զեղումների...

— Իսկ դու նրան այնպես, ի միջի այլոց, խոսակցության ժամանակ ասա, որ քո բոլոր փողերը ես պահ եմ վերցրել, կտեսնես, արդյոք հակվա՞ծ է անկեղծ զեղումների և արդյոք երբևէ իր մոտ կկանչի՞ հինգշաբթի օրերը։

Ալեքսանդրը մտքերի մեջ ընկավ։ Հորեղբայրը գլուխն օրորեց։

— Իսկ դու կարծում էիր, թե այնտեղ քեզ մոտ հրեշտակներ են նստած։ **Անկեղծ զեղումներ, առանձին հակում։** Թվում է, ինչպե՞ս կարելի էր չմտածել նախ այն մասին, թե արդյոք ինչ-որ սրիկաներ չե՞ն կողքիդ մարդիկ։ Զուր էիր գալիս,— ասաց նա։— Ճշմարիտ, զո՛ւր։

Մի անգամ Ալեքսանդրը հենց նոր էր արթնացել, երբ Եվսեյը մի մեծ ծրար հանձնեց նրան հորեղբոր գրությամբ։

«Վերջապես ահա քեզ և գրական զբաղմունք,— գրված էր տոմսակում։— Ես երեկ տեսնվեցի ինձ ծանոթ մի ժուռնալիստի հետ. նա փորձի համար քեզ այս աշխատանքը ուղարկեց»։

Ուրախությունից Ալեքսանդրի ձեռքերը դողում էին, երբ նա բացում էր ծրարը։ Այնտեղ մի գերմաներեն ձեռագիր էր։

«Այս ի՞նչ է, արձա՞կ,— ասաց նա,— ինչի՞ մասին է»։

Եվ կարդաց վերևում մատիտով գրվածը.

«**Գոմաղբի մասին**, հոդված գյուղատնտեսական բաժնի համար։ Խնդրում ենք թարգմանել որքան կարելի է արագ»։

Երկար, մտախոհ նստել էր նա հոդվածի գլխին, հետո դանդաղ, հոգոց հանելով նա գրիչը ձեռքն առավ և սկսեց թարգմանել։ Երկու օրից հետո հոդվածը պատրաստ և ուղարկված էր։

— Հրաշալի՜ է, հրաշալի է՛,— ասաց Պյոտր Իվանիչը մի քանի օր անց։— Խմբագիրը չափազանց գոհ է, միայն գտնում է, որ ոճը բավականաչափ խիստ չի. դե, բայց առաջին անգամից չի կարելի ամեն ինչ պահանջել։ Նա ուզում է քեզ հետ ծանոթանալ։ Վաղը գնա նրա մոտ, երեկոյան ժամը յոթի մոտ, այնտեղ նա արդեն մի ուրիշ հոդված էլ է պատրաստել.

— Դարձյա՞լ նույն բանի մասին, հորեղբայր։

— Ոչ, ինչ-որ ուրիշ բանի մասին. նա ինձ ասաց, բայց մոռացել եմ... ախ, հա. **կարտոֆիլի մաթի մասին**։ Դու, Ալեքսանդր, ինչպես երևում է, բախտավոր աստղի տակ ես ծնվել։ Ես, վերջապես, սկսում եմ մտածել, որ քեզնից մի բան դուրս կգա։ Երևի շուտով այլևս չեմ ասի, թե ինչու ես եկել։ Դեռ մի ամիս էլ չի անցել, բայց արդեն ամեն կողմից ուղղակի քեզ վրա թափվում է։ Այնտեղ 1000 ռուբլի, խմբագիրն էլ խոստացավ ամիսը 100 ռուբլի չորս տպագրական մամուլի համար. սա ախր 22000 ռուբլի՜ է։ Ո՛չ։ Ես այդպես չեմ սկսել,— ասաց նա մի քիչ հոնքերը վրա բերելով։— Գրիր մորդ, որ դու տեղավորված ես և ինչպես։ Ես էլ կպատասխանեմ նրան, կգրեմ, որ նրա՝ ինձ արած բարիքի փոխարեն քեզ համար արել եմ ինչ որ կարող էի։

— Մայրիկս ձեզ... շատ շնորհակալ կլինի, հորեղբայր, ես նույնպես...— ասաց Ալեքսանդրը հոգոց հանելով, բայց արդեն չնետվեց հորեղբորը փարվելու։

3

Անցավ ավելի քան երկու տարի։ Ո՞վ կճանաչեր մեր գավառացուն հանձին նրբագեղ շարժուձևերով ու պճնագեղ զգեստներով այս երիտասարդի։ Նա շատ էր փոխվել, առնականացել։ Պատանեկան դեմքի գծերի մեղմությունը, մաշկի թափանցիկությունն ու քնքշությունը, ծնոտի աղվամազը, ամեն ինչ չքացել էր։ Չկար նաև վեհերոտ ամաչկոտությունն ու շարժումների նազելի

անճարպկությունը: Դիմագծերը հասունացել և գոյացրել էին դեմքը, իսկ դեմքին նշված էր բնավորությունը: Վարդերն ու շուշանները չքացել էին կարծես թեթև արևայրուքի տակ: Աղվամազին փոխարինել էին փոքրիկ այտամորուսները: Թեթև ու երերուն ընթացքը դարձել էր հավասար ու հաստատուն քայլվածք: Ձայնի մեջ ավելացել էր մի քանի թավ հնչյուն: Նախաներկած պատկերից ստացվել էր ավարտուն դիմանկար: Պատանին տղամարդ էր դարձել: Աչքերում շողում էր ինքնավստահություն և խիզախություն — ոչ այն խիզախությունը, որ նկատվում է մի վերստ հեռավորությունից, որ ամեն ինչի նայում է լրբենի, և ձևերով, և հայացքներով ասում է ամեն մի հանդիպողի. «Տե՛ս, հա՛, զգուշացիր, չկպչես, ոտս չկոխես, թե չէ, հասկանո՞ւմ ես, հաշիվդ պա՛րզ է»: Ոչ, այն խիզախության արտահայտությունը, որի մասին ասում եմ, ոչ թե վանում, այլ ձգում է իրեն: Նա ճանաչվում է իր ձգտումից դեպի բարին, հաջողությունը, դրանց առաջն առնող խոչընդոտները վերացնելու ցանկությունից... Ալեքսանդրի դեմքի նախկին խանդավառությունը չափավորվում էր մտախոհության թեթև երանգով, հոգին թափանցած կասկածամտության առաջին նշանով, որը գուցե հորեղբոր դասերի և անխնա վերլուծության միակ հետևանքն էր, վերլուծություն, որին ենթարկում էր նա ամենը, ինչ տեղի էր ունենում Ալեքսանդրի աչքերում ու սրտում:

Ալեքսանդրը յուրացրել էր, վերջապես, և տակտը, այսինքն՝ մարդկանց հետ վարվելու կարողությունը: Նա չէր նետվում բոլորի վիզը, հատկապես այն բանից հետո, երբ **անկեղծ զեղումների** հակված մարդը, չնայած հորեղբոր նախազգուշացումներին, երկու անգամ կրեց նրա փողերը, իսկ հաստատուն բնավորության և երկաթե կամքի տեր մարդը քիչ փող չվերցրեց նրանից պարտք: Ուրիշ մարդիկ ու դեպքեր էլ շատ օգնեցին դրան: Մի տեղ նա նկատում էր, թե ինչպես թաքուն ծիծաղում էին նրա պատանեկան խանդավառության վրա և ռոմանտիկ անունն էին տվել նրան: Մի այլ տեղ՝ հազիվ էին նրա վրա ուշադրություն դարձնում, որովհետև դրանից ոչ ոքի ni chaud, ni froid */Ոչ տաք, ոչ ցուրտ (ֆր.)։/* էր: Նա ճաշկերույթներ չէր սարքում, կառք չէր պահում, մեծ գումարով թուղթ չէր խաղում: Առաջ Ալեքսանդրի սիրտը ցավում ու նվում էր իր վարդագույն երազների և իրականության այդ ընդհարումներից: Նրա մտքով չէր անցնում, որ ինքն իրեն հարցնի՝ ես ի՞նչ մի առանձնահատուկ բան եմ արել, ինչո՞վ եմ տարբերվում ամբոխից: Ո՞ւր են իմ արժանիքները և հանուն ինչի՞ պետք է ինձ նկատեն: Մինչդեռ նրա ինքնասիրությունը տառապում էր:

Հետո նա քիչ-քիչ սկսեց հնարավոր համարել այն միտքը, որ կյանքում միայն վարդեր չեն, այլ կան նաև փշեր, որոնք երբեմն ծակում են, բայց միայն թեթևակի, այլ ոչ այնպես, ինչպես պատմում է հորեղբայրը: Եվ ահա սովորեց տիրապետել ինքն իրեն, այնքան հաճախ չէր դրսևորում ավյունն ու հուզումները և ավելի հազվադեպ էր խոսում օտարոտի լեզվով, համենայն դեպս՝ կողմնակի մարդկանց ներկայությամբ:

Բայց դեռ էլի, ի մեծ վիշտ Պյոտր Իվանիչի, նա հեռու էր այն ամենի սառը վերլուծությունից, ինչը հուզում ու ցնցում է մարդու հոգին: Իսկ սրտի բոլոր գաղտնիքների ու հանելուկների մեջ պարզություն մտցնելու մասին նա լսել անգամ չէր ուզում:

Պյոտր Իվանիչը առավոտյան նրան կարգին դաս էր տալիս: Ալեքսանդրը լսում էր, շփոթվում կամ խոր մտածմունքի մեջ ընկնում, իսկ հետո գնում էր որևէ տեղ երեկույթ և վերադառնում էր գլուխը կորցրած. մի երեք օր ման էր գալիս խենթի պես և հորեղբոր ամբողջ տեսությունը գրողի ծոցն էր գնում: Պարահանդեսի մթնոլորտի հմայքն ու մոլուցքը, երաժշտության որոտը, մերկ ուսերը, հայացքների կրակը, վարդագույն շուրթերի ժպիտը նրան ամբողջ գիշեր չէին թողնում քնելու: Նրան պատկերանում էր մերթ մի իրան, որին նա դիպել էր ձեռքով, մերթ նվաղուն, երկարատև մի հայացք, որ նրան նետել էին մեկնելիս, մերթ տաք մի շնչառություն, որից նա հալվում էր վալս պարելիս, կամ կիսաձայն մի խոսակցություն պատուհանի մոտ, մազուրկայի որոտի տակ, երբ հայացքները ճառագայթում էին, լեզուն ասում էր աստված գիտի թե ինչ: Եվ նրա սիրտը բաբախում էր. նա ջղաձիգ սարսռումով գրկում էր բարձը և երկար շուռումուռ էր գալիս կողքից կողք:

«Հապա ո՞ւր է սերը: Օ՜, սիրո, սիրո եմ ծարավի,— ասում էր նա:— Եվ արդյոք շո՞ւտ կգա նա: Ե՞րբ կհասնեն այդ հրաշալի րոպեները, այդ քաղցը տառապանքները, երանության սարսուռը, արցունքները...» և այլն:

Հաջորդ օրը նա ներկայանում էր հորեղբորը:

— Ինչպիսի՜ երեկույթ էր երեկ Զառայսկիների մոտ, հորեղբայր,— ասում էր նա ընկղմվելով պարահանդեսի հիշողությունների մեջ:

— Լա՞վ էր:

— Օ՜, սքանչելի:

— Կարգին ընթրի՞ք էր:

— Ես չեմ ընթրել:

— Ինչպե՜ս թե: Քո տարիքին չընթրե՞լ, երբ կարելի է: Դու, ինչպես տեսնում եմ, առանց կատակի սովորում ես այստեղի կարգերին, նույնիսկ չափից ավելի: Է՜, ինչպես, այնտեղ ամեն ինչ կարգի՞ն էր: Տուալետը, լուսավորությունը...

— Այո:

— Մարդի՞կ էլ կարգին մարդիկ էին:

— Օ, այո՜: Շատ կարգին: Ի՜նչ աչքեր, ուսե՜ր:

— Ուսե՞ր: Ո՞ւմ ուսերը:

— Չէ՞ որ դուք նրանց մասին եք հարցնում:

— Ո՞ւմ մասին:

— Դե, աղջիկների:

— Ոչ, ես նրանց մասին չեմ հարցրել, բայց միևնույն է. սիրուններ շա՞տ կային:

— Օ, շատ... բայց ափսոս, որ նրանք բոլորը միօրինակ են: Ինչ որ մեկը ասում և անում է այսինչ դեպքում, տեսնում ես՝ նույնը կրկնում է և մյուսը, կարծես թե սերտած դաս լինի: Մեկը կար... որ այնքան էլ նման չէր մյուսներին... թե չէ՝ չի երևում ոչ ինքնուրույնություն, ոչ բնավորություն: Եվ շարժումները, և հայացքները, ամեն ինչ միատեսակ է. ոչ մի բնածին միտք, զգացմունքի ոչ մի փայլատակում... ամեն ինչ ծածկել ու ներկել է միատեսակ շուքը: Թվում է, ոչ մի բան դուրս չի կոչի դրանք: Եվ մի՞թե հավիտյան ծածկված կմնա և ոչ ոքի առաջ չի դրսևորվի: Մի՞թե կորսետը միշտ պիտի ճնշի և սիրո հառաչը, և՛ հոշոտված սրտի ճիչը: Մի՞թե ազատություն չի տալու զգացմունքին...

— Ամուսնու առաջ ամեն ինչ կդրսևորվի, թե չէ, եթե քեզ նման դատելու լինեն, բարձրաձայն, ով գիտի, շատերն ամբողջ կյանքում օրիորդ կմնան: Կան հիմարներ, որոնք ժամանակից առաջ դրսևորում են այն, ինչ որ պետք է թաքցնել ու ճնշել, բայց փոխարենը՝ հետո արցունք հա արցունք. հաշիվ չէ՜:

— Այստե՞ղ էլ հաշիվ, հորեղբայր...

— Ինչպես և ամեն տեղ, սիրելիս, իսկ ով հաշիվ չի անում, նրան մեր լեզվով անվանում են անհաշվենկատ հիմար: Պարզ ու կարճառոտ:

— Կրծքում զսպել զգացմունքի ազնիվ պոռթկումը...

— Օ, ես գիտեմ, դու չես զսպի. դու պատրաստ ես փողոցում, թատրոնում նետվել բարեկամիդ վիզը և հեկեկալ:

— Հետո՞ ինչ, հորեղբայր: Միայն կասեին, որ դա ուժեղ զգացմունքների տեր մարդ է, որ ով զգում է այդպես, նա ընդունակ է ամենայն գեղեցկի ու ազնի և անընդունակ է...

— Անընդունակ է հաշիվ անելու, այսինքն խորհելու: Մե՛ծ դեմք է՝ ուժեղ զգացմունքների, հսկայական կրքերի տեր մա՛րդ: Քի՞չ կան տարբեր խառնվածքներ: Հիացմո՛ւնք, հուզավառությո՛ւն: Այստեղ մարդ ամենից քիչ է նման մարդու, և պարծենալու բան չկա: Պետք է հարցնել, արդյոք նա կարո՞ղ է զգացմունքները կառավարել. եթե կարող է, ուրեմն մարդ է...

— Ձեր ասելով, զգացմունքն էլ պետք է կառավարել ինչպես շոգին, — նկատեց Ալեքսանդրը,— մերթ բաց թողնել մի քիչ, մերթ հանկարծ կասեցնել, կափույրը բացել կամ փակել...

— Այո, այդ կափույրը զուր չի տվել բնությունը մարդուն. դա բանականությունն է, իսկ դու ահա միշտ չէ, որ դրանից օգտվում ես, ափսո՛ս: Մինչդեռ կարգին տղա ես:

— Ոչ, հորեղբայր, տխուր է ձեզ լսելը: Ավելի լավ է, ինձ ծանոթացրեք այն եկվոր տիկնոջ հետ...

— Որի՞: Լյուրե՞ցկայայի: Նա երեկ կա՞ր:

— Կար: Երկար խոսում էր ինձ հետ ձեր մասին, հարցնում էր իր գործի մասին:

— Ախ, հա՛: Ի դեպ...

Հորեղբայրը արկղից մի թուղթ հանեց:

— Նրան տար այս թուղթը, ասա, որ միայն երեկ, և այն էլ զոռով, տվին պալատից, մի լավ բացատրիր նրան գործը. դու լսեցիր, չէ՞, ինչպես էինք խոսում աստիճանավորի հետ:

— Այո, գիտեմ, գիտեմ, կբացատրեմ:

Ալեքսանդրը զույգ ձեռքով բռնեց թուղթը և թաքցրեց գրպանում: Պյոտր Իվանիչը նայեց նրան:

— Ի՞նչ ես մտածել, որ ուզում ես նրա հետ ծանոթանալ: Նա, կարծեմ, հետաքրքիր չէ. քթի մոտ գորտնուկ կա:

— Գորտնո՞ւկ: Չեմ հիշում: Այդ ինչպե՞ս եք նկատել, հորեղբայր:

— Քթի մոտ, և մարդ չնկատի՞: Նրա ի՞նչն է քեզ գրավում:

— Նա այնքան բարի ու հարգարժան է...

— Այդ ինչպե՞ս քթի մոտի գորտնուկը չես նկատել, բայց արդեն իմացել ես, որ նա բարի ու հարգարժան է: Դա տարօրինակ է: Բայց սպասիր, նա կարծեմ աղջիկ ունի՝ այն փոքրիկ սևահերը: Ա՛: Հիմա չեմ զարմանում: Ահա՛ թե ինչու չես նկատել նրա քթի մոտի գորտնուկը:

Երկուսն էլ ծիծաղեցին:

— Իսկ ես զարմանում եմ, հորեղբայր, որ դուք առաջ նկատել եք քթի գորտնուկը, քան աղջկան:

— Հապա ե՛տ տուր թուղթը: Դու այնտեղ, ով գիտի, կարձակես ամբողջ զգացմունքդ և բոլորովին կմոռանաս փակել կափույրը, հիմարություններ կանես և սատանան գիտի, թե ինչ կբացատրես...

— Ոչ, հորեղբայր, չեմ անի: Թուղթն էլ, ինչպես կուզեք, ետ չեմ տա, ես հենց հիմա...

Եվ նա անհետացավ սենյակից:

Իսկ գործը մինչև հիմա գնում ու գնում էր իր կարգով: Պաշտոնավայրում նկատեցին Ալեքսանդրի ընդունակությունները և նրան կարգին տեղ տվին: Իվան Իվանիչը սկսել էր նրան էլ հարգանքով մատուցել իր ծխախոտատուփը, նախազգալով, որ սա, շատ ուրիշների նման, ծառայելով, ինչպես ինքն էր ասում, մի քանի օր, կտա առաջ կանցնի իրենից, կնստի իր վզին և կցատկի բաժանմունքի պետի պաշտոնին, այնտեղից էլ, ով գիտի, փոխդիրեկտոր կդառնա, ինչպես էն մեկը, կամ դիրեկտոր, ինչպես այս մեկը, մինչդեռ թե էն մեկը, թե այս մեկը իրենց

պաշտոնավարական դպրոցն սկսել էին իր ղեկավարությամբ: «Իսկ ես պիտի նրանց փոխարեն աշխատե՛մ»,— ավելացնում էր նա: Ժուռնալի խմբագրությունում էլ Ալեքսանդրը դարձել էր կարևոր դեմք: Նա զբաղվում էր ուրիշների հոդվածների և՛ ընտրությամբ, և՛ թարգմանությամբ, և՛ ուղղելով, ինքը ևս շարադրում էր զանազան տեսական հայացքներ գյուղատնտեսության մասին: Իր կարծիքով, նա փող ուներ ավելի, քան պետք է, իսկ հորեղբոր կարծիքով՝ դեռ ոչ բավականաչափ: Բայց միշտ չէ, որ նա աշխատում էր փողի համար: Նա չէր հրաժարվում մի այլ, բարձրագույն կոչման ուրախալի մտքից: Նրա պատանեկան ուժերը բավականանում էին ամեն ինչի: Նա ժամանակ էր գողանում քնից, ծառայությունից ու գրում էր և՛ բանաստեղծություններ, և՛ վիպակներ, և՛ պատմական ակնարկներ, և՛ կենսագրություններ: Հորեղբայրն արդեն միջնորմներ չէր սոսնձում նրա ստեղծագործություններով, այլ կարդում էր լուռ, հետո շվշվացնում էր ու ասում. «Հա՛: Սա նախորդից լավ է»: Մի քանի հոդված լույս տեսավ ուրիշի անվան տակ: Ալեքսանդրը ուրախ թրթիռով ականջ էր դնում ընկերների հավանությանը, ընկերներ, որոնք բազմաթիվ էին թե՛ պաշտոնավայրում, թե՛ հրուշակարաններում, թե՛ մասնավոր տներում: Իրականանում էր սիրուց հետո նրա լավագույն երազանքը: Ապագան նրան խոստանում էր շատ փայլ, ցնծություն. նրան, թվում է, սպասում էր ոչ բոլորովին սովորական վիճակ, երբ հանկարծ...

Անցավ մի քանի ամիս: Ալեքսանդրը գրեթե ոչ մի տեղ չէր երևում, կարծես կորել էր: Հորեղբորը նա այցելում էր հազվադեպ: Սա այդ բանը վերագրում էր նրա զբաղված լինելուն և չէր խանգարում նրան: Բայց մի անգամ ժուռնալի խմբագիրը գանգատվեց նրան, որ Ալեքսանդրը հոդվածներն ուշացնում է: Հորեղբայրը խոստացավ առաջին իսկ դիպվածով բացատրություն պահանջել եղբորորդուց: Առիթը ներկայացավ մի երեք օր անց: Ալեքսանդրն առավոտյան խելագարի պես ներս վազեց հորեղբոր մոտ: Նրա քայլվածքի և շարժումների մեջ տեսանելի էր ուրախ իրարանցում:

— Բարև՛ ձեզ, հորեղբայր, ախ, ինչքա՜ն ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ,— ասաց նա և ուզում էր գրկել հորեղբորը, բայց սա հասցրեց անցնել սեղանի հետևը:

— Բարև, Ալեքսանդր, այս ի՞նչ է,— վաղուց չես երևում:

— Ես... զբաղված էի, հորեղբայր. քաղվածքներ էի անում գերմանացի տնտեսագետներից…

— Ա՛: Բա ինչո՞ւ է խմբագիրը ստում: Նա երեք օր առաջ ինձ ասաց, որ ոչինչ չես անում, իսկակա՜ն ժուռնալիստ: Դե, հենց որ հանդիպեցի, նրա հախիցը կգամ...

— Ոչ, նրան ոչինչ մի ասեք,— ընդհատեց Ալեքսանդրը,— ես դեռ նրան չեմ ուղարկել աշխատանքս, դրա համար էլ նա այդպես է ասել...

— Քեզ ի՞նչ է պատահել: Դու այնպիսի տոնական դեմք ունես: Ինչ է, ասեսորի աստիճա՞ն են տվել քեզ, թե խաչ:

Ալեքսանդրը գլուխն էր պտտում:

— Ուրեմն՝ փո՞ղ:

— Ոչ:

— Բա ի՞նչ ես այդպես հրամանատարի տեսքով նայում: Եթե ոչ, ուրեմն ինձ մի խանգարի, այլ ավելի լավ է, նստիր և գրիր Մոսկվա, վաճառական Դուբասովին, որ անհապաղ ուղարկի մնացած փողը: Կարդա նրա նամակը. ո՞ւր է: Ահա:

Երկուսն էլ լռեցին ու սկսեցին գրել:

— Վերջացրի,— ասաց Ալեքսանդրը մի քանի րոպե անց:

— Արա՛գ գրեցիր... Կեցցե՛ս: Հապա՝ ցույց տուր: Այս ի՞նչ է. Դու ինձ ես գրում «Ռ. Տ. Պյոտր Իվանիչ»: Նրա անունը Տիմոֆեյ Նիկոնիչ է: Ինչպես թե 520 ռուբլի: 5200: Քեզ ի՞նչ է պատահել, Ալեքսանդր:

Պյոտր Իվանիչը գրիչը ցած դրեց և նայեց եղբորորդուն: Սա շիկնեց:

— Դուք իմ դեմքին ոչինչ չե՞ք նկատում,— հարցրեց նա:

— Ինչ-որ հիմարավուն... Սպասիր... Դու սիրահարվա՞ծ ես,— ասաց Պյոտր Իվանիչը:

Ալեքսանդրը լուռ էր:

— Այդպե՞ս է, չէ՞: Կռահեցի՞:

Ալեքսանդրը ցնծուն ժպիտով, շողարձակ հայացքով դանդաղորեն շարժեց գլուխը:

— Այդպես է որ կա: Ինչպե՞ս իսկույն գլխի չընկա: Այ թե ինչու ես ծուլացել, դրանից է, որ չես էլ երևում ոչ մի տեղ: Իսկ Զարայսկիները և Սկաչինները կպչում են ինձ՝ ո՞ւր է, հա ո՞ւր է Ալեքսանդր Ֆյոդորիչը: Իսկ նա ահա՛ թե ուր է, յոթերորդ երկնքո՛ւմ:

Պյոտր Իվանիչը սկսեց նորից գրել:

— Նադինկա Լյուբեցկայային,— ասաց Ալեքսանդրը:

— Ես չհարցրի,— պատասխանեց հորեղբայրը:— Ում էլ սիրահարված լինես, միևնույն է, հիմարություն է: Ո՞ր Լյուբեցկայային, այն, որ գորտնո՞ւկ ունի:

— Է, հորեղբայր,— բարկությամբ ընդհատեց Ալեքսանդրը:— Ի՞նչ գորտնուկ:

— Հենց քթի մոտ: Դու դեռ մինչև հիմա չե՞ս տեսել:

— Դուք շարունակ շփոթում եք: Դա, կարծեմ, մոր քթի մոտ է գորտնուկը:

— Դե, միևնույն է:

— Միևնո՛ւյն է: Նա՛դինկան: Այդ հրեշտակը: Մի՞թե դուք նրան չեք նկատել: Մի անգամ տեսնել և չնկատե՞լ:

— Դե ի՞նչ մի առանձին բան կա նրա մեջ: Այդտեղ ի՞նչը նկատես: Չէ՞ որ դու ասում ես, նա գորտնուկ չունի...

— Ի՞նչ եք կպել այդ գորտնուկին: Մեղք մի արեք, հորեղբայր. կարելի՞ է ասել, որ նա նման է այդ բարձրաշխարհիկ, բծախնդիր տիկնիկներին: Դուք ուշադիր նայեցեք նրա դեմքին, ինչպիսի՛ հանդարտ, խորունկ խոհ է հանգչում նրա վրա: Դա ոչ միայն զգացող, դա խորհող աղջիկ է... խորը նատուրա...

Հորեղբայրն սկսեց գրիչը ճռճռացնել թղթի վրա, իսկ Ալեքսանդրը շարունակում էր.

— Նրա խոսակցության մեջ չեք լսի գռեհիկ, ծեծված ճշմարտություններ: Ի՜նչ պայծառ խելք է փայլում նրա դատողություններում: Ի՜նչ կրակ կա զգացմունքների մեջ: Որքա՜ն խորն է հասկանում նա կյանքը: Դուք ձեր հայացքով թունավորում եք այն, իսկ Նադինկան ինձ հաշտեցնում է նրա հետ:

Ալեքսանդրը մի րոպե լռեց ու բոլորովին խորասուզված սկսեց երազել Նադինկայի մասին: Հետո նորից սկսեց:

— Իսկ երբ նա բարձրացնում է աչքերը, անմիջապես տեսնում եք, թե ինչպիսի՜ վառվռուն ու քնքուշ սրտի հաղորդիչներ են դրանք: Իսկ ձա՛յնը, ձա՛յնը: Ի՜նչ մեղեդի, ի՜նչ զգվանք կա նրանում: Բայց երբ այդ ձայնը հնչում է որպես խոստովանություն... չկա ավելի բարձր երանություն աշխարհի երեսին: Հորեղբա՛յր: Ի՜նչ սքանչելի է կյանքը:

Նրա աչքերին արցունքներ երևացին. նա նետվեց ու թափով գրկեց հորեղբորը:

— Ալեքսա՛նդր,— տեղից վեր թռչելով, բղավեց հորեղբայրը:— Շուտ ծածկիր կափույրդ, ամբողջ շոգին բաց թողիր: Դու խելագար ես: Տես թե ի՞նչ արիր: Մի վայրկյանում ուղիղ երկու

հիմարություն. մազերս խառնեցիր և նամակի վրա թանաք կաթեցրիր: Ես կարծում էի, բոլորովին վերջ ես տվել քո սովորություններին: Վաղուց չես եղել այսպիսին: Նայիր, նայիր, ի սեր աստծու, քեզ նայիր հայելու մեջ. դե, ավելի հիմար դեմք կարո՞ղ է լինել: Մինչդեռ հիմար չե՞ս:

— Հա՛, հա՛, հա՛: Ես երջանիկ եմ, հորեղբայր:

— Դա երևում է:

— Ճիշտ չէ՞: Իմ հայացքում, ես գիտեմ, հպարտություն է փայլում: Ես ամբոխին նայում եմ այնպես, ինչպես կարող են նայել միայն հերոսը, բանաստեղծը և փոխադարձ սիրով երջանիկ սիրահարը…

— Եվ ինչպես խելագարներն են նայում կամ ավելի վատ... Դե, հիմա ի՞նչ պիտի անեմ այս նամակը:

— Թույլ տվեք, ես քերեմ, և չի նկատվի,— ասաց Ալեքսանդրը: Նա դեպի սեղանը նետվեց, նույն ջղաձիգ թրթիռով, սկսեց քերել, մաքրել, շփել, և նամակի վրա մի անցք բացեց: Շփվելուց սեղանը շարժվեց և կպավ գրքակալին: Գրքակալին դրած էր իտալական ալաբաստրից շինած մի փոքրիկ կիսանդրի՝ Սոֆոկլեսի թե Էսքիլեսի: Հարգարժան ողբերգակը ցնցումից նախ մի երեք անգամ ետ ու առաջ ճոճվեց երերուն պատվանդանի վրա, հետո գրքակալից ցած գահավիժեց և փշուր-փշուր եղավ:

— Երրորդ հիմարությունը, Ալեքսա՛նդր,— ասաց Պյոտր Իվանիչը, խեցիները հավաքելով:— Իսկ սա հիսուն ռուբլի արժի:

— Ես կվճարեմ, հորեղբայր, օ՛, ես կվճարեմ, բայց մի անիծեք իմ ավյունը. նա ազնիվ ու մաքուր է. ես երջանիկ եմ, երջանի՛կ եմ: Աստվա՛ծ իմ: Որքա՜ն լավ է կյանքը:

Հորեղբայրը կնճռոտվեց և գլուխն օրորեց:

— Ե՞րբ կխելոքանաս, Ալեքսանդր: Աստված գիտի, թե ինչեր է ասում:

Մինչդեռ նա տխրությամբ նայում էր կիսանդրուն:

— Կվճարե՛մ,— ասաց նա,— կվճարեմ: Դա կլինի չորրորդ հիմարությունը: Դու, տեսնում եմ, ուզում ես պատմել քո երջանկության մասին: Դե, ճար չկա: Եթե հորեղբայրները դատապարտված են մասնակցելու իրենց եղբորորդիների բոլոր ցնդաբանություններին, թող այդպես լինի, քեզ տալիս եմ քառորդ ժամ. հանդարտ նստիր, որևէ նոր, հինգերորդ հիմարություն մի արա և պատմիր, իսկ հետո, այդ նոր հիմարությունից հետո գնա. ես ժամանակ չունեմ: Դե... դու երջանիկ ես... հետո՞ ինչ: Դե շուտ արա, պատմիր:

— Եթե նույնիսկ այդպես է, հորեղբայր, ապա այսպիսի բաները չեն պատմվում,— համեստ ժպիտով նկատեց Ալեքսանդրը:

— Ես ուզեցի քեզ նախապատրաստել, իսկ դու, տեսնում եմ, համենայն դեպս ուզում ես սկսել սովորական նախերգանքներից: Դա նշանակում է, որ պատմությունդ կտևի մի ամբողջ ժամ. ես ժամանակ չունեմ. փոստը չի սպասի: Սպասիր, ավելի լավ է ես ինքս պատմեմ:

— Դո՞ւք: Այ թե զվարճալի՛ է:

— Դե, լսիր ուրեմն, շատ զվարճալի է: Դու երեկ տեսնվել ես քո գեղեցկուհու հետ միայնակ...

— Դուք որտեղի՞ց գիտեք,— եռանդով սկսեց Ալեքսանդրը:— Թաքուն մա՞րդ եք ուղարկում իմ հետևից նայելու:

— Հապա ինչպես, ես ռոճիկով լրտեսներ եմ պահում քեզ հետամուտ լինելու: Որտեղի՞ց վերցրիր, որ այդպես հոգում եմ քո մասին: Իմ ի՞նչ գործն է:

Այս խոսքերին ուղեկցում էր սառցե հայացքը:

— Ուրեմն որտեղի՞ց գիտեք,— հարցրեց Ալեքսանդրը, հորեղբորը մոտենալով:

— Նստիր, նստիր, ի սեր աստծո, և մի մոտեցիր սեղանին, մի բան կջարդես: Քո դեմքին ամեն ինչ գրված է, և ես այնտեղից կկարդամ: Դե, դուք սեր եք բացատրել իրար,— ասաց նա:

Ալեքսանդրը կարմրեց ու լռեց: Երևում էր, որ հորեղբայրը նորից գտել էր:

— Դուք երկուսդ էլ, ինչպես լինում է, շատ հիմար էիք,— ասում էր Պյոտր Իվանիչը:

Եղբորորդին մի անհանգիստ շարժում արավ:

— Սկսվեց դատարկ բաներից, երբ դուք մենակ մնացիք, մի որևէ նախշանկարից,— շարունակում էր հորեղբայրը:— Դու հարցրիր, թե ո՞ւմ համար է նա ձեռագործում: Նա պատասխանեց՝ «մայրիկիս կամ մորաքրոջս», կամ դրա նման մի բան, իսկ ինքներդ դողում էիք ինչպես տենդով բռնված...

— Տեսեք, որ ոչ, հորեղբայր, չկռահեցիք. նախշանկարից չսկսվեց, մենք այգում էինք...— բերանից թռցրեց Ալեքսանդրը և լռեց:

— Դե, ուրեմն ծաղիկից թե ինչից,— ասաց Պյոտր Իվանիչը,— գուցե դեռ դեղին էլ էր այդ ծաղիկը, միևնույն է. այստեղ աչքիդ ինչ որ ընկավ, միևնույն է, միայն թե խոսակցություն սկսվի. առանց դրա խոսքերը բերանից դուրս չեն գալիս: Դու հարցրիր, թե նրա դուրը գալի՞ս է ծաղիկը. նա պատասխանեց՝ **այո,**— ինչպե՞ս է որ. «այնպես» ասաց նա ու երկուսդ էլ լռեցիք, որովհետև բոլորովին ուրիշ բան էիք ուզում ասել, և խոսակցությունը չէր ստացվում: Հետո իրար նայեցիք, ժպտացիք ու կարմրեցիք:

— Ախ, հորեղբայր, հորեղբայր, ի՜նչ եք ասում...— խիստ շփոթված ասաց Ալեքսանդրը:

— Հետո,— շարունակեց անողոք հորեղբայրը,— դու կողմնակի կերպով սկսեցիր խոսել այն մասին, որ իբր քո առաջ բացվել է մի նոր աշխարհ: Նա հանկարծ նայեց քեզ վրա, կարծես լսում էր մի անսպասելի նորություն. դու, կարծում եմ, փակուղու առաջ կանգնեցիր, հետո նորից հազիվ ըմբռնելի ասացիր, որ միայն հիմա իմացար կյանքի արժեքը, որ առաջ էլ դու տեսնում էիր նրան... Ինչպե՞ս էր նրա անունը, Մարի՞ա էր, ինչ էր:

— Նադինկա:

— Բայց տեսնում էիր կարծես երազում, նախազգում էիր հանդիպումը նրա հետ, որ ձեզ միացրեց համակրանքը և որ, հիմա դու նրան կձոնես բոլոր բանաստեղծություններդ ու արձակդ... իսկ ձեռքերդ, կարծում եմ, ինչպես էին աշխատում... հավանաբար շուռ տվիր կամ կոտրեցիր որևէ բան: — Հորեղբա՛յր: Դուք գողունի ակա՜նջ էիք դնում մեզ.— իրեն կորցրած բղավեց Ալեքսանդրը:

— Այո, ես այնտեղ թփի հետև նստել էի: Ախր իմ ամբողջ գործն այն է, որ վազ եմ տալիս քո հետևից ու ծածուկ ականջ դնում ամեն մի ցնդաբանության:

— Հապա որտեղի՞ց գիտեք այդ բոլորը,— տարակուսած հարցրեց Ալեքսանդրը:

— Դժվա՛ր բան: Ադամից ու Եվայից սկսած միևնույն պատմությունն է բոլորի մոտ, փոքրիկ տարբերակներով: Իմացիր գործող անձերի բնավորությունը, կիմանաս և տարբերակը: Սա քեզ զարմացնում է, դեռ գրո՛ղ ես: Այ, հիմա մի երեք օր խելագարի պես կթռչկոտես ու կցատկոտես, կկախվես բոլորի վզից, միայն, ի սեր աստծո, ոչ իմ: Ես քեզ խորհուրդ կտայի այս ժամանակի ընթացքում փակվել սենյակումդ, այնտեղ բաց թողնելով ամբողջ շոգիդ և բոլոր արարքներդ անել Եվսեյի գլխին, որ ոչ ոք չտեսնի: Հետո մի քիչ ուշքի կգաս և արդեն կսկսես ձգտել ուրիշ բանի, համբույրի, օրինակ...

— Նադինկայի համբո՛ւյրը, օ ինչպիսի՜ բարձր, երկնային պարգև,— գրեթե գոչեց Ալեքսանդրը:

— Երկնայի՜ն:

— Հապա ինչ, նյութական, երկրայի՞ն, ձեր կարծիքով:

— Անկասկած: Էլեկտրականության ներգործություն. սիրահարները նույնն են, ինչ որ երկու լեյդենյան բանկաները, երկուսն էլ ուժեղ լիցքավորված են. համբույրներով էլեկտրականությունը պարպում է և երբ ամբողջովին է պարպում՝ մնաս բարով, սեր, դրան հետևում է սառեցումը...

— Հորեղբայր...

— Այո: Իսկ դու ի՞նչ էիր կարծում:

— Ինչպիսի՜ հայացք, ի՜նչ հասկացողություններ:

— Հա, ես մոռացա, քեզ մոտ հանդես կգան նաև «իրեղեն նշաններ»: Նորից տունդ կլցնես ամեն տեսակ զիբիլով և կմտասուզվես ու կդիտես դրանք, իսկ գործդ կմնա:

Ալեքսանդրը հանկարծ բռնեց գրպանը:

— Ի՜նչ, արդեն կա՞: Կանես այն ամենը, ինչ որ մարդիկ անում են աշխարհի ստեղծագործության օրից:

— Նշանակում է, նույնը, ինչ որ արել եք և դո՞ւք, հորեղբայր:

— Այո, միայն ավելի հիմար ձևով:

— Ավելի հիմար ձևով: Արդյոք հիմարություն չե՞ք անվանում այն, որ ես կսիրեմ ձեզնից ավելի խորունկ, ավելի սաստիկ, չեմ ծաղրի զգացմունքը, չեմ կատակի և սառնորեն չեմ խաղա նրանով, ինչպես դուք... և չեմ պոկի ծածկոցները սրբազան գաղտնիքների վրայից...

— Դու կսիրես այնպես, ինչպես ուրիշները, ոչ ավելի խորունկ, ոչ ավելի սաստիկ, կպոկես նաև ծածկոցը գաղտնիքների վրայից... բայց միայն դու կհավատաս սիրո հավիտենությանն ու անդավաճանությանը, և միայն դրա մասին կմտածես, ահա հենց դա հիմարություն է. ինքդ քեզ համար պատրաստում ես ավելի շատ վիշտ, քան պետք է լինի:

— Օ՜, դա սարսափելի է, սարսափելի է, հորեղբայր, ինչ որ ասում եք: Քանի անգամ ես խոսք եմ տվել ինձ՝ ձեզնից թաքցնել այն, ինչ կատարվում է սրտումս:

— Իսկ ինչո՞ւ խոսքդ չես պահել: Ահա եկար, ինձ խանգարեցիր...

— Բայց չէ՞ որ միայն դուք եք իմ մոտիկը, հորեղբայր. էլ ո՞ւմ հետ կիսեմ զգացմունքներիս այս առատությունը: Իսկ դուք առանց գթության ձեր անատոմիական դանակը խրում եք սրտիս ամենախորունկ ծալքերը:

— Ես դա իմ բավականության համար չեմ անում. դու ինքդ էիր խնդրում իմ խորհուրդները: Ինչքա՜ն հիմարություններից եմ զգուշացրել քեզ...

— Ոչ, հորեղբայր, թող ես ձեր աչքում հավիտենապես հիմար մնամ, բայց չեմ կարող ապրել կյանքի, մարդկանց մասին այդպիսի հասկացողություններով: Դա ցավալի է, տխուր: Այդ դեպքում ինձ կյանք պետք չէ, ես չեմ ուզում կյանքը այդ պայմաններով, լսո՞ւմ եք: Ես չեմ ուզում:

— Լսում եմ. բայց ես ի՞նչ անեմ: Հո չե՞մ կարող քեզ կյանքից զրկել:

— Այո՜,— ասաց Ալեքսանդրը:— Հակառակ ձեր կանխագուշակությունների ես երջանիկ կլինեմ, կսիրեմ առհավետ և մեկ անգամ:

— Օխ, ո՜չ: Ես նախազգում եմ, որ դեռ շատ բան կջարդես իմ տանը: Բայց այդ բոլորը ոչինչ. սերը թող սեր մնա, քեզ ոչ ոք չի խանգարում. մենք չենք հնարել քո տարիքում սիրով առանձնապես ջանասիրությամբ զբաղվելը, բայց, միայն, ոչ այն աստիճան, որ գործը թողնես. սերը՝ սեր, գործը՝ գործ...

— Բայց ես քաղվածքներ եմ անում գերմանացի...

— Հերիք. դու ոչ մի քաղվածք չես անում, միայն անձնատուր ես լինում **քաղցր գրկանքին,** իսկ խմբագիրը քեզ կազատի...

— Ինչ ուզում է թող անի: Ես կարիք չեմ զգում: Կարո՞ղ եմ հիմա մտածել անարգ օգուտի մասին, երբ...

— **Անարգ օգուտի մասի՛ն:**

Անա՛րգ: Դու ավելի լավ է լեռներում խրճիթ շինիր, ցամաք հաց ու ջրով ապրիր ու երգիր.

Ինձ համար խղճուկ խրճիթը

Դրախտ կլինի քեզ հետ...

Բայց միայն հենց որ կվերջանա քո «անարգ մետաղը», ինձնից չխնդրես, չեմ տա...

— Ես կարծեմ հաճախ չեմ անհանգստացրել ձեզ:

— Մինչև հիմա, փառք աստծու, ո՛չ, բայց կարող է պատահել, եթե գործդ թողնես. սերն էլ փող է պահանջում. այստեղ և ավելորդ պճնամոլություն, և զանազան ուրիշ ծախսեր կան... օ՛խ, այդ սե՛րը քսան տարեկան հասակում: Այ անարգ է, որ կա, ոչ մի բանի պետք չէ:

— Իսկ ո՞ր սերն է բանի պետք, հորեղբայր, քառասուն տարեկան հասակո՞ւմ:

— Ես չգիտեմ, ինչպիսին է սերը քառասուն տարեկան հասակում, իսկ երեսունինը տարեկան հասակում...

— Ինչպես ձե՞րը:

— Թեկուզ ինչպես իմը:

— Այսինքն՝ ոչ մի տեսակ:

— Ինչի՞ց գիտես:

— Իբր դուք կարո՞ղ եք սիրել:

— Իսկ ինչո՞ւ չէ: Մի՞թե ես մարդ չեմ կամ մի՞թե ես ութսուն տարեկան եմ: Միայն եթե ես սիրում եմ, ապա սիրում եմ խելացի, ինքս ինձ չեմ մոռանում, ոչինչ չեմ ջարդում և ոչինչ շուռ չեմ տալիս:

— Խելացի սե՛ր: Լա՛վ սեր է, որն ինքն իրեն չի մոռանում,— ծաղրաբար նկատեց Ալեքսանդրը,— որը ոչ մի րոպե ինքն իրեն չի կորցնում...

— Վայրի, անասնական սերը,— ընդհատեց Պյոտր Իվանիչը,— չի հիշում, իսկ խելացի սերը պետք է հիշի. հակառակ դեպքում դա սեր չէ...

— Հապա ի՞նչ է...

— Այնպես, նողկալի բան, ինչպես դու ասում ես:

— Դուք... սիրո՛ւմ եք,— ասաց Ալեքսանդրը, թերահավատությամբ նայելով հորեղբորը:— Հա՛, հա՛, հա՛:

Պյոտր Իվանիչը լուռ գրում էր:

— Իսկ ո՞ւմ, հորեղբայր,— հարցրեց Ալեքսանդրը:

— Ուզո՞ւմ ես իմանալ:

— Կուզենայի:

— Իմ հարսնացուին:

— Հար... հարսնացուի՞ն,— հազիվ արտասանեց Ալեքսանդրը, տեղից վեր թռչելով ու մոտենալով հորեղբորը:

— Մոտ չգաս, մոտ չգաս, Ալեքսանդր, փակիր կափույրդ,— ասաց Պյոտր Իվանիչը, տեսնելով, թե ինչպես խոշորացան եղբորորդու աչքերը, և արագ իրեն մոտեցրեց զանազան մանր-մունր իրեր՝ կիսանդրիկներ, արձանիկներ, ժամացույցը, թանաքամանը:

— Նշանակում է, դուք ամուսնանո՞ւմ եք,— հարցրեց Ալեքսանդրը նույն զարմանքով:

— Այդպես է դուրս գալիս:

— Եվ դուք հանգի՜ստ եք: Նամակներ եք գրում Մոսկվա, խոսում եք կողմնակի նյութերի մասին, գնում եք գործարան և դեռ այդպիսի դժոխային սառնությամբ էլ խոսում եք սիրո մասին:

— Դժոխային սառնությամբ՝ սա նորություն է: Դժոխքում, ասում են, շոգ է: Ի՞նչ ես ինձ այդպես օտարոտի նայում:

— Դուք՝ ամուսնանո՜ւմ եք:

— Այստեղ զարմանալու ի՞նչ կա,— հարցրեց Պյոտր Իվանիչը, գրիչը ցած դնելով:

— Ինչպե՞ս թե՝ ինչ: Ամուսնանում եք և ինձ ոչ մի խոսք:

— Ներիր, ես մոռացել էի քեզնից թույլտվություն խնդրել.

— Թույլտվություն չխնդրել, հորեղբայր, այլ պետք է, որ ես իմանամ: Հարազատ հորեղբայրս ամուսնանում է, իսկ ես ոչինչ չգիտեմ, ինձ չե՞ն ասել...

— Ահա ասացի:

— Ասացիք, որովհետև խոսքը տեղն եկավ:

— Ես աշխատում եմ ըստ հնարավորին ամեն ինչ տեղին անել:

— Ոչ, պետք է ամենից առաջ ինձ հայտնեիք ձեր ուրախությունը. դուք գիտեք, թե ինչպես եմ սիրում ձեզ և ինչպես կբաժանեմ...

— Ես առհասարակ խուսափում եմ բաժանելուց, իսկ ամուսնության հարցում՝ առավելապես:

— Գիտե՞ք ինչ, հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը աշխուժությամբ:— Գուցե... ոչ, չեմ կարող ձեզնից գաղտնիք պահել... Ես այդպիսին չեմ, ամեն ինչ կասեմ...

— Օխ, Ալեքսանդր, ժամանակ չունեմ. եթե նոր պատմություն է, չի՞ կարելի վաղը:

— Ես միայն ուզում եմ ասել, որ գուցե... ես էլ եմ մոտ նույն երջանկությանը...

— Ի՞նչ,— հարցրեց Պյոտր Իվանիչը, թեթևակի սրելով ականջները,— դա ինչ-որ հետաքրքիր է...

— Ա՜: Հետաքրքի՞ր է: Ուրեմն ես էլ ձեզ մի քիչ կչարչարեմ, չեմ ասի:

Պյոտր Իվանիչը անտարբերությամբ վերցրեց ծրարը, նամակը մեջը դրեց և սկսեց կնքել:

— Ես էլ, գուցե, կամուսնանամ,— ասաց Ալեքսանդրը հորեղբոր ականջին:

Պյոտր Իվանիչը չավարտեց նամակի կնքելը և շատ լուրջ նայեց նրան:

— Փակիր կափույրդ, Ալեքսանդր,— ասաց նա:

— Կատակում եք, կատակում, հորեղբայր, իսկ ես ասում եմ առանց կատակի: Մայրիկիցս թույլտվություն կխնդրեմ:

— Դու ամուսնանա՜ս:

— Իսկ ի՞նչ կա որ:

— Քո տարիքո՞ւմ:

— Ես քսաներեք տարեկան եմ:

— Ժամանա՛կն է: Այդ տարիքում ամուսնանում են միայն գեղջուկները, երբ նրանց աշխատավորուհի է պետք տանը:

— Բայց եթե ես սիրահարված եմ մի աղջկա, և հնարավորություն կա ամուսնանալու, ուրեմն ձեր կարծիքով պետք չէ...

— Ես քեզ բոլորովին խորհուրդ չեմ տալիս ամուսնանալ այն կնոջ հետ, որին սիրահարված ես:

— Ինչպե՞ս, հորեղբայր: Դա նորություն է. ես երբեք չեմ լսել:

— Քի՞չ բան կա, որ դու չես լսել:

— Ես միշտ մտածել եմ, որ առանց սիրո ամուսնություն չպետք է լինի:

— Ամուսնությունն ամուսնություն է, իսկ սերը՝ սեր,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Ինչպե՞ս ուրեմն ամուսնանալ... հաշվո՞վ:

— Հաշվետեսությամբ, ոչ թե հաշվով: Միայն թե այդ հաշվետեսությունը պետք է լինի ոչ միայն փողի նկատմամբ: Տղամարդն այնպես է ստեղծված, որ ապրի կնոջ ընկերակցությամբ. ահա, դու էլ հաշիվ ես անում, թե ինչպես ամուսնանաս, կսկսես որոնել, ընտրել կանանց մեջ...

— Որոնե՛լ, ընտրե՛լ,— զարմացած ասաց Ալեքսանդրը:

— Այո, ընտրել: Հենց դրա համար էլ խորհուրդ չեմ տալիս ամուսնանալ, երբ սիրահարվում ես: Չէ՞ որ սերն անցնում է. դա արդեն գռեհիկ ճշմարտություն է:

— Դա ամենակոպիտ սուտն ու բամբասանքն է:

— Դե, հիմա քեզ համոզել չի լինի. ժամանակին ինքդ կտեսնես, իսկ հիմա միայն միտդ պահիր իմ խոսքերը, սերը կանցնի, կրկնում եմ ես, և այն ժամանակ այն կինը, որը քեզ կատարելության իդեալ էր թվում, կարող է պատահել, երևա չափազանց ոչ կատարյալ, բայց արդեն ոչինչ անել չես կարողանա: Սերը քեզնից կթաքցնի այն հատկությունների պակասությունը, որ անհրաժեշտ է կին լինելու համար: Մինչդեռ ընտրելիս դու սառնարյուն կերպով կդատես, թե արդյոք այսինչ կամ այնինչ կինը ունի՞ այն հատկությունները, որոնք կուզենայիր տեսնել կնոջդ մեջ. ահա թե որն է գլխավոր հաշիվը: Եվ եթե գտնես մի այդպիսի կին, նա անպայման պետք է քեզ դուր գա մշտապես, որովհետև համապատասխանում է քո ցանկություններին: Դրանից քո և նրա միջև կառաջանան այնպիսի հարաբերություններ, որոնք հետո կկազմեն...

— Սե՞րը,— հարցրեց Ալեքսանդրը:

— Այո... սովորույթը:

— Ամուսնանալ առանց հափշտակության, առանց սիրո պոեզիայի, առանց խանդավառության, դատողություն անել՝ ինչպես և ինչո՞ւ:

— Իսկ դու կամուսնանայի՞ր առանց դատելու և առանց ինքդ քեզ հարցնելու՝ ինչո՞ւ, ճիշտ այնպես, ինչպես այստեղ գալիս էլ չէիր հարցրել ինքդ քեզ՝ ինչո՞ւ:

— Ուրեմն դուք ամուսնանում եք հաշվո՞վ,— հարցրեց Ալեքսանդրը:

— Հաշվետեսությամբ,— նկատեց Պյոտր Իվանիչը:

— Դա միևնույն է:

— Ոչ, հաշվով՝ նշանակում է ամուսնանալ փողի համար, դա ստոր բան է. բայց ամուսնանալ առանց հաշվետեսության՝ հիմար բան է… Իսկ քեզ հիմա բոլորովին պետք չէ ամուսնանալ:

— Հապա ե՞րբ ամուսնանամ: Երբ կծերանա՞մ: Ինչո՞ւ պիտի հետևեմ անհեթեթ օրինակներին:

— Այդ թվում և ի՞մ: Շնորհակալություն:

— Ես ձեր մասին չեմ ասում, հորեղբայր, այլ առհասարակ բոլորի մասին: Լսում ես հարսանիքի մասին, գնում ես նայելու, և ի՜նչ: Տեսնում ես մի սքանչելի, քնքուշ արարածի, գրեթե երեխայի, որն սպասում էր միայն սիրո կախարդական հպմանը, որպեսզի ծաղկի պես փթթեր, և հանկարծ նրան կտրում են տիկնիկներից, դայակից, մանկական խաղերից, պարերից, և փառք աստծու, եթե միայն դրանից. հաճախ էլ առանց նայելու նրա սրտին, որը, թերևս, արդեն իրեն չի պատկանում: Նրան հագցնում են շղարշ, մետաքսե ժանյակներ, զարդարում են ծաղիկներով և, չնայած արցունքներին, դալկությանը, զոհի պես քաշում և կանգնեցնում են՝ ո՞ւմ կողքին. մի տարիքավոր մարդու կողքին, մեծ մասամբ տգեղ, որը արդեն կորցրել է երիտասարդության փայլը: Նա աղջկա վրա նետում է կամ վիրավորական ցանկությունների հայացք, կամ սառնորեն զննում է նրան ոտից գլուխ, իսկ ինքը կարծես մտածում է. «Սիրուն ես դու, բայց հավանաբար գլուխդ լիքն է քմահաճությամբ. սեր ու վարդեր. ես կզսպեմ այդ խելառությունը. դա հիմարություն է. ինձ մոտ հերիք է հառաչես ու երազես, այլ քեզ վայելուչ պահիր», կամ ավելի վատ՝ երազում է աղջկա կալվածքի մասին: Ամենաերիտասարդը պակաս-պակաս երեսուն տարեկան կլինի: Նա հաճախ ճաղատ է լինում, ճիշտ է, խաչ կամ երբեմն էլ աստղ է ունենում: Եվ աղջկան ասում է. «Ահա ում են վիճակված քո պատանեկության բոլոր գանձերը, հենց նրան էլ պատկանում են սրտիդ առաջին թրթիռը, և՛ խոստովանությունը, և՛ հայացքներդ, և՛ խոսքերդ, և՛ կուսական փաղաքշանքներդ, և՛ ամբողջ կյանքդ»: Իսկ շուրջը խռնվում են նրանք, որոնք ջահելությամբ ու գեղեցկությամբ սազական են նրան, և որոնք պետք է որ կանգնած լինեին հարսնացուի կողքին: Նրանք հայացքով խժռում են խեղճ զոհին և կարծես թե ասում են. «Ահա, երբ մենք սպառենք մեր թարմությունը, առողջությունը, գոնջանանք, մենք էլ կամուսանանք, և մեզ բաժին կընկնի նույնպիսի մի փարթամ ծաղիկ...»: Սարսափելի՜ է...

— Տարօրինակ է, վա՜տ է, Ալեքսանդր: Արդեն երկու տարի է գրում ես,— ասաց Պյոտր Իվանիչը,— և գոմաղբի մասին, և կարտոֆիլի մասին, և ուրիշ լուրջ բաների մասին, որտեղ ոճդ խիստ է, սեղմ, բայց դեռ շարունակում ես օտարոտի խոսել: Ի սեր աստծու, հափշտակության մի մատնվիր կամ, գոնե, երբ այդ հիմարությունը վրադ կիջնի, լռիր, թույլ տուր, որ անցնի, խելքը գլխին ոչ մի բան չես անի. անպայման անհեթեթ բան կստացվի:

— Ինչպե՜ս, հորեղբայր, իսկ մի՞թե հափշտակության մեջ չի ծնվում պոետի միտքը:

— Ես չգիտեմ, թե ինչպես է ծնվում, բայց գիտեմ, որ գլխից դուրս է գալիս բոլորովին պատրաստի, այսինքն, երբ մշակվում է խորհրդածությամբ, միայն այդ ժամանակ է նա լավ լինում: Իսկ քո կարծիքով,— սկսեց քիչ լռելուց հետո Պյոտր Իվանիչը,— ո՞ւմ պետք է մարդու տալ այդ սքանչելի արարածներին:

— Նրանց, ում իրենք սիրում են, ով դեռ չի կորցրել պատանեկան գեղեցկության փայլը, ում մեջ թե գլխում, թե սրտում՝ ամենուրեք նկատվում է կյանքի ներկայությունը, աչքերում դեռ չի մարել փայլը, այտերին չի սառել կարմիրը, չի կորել թարմությունը՝ առողջության նշանները. ով որ չուժասպառված ձեռքով կտաներ սքանչելի ընկերուհուն կյանքի ճանապարհով և նրան ընծա կբերեր դեպի նա ունեցած սիրով լի սիրտը, որն ընդունակ է հասկանալու և բաժանելու նրա զգացմունքները, երբ բնության իրավունքները...

— Բավակա՜ն է: Այսինքն՝ քեզ նման կտրիճներին: Եթե մենք ապրելիս լինեինք **դաշտերում ու թավ անտառներում՝** այդպես է. թե չէ ամուսնացրու քեզ նման կտրիճին՝ շա՜տ օգուտ կլինի: Առաջին տարին կգժվի, իսկ հետո կսկսի կուլիսների հետևը նայել կամ կնոջը որպես ախոյան կտա նրա իսկ աղախնին, որովհետև ախր բնության իրավունքները, որոնց մասին խոսում ես, պահանջում են փոփոխություն, նորություններ. հրաշալի՜ կարգ է: Հետո կինն էլ, տեսնելով ամուսնու խելառությունները, հանկարծ կսիրի սաղավարտներ, շքահանդեսներ ու

դիմակահանդեսներ և քեզ կանի էնիք... Իսկ առանց կարողության՝ Է՛լ ավելի վա՛տ է, ուտելու բան չկա, ասում է:

Պյոտր Իվանիչը դեմքը թթվեցրեց:

— «Ես, ասում է, ամուսնացած եմ,— շարունակեց նա,— արդեն, ասում է, երեք երեխա ունեմ, օգնեցեք, չեմ կարող ապրուստ հասցնել, ես աղքատ եմ...»: Ի՜նչ զարշելի բան: Ոչ, ես հույս ունեմ, որ դու չես ընկնի ոչ մեկ, ոչ մյուս կարգը:

— Ես կընկնեմ երջանիկ ամուսինների կարգը, հորեղբայր, իսկ Նադինկան՝ երջանիկ կանանց: Չեմ ուզում ամուսնանալ, ինչպես ամուսնանում է մեծ մասը. մի երգ են երգում. «Ձահելությունն անցել է, մենակությունը ձանձրացրել, ուրեմն պետք է ամուսնանալ»: Ես այդպիսին չեմ:

— Զառանցում ես, սիրելիս:

— Ախր ինչի՞ց գիտեք:

— Նրանից, որ դու նույնպիսի մարդ ես, ինչպես ուրիշները, իսկ ուրիշներին ես վաղուց եմ ճանաչում: Դե, ասա տեսնեմ, ինչո՞ւ ես ամուսնանում:

— Ինչպես թե՝ ինչու. Նադինկան իմ կի՜նն է,— բացականչեց Ալեքսանդրը երեսը ձեռքերով ծածկելով:

— Հետո՞ ինչ: Տեսնո՞ւմ ես, ինքդ էլ չգիտես:

— Ո՜ւ: Լոկ մտքից շունչս կտրվում է: Դուք չգիտեք, թե ինչպես եմ սիրում նրան, հորեղբայր: Ես սիրում եմ այնպես, ինչպես ոչ ոք երբեք չի սիրել. հոգուս բոլոր ուժերով՝ ամե՜ն ինչ նրան...

— Ավելի լավ էր, Ալեքսանդր, հայհոյեիր կամ, թող այդպես լինի, թեկուզ գրկիր ինձ, քան թե կրկնեիր այդ հիմարագույն նախադասությունը: Այդ ինչպե՜ս լեզուդ պտտվեց: «Ինչպես ոչ ոք երբեք չի սիրե՛լ»:

Պյոտր Իվանիչը ուսերը թոթվեց:

— Ի՞նչ կա որ, մի՞թե այդ չի կարող լինել:

— Ասենք, իսկապես, քո սիրուն նայելով, կարծում եմ, որ դա նույնիսկ հնարավոր է, ավելի հիմար ձևով սիրել չի կարելի:

— Բայց Նադինկան ասում է, որ պետք է մի տարի սպասել, որ մենք ջահել ենք, պետք է մեզ փորձենք... մի ամբողջ տարի... և այն ժամանակ...

— Մի տարի՜: Ա՜: Վաղուց այդպես ասեիր,— ընդմիջեց Պյոտր Իվանիչը:— Այդ նա՞ առաջարկեց: Այդ ի՜նչ խելոքն է: Քանի՞ տարեկան է:

— Տասնութ:

— Իսկ դո՞ւ՝ քսաներեք. դե, եղբայր, նա քսաներեք անգամ խելացի է քեզնից: Նա, ինչպես տեսնում եմ, բան է հասկանում. քեզ հետ նա մի քիչ չարություն կանի, կկոտրատվի, ժամանակ կանցկացնի, իսկ հետո... այդ անպիտան աղջիկների մեջ կան շատ խելացիները: Դե, ուրեմն դու չես ամուսնանա: Ես կարծում էի, ուզում ես դա որքան կարելի է շուտով գլուխ բերես, այն էլ թաքուն: Քո տարիքում այդ հիմարություններն այնքան արագ են արվում, որ չես հասցնում նույնիսկ խանգարել. բայց մի տարուց հետո՜: Մինչ այդ նա դեռ կխաբի քեզ…

— Նա կխաբի՜, կոտրատվո՜ւմ է: Անպիտան աղջի՜կ է: Նա՜դինկան: Թո՜ւ, հորեղբայր: Ո՞ւմ հետ եք ապրել, ձեր ամբողջ կյանքում, ո՞ւմ հետ եք գործ ունեցել, ո՞ւմ եք սիրել, որ այդպիսի սև կասկածներ ունեք...

— Ապրել եմ մարդկանց հետ, կին եմ սիրել:

— Նա խաբի՛: Այդ հրեշտակը, այդ մարմնավորված անկեղծությունը, մի կին, որին աստված առաջին անգամ ստեղծել է իր ողջ անարատությամբ ու փայլով...

— Բայց և այնպես կին է, և հավանաբար կխաբի:

— Դուք դրանից հետո կասեք, որ ե՞ս էլ կխաբեմ:

— Ժամանակի ընթացքում՝ այո, դու էլ:

— Ե՛ս: Նրանց մասին, ում չեք ճանաչում, կարող եք եզրակացնել ինչ կամենաք, բայց հանցանք չե՞ք գործում, ինձ այդպիսի ստորության մեջ կասկածելով: Ուրեմն ո՞վ եմ ես ձեր աչքում:

— Մարդ:

— Բոլորը միատեսակ չեն: Գիտցեք ուրեմն, որ ես, առանց կատակի, անկեղծորեն խոսք եմ տվել նրան սիրել ամբողջ կյանքումս. ես պատրաստ եմ դա հաստատել երդմամբ...

— Գիտեմ, գիտեմ: Օրինավոր մարդը չի կասկածում երդման անկեղծությանը, երբ երդվում է կնոջ, իսկ հետո դավաճանում է կամ սառչում, ինքն էլ չիմանալով, թե ինչպես: Դա արվում է ոչ դիտավորյալ, և այստեղ ոչ մի ստորություն չկա, ոչ ոք մեղավոր չէ. բնությունը թույլ չի տվել հավետ սիրել: Եվ հավերժական ու անդավաճան սիրուն հավատացողներն էլ անում են նույնը, ինչ որ չհավատացողները, միայն չեն նկատում կամ չեն ուզում խոստովանել, մենք, իբր, բարձր ենք դրանից, ոչ թե մարդիկ ենք, այլ հրեշտակներ. հիմարությո՛ւն:

— Հապա ինչպե՞ս կան սիրահարներ, ամուսիններ, որոնք հավերժ սիրում են իրար և ամբողջ կյանքում ապրում են...

— Հավե՛րժ… Ով երկու շաբաթ է սիրում, նրան թեթևսոլիկ են ասում, իսկ երկու, երեք տարի՝ արդեն հավերժ է դառնում: Հապա վերլուծիր, թե սերն ինչպես է ստեղծված, և ինքդ կտեսնես, որ նա հավերժական չէ: Այդ զգացմունքի կենդանությունը, բորբոքությունը, տենդոտությունը թույլ չեն տալիս, որ նա տևական լինի: Սիրահարները, ամուսինները, ամբողջ կյանքում ապրում են միասին, ճիշտ է: Բայց մի՞թե ամբողջ կյանքում սիրում են իրար: Մի՞թե նրանց միշտ կապում է սկզբնական սերը: Մի՞թե նրանք ամեն րոպե որոնում են իրար, իրար են նայում ու չեն կշտանում: Վերջում ո՞ւր են կորչում մանր սիրաշահումները, անընդհատ ուշադրությունը, միասին լինելու ծարավը, արցունքները, հիացումները՝ այդ բոլոր ցնդաբանությունները: Ամուսինների սառնությունն ու անդյուրաշարժությունը առակ է դարձել: «Նրանց սերը դառնում է մտերմություն»,— ասում են բոլորը լուրջ-լուրջ. դե ահա, արդեն սեր չէ: Մտերմություն: Իսկ ի՞նչ մտերմություն է դա: Ամուսնուն կնոջ հետ կապում են ընդհանուր շահերը, հանգամանքները, նույն ճակատագիրը, ահա և ապրում են միասին. իսկ եթե դա չկա, բաժանվում են, սիրում են ուրիշներին — մեկը վաղ, մյուսը՝ ուշ. դա կոչվում է դավաճանություն… Իսկ եթե միասին են ապրում, հետո ապրում են սովորության ուժով, որը, ականջիդ կասեմ, ավելի ուժեղ է, քան ամեն մի սեր, զուր չէ, որ այն երկրորդ բնավորություն են կոչում. այլապես մարդիկ չէին դադարի ամբողջ կյանքի ընթացքում մորմոքել սիրո առարկայից անջատվելու կամ նրա մահվան դեպքում, բայց չէ՞ որ մխիթարվում են: Թե չէ խոսք եք գտել՝ հավերժ, հավե՛րժ... Չեն հասկանում, դրա համար էլ բղավում են:

— Հապա ինչպե՞ս է, հորեղբայր, որ դուք ձեզ համար չեք վախենում: Նշանակում է, ձեր հարսնացուն էլ... ներեցեք... կխաբի ձեզ...

— Չեմ կարծում:

— Ինչպիսի՛ ինքնասիրություն:

— Սա ոչ թե ինքնասիրություն է, այլ հաշիվ:

— Դարձյա՛լ հաշիվ:

— Դե, խորհրդածություն, եթե ուզում ես:

— Իսկ եթե նա մեկին սիրահարվի՞:

— Չպետք է թույլ տալ, որ մինչև այդտեղ հասնի. իսկ եթե պատահի էլ այդպիսի մեղք, ապա կարելի է ըստ հնարավորին վարպետորեն սառեցնել:

— Մի՞թե դա կարելի է: Մի՞թե ձեզնից է կախված:

— Չափազանց:

— Այդպես կանեին բոլոր խաբված ամուսինները,— ասաց Ալեքսանդրը,— եթե միջոց լիներ...

— Բոլոր ամուսինները միանման չեն, սիրելիս, ոմանք շատ անտարբեր են դեպի իրենց կանայք, ուշադրություն չեն դարձնում, թե ինչ է կատարվում նրանց շուրջը, և չեն էլ ուզում նկատել, մյուսները ինքնասիրությունից դրդված կուզենային, բայց տկար են. չեն կարողանում գործին կպչել:

— Հապա դուք ինչպե՞ս կանեք:

— Դա իմ գաղտնիքն է. քեզ հասկացնել չի լինի. դու տենդի մեջ ես:

— Ես հիմա երջանիկ եմ և շնորհակալ եմ աստծուց. իսկ թե ինչ կլինի առաջիկայում, չեմ էլ ուզում գիտենալ:

— Նախադասությանդ առաջին մասն այնքան խելոք է, որ թեկուզ չսիրահարված մարդը կարող էր ասել, իսկ երկրորդը, ներիր, բանի պետք չէ: «Չեմ ուզում գիտենալ, թե ինչ կլինի առաջիկայում»,— այսինքն՝ չեմ ուզում մտածել այն մասին, թե ինչ կար երեկ և ինչ կա այսօր. ո՛չ կմտածեմ, ո՛չ կխորհրդածեմ, չեմ նախապատրաստվի այսինչ բանին, չեմ զգուշանա այնինչ բանից, այնպես, քամին ուր որ փչեց: Աստվա՛ծ սիրես, ինչի՞ է նման:

— Իսկ ձեր կարծիքո՞վ ինչպես, հորեղբայր: Կհասնի երանության վայրկյանը, պետք է վերցնել խոշորացույցը և դիտել...

— Ոչ, մանրադիտակը, որպեսզի հանկարծ ուրախությունից չխենթանաս, բոլորի վզին չկախվես:

— Կամ վրա կհասնի տխրության րոպեն,— շարունակեց Ալեքսանդրը,— պետք է նայել ձեր մանրադիտակո՞վ:

— Ոչ, տխրությունը խոշորացույցով. ավելի հեշտ է դիմանալ, երբ երևակայում ես, թե տհաճությունը կրկնակի մեծ է, քան կա:

— Ինչո՞ւ պիտի ես,— շարունակեց Ալեքսանդրը զայրույթով,— սկզբից ևեթ սառն դատողությամբ սպանեմ ամեն մի ուրախություն, չընմբոշխնելով այն, մտածեմ, թե նա կդավաճանի, կանցնի: Ինչո՞ւ պիտի նախօրոք տանջվեմ վշտից, երբ այդ վիշտը դեռ չի եկել:

— Բայց փոխարենը, երբ կգա,— նրա խոսքը կտրեց հորեղբայրը,— կմտածես, որ վիշտն էլ կանցնի, ինչպես անցավ այս ու այս ժամանակ և՛ իմ, և՛ նրա, և՛ երրորդի վիշտը: Հուսով եմ, սա վատ չէ, և արժե դրա վրա ուշադրություն դարձնել. այն ժամանակ չես մորմոքի, երբ կտեսնես կյանքում բոլոր հավանականությունների փոփոխությունները: Սառնարյուն ու հանգիստ կլինես, որքան կարող է հանգիստ լինել մարդը:

— Ահա, ուրեմն, որն է ձեր հանգստության գաղտնիքը,— մտախոհ ասաց Ալեքսանդրը:

Պյոտր Իվանիչը լռել ու գրում էր:

— Բայց դա ի՜նչ կյանք է,— սկսեց Ալեքսանդրը,— ոչ թե հափշտակվել, այլ շարունակ մտածել, մտածել... ոչ, ես զգում եմ, որ դա այդպես չէ: Ես ուզում եմ ապրել առանց ձեր սառը վերլուծության, առանց մտածելու այն մասին, թե արդյոք առաջիկայում ինձ սպասում է դժբախտությո՞ւն, վտանգ, թե՞ ոչ, միևնույն է... Ինչո՞ւ պիտի վաղօրոք մտածեմ և թունավորվեմ...

— Չէ՞ որ ես ասում եմ՝ ինչու, իսկ դու քոնն ես պնդում: Մի հարկադրիր, որ քո վերաբերյալ որևէ վիրավորական համեմատություն անեմ: Նրա համար, որ երբ նախատեսնում ես վտանգը, խոչընդոտը, դժբախտությունը, այդպես ավելի հեշտ է նրա դեմ պայքարելն ու նրան դիմանալը. ո՛չ կխելագարվես, ո՛չ կմեռնես, իսկ երբ վրա հասնի ուրախությունը, չես ցատկոտի ու կիսանդրիները շուռ տա, պա՞րզ է: Նրան ասում են՝ ահա սկիզբը, տես, դրան համապատասխան հասկացիր վախճանը, իսկ նա աչքերն է ծածկում, գլուխը պտտեցնում, ինչպես խրտվիլակ տեսնելիս, և ապրում է երեխայի պես: Քո կարծիքով՝ ապրի օրը օրին, ինչպես որ պատահի, նստիր խրճիթիդ շեմին, կյանքը չափիր ճաշերով, պարերով, սիրով ու անդավաճան բարեկամությամբ: Բոլորն էլ ոսկեդար են ուզում: Ես արդեն քեզ ասել եմ, որ քո գաղափարներով լավ է նստել գյուղում կնկա ու կես դյուժին երեխաների հետ, իսկ այստեղ պետք է գործ անել, դրա համար անընդհատ պետք է մտածել և հիշել, թե ինչ ես արել երեկ, ինչ ես անում այսօր, որպեսզի իմանաս, թե ինչ պետք է անել վաղը, այսինքն՝ ապրել անձիդ և զբաղմունքներիդ անընդհատ ստուգմամբ: Դրանով կհասնենք որևէ խելացի բանի. իսկ այդպես... Բայց ի՜նչ խոսեմ քեզ հետ. դու հիմա զառանցանքի մեջ ես: Վա՛յ: Շուտով ժամը մեկն է լինում: Այլևս ոչ մի խոսք, Ալեքսանդր. գնա... ասածներդ չեմ էլ լսի. վաղը ճաշիր ինձ մոտ. որոշ մարդիկ կլինեն:

— Ձեր ընկերնե՞րը:

— Այո... Կոնևը, Սմիռնովը, Ֆյոդորովը. դու նրանց ճանաչում ես, և էլի ոմանք...

— Կոնևը, Սմիռնովը, Ֆյոդորովը: Բայց սրանք այն մարդիկն են, որոնց հետ դուք գործ ունեք:

— Այո, իհարկե. բոլորը պետքական մարդիկ են:

— Ուրեմն դրանք ձեր ընկերնե՞րն են: Իսկապես, ես չեմ տեսել, որ դուք որևէ մեկին ընդունեք առանձնահատուկ ջերմությամբ:

— Ես քեզ արդեն ասել եմ, որ ընկեր եմ անվանում նրանց, որոնց հետ ավելի հաճախ եմ հանդիպում, որոնք ինձ կամ օգուտ, կամ բավականություն են պատճառում: Ասա, խնդրեմ: Ինչո՞ւ պիտի ձրի կերակրեմ:

— Իսկ ես կարծում էի, թե հարսանիքից առաջ դուք հրաժեշտ եք տալիս ձեր իսկական ընկերներին, որոնց սրտանց սիրում եք, որոնց հետ թասը ձեռքին վերջին անգամ կհիշեք ձեր ուրախ պատանեկությունը և, գուցե, անջատման ժամին նրանց ամուր կսեղմեք ձեր սրտին:

— Դե քո հինգ խոսքում կա ամեն բան, ինչ որ կյանքում չի լինում կամ չպետք է լինի: Ի՜նչ հիացմունքով մորաքույրդ վզովդ կընկներ: Իսկապես որ այստեղ և **իսկական ընկերներ** են, այն ժամանակ, երբ լինում են ուղղակի ընկերներ, և **թաս,** երբ խմում են ըմպանակներից կամ բաժակներից և գրկախառնություն **անջատման ժամին**, երբ անջատում չկա: Օ՜խ, Ալեքսանդր: Ես երբեք ոչ մեկի հետ չեմ մտերմացել այն աստիճան, որ ափսոսամ, և քեզ էլ խորհուրդ չեմ տալիս:

— Բայց գուցե նրանք այդպիսին չեն. գուցե նրանք ափսոսում են կորցնել, հանձին ձեր, բարի ընկերո՞ջը, զրուցակցի՞ն:

— Դա արդեն ոչ թե իմ, այլ նրանց գործն է: Ես էլ հաճախ եմ կորցրել այդպիսի ընկերներ, բայց տեսնո՞ւմ ես, դրանից չեմ մեռել: Ուրեմն վաղը կգա՞ս:

— Վաղը, հորեղբայր, ես…

— Ի՞նչ:

— Կանչված եմ ամառանոց:

— Հավանաբար՝ Լյուբեցկիների՞ մոտ:

— Այո:

— Այդպե՞ս: Դե, ինչպես կուզես: Հիշիր գործի մասին, Ալեքսանդր. ես խմբագրին կասեմ, որ դու պարապում ես...

— Ախ, հորեղբայր, ինչպե՞ս կարելի է: Ես անպայման կավարտեմ քաղվածքները գերմանացի տնտեսագետներից...

— Դու նախ սկսիր: Տես, միտքդ պահիր, **անարգ մետաղ** չխնդրես, հենց որ բոլորովին տարվես **քաղցր գրկանքով**:

IV

Ալեքսանդրի կյանքը բաժանվում էր երկու կեսի: Առավոտը կլանում էր ծառայությունը: Նա քրքրում էր փոշոտված գործերը. մտմտում էր իրեն բոլորովին չվերաբերող հանգամանքների մասին, թղթի վրա հաշվում էր իրեն չպատկանող միլիոնավոր ռուբլու գումարներ: Բայց երբեմն գլուխը հրաժարվում էր մտածել ուրիշների փոխարեն, գրիչն ընկնում էր ձեռքից, նրան տիրում էր այն **քաղցր գրկանքը,** որի համար բարկանում էր Պյոտր Իվանիչը:

Այն ժամանակ Ալեքսանդրը փլվում էր աթոռի թիկնակին և մտքով տարվում կանաչազարդ վայրեր, հանգստավետ վայրեր, ուր չկա ոչ թուղթ, ոչ թանաք, ոչ տարօրինակ դեմքեր, ոչ փոխհամազգեստ, ուր իշխում է անդորրը, գրգանքն ու զովը, ուր նրբորեն կահավորված դահլիճում բուրում են ծաղիկները, լսվում են դաշնամուրի հնչյունները, վանդակում թռչկոտում է թութակը, իսկ այգում իրենց ճյուղերն են օրորում կեչիներն ու եղրևանու թփերը: Եվ այդ բոլորի թագուհին նա է...

Ալեքսանդրը առավոտյան, դեպարտամենտում նստած, անտեսանելիորեն ներկա էր լինում Լյուբեցկիների ամառանոցի կղզիներից մեկում, իսկ երեկոյան ներկա էր լինում այնտեղ տեսանելիորեն, իր ողջ անձնավորությամբ: Մի անհամեստ հայացք նետենք նրա երանության վրա:

Մի շոգ օր էր, հազվագյուտ օրերից մեկը Պետերբուրգում. արևը կենդանություն էր տալիս դաշտերին, բայց մեռցնում էր պետերբուրգյան փողոցները, իր շողերով շիկացնելով գրանիտը, իսկ ճառագայթները, անդրադառնալով քարերից, խորովում էին մարդկանց: Մարդիկ քայլում էին դանդաղ, գլուխները քաշ, շները՝ լեզուները դուրս գցած: Քաղաքը նման էր այն հեքիաթային քաղաքներից մեկին, որտեղ կախարդի ձեռքի մի շարժումով հանկարծ ամեն ինչ քարացել է: Կառքերը չէին գոգռացնում քարերի վրա. արևկալները, ինչպես աչքերի ցած թողած կոպեր, ծածկում էին լուսամուտները. փայտե սալահատակը պարկետի նման պսպղում էր, ոտք դնելիս զգացվում էր մայթերի տաքությունը: Ամենուրեք ձանձրալի էր, քնեած:

Հետիոտնը, երեսի քրտինքը սրբելով, ստվեր էր որոնում: Մի փոստակառք վեց ուղևորներով, դանդաղ քարշ էր գալիս քաղաքից դուրս, հետևից հազիվ փոշի բարձրացնելով: Ժամը չորսին աստիճանավորները դուրս եկան պաշտոնատեղից և կամացուկ ցրվեցին տները:

Ալեքսանդրը դուրս վազեց, կարծես տանը փուլ էր եկել առաստաղը, նայեց ժամացույցին՝ ուշ է. ճաշին չի հասնի. նա նետվեց դեպի ճաշարանի տերը:

— Ի՞նչ ունեք: Շո՛ւտ:

— Սուպ jullienne և àla reine. սոուս à la provençale, à la maitre d’hôtel */Ճաշերի ֆրանսերեն անուններ:/* տապակած հնդուհավ, որսի միս, սուֆլե կարկանդակ:

— Դե, սուպ à la provençale, սոուս jullienne և տապակած սուֆլե, միայն թե շո՛ւտ:

Սպասավորը նայեց նրան:

— Դե, ի՞նչ է,— ասաց Ալեքսանդրը անհամբեր:

Սպասավորը մի կողմ նետվեց և մատուցեց ինչ որ գլխին փչել էր: Ադուևը շատ գոհ մնաց: Նա չսպասեց չորրորդ կերակրատեսակին և վազեց դեպի Նևայի ափը: Այնտեղ նրան սպասում էր մի նավակ և երկու թիավար:

Մի ժամ անց նա տեսավ ավետյաց անկյունը, կանգնեց նավակի մեջ, հայացքը հառեց հեռուն: Սկզբում նրա աչքերը մշուշվեցին վախով ու անհանգստությամբ, որը փոխվեց կասկածի: Հետո հանկարծ դեմքը շողաց ուրախության լույսով, ինչպես արևի փայլով: Նա այգու ցանկորմի մոտ նկատեց ծանոթ զգեստը. ահա այնտեղ նրան ճանաչեցին, թաշկինակ թափահարեցին: Նրան սպասում են, գուցե՝ վաղուց: Անհամբերությունից նրա ներբանները կարծես վառվեցին:

«Ա՛խ: Եթե կարելի լիներ ոտո՛վ գնալ ջրի երեսին,— մտածում էր Ալեքսանդրը:— Ամեն հիմար բանի գյուտ անում են, իսկ ահա սրա գյուտը չեն անում»:

Թիավարները թիակները թափահարում են դանդաղ, համաչափ, ինչպես մեքենա: Քրտինքը կարկուտի պես թափվում է նրանց արևակեզ դեմքերից. նրանց հոգն էլ չէ, թե Ալեքսանդրի սիրտը թրթռաց կրծքում, որ աչքը առանց կտրելու մի կետից, նա արդեն երկու անգամ, մոռացության մեջ, նավակի եզրից դուրս հանեց մեկ մի ոտքը, մեկ՝ մյուսը, իսկ նրանք ոչինչ. թիավարում են նույն պաղարյունությամբ և ժամանակ առ ժամանակ թևքով սրբում են երեսները:

— Շտապեցեք,— ասաց նա,— հիսուն կոպեկ կտամ օղու համար:

Ինչպե՛ս սկսեցին նրանք աշխատել, ինչպե՛ս սկսեցին վեր-վեր թռչել տեղերում: Ո՞ւր կորավ հոգնածությունը: Որտեղի՞ց վերցրին ուժերը: Թիակներն սկսեցին ուղղակի թրթռալ ջրի վրա: Քանի նավակը սահում էր, ամեն անգամ երեք սաժենի չափ տարածություն էր կլանում: Մի տասն անգամ թափահարեցին թիակները, և ցռուկն արդեն կամար գծեց, նավակը պերճ շարժումով մոտեցավ ու թեքվեց բուն ափի մոտ: Ալեքսանդրն ու Նադինկան հեռվից ժպտում էին և միմյանցից աչք չէին կտրում: Ադուևը փոխանակ ափին կոխելու, մի ոտքը դրեց ջուրը, Նադինկան ծիծաղեց:

— Կամաց, պարոն, սպասեցեք, ձեռքս մեկնեմ,— ասաց թիավարներից մեկը, երբ Ալեքսանդրն արդեն ափին էր:

— Սպասեցեք ինձ այստեղ,— ասաց Ադուևը նրանց և վազեց դեպի Նադինկան:

Նա հեռվից քնքշորեն ժպտում էր Ալեքսանդրին: Նավակի ամեն մի շարժումին դեպի ափ՝ նրա կուրծքն ավելի ուժգին էր ելևէջում:

— Նադեժդա Ալեքսա՛նդրովնա...— ասաց Ալեքսանդրը, ուրախությունից հազիվ շունչը ետ բերելով:

— Ալեքսանդր Ֆյո՛դորիչ,— պատասխանեց նա:

Նրանք ակամա նետվեցին դեպի իրար, բայց կանգ առան և ժպտալով նայում էին իրար խոնավ աչքերով և չէին կարող ոչինչ ասել: Այդպես անցավ մի քանի րոպե:

Չի կարելի մեղադրել Պյոտր Իվանիչին, որ նա չէր նկատել Նադինկային առաջին անգամից: Նա գեղեցկուհի չէր և վայրկենապես իր վրա ուշադրություն չէր բևեռում:

Բայց ով ուշադիր նայում էր նրա դիմագծերին, աչքը երկար ժամանակ չէր հեռացնում նրանից: Նադինկայի դեմքը հազիվ էր երկու րոպե հանգիստ մնում: Մտքերը և ծայրահեղ տպավորվող ու դյուրագրգիռ հոգու այլազան զգացողությունները անընդհատ փոխարինում էին իրար և այդ զգացողությունների երանգները ձուլվում էին զարմանալի խաղի մեջ, ամեն րոպե նրա դեմքին տալով նոր և անսպասելի արտահայտություն: Աչքերը, օրինակ, կարծես հանկարծ շանթ են նետում, այրում ու վայրկենապես թաքնվում երկար արտևանունքների տակ. դեմքը դառնում է անկենդան ու անշարժ, և ձեր առաջ կարծես մարմարե արձան է: Դրանից հետո սպասում ես նույնպիսի մի վառ շողի՝ ամենևին ոչ. կոպերը բարձրանում են կամացուկ, դանդաղ, նրա հայացքի հեզ փայլը լուսավորում է ամեն ինչ, կարծես ամպերի հետևից դանդաղորեն դուրս լողացող լուսնի շող: Այդպիսի հայացքին մարդու սիրտը անպայման արձագանքում է թեթև թրթիռով:

Շարժումների մեջ նույն բանն է: Նրանցում շատ նազելիություն կար, բայց դա Սիլֆիդայի նազելիություն չէ: Այդ նազելիության մեջ շատ կար վայրի, պոռթկուն բան, որ բնությունը տալիս է բոլորին, բայց որ հետո արվեստը խլում է մինչև վերջին հետքը, փոխանակ միայն մեղմելու: Ահա հենց այդ հետքերն էին, որ հաճախ դրսևորվում էին Նադինկայի շարժումների մեջ: Նա երբեմն նստում է գեղատեսիլ դիրքով, բայց հանկարծ, աստված գիտի, ներքին ինչ մղման հետևանքով, այդ պատկերավայել կեցվածքը խախտվում է բոլորովին անսպասելի և դարձյալ հմայիչ մի շարժումով: Խոսակցության մեջ նույն անսպասելի արտահայտություններն էին. մերթ ճիշտ դատողություն, մերթ երանություն, խիստ դատավճիռ, հետո մանկական արարք կամ նուրբ կեղծիք: Ամեն ինչ նրա մեջ ցույց էր տալիս խանդավառ միտք, քմահաճ ու փոփոխամիտ սիրտ: Ալեքսանդրի փոխարեն մեկ ուրիշն էլ լիներ, կգժվեր նրա համար. միայն Պյոտր Իվանիչը ողջ կմնար. բայց շա՞տ կան այդպիսիներ:

— Դուք ինձ սպասում էիք: Աստվա՛ծ իմ, որքա՜ն երջանիկ եմ,— ասաց Ալեքսանդրը:

— Ես սպասո՞ւմ էի: Մտքո՛վս էլ չէր անցնում,— պատասխանեց Նադինկան, գլուխն օրորելով:— Դուք գիտեք, ես միշտ այգում եմ:

— Դուք բարկանո՞ւմ եք,— երկչոտ հարցրեց Ալեքսանդրը:

— Ինչի՞ համար: Ա՛յ քեզ միտք:

— Դե, տվեք ձեր թաթիկը:

Նա պարզեց ձեռքը, բայց հազիվ Ալեքսանդրը կպավ նրան, Նադինկան անմիջապես դուրս կորզեց և հանկարծ փոխվեց: Ժպիտը չքացավ, դեմքին հայտնվեց բարկության նման մի բան:

— Այդ ի՞նչ է, կա՞թ եք խմում,— հարցրեց Ալեքսանդրը:

Նադինկայի ձեռքին մի գավաթ ու պաքսիմատ կար:

— Ես ճաշում եմ,— պատասխանեց նա:

— Ճաշում եք ժամը վեցին և կաթո՞վ:

— Ձեզ համար, իհարկե, տարօրինակ է կաթին նայելը, հորեղբոր մոտ կերած ճոխ ճաշից հետո: Իսկ մենք այստեղ գյուղում ենք. համեստ ենք ապրում:

Նա առջևի ատամներով պոկեց մի քանի փշուր պաքսիմատ և մի կում կաթը խմեց, շատ սիրունիկ ծամածռելով շրթունքները:

— Ես հորեղբորս մոտ չեմ ճաշել, ես դեռ երեկ հրաժարվեցի,— պատասխանեց Ալեքսանդրը:

— Ի՜նչ անխիղճն եք: Մի՞թե կարելի է այդպես ստել: Հապա որտե՞ղ էիք մինչև հիմա:

— Այսօր պաշտոնատեղում մինչև ժամը չորսն էի նստել...

— Իսկ հիմա վեցն է: Մի՛ ստեք, խոստովանեցեք, որ գայթակղվե՞լ եք ճաշով, հաճելի հասարակությամբ: Այնտեղ դուք շատ, շատ ուրախ էիք:

— Ազնի՛վ խոսք, ես նույնիսկ չեմ մտել հորեղբորս մոտ...— եռանդով սկսեց արդարանալ Ալեքսանդրը:— Մի՞թե այդ դեպքում ձեզ մոտ կկարողանայի հասնել այս ժամանակ:

— Ա՛: Սա ձեզ վա՞ղ է թվում: Լավ կանեիք մի երկու ժամ հետո գայիք,— ասաց Նադինկան և արագ պիրուետով հանկարծ շուռ եկավ նրանից ու շավղով գնաց դեպի տուն:

Ալեքսանդրը նրան հետևեց:

— Չմոտենա՛ք, չմոտենա՛ք ինձ.— ասաց Նադինկան, ձեռքը թափահարելով,— ես ձեզ տեսնել չեմ կարող:

— Հերիք է չարություն անեք, Նադեժդա Ալեքսանդրովնա:

— Ես բոլորովին էլ չարություն չեմ անում: Ասացեք, ուրեմն, որտե՞ղ էիք մինչև հիմա:

— Ժամը չորսին դուրս եկա դեպարտամենտից,— սկսեց Ադուևը,— մի ժամ գալիս էի այստեղ...

— Դե այդ դեպքում կլիներ հինգը, իսկ հիմա վեցն է: Ուրեմն որտե՞ղ եք անցկացրել էլի մեկ ժամ: Տեսնո՞ւմ եք, ախր, ինչպես եք ստում:

— Շտապ ճաշեցի ճաշարանատիրոջ մոտ…

— Շտա՛պ: Ընդամենը մե՛կ ժամ,— ասաց Նադինկան:— Խե՛ղճ: Դուք պետք է որ քաղցած լինեք: Կաթ չե՞ք ուզում:

— Օ, տվեք, տվեք ինձ այդ գավաթը...— ասաց Ալեքսանդրը և ձեռքը երկարեց:

Բայց Նադինկան հանկարծ գավաթը շուռ տվեց գլխիվայր և, առանց ուշադրություն դարձնելու Ալեքսանդրի վրա, հետաքրքրությամբ նայում էր, թե ինչպես վերջին կաթիլները գավաթից հոսեցին ավազի վրա:

— Դուք անգութ եք,— ասաց Ալեքսանդրը:— Մի՞թե կարելի է այդպես տանջել ինձ:

— Տեսեք, տեսեք, Ալեքսանդր Ֆյոդորիչ,— հանկարծ նրա խոսքը կտրեց Նադինկան, որ խորասուզված էր իր զբաղմունքի մեջ,— կարո՞ղ եմ կաթիլը գցել ահա այն բլոճի վրա, որ սողում է ճանապարհին... Ախ, գցեցի՛... խղճո՛ւկ: Կսատկի,— ասաց նա. հետո հոգածությամբ բարձրացրեց բլոճը, դրեց իր ափին և սկսեց շնչել նրա վրա:

— Ինչպե՛ս է ձեզ զբաղեցնում բլոճը,— ասաց Ալեքսանդրը սրդողած:

— Խղճո՛ւկս: Տեսեք, կսատկի,— ասում էր Նադինկան տխուր,— ի՞նչ արեցի:

Նա միառժամանակ բլոճը տանում էր ձեռքի վրա, և երբ սա շարժվեց ու սկսեց ձեռքի վրա դես-դեն սողալ, Նադինկան ցնցվեց, արագ ցած գցեց և ոտով տրորեց նրան, ասելով. «Ձզվելի՛ բլոճ»:

— Ուրեմն որտե՞ղ էիք,— հարցրեց նա հետո:

— Չէ՞ որ ես ասացի...

— Ախ, հա՛: Ձեր հորեղբոր մոտ: Շա՞տ հյուրեր կային: Շամպայն խմեցի՞ք: Ես նույնիսկ այստեղից զգում եմ շամպայնի հոտը:

— Դե ո՛չ, հորեղբորս մոտ չէի,— հուսահատորեն նրա խոսքը կտրեց Ալեքսանդրը:— Ձեզ ո՞վ ասաց:

— Հենց ինքներդ ասացիք:

— Նրանց մոտ, կարծում եմ, նոր են սեղան նստում: Դուք չգիտեք այդ ճաշկերույթները. մի՞թե այդպիսի ճաշկերույթն ավարտվում է մի ժամում:

— Դուք երկու ժամ եք ճաշել, հնգին և վեցին:

— Իսկ ե՞րբ եմ այստեղ եկել:

Նադինկան ոչինչ չպատասխանեց, ցատկեց ու պոկեց ակացիայի մի շյուղ, հետո վազեց շավղով:

Ադուևը՝ նրա հետևից:

— Այդ ո՞ւր եք գնում,— հարցրեց նա:

— Ո՞ւր: Ինչպե՞ս թե ուր: Հրաշալի՛ է: Մայրիկի մոտ:

— Ինչո՞ւ: Գուցե մենք նրան կանհանգստացնենք:

— Չէ, ոչինչ:

Մարիա Միխայլովնան, Նադեժդա Ալեքսանդրովնայի մայրիկը, մեկն էր այն բարի և ոչ խորամանկ մայրերից, որոնք սքանչելի են համարում այն ամենը, ինչ անում են բալիկները: Օրինակ, Մարիա Միխայլովնան հրամայում է կառքը լծել:

— Այդ ո՞ւր, մայրիկ,— կհարցնի Նադինկան:

— Գնանք մի քիչ զբոսնենք, այնքա՜ն հրաշալի եղանակ է,— ասում է մայրը:

— Ինչպե՞ս կարելի է. Ալեքսանդր Ֆյոդորիչն ուզում էր գալ:

Եվ կառքն արձակվում է:

Մի ուրիշ անգամ Մարիա Միխայլովնան նստում է իր անվերջանալի շարֆը ձեռքին և սկսում է հառաչել, քթախոտ քաշել և շարժել ոսկրե ճաղերը կամ խորասուզվում է մի ֆրանսերեն վեպի ընթերցանության մեջ:

— Maman, ինչո՞ւ չեք հագնվում,— կհարցնի Նադինկան խիստ:

— Իսկ ո՞ւր:

— Ախր զբոսանքի ենք գնալու:

— Զբոսանքի՞:

— Այո, Ալեքսանդր Ֆյոդորիչը կգա մեր հետևից: Արդեն մոռացե՛լ եք:

— Ես իսկի չգիտեի էլ:

— Ինչպե՜ս կարելի է դա չիմանալ,— կասի Նադինկան դժգոհությամբ:

Մայրը մի կողմ էր ձգում և շարֆը, և գիրքը ու գնում հագնվելու: Այսպես Նադինկան օգտվում էր լիակատար ազատությամբ, տնօրինում էր և իր, և մայրիկի անձը և իր ժամանակն ու զբաղմունքը, ինչպես որ ուզում էր: Ասենք, նա բարի, քնքուշ դուստր էր, չի կարելի ասել՝ հնազանդ, այն պատճառով միայն, որ մայրն էր նրան հնազանդվում, փոխարենը՝ կարելի է ասել, որ նա հնազանդ մայր ուներ:

— Գնացեք մայրիկիս մոտ,— ասաց Նադինկան, երբ նրանք մոտեցան դահլիճի դռանը:

— Իսկ դո՞ւք:

— Ես հետո կգամ:

— Դե, ուրեմն ես էլ հետո:

— Ոչ, գնացեք առաջ:

Ալեքսանդրը ներս մտավ և անմիջապես, ոտների ծայրին ետ վերադարձավ:

— Նա ննջում է բազկաթոռին:

— Ոչինչ, գնանք: Maman, այ maman!

— Հը՜:

— Ալեքսանդր Ֆյոդորիչն է եկել:

—Հը՜:

— Mr Ադուևն ուզում է ձեզ տեսնել:

— Հը՜:

— Տեսնո՞ւմ եք, ինչ խորունկ է քնել: Մի արթնացրեք,— ետ էր պահում Ալեքսանդրը:

— Ոչ, կարթնացնեմ: Maman!

— Հը՛:

— Դե զարթնեք. Ալեքսանդր Ֆյոդորիչն այստեղ է:

— Ո՞ւր է Ալեքսանդր Ֆյոդորիչը,— ասում էր Մարիա Միխայլովնան, նայելով ուղիղ նրան և ուղղելով մի կողմ ծռված գլխանոցը:— Ախ, այդ դո՞ւք եք, Ալեքսանդր Ֆյոդորիչ: Շնորհ արեք: Ես էստեղ նստեցի ու նինջ եկավ վրաս, ինքս էլ չգիտեմ ինչու, երևում է եղանակը պիտի վատանա: Կոշտուկս էլ ինչ-որ սկսել է ցավել՝ անձրև է գալու: Ննջում եմ ու երազումս տեսնում, թե իբր Իգնատին զեկուցում է հյուրերի մասին, միայն չհասկացա, թե ում: Լսում եմ, ասում է. եկել են, իսկ թե ով՝ չեմ հասկանում: Այդ ժամանակ Նադինկան ձայն տվեց, անմիջապես արթնացա: Իմ քունը շատ թեթև է. մեկը մի թեթև ճռռացնի, անմիջապես աչքս բացում եմ: Նստեցեք, տեսնենք, Ալեքսանդր Ֆյոդորիչ, ողջ-առո՞ղջ եք:

— Խոնարհաբար շնորհակալ եմ:

— Պյոտր Իվանիչը առո՞ղջ է:

— Փառք աստծու, խորապես շնորհակալ եմ:

— Ինչո՞ւ նա երբեք չի գալիս մեզ այցելության: Ես դեռ երեկ մտածում էի. գոնե, ասում եմ, երբևէ մի անգամ անցներ, բայց չկա, երևի զբաղվա՞ծ է:

— Շատ է զբաղված,— ասաց Ալեքսանդրը:

— Դուք էլ երկու օր է չեք երևում,— շարունակեց Մարիա Միխայլովնան:— Քիչ առաջ զարթնեցի, հարցնում եմ՝ ի՞նչ է անում Նադինկան: Դեռ քնած է, ասում են: Դե, թող քնի, ասում եմ, ամբողջ օրը դրսում է, այգում, եղանակը լավ է, կհոգնի: Նրա տարիքում քունը խորունկ է լինում, իմի նման չէ: Կհավատա՞ք, այնպիսի անքնություն է լինում. նույնիսկ թախիծ է իջնում վրաս. ներվերի՞ց է, ի՞նչ է, չգիտեմ: Ահա ինձ սուրճ են մատուցում. ախր ես սուրճը միշտ անկողնում եմ խմում. խմում եմ ու մտածում. «Այդ ի՞նչ է նշանակում, Ալեքսանդր Ֆյոդորիչը չի երևում: Հիվանդ հո չի՞»: Հետո վեր կացա, տեսնեմ ժամը տասնմեկն է լինում — համեցե՛ք: Սպասավորները չեն էլ ասի: Գալիս եմ Նադինկայի մոտ, նա դեռ չի էլ արթնացել: Զարթեցրի նրան: «Ժամանակն է, մե՛րս, շուտով ժամը տասներկուսն է լինում, քեզ ի՞նչ է պատահել»: Ախր ես նրա հետևից ամբողջ օրը դայակի պես ման եմ գալիս: Ես դիտմամբ դաստիարակչուհուն էլ արձակեցի, որպեսզի օտարներ չլինեն: Ուրիշներին վստահիր՝ աստված գիտի, թե ինչ կանեն: Ոչ: Ես ինքս եմ զբաղվել նրա դաստիարակությամբ, խստորեն հետևում եմ, ինձնից մի քայլ հեռու չեմ թողնում, և կարող եմ ասել, որ Նադինկան զգում է այդ. ինձնից թաքուն մի բան անել մտքովն էլ չի անցնում: Ես նրան կարծես ամբողջովին տեսնում եմ... Հետո խոհարարն եկավ. նրա հետ մի ժամի չափ զբաղվեցի. հետո մի քիչ կարդացի Memoires du diable... */«Սատանայի հուշեր» (ֆրանսիացի գրող Ֆրեդերիկ Սուլյեի արկածային վեպը):/* Ախ, ի՜նչ հաճելի հեղինակ է Սուլյեն: Ի՜նչ լավ է նկարագրում: Հետո մեր հարևանուհի Մարիա Իվանովնան եկավ ամուսնու հետ. այդպես էլ չտեսա, թե ինչպես անցավ առավոտը, տեսնեմ, արդեն ժամը չորսին մոտ է և ճաշելու ժամանակ է... Ախ, հա. այդ ինչո՞ւ ճաշին չեկաք: Մենք ձեզ մինչև ժամը հինգը սպասում էինք:

— Մինչև ժամը հինգը,— ասաց Ալեքսանդրը:— Ես ոչ մի կերպ չէի կարող, Մարիա Միխայլովնա. աշխատանքս ետ պահեց: Ես ձեզ խնդրում եմ երբեք ժամը չորսից ավելի չսպասեք:

— Ես էլ նույնն էի ասում, բայց դե Նադենկան՝ «սպասենք, հա սպասենք»:

— Ե՜ս: Ախ, ախ, maman, ի՜նչ եք ասում: Ես չէի՞ ասողը. «Ժամանակն է, maman, ճաշելու», իսկ դուք ասացիք. «Ոչ, պետք է սպասել. Ալեքսանդր Ֆյոդորիչը վաղուց չի եղել, հավանաբար ճաշին կգա»:

— Տեսեք, տեսե՛ք,— ասաց Մարիա Միխայլովնան, գլուխը օրորելով:— Ա՛խ, ի՜նչ անխիղճ է: Իր խոսքերը իմ վրա է բարդում:

Նադինկան շուռ եկավ, գնաց ծաղիկների մեջ և սկսեց չարացնել թութակին:

— Ես ասում եմ. «Էլ ի՞նչ պիտի գա Ալեքսանդր Ֆյոդորիչը,— շարունակում էր Մարիա Միխայլովնան:— Արդեն չորսն անց է կես»: — «Ոչ, ասում է, maman, պետք է սպասել, նա կգա»: Տեսնեմ՝ երեք քառորդ է անց. «Ինչպես կուզես, ասում եմ, Նադինկա, Ալեքսանդր Ֆյոդորիչը, հավանաբար, հյուր է գնացել, չի գա. ես սովածացել եմ»:— «Ոչ, ասում է, պետք է էլի սպասել մինչև ժամը հինգը»: Այդպես էլ սովից մեռցրեց ինձ: Ինչ, ճիշտ չէ՞, տիրուհիս:

«Պոպկա, պոպկա,— լսվում էր ծաղիկների հետևից,— այսօր որտե՞ղ ես ճաշելու դու, հորեղբորդ մո՞տ»:

— Ի՞նչ է: Թա՞ք է կացել,— շարունակում էր մայրը:— երևում է, ամաչում ես աստծու աշխարհին նայել:

— Իսկի էլ չէ,— պատասխանեց Նադինկան, դուրս գալով ծաղիկների միջից ու նստեց պատուհանի մոտ:

— Այդպես էլ սեղան չնստեց,— ասում էր Մարիա Միխայլովնան:— Մի գավաթ կաթ խնդրեց ու գնաց այգի. այդպես էլ չճաշեց: Ի՞նչ է: Հապա՛ մի ուղիղ աչքերիս նայիր, տիրուհիս:

Ալեքսանդրը քարացավ այս պատմությունից: Նա նայեց Նադինկային, բայց վերջինս մեջքը շուռ էր տվել դեպի Ալեքսանդրը և բաղեղի մի տերև էր պոկոտում:

— Նադեժդա Ալեքսանդրովնա՛,— ասաց Ադուևը,— մի՞թե ես այնքան երջանիկ եմ, որ դուք մտածում էիք իմ մասին:

— Չմոտենա՛ք ինձ,— բղավեց Նադինկան զայրույթից, որ իր խորամանկությունները բացվեցին:— Մայրիկս կատակում է, իսկ դուք պատրաստ եք հավատալու:

— Իսկ ո՞ւր է հատապտուղը, որ պահեցիր Ալեքսանդր Ֆյոդորիչի համար:

— Հատապտո՞ւղը:

— Այո, հատապտուղը:

— Չէ՞ որ դուք կերաք ճաշին,— ասաց Նադինկան:

— Ե՛ս: Ուշքի՛ եկ, մերս: Դու պահեցիր, ու ինձ չտվիր: «Այ, ասում է, Ալեքսանդր Ֆյոդորիչը որ գա, այն ժամանակ ձեզ էլ կտամ»: Ինչպե՞ս է:

Ալեքսանդրը քնքուշ ու խորամանկ նայեց Նադինկային: Սա կարմրեց:

— Ինքն է մաքրել, Ալեքսանդր Ֆյոդորիչ,— ավելացրեց մայրը:

— Այդ ինչեր եք հնարում, maman: Ես մաքրեցի երկու թե երեք հատիկ, այն էլ ինքս կերա, իսկ մնացածը Վասիլիսան մաքրեց...

— Չհավատաք, չհավատաք, Ալեքսանդր Ֆյոդորիչ. Վասիլիսան առավոտվանից քաղաք է ուղարկված: Ի՞նչ կարիք կա թաքցնելու: Ալեքսանդր Ֆյոդորիչին, հավանաբար, ավելի հաճելի է, որ դու ես մաքրել և ոչ թե Վասիլիսան:

Նադինկան ժպտաց, հետո նորից թաքնվեց ծաղիկների մեջ և հայտնվեց հատապտղով լի մի ափսե ձեռքին: Ալեքսանդրը համբուրեց նրա ձեռքը և հատապտուղն ընդունեց ինչպես մարշալական գավազան:

— Դուք չարժեք: Հարկադրել այդքան երկար սպասե՛լ,— ասաց Նադինկան:— Ես երկու ժամ կանգնած էի ցանկորմի մոտ և, երևակայեցեք: Ինչ-որ մեկը գալիս է կառքով. կարծում էի՝ դուք եք,

և թաշկինակս թափահարեցի, հանկարծ անծանոթներ, ինչ-որ զինվորական: Նա էլ թափահարեց, այդ հանդուգնը...

Երեկոյան գալիս ու գնում էին հյուրերը: Սկսեց մթնել: Լյուբեցկիները և Ադուևը նորից մնացին երեքով: Քիչ առ քիչ խախտվեց այդ եռյակը ևս: Նադինկան գնաց այգի: Ստեղծվեց մի աներդաշնակ դուետ Մարիա Միխայլովնայի ու Ադուևի միջև. Լյուբեցկայան նրա համար երկար-բարակ երգում էր այն մասին, թե ինչ էր անում երեկ, այսօր, ինչ է անելու վաղը: Ալեքսանդրին տիրեց հոգնեցուցիչ ձանձրույթն ու անհանգստությունը: Արագորեն իջնում է երեկոն, իսկ ինքը դեռ չի հասցրել ոչ մի բառ ասել Նադինկային միայնության մեջ: Նեղ տեղից ազատեց խոհարարը. բարերարը եկել էր հարցնելու, թե ինչ պատրաստի ընթրիքին, իսկ Ալեքսանդրի շունչն ավելի էր կտրվում անհամբերությունից, քան քիչ առաջ նավակում: Հազիվ էին խոսք բացել կոտլետների, պրոստոկվաշայի մասին, երբ Ալեքսանդրը սկսեց վարպետորեն ետ քաշվել: Ինչքա՜ն մանևրներ գործադրեց նա, որպեսզի միայն հեռանա Մարիա Միխայլովնայի բազկաթոռից: Նախ մոտեցավ լուսամուտին և դուրս նայեց, իսկ ոտքերը ուղղակի նրան քաշում էին դեպի բաց դուռը: Հետո դանդաղ քայլերով, իրեն հազիվ զսպելով, որ գլխակորույս դուրս չնետվի, նա անցավ դաշնամուրի մոտ, տարբեր տեղերում մատներով թմբկահարեց ստեղները, տենդային թրթիռով գրակալից վերցրեց նոտաները, նայեց ու տեղը դրեց. նույնիսկ այնքան հաստատակամություն ունեցավ, որ երկու ծաղիկ հոտոտեց և չարացրեց թութակին, այստեղ նա հասավ անհամբերության գագաթնակետին. դուռը հենց կողքին էր, բայց գնալը դեռ մի տեսակ անհարմար էր. պետք էր մի երկու րոպե կանգնել և դուրս գալ կարծես թե պատահաբար: Իսկ խոհարարը արդեն երկու քայլ ետ էր արել, մի խոսք ևս՝ և նա կգնա, այն ժամանակ Լյուբեցկայան անպայման նորից կդիմի նրան: Ալեքսանդրը չհամբերեց և, օձի պես, դուրս սողաց դռնից ու, արտասանդուղքից ցատկելով առանց աստիճանները հաշվելու, մի քանի քայլով հայտնվեց ծառուղու վերջում՝ ջրի ափին, Նադինկայի մոտ:

— Հազի՜վ հիշեցիք իմ մասին,— ասաց նա այս անգամ հեզ կշտամբանքով:

— Ախ, ի՜նչ տանջանքի դիմացա,— ասաց Ալեքսանդրը,— իսկ դուք չօգնեցիք:

Նադինկան նրան ցույց տվեց մի գիրք:

— Ահա ինչով դուրս կկանչեի ձեզ, եթե դուք մի րոպե էլ ուշանայիք,— ասաց նա:— Նստեցեք, հիմա արդեն maman չի գա. նա խոնավությունից վախենում է: Ես այնքա՜ն, այնքա՜ն բան ունեմ ձեզ ասելու... ա՜խ:

— Ես էլ... ա՜խ:

Եվ ոչինչ չասացին կամ գրեթե ոչինչ. այնպես, մի քանի բան, որի մասին արդեն տասն անգամ ասել էին առաջ: Պարզ է, թե ինչ. երազներ, երկինք, աստղեր, համակրություն, երջանկություն: Խոսակցությունը տեղի էր ունենում ավելի շատ հայացքների, ժպիտների և բացականչությունների լեզվով: Գիրքն ընկած էր կանաչների մեջ:

Վրա էր հասնում գիշերը... ոչ, ի՞նչ գիշեր, մի՞թե ամառը Պետերբուրգում գիշեր լինում է: Դա ոչ թե գիշեր է, այլ… այստեղ պետք է մի ուրիշ անուն գտնել. այնպես, կիսամութ... Շուրջն ամեն ինչ լուռ է: Նևան կարծես քնած է. երբեմն, ասես քնի մեջ նա ալիքը թեթևակի ճողփում է ափին ու լռում: Կամ մեկ էլ, որտեղից որտեղ հայտնվում է մի ուշացած զեփյուռ, անցնում քնեած ջրերի վրայով, բայց չի կարողանում արթնացնել նրանց, այլ միայն կայլակներ է գոյացնում մակերեսին ու զով փչում Նադինկայի ու Ալեքսանդրի վրա կամ նրանց ականջին հասցնում մի հեռավոր երգի հնչյունը, և նորից ամեն ինչ լռում է, և նորից Նևան անշարժ է, ինչպես քնած մարդ, որը թեթև աղմուկից մի րոպե բացում է աչքերը և իսկույն նորից փակում. և քունն առաջվանից ավելի ամուր է սեղմում նրա ծանրացած կոպերը: Հետո կամրջի կողմից կլսվի կարծես հեռավոր մի որոտ, իսկ դրան կհաջորդի պահակի շան հաչոցը մերձակա ձկնորսարանից, և նորից ամեն ինչ լուռ է: Ծառերը մուգ կամար են կապել և հազիվ նշմարելի, անաղմուկ ճոճում են ճյուղերը: Գետափնյա ամառանոցներում առկայծում էին լույսեր:

Այդ ժամանակ հատկապես ի՞նչ է սավառնում այդ տաք օդում: Ի՞նչ գաղտնիք է սահում ծաղիկների, ծառերի, խոտերի վրայով և անբացատրելի գրգանք փչում հոգուն: Ինչո՞ւ այդ ժամանակ ծնվում են այլ մտքեր, այլ զգացմունքներ, քան աղմուկի, մարդկանց մեջ: Իսկ ի՞նչ պայմաններ են սիրո համար բնության այդ նիրհի մեջ, այդ աղջամուղջում, անաղմուկ ծառերի, բուրող ծաղիկների միայնության մեջ: Ինչպե՞ս ուժգնորեն ամեն ինչ տրամադրում է միտքը երազանքների, սիրտը՝ հազվադեպ զգացողությունների, որոնք մշտական, ուղիղ ու խիստ կյանքում թվում են այնպես անօգուտ, անտեղի ու ծիծաղելի խոտորումներ... այո՛, անօգուտ, մինչդեռ այդ րոպեներին է հոգին աղոտ կերպով ըմբռնում հնարավորությունը երջանկության, որն ուրիշ ժամանակ այնպես ջանասիրությամբ որոնում են, բայց չեն գտնում:

Ալեքսանդրն ու Նադինկան մոտեցան գետին և հենվեցին ցանկապատին: Նադինկան երկար, մտախոհ նայում էր Նևային, հեռուն, Ալեքսանդրը՝ Նադինկային: Նրանց հոգիները լեփ-լեցուն էին երջանկությամբ, սրտերը քաղցր և միաժամանակ ինչ-որ ցավագին նվում էին, բայց լեզուները լուռ էին:

Ահա Ալեքսանդրը կամացուկ դիպավ նրա իրանին: Նադինկան արմունկով կամացուկ ետ հրեց նրա ձեռքը: Ալեքսանդրը նորից դիպավ, Նադինկան ավելի թույլ հրեց, աչքը Նևայից չհեռացնելով: Երրորդ անգամ չհրեց:

Ալեքսանդրը բռնեց նրա ձեռքը, Նադինկան ձեռքը ևս չփախցրեց. Ալեքսանդրը սեղմեց նրա ձեռքը. ձեռքը պատասխանեց սեղմումին: Այսպես նրանք կանգնած էին լուռ, իսկ ի՞նչ էին զգում:

— Նադինկա,— ասաց Ալեքսանդրը կամացուկ:

Աղջիկը լուռ էր:

Ալեքսանդրը նվաղուն սրտով թեքվեց դեպի նա: Նադինկան իր այտի վրա զգաց տաք շունչը, ցնցվեց, շուռ եկավ և՝ չընկրկեց ազնիվ ցասմամբ, չճչաց: Նա ուժ չուներ ձևացնելու և ընկրկելու. սիրո հմայքը հարկադրել էր լռել բանականությանը, և երբ Ալեքսանդրը շուրթերը հպեց նրա շուրթերին, նա պատասխանեց համբույրին թեև թույլ, հազիվ հասկանալի:

«Անվայելուչ է,— կասեն խստաբարո մայրիկները:— Այգում մենակ, առանց մոր, համբուրվում է երիտասարդի հետ»: Ինչ արած: Անվայելուչ է, բայց նա պատասխանում է համբույրին:

«Օ, ինչպե՜ս մարդ կարող է երջանիկ լինել»,— ինքն իրեն ասաց Ալեքսանդրը և նորից թեքվեց դեպի նրա շուրթերը և այդպես մնաց մի քանի վայրկյան:

Նադինկան կանգնած էր գունատ, անշարժ, արտևանունքներին փայլում էր արցունքը, կուրծքը շնչում էր ուժգին և ընդհատ:

— Երազի պես է,— շշնջում էր Ալեքսանդրը:

Հանկարծ Նադինկան սարսռեց, մոռացության րոպեն անցավ:

— Այս ի՞նչ է, դուք ձեզ կորցրիք,— հանկարծ ասաց նա և նետվեց նրանից մի քանի քայլ հեռու:— Ես մայրիկին կասեմ:

Ալեքսանդրը ամպերից ցած ընկավ:

— Նադեժդա Ալեքսանդրովնա: Մի ավերեք իմ երջանկությունը կշտամբանքով,— սկսեց նա,— մի նմանվեք...

Նադինկան նայեց նրան և հանկարծ բարձր, ուրախ ծիծաղեց, նորից մոտեցավ նրան, նորից կանգնեց ցանկապատի մոտ և դյուրահավատությամբ ձեռքն ու գլուխը հենեց Ալեքսանդրի ուսին:

— Ուրեմն դուք ինձ շա՞տ եք սիրում,— հարցրեց նա, սրբելով այտին կաթած արտասուքը:

Ալեքսանդրը անբացատրելի շարժում արեց ուսերով: Նրա դեմքը «շատ հիմար» արտահայտություն ուներ, ինչպես կասեր Պյոտր Իվանիչը, որը, գուցե և ճիշտ էր, բայց փոխարենը՝ որքա՜ն երջանկություն կար այդ հիմար արտահայտության մեջ:

Նրանք առաջվա պես լուռ նայում էին և ջրին, և երկնքին, և հեռաստանին, կարծես նրանց միջև ոչինչ չէր եղել: Միայն վախենում էին իրար նայել. վերջապես նայեցին, ժպտացին և անմիջապես նորից շրջվեցին:

— Մի՞թե աշխարհում վիշտ կա,— ասաց Նադինկան քիչ լռելուց հետո:

— Ասում են, կա...— մտախոհ պատասխանեց Ադուևը,— բայց ես չեմ հավատում...

— Բայց ի՞նչ վիշտ կարող է լինել:

— Հորեղբայրս ասում է՝ աղքատությունը:

— Աղքատությո՛ւնը: Եվ մի՞թե աղքատներն էլ նույնը չեն զգում, ինչ որ հիմա մենք: Ահա և աղքատ չեն նրանք:

— Հորեղբայրս ասում է, որ նրանք նման բաների ժամանակ չունեն, որ պետք է ուտել, խմել...

— Ֆի՛: Ուտե՛լ: Ձեր հորեղբայրը ճիշտ չի ասում. առանց դրա էլ կարելի է երջանիկ լինել. ես այսօր չեմ ճաշել, բայց ինչպե՛ս երջանիկ եմ:

Ալեքսանդրը ծիծաղեց:

— Այս րոպեի համար ես աղքատներին կտայի ամեն, ամեն ինչ,— շարունակում էր Նադինկան,— թող գան աղքատները: Ախ: Ինչո՞ւ ես չեմ կարող բոլորին մխիթարել և ուրախացնել որևէ ուրախությամբ:

— Հրեշտա՛կ: Հրեշտա՛կ,— հիացած արտասանեց Ալեքսանդրը, սեղմելով նրա ձեռքը:

— Ախ, ինչ ցավեցնում եք,— հանկարծ ընդհատեց նրան Նադինկան, հոնքերը խոժոռելով ու ձեռքը խլելով:

— Ինչպե՛ս պիտի աղոթեմ,— շարունակեց Նադինկան,— այսօր, վաղը, միշտ՝ այս երեկոյի համար: Որքան երջանիկ եմ: Իսկ դո՞ւք...

Հանկարծ նա մտասուզվեց. աչքերում տագնապ երևաց:

— Գիտե՞ք արդյոք,— ասաց նա,— ասում են, իբր այն, ինչ որ մի անգամ եղել է, այլևս երբեք չի կրկնվի: Նշանակում է, այս րոպեն է՞լ չի կրկնվի:

— Օ, ոչ,— պատասխանեց Ալեքսանդրը:— Դա ճիշտ չէ, կկրկնվի: Ավելի լավ րոպեներ կլինեն. այո, ես զգում եմ...

Նադինկան թերահավատությամբ շարժեց գլուխը: Ալեքսանդրի մտքով էլ անցան հորեղբոր դասերը, և նա հանկարծ կանգ առավ:

«Ոչ,— խոսում էր նա ինքն իր հետ,— ոչ, այդ չի կարող պատահել: Հորեղբայրս չի ունեցել այսպիսի երջանկություն, դրա համար էլ նա մարդկանց նկատմամբ այդպես խիստ է և թերահավատ: Խե՜ղճ: Ես խղճում եմ նրա սառը, չոր սրտին. սիրտը չի իմացել սիրո արբեցումը, ահա թե որտեղից է կյանքի այդ մաղձոտ հետապնդումը: Աստված նրան կների: Եթե նա տեսներ իմ երանությունը, նա էլ ձեռք չէր բարձրացնի այդ երանության վրա, չէր վիրավորի անմաքուր կասկածով: Ես խղճում եմ նրան...»:

— Ոչ, Նադինկա, ոչ, մենք երջանիկ կլինենք,— շարունակեց նա բարձրաձայն:— Հապա նայիր շուրջդ. մի՞թե այստեղ ամեն ինչ չի ուրախանում, նայելով մեր սիրույն: Ինքն աստված կօրհնի այն: Ինչպե՜ս ուրախ կանցնենք մենք կյանքը ձեռք ձեռքի տված: Որքա՜ն **հպարտ, մեծ կլինենք փոխադարձ սիրով:**

— Ախ, վերջ տվեք, վերջ տվեք կանխագուշակելուն,— ընդհատեց Նադինկան:— Մարգարեություն մի արեք. ես ինչ-որ սարսափում եմ, երբ դուք այդպես եք խոսում: Ես հիմա էլ տխուր եմ...

— Ինչի՞ց պիտի վախենանք: Մի՞թե չենք կարող հավատալ ինքներս մեզ:

— Չենք կարող, չենք կարող,— ասաց Նադինկան գլուխն օրորելով:

Ալեքսանդրը նայեց նրան և մտասուզվեց:

— Ինչո՞ւ: Ի՞նչը,— շարունակեց նա հետո,— կարող է խռովել մեր այս երջանկության հանգիստը: Ո՞ւմ ինչին ենք պետք մենք: Մենք միշտ մենակ կլինենք, կհեռանանք ուրիշներից, ի՞նչ գործ ունենք նրանց հետ: Եվ ի՞նչ գործ ունեն նրանք մեզ հետ: Մեզ չեն հիշի, կմոռանան, և այն ժամանակ մեզ չեն անհանգստացնի նույնիսկ լուրերը վշտի, դժբախտությունների մասին, ճիշտ այնպես, ինչպես և հիմա, այստեղ, այգում ոչ մի հնչյուն չի խախտում այս հանդիսավոր լռությունը...

— Նադինկա: Ալեքսանդր Ֆյոդորիչ,— հանկարծ լսվեց արտասանդուղքից:— Որտե՞ղ եք:

— Լսո՞ւմ եք,— ասաց Նադինկան մարգարեական եղանակով:— Ահա ճակատագրի ակնարկը. այս րոպեն այլևս չի կրկնվի, ես զգում եմ...

Նա բռնեց Ալեքսանդրի ձեռքը, սեղմեց, ինչ-որ տարօրինակ տխուր նայեց նրան և հանկարծ նետվեց խավար ծառուղին:

Ալեքսանդրը մնաց մենակ մտածմունքի մեջ:

— Ալեքսանդր Ֆյոդորիչ,— նորից հնչեց արտասանդուղքից:— Պրոստոկվաշան վաղուց սեղանի վրա է:

Նա ուսերը թոթվեց և գնաց սենյակ:

— Անասելի երանության ակնթարթից հետո հանկարծ՝ պրոստոկվաշա,— ասաց նա Նադինկային:— Մի՞թե կյանքում ամեն ինչ այսպես է:

— Միայն թե ավելի վատ չլիներ,— ուրախ պատասխանեց սա,— իսկ պրոստոկվաշան շատ լավ բան է, հատկապես նրա համար, ով չի ճաշել:

Երջանկությունը ոգեշնչել էր Նադինկային: Այտերը վառվում էին, աչքերը կայծկլտում էին արտասվոր փայլով: Ի՜նչ հոգածությամբ էր նա տանտիրություն անում, ինչ զվարթ էր բլբլում: Վայրկենաբար անցած տխրության հետքն իսկ չկար. ուրախությունը կլանել էր նրան:

Արշալույսն արդեն երկնքի կեսը բռնել էր, երբ Ադուևը նավակ նստեց: Թիավարները խոստացված պարգևի սպասումով, թքեցին ձեռքերին և առաջվա պես սկսեցին վեր-վեր թռչել տեղերում, ամբողջ ուժով բանեցնելով թիակները:

— Դանդա՛ղ քշել,— ասաց Ալեքսանդրը:— Եվս հիսուն կոպեկ օղու համար:

Նրանք նայեցին Ալեքսանդրին, հետո իրար: Մեկը կուրծքը քորեց, մյուսը՝ կռնակը, և սկսեցին աննկատելի շարժել թիակները, հազիվ դիպցնելով ջրին: Նավակն սկսեց լողալ կարապի պես:

«Եվ հորեղբայրս ուզում է ինձ հավատացնել, որ երջանկությունը ցնորք է, որ անվերապահորեն չի կարելի հավատալ ոչ մի բանի, որ կյանքը... անխի՜ղճ: Ինչո՞ւ էր նա ուզում այդպես դաժանորեն խաբել ինձ: Ոչ, ահա կյանքը: Ես այսպես էի պատկերացնում, այսպես պետք է լինի, այսպես է և այսպես էլ կլինի: Այլ կերպ կյանք չկա»:

Հյուսիսից մեղմիկ փչեց առավոտյան զով զեփյուռը: Ալեքսանդրը թեթևակի սարսռեց և՛ քամուց, և՛ հիշողությունից, հետո հորանջեց և, վերարկուի մեջ փաթաթվելով խորասուզվեց երազանքների մեջ:

V

Ադուևը հասավ իր երջանկության գագաթնակետին: Նա այլևս ցանկանալու ոչինչ չուներ: Ծառայությունը, ժուռնալային աշխատությունները՝ ամեն ինչ մոռացված է, մի կողմ նետած: Նրան արդեն անտեսեցին պաշտոնը բարձրացնելու հարցում. նա հազիվ նկատեց այդ, այն էլ նրա համար, որ հիշեցրեց հորեղբայրը: Պյոտր Իվանիչը խորհուրդ էր տալիս թողնել դատարկ բաները, բայց Ալեքսանդրը «դատարկ բաներ» խոսքը լսելիս ուսերն էր թոթվում, խղճահարությամբ ժպտում ու լռում: Հորեղբայրը տեսնելով իր զգուշացումների անօգուտությունը, նույնպես ուսերը թոթվեց, ժպտաց խղճահարությամբ ու լռեց, միայն ասելով. «Ինչպես կուզես, դա քո գործն է, միայն տես, անարգ մետաղ չխնդրես»:

— Մի վախեք, հորեղբայր,— դրան պատասխանում էր Ալեքսանդրը,— վատ է, երբ փողը քիչ է, շատ հարկավոր չէ, իսկ բավարար չափով ես ունեմ:

— Դե, ուրեմն շնորհավորում եմ քեզ,— ավելացրեց Պյոտր Իվանիչը:

Ալեքսանդրը, ըստ երևույթին, խուսափում էր նրանից: Նա կորցրել էր ամենայն հավատ դեպի նրա տխուր կանխագուշակությունները և վախենում էր սիրո նկատմամբ ունեցած նրա սառն հայացքից ընդհանրապես և դեպի Նադինկան ունեցած իր վերաբերմունքի մասին վիրավորական ակնարկներից՝ մասնավորապես:

Նրա համար խիստ տհաճ էր լսել, թե ինչպես հորեղբայրը, վերլուծելով նրա սերը, հասարակ, իբր թե բոլորի համար ընդհանուր և միատեսակ օրենքներով, գռեհկացնում էր, իր կարծիքով, այդ բարձր, սրբազան գործը: Նա թաքցնում էր իր ուրախությունները, վարդագույն երջանկության այդ ողջ հեռանկարը, նախազգալով, որ բավական է հորեղբոր վերլուծությունը դիպչի դրան, մեկ էլ տեսար, վարդերը կփոշիանան կամ կվերածվեն գոմաղբի: Իսկ հորեղբայրը սկզբում նրանից խուսափում էր այն պատճառով, որ ահա, մտածում էր, տղան կծուլանա, փողերը կվատնի, իր մոտ կգա փողի, վզին կնստի:

Ալեքսանդրի քայլվածքի, նայվածքի, ամբողջ վերաբերմունքի մեջ ինչ-որ հանդիսավոր, խորհրդավոր բան կար: Նա ուրիշների հետ իրեն այնպես էր պահում, ինչպես բիրժայում հարուստ կապիտալիստը մանր առևտրականների հետ, համեստ և արժանապատվությամբ, իր մեջ մտածելով. «Խղճուկնե՛ր: Ձեզանից ո՞վ ունի այնպիսի գանձ, ինչպես ես: Ո՞վ կարող է այսպես զգալ: Ո՞ւմ հզոր հոգին...» և այլն:

Նա համոզված էր, որ աշխարհի երեսին միայն ինքն է այդպես սիրում և այդպես սիրված:

Ի դեպ, նա խուսափում էր ոչ միայն հորեղբորից, այլև ամբոխից, ինչպես ինքն էր ասում: Նա կամ երկրպագում էր իր աստվածությունը, կամ նստում էր տանը առանձնասենյակում, մենակ, արբենալով երանությամբ, վերլուծելով, մասնատելով դա անսահմանորեն մանր ատոմների: Նա այդ անվանում էր **ստեղծել հատուկ աշխարհ,** և, իր միայնության մեջ նստած, իրոք որ իր համար ոչնչից ստեղծել էր ինչ-որ մի աշխարհ, և մեծ մասամբ գտնվում էր այդ աշխարհում, իսկ ծառայության գնում էր հազվադեպ ու տհաճությամբ, դա անվանելով **դառն անհրաժեշտություն, անհրաժեշտ չարիք** կամ **տխուր պրոզա**: Առհասարակ դրա համար նա շատ վարիանտներ ուներ: Խմբագրի և ծանոթների մոտ ամենևին չէր գնում:

Իր **ես**-ի հետ զրուցելը նրա համար գերագույն հաճույք էր: «Միմիայն իր հետ մենակ,— գրում էր նա մի վիպակում,— մարդ տեսնում է ինքն իրեն ինչպես հայելում. միայն այդ ժամանակ է նա սովորում հավատալ մարդու վեհությանն ու արժանապատվությանը: Որքա՜ն սքանչելի է նա իր հոգեկան ուժերի հետ զրուցելիս: Ինչպես ղեկավար, նա խիստ ստուգատես է անում դրանց, դասավորում է իմաստուն կերպով մտածված նախագծի համաձայն և սլանում է դրանց գլուխն անցած, և գործում է, և ստեղծում: Որքա՜ն խղճուկ է, ընդհակառակն, նա, ով չի կարող և վախենում է ինքն իր հետ լինելուց, ով փախչում է ինքն իրենից և ամենուրեք որոնում է մտքին ու հոգուն խորթ հասարակություն...»: Կկարծես, թե ինչ-որ մտածող աշխարհի կառուցվածքի կամ մարդկային կեցության նոր օրենքներ է հայտնագործում, այնինչ, ուղղակի սիրահարված մարդ է:

Ահա նա նստած է վոլտերյան բազկաթոռին: Նրա առաջ դրված է մի թերթ թուղթ, որի վրա հապճեպ ուրվագծված է մի քանի բանաստեղծական տող: Նա մերթ խոնարհվում է թերթի վրա և որևէ բան ուղղում կամ երկու-երեք բանատող ավելացնում, մերթ հենվում է բազկաթոռի թիկնակին ու մտասուզվում: Ժպիտը թափառում է շրթունքներին. երևում է, որ նա հենց նոր էր հեռացրել այդ շրթունքները երջանկության լիքը **գավաթից**: Նրա աչքերը փակվում են նվաղկոտ, ինչպես նիրհող կատվի աչքերը, կամ հանկարծ փայլատակում են, ներքին հուզմունքի կրակից:

Շուրջը լուռ է: Միայն հեռվից, մեծ փողոցից, լսվում է կառքերի աղմուկը, և մերթ ընդ մերթ Եվսեյը, հոգնելով կոշիկ մաքրելուց, սկսում էր բարձրաձայն խոսել. «Հանկարծ չմոռանամ. էն օրը կրպակում մի գրոշի քացախ առա, տասը կոպեկի էլ կաղամբ. էգուց պետք է տալ, թե չէ խանութպանը ուրիշ անգամ չի հավատա, էն տեսակ շունն է: Հացը գրվանքայով են քաշում, կարծես սովի տարի լինի, խայտառակ բան: Օֆ, տեր աստված, դադրեցի: Հրես էս մի կոշիկն էլ մաքրեմ ու քնեմ: Գյուղում, ով գիտի, վաղուց քնել են. էստեղի պես չի: Աստված աջողի, մեկ էլ ե՞րբ կտեսնեմ...»:

Այստեղ նա բարձր հառաչեց, շնչեց կոշիկի վրա ու նորից սկսեց խոզանակը քստքստացնել: Նա այդ զբաղմունքը համարում էր իր գլխավոր և գրեթե միակ պարտականությունը, և առհասարակ կոշիկ մաքրելու ընդունակությամբ էր չափում ծառայի և նույնիսկ մարդու արժանիքը. ինքը մաքրում էր մի առանձին կրքով:

— Վերջ տուր, Եվսեյ: Դու քո դատարկ բաներով ինձ խանգարում ես գործ անել, բղավում էր Ադուևը:

«Դատարկ բանե՛ր,— ինքն իրեն փնթփնթում էր Եվսեյը,— ո՞նց չէ, դատարկ բանե՛ր. այ քո արածն է դատարկ բաներ, իսկ ես գործ եմ անում: Մի տես, թե ոնց է կեղտոտել կոշիկները. զոռով է մաքրվում»: Նա կոշիկը դրեց սեղանին և սիրով նայում էր կաշվի հայելանման փայլին:

«Թող փորձի մեկն ու մեկը էսպես մաքրել,— ասաց նա,— դատարկ բանե՛ր»:

Ալեքսանդրը ավելի ու ավելի խորն էր ընկղմվում իր երազանքների մեջ Նադինկայի մասին, հետո ստեղծագործական երազանքների մեջ:

Սեղանի երեսը դատարկ էր: Ամեն ինչ, որ հիշեցնում էր նրա առաջվա զբաղմունքների մասին, պաշտոնավարության, ժուռնալային աշխատանքի մասին, դրած էր սեղանի տակ կամ պահարանի գլխին, կամ մահճակալի տակ: «**Այս կեղտի** միայն տեսքը,— ասում էր նա,— փախցնում է ստեղծագործական խոհը, և սա թռչում-հեռանում է, ինչպես սոխակը պուրակից, երբ ճանապարհից հանկարծ լսվում է յուղած անիվների ճռճռոց»:

Հաճախ լուսաբացը նրան գտնում էր որևէ եղերերգության վրա տքնելիս: Բոլոր ժամերը, որոնք Լյուբեցկիների տանը չէին անցնում, նվիրվում էին ստեղծագործությանը: Նա կգրեր մի բանաստեղծություն ու կկարդար Նադինկային. սա կարտագրեր սիրունիկ թղթի վրա ու անգիր կաներ, և Ալեքսանդրը «Ճաշակեց **պոետի գերագույն երանությունը՝ լսել իր ստեղծագործությունը սիրելի շուրթերից»:**

«Դու իմ մուսան ես,— ասում էր նա Նադինկային,— եղիր Վեստան այս սրբազան կրակի, որը վառվում է իմ կրծքում. եթե լքես նրան, առհավետ կմարի»:

Հետո նա բանաստեղծությունները ուրիշի անունով ուղարկում էր ժուռնալ: Դրանք տպվում էին, որովհետև վատ բանաստեղծություններ չէին, տեղ-տեղ ոչ առանց եռանդի և բոլորը հագեցած էին բոցավառ զգացմունքով, գրված էին կոկիկ:

Նադինկան հպարտանում էր նրա սիրով և նրան անվանում էր «իմ բանաստեղծ»:

«Այո, քոնը, հավետ քոնը»,— ավելացնում էր Ալեքսանդրը: Առջևում ժպտում էր փառքը, և պսակը, մտածում էր նա, նրա համար կհյուսի Նադինկան, և դափնին կհյուսի մրտենու հետ, իսկ հետո... «Կյանք, կյանք, որքա՜ն սքանչելի ես դու,— բացականչում էր նա:— Իսկ հորեղբա՛յրս: Ինչո՞ւ է նա խռովում հոգուս հանգիստը: Արդյոք դա դև չի՞, ճակատագրի կողմից ինձ ուղարկված: Ինչո՞ւ է նա

մաղձով թունավորում իմ ողջ բարօրությունը: Արդյոք ո՞չ նախանձից, որ իր սրտին խորթ են այդ ջինջ ուրախությունները, կամ, գուցե, վնասելու մռայլ ցանկությունի՞ց... Օ, հեռու, հեռո՛ւ նրանից... Նա կսպանի, իր ատելությամբ կվարակի իմ սիրող հոգին, կանբարոյականացնի այն...»:

Եվ նա խուսափում էր հորեղբորից, նրա հետ չէր տեսնվում ամբողջ շաբաթներով, ամիսներով: Իսկ եթե հանդիպելիս խոսք էր լինում զգացմունքի մասին, նա լռում էր կամ լսում որպես մի մարդ, որի համոզմունքները չի կարելի սասանել ոչ մի փաստարկով: Նա իր դատողությունները համարում էր անսխալական, զգացմունքները՝ անխախտելի և որոշեց առաջիկայում ղեկավարվել միայն դրանցով, ասելով, որ ինքը արդեն երեխա չէ, և ինչո՞ւ **միայն ուրիշների կարծիքներ են սրբություն** և այլն:

Իսկ հորեղբայրը միշտ նույնն էր. նա ոչինչ չէր հարցնում եղբորորդուն, չէր նկատում կամ չէր ուզում նկատել նրա արարքները: Տեսնելով, որ Ալեքսանդրի դրությունը չի փոխվում, որ նա առաջվա կյանքն է վարում, իրենից փող չի ուզում, սկսեց առաջվա պես սիրալիր լինել նրա հետ և թեթևակի կշտամբում էր, որ քիչ էր լինում իր մոտ:

— Կինս բարկանում է քեզ վրա,— ասում էր նա,— նա սովորել է քեզ հարազատ համարել. մենք ամեն օր տանն ենք ճաշում, անցիր:

Եվ միայն այսքան: Բայց Ալեքսանդրը հազվադեպ էր անցնում և ժամանակ էլ չուներ. առավոտյան պաշտոնատեղում, ճաշից հետո մինչև գիշեր Լյուբեցկիների տանը, մնում էր գիշերը, իսկ գիշերը նա մտնում էր իր սեփական, իր կողմից ստեղծած **աշխարհը** և շարունակում էր ստեղծագործել: Ըստ որում չէ՞ որ չի խանգարում նաև մի քիչ քնելը:

Գեղեցիկ արձակում նա նվազ հաջողակ էր: Նա գրել էր մի կոմեդիա, երկու վիպակ, ինչ-որ ակնարկ և մի ճանապարհորդություն ինչ-որ տեղ: Նրա եռանդը զարմանալի էր, թուղթն ուղղակի վառվում էր նրա գրչի տակ: Կոմեդիան և մի վիպակը նախ ցույց տվեց հորեղբորը և խնդրեց ասել, թե արդյոք պիտանի՞ է: Հորեղբայրը մի քանի փորձնական էջ կարդաց և ետ ուղարկեց վերևից գրելով. «պիտանի է... միջնորմների համար»:

Ալեքսանդրը կատաղեց և ուղարկեց ժուռնալ, բայց նրան վերադարձրին թե մեկը և թե մյուսը: Կոմեդիայի էջերի լուսանցքներում երկու տեղ մատիտով նշված էր. «վատ չէ» և միայն այդքանը: Վիպակում հաճախ հանդիպում էին հետևյալ նշումները. «Թույլ է, սխալ է, հասուն չէ, աշխույժ չէ, չի զարգացրած» և այլն, իսկ վերջում ասված էր. «Առհասարակ նկատելի է մարդկային սիրտը չճանաչելը, ավելորդ խանդավառություն, անբնականություն, ամեն ինչ ոտնացուպերի վրա է, ոչ մի տեղ չի երևում մարդը… հերոսն այլանդակ է… այդպիսի մարդիկ չեն լինում... տպագրության համար հարմար չէ: Ի դեպ, հեղինակը, կարծես, զուրկ չէ շնորհքից, պետք է աշխատել...»:

«Այդպիսի մարդիկ չե՞ն լինում,— մտածեց վշտացած ու զարմացած Ալեքսանդրը:— Ինչպե՞ս չեն լինում: Բայց ախր հերոսը ես ինքս եմ: Մի՞թե ես պետք է պատկերեմ այդ գռեհիկ հերոսներին, որոնք հանդիպում են ամեն մի քայլափոխի, մտածում և զգում են, ինչպես ամբոխը, անում են այն, ինչ անում են ամենքը, ամենօրյա ողբերգությունների կատակերգությունների այդ խղճուկ անձինք, որոնք իրենց վրա չեն կրում հատուկ կնիք... մի՞թե արվեստը կստորանա այդ աստիճան...»

Նա, ի հաստատումն գեղեցկի իր դավանած ուսմունքի մաքրության, վկայակոչում էր Բայրոնի ստվերը, վկայակոչում էր Գյոթեին ու Շիլլերին: Դրամայի ու վիպակի հնարավոր հերոս նա պատկերացնում էր ոչ այլ ոքի, քան եթե որևէ ծովահենի կամ բանաստեղծի, արտիստի, և նրանց հարկադրում էր գործել ու զգալ յուրովի:

Մի վիպակում գործողության վայրը նա ընտրել էր Ամերիկան, միջավայրը շքեղ էր. ամերիկյան բնություն, լեռներ և այդ բոլորի մեջ՝ սիրուհուն փախցրած վտարանդին: Ամբողջ աշխարհը մոռացել էր նրանց, նրանք սքանչանում էին իրենցով ու բնությամբ, և երբ լուր եկավ ներման և հայրենիք վերադառնալու հնարավորության մասին, նրանք հրաժարվեցին: Հետո, մի քանի տարի անց, ինչ-որ եվրոպացի է գալիս այդտեղ, հնդիկների ուղեկցությամբ որսի է գնում և մի սարի վրա գտնում է մի խրճիթ և նրանում՝ կմախք: Եվրոպացին հերոսի ախոյանն է լինում: Որքա՜ն լավ էր

թվում Ալեքսանդրին այդ վիպակը: Ի՞նչ հիացմունքով էր կարդում դա ձմռան իրիկունները Նադինկայի համար: Ի՞նչ ագահությամբ էր ունկնդրում Նադինկան, և չընդունե՞լ այդ վիպակը:

Այդ անհաջողության մասին նա ծպտուն չհանեց Նադինկայի մոտ. վիրավորանքը լուռ կուլ տվեց և հարցը կոծկեց:— Ի՞նչ եղավ վիպակդ,— հարցնում էր Նադինկան,— տպեցի՞ն:— Ոչ,— ասում էր նա.— չի կարելի. այնտեղ շատ այնպիսի բաներ կան, որ մեզ մոտ կթվա արտասովոր ու տարօրինակ…

Եթե իմանար, թե ինչպիսի՛ ճշմարտություն է ասել, մտածելով Նադինկային այդ բանն ասել բոլորովին այլ իմաստով:

Աշխատելը նույնպես նրան տարօրինակ էր թվում: «Էլ ինչի՞ համար է տաղանդը,— ասում էր նա:— Աշխատում է ապաշնորհ աշխատավորը. տաղանդն ստեղծագործում է հեշտ և ազատ...», բայց, մտաբերելով, որ գյուղատնտեսության մասին գրած նրա հոդվածները, և բանաստեղծություններն էլ, սկզբնական շրջանում մի բան չէին, իսկ հետո աստիճանաբար կատարելագործվեցին և մարդկանց ուշադրությունը գրավեցին իրենց վրա, նա մտածմունքի մեջ ընկավ, հասկացավ իր եզրակացության անհեթեթությունը և, հոգոց հանելով, գեղեցիկ արձակը հետաձգեց մի այլ ժամանակվա. երբ սիրտն ավելի համաչափ կբաբախի, մտքերը կկարգավորվեն, այն ժամանակ նա իրեն խոսք տվեց զբաղվել ինչպես հարկն է:

Օրերն անցնում էին օրերի հետևից, Ալեքսանդրի համար անընդհատ վայելքի օրերը: Նա երջանիկ էր լինում, երբ համբուրում էր Նադինկայի մատի ծայրը, պատկերավայել կեցվածքով նստում էր նրա դիմաց մի երկու ժամ, առանց աչքը նրանից կտրելու, մարելով ու հառաչելով կամ հավուր պատշաճի բանաստեղծություններ արտասանելով:

Արդարությունը պահանջում է ասել, որ Նադինկան հառաչներին ու բանաստեղծություններին երբեմն պատասխանում էր հորանջով: Եվ զարմանալի չէ. նրա սիրտը զբաղված էր, բայց միտքը մնում էր պարապ: Ալեքսանդրը հոգ չէր տարել նրան սնունդ տալու: Նադինկայի կողմից փորձի համար նշանակված մի տարին անցնում էր: Նա մոր հետ ապրում էր դարձյալ նույն ամառանոցում: Ալեքսանդրը խոսք էր բացում նրա խոստման մասին, թույլտվություն էր խնդրում, որ խոսի մոր հետ: Նադինկան ուզում էր հետաձգել մինչև քաղաք վերադառնալը, բայց Ալեքսանդրը պնդում էր:

Վերջապես, մի անգամ երեկոյան, հրաժեշտ տալիս, նա Ալեքսանդրին թույլ տվեց հաջորդ օրը խոսել մոր հետ:

Ալեքսանդրը չքնեց ամբողջ գիշերը, աշխատանքի չգնաց: Նրա գլխում պտտվում էր վաղվա օրը. նա շարունակ մտածում էր, թե ինչպես պիտի խոսի Մարիա Միխայլովնայի հետ, ճառ հորինեց, պատրաստվեց, բայց հենց հիշեց, որ խոսքը Նադինկայի ձեռքը խնդրելուն է վերաբերվում, խճճվեց երազանքների մեջ և նորից ամեն ինչ մոռացավ: Այդպես նա երեկոյան ամառանոց եկավ, ոչ մի բանի չնախապատրաստված. և պետք էլ չէր. Նադինկան նրան դիմավորեց սովորականի պես, այգում, բայց աչքերում թեթև մտահոգության արտահայտությամբ և առանց ժպտի, այլ ինչ-որ մտացրիվ:

— Այսօր չի կարելի խոսել մայրիկի հետ,— ասաց նա,— այդ զզվելի կոմսը նստած է մեր տանը:

— Կո՛մսը: Ի՞նչ կոմս:

— Այ չգիտեք, թե ինչ կո՛մս: Պարզ է, կոմս Նավինսկին, մեր հարևանը. ահա նրա ամառանոցը. քանի անգամ ինքներդ եք գովել այգին:

— Կոմս Նավի՛նսկին: Ձեր տա՛նը,— ասաց զարմացած Ալեքսանդրը:— Ի՞նչ առիթով:

— Ես ինքս էլ դեռ լավ չգիտեմ,— պատասխանեց Նադինկան,— ես նստել էի այստեղ և ձեր գիրքն էի կարդում, իսկ մայրիկս տանը չէր, նա գնացել էր Մարիա Իվանովնայենց տուն: Հենց որ անձրևն սկսեց կաթկթել, գնացի սենյակ, հանկարծ տեսնեմ, արտասանդուղքին է մոտենում մի կառք, երկնագույն, սպիտակով երեսպատված, հենց այն կառքը, որ շարունակ մեր տան մոտով էր

անցնում, դուք էլ գովում էիք: Տեսնեմ, դուրս է գալիս մայրիկս ինչ-որ տղամարդու հետ: Ներս մտան. մայրիկս ասում է. «Ահա, կոմս, իմ դուստրը, խնդրում եմ սիրել և ուշադիր լինել»: Կոմսը գլուխ տվեց ինձ, ես նույնպես: Ես ամաչեցի ու կարմրեցի և փախա իմ սենյակը: Իսկ մայրիկս, ինչ անտանելին է, լսում եմ, ասում է. «Ներեցեք, կոմս, նա այնպես վայրենի՛ է...»: Այստեղ ես գլխի ընկա, որ դա պետք է, որ մեր հարևանը՝ կոմս Նավինսկին լինի: Հավանաբար, նա մայրիկին կառքով տուն է բերել Մարիա Իվանովնայենց տնից, անձրևի պատճառով:

— Նա... ծերո՞ւկ է,— հարցրեց Ալեքսանդրը:

— Ի՜նչ ծերուկ, ֆի՛: Ի՜նչ եք ասում. երիտասարդ, սիրո՛ւն...

— Արդեն հասցրիք տեսնել, որ սիրուն է,— սրդողած ասաց Ալեքսանդրը:

— Այ թե հրաշալի՛ է: Երկա՞ր ժամանակ է պետք տեսնելու համար: Ես նրա հետ արդեն խոսել եմ: Նա չափազանց սիրալիր է, հարցուփորձեց, թե ես ինչ եմ անում. երաժշտության մասին էր խոսում, խնդրեց մի բան երգել, բայց չերգեցի, ես գրեթե չգիտեմ: Այս ձմեռ անպայման կխնդրեմ maman-ին երգեցողության մի լավ ուսուցիչ վարձել: Կոմսն ասում է, որ դա հիմա շատ մոդա է, երգելը:

Այդ բոլորն ասված էր արտակարգ աշխուժությամբ:

— Ես կարծում էի, Նադեժդա Ալեքսանդրովնա,— նկատեց Ադուևը,— որ այս ձմեռ դուք, բացի երգեցողությունից, զբաղմունք կունենաք…

— Ի՞նչ զբաղմունք:

— Ի՜նչ զբաղմունք,— կշտամբանքով ասաց Ալեքսանդրը:

— Ախ, հա… ինչ է, դուք նավակո՞վ եկաք:

Ալեքսանդրը լուռ նայում էր նրան: Նադինկան շուռ եկավ ու գնաց դեպի տուն:

Ալեքսանդրը դահլիճ մտավ ոչ բոլորովին հանգիստ: Այդ ի՞նչ կոմս է: Իրեն ինչպե՞ս պահի նրա հետ: Նա ինչպիսի՞ վարմունք ունի: Հպա՞րտ է: Անփո՞ւյթ է: Կոմսն առաջինը վեր կացավ և քաղաքավարի ողջունեց: Ալեքսանդրը պատասխանեց հարկադրական և անճարպիկ բարևով: Տանտիրուհին նրանց ներկայացրեց միմյանց: Չգիտես ինչու, կոմսը դուր չէր գալիս Ալեքսանդրին. մինչդեռ նա հրաշալի տղամարդ էր, բարձրահասակ, բարեկազմ, շիկահեր մարդ, խոշոր արտահայտիչ աչքերով, հաճելի ժպիտով: Շարժուձևերի մեջ պարզություն, նրբագեղություն, ինչ-որ մեղմություն: Նա, թվում է, դրականորեն կտրամադրեր ամենքին դեպի ինքը, բայց Ադուևին չտրամադրեց:

Ալեքսանդրը, չնայած Մարիա Միխայլովնայի մոտիկ նստելու հրավերին, նստեց անկյունում և սկսեց գիրքը թերթել, մի բան, որ շատ անքաղաքավարի էր, անհարմար, անտեղի: Նադինկան կանգնեց մոր բազկաթոռի հետևը, հետաքրքրությամբ նայում էր կոմսին և ունկնդրում, թե ինչ և ինչպես է խոսում նա. կոմսը Նադինկայի համար նորություն էր:

Ադուևը չէր կարող թաքցնել, որ կոմսը իրեն դուր չի գալիս: Կոմսը, թվում է, չէր նկատում նրա կոպտությունը. նա ուշադիր էր և դիմում էր Ադուևին, աշխատելով խոսակցությունը դարձնել ընդհանուր: Ամեն ինչ իզուր. Ադուևը լռում էր կամ պատասխանում այո կամ ոչ:

Երբ Լյուբեցկայան պատահմամբ կրկնեց նրա ազգանունը, կոմսը հարցրեց, թե արդյոք Պյոտր Իվանիչը նրան ազգական չէ՞:

— Հորեղբայրս է,— կտրուկ պատասխանեց Ալեքսանդրը:

— Ես նրա հետ հաճախ եմ հանդիպում բարձր հասարակության մեջ,— ասաց կոմսը:

— Կարող է պատահել: Այստեղ զարմանալի ի՞նչ կա,— պատասխանեց Ադուևը և ուսերը թոթվեց:

Կոմսը թաքցրեց ժպիտը, փոքր-ինչ կծելով ներքին շրթունքը: Նադինկան հայացք փոխանակեց մոր հետ, շիկնեց և աչքերը ցած թողեց:

— Ձեր հորեղբայրը խելացի և հաճելի մարդ է,— նկատեց կոմսը թեթև ծաղրի արտահայտությամբ:

Ադուևը լուռ էր:

Նադինկան չհամբերեց, մոտեցավ Ալեքսանդրին, և մինչ կոմսը խոսում էր նրա մոր հետ, շշնջաց ականջին.— ինչպե՞ս չեք ամաչում: Կոմսն այնքան սիրալիր է ձեզ հետ, իսկ դուք…

— Սիրալի՜ր է,— սրդողած, գրեթե բարձրաձայն պատասխանեց Ալեքսանդրը:— Ես նրա փաղաքշանքների կարիքը չունեմ, չկրկնեք այդ խոսքը...

Նադինկան ետ ցատկեց նրանից և հեռվից երկար նայում էր նրան անշարժ, աչքերը լայն բաց արած, հետո նորից կանգնեց մոր աթոռի հետևը ու արդեն ուշադրություն չէր դարձնում Ալեքսանդրի վրա:

Իսկ Ալեքսանդրը շարունակ սպասում էր, որ ահա կոմսը կգնա, և ինքը, վերջապես, կկարողանա խոսել մոր հետ: Բայց խփեց ժամը տասը, տասնմեկը, կոմսը չի գնում և շարունակ խոսում է:

Բոլոր նյութերը, որոնց շուրջը սովորաբար պտտվում է խոսակցությունը ծանոթության սկզբում, սպառվեցին: Կոմսն սկսեց կատակել: Նա կատակում էր խելացի. նրա կատակներում չկար ամենափոքր իսկ կաշկանդվածություն, սրամտելու հավակնություն, այլ այնպես, ինչ-որ հետաքրքիր զվարճալի ձևով պատմելու նույնիսկ ոչ թե անեկդոտ, այլ ուղղակի մի նորություն, դեպք կամ մի անսպասելի խոսքով լուրջ բանը ծիծաղելի դարձնելու ինչ-որ առանձին ընդունակություն:

Եվ մայրը, և աղջիկը լիովին ենթարկվեցին նրա կատակների ազդեցությանը, և ինքը Ալեքսանդրը հաճախ գրքի հետև թաքցնում էր ակամա ժպիտը: Բայց նա հոգում կատաղում էր:

Կոմսը ամեն ինչի մասին խոսում էր միանման լավ, տակտով, և՛ երաժշտության, և՛ մարդկանց, և՛ օտար երկրների մասին: Խոսք բացվեց տղամարդկանց, կանանց մասին. նա կշտամբեց տղամարդկանց, նույն թվում և իրեն, ճարպկորեն դրվատեց կանանց և մի քանի հաճոյախոսություն արեց տանտիրուհիներին մասնավորապես:

Ադուևը մտածեց իր գրական զբաղմունքների, բանաստեղծությունների մասին: «Ահա այստեղ ես նրան կկտրեի»,— մտածեց նա: Խոսք բացին նաև գրականության մասին. մայր ու աղջիկ Ալեքսանդրին ներկայացրին որպես գրողի:

«Այ թե կշփոթվի՜»,— մտածեց Ադուևը:

Բոլորովին էլ ոչ: Կոմսը գրականության մասին խոսում էր այնպես, կարծես երբեք ուրիշ ոչ մի բանով չէր զբաղվել, մի քանի թռուցիկ ու ճիշտ դիտողություններ արեց ժամանակակից ռուս և ֆրանսիացի անվանիների մասին: Ի լրումն ամենի պարզվեց, որ նա բարեկամական հարաբերությունների մեջ է առաջնակարգ ռուս գրողների հետ, իսկ Փարիզում ծանոթացել է նաև ֆրանսիացիներից մի քանիսի հետ: Քչերի մասին նա արտահայտվեց հարգանքով, մյուսներին թեթևակի գծագրեց կարիկատուրային ձևով:

Ալեքսանդրի բանաստեղծությունների մասին ասաց, որ ծանոթ չի դրանց և չի լսել…

Նադինկան ինչ-որ տարօրինակ նայեց Ադուևին, կարծես հարցնում էր. «Այս ի՞նչ է, եղբայրս: Հեռու չես գնացել...»:

Ալեքսանդրը վեհերեց: Դեմքի հանդուգն ու կոպիտ արտահայտությունը տեղի տվեց վիատությանը: Նա նման էր թրջված պոչով աքաղաղի, որը վատ եղանակից պաշտպանվում է ծածկի տակ:

Ահա բուֆետում զնգզնգացին բաժակները, գդալները, սեղան են բացում, իսկ կոմսը չի գնում: Չքացավ ամեն մի հույս: Նա նույնիսկ համաձայնեց Լյուբեցկայայի հրավերին՝ մնալ պրոստոկվաշայով ընթրելու:

«Կոմս է, և պրոստոկվաշա՛ շատ է ուտում»,— շշնջում էր Ադուևը, ատելությամբ նայելով կոմսին:

Կոմսն ընթրում էր ախորժակով, շարունակելով կատակել, կարծես իր տանը լիներ:

— Առաջին անգամն է ձեր տանը անամոթը, բայց երեք հոգու չափ է ուտում,— շշնջաց Ալեքսանդրը Նադինկային:

— Հետո՛ ինչ: Նա ուտել է ուզում,— պարզասիրտ պատասխանեց Նադինկան:

Կոմսը, վերջապես, գնաց, բայց գործի մասին խոսելու համար ուշ էր: Ադուևը գլխարկը վերցրեց և դուրս վազեց: Նադինկան հասավ նրա հետևից և կարողացավ հանգստացնել:

— Ուրեմն վա՞ղը,— հարցրեց Ալեքսանդրը:

— Վաղը մենք տանը չենք լինի:

— Դե, մյուս օրը:

Նրանք բաժանվեցին:

Մյուս օրը Ալեքսանդրը եկավ վաղ: Դեռևս այգում նրա ականջին սենյակից հասնում էին անծանոթ հնչյուններ... թավջութակ ասես՝ թավջութակ չի… նա մոտեցավ... երգում է տղամարդու ձայն, և ի՜նչ ձայն: Հնչեղ, թարմ, որը, կարծես տեղնուտեղը ուզում է թափանցել կնոջ սիրտը: Դա հասավ նաև Ադուևի սրտին, բայց այլ կերպ. սիրտը նվաղեց, տնքաց թախծից, նախանձից, ատելությունից, անորոշ և ծանր նախազգացումից: Ալեքսանդրը նախասենյակ մտավ բակի կողմից:

— Ձեզ մոտ ո՞վ կա,— հարցրեց նա սպասավորին:

— Կոմս Նավինսկին:

— Վաղո՞ւց է:

— Ժամը վեցից:

— Օրիորդին կամացուկ ասա, որ ես եկել էի և էլի կանցնեմ:

— Լսում եմ:

Ալեքսանդրը դուրս եկավ և գնաց թափառելու ամառանոցներում, հազիվ նկատելով, թե ուր է գնում: Մի երկու ժամ անց վերադարձավ:

— Ինչ է, մինչև հիմա ձեզ մո՞տ է,— հարցրեց նա:

— Մեզ մոտ է, և, կարծես, կմնա ուտելու: Օրիորդը հրամայեց սալամբ տապակել ընթրիքի համար:

— Իսկ դու օրիորդին ասացի՞ր իմ մասին:

— Ասացի:

— Նա՞ ինչ ասաց:

— Ոչինչ չբարեհաճեց հրամայել:

Ալեքսանդրը մեկնեց տուն և երկու օր չէր երևում: Աստված գիտի, թե ինչքան բան մտածեց ու զգաց. վերջապես գնաց:

Ահա նա տեսավ ամառանոցը, կանգնեց նավակում և ձեռքով աչքերն արևից պաշտպանելով, նայեց առաջ: Ահա ծառերի արանքում երևում է կապույտ զգեստը, որն այնպես լավ է նստում Նադինկայի վրա. կապույտ գույնը այնպես սազում է նրա դեմքին: Նա միշտ հագնում էր այդ շորը, երբ ուզում էր առանձնապես դուր գալ Ալեքսանդրին: Ալեքսանդրի սիրտը թեթևացավ:

«Ա՛: Նա ուզում է ինձ վարձատրել ժամանակավոր, ակամա անփութության համար,— մտածում էր Ալեքսանդրը,— ոչ թե նա, այլ ես եմ մեղավոր. ինչպե՞ս կարելի է, որ այդպես անսերելի պահեցի ինքս ինձ: Դրանով մարդ միայն զինում է իր դեմ. օտար մարդ է, նոր ծանոթություն... շատ բնական է, որ նա, իբրև տանտիրուհի... Ա՛: Ահա դուրս է գալիս թփի հետևի նեղ արահետից, գալիս է ցանկապատի մոտ, այդտեղ կանգ կառնի և կսպասի...»:

Նադինկան իսկապես դուրս ելավ մեծ ծառուղին… բայց էլի ո՞վ է նրա հետ շրջվում արահետից...

— Կո՛մսը,— վշտագին, բացականչեց Ալեքսանդրը բարձրաձայն և չէր հավատում իր աչքերին:

— Հը՞,— արձագանքեց թիավարներից մեկը:

— Նրա հետ մենակ այգում...— շշնջաց Ալեքսանդրը,— ինչպես որ ինձ հետ…

Կոմսն ու Նադինկան մոտեցան ցանկապատին և, առանց գետին նայելու շրջվեցին և ծառուղով ետ գնացին: Կոմսը թեքվել էր դեպի Նադինկան և կամացուկ ինչ-որ բան էր ասում նրան: Նադինկան գնում էր գլխահակ:

Ադուևը դեռ կանգնած էր նավակում, բերանը բաց, անշարժ, ձեռները պարզած դեպի ափը, հետո ձեռները ցած թողեց ու նստեց: Նավավարները շարունակում էին թիավարել:

— Էդ ո՞ւր,— կատաղի գոռաց նրանց վրա Ալեքսանդրը, ուշքի գալով:— Ե՛տ:

— Ե՞տ,— կրկնեց մեկը, բերանը բաց նայելով նրան:

— Ե՛տ: Խո՞ւլ ես, ինչ է:

— Իսկ էնտեղ պետք չէ՞:

Մյուս թիավարը լուռ, ճարպիկ սկսեց թիակով ձախ թեքել, հետո խփեցին զույգ թիակով, և նավակը արագ ետ սլացավ: Ալեքսանդրը գլխարկը քաշեց համարյա մինչև ուսերը և խորասուզվեց տանջալից մտածմունքի մեջ:

Դրանից հետո նա Լյուբեցկիների մոտ չգնաց երկու շաբաթ:

Երկու շաբաթ. ինչպիսի՜ ժամկետ սիրահարի համար: Բայց նա շարունակ սպասում էր, թե ահա կուղարկեն սպասավորին իմանալու, թե իրեն ինչ է պատահել, հիվանդ չէ՞ արդյոք, ինչպես միշտ արվում էր այդ, երբ նա հիվանդանում էր կամ այնպես, ուղղակի կամակորություն անում: Նադինկան նման դեպքերում մոր անունից հարցում էր անում ըստ ընդունված ձևի, հետո ինչե՜ր ասես չէր գրում իր կողմից: Ի՜նչ անուշ կշտամբանքներ, ի՜նչ քնքուշ անհանգստություն: Ինչպիսի՜ անհամբերություն:

«Ոչ, հիմա ես շուտով անձնատուր չեմ լինի,— մտածում էր Ալեքսանդրը,— ես նրան մի քիչ կտանջեմ: Ես նրան կսովորեցնեմ, թե ինչպես պետք է վարվել օտար տղամարդու հետ. հաշտությունը հեշտ չի լինի»:

Եվ նա վրեժխնդրության դաժան ծրագիր կազմեց, երազում էր զղջման մասին, այն մասին, թե ինչպես ինքը մեծահոգաբար կների և խրատ կտա: Բայց նրա մոտ սպասավոր չեն ուղարկում և մեղայական չեն բերում. նա կարծես գոյություն չուներ նրանց համար:

Ալեքսանդրը նիհարեց, դժգունեց: Խանդը ամեն մի հիվանդությունից ավելի տանջալի է, մանավանդ կասկածների վրա հիմնված, առանց ապացույցների խանդը: Երբ հայտնվում է ապացույցը, այն ժամանակ վերջ նաև խանդին, մեծ մասամբ նաև բուն սիրուն, այն ժամանակ

գոնե գիտեն, թե ինչ են անելու, իսկ մինչ այդ՝ տանջանք է: Եվ Ալեքսանդրը այդ տանջանքն զգում էր լիովին:

Վերջապես նա որոշեց գնալ առավոտյան, մտածելով Նադինկային մենակ գտնել և բացատրվել նրա հետ:

Եկավ: Այգում ոչ ոք չկար, դահլիճում և հյուրասենյակում նույնպես: Նա դուրս եկավ նախասենյակ, բացեց դեպի բակ տանող դուռը…

Ի՜նչ տեսարան բացվեց նրա առաջ: Կոմսական տան լիվրեյ հագած երկու ձիավարժ բռնել էին հեծնելու ձիեր: Դրանցից մեկի վրա կոմսն ու սպասավորը նստեցնում էին Նադինկային. մյուս ձին պատրաստել էին կոմսի համար: Արտասանդուղքին կանգնել էր Մարիա Միխայլովնան: Նա դեմքը կնճռած, անհանգստությամբ նայում էր այդ տեսարանին:

— Պինդ նստիր, Նադինկա,— ասում էր նա:— Ուշադիր եղեք նրան, կոմս, ի սեր Քրիստոսի: Ա՛խ: Ես վախենում եմ, աստված վկա, վախենում եմ: Ձիու ականջից բռնիր, Նադինկա. տեսնում ես, կարծես սատանա լինի, հոլի պես պտտվում է:

— Ոչինչ, maman,— զվարթ ասաց Նադինկան,— չէ՞ որ ես արդեն գիտեմ ձի հեծնել, տեսեք:

Նա մտրակեց ձիուն, ձին առաջ նետվեց և սկսեց ցատկել ու նետվել տեղում:

— Ա՛խ, ա՛խ: Բռնեցեք,— բղավեց Մարիա Միխայլովնան, ձեռքերը թափահարելով,— վերջ տուր, կսպանի:

Բայց Նադինկան սանձերը քաշեց, և ձին կանգ առավ:

— Տեսնո՞ւմ եք, ինչպես է հնազանդվում ինձ,— ասաց Նադինկան և շոյեց ձիու վիզը:

Ադուևին ոչ ոք չնկատեց էլ: Նա, գունատ, նայում էր Նադինկային, իսկ Նադինկան, կարծես ծաղրի համար, երբեք չէր թվացել այնքան գեղեցիկ, որքան հիմա: Ինչպե՜ս էր սազում նրան ամազոնուհու զգեստը և կանաչ փեղույրով այդ գլխարկը: Ինչպե՜ս էր գծագրված նրա իրանը: Դեմքը ոգեշնչված էր ամոթխած հպարտությամբ և նոր զգացողության շքեղությամբ: Բավականությունից այտերին մերթ հայտնվում, մերթ չքանում էր կարմիրը: Ձին թեթևակի թռչկոտում էր և հարկադրում բարեկազմ հեծվորուհուն նազելիորեն առաջ թեքվել և ետ ընկնել: Նրա իրանը թամբի վրա օրորվում էր, ինչպես քամուց տատանվող ծաղկի ցողունը: Հետո ձիավարժը ձին մոտեցրեց կոմսին:

— Կո՜մս: Մենք դարձյա՞լ պուրակով ենք գնալու,— հարցրեց Նադինկան:

«Դարձյալ»,— մտածեց Ադուևը:

— Շատ լավ,— պատասխանեց կոմսը:

Ձիերը տեղից շարժվեցին:

— Նադեժդա Ալեքսա՜նդրովնա,— հանկարծ բղավեց Ալեքսանդրը ինչ-որ տարօրինակ ձայնով:

Բոլորը կանգ առան ինչպես արձանացած, կարծես քարացել էին և տարակուսանքով նայում էին Ալեքսանդրին: Դա տևեց մոտ մեկ րոպե:

— Ախ, սա Ալեքսանդր Ֆյո՜ռդորիչն է,— առաջինը ասաց մայրը, ուշքի գալով: Կոմսը սիրալիր ողջունեց: Նադինկան արագությամբ ետ գցեց փեղույրը դեմքից, շուռ եկավ ու վախեցած նայեց նրան, մի քիչ բացելով փոքրիկ բերանը, հետո արագ շրջվեց, մտրակեց ձիուն, սա առաջ նետվեց և երկու թռիչքով անհետացավ դարպասի հետևում, նրա հետևից սլացավ կոմսը:

— Կամաց, կամաց, ի սեր աստծու, կամաց,— բղավում էր մայրը հետևից:— Ականջից բռնի: Ա՜: Տեր աստված, մեկ էլ տեսար՝ կընկնի. այս ինչ կրակ ու պատի՜ժ է:

Եվ ամեն ինչ չքացավ, լսվում էր միայն ձիերի դոփյունը, և ճանապարհից փոշին բարձրացավ ամպի պես: Ալեքսանդրը մնաց Լյուբեցկայայի հետ: Նա լուռ նայում էր նրան, կարծես հարցնում էր. «Ի՞նչ է նշանակում սա»: Վերջինս չստիպեց երկար սպասելու պատասխանին:

— Գնացին,— ասաց նա,— և հետքն իսկ կորա՛վ: Դե, թող ջահելները մի քիչ զվարճանան, իսկ մենք մի քիչ զրուցենք, Ալեքսանդր Ֆյոդորիչ: Այս ի՞նչ է, երկու շաբաթ ձեր կողմից ձայն-ծպտուն չկա. դադարե՞լ եք մեզ սիրելուց, ի՞նչ է:

— Հիվանդ էի, Մարիա Միխայլովնա,— մռայլ պատասխանեց նա:

— Այո, երևում է. դուք նիհարել եք և այնպես գունատ եք: Շուտ արեք, նստեք, հանգստացեք. չե՞ք ուզում, հրամայեմ, որ թերխաշ ձու եփեն: Մինչև ճաշ դեռ շատ ժամանակ կա:

— Շնորհակալություն, չեմ ուզում:

— Ինչո՞ւ: Չէ՞ որ հենց հիմա պատրաստ կլինի, իսկ ձվերը հրաշալի են. չուխոնցին հենց այսօր բերեց:

— Ոչ, ոչ:

— Ձեզ ի՞նչ է պատահել: Իսկ ես շարունակ սպասում ու սպասում եմ ձեզ, մտածում եմ, այս ի՞նչ է նշանակում, ոչ ինքն է գալիս, ոչ ֆրանսերեն գրքեր է բերում: Հիշո՞ւմ եք, դուք մի բան էիք խոստացել. Peau de chagrin

/«Շագրենի կաշին», Օնորե դը Բալզակի վեպը:/

թե ինչ: Սպասում եմ, սպասում, չկաք: Էլ չի սիրում, մտածում եմ, Ալեքսանդր Ֆյոդորիչը մեզ, իսկապես, չի սիրում:

— Ես վախենում եմ, Մարիա Ալեքսանդրովնա, արդյոք դո՞ւք չեք դադարել ինձ սիրելուց:

— Ձեր կողմից հանցանք է դրանից վախենալը, Ալեքսանդր Ֆյոդորիչ: Ես ձեզ սիրում եմ հարազատի պես. այ, չգիտեմ, թե ինչպես է Նադինկան, բայց նա դեռ երեխա է. ի՞նչ է հասկանում: Որտեղի՞ց կարող է գնահատել մարդկանց: Ես ամեն օր պնդում եմ նրան. այս ի՞նչ է, ասում եմ, Ալեքսանդր Ֆյոդորիչը չի երևում, ինչո՞ւ չի գալիս: Եվ շարունակ սպասում եմ: Կհավատա՞ք, ամեն օր մինչև ժամը հինգը չէի նստում ճաշելու, շարունակ մտածում էի. ահա ուր որ է կգա: Նույնիսկ Նադինկան երբեմն ասում էր. «Այս ի՞նչ է maman, ո՞ւմ եք սպասում: Ես ուտել եմ ուզում, և կոմսը, կարծում եմ, նույնպես…»:

— Իսկ կոմսը... հաճա՞խ է լինում…— հարցրեց Ալեքսանդրը:

— Դե համարյա ամեն օր, իսկ երբեմն էլ օրը երկու անգամ. այնքան բարի է, այնպես սիրեց մեզ... Ուրեմն, Նադինկան ասում է. «Ուտել եմ ուզում և ուրիշ ոչինչ: Ժամանակն է սեղան նստելու»,— «Իսկ որ Ալեքսանդր Ֆյոդորիչը գալու լինի՞,— ասում եմ...»: «Չի գա, ասում է, ուզո՞ւմ եք գրազ գանք, որ չի գա: Կարիք չկա սպասելու...»: Լյուբեցկայան Ալեքսանդրին մորթում էր այդ խոսքերով, ինչպես դանակով:

— Նա այդպես էլ ասո՞ւմ էր,— հարցրեց Ալեքսանդրը, աշխատելով ժպտալ:

— Այո, հենց այդպես էլ ասում էր ու շտապեցնում: Ախր ես խիստ եմ, շատ էլ որ այսպես բարի եմ երևում: Ես բարկանում էի նրան. «Մեկ սպասում ես նրան, ասում եմ, մինչև ժամը հինգը, չես ճաշում, մեկ բոլորովին չես ուզում սպասել, անմիտ: Լավ չէ: Ալեքսանդր Ֆյոդորիչը մեր հին ծանոթն է, մեզ սիրում է, նրա հորեղբայրը՝ Պյոտր Իվանիչն էլ շատ է ցուցաբերել իր լավ վերաբերմունքը դեպի մեզ… Լավ չէ այդպես անփույթ վարվել: Նա, ով գիտի, կարող է բարկանալ և կդադարի մեզ մոտ գալուց...»:

— Իսկ նա ի՞նչ է ասում,— հարցրեց Ալեքսանդրը:

— Ոչինչ: Ախր դուք գիտեք, նա այնքան աշխույժ է, կցատկի, կսկսի երգել կվազի կամ կասի. «Կգա, եթե կուզի»: Այնպիսի չարաճճին է: Ես էլ եմ կարծում՝ կգա: Տեսնում ես, էլի մի օր է անցնում՝ չկա: Ես նորից. «Այս ի՞նչ է, Նադինկա, արդյոք առո՞ղջ է Ալեքսանդր Ֆյոդորիչը»:— «Չգիտեմ, ասում է, maman, որտեղի՞ց իմանամ»: «Մարդ ուղարկենք, իմանա, թե նրան ինչ է պատահել»: Ուղարկենք հա ուղարկենք, և ահա այսպես ուղարկեցինք, ես մոռացա, հույսս դրի նրա վրա, իսկ նա քամի է: Հիմա էլ այդ ձիավարությամբ է տարվել: Մի անգամ լուսամուտից տեսել էր կոմսին ձիով անցնելիս և կպավ ինձ. «Ձի քշել եմ ուզում և ուրիշ ոչինչ: Ես՝ էս կողմ, էն կողմ, չէ՝ «ուզում եմ»: Խելագա՛ր է: Ոչ, իմ ժամանակ ի՞նչ ձի քշել: Մեզ բոլորովին այդպես չէին դաստիարակում: Իսկ հիմա, սարսափելի է ասելը, տիկիններն սկսել են ծխել. ահա մեր տան դիմաց մի ջահել այրի է ապրում. նստում է պատշգամբում և ամբողջ օրը ծղոտ է ծխում. մոտով անցնում-դառնում են, նրա պետքն էլ չի: Պատահում էր, մեր ժամանակ, եթե հյուրասենյակում նույնիսկ տղամարդուց ծխախոտի հոտ գար…

— Վաղո՞ւց է սկսվել դա,— հարցրեց Ալեքսանդրը:

— Չգիտեմ, ասում են մի հինգ տարի է արդեն, որ մոդա է դարձել. ախր ամեն ինչ ֆրանսիացիներից է գալիս…

— Ոչ, ես հարցնում եմ, արդյոք վաղո՞ւց է Նադեժդա Ալեքսանդրովնան ձի քշում:

— Մոտ շաբաթ ու կես: Կոմսը այնքա՜ն բարի է, այնքա՜ն վարվեցող. ինչ ասես չի անում մեզ համար. ինչպե՜ս է նրան երես տալիս: Տեսեք, ինչքան ծաղիկ կա: Բոլորը նրա պարտեզից է: Ժամանակ է լինում, որ մարդ ամաչում է: «Այդ ի՞նչ եք նրան երես տալիս, կոմս, ասում եմ, այնպես կանեք, որ Նադինկան բոլորովին բանի նման չի լինի»... և Նադինկային էլ եմ կշտամբում: Մենք Մարիա Իվանովնայի ու Նադինկայի հետ եղանք կոմսի ձիամարզարանում. գիտեք, չէ՞, որ ես ինքս եմ հսկում Նադինկային. ո՞վ պիտի մորից ավելի լավ նայի աղջկանը: Ինքս եմ զբաղվել նրա դաստիարակությամբ և, առանց պարծենալու, կասեմ. աստված ամեն մեկին այդպիսի աղջիկ տա: Այնտեղ հենց մեր ներկայությամբ էլ Նադինկան սովորում էր ձիավարել: Հետո նախաճաշեցինք կոմսի այգում, և ահա հիմա ամեն օր ձի են քշում: Ի՜նչ հարուստ տուն է նրա տունը: Մենք նայեցինք. ամեն ինչ այնպես ճաշակով է, շքեղ:

— Ամեն օր,— գրեթե մտքում ասաց Ալեքսանդրը:

— Իսկ ինչո՞ւ չզվարճացնեմ: Ինքս էլ ջահել եմ եղել... պատահում էր...

— Եվ երկա՞ր են նրանք ձիավարում:

— Երեքական ժամ: Իսկ դուք ինչո՞վ էիք հիվանդ:

— Չգիտեմ... ինչ-որ կուրծքս է ցավում...— ասաց նա, ձեռքը սրտին սեղմելով:

— Ոչինչ չե՞ք ընդունում:

— Ոչ:

— Այ, այդպես են երիտասարդները: Միշտ ուշադրություն չեն դարձնում, հետո, մինչև գլխի են ընկնում, արդեն ուշ է լինում: Ի՞նչ ցավ եք զգում, կոտրատվո՞ւմ է, տնքո՞ւմ, թե կտրում:

— Եվ կոտրատվում է, և տնքում, և կտրում,— մտացրիվ ասաց Ալեքսանդրը:

— Դա մրսածություն է. աստվա՜ծ չանի: Պետք չէ բաց ու թող անել. դուք ձեզ այն օրին կհասցնեք... կարող է թոքերի բորբոքում առաջանալ. և ոչ մի դե՜ղ: Գիտե՞ք ինչ: Օպոդելդոկ վերցրեք և քնելուց առաջ կուրծքը մի լավ տրորեցեք, որ ներս քաշի ու կարմրի, իսկ թեյի փոխարեն խոտաջուր խմեցեք, ես ձեզ դեղատոմսը կտամ:

Նադինկան վերադարձավ հոգնածությունից գունատված: Նա նետվեց բազմոցին հազիվ շունչը ետ բերելով:

— Մի տես,— ասում էր Մարիա Միխայլովնան, ձեռքը նրա գլխին դնելով,— ինչպես ես հոգնել, հազիվ ես շնչում: Ջուր խմիր և գնա շորերդ փոխիր: Կորսետդ թուլացրու: Լավ օրի չի հասցնի քեզ այդ ձիավարությունը:

Ալեքսանդրը և կոմսը մնացին ամբողջ օրը: Կոմսը մշտապես քաղաքավարի և ուշադիր էր դեպի Ալեքսանդրը, կանչում էր իր մոտ՝ այգին տեսնելու, հրավիրում էր մասնակցելու ձիով զբոսանքին, ձի էր առաջարկում նրան:

— Ես ձիավարել չգիտեմ,— սառը ասաց Ադուևը:

— Դուք չգիտե՞ք,— հարցրեց Նադինկան,— բայց ի՜նչ ուրախ բան է դա: Մենք վաղը նորի՞ց կգնանք, կոմս:

Կոմսը գլուխ տվեց:

— Հերիք է քեզ, Նադինկա,— նկատեց մայրը,— դու անհանգստացնում ես կոմսին:

Սակայն, ոչ մի բանից չէր երևում, որ կոմսի և Նադինկայի միջև գոյություն ունեն հատուկ հարաբերություններ: Նա միանման սիրալիր էր թե մոր, թե աղջկա հետ, առիթ չէր որոնում միայն Նադինկայի հետ խոսելու, նրա հետևից այգի չէր վազում, նրան էլ նայում էր ճիշտ այնպես, ինչպես մորը: Նադինկայի ազատ վարվելակերպը կոմսի հետ և հեծյալ զբոսանքները բացատրվում էին Նադինկայի վայրի և անհավասարակշռված բնավորությամբ, միամտությամբ, գուցե նաև դաստիարակության պակասությամբ, բարձր հասարակության պայմանները չիմանալով. մոր կողմից՝ թուլությամբ և անհեռատեսությամբ: Կոմսի ուշադրությունն ու պատրաստակամությունը և նրա ամենօրյա այցելությունները կարելի էր վերագրել ամառանոցների հարևանությանը և այն սրտաբաց ընդունելությանը, որ նա միշտ գտնում էր Լյուբեցկիների մոտ:

Կարծես բնական բան էր, եթե դրան նայելու լինեինք հասարակ աչքով, բայց Ալեքսանդրը նայում էր խոշորացույցով և տեսնում էր… շատ… շատ բան... որ հասարակ աչքով չես տեսնի:

«Ինչո՞ւ,— հարցնում էր նա ինքն իրեն,— Նադինկան փոխվել է իր նկատմամբ»: Նա հիմա նրան չի սպասում այգում. դիմավորում է ոչ թե ժպիտով, այլ վախով, որոշ ժամանակից ի վեր հագնվում է ավելի խնամքով: Վերաբերմունքի մեջ անփութություն չկա: Նա ավելի շրջահայաց է իր արարքներում, կարծես ավելի խոհեմ է դարձել: Երբեմն նրա աչքերում և խոսքերում այնպիսի բան է թաքնված, որ նման է գաղտնիքի... Ո՞ւր են անուշիկ կամակորությունները, վայրիությունը, չարաճճիությունները, աշխուժությունը: Ամեն ինչ կորել է: Նա դարձել է լուրջ, մտախոհ, լռակյաց: Նրան կարծես մի բան տանջում է: Նա հիմա նման է բոլոր օրիորդներին. նույնպիսի կեղծաբարոն է, նույնպես ստում է, այնպե՜ս հոգատար հարցուփորձ է անում առողջության մասին... Մշտապես այնքա՜ն ուշադիր, սիրալիր է ըստ ձևի… դեպի նա... Ալեքսանդրը, որի հետ... Օ՜, աստված: Եվ նրա սիրտը նվաղում էր:

«Սա զուր չի, զուր չի,— պնդում էր նա ինքն իրեն,— այստեղ ինչ-որ բան կա: Բայց ինչ ուզում է լինի, ես կիմանամ, և այն ժամանակ վայ…

Ես չեմ թույլատրի, որ անառակն այն

Հրով գովեստի, հառաչանքների

Աղջկա մատաղ սիրտը հրապուրի...

Որ որդն այդ անարգ, որդն այդ թունավոր

Կրծի շուշանիս ցողունը նրբին,

Որ դեռափթիթ ծաղիկն այս անգին

Թոշնի կիսաբաց, թոշնի վիրավոր...»

Եվ այդ օրը, երբ կոմսն արդեն գնաց, Ալեքսանդրն աշխատում էր հարմար րոպե գտնել, որպեսզի Նադինկայի հետ առանձին խոսեր: Ինչ ասես չէր անում: Վերցրեց այն գիրքը, որով Նադինկան մի ժամանակ մորից թաքուն նրան այգի էր կանչում, ցույց տվեց Նադինկային և գնաց գետափ, կարծելով, որ ահա իր հետևից կվազի: Սպասեց, սպասեց, Նադինկան չէր գալիս: Նա վերադարձավ սենյակ: Նադինկան ինքը գիրք էր կարդում և նույնիսկ չնայեց Ալեքսանդրին: Սա նստեց նրա կողքին: Նադինկան աչքերը չէր բարձրացնում, հետո հարցրեց թռուցիկ, հարևանցի, թե արդյոք նա գրականությամբ զբաղվո՞ւմ է, որևէ նոր բան լույս չի՞ տեսել: Անցյալի մասին ոչ մի խոսք:

Ալեքսանդրը զրույց սկսեց մոր հետ: Նադինկան գնաց այգի: Մայրը սենյակից դուրս եկավ, Ադուևն էլ նետվեց այգի: Նադինկան, նրան տեսնելով, վեր կացավ նստարանից և գնաց ոչ թե Ալեքսանդրին ընդառաջ, այլ ոլորապտույտ, ծառուղով, կամացուկ դեպի տուն, կարծես խուսափելով նրանից: Ալեքսանդրը արագացրեց քայլերը, Նադինկան նույնպես:

— Նադեժդա Ալեքսանդրովնա՛,— բղավեց Ադուևը հեռվից,— ես կուզենայի ձեզ երկու խոսք ասել:

— Գնանք սենյակ, այստեղ խոնավ է,— պատասխանեց նա:

Վերադառնալով, Նադինկան նստեց մոր կողքին: Քիչ մնաց. Ալեքսանդրը ուշաթափվեր:

— Եվ դուք այսօր վախենում եք խոնավությունի՞ց,— ասաց նա խայթող շեշտով:

— Այո, հիմա այնպիսի մութ երեկոներ են, և խոնավ,— պատասխանեց Նադինկան հորանջելով:

— Շուտով կտեղափոխվենք,— նկատեց մայրը:— Նեղություն քաշեք, Ալեքսանդր Ֆյոդորիչ, անցեք մեր տուն և հիշեցրեք տանտիրոջը, որ փոխի երկու դռների փակերը և Նադինկայի ննջարանի լուսամուտի փեղկը: Նա խոստացել է, բայց մեկ էլ տեսար՝ մոռացավ: Նրանք բոլորն այդպես են մենակ թե փող վերցնեն:

Ալեքսանդրը սկսեց հրաժեշտ տալ:

— Տեսեք, երկար ժամանակով չանհետանաք,— ասաց Մարիա Միխայլովնան:

Նադինկան լուռ էր:

Ադուևն արդեն մոտեցավ դռանը և շրջվեց դեպի նա: Նադինկան երեք քայլ արեց դեպի Ալեքսանդրը: Սրա սիրտը թրթռաց:

«Վերջապես»,— մտածեց նա:

— Վաղը կլինե՞ք մեզ մոտ,— հարցրեց Նադինկան սառը, բայց աչքերը ագահ հետաքրքրությամբ սևեռվեցին նրա վրա:

— Չգիտեմ, իսկ ի՞նչ կա:

— Այնպես, հարցնում եմ, կլինե՞ք

— Իսկ դուք կուզենայի՞ք:

— Վաղը կլինե՞ք մեր տանը,— հարցրեց Նադինկան նույն սառը եղանակով, բայց առավել անհամբերությամբ:

— Ոչ,— պատասխանեց Ադուևը սրդողած:

— Իսկ մյուս օ՞րը:

— Ոչ. ես չեմ լինի մի ամբողջ շաբաթ, գուցե երկու... երկար ժամանակ...— Եվ նա փորձող հայացքը սևեռեց Նադինկայի վրա, ջանալով նրա աչքերում կարդալ, թե ինչ տպավորություն կգործի այդ պատասխանը:

Նադինկան լուռ էր, բայց նրա աչքերը Ալեքսանդրի պատասխանելուն պես վայրկենաբար ցած խոնարհվեցին, և ի՞նչ կար նրանցում: Արդյոք թախի՞ծը մշուշապատեց դրանք, թե՞ ուրախության փայլակը շողաց, ոչինչ չէր կարելի կարդալ այդ մարմարե, սքանչելի դեմքի վրա:

Ալեքսանդրը ձեռքի մեջ սեղմեց գլխարկն ու դուրս գնաց:

— Չմոռանաք ձեր կուրծքը օպոդելդոկով տրորել,— նրա հետևից բղավեց Մարիա Միխայլովնան: Եվ ահա Ալեքսանդրի համար նորից մի խնդիր՝ հասկանալ, թե ի՞նչ նպատակով էր տրված Նադինկայի հարցը: Ի՞նչ էր պարունակում այն, նրան տեսնելու ցանկությո՞ւն թե վախ:

— Օ, ի՜նչ տանջանք է, ի՜նչ տանջանք,— ասում էր նա հուսահատ:

Չդիմացավ խեղճ Ալեքսանդրը. երրորդ օրը եկավ: Նադինկան այգու ցանկապատի մոտ էր: Նա արդեն ուրախանալու վրա էր, բայց հենց որ ափին մոտեցավ, Նադինկան, կարծես չտեսնելով նրան, շուռ եկավ և, արահետով մի քանի կողմնակի քայլ անելով, ասես աննպատակ զբոսնելիս լիներ, գնաց տուն:

Ալեքսանդրը նրան գտավ մոր հետ: Այնտեղ մի երկու մարդ կար քաղաքից, հարևանուհի Մարիա Իվանովնան և անխուսափելի կոմսը: Ալեքսանդրի տանջանքն անտանելի էր: Դարձյալ ամբողջ օրն անցավ դատարկ, չնչին խոսակցություններով: Ինչպե՜ս էին ձանձրացրել նրան հյուրերը: Նրանք հանգիստ խոսում էին ամեն մի դատարկ բանի մասին, դատողություններ անում, կատակում, ծիծաղում:

«Ծիծաղո՜ւմ են,— ասում էր Ալեքսանդրը:— Նրանք կարող են ծիծաղել, երբ… Նադինկան... փոխվել է իմ նկատմամբ: Դա նրանց համար ոչի՜նչ է: Խղճուկ, սնամեջ մարդիկ. ամեն բանի համար ուրախանո՜ւմ են»:

Նադինկան գնաց այգի. կոմսը չգնաց նրա հետ: Մի որոշ ժամանակից ի վեր և նա, և Նադինկան կարծես իրարից խուսափում էին Ալեքսանդրի ներկայությամբ: Սա երբեմն նրանց տեսնում էր այգում կամ սենյակում միայնակ, բայց հետո նրանք անջատվում էին և այլևս Ալեքսանդրի ներկայությամբ չէին միանում: Նոր, սարսափելի հայտնագործություն Ալեքսանդրի համար, մի նշան, որ նրանք դավադրել են:

Հյուրերը ցրվեցին: Գնաց և կոմսը: Նադինկան այդ չգիտեր և տուն չէր շտապում: Ադուևը առանց ձևականության Մարիա Միխայլովնայի մոտից գնաց այգի: Նադինկան կանգնել էր մեջքը Ալեքսանդրի կողմն արած, ցանկապատի ճաղերը բռնած և գլուխը ձեռքին հենած, ինչպես այն անմոռանալի երեկոն... Նադինկան չտեսավ ու չլսեց Ալեքսանդրի գալը:

Ինչպե՜ս էր բաբախում վերջինիս սիրտը, երբ ոտքերի ծայրերին գաղտագողի մոտենում էր աղջկան: Նրա շունչը կտրվեց:

— Նադեժդա Ալեքսանդրովնա,— հազիվ լսելի ասաց նա հուզմունքով:

Նադինկան ցնցվեց, կարծես նրա մոտ հրացան կրակեցին, շուռ եկավ և մի քայլ ետ գնաց Ալեքսանդրից:

— Ասացեք, խնդրեմ, այդ ի՞նչ ծուխ է այնտեղ,— սկսեց Նադինկան շփոթված, աշխուժորեն ցույց տալով գետի հակառակ ափը,— հրդե՞հ է, ինչ է, թե՞ այդպիսի հնոց է... գործարանում…

Ալեքսանդրը լուռ նայում էր նրան:

— Ճիշտ, ես կարծում էի՝ հրդեհ է... ի՞նչ եք այդպես նայում ինձ, չե՞ք հավատում...

Նա լռեց:

— Դուք էլ,— սկսեց Ալեքսանդրը գլուխն օրորելով,— դուք էլ ուրիշների պես եք, ինչպես բոլորը... Ո՞ւմ մտքով կանցներ այդ... մի երկու ամիս առաջ...

— Ի՞նչ եք ասում: Ես ձեզ չեմ հասկանում,— ասաց Նադինկան և ուզում էր գնալ:

— Կացեք, Նադեժդա Ալեքսանդրովնա, ես այլևս ուժ չունեմ այս կտտանքին դիմանալու:

— Ի՞նչ կտտանք: Ես, իսկապես, չգիտեմ...

— Մի ձևացրեք, ասացեք, այդ դո՞ւք եք: Արդյոք ա՞յն եք, ինչ որ էիք:

— Ես միշտ նույնն եմ,— վճռականորեն ասաց Նադինկան:

— Ինչպե՜ս: Դուք չե՞ք փոխվել իմ նկատմամբ:

— Ոչ. ես, կարծեմ, նույնքան սիրալիր եմ ձեզ հետ, նույնքան ուրախ դիմավորում եմ ձեզ...

— Նույնքան ուրա՜խ: Իսկ ինչո՞ւ եք փախչում ցանկապատից…

— Ես փախչո՞ւմ եմ: Տեսեք, թե ինչ հնարեցիք, ես կանգնած եմ ցանկապատի մոտ, իսկ դուք ասում եք՝ փախչում եմ:

Նա հարկադրաբար ծիծաղեց:

— Նադեժդա Ալեքսանդրովնա, թողեք խորամանկությունը,— շարունակեց Ադուևը:

— Ի՞նչ խորամանկություն: Ի՞նչ եք կպել ինձնից:

— Մի՞թե այդ դուք եք: Աստված իմ: Ամիս ու կես առաջ, դեռ այստեղ…

— Այդ ի՞նչ ծուխ է այն կողմում, կուզենայի իմանալ...

— Սարսափելի՜ է: Սարսափելի՜ է,— ասում էր Ալեքսանդրը:

— Դե ի՞նչ եմ արել ես ձեզ: Դուք դադարեցիք մեզ մոտ գալ, ինչպես կուզեք... պահել ձեզ ձեր կամքին հակառակ...— սկսեց Նադինկան:

— Կեղծո՜ւմ եք: Կարծես չգիտե՞ք, թե ինչու դադարեցի ձեզ մոտ գալ:

Նադինկան մի կողմ նայելով գլուխն օրորեց:

— Իսկ կո՞մսը,— ասաց Ալեքսանդրը գրեթե սպառնալից:

— Ի՞նչ կոմս:

Նա դեմքին այնպիսի արտահայտություն տվեց, կարծես առաջին անգամն էր լսում կոմսի մասին:

— Ինչ կո՞մս: Ասացեք էլի,— ասաց Ալեքսանդրը, ուղիղ նրա աչքերին նայելով,— որ դուք անտարբե՞ր եք դեպի նա:

— Դուք խելագարվե՞լ եք,— պատասխանեց Նադինկան, ընկրկելով Ալեքսանդրից:

— Այո, դուք չեք սխալվում,— շարունակեց վերջինս:— Բանականությունս հանգչում է օր ավուր... Մի՞թե կարելի է այդպես խարդավանքով, անշնորհակալ վարվել մի մարդու հետ, որը ձեզ սիրում էր աշխարհում ամեն ինչից ավելի, որն ամեն ինչ մոռացավ ձեզ համար, ամեն ինչ… մտածում էր շուտով ընդմիշտ երջանկանալ, իսկ դո՞ւք...

— Ես ի՞նչ,— ասաց Նադինկան նորից ընկրկելով:

— Դուք ի՞նչ,— պատասխանեց Ալեքսանդրը, կատաղելով այդ սառնարյունությունից:— Դուք մոռացել եք: Ես ձեզ կհիշեցնեմ, որ այստեղ, հենց այս տեղում, դուք հարյուր անգամ երդվել եք ինձ պատկանել. «Այս երդումները լսում է աստված»,— ասում էիք դուք: Այո, նա լսում էր դրանք: Դուք պետք է կարմրեք և երկնքի, և այս ծառերի, ամեն մի խոտի առաջ… ամեն ինչ վկա է եղել մեր երջանկության. այստեղ ամեն մի ավազահատիկը խոսում է մեր սիրո մասին. տեսեք, ձեր շուրջը նայեցեք... դուք երդմնազանց եք:

Նադինկան սարսափով նայում էր Ալեքսանդրին: Նրա աչքերը փայլում էին, շրթունքները սպիտակել էին:

— Ո՜ւ: Ի՜նչ սարսափելի եք,— ասաց Նադինկան երկչոտ:— Ինչո՞ւ եք բարկանում: Ես ձեզ չեմ մերժել, դուք դեռ չեք խոսել maman-ի հետ... ինչի՞ց գիտեք, որ...

— Խոսել այս արարքներից հետո՞…

— Ի՞նչ արարքներից: Ես չգիտեմ...

— Ինչ արարքնե՞ր: Հիմա կասեմ. ի՞նչ է նշանակում այդ տեսակցությունները կոմսի հետ, այդ զբոսանքները ձիով:

— Ես հո չե՞մ փախչելու նրանից, երբ maman-ն դուրս է գալիս սենյակից: Իսկ ձիով զբոսանքը նշանակում է... որ ես սիրում եմ ձի քշել… այնպես հաճելի՜ է. սլանում ես... ախ, ինչ լավիկն է այդ Լյուսի ձիուկը: Տեսե՞լ եք... նա արդեն ճանաչում է ինձ...

— Իսկ վերաբերմունքի փոփոխությո՞ւնը ինձ հետ,— շարունակեց Ալեքսանդրը:— Ինչո՞ւ կոմսը ամեն օր ձեր տանն է, առավոտից մինչև երեկո:

— Ա՜խ, աստվա՜ծ իմ: Ես որտեղի՞ց գիտեմ: Ի՜նչ ծիծաղելին եք: Marman-ն այդպես է ուզում:

— Ճիշտ չէ՜: Maman-ն ուզում է այն, ինչ որ դուք եք ուզում: Ո՞ւմ են տրվում այդ բոլոր նվերները, նոտաները, ալբոմները, ծաղիկները: Բոլորը maman-ի՞ն:

— Այո, maman-ն շատ է սիրում ծաղիկներ: Դեռ երեկ նա այգեպանից գնեց…

— Իսկ ինչի՞ մասին եք խոսում կոմսի հետ կիսաձայն,— շարունակում էր Ալեքսանդրը, ուշադրություն չդարձնելով նրա խոսքերին:— Տեսեք, դուք դժգունում եք, դուք ինքներդ զգում եք ձեր մեղքը: Կործանել մարդու երջանկությունը, մոռանալ, ոչնչացնել ամեն ինչ այդպես շուտ, այդպես հեշտ. դա կեղծավորությո՜ւն է, անշնորհակալություն, կեղծիք, դավաճանությո՜ւն... Այո, դավաճանությո՜ւն... ինչպե՞ս կարողացաք ձեզ թույլ տալ այդ բանը: Հարուստ կոմսը, առյուծը, արժանի համարեց ձեր վրա բարեհաճ հայացք գցել, և դուք հուզվեցիք, երեսնիվայր ընկաք այդ խաբուսիկ արևի առաջ, ո՞ւր է ամոթը: Կոմսին չտեսնե՜մ այստեղ,— ասում էր նա շնչահեղձ ձայնով:— Լսո՞ւմ եք: Թողեք, դադարեցրեք նրա հետ բոլոր հարաբերությունները, որ նա ձեր տան ճամփան մոռանա՜, ես չեմ ուզում...

Նա կատաղորեն բռնեց Նադինկայի ձեռքը:

— Maman, maman! Հասե՜ք,— սուր ձայնով ճչաց Նադինկան, դուրս պրծնելով Ալեքսանդրի ձեռքից և, ազատվելով, հապճեպ նետվեց դեպի տուն:

Ալեքսանդրը նստեց նստարանին ու ձեռքերով բռնեց գլուխը:

Նադինկան սենյակ վազեց գունատ, վախեցած և ընկավ աթոռին:

— Ի՞նչ է: Քեզ ի՞նչ է պատահել: Ի՞նչ ես բղավում,— հարցրեց անհանգստացած մայրը, նրան ընդառաջ գնալով:

— Ալեքսանդր Ֆյոդորիչը... անառողջ է,— հազիվ կարողացավ ասել նա:

— Էլ ինչո՞ւ այդպես վախեցար:

— Նա այնպես սարսափելի է... maman, ի սեր աստծո, չթողնեք նրան ինձ մոտ:

— Ինչպե՜ս վախեցրիր ինձ, խելագար: Ի՞նչ անենք, որ անառողջ է: Ես գիտեմ, նրա կուրծքը ցավում է: Այստեղ սարսափելի ի՞նչ կա: Թոքախտ չէ: Օպոդելդոկ քսի՝ ամեն ինչ կանցնի. երևի ականջ չի արել, չի քսել:

Ալեքսանդրը ուշքի եկավ: Տենդն անցավ, բայց նրա տանջանքը կրկնապատկվեց: Կասկածները նա չպարզեց, իսկ Նադինկային վախեցրեց և հիմա, իհարկե, նրանից պատասխան չի ստանա. գործին այնպես չկպավ: Նրա, ինչպես ամեն մի սիրահարի, մտքով հանկարծ անցավ և այս. «Իսկ եթե նա մեղավոր չէ: Գուցե իսկապես նա անտարբեր է դեպի կոմսը: Անխելք մայրը նրան ամեն օր հրավիրում է. Նադինկան ի՞նչ անի: Կոմսը, որպես բարձրաշխարհիկ մարդ, սիրալիր է. Նադինկան սիրունիկ աղջիկ է. գուցե և կոմսը ուզում է նրան դուր գալ, բայց ախր դա դեռ չի նշանակում, թե արդեն դուր է եկել: Նադինկային, թերևս, դուր են գալիս ծաղիկները, ձի քշելը, անմեղ զվարճությունները և ոչ թե կոմսն ինքը: Դե, ենթադրենք նույնիսկ, որ այստեղ մի քիչ կոկետություն կա. մի՞թե դա ներելի չէ: Ուրիշները ավելի մեծ են և, աստված գիտի, թե ինչեր են անում»:

Նա հանգստացավ, ուրախության մի շող փայլեց նրա հոգում: Բոլոր սիրահարվածներն այդպես են. մերթ կույր են, մերթ շատ սրաթափանց: Ըստ որում, այնքա՜ն հաճելի է արդարացնել սիրած առարկան:

«Իսկ ինչի՞ց է վերաբերմունքի փոփոխությունը դեպի ինձ,— հանկարծ հարցնում էր նա և նորից դժգունում:— Ինչո՞ւ է ինձնից փախչում, լռում, կարծես ամաչում է: Ինչո՞ւ երեկ, լի օրը, հագնվել էր այնպես շքեղ: Բացի կոմսից, ուրիշ հյուրեր չկային: Ինչո՞ւ հարցրեց, թե արդյոք շո՞ւտ կսկսվեն բալետները»: Հասարակ հարց. բայց նա հիշեց, որ կոմսը, ի միջի այլոց, խոստացավ միշտ օթյակ ձեռք բերել, հաշվի չառնելով ոչ մի դժվարություն՝ հետևաբար նրանց հետ կլինի: «Ինչո՞ւ երեկ այգուց գնաց: Ինչո՞ւ այգի չեկավ: Ինչո՞ւ այսինչ բանը հարցրեց. ինչո՞ւ հարցրեց...»:

Եվ նա նորից ընկավ ծանր տարակուսանքների մեջ ու նորից չարաչար տանջվում էր և հասավ այն եզրակացության, որ Նադինկան նույնիսկ երբեք չի սիրել նրան:

«Աստվա՜ծ, աստվա՜ծ,— ասում էր նա հուսահատ,— ինչ ծանր է, ինչ դառն է ապրելը: Տուր ինձ այն մեռյալ անդորրը, հոգու այն քունը»:

Քառորդ ժամ հետո նա սենյակ եկավ վիատ, վեհերոտ:

— Մնաք բարով, Նադեժդա Ալեքսանդրովնա,— ասաց նա երկչոտ:

— Գնաք բարով,— պատասխանեց Նադինկան ընդհատ, առանց աչքերը բարձրացնելու:

— Ե՞րբ թույլ կտաք գալու:

— Երբ կամենաք: Ասենք... մենք մյուս շաբաթ տեղափոխվում ենք քաղաք. այն ժամանակ մենք ձեզ կտեղեկացնենք...

Ալեքսանդրը մեկնեց: Անցավ երկու շաբաթից ավելի: Բոլորը արդեն փոխադրվել էին ամառանոցներից: Արիստոկրատական սալոնները նորից փայլեցին: Աստիճանավորն էլ հյուրասենյակում վառեց պատի երկու լամպը, կես փութ ճարպի մոմ գնեց, երկու թղթախաղի սեղան դրեց Ստեփան Իվանիչին և Իվան Ստեպանիչին սպասելով և կնոջը հայտարարեց, որ երեքշաբթի օրերը իրենց ընդունելության օրն է լինելու:

Իսկ Ադուևը Լյուբեցկիներից հրավեր չէր ստանում ու չէր ստանում: Նա հանդիպել էր նրանց թե խոհարարին, թե աղախնին: Աղախինը, նրան տեսնելով, մի կողմ էր նետվել ու փախել. երևում էր, որ նա գործում էր իր օրիորդի ոգով: Խոհարարը կանգ էր առել:

— Այս ինչո՞ւ եք մեզ մոռացել, պարոն,— ասել էր նա:— Մենք արդեն մի շաբաթ ու կես կլինի, փոխադրվել ենք:

— Գուցե դուք դեռ... սարք ու սուրք չեք եղել, չեք ընդունում:

— Ինչ չընդունե՜լ, պարոն. արդեն բոլորը եղել են մեր տանը, միայն դուք չկաք. տիրուհին զարմանք է կտրել: Այ, նորին պայծառափայլությունը ամեն օր բարեհաճում է շնորհ բերել... այնպիսի բարի պարոն է: Ես էն օր գնացել էի նրա մոտ օրիորդից ինչ-որ տետրակ էի տարել, մի կարմիր տասանոց պարգևեց:

— Ինչ հիմարն ես,— ասաց Ադուևը և մի կողմ նետվեց շաղակրատից: Նա երեկոյան անցավ Լյուբեցկիների բնակարանի մոտով: Լույս էր: Շքամուտքի մոտ մի կառք էր կանգնած:

— Ո՞ւմ կառքն է,— հարցրեց նա:

— Կոմս Նավինսկու:

Հաջորդ օրը, երրորդ օրը նույն բանն էր: Վերջապես մի անգամ նա ներս մտավ: Մայրը նրան ընդունեց սրտաբաց, կշտամբելով բացակայության համար, նախատեց, որ կուրծքը օպոդելդոկով չի շփում. Նադինկան ընդունեց հանգիստ, կոմսը՝ քաղաքավարի: Խոսակցությունը չէր ստացվում:

Այդպես նա այցելեց մի երկու անգամ: Զուր էր նա արտահայտիչ կերպով նայում Նադինկային. նա կարծես չէր նկատում Ալեքսանդրի հայացքները, իսկ առաջ ինչպե՜ս էր նկատում: Լինում էր, որ Ալեքսանդրը խոսում էր մոր հետ, իսկ Նադինկան կանգնում էր նրա դիմաց, Մարիա Միխայլովնայի աթոռի հետև, ծամածռվում էր, չարություններ անում և ծիծաղեցնում նրան:

Անտանելի թախիծ պատեց Ալեքսանդրին: Նա մտածում էր այն մասին, թե ինչպես թոթափի իրենից կամավոր իր վրա վերցրած այդ խաչը: Նա ուզում էր բացատրություն ստանալ: «Ինչպիսին էլ լինի պատասխանը,— մտածում էր նա,— միևնույն է, միայն թե կասկածը դարձնի հայտնի»:

Երկար մտմտում էր նա, թե ինչպես գործի կպչի, վերջապես ինչ-որ բան հնարեց ու գնաց Լյուբեցկիների մոտ:

Ամեն ինչ նպաստավոր էր նրա համար: Մուտքի մոտ կառք չկար: Նա կամացուկ անցավ դահլիճ և մի րոպե կանգնեց հյուրասենյակի դռան առաջ, որպեսզի շունչը ետ բերի: Այնտեղ Նադինկան դաշնամուր էր նվագում: Մի սենյակ այն կողմ Լյուբեցկայան ինքը նստած էր բազմոցին ու շարֆ էր գործում: Նադինկան, դահլիճում քայլերի ձայն լսելով, շարունակեց նվագել ավելի ցածրաձայն և գլխիկը առաջ ձգեց: Նա ժպտալով սպասում էր հյուրի հայտնվելուն: Հյուրը հայտնվեց, և ժպիտը վայրկենաբար անհետացավ. դրան փոխարինեց վախը: Նրա դեմքը մի փոքր այլայլվեց, և նա աթոռից վեր կացավ: Ա՛յդ հյուրին չէր սպասում նա:

Ալեքսանդրը լուռ ողջունեց և, ստվերի պես, անցավ առաջ, մոր մոտ: Նա գնում էր կամացուկ, առանց նախկին վստահության, գլխահակ: Նադինկան նստեց ու շարունակեց իր նվագը, ժամանակ առ ժամանակ անհանգիստ ետ նայելով:

Կես ժամ հետո ինչ-որ առիթով մորը սենյակից դուրս կանչեցին: Ալեքսանդրը եկավ Նադինկայի մոտ: Սա վեր կացավ և ուզում էր գնալ:

— Նադեժդա Ալեքսանդրովնա,— ասաց Ալեքսանդրը վիատ:— Սպասեցեք, ինձ հատկացրեք հինգ րոպե, ոչ ավելի:

— Ես չեմ կարող ձեզ լսել,— ասաց նա և ուզեց հեռանալ:— Վերջին անգամ դուք...

— Ես մեղավոր էի այն ժամանակ: Հիմա այլ կերպ կխոսեմ, խոստանում եմ ձեզ. դուք չեք լսի ոչ մի նախատինք: Մի մերժեք ինձ, թերևս, վերջին անգամ: Բացատրությունն անհրաժեշտ է, չէ՞ որ դուք ինձ թույլ տվիք ձեր մայրիկից խնդրել ձեր ձեռքը: Դրանից հետո պատահեց շատ այնպիսի բան... որ... մի խոսքով՝ ես պետք է կրկնեմ հարցը: Նստեցեք և շարունակեցեք նվագել. ավելի լավ է՝ մայրիկը չլսի. չէ՞ որ սա առաջին անգամը չէ...

Նադինկան մեքենայորեն ենթարկվեց. թեթևակի կարմրելով, սկսեց ակորդներ վերցնել և տագնապալի սպասումով հայացքը հառեց նրա վրա:

— Այդ ո՞ւր գնացիք, Ալեքսանդր Ֆյոդորիչ,— հարցրեց մայրը իր տեղը վերադառնալով:

— Ես ուզում էի մի քիչ խոսել Նադեժդա Ալեքսանդրովնայի հետ... գրականության մասին,— պատասխանեց նա:

— Դե խոսեցեք, խոսեցեք, իսկապես, դուք վաղուց չեք խոսել:

— Պատասխանեցեք ինձ կարճ ու անկեղծ միայն մի հարցի,— սկսեց Ալեքսանդրը կիսաձայն,— և մեր բացատրությունն իսկույն կվերջանա... Դուք ինձ այլևս չե՞ք սիրում:

— Quelle idée!

/Այդ ի՞նչ միտք է (ֆր.):/

— պատասխանեց Նադինկան շփոթվելով,— դուք գիտեք, թե ինչպես maman-ն և ես միշտ գնահատում էինք ձեր մտերմությունը... ինչպես միշտ ուրախ էինք լինում ձեզ տեսնելու...

Ադուևը նայեց նրան ու մտածեց. «Մի՞թե այդ դու ես, քմահաճ, բայց անկեղծ մանուկ: Այն չարաճճի՞ն, աշխույժի՞կը: Ինչպե՜ս շուտ սովորեց նա կեղծել: Ի՞նչ արագ զարգացան նրա մեջ կանացի բնազդները: Մի՞թե անուշ քմայքները կեղծավորության, խորամանկության սաղմերն էին... Ահա, առանց հորեղբորս մեթոդի էլ, բայց ինչպես հապճեպ այս աղջիկը ձևավորվեց որպես կին: Եվ ամբողջը կոմսի դպրոցում, և ինչ-որ երկու-երեք ամսո՛ւմ: Օ, հորեղբայր, հորեղբայր: Այս հարցում էլ դու անողոքաբար իրավացի ես»:

— Լսեցեք,— ասաց նա այնպիսի ձայնով, որ հանկարծ դիմակն ընկավ կեղծավորուհու դեմքից,— մի կողմ թողնենք մայրիկին. մի րոպե դարձեք նախկին Նադինկան, երբ դուք մի քիչ սիրում էիք ինձ... և պատասխանեցեք ուղղակի. դա ինձ պետք է իմանալ, աստված վկա, պետք է:

Նադինկան լուռ էր, միայն փոխեց նոտաները և սկսեց նայել ու նվագել ինչ-որ դժվար մի ելևէջ:

— Դե լավ, ես հարցս կփոխեմ,— շարունակեց Ադուևը,— ասացեք, արդյոք չի՞ փոխարինել, նույնիսկ անունը չեմ տա, թե ով, արդյոք ձեր սրտում որևէ մեկը չի՞ փոխարինել ինձ...

Նադինկան այրուքը պոկեց մոմից և երկար ժամանակ ուղղում էր պատրույգը, բայց լուռ էր:

— Դե պատասխանեցեք, Նադեժդա Ալեքսանդրովնա. մի խոսքը ինձ կազատի տանջանքից, ձեզ՝ տհաճ բացատրությունից:

— Ախ, աստված իմ, վերջ տվեք: Ես ի՞նչ պիտի ասեմ ձեզ: Ասելու բան չունեմ,— պատասխանեց նա դեմքը շրջելով Ալեքսանդրից:

Մեկ ուրիշը կբավարարվեր այդպիսի պատասխանով և կտեսներ, որ ինքը այլևս մտածելու բան չունի: Նա ամեն ինչ կհասկանար և նրա դեմքին գրված, և շարժումների մեջ երևացող այդ անխոս ու տանջալից թախծից, բայց Ադուևի համար բավական չէր: Նա, ինչպես դահիճը, չարչարում էր իր զոհին և ինքն էլ ոգեշնչված էր բաժակը միանգամից և մինչև վերջ ըմպելու ինչ-որ վայրի, հուսահատ ցանկությամբ:

— Ոչ,— ասում էր նա:— Վերջացրեք այս կտտանքը այսօր. կասկածանքները, մեկը մյուսից սև, հուզում են իմ միտքը, պատառ-պատառ անում սիրտս: Ես տանջանքից ուժասպառ եմ եղել, ես կարծում եմ, որ կուրծքս կպայթի լարումից... ես ոչնչով չեմ կարող փարատել կասկածներս. ամեն ինչ պետք է վճռեք դուք ինքներդ. այլապես ես երբեք չեմ հանգստանա:

Նա նայում էր Նադինկային և պատասխան էր սպասում: Նադինկան լուռ էր:

— Խղճացե՛ք ինձ,— սկսեց Ալեքսանդրը նորից:— Նայեցեք ինձ, ինքս ինձ նմա՞ն եմ: Բոլորը վախենում են ինձնից, չեն ճանաչում... բոլորը խղճում են, մենակ դուք...

Իրոք որ, նրա աչքերը վառվում էին օտարոտի փայլով: Նա նիհար էր, գունատ, ճակատին քրտինքի խոշոր կաթիլներ էին դուրս տվել:

Նադինկան գաղտագողի մի հայացք նետեց նրա վրա, և այդ հայացքի մեջ առկայծեց խղճահարության նման մի բան: Նա նույնիսկ բռնեց Ալեքսանդրի ձեռքը, բայց անմիջապես բաց թողեց հոգոց հանելով և շարունակ լուռ էր:

— Ուրեմն ի՞նչ,— հարցրեց Ալեքսանդրը:

— Ախ, հանգիստ թողեք ինձ,— ասաց Նադինկան անձկությամբ։— Դուք ինձ տանջում եք հարցերով...

— Աղաչում եմ ձեզ, ի սեր աստծո,— ասում էր Ալեքսանդրը։— Վերջացրեք ամեն ինչ մի խոսքով... Ձեզ ի՞նչ օգուտ պիտի տա ծածկամտությունը։ Իմ մեջ կմնա հիմար հույս, ես ձեռք չեմ վերցնի, ամեն օր կհայտնվեմ ձեզ մոտ դժգույն, վշտացած... Ես թախիծ կառաջացնեմ ձեր մեջ։ Կարգելեք տուն գալ, կսկսեմ թափառել լուսամուտների տակ, ձեզ հետ հանդիպել թատրոնում, փողոցում, ամենուրեք, ինչպես ուրվական, ինչպես memento mori։

/Մահվան հիշեցում (լատ.)։/

Այս բոլորը հիմար բան է, թերևս, ծիծաղելի, ում ծիծաղը որ գալիս է, բայց ինձ համար ծանր է։ Դուք չգիտեք, ինչ բան է սերը, մինչև ուր է հասցնում նա։ Տա աստված, որ դուք երբեք էլ չիմանաք... Ի՞նչ օգուտ։ Ավելի լավ չէ՞ միանգամից ասել։

— Բայց ինչի՞ մասին եք հարցնում,— ասաց Նադինկան, ետ ընկնելով բազկաթոռի թիկնակին։— Ես բոլորովին շշկլվեցի... Գլուխս կարծես մշուշի մեջ է...

Նա ջղաձգաբար ձեռքը սեղմեց ճակատին և անմիջապես հեռացրեց։

— Ես հարցնում եմ, արդյոք որևէ մեկը ինձ փոխարինե՞լ է ձեր սրտում։ Մի բառը՝ **այո** կամ **ոչ**, ամեն ինչ կորոշի, դժվա՞ր է ասելը։

Նադինկան ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չէր կարող և, աչքերը ցած թողած, սկսեց մատով հարվածել մի ստեղնի։ Երևում էր, որ նա սաստիկ կռվում էր ինքն իր հետ։ «Ախ»,— արտասանեց նա վերջապես անձկությամբ։ Ադուևը թաշկինակով ճակատը սրբեց։

— Այո՞ թե ոչ,— կրկնեց նա, շունչը պահած։

Անցավ մի քանի վայրկյան։

— Այո՞ թե ոչ։

— Այո,— շշնջաց Նադինկան հազիվ լսելի, հետո բոլորովին խոնարհվեց դաշնամուրի վրա և, կարծես մոռացման մեջ, սկսեց վերցնել ուժեղ ակորդներ։

Այդ **այո**-ն հնչեց հազիվ լսելի, ինչպես հոգոց, բայց խլացրեց Ադուևին. սիրտը կարծես պոկվեց, ոտները ծալվեցին նրա տակ։ Նա վայր ընկավ դաշնամուրի մոտի աթոռին ու լռեց։

Նադինկան վեհերոտ նայեց նրան։ Ալեքսանդրը նրան էր նայում անիմաստ հայացքով։

— Ալեքսանդր Ֆյոդորիչ,— հանկարծ բղավեց մայրը իր սենյակից։— Ո՞ր ականջս է զրնգում։

Ալեքսանդրը լուռ էր։

— Maman-ն ձեզ է հարցնում։

— Հը՞։

— Ո՞ր ականջս է զրնգում,— բղավեց մայրը։— Դե շուտ։

— Երկուսն էլ,— մռայլ արտասանեց Ադուևը։

— Ինչպիսի՜ն եք, ձա՛խ ականջս։ Իսկ ես մտքումս պահել էի, թե կոմսը այսօր կգա՞։

— Կո՜մսը,— արտասանեց Ադուևը։

— Ներեցեք ինձ,— ասաց Նադինկան աղերսագին,— նետվելով դեպի նա։— Ես ինքս ինձ չեմ հասկանում... Այդ ամենը եղավ հանկարծակի, հակառակ իմ կամքի... չգիտեմ ինչպես... ես չէի կարող ձեզ խաբել...

— Ես խոսքս կպահեմ, Նադեժդա Ալեքսանդրովնա,— պատասխանեց Ադուևը,— ձեզ ոչ մի կշտամբանք չեմ տա: Շնորհակալ եմ ձեր անկեղծության համար... Դուք շատ, շատ բան արիք... այսօր... ինձ համար դժվար էր լսել այդ այո-ն... բայց ձեզ համար ավելի դժվար էր ասել... Մնաք բարով. դուք այլևս ինձ չեք տեսնի, միակ պարգևը ձեր անկեղծության փոխարեն... բայց կոմսը, կո՛մսը:

Նա սեղմեց ատամները և գնաց դեպի դուռը:

— Հա,— ասաց նա վերադառնալով,— դա ձեզ ո՞ւր կտանի: Կոմսը ձեզ հետ չի ամուսնանա. նա ի՞նչ մտադրություններ ունի...

— Չգիտե՛մ,— պատասխանեց Նադինկան, տխրագին օրորելով գլուխը:

— Աստվա՛ծ իմ, ինչպես դուք կուրացած եք,— սարսափով բացականչեց Ադուևը:

— Նա չի կարող վատ մտադրություններ ունենալ...— պատասխանեց Նադինկան թույլ ձայնով:

— Զգուշացեք, Նադեժդա Ալեքսանդրովնա:

Նա բռնեց Նադինկայի ձեռքը, համբուրեց և անհաստատ քայլերով դուրս եկավ սենյակից: Սոսկալի էր նրան նայելը: Նադինկան անշարժ մնաց իր տեղում:

— Այդ ինչո՞ւ չես նվագում, Նադինկա,— հարցրեց մայրը մի քանի րոպե անց:

Նադինկան սթափվեց կարծես ծանր քնից և հառաչեց:

— Հիմա, maman,— պատասխանեց նա և մտախոհ, մի քիչ թեքելով գլուխը մի կողմ, երկչոտ սկսեց հարվածել ստեղներին: Նրա մատները դողում էին: Նա, ըստ երևույթին, տանջվում էր խղճի խայթից և կասկածից, որ նրա մեջ նետեց «զգուշացեք» բառը: Երբ կոմսը եկավ, նա լռակյաց էր, տխուր. նրա շարժումների մեջ ինչ-որ հարկադրական բան կար: Նա, գլխացավը պատրվակելով, վաղ գնաց իր սենյակը: Եվ այդ երեկո նրա համար դառն էր աշխարհում ապրելը:

Ադուևը նոր էր իջել սանդուղքից, երբ ուժերը նրան դավաճանեցին, նա նստեց վերջին աստիճանին, աչքերը ծածկեց թաշկինակով և հանկարծ սկսեց հեկեկալ բարձրաձայն, բայց առանց արցունքի: Այդ ժամանակ հաշտի մոտով անցնում էր դռնապանը: Նա կանգ առավ ու ականջ դրեց:

— Մարֆա, Մարֆա,— բղավեց նա, մոտենալով իր ճենճոտ դռանը:— Հլա եկ Էստեղ, ականջ արա, թե էստեղ մեկը ոնց է ոռնում, ոնց որ գազան: Մտածեցի, թե խո մեր Արաբը չի պոկվել շղթայից, բայց չէ, դա Արաբը չէ:

— Չէ, սա Արաբը չէ,— ականջ դնելով կրկնեց Մարֆան:— Էս ի՞նչ զարմանք բան է:

— Գնա մի լապտերը բեր, էնտեղ վառարանի հետևը կախած է:

Մարֆան բերեց լապտերը:

— Դեռ ոռնո՞ւմ է,— հարցրեց նա:

— Ոռնում է: Ավազակի մեկը չլինի՞ մտած:

— Ո՞վ է,— հարցրեց դռնապանը:

Պատասխան չկա:

— Ո՞վ է,— կրկնեց Մարֆան:

Նույն ոռնոցը: Նրանք երկուսն էլ ներս մտան միանգամից: Ադուևը դուրս նետվեց:

— Ախ, սա ինչ-որ պարոն է,— ասաց Մարֆան, նրա հետևից նայելով,— իսկ դու հնարեցիր՝ ավազակ: Տես թե խելքդ կտրեց բան ասելու: Ավազակն էլ ուրիշի հաշտում ոռնա՞:

— Դե, երևի, ուրեմն, հարբած է:

— Ավելի՜ լավ,— պատասխանեց Մարֆան:— Կարծում ես բոլորը քեզ պե՞ս են: Հո բոլոր հարբածները չեն ոռնում, ոնց որ դու:

— Բա ինչ է, քաղցից է՞ր ոռնում,— սրդողած նկատեց դռնապանը:

— Ինչ,— ասաց Մարֆան, նայելով նրան և չիմանալով, թե ինչ ասի:— Ի՞նչ իմանաս, գուցե որևէ բան է գցել կորցրել՝ փող...

Նրանք երկուսն էլ հանկարծ պպզեցին լապտերը ձեռքերին և սկսեցին տնտղել հատակի բոլոր անկյունները:

— Բա՜ն է գցել,— փնթփնթում էր դռնապանը, հատակը լուսավորելով:— Էստեղ ի՞նչ պիտի կորցնի: Սանդուղքը մաքուր է, քարե, էստեղ ասեղն էլ կտեսնես... Բա՜ն է գցել: Թե որ բան գցեր, ձենը կիմացվեր. քարին կպչեր՝ կզրնգար, բա չէ՞ր վերցնի: Էստեղ ի՞նչ պիտի կորցնի: Կորցնելու տեղ չկա... Բան է գցել: Ոնց չի գցել. էտե՛նցն է, որ գցի: Ո՛նց չէ, կգցի: Չէ, դրա նմանը, հավատա, ինքը կաշխատի գրպանը մի բան դնել: Թե չէ՝ բա՜ն է գցել: Գիտենք էդ սրիկաներին, ըհը, գցե՞լ է: Որտե՞ղ է գցել:

Եվ դեռ երկար նրանք սողում էին հատակին, կորցրած փող որոնելով:

— Չէ, չկա,— հոգոց հանելով, վերջապես ասաց դռնապանը, հետո փչեց, հանգցրեց մոմը և, երկու մատով պատրույգը սեղմելով, մատները քսեց քուրքին:

VI

Այդ երեկո, ժամը տասներկուսին մոտ, երբ Պյոտր Իվանիչը մի ձեռքին մոմն ու գիրքը բռնած, մյուսով՝ խալաթի փեշը, առանձնասենյակից գնում էր ննջարան՝ քնելու, սենեկապանը նրան զեկուցեց, որ Ալեքսանդր Ֆյոդորիչը ցանկանում է նրա հետ տեսնվել:

Պյոտր Իվանիչը հոնքերը կիտեց, փոքր-ինչ մտածեց, հետո հանդարտ ասաց.

— Խնդրիր առանձնասենյակ, ես հիմա կգամ:

— Բարև, Ալեքսանդր,— այնտեղ վերադառնալով, ողջունեց նա եղբորորդուն,— վաղուց է իրար չենք տեսել: Մեկ ցերեկով քեզ տեսնել չի լինի, իսկ հիմա հանկարծ՝ հո՛պ, գիշերով: Ինչո՞ւ այսքան ուշ: Բայց ի՞նչ է պատահել քեզ: Երեսիդ գույն չկա:

Ալեքսանդրը, առանց մի խոսք պատասխանելու, ծայրահեղ ուժասպառությամբ նստեց բազկաթոռին: Պյոտր Իվանիչը հետաքրքրությամբ նայում էր նրան:

Ալեքսանդրը հոգոց հանեց:

— Արդյոք առո՞ղջ ես,— հոգածությամբ հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Այո,— թույլ ձայնով պատասխանեց Ալեքսանդրը,— շարժվում եմ, ուտում, խմում, հետևաբար առողջ եմ:

— Բայց դու կատակ մի արա. խորհրդակցիր բժշկի հետ:

— Ինձ արդեն խորհուրդ են տվել և ուրիշները, բայց ոչ մի բժիշկ և ոչ մի օպոդելդոկ չի օգնի, իմ տկարությունը ֆիզիկական չէ...

— Ուրեմն քեզ ի՞նչ է պատահել: Հո տանուլ չե՞ս տվել կամ փող չե՞ս կորցրել,— եռանդով հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Դուք ոչ մի կերպ չե՞ք կարող պատկերացնել անդրամ վիշտ,— պատասխանեց Ալեքսանդրը, ջանալով ժպտալ:

— Ուրեմն այդ ի՞նչ վիշտ է, եթե մի քոռ գրոշ էլ չարժե, ինչպես երբեմն լինում է քոնը...

— Այո, ահա ինչպես, օրինակ, հիմա: Արդյոք դուք գիտե՞ք իմ իսկական վիշտը:

— Ի՞նչ վիշտ: Ձեր տանն ամեն ինչ բարեհաջող է. ես այդ գիտեմ նամակներից, որոնցով մայրիկդ ամեն ամիս ինձ հյուրասիրում է, պաշտոնատեղումդ արդեն դրանից ավելի վատ ոչինչ չի կարող լինել, ինչ որ եղավ. ստորադրյալին դրել են վզներին. դա ամենաետին գործն է: Ինքդ ասում ես, որ առողջ ես, փող չես կորցրել, տանուլ չես տվել... ահա թե ինչն է կարևոր, իսկ մնացած ամեն ինչից հեշտ է գլուխ հանել. այնտեղ մնում է դատարկ բան, սերը, կարծում եմ...

— Այո, սերը. բայց գիտե՞ք, թե ինչ է պատահել: Երբ իմանաք, գուցե դադարեք այդպես թեթև դատել, և կսարսափեք...

— Հապա պատմիր. վաղուց է չեմ սարսափել,— ասաց հորեղբայրը նստելով,— ասենք, դժվար չէ կռահելը, հավանաբար, խաբել են...

Ալեքսանդրը վեր ցատկեց, ուզեց ինչ-որ բան ասել, բայց ոչինչ չասաց և նստեց տեղը:

— Ինչ, ճի՞շտ է: Տեսնո՞ւմ ես, ես ասում էի, իսկ դու՝ «Ոչ, ինչպե՞ս կարելի է»:

— Մի՞թե կարելի էր նախազգալ...— ասաց Ալեքսանդրը:— Այն բոլորից հետո...

— Պետք էր ոչ թե նախազգալ, այլ նախատեսել, այսինքն՝ գիտենալ, սա ավելի ճիշտ է, և այդպես էլ գործել:

— Դուք կարող եք այդպես հանգիստ դատել, հորեղբայր, երբ ես...— ասաց Ալեքսանդրը:

— Իսկ ի՞նձ ինչ:

— Ես մոռացել էի. ձեզ համար թեկուզ ամբողջ քաղաքն այրվի կամ կործանվի՝ միևնույն է:

— Մի սրան տեսեք. իսկ գործարա՞նս:

— Դուք կատակում եք, իսկ ես տառապում եմ առանց կատակի, ինձ համար ծանր է, ես իրոք հիվանդ եմ:

— Մի՞թե իսկապես դու սիրուց ես այդպես նիհարել: Ի՜նչ խայտառակություն: Ոչ. դու հիվանդ էիր, իսկ հիմա սկսում ես առողջանալ, և ժամանակն է: Կատա՞կ բան է, տարի ու կես է՝ ձգվում է այդ հիմարությունը: Եվս մի քիչ, հավատա, ես էլ կհավատայի անդավաճան և հավերժական սիրուն:

— Հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը:— Խնայեցեք ինձ, հիմա դժոխք է իմ հոգում...

— Հա՛: Ուրեմն ի՞նչ:

Ալեքսանդրը իր բազկաթոռը մոտեցրեց սեղանին, իսկ հորեղբայրն սկսեց եղբորորդուց հեռացնել թանաքամանը, presse papier-ն և այլն:

«Եկել է գիշերով,— մտածեց նա,— հոգում դժոխք է... անպայման նորից որևէ բան կջարդի»:

— Ձեզ մոտ մխիթարություն չեմ գտնի և չեմ էլ պահանջում,— սկսեց Ալեքսանդրը,— ես խնդրում եմ ձեր օգնությունը որպես հորեղբորից, որպես ազգականից… Ես ձեզ հիմար եմ թվում, այնպես չէ՞:

— Այո, եթե չլինեիր խղճալի:

— Ուրեմն դուք ինձ խղճո՞ւմ եք:

— Շատ: Մի՞թե ես փայտ եմ: Բարի տղա է, խելացի, կարգին դաստիարակված, բայց զուր տեղը կորչում է, և ինչի՞ց: Դատա՛րկ բաներից:

— Դե ապացուցեք, որ ինձ խղճում եք:

— Ի՞նչ կա որ: Փող, ասում ես, պետք չէ...

— Փո՛ղ, փո՛ղ: Օ, եթե իմ դժբախտությունը միայն փողի պակասությունը լիներ, ես կօրհնեի իմ ճակատագիրը:

— Այդպես մի ասա,— լրջորեն նկատեց Պյոտր Իվանիչը,— դու ջահել ես, կանիծես, և ոչ թե կօրհնես ճակատագիրը: Ես, պատահել է, հաճախ անիծել եմ, ե՛ս...

— Ուրեմն լսեցեք ինձ համբերությամբ...

— Դու երկա՞ր ես մնալու, Ալեքսանդր,— հարցրեց հորեղբայրը:

— Այո, ինձ հարկավոր է ձեր ողջ ուշադրությունը. իսկ ի՞նչ է որ:

— Ուրեմն, գիտե՞ս ինչ, ես ուզում եմ ընթրել: Ես պատրաստվել էի առանց ընթրելու քնել, իսկ հիմա, եթե երկար ենք նստելու, ուրեմն կընթրենք, մի շիշ էլ գինի կխմենք, այդ ընթացքում դու ինձ ամեն ինչ կպատմես:

— Դուք կարող եք ընթրե՞լ,— հարցրեց Ալեքսանդրը զարմանքով:

— Այո, և շատ լավ կարող եմ, իսկ մի՞թե դու չես ընթրի:

— Ես՝ ընթրե՛մ: Դուք էլ նույնիսկ մի պատառ կուլ չեք տա, երբ կիմանաք, որ բանը կյանքի ու մահվան մասին է:

— Կյանքի ու մահվա՞ն...— կրկնեց հորեղբայրը:— Այո, իհարկե, դա շատ կարևոր է, բայց համենայն դեպս փորձենք, գուցե և կուլ տանք:

Նա զանգահարեց.

— Հարցրու,— ասաց նա ներս եկած սենեկապետին,— ի՞նչ կա այնտեղ ընթրելու,— և պատվիրիր մի շիշ լաֆիտ ճարել, կանաչ կնիքով:

Սենեկապետը գնաց:

— Հորեղբա՛յր: Դուք հոգեկան այնպիսի տրամադրության մեջ չեք, որպեսզի լսեք իմ վշտի տխուր պատմությունը,— ասաց Ալեքսանդրը, գլխարկը վերցնելով,— ավելի լավ է, վաղը գամ…

— Ոչ, ոչ, ոչինչ,— հապճեպ ասաց Պյոտր Իվանիչը, պահելով եղբորորդուն՝ ձեռքից բռնելով,— ես միշտ հոգեկան նույն տրամադրության մեջ եմ: Վաղը, մեկ էլ տեսար, նույնիպես ինձ կգտնես նախաճաշելիս կամ ավելի վատ՝ աշխատելիս: Ավելի լավ է միանգամից վերջացնենք: Ընթրիքը գործը չի փչացնում: Ես ավելի լավ ականջ կդնեմ ու կհասկանամ: Քաղցած փորին, գիտե՞ս, անհարմար է...

Ընթրիքը բերին:

— Դե, Ալեքսանդր, արի...— ասաց Պյոտր Իվանիչը:

— Ես ուտել չեմ ուզում, հորեղբայր,— անհամբերությամբ ասաց Ալեքսանդրը և ուսերը թոթվեց, տեսնելով, թե հորեղբայրը ինչպես էր իրար անցել ընթրիքի շուրջը:

— Գոնե մի բաժակ գինի խմիր, գինին վատ չէ:

Ալեքսանդրը բացասաբար թափահարեց գլուխը:

— Դե, ուրեմն սիգար վերցրու և պատմիր, իսկ ես կլսեմ զույգ ականջով,— ասաց Պյոտր Իվանիչը և աշխուժով սկսեց ուտել:

— Դուք կոմս Նավինսկուն ճանաչո՞ւմ եք,— հարցրեց Ալեքսանդրը փոքր-ինչ լռելուց հետո:

— Կոմս Պլատոնի՞ն:

— Այո:

— Բարեկամներ ենք. իսկ ի՞նչ կա:

— Շնորհավորում եմ, որ այդպիսի բարեկամ ունեք. սրիկա՜ն:

Պյոտր Իվանիչը հանկարծ դադարեց ծամելուց և զարմացած նայեց եղբորորդուն:

— Ա՛յ քեզ բան,— ասաց նա:— Իսկ դու մի՞թե ճանաչում ես նրան:

— Շատ լավ:

— Վաղո՞ւց:

— Մի երեք ամիս:

— Բա էդ ինչպե՞ս: Ես մոտ հինգ տարի է ճանաչում եմ նրան և միշտ կարգին մարդ էի համարում, և ումից էլ որ լսես, բոլորը գովում են, իսկ դու հանկարծ այդպես ոչնչացրիր նրան:

— Վաղո՞ւց է, որ դուք սկսել եք մարդկանց պաշտպանել, հորեղբայր: Իսկ առաջ լիներ...

— Ես առաջ էլ պաշտպանում էի կարգին մարդկանց: Իսկ դու վաղո՞ւց ես սկսել հայհոյել նրանց, դադարել նրանց հրեշտակ անվանելուց:

— Քանի դեռ չէի ճանաչում, իսկ հիմա... Օ մարդիկ, մարդիկ, **թշվառ սերունդ, ծաղրի և արցունքի արժան:** Խոստովանում եմ, ամեն կողմից մեղավոր եմ, որ չեմ լսել ձեզ, երբ ինձ խորհուրդ էիք տալիս զգուշանալ ամեն տեսակ...

— Հիմա էլ խորհուրդ կտամ. զգուշանալը չի խանգարում. եթե պարզվի, որ անպիտան է, չես խաբվի, իսկ թե կարգին մարդ է՝ հաճելիորեն սխալված կլինես:

— Ցույց տվեք, որտե՞ղ են կարգին մարդիկ,— ասաց Ալեքսանդրը արհամարհանքով:

— Ահա թեկուզ ես ու դու. ինչո՞վ կարգին չենք: Կոմսը, քանի որ նրա մասին խոսք եղավ, նույնպես կարգին մարդ է. դե քի՛չ կան: Բոլորն էլ որևէ վատ բան կունենան... բայց ամեն ինչ վատ չի և ամենքը վատ չեն:

— Բոլո՛ր, բոլո՛ր,— վճռականորեն ասաց Ալեքսանդրը:

— Իսկ դո՞ւ:

— Ե՞ս: Ես համենայն դեպս ամբոխի միջից կտանեմ փշրված, բայց ստորություններից զերծ սիրտս, հոգիս՝ որ հոշոտված է, բայց որին չի կարելի հանդիմանել ստի, կեղծիքի, դավաճանության համար, չեմ վարակվի...

— Դե լավ, տեսնենք: Իսկ ի՞նչ է արել քեզ կոմսը:

— Ինչ է արե՞լ: Ինձնից հափշտակել է ամեն ինչ:

— Ասա ավելի որոշակի: Ամեն ինչի տակ աստված գիտի, թե ինչ կարելի է ենթադրել, գուցե և փող. նա այդպիսի բան չի անի...

— Այն, ինչ որ ինձ համար թանկ է աշխարհի բոլոր գանձերից,— ասաց Ալեքսանդրը:

— Ի՞նչ պիտի լինի դա:

— Ամեն ինչ. երջանկությունս, կյանքս:

— Չէ՞ որ դու ողջ ես:

— Դժբախտաբար՝ այո: Բայց այս կյանքը հարյուր մահից վատ է:

— Դե ուղղակի ասա, ի՞նչ է պատահել:

— Սարսափելի՜ է,— բացականչեց Ալեքսանդրը:— Աստվա՜ծ: Աստվա՜ծ:

— Է՜: Հո քեզնից չի՞ խլել քո գեղեցկուհուն, այդ... ինչպե՞ս էր: Հա՜: Նա վարպետ է այդ գործում. քեզ դժվար է նրա հետ ոտ մեկնել: Խելառ է, խելառ,— ասաց Պյոտր Իվանիչը, բերանը դնելով մի կտոր հնդկահավի միս:

— Նա թանկ կվճարի իր վարպետության համար,— ասաց Ալեքսանդրը բռնկվելով:— Ես չեմ զիջի առանց վեճի… Մահը կվճռի, թե մեզանից ով կտիրանա Նադինկային: Ես կբնաջնջեմ այդ գռեհիկ կնամոլին: Նա չի՜ ապրելու, չի՜ վայելելու հափշտակած գանձը... Ես նրան կջնջե՜մ երկրի երեսից...

Պյոտր Իվանիչը ծիծաղեց:

— Գավառ,— ասաց նա:— A propos */Ի դեպ (ֆրանս.):/,* կոմսի մասին, Ալեքսանդր. նա չի՞ ասել, արդյոք արտասահմանից նրա համար չե՞ն բերել ճենապակի: Նա գարնանը դուրս էր գրել մի պարտիա. կուզենայի տեսնել...

— Ճենապակու մասին չէ խոսքը, հորեղբայր. դուք լսեցի՞ք, ինչ ասացի,— ահեղ ընդմիջեց Ալեքսանդրը:

— Ը՜մմմ-մ,— դրականորեն բառաչեց հորեղբայրը, ոսկորը կրծոտելով:

— Եվ ի՞նչ կասեք:

— Ոչինչ: Ես ականջ եմ դնում, թե դու ինչ ես ասում:

— Ականջ արեք կյանքում գեթ մեկ անգամ ուշադիր. ես եկել եմ գործով, ես ուզում եմ լուծել միլիոն տանջալից հարցեր, որոնք հուզում են ինձ... ես գլուխս կորցրել եմ... ինքս ինձ չեմ հիշում, օգնեցեք ինձ...

— Խնդրեմ, պատրաստ եմ ծառայելու, ասա միայն, թե ինչ է պետք... ես պատրաստ եմ նույնիսկ փողով... եթե միայն դատարկ բաների համար չէ...

— Դատարկ բանե՜ր: Ոչ, դատարկ բաներ չեն, երբ, գուցե մի քանի ժամից հետո ես աշխարհի երեսին չեմ լինի կամ կդառնամ մարդասպան... իսկ դուք ծիծաղում եք, սառնարյուն ընթրում:

— Խոնարհաբա՜ր խնդրում եմ: Ինքդ, կարծում եմ, կուշտ ընթրել ես, իսկ ուրիշը չպիտի ընթրի:

— Ես երկու օր է չգիտեմ, ինչ բան է ուտելը:

— Օ, դա իրո՞ք ինչ-որ կարևոր բան է:

— Ասացեք մի խոսք. ինձ կմատուցե՞ք մի մեծագույն ծառայություն:

— Ինչպիսի՞:

— Կհամաձայնե՞ք իմ մարտավկան լինել...

— Կոտլետները բոլորովին սառն են,— նկատեց Պյոտր Իվանիչը, դժգոհությամբ մի կողմ քշելով սկուտեղը:

— Դուք ծիծաղո՞ւմ եք, հորեղբայր:

— Ինքդ դատիր. ինչպե՞ս կարող եմ հանգիստ լսել այդպիսի ցնդաբանությունը. մարտավկա է կանչում:

— Իսկ դուք ի՞նչ:

— Հասկանալի է թե ինչ. չեմ գա:

— Լավ. կգտնվի ուրիշը, կողմնակի մարդ, որը կկարեկցի իմ դառն վիրավորանքին: Դուք միայն ձեր վրա վերցրեք կոմսի հետ խոսելու, պայմաններն իմանալու նեղությունը...

— Չեմ կարող. լեզուս չի դառնա նրան այդպիսի հիմարություն առաջարկելու:

— Ուրեմն մնաք բարո՛վ,— ասաց Ալեքսանդրը, գլխարկը վերցնելով:

— Ի՞նչ: Դու արդեն գնո՞ւմ ես: Գինի չե՞ս ուզում խմել...

Ալեքսանդրը գնաց դեպի դուռը, բայց դռան մոտ մեծագույն վիատությամբ նստեց աթոռին:

— Ո՞ւմ մոտ գնամ, ո՞ւմ մեջ փնտրեմ կարեկցություն... — կամացուկ ասաց նա:

— Լսիր, Ալեքսանդր,— սկսեց Պյոտր Իվանիչը, անձեռոցիկով բերանը սրբելով և բազկաթոռը մոտ քշելով եղբորորդուն,— տեսնում եմ, որ քեզ հետ իսկապես պետք է խոսել առանց կատակի: Խոսենք ուրեմն: Դու ինձ մոտ ես եկել օգնության համար. ես քեզ կօգնեմ, միայն այլ կերպ, քան դու կարծում ես, և մի պայմանով, որ հնազանդվես: Ոչ ոքի մի կանչիր մարտավկա. բան դուրս չի գա: Դատարկ բաներից պատմություն կսարքես, դա ամեն տեղ կտարածվի, քեզ ծաղրի առարկա կդարձնեն կամ, ավելի վատ՝ տհաճություններ կպատճառեն: Ոչ ոք չի գա, իսկ եթե, վերջապես, գտնվի մի խելագար, միևնույն է, ամեն ինչ իզուր կանցնի. կոմսը չի մենամարտի, ես նրան ճանաչում եմ:

— Չի՛ մենամարտի: Ուրեմն նրա մեջ չկա ազնվության մի կաթիլ,— չարությամբ նկատեց Ալեքսանդրը:— Ես չէի ենթադրում, թե նա այդ աստիճան ստոր է:

— Նա ստոր չի, այլ միայն խելացի է:

— Ուրեմն, ձեր կարծիքով, ես հիմա՞ր եմ:

— Օ... ոչ, սիրահարված ես,— ասաց Պյոտր Իվանիչը հատ-հատ:

— Եթե դուք, հորեղբայր, մտադիր եք ինձ բացատրել մենամարտի անիմաստությունը, որպես նախապաշարմունքի, ապա ես նախազգուշացնում եմ ձեզ՝ դա զուր աշխատանք է. ես հաստատ կմնամ:

— Ոչ. դա արդեն վաղուց ապացուցված է, որ մենամարտելն առհասարակ հիմարություն է, բայց շարունակ մենամարտում են. քի՞չ կան ավանակներ: Նրանց գլուխը չես մտցնի: Ես ուզում եմ ապացուցել, որ հատկապես դու չպետք է մենամարտես:

— Հետաքրքիր է, ինչպե՞ս կհամոզեք ինձ:

— Ահա լսիր: Հապա մի ասա, դու ո՞ւմ վրա ես առանձնապես բարկացած. կոմսի՞ թե նրա… այն ինչպես էր… Անյուտա՞ էր, ինչ էր:

— Ես կոմսին ատում եմ, Նադինկային արհամարհում,— ասաց Ալեքսանդրը:

— Սկսենք կոմսից. ենթադրենք, նա կընդունի քո մարտահրավերը, ենթադրենք նույնիսկ, որ դու կգտնես մի հիմար մարտավկա, դրանով ի՞նչ: Կոմսը քեզ ճանճի պես կսպանի, իսկ հետո հենց քո իսկ վրա կծիծաղեն. լա՛վ վրեժ է: Իսկ չէ՞ որ այդ չէ քո ուզածը. դու կուզենայիր բնաջնջել կոմսին:

— Հայտնի չէ, թե ով ում կսպանի,— ասաց Ալեքսանդրը:

— Հավանական է՝ նա քեզ: Չէ՞ որ դու, կարծեմ, բոլորովին կրակել չգիտես, իսկ ըստ կանոնների առաջին կրակոցը նրանն է:

— Այստեղ կվճռի աստծու դատաստանը:

— Դե, ինչպես կուզես, նա կվճռի օգուտ կոմսի: Կոմսը, ասում են, տասնհինգ քայլի վրա գնդակը գնդակի վրա է շարում, իսկ քեզ համար, հակառակի պես պիտի վրիպի՛: Ենթադրենք նույնիսկ, որ աստծու դատաստանը թող տվեց այդպիսի անճարակություն և անարդարություն. դու մի կերպ հանկարծ ու սպանեցիր նրան, ի՞նչ միտք: Մի՞թե դրանով կվերադարձնեիր գեղեցկուհուդ սերը: Ոչ, նա քեզ կսկսեր ատել, և ընդսմին քեզ զինվոր կտանեին... իսկ որ գլխավորն է, դու հաջորդ օրը կսկսեիր հուսահատությունից մազերդ փետել ու անմիջապես կսառչեիր դեպի գեղեցկուհիդ...

Ալեքսանդրը արհամարհանքով ուսերը թոթվեց:

— Դուք այնքան ճարպիկ եք դատողություն անում այդ մասին, հորեղբայր,— ասաց նա,— դատեցեք, ուրեմն, ես ի՞նչ անեմ իմ այս վիճակում:

— Ոչի՛նչ: Գործը թող այնպես, ինչպես կա. դա արդեն փչացած է:

— Թողնել երջանկությունը նրա ձեռքի՞ն, թողնել նրան որպես հպարտ տիրո՞ղ... Օ՛: Կարո՞ղ է ինձ կասեցնել որևէ սպառնալիք: Դուք չգիտեք իմ տառապանքները: Դուք երբեք չեք սիրել, եթե մտածում եք ինձ խանգարել այդ սառը բարոյախոսությամբ... ձեր երակներում հոսում է կաթ, ոչ թե արյուն...

— Հերիք է դուրս տաս, Ալեքսանդր: Քի՞չ կան աշխարհում այնպիսիք, ինչպես քո Մարիան է, թե Սոֆիա է, ինչ է:

— Նրա անունը Նադեժդա է:

— Նադե՞ժդա: Իսկ Սոֆիա՞ն որն էր:

— Սոֆիան... գյուղում է,— ասաց Ալեքսանդրը դժկամ:

— Տեսնո՞ւմ ես,-— շարունակեց հորեղբայրը:— Այնտեղ Սոֆիա է, այստեղ Նադեժդա, մի ուրիշ տեղ Մարիա: Սիրտը շատ խորունկ ջրհոր է. երկար ժամանակ հատակը չես կարող շոշափել: Նա սիրում է մինչև ծերություն…

— Ոչ, սիրտը սիրում է մի անգամ...

— Եվ դու կրկնում ես ուրիշներից լսածը: Սիրտը սիրում է այնքան ժամանակ, մինչև չի ծախսում իր ուժերը: Նա ապրում է իր կյանքով և, նույնպես ինչպես ամեն ինչ մարդու մեջ, ունի իր ջահելությունն ու ծերությունը: Չհաջողվեց մի սերը, նա միայն թալկանում է, լռում մինչև հաջորդ սերը. հաջորդ սերը խանգարեցին՝ անջատեցին, սիրելու ընդունակությունը նորից մնում է չգործածված մինչև երրորդ, չորրորդ անգամը, այնքան ժամանակ, մինչև վերջապես սիրտը իր բոլոր ուժերը դնի մի որևէ երջանիկ հանդիպման մեջ, որտեղ ոչինչ չի խանգարում, իսկ հետո դանդաղ և աստիճանաբար կսառչի: Ոմանց սերը հաջողվում է առաջին անգամից, և ահա նրանք բղավում են, թե սիրել կարելի է միայն մեկ անգամ: Քանի դեռ մարդ ծեր չի, առողջ է...

— Դուք, հորեղբայր, շարունակ խոսում եք ջահելության, հետևաբար՝ նյութական սիրո մասին...

— Խոսում եմ ջահելության մասին, որովհետև ծերունական սերը սխալմունք է, այլանդակություն: Եվ ի՞նչ բան է նյութական սերը: Այդպիսի սեր չկա կամ դա սեր չի, ճիշտ այնպես, ինչպես չկա միայն իդեալական սեր: Սիրո մեջ հավասարապես մասնակցում են և՛ հոգին, և՛ մարմինը. այլապես սերը կատարյալ չէ, մենք ոչ ոգիներ ենք, ոչ էլ գազաններ: Չէ՞ որ ինքդ ես ասում. «Երակներումդ հոսում է կաթ, ոչ թե արյուն»: Դե, ահա տեսնո՞ւմ ես. մի կողմից վերցրու արյունը երակներում. դա նյութական է. մյուս կողմից՝ ինքնասիրությունը, սովորույթը, դա հոգեկանն է. ահա քեզ սերը: Ինչի՞ վրա կանգ առա... հա՛. զինվոր կտանեն. բացի դրանից, այդ պատմությունից հետո գեղեցկուհիդ թույլ չի տա, որ աչքին երևաս: Դու ուղղակի կվնասեիր թե նրան, թե քեզ, տեսնո՞ւմ ես: Հուսով եմ, այս հարցը մի կողմից մենք մշակեցինք վերջնականապես: Հիմա…

Պյոտր Իվանիչը գինի լցրեց ու խմեց.

— Այ քեզ տխմա՛ր,— ասաց նա:— Սառը լաֆիտ է տվել:

— Հիմա ասա,— շարունակեց հորեղբայրը, բաժակը տաքացնելով երկու ձեռքերում,— ինչո՞ւ էիր ուզում կոմսին ջնջել աշխարհի երեսից:

— Ես ձեզ արդեն ասացի, թե ինչու: Նա՞ չէր, որ ոչնչացրեց իմ երանությունը: Նա վայրի գազանի պես խուժեց...

— Փարա՛խը,— ընդմիջեց հորեղբայրը:

— Գողացավ ամեն ինչ,— շարունակեց Ալեքսանդրը:

— Նա ոչ թե գողացավ, այլ եկավ ու վերցրեց: Մի՞թե նա պարտավոր էր տեղեկանալ, արդյոք զբաղվա՞ծ է քո գեղեցկուհին թե ոչ: Ես չեմ հասկանում այդ հիմարությունը, որը, ճիշտն ասած, սիրահարների մեծ մասը անում է աշխարհի ստեղծման օրից մինչև մեր ժամանակները. բարկանում են ախոյանի վրա: Կարո՞ղ է ավելի անիմաստ բան լինել՝ **ջնջել նրան աշխարհի երեսից:** Ինչի՞ համար: Նրա համար, որ դուր է եկել: Կարծես թե նա մեղավոր է և կարծես թե դրանից գործերը կլավանան, եթե նրան պատժենք: Իսկ քո… անունը ի՞նչ էր. Կատենկա թե ինչ. դիմադրե՞լ է նրան: Որևէ ճիգ գործադրե՞լ է, որ վտանգից խուսափի: Նա ինքն է անձնատուր եղել, դադարել է քեզ սիրելուց, վիճելու կարիք էլ չկա՝ չես վերադարձնի: Իսկ պնդելը էգոիզմ է: Կնոջից հավատարմություն պահանջել՝ սրանում դեռ իմաստ կա. այստեղ պարտավորություն է կնքված. դրանից հաճախ կախված է ընտանիքի Էական բարեկեցությունը. և նույնիսկ այստեղ էլ չի կարելի պահանջել, որ նա ոչ ոքի չսիրի... այլ միայն կարելի է պահանջել, որ նա... էնիքը... Եվ հենց ինքդ չե՞ս Նադինկային երկու ձեռքով հանձնել կոմսին: Վիճարկե՞լ ես քո իրավունքը նրա նկատմամբ:

— Ես էլ հենց ուզում եմ վիճարկել,— ասաց Ալեքսանդրը, տեղից վեր թռչելով,— իսկ դուք կասեցնում եք իմ ազնիվ մղումը...

— Վիճարկել դանակը ձեռքի՞ն,— ընդհատեց հորեղբայրը:— Մենք կիրգիզական տափաստանում չենք: Ուսյալ աշխարհում ուրիշ զենք կա: Դա պետք է ձեռքն առնել ժամանակին և այլ կերպ, կոմսի հետ այլ տեսակի մենամարտ վարել, քո գեղեցկուհու աչքում:

Ալեքսանդրը տարակուսած նայում էր հորեղբորը:

— Այդ ինչպիսի՞ մենամարտ է,— հարցրեց նա:

— Այ հիմա կասեմ: Դու ինչպե՞ս ես գործել մինչև հիմա:

Ալեքսանդրը, բազմաթիվ խոտորումներով, մեղմացումներով, խուսափանքներով, մի կերպ, ծամածռվելով պատմեց գործի ամբողջ ընթացքը:

— Գիտե՞ս ինչ: Ամեն ինչում ամբողջովին ինքդ ես մեղավոր,— ասաց Պյոտր Իվանիչը, լսելով պատմությունը և կնճռոտվելով,— ինչքա՜ն հիմարություններ ես արել: Է՜խ, Ալեքսանդր, սատանան բերեց քեզ այստեղ: Արժե՞ր դրա համար գալ: Դու այդ ամենը կարող էիր անել այնտեղ, ձեզ մոտ, լճի ափին, մորաքրոջդ հետ: Ինչպե՞ս կարելի է այդպես երեխայություններ անել, տեսարաններ սարքել... կատաղել: Թո՜ւ: Հիմա ո՞վ է այդպես անում: Բա որ քո... անունն ի՞նչ էր, Յուլիան... ամեն ինչ կոմսին պատմի: Բայց ոչ, փառք աստծու, դրանից վախենալու բան չունես: Հավանաբար նա այնքան խելոք է, որ ձեր հարաբերությունների մասին կոմսի հարցին ասել է...

— Ի՞նչ է ասել,— շտապ հարցրեց Ալեքսանդրը:

— Որ քեզ հիմարացրել է, որ դու սիրահարված ես եղել, որ դու զզվելի ես, ձանձրացրել ես նրան... ինչպես որ նրանք միշտ անում են…

— Դուք կարծում եք, որ նա... հենց այդպես էլ... ասե՞լ է,— հարցրեց Ալեքսանդրը գույնը գցելով:

— Առանց մի կասկածի: Մի՞թե դու երևակայում ես, թե նա կպատմի, թե ինչպես դուք այնտեղ այգում դեղին ծաղիկներ էիք հավաքում: Ինչպիսի՜ միամտություն:

— Իսկ ինչպիսի՞ մենամարտ պիտի անեմ կոմսի հետ,— անհամբերությամբ հարցրեց Ալեքսանդրը:

— Ահա թե ինչպիսի. պետք չէր կոպտել, խուսափել նրանից ու ծամածռություններ անել նրան, այլ ընդհակառակն, նրա սիրալիրությանը պատասխանել կրկնակի, եռակի, տասնապատիկ, իսկ… այդ, անունն ի՞նչ էր, Նադինկայի՞ն: Կարծեմ գտա: Չգրգռել կշտամբանքներով, ներել նրա քմահաճույքները, ձևացնել, թե ոչինչ չես նկատում, որ դավաճանության մասին, որպես անհնար բանի, նույնիսկ մտքովդ չի անցնում: Չպետք է թույլ տայիր, որ մոտիկանային մտերմության աստիճան, այլ խանգարեիր վարպետորեն, կարծես առանց մտադրության, նրանց միայնակ տեսակցությունները, ամենուրեք հետները լինեիր, նույնիսկ նրանց հետ գնայիր ձիով զբոսանքների և նույն միջոցին սուսիկ-փուսիկ, Նադինկայի աչքի առաջ, ախոյանիդ մարտի հրավիրեիր և հենց այստեղ զինեիր ու առաջ մղեիր մտքիդ բոլոր ուժերը, գլխավոր մարտկոցը սարքեիր սրամտությունից, խորամանկությունից և էն... մերկացնեիր ու խոցեիր հակառակորդիդ թույլ կողմերը այնպես, կարծես պատահաբար, առանց նպատակի, բարեհոգությամբ, նույնիսկ դժկամությամբ, ափսոսանքով, և կամաց-կամաց նրա վրայից հանեիր այն քղամիդը, որով երիտասարդը փայլում է գեղեցկուհուդ առաջ: Պետք է նկատեիր, թե կոմսի մեջ ամենից ավելի ինչն է զարմացնում ու շլացնում աղջկան, և ապա վարպետորեն հարձակվեիր այդ կողմերի վրա, բացատրեիր դրանք հասարակ, ներկայացնեիր սովորական տեսքով, ցույց տայիր, որ նոր հերոսը... մի առանձին բան չի... և միայն նրա համար է տոնական զգեստ հագել... բայց այդ ամենը անեիր սառնարյունությամբ, համբերությամբ, վարպետորեն, ահա՛ իսկական մենամարտը մեր դարում: Բայց ի՜նչ քո բանն է:

Պյոտր Իվանիչը այդ ասելով խմեց բաժակը և անմիջապես նորից գինի լցրեց:

— Արգահատելի խորամանկությունն՝ե՛ր: Խորամանկությունների դիմել, որպեսզի տիրանաս կնոջ սրտին...— վրդովմունքով նկատեց Ալեքսանդրը:

— Իսկ մահակին դիմում ես. մի՞թե դա ավելի լավ է: Խորամանկությամբ կարելի է իր համար պահպանել որևէ մեկի կապվածությունը, իսկ ուժով՝ չեմ կարծում: Ախոյանին հեռացնելու ցանկությունը ինձ հասկանալի է. այստեղ իրար ես անցնում, որ քեզ պահես սիրածդ կնոջը, կանխում կամ վանում ես վտանգը, շատ բնական է: Բայց ծեծել ախոյանիդ այն բանի համար, որ նա սեր է արթնացրել դեպի ինքը, դա միևնույն է, թե ընկնես ջարդվես, հետո խփես այն տեղին, որին խփվել ես, ինչպես անում են երեխաները: Ինչպես կուզես, բայց կոմսը մեղավոր չէ: Ինչպես տեսնում եմ, սրտի գաղտնիքներից բան չես հասկանում, դրա համար էլ քո սիրային գործերը և վիպակները այդքան վատ են:

— Սիրային գործե՛ր,— ասաց Ալեքսանդրը արհամարհաբար գլուխն օրորելով:— Բայց մի՞թե գրավիչ ու հաստատուն է խորամանկությամբ ներշնչված սերը:

— Չգիտեմ, գրավիչ է արդյոք, դա՝ ով ինչպես կուզի, ինձ համար միևնույն է. ես առհասարակ սիրո մասին բարձր կարծիքի չեմ. դու այդ գիտես. ինձ համար՝ թեկուզ իսկի էլ չլինի... բայց որ ավելի հաստատուն է, դա ճշմարիտ է: Սրտի հետ ուղղակի գործել չի կարելի: Դա բարդ նվագարան է. չիմանաս՝ որ զսպանակին պիտի ձեռք տալ, աստված գիտի, թե ինչ կնվագի: Սեր ներշնչիր ինչով ուզում ես, բայց այն պահպանիր խելքով: Խորամանկությունը խելքի մի կողմն է. այստեղ արգահատելի ոչինչ չկա: Պետք չէ ստորացնել ախոյանին և զրպարտության դիմել, դրանով գեղեցկուհուն կզինես քո դեմ... միայն պետք է նրանից թոթափել այն փայլուն զարդարանքները, որոնցով նա շլացնում է սիրեցյալիդ աչքերը, նրան դարձնել հասարակ, սովորական մարդ և ոչ թե հերոս... ես կարծում եմ, ներելի է պաշտպանել իր բարիքը ազնիվ խորամանկությամբ. այդպիսի խորամանկությունը չեն արհամարհում նաև ռազմական գործում: Ահա դու ուզում էիր ամուսնանալ. լա՛վ ամուսին կլինեիր, եթե կնոջդ տեսարաններ սարքեիր, իսկ ախոյաններիդ մահակ ցույց տայիր և լինեիր... էնիք...

Պյոտր Իվանիչը ձեռքով ցույց տվեց ճակատը:

— Քո Վարինկան քեզնից քսան տոկոսով ավելի խելացի էր, երբ առաջարկում էր մի տարի սպասել:

— Կկարողանայի՞ խորամանկել, եթե անգամ իմանայի: Դրա համար մարդ պետք է ինձ պես չսիրի: Ոմանք երբեմն սառն են ձևանում հաշվենկատությամբ, մի քանի օր չեն ներկայանում և դա ազդում է... իսկ ե՞ս: Ձևացնեմ, հաշիվ անեմ, երբ նրան տեսնելիս շունչս էր կտրվում և ծնկներս դողում ու ծալվում էին տակիս: Երբ ես պատրաստ էի ամեն մի տանջանքի, միայն թե տեսնեի նրան… Ո՛չ: Ինչ ուզում եք, ասեք, բայց ինձ համար ավելի մեծ արբեցում է՝ սիրել հոգու բոլոր ուժերով, թեկուզև տառապել, քան սիրված լինել առանց սիրելու կամ սիրել մի տեսակ կիսատ-պռատ, զվարճության համար, զզվելի սիստեմով, և կնոջ հետ խաղ անել ինչպես սենյակային շնիկի հետ, իսկ հետո վանել...

Պյոտր Իվանիչը ուսերը թոթվեց:

— Դե, տառապիր, եթե քեզ համար քաղցր է,— ասաց նա:— Օ, գավա՛ռ: Օ, Ա՛սիա: Դու պիտի Արևելքում ապրեիր. այնտեղ դեռ հրամայում են կանանց, թե ում պետք է սիրել, իսկ եթե չեն լսում, նրանց ջրում խեղդում են: Ոչ, այստեղ,— շարունակում էր նա, կարծես ինքն իրեն,— որպեսզի մարդ կնոջ հետ երջանիկ լինի, այսինքն՝ ոչ քո ձևով, խելագարի պես, այլ խելացիորեն, շատ պայմաններ են պետք... պետք է կարողանալ մտածված ծրագրով, մեթոդով, աղջկանից կին դաստիարակել, եթե ուզում ես, որ նա հասկանա և կատարի այն, ինչի որ կոչված է: Պետք է նրա շուրջը մոգական շրջան գծել, ոչ շատ նեղ, որ նա չնկատի և չանցնի սահմանները, խորամանկորեն տիրանալ ոչ միայն նրա սրտին, դա ինչ է որ, դա սայթաքուն և անհաստատ տիրացում է, այլ խելքով, կամքով, նրա ճաշակն ու բնավորությունը ենթարկել քոնին, որպեսզի նա իրերին նայի քո միջով, մտածի քո խելքով...

— Այսինքն նրան դարձնել տիկնիկ կամ ամուսնու անխոս ստրուկը,— ընդհատեց Ալեքսանդրը:

— Ինչո՞ւ: Այնպես արա, որ նա ոչ մի բանում չդավաճանի կանացի բնույթին ու արժանապատվությանը: Նրան ազատություն տուր գործելու իր ոլորտում, բայց թող նրա ամեն մի շարժմանը, հառաչին, արարքին հետևի քո խորաթափանց միտքը, որպեսզի ամեն մի ակնթարթային հուզում, բռնկում, զգացմունքի սաղմ միշտ և ամենուրեք հանդիպեն ամուսնու արտաքուստ անտարբեր, բայց արթուն աչքին: Սահմանիր մշտական հսկողություն առանց բռնակալության... և վարպետորեն, նրա համար աննկատելի, և նրան առաջնորդիր ցանկալի ճանապարհով… Օ, հարկավոր է բարդ և դժվարին դպրոց, և այդ դպրոցը խելացի ու փորձառու տղամարդն է, ահա թե բանն ինչ է:

Նա նշանակալից հազաց և միանգամից պարպեց բաժակը:

— Այն ժամանակ,— շարունակեց նա,— ամուսինը կարող է հանգիստ քնել, երբ կինը նրա կողքին չի, կամ անհոգ նստել առանձնասենյակում, երբ նա քնած է...

— Ա՛: Ահա՛ ուրեմն ամուսնական երջանկության հանրահռչակ գաղտնիքը,— նկատեց Ալեքսանդրը,— կնոջ միտքը, սիրտը, կամքը խաբեությամբ շղթայել քեզ և մխիթարվել, հպարտանալ դրանով... դա երջանկություն է: Իսկ որ կինը նկատի՞:

— Ինչո՞ւ հպարտանալ,— հարցրեց հորեղբայրը:— Դա պետք չէ:

— Նայելով նրան, հորեղբայր,— շարունակեց Ալեքսանդրը,— թե ինչպես դուք անհոգ նստել եք առանձնասենյակում, երբ ձեր կինը քնած է, ես գլխի եմ ընկնում, որ այդ տղամարդը…

— Սը՛ս, սը՛ս... լռիր,— սկսեց հորեղբայրը, ձեռքը թափահարելով,— լավ է, որ կինս քնած է, թե չէ... էնիքը...

Այդ ժամանակ առանձնասենյակի դուռը սկսեց բացվել, բայց ոչ ոք չէր հայտնվում:

— Իսկ կինը պետք է,— խոսեց մի կանացի ձայն միջանցքից,— ցույց չտա, թե հասկանում է ամուսնու մեծ դպրոցի էությունը, և հիմնի իր փոքրիկ դպրոցը, բայց դրա մասին դուրս չտա գինու շիշն առաջին...

Երկու Ադուևև էլ նետվեցին դեպի դուռը, բայց միջանցքում հնչեց արագ ոտնաձայներ, զգեստի շրշյուն և ամեն ինչ լռեց:

Հորեղբայր ու եղբորորդի նայեցին իրար:

— Հը՛, ի՞նչ է, հորեղբայր,— հարցրեց եղբորորդին փոքր-ինչ լռելով:

— Ի՞նչ: Ոչի՞նչ,— ասաց Պյոտր Իվանիչը, հոնքերը կիտելով:— Անտեղի պարծեցա: Սովորիր, Ալեքսանդր, բայց ավելի լավ է մի ամուսնացիր կամ մի հիմար կին առ, խելոք կնոջ հետ գլուխ չես հանի. դժվարիմաց դպրոց է:

Նա մտասուզվեց, հետո ձեռքը խփեց ճակատին:

— Ինչպե՞ս գլխի չընկա, որ նա գիտեր քո ուշ այցելության մասին,— ասաց նա սրդողած,— որ կինը չի քնի, երթ մի սենյակ այն կողմ գաղտնիք կա երկու տղամարդու մեջ, որ նա անպայման կամ աղախնին կուղարկի, կամ ինքը... և չնախատեսե՞լ: Հիմարավարի է: Իսկ բոլորը քո և լաֆիտի այս անիծյալ բաժակի մեղքն է: Շատախոսեցի: Այսպիսի՛ դաս մի քսանամյա կնոջից...

— Դուք վախենում եք, հորեղբայր:

— Ինչի՞ց պիտի վախենամ: Ամենևին: Սխալ գործեցի, չպետք է կորցնել սառնարյունությունը, պետք է կարողանալ այս դրությունից դուրս գալ:

Նա նորից մտասուզվեց:

— Նա պարծեցավ,— սկսեց Պյոտր Իվանիչը հետո,— նա ի՞նչ դպրոց ունի: Նա չէր կարող դպրոց ունենալ. ջահել է: Նա այդ ուղղակի այնպես ասաց... բարկությունից: Բայց նա հիմա նկատեց այդ մոգական շրջանը, ինքն էլ կսկսի խորամանկել... Օ, ես գիտեմ կնոջ բնությունը: Բայց տեսնենք...

Նա հպարտ և ուրախ ժպտաց. ճակատի կնճիռները հարթվեցին:

— Միայն պետք է այլ կերպ վարել գործը,— ավելացրեց նա,— նախկին մեթոդը բանի պետք չէ: Հիմա պետք է…

Նա հանկարծ ուշքի եկավ ու լռեց, վախլուկ նայելով դռանը:

— Բայց այդ ամենը առաջիկայում,— շարունակեց նա,— հիմա զբաղվենք քո գործով, Ալեքսանդր: Ինչի՞ մասին էինք խոսում: Հա՛: Դու կարծեմ ուզում էիր սպանել թե ինչ, քո այդ... ինչպե՞ս էր անունը:

— Ես նրան չափազանց խոր եմ արհամարհում,— ասաց Ալեքսանդրը ծանր հառաչելով:

— Ահա տեսնո՞ւմ ես: Դու արդեն կիսով չափ բուժված ես: Միայն արդյոք ճի՞շտ է ասածդ: Դու կարծես, դեռ բարկանում ես: Ասենք, արհամարհիր, արհամարհիր. դա լավագույնն է քո վիճակում: Ես ուզում էի որոշ բաներ ասել... բայց չէ…

— Ախ, ասացեք, ի սեր աստծո, ասացե՛ք,— ասաց Ալեքսանդրը:— Ես հիմա խելքի մի կայծ չունեմ: Ես տառապում եմ, կործանվում եմ... տվեք ինձ ձեր սառն դատողությունը: Ասացեք ամեն ինչ, որ կարող է թեթևացնել ու հանգստացնել հիվանդ սիրտս...

— Հա, քեզ ասեմ, մեկ էլ տեսար՝ նորից կվերադառնաս այնտեղ…

— Ինչպիսի՛ միտք: Նրանից հետո...

— Վերադառնում են դրանից էլ վատից հետո: Ազնի՞վ խոսք՝ չես գնա:

— Կերդվեմ, եթե ուզում եք:

— Ոչ, ազնիվ խոսք տուր. դա ավելի հաստատ է:

— Ազնիվ խոսք:

— Դե, ահա, ուրեմն, մենք վճռեցինք, որ կոմսը մեղավոր չէ...

— Ենթադրեք թե այդպես է. հետո՞ ինչ:

— Դե, իսկ ինչո՞վ է մեղավոր քո այդ... անունն ի՞նչ էր:

— Ինչով է մեղավոր Նա՞դինկան,— զարմանքով առարկեց Ալեքսանդրը:— Նա մեղավոր չէ՞:

— Ո՛չ: Դե, ինչո՞վ, ասա՛: Նրան արհամարհելու պատճառ չունես:

— Պատճառ չունե՞մ: Չէ, հորեղբայր, սա արդեն բանի նման չէ: Ենթադրենք, կոմսը… դեռ ոչինչ… նա չգիտեր… բայց այդ էլ այդպես չէ: Իսկ Նա՞դինկան: Էլ ո՞վ է մեղավոր դրանից հետո: Ե՞ս:

— Համարյա թե այդպես, իսկ իրականում ոչ ոք: Ասա ինչի՞ համար ես նրան արհամարհում:

— Ստոր արարքի համար:

— Իսկ ինչո՞ւմ է կայանում այդ:

— Անշնորհակալությամբ հատուցել բարձր, անսահման սիրո փոխարեն...

— Այստեղ շնորհակալության ի՞նչ կա: Մի՞թե դու նրա համար, նրան հաճույք պատճառելու համար էիր սիրում: Ուզում էիր ծառայությո՞ւն մատուցել նրան, ինչ է: Դրա համար ավելի լավ է, մորդ սիրեիր:

Ալեքսանդրը նայում էր հորեղբորը և չգիտեր, թե ինչ պատասխանի:

— Դու չպետք է նրա առաջ դրսևորեիր զգացմունքդ ամբողջ ուժով. կինը սառչում է, երբ տղամարդն արտահայտվում է ամբողջովին... Դու պետք է իմանայիր նրա բնավորությունը և դրան համապատասխան գործեիր, այլ ոչ թե շնիկի նման պառկեիր նրա ոտների առաջ: Ինչպե՞ս կարելի է չճանաչել ընկերակցին, որի հետ մի որևէ գործ ունես: Դու այն ժամանակ կտեսնեիր, որ նրանից ավելին սպասել չի էլ կարելի: Նա մինչև վերջ խաղաց իր սիրավեպը քեզ հետ, ճիշտ այդպես կխաղա նաև կոմսի հետ և, կարող է պատահել, էլի որևէ մեկի հետ... նրանից ավելին պահանջել չի կարելի. նա ավելի բարձր ու ավելի հեռու գնացող չէ. դա այդպիսի բնավորություն չէ, իսկ դու աստվա՛ծ գիտի, թե ինչ ես երևակայել...

— Բայց ինչո՞ւ նա ուրիշին սիրեց,— դառնագին հարցրեց Ալեքսանդրը:

— Ահա՛ թե որն է մեղքը. խելացի՛ հարց: Ախ, դու, վայրենի՛: Իսկ ինչո՞ւ դու նրան սիրեցիր: Դե, շուտ, դադարիր սիրելուց:

— Մի՞թե դա ինձնից է կախված:

— Իսկ մի՞թե նրանից էր կախված կոմսին սիրելը: Հենց ինքդ էիր պնդում, թե չի կարելի ճնշել զգացմունքի պոռթկումը, իսկ հենց որ բանը հասավ քեզ, հարցնում ես՝ ինչո՞ւ սիրեց: Ինչո՞ւ այսինչը մեռավ, այնինչը խելագարվեց: Մարդ ինչպե՞ս պատասխանի այդպիսի հարցերի: Չէ՞ որ երբևէ պետք է վերջանա սերը. նա չի կարող հավիտյան շարունակվել:

— Ոչ, կարող է: Ես իմ մեջ զգում եմ սրտի այդ ուժը. ես կսիրեի հավերժական սիրով…

— Հա՛: Իսկ որ քեզ ավելի սաստիկ սիրեին, ետնաբակերը կփախչես: Բոլորն այդպես են, ես գիտեմ:

— Թող որ վերջանար նրա սերը,— ասաց Ալեքսանդրը,— բայց ինչո՞ւ այդպես վերջացավ...

— Միևնույն չէ՞: Չէ՞ որ քեզ սիրում էին, դու վայելում էիր, և բավական է:

— Ուրիշի՞ն տրվեց,— ասաց Ալեքսանդրը գունաթափվելով:

— Իսկ դու կուզենայի՞ր որ նա սուսիկ-փուսիկ ուրիշին սիրեր, իսկ քեզ շարունակեր հավատացնել, թե սիրում է: Դե, ինքդ վճռիր, թե նա ինչ աներ, արդյոք նա մեղավո՞ր է:

— Օ, ես վրե՜ժ կլուծեմ նրանից,— ասաց Ալեքսանդրը:

— Դու անշնորհակալ ես,— շարունակեց Պյոտր Իվանիչը,— դա վատ բան է: Կինը քեզ ինչ էլ որ անի՝ դավաճանի, սառչի, ինչպես բանաստեղծություններում են ասում՝ նենգ վարվի, մեղադրի բնությանը, այդ առթիվ անձնատուր եղիր, թեկուզ, փիլիսոփայական խոհերի, նախատիր աշխարհը, կյանքը, ինչ ուզում ես, բայց երբեք ոտնձգություն մի արա կնոջ անձնավորության դեմ, ո՛չ խոսքով, ո՛չ գործով: Կնոջ դեմ գործադրվող զենքը ներողամտությունն է, վերջապես ամենադաժանը՝ մոռացությունը: Կարգին մարդուն միայն դա է թույլատրելի: Հիշիր, որ տարի ու կես առաջ ուրախությունից դու կախվում էիր բոլորի վզից, երջանկությունից չգիտեիր ինչ անես: Տարի ու կես անընդհատ բավականությո՛ւն: Ինչպես կուզես՝ դու անշնորհակալ ես:

— Ախ, հորեղբայր, աշխարհի երեսին ինձ համար սիրուց ավելի սրբազան ոչինչ չկար. առանց դրա կյանքը կյանք չէ...

— Ա՛,— սրդողած ընդհատեց Պյոտր Իվանիչը:— Մարդու սիրտ է խառնում այդպիսի հիմարություն լսելուց:

— Ես կաստվածացնեի Նադինկայինը,— շարունակեց Ալեքսանդրը,— և չէի նախանձի աշխարհում ոչ մի երջանկության. ես երազում էի Նադինկայի հետ անցկացնել ողջ կյանքս, և ի՞նչ: Ո՞ւր է այն վեհ, վիթխարի կիրքը, որի մասին ես երազում էի: Դա վերածվեց հառաչներից, տեսարաններից, խանդից, ստից, կեղծիքից բաղկացած ինչ-որ գաճաճային հիմար կատակերգության, աստվա՜ծ, աստվա՜ծ:

— Իսկ ինչո՞ւ էիր երազում այն, ինչը չի լինում: Մի՞թե ես չէի պնդողը, թե դու մինչև հիմա ուզում էիր ապրել այնպիսի կյանքով, որպիսին չկա: Քո կարծիքով, մարդու գործը հենց այն է, որ լինի սիրեկան, ամուսին, հայր... իսկ ուրիշ ոչ մի բանի մասին իմանալ չես ուզում: Մարդը, բացի դրանից, նաև քաղաքացի է, ունի ինչ-որ զբաղմունք, ասենք՝ գրող, կալվածատեր, զինվոր, աստիճանավոր, գործարանատեր... իսկ քեզ մոտ այդ բոլորի առաջ պատվար են քաշում սերն ու բարեկամությունը... այդ ի՞նչ Արկադիա է: Գլուխդ լցրել ես վեպերով, շարունակ լսել ես մորաքրոջդ ասածները այնտեղ, խուլ վայրում և այդ հասկացություններով եկել ես այստեղ: Հնարել ես՝ **վեհ կիրք:**

— Այո, վե՜հ:

— Հերիք է, խնդրեմ: Մի՞թե վեհ կրքեր կան:

— Ինչպե՞ս:

— Հենց այնպես: Չէ՞ որ կիրք, նշանակում է, երբ զգացմունքը, հակումը, կապվածությունը կամ դրա նման մի բան հասել է այն աստիճանին, երբ արդեն դադարում է գործել բանականությունը: Դե, այստեղ ի՞նչ վեհ բան կա: Ես չեմ հասկանում. միայն խելագարություն է, դա մարդկային չէ: Եվ ինչո՞ւ միայն մեդալի մի երեսն ես վերցնում: Խոսքս սիրո մասին է — դու վերցրու և մյուսը ու կտեսնես, որ սերը վատ բան չէ: Հապա հիշիր երջանիկ րոպեները. ականջս տանում էիր...

— Օ, մի՛ հիշեցրեք, մի՛ հիշեցրեք,— ասում էր Ալեքսանդրը, ձեռքերը թափահարելով: — Ձեզ համար լավ է այդպես դատելը, որովհետև դուք վստահ եք ձեր սիրած կնոջը. կուզենայի տեսնել, թե ի՞նչ կանեիք, եթե իմ տեղը լինեիք...

— Ինչ կանեի՞... Ցրվելու համար կգնայի... գործարան: Չե՞ս ուզում վաղը գնանք:

— Ոչ, մենք երբեք չենք հարմարվի,— տխուր ասաց Ալեքսանդրը,— կյանքի նկատմամբ ունեցած ձեր հայացքը ինձ ոչ թե հանգստացնում, այլ վանում է նրանից: Ես տխուր եմ, սառնություն է փչում հոգուս: Մինչև հիմա սերը փրկում էր ինձ այդ սառնությունից. այն չկա՝ և հիմա սրտիս մեջ թախիծ է. ես սարսափում եմ, տրտմում...

— Գործով զբաղվիր:

— Այդ բոլորը ճիշտ է, հորեղբայր. դուք և ձեզ նմանները կարող են այդպես դատել: Դուք բնականից սառն մարդ եք... հուզմունքների անընդունակ հոգով...

— Իսկ դու երևակայում ես, թե ինքդ հզո՞ր հոգով ես: Երեկ ուրախությունից յոթերորդ երկնքում էիր, իսկ հենց որ մի քիչ էնիքը... չես էլ կարողանում վշտիդ դիմանալ:

— Շոգի, շոգի՛,— թույլ, հազիվ պաշտպանվելով, ասում էր Ալեքսանդրը:— Դուք մտածում, զգում ու խոսում եք ճիշտ այնպես, ինչպես շոգեքարշն է գլորվում ռելսերի վրա. հարթ, հանդարտ, հավասար:

— Հուսով եմ, դա վատ չէ. ավելի լավ է, քան աղուրից դուրս պրծնել, շրմփալ խանդակը, ինչպես հիմա դու, և չկարողանալ ոտքի կանգնել: Շոգի՛: Շոգի՛: Բայց շոգին, գիտե՞ս ինչ, մարդուն պատիվ է բերում: Այդ գյուտի մեջ ներկա է այն հիմքը, որն ինձ ու քեզ մարդ է դարձնում, իսկ վշտից մեռնել կարող է և անասունը: Օրինակներ են եղել, երբ շները սատկել են իրենց տերերի գերեզմանների վրա, կամ երկար անջատումից հետո տեսնելու ուրախությունից շնչահեղձ են եղել: Դա ի՞նչ մի արժանիք է: Իսկ դու կարծում էիր, թե դու առանձնահատուկ էակ ես, բարձր կարգի, արտասովոր մարդ...

Պյոտր Իվանիչը նայեց եղբորորդուն և հանկարծ կանգ առավ:

— Այդ ի՞նչ է: Դու չլինի՞ լալիս ես,— հարցրեց նա, և նրա դեմքը մթագնեց, այսինքն՝ նա կարմրեց:

Ալեքսանդրը լուռ էր: Վերջին ապացույցները նրան բոլորովին տապալեցին: Առարկելու բան չկար, բայց նա գտնվում էր իրեն տիրապետած զգացմունքի ազդեցության տակ: Նա հիշեց կորցրած երջանկության մասին, այն մասին, որ հիմա մի ուրիշն է... և արցունքները կարկուտի պես թափվեցին նրա այտերի վրա:

— Այ, այ, ա՛յ: Ամաչի՛ր,— ասաց Պյոտր Իվանիչը:— Եվ դու տղամա՞րդ ես: Խնդրեմ, լաց եղիր ոչ իմ ներկայությամբ:

— Հորեղբա՛յր: Հիշեցեք ձեր ջահելության տարիները,— հեկեկալով ասում էր Ալեքսանդրը,— մի՞թե դուք հանգիստ ու անտարբեր կկարողանայիք տանել ամենադառն վիրավորանքը, որը ճակատագիրն ուղարկում է մարդուն: Տարի ու կես ապրել այնպիսի լիակատար կյանքով և հանկարծ՝ ոչինչ չկա: Դատարկություն... Այն անկեղծությունից հետո խորամանկություն, ծածկամտություն, սառնություն՝ դեպի ինձ: Աստված: Կա՞ արդյոք ավելի ուժգին տանջանք: Ուրիշի մասին հեշտ է ասել «դավաճանեցին», իսկ զգա՞լ... ինչպե՛ս փոխվեց նա: Ինչպե՛ս սկսեց պճնվել կոմսի համար: Մի ժամանակ, երբ գնում էի, նա գունատվում էր, հազիվ էր կարողանում խոսել... ստում էր... օ, ոչ...

Այստեղ արցունքները հորդեցին ավելի ուժգին:

— Եթե ինձ մխիթարություն մնար,— շարունակեց նա,— որ ես նրան կորցրի հանգամանքների բերումով, եթե նա այդ աներ հարկից դրդված... թող նույնիսկ մեռներ, այն ժամանակ էլ ավելի հեշտ կլիներ դիմանալ... Բայց ախր ոչ, ոչ... ուրի՛շն է: Դա սարսափելի՛ է, անտանելի: Եվ միջոցներ չկան նրան դուրս կորզելու հափշտակողի ձեռքից. դուք ինձ զինաթափեցիք... ի՞նչ անեմ: Սովորեցրե՛ք: Ես խեղդվում եմ, ցավից տանջվում... Թախիծ, տանջա՛նք: Ես կմեռնեմ... ինքնասպանություն կգործեմ...

Նա հենվեց սեղանին, գլուխը ծածկեց ձեռքերով և բարձրաձայն հեկեկաց...

Պյոտր Իվանիչը գլուխը կորցրեց: Նա մի երկու անգամ անցուդարձ արեց սենյակում, հետո կանգ առավ Ալեքսանդրի դեմ, գլուխը քորեց, չիմանալով ինչ սկսի:

— Գինի խմիր, Ալեքսանդր,— ասաց Պյոտր Իվանիչը, որքան կարող էր քնքուշ,— գուցե էնիքը...

Ալեքսանդրը՝ ոչ մի բան. միայն նրա ուսերն ու գլուխն էին ջղաձգաբար ցնցվում, նա շարունակ հեկեկում էր: Պյոտր Իվանիչը խոժոռվեց, ձեռքը թափահարեց և սենյակից դուրս գնաց: — Ի՞նչ

անեմ Ալեքսանդրին,— ասաց նա կնոջը:— Նա այնտեղ իմ սենյակում ձայնը գլուխը գցած լալիս է և ինձ դուրս արեց. ես բոլորովին հալ ու մաշ եղա նրա ձեռքին:

— Դու նրան հենց այդպես էլ թողի՞ր,— հարցրեց կինը:— Խե՜ղճ: Թող ինձ, ես գնամ նրա մոտ:

— Ոչինչ էլ չես անի. նա այդպիսի բնավորություն ունի: Ամբողջովին մորաքրոջն է քաշել. նա էլ այդպիսի լալկանն էր: Ես ինչքան ժամանակ է համոզում էի նրան:

— Միայն համոզո՞ւմ էիր:

— Եվ համոզեցի. նա ինձ հետ համաձայնեց:

— Օ, ես չեմ կասկածում. դու շատ խելացի ես և... խորամանկ,— ավելացրեց նա:

— Փառք աստծու, եթե այդպես է, այստեղ, կարծես ինչ որ պետք է, կա:

— Կարծես թե, իսկ նա լալիս է:

— Ես մեղավոր չեմ, ես ամեն ինչ արեցի, որ մխիթարեմ նրան:

— Իսկ ի՞նչ արեցիր:

— Ինչ ասես: Եվ մի ամբողջ ժամ խոսում էի... նույնիսկ կոկորդս չորացավ... սիրո ամբողջ տեսությունը ինչպես ափիդ վրա ուղղակի մատուցեցի, և փող առաջարկեցի, և ընթրիքով, և գինիով աշխատում էի...

— Իսկ նա շարունակ լալի՞ս է:

— Ուղղակի զռռում է: Վերջում ավելի սաստիկ:

— Զարմանալի՜ է: Թող ինձ. ես փորձեմ, իսկ դու առայժմ մտածիր քո նոր մեթոդը...

— Ի՞նչ, ի՞նչ:

Բայց կինը ստվերի պես դուրս սահեց սենյակից:

Ալեքսանդրը դեռ նստած էր գլուխը ձեռներին հենած: Մեկը ձեռքով դիպավ նրա ուսին: Նա գլուխը բարձրացրեց. նրա առաջ կանգնած էր մի երիտասարդ, սքանչելի կին, պենյուրով, á la Jinoise */Ֆիննական ձևի (ֆրանս.):/* գլխադիրով:

— Ma tante! */Հորաքույր (ֆրանս.):/,*— ասաց Ալեքսանդրը:

Հորեղբոր կինը նստեց նրա կողքին, սևեռուն նայեց նրան, ինչպես գիտեն երբեմն նայել կանայք, հետո թաշկինակով կամացուկ սրբեց նրա աչքերը և համբուրեց ճակատը, իսկ Ալեքսանդրը շրթունքները հպեց նրա ձեռքին: Նրանք երկար խոսում էին:

Մի ժամ հետո Ալեքսանդրը դուրս ելավ մտախոհ, բայց ժպիտը երեսին և շատ անքուն գիշերներից հետո հանգիստ քնեց: Հորեղբոր կինը ննջարան վերադարձավ արցունքոտ աչքերով: Պյոտր Իվանիչը արդեն վաղուց խռմփացնում էր:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Անցավ մոտ մեկ տարի առաջին մասի վերջին գլուխում նկարագրած տեսարաններից ու իրադարձություններից հետո:

Ալեքսանդրը կամաց-կամաց մռայլ հուսահատությունից անցավ սառը վիատության: Նա արդեն ատամները կրճտացնելով անեծքներ չէր որոտում կոմսի ու Նադինկայի դեմ, այլ նրանց նշավակում էր խոր արհամարհանքով:

Լիզավետա Ալեքսանդրովնան նրան մխիթարում էր բարեկամի ու քրոջ ամբողջ քնքշությամբ: Ալեքսանդրը սիրով ենթարկվում էր այդ հաճելի խնամակալությանը: Նրա նման բոլոր նատուրաները սիրում են իրենց կամքը ուրիշի տրամադրությանը հանձնել: Նրանց համար դայակը անհրաժեշտություն է:

Վերջապես նրա մեջ կիրքը հանգեց, իսկական տխրությունն անցավ, բայց նա ափսոսում էր դրանից բաժանվել. նա բռնի կերպով շարունակեց այդ կամ, ավելի լավ է ասել՝ իր համար ստեղծեց արհեստական տխրություն, խաղում, պճնամոլում էր դրանով և թաղվում այդ տխրության մեջ:

Նրան մի տեսակ դուր էր գալիս տառապյալի դեր խաղալը: Նա սուսիկ էր, լրջատես, մշուշապատ, նրա խոսքով ասած, ինչպես մի մարդ, որը դիմացել է **բախտի հարվածին**, խոսում էր բարձր տառապանքների մասին, սրբազան, վսեմ զգացմունքների մասին, որոնք տրորված, ցեխին են հավասարեցված, «և ո՞ւմ կողմից»,— ավելացնում էր նա.— «մի անպիտան կոկետ աղջկա և մի անարգ անառակի, խաբուսիկ առյուծի: Մի՞թե ճակատագիրը ինձ նրա համար էր աշխարհ ուղարկել, որպեսզի իմ մեջ ինչքան բարձր բան կար, զոհաբերեի մի ոչնչության»:

Ոչ տղամարդը տղամարդուն, ոչ կինը կնոջը չէին ների այդ կեղծությունը և անմիջապես կնշեին դիմացինի շինծու շարժուձևերը: Բայց միմյանց ինչե՞ր չեն ներում տարբեր սեռերի երիտասարդ մարդիկ:

Լիզավետա Ալեքսանդրովնան ներողամտությամբ լսում էր Ալեքսանդրի երեմիականները և մխիթարում էր ինչպես կարող էր: Դա նրա համար բոլորովին տհաճ չէր, թերևս նաև այն պատճառով, որ ազգականի կողմից համենայն դեպս կարեկցություն էր գտնում սեփական սրտին, նրա սիրո գանգատների մեջ լսում էր և իրեն ոչ օտար տառապանքների հնչյուններ:

Նա ագահաբար ունկնդրում էր Ալեքսանդրի սրտի հառաչանքներին և դրանց պատասխանում էր աննկատելի հառաչանքներով և արցունքներով, որոնք ոչ ոք չէր տեսնում: Նա նույնիսկ ազգականի կեղծ և քաղցր ու մեղցր թախծի զեղումներին գտնում էր մխիթարական խոսքեր նույն տոնով ու ոգով. բայց Ալեքսանդրը լսել անգամ չէր ուզում:

— Օ, մի՛ ասացեք ինձ, ma tante,— առարկում էր նա,— ես չեմ ուզում սիրո սրբազան անունը անարգել, այդպես անվանելով իմ հարաբերությունները այդ...

Այստեղ նա արհամարհական ծամածռություն էր անում և պատրաստ էր Պյոտր Իվանիչի պես հարցնել՝ ինչպե՞ս է նրա անունը:

— Ասենք,— ավելացնում էր նա էլ ավելի արհամարհական,— նրան ներելի է. ես չափից ավելի բարձր էի թե նրանից, թե կոմսից և թե այդ ամբողջ խղճուկ և ճղճիմ ոլորտից. զարմանալի չէ, որ ես չհասկացված մնացի նրա կողմից:

Եվ այդ խոսքերից հետո նա դեռ երկար պահպանում էր դեմքի արհամարհական արտահայտությունը:

— Հորեղբայրս պնդում է, որ ես պետք է շնորհակալ լինեմ Նադինկայից,— շարունակում էր նա:— Ինչի՞ համար: Ինչո՞վ է նշանավորված այդ սերը: Շարունակ գռեհկություններ, շարունակ ծամծմված բաներ: Արդյոք եղե՞լ է որևէ երևույթ, որը դուրս գար ամենօրյա չնչին անախորժությունների սովորական շրջանակից: Այդ սիրո մեջ երևո՞ւմ էր ինչ-որ չափով հերոսություն և անձնուրացություն: Ոչ, նա համարյա ամեն ինչ անում էր մոր գիտությամբ: Գեթ մի անգամ ինձ համար խախտե՞լ է բարձրաշխարհիկ հասարակության պայմանականությունը, պարտքը: Երբե՞ք: Եվ դա սե՞ր է: Աղջիկ է՝ և չէր կարողանում պոեզիա լցնել այդ զգացմունքի մեջ:

— Իսկ ինչպիսի՞ սեր կպահանջեիք կնոջից,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ինչպիսի՞,— պատասխանեց Ալեքսանդրը:— Ես նրանից կպահանջեի առաջնություն նրա սրտում: Սիրածս կինը բացի ինձնից չպետք է նկատի, տեսնի ուրիշ տղամարդ. նրանք բոլորը նրան պետք է անտանելի թվան: Մենակ ես եմ բոլորից բարձր, գեղեցիկ,— այստեղ նա շտկվեց,— լավ, ազնիվ: Ամեն մի ակնթարթը, որ ինձ հետ չի անցկացրել, նրա համար կորած ակնթարթ է: Իմ աչքերից, իմ խոսքերից պետք է քաղի երանություն և չճանաչի ուրիշի...

Լիզավետա Ալեքսանդրովնան աշխատում էր թաքցնել ժպիտը: Ալեքսանդրը չէր նկատում:

— Ինձ համար,— շարունակում էր նա փայլող աչքերով,— սիրածս պետք է զոհաբերի ամեն ինչ. արհամարհելի շահը, հաշիվը, իրենից թոթափի մոր, ամուսնու բռնակալական լուծը, եթե պետք է՝ փախչի աշխարհի ծայրը, եռանդուն կերպով դիմանա բոլոր զրկանքներին, վերջապես արհամարհի հենց մահը. ահա՛ սերը: Իսկ սա...

— Իսկ դուք ինչո՞վ կհատուցեիք այդ սերը,— հարցրեց հորեղբոր կինը:

— Ե՞ս: Օ՛,— սկսեց Ալեքսանդրը, աչքերը երկինք հառելով:— Ես ամբողջ կյանքս կնվիրեի նրան, ես կպառկեի նրա ոտների տակ: Նրա աչքերին նայելը գերագույն երջանկություն կլիներ: Նրա ամեն մի խոսքը ինձ համար օրենք կլիներ: Ես կերգեի նրա գեղեցկությունը, մեր սերը, բնությունը.

Կսովորեի հիացքով լեցուն

Ես Պետրարկայի և սիրո լեզուն..

Բայց մի՞թե ես Նադինկային չապացուցեցի, թե ինչպես գիտեմ սիրել:

— Ուրեմն դուք բոլորովի՞ն չեք հավատում զգացմունքին, երբ նա չի դրսևորվում այնպես, ինչպես ուզում եք: Ձորեղ զգացմունքը թաքնվում է...

— Արդյոք չե՞ք ուզում ինձ հավատացնել, ma tante, որ այնպիսի զզացմունքը, ինչպես իմ հորեղբորն է, օրինակ, թաքնվում է:

Լիզավետա Ալեքսանդրովնան հանկարծ շիկնեց: Նա չէր կարող ներքուստ չհամաձայնել ազգականի հետ, որ առանց որևէ դրսևորման սերը մի տեսակ կասկածելի է, որ, թերևս չկա էլ, որ եթե լիներ, դուրս կպոռթկար, որ, բացի բուն սիրուց՝ նրա մթնոլորտը իր մեջ անբացատրելի հմայք է պարունակում:

Այստեղ նա մտովի պատկերացրեց իր ամուսնացած կյանքի ամբողջ շրջանը և խոր մտածմունքի մեջ ընկավ: Ազգականի անհամեստ ակնարկը նրա սրտում շարժեց մի գաղտնիք, որն ինքը թաքցնում էր այնպես խորունկ, և նրան դրդեց մի հարցի՝ արդյոք երջանի՞կ է ինքը:

Նա գանգատվելու իրավունք չուներ. երջանկության բոլոր արտաքին պայմանները, որոնց հետևից ընկնում է ամբոխը, կատարվում էին նրա համար, ինչպես նախագծված ծրագրով: Լիությունը, նույնիսկ շքեղությունը ներկայում, ապահովվածությունը ապագայում, այդ ամենը նրան ազատում էր մանր, դառն հոգսերից, որոնք ծծում են բազմաթիվ խեղճերի սիրտը և չորացնում կուրծքը:

Նրա ամուսինն անխոնջ աշխատել է և դեռ շարունակում է աշխատել: Բայց ի՞նչն էր նրա աշխատանքների գլխավոր նպատակը: Արդյոք նա աշխատո՞ւմ էր ընդհանուր մարդկային նպատակի համար, կատարում էր ճակատագրի կողմից նրան հանձնարարված դա՞սը, թե՞ լոկ մանր պատճառների համար, որպեսզի մարդկանց մեջ աստիճանավորի և դրամական նշանակություն ձեռք բերի, նրա՞ համար, վերջապես, որ նրան աղեղի պես չկորացնեն կարիքը, հանգամանքները: Աստվա՛ծ գիտի: Նա չէր սիրում բարձր նպատակների մասին խոսել, դա անվանելով զառանցանք, այլ չոր ու հասարակ ասում էր, որ պետք է **գործ անել**:

Լիզավետա Ալեքսանդրովնան միայն այն տխուր եզրակացությանը հանգեց, որ ամուսնու եռանդի ու ջանքերի միակ նպատակը ոչ ինքն էր, ոչ սերը դեպի կինը: Նա աշխատում էր նաև մինչև ամուսնությունը, երբ դեռ չէր ճանաչում կնոջը: Սիրո մասին երբեք խոսք չէր ասել և նրան էլ չէր հարցրել. երբ կինը հարցնում էր այդ մասին, նա գլուխ էր պրծացնում կատակով, սրախոսությամբ կամ նիրհով: Նրա հետ ծանոթանալուց քիչ ժամանակ անց սկսեց խոսել հարսանիքի մասին,

կարծես հասկացնելով, որ այստեղ սերը ինքնին հասկանալի է և որ դրա մասին երկար խոսելու հարկ չկա...

Նա թշնամի էր ամեն տեսակ էֆեկտների — դա վատ չէր, բայց նա չէր սիրում նաև սրտի անկեղծ դրսևորումներ, չէր հավատում նաև ուրիշների այդ պահանջին: Մինչդեռ նա մի հայացքով, մի խոսքով կարող էր կնոջ մեջ խոր կիրք առաջացնել դեպի ինքը. բայց նա լռում է, նա չի ուզում: Դա նույնիսկ չի շոյում նրա ինքնասիրությունը:

Կինը փորձել էր նրա մեջ խանդ առաջացնել, մտածելով, որ այն ժամանակ սերն անպայման կարտահայտվի... Ոչինչ չէր լինում: Հենց որ նկատում էր, որ կինը հասարակության մեջ ջոկում է որևէ երիտասարդի, շտապում էր նրան հրավիրել իրենց տուն, սիրաշահում էր, ինքը գովում, երկինք էր հանում նրա արժանիքները և չէր վախենում նրան միայնակ թողնել կնոջ հետ:

Լիզավետա Ալեքսանդրովնան երբեմն խաբում էր ինքն իրեն, երազելով, թե գուցե Պյոտր Իվանիչը գործում է ստրատեգորեն. թե արդյոք նրանում չի՞ կայանում ամուսնու խորհրդավոր մեթոդը, որպեսզի կնոջը միշտ կասկածի մեջ պահելով, դրանով իսկ պահպանի բուն սերը: Բայց սիրո մասին ամուսնու հայտնած առաջին իսկ կասկածից կինը հիասթափվում էր:

Եթե ամուսինը գոնե լիներ կոպիտ, անտաշ, անհոգի, թանձրամիտ, մեկն այն ամուսիններից, որոնք լեգիոն են, որոնց խաբելը այնքան անմեղ, այնքան պիտանի, այնքան ուրախալի է նրանց և իրենց երջանկության համար, որոնք կարծես հենց նրա համար են ստեղծված, որպեսզի կինը իր շուրջը որոնի և սիրի նրանց բոլորովին հակառակ տիպի մեկին, այն ժամանակ ուրիշ բան. նա թերևս վարվեր այնպես, ինչպես վարվում է կանանց մեծ մասը այդ դեպքում: Բայց Պյոտր Իվանիչը այնպիսի խելքի ու տակտի տեր մարդ էր, որպիսին հաճախ չի հանդիպում: Նա նուրբ էր, խորաթափանց, ճարպիկ: Նա հասկանում էր սրտի բոլոր տագնապները, բոլոր հոգեկան փոթորիկները, բայց հասկանում էր՝ և միայն այդքան: Սրտային գործերի ամբողջ օրենսգիրքը նրա գլխում էր, բայց ոչ սրտում: Դրա մասին նրա դատողություններից երևում էր, որ նա ասում է կարծես թե լսածն ու սերտածը, բայց բնավ ոչ զգացածը: Նա կրքերի մասին դատում էր ճիշտ, բայց չէր ընդունում նրանց իշխանությունը իր վրա, նույնիսկ ծիծաղում էր դրանց վրա, դրանք համարելով սխալ, այլանդակ խոտորումներ իրականությունից, հիվանդությունների նման մի բան, որոնց համար ժամանակին կգտնվի իր բուժումը:

Լիզավետա Ալեքսանդրովնան զգում էր նրա մտավոր գերազանցությունը ամբողջ շրջապատի նկատմամբ և տանջվում էր դրանից: «Եթե նա այդքան խելացի չլիներ,— մտածում էր նա,— ես փրկված կլինեի...»: Նա երկրպագում է դրական նպատակները, այդ պարզ է, և պահանջում է, որ կինն էլ ապրի ոչ երազական կյանքով:

«Բայց, աստված իմ,— մտածում էր Լիզավետա Ալեքսանդրովնան,— մի՞թե նա ամուսնացել է միայն նրա համար, որ տանտիրուհի ունենա, որ իր ամուրի բնակարանին ընտանիքավոր տան լիակատարություն և արժանավորություն տա, որպեսզի հասարակության մեջ ավելի մեծ կշիռ ունենա: Տանտիրուհի, կին՝ այդ բառերի ամենապրոզաիկ իմաստով: Մի՞թե նա իր ողջ խելքով չի հասկանում, որ կնոջ դրական նպատակներում էլ անպայման ներկա է սերը... Ընտանեկան պարտականություններ՝ ահա նրա հոգսերը. բայց մի՞թե դրանք կարելի է կատարել առանց սիրո: Նույնիսկ դայակները, ստնտուները իրենց համար կուռք են դարձնում այն երեխաներին, որոնց խնամում են. իսկ կի՜նը, իսկ մա՛յրը: Օ, թող ես ինձ համար զգացմունքը գնեի տանջանքով, թող կրեի բոլոր տառապանքները, որոնք անբաժան են կրքից, միայն թե ապրեի լիակատար կյանքով և ոչ թե բուսական կյանք վարեի...»:

Նա հայացք գցեց շքեղ կահկարասու և իր զարդասենյակի բոլոր խաղալիքներին ու զիզի-բիզիներին, և այդ ամբողջ կոմֆորտը, որով ուրիշների մոտ սիրող մարդու հոգածու ձեռքը շրջապատում է սիրելի կնոջը, նրան թվաց սառը ծաղր իսկական երջանկության նկատմամբ: Հանձինս ամուսնու և ազգականի նա վկա էր երկու սարսափելի ծայրահեղությունների: Մեկը խանդավառ է խենթության աստիճան, մյուսը՝ սառցային դաժանության աստիճան:

«Ինչպես քիչ են հասկանում նրանք երկուսն էլ, ինչպես և տղամարդկանց մեծ մասը, իսկական զգացմունքը: Եվ ինչպե՜ս եմ ես հասկանում,— մտածում էր նա:— Իսկ ի՞նչ օգուտ: Ինչի՞ համար: Օ, եթե...»

Նա փակեց աչքերը և այդպես մնաց մի քանի րոպե, հետո բացեց, նայեց շուրջը, ծանր հառաչեց և անմիջապես ընդունեց սովորական, հանդարտ տեսքը: Խե՜ղճ: Ոչ ոք չգիտեր այդ մասին, ոչ ոք չէր տեսնում: Նրա կողմից հանցանք կհաշվեին առանց վերքերի, առանց արյունի, ոչ թե ցնցոտիներով, այլ թավշով ծածկված այդ անտեսանելի, անշոշափելի, անանուն տառապանքները: Բայց նա հերոսական անձնուրացությամբ թաքցնում էր իր թախիծը և դեռ բավական ուժ էր գտնում, որպեսզի ուրիշներին մխիթարեր:

Շուտով Ալեքսանդրը դադարեց խոսել նաև բարձր տառապանքների և չհասկացված ու չգնահատված սիրո մասին: Նա անցավ ավելի ընդհանուր թեմայի: Նա գանգատվում էր կյանքի ձանձրույթից, հոգու ամայությունից, տանջալի թախծից:

Ապրել եմ բոլոր իմ բաղձանքները,

Երազանքներս լքել եմ անհույս...

պնդում էր նա անընդհատ:

— Եվ հիմա ինձ հետապնդում է սև դևը: Նա, ma tante, ամենուրեք ինձ հետ է. և գիշերը, և խնջույքի բաժակը ձեռքիս՝ մտերմիկ զրույցի ժամանակ, և խոր մտածմունքի րոպեիս:

Այդպես անցավ մի քանի շաբաթ: Թվում էր, ահա ևս մի երկու շաբաթ, և այդ տարօրինակ մարդը բոլորովին կհանգստանար և, գուցե միանգամայն կարգին, այսինքն՝ բոլորի պես հասարակ, սովորական մարդ կդառնար, բայց ո՜չ: Նրա տարօրինակ բնավորության առանձնահատկությունը ամեն տեղ առիթ էր գտնում դրսևորվելու:

Մի անգամ նա հորեղբոր կնոջ մոտ եկավ ամբողջ մարդկային ցեղի դեմ ուղղված ինչ-որ չար հոգեվիճակով: Ինչ խոսք ասեր՝ խայթոց էր, ինչ դատողություն աներ՝ էպիգրամ էր ուղղված այն մարդկանց դեմ, որոնց պետք է որ հարգեր: Ոչ ոքի չէր խնայում: Բաժին հասավ և Լիզավետա Ալեքսանդրովնային, և Պյոտր Իվանիչին: Լիզավետա Ալեքսանդրովնան սկսեց հարցուփորձելով իմանալ դրա պատճառը:

— Ուզո՞ւմ եք իմանալ,— սկսեց Ալեքսանդրը կամաց, հանդիսավոր,— թե ինձ հիմա ինչն է **հուզում, կատաղեցնում**: Լսեցեք ուրեմն. դուք գիտեք, որ ես մի ընկեր ունեի, որին չէի տեսել մի քանի տարի, բայց որի համար սրտումս միշտ մնում էր մի անկյուն: Հորեղբայրս իմ գալստյան սկզբում ինձ հարկադրեց նրան մի տարօրինակ նամակ գրել, որը պարունակում էր նրա սիրելի կանոնները և մտածելակերպը. բայց ես այն նամակը պատռեցի և մի ուրիշն ուղարկեցի, հետևապես, իմ բարեկամը փոխվելու առիթ չուներ: Այդ նամակից հետո մեր նամակագրությունն ընդհատվեց, և ես բարեկամիս կորցրի տեսադաշտիցս: Եվ ի՞նչ պատահեց: Մի երեք օր առաջ անցնում եմ Նևսկի պողոտայով և հանկարծ տեսնում եմ նրան: Ես քարացա, մարմնովս կայծեր անցան, աչքերումս արցունքներ երևացին: Ես նրան մեկնեցի ձեռքերս և ուրախությունից չէի կարող մի խոսք ասել. շունչս կտրվում էր: Նա բռնեց մի ձեռքս և սեղմեց: «Բարև, Ադուև»,— ասաց նա մի այնպիսի ձայնով, կարծես թե հենց երեկ էինք բաժանվել իրարից: «Վաղո՞ւց է այստեղ ես»: Զարմացավ, որ մինչև հիմա չենք հանդիպել, թեթևակի հարցրեց, թե ինչ եմ անում, որտեղ եմ ծառայում, իր պարտքը համարեց հայտնելու, որ հրաշալի տեղ ունի, գոհ է իր ծառայությունից, և պետերից և ընկերներից, և... բոլոր մարդկանցից, և իր ճակատագրից... հետո ասաց, որ ժամանակ չունի, որ շտապում է, հրավիրված է ճաշի, լսո՞ւմ եք, ma tante, երկարատև անջատումից հետո ընկերոջը տեսնելիս. նա չէր կարող հետաձգել ճաշը...

— Բայց գուցե նրան կսպասեին,— նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան,— քաղաքավարությունը թույլ չտվեց...

— Քաղաքավարություն և բարեկամությո՞ւն: Դո՜ւք էլ, ma tante, բայց դա դեռ ի՜նչ է, ես ավելին կասեմ: Նա ձեռքս խոթեց իր հասցեն, ասաց, որ հաջորդ օրը երեկոյան ինձ սպասում է իր մոտ, և

անհետացավ: Երկար նայում էի նրա հետևից և չէի կարողանում ուշքի գալ: Դա մանկության ընկերս էր, դա պատանեկության մտերիմս էր: Լա՛վն է: Բայց հետո մտածեցի, որ գուցե նա ամեն ինչ հետաձգել է երեկոյան և այն ժամանակ անկեղծ, սրտալի զրույցին ժամանակ կնվիրի: «Թող այդպես լինի, մտածում եմ, կգնամ»: Հայտնվում եմ: Նրա մոտ մի տասը հոգի բարեկամներ կային: Նա ձեռքը ինձ մեկնեց նախորդ օրվանից ավելի սիրալիր, այդ ճիշտ է, բայց փոխարենը, առանց մի խոսք ասելու անմիջապես առաջարկեց թղթախաղի նստել: Ես ասացի, որ չեմ խաղում, և մենակ նստեցի բազմոցին, ենթադրելով, որ նա թղթերը մի կողմ կդնի կգա ինձ մոտ: «Չե՞ս խաղում,— ասաց նա զարմանքով:— Հապա ի՞նչ ես անում»: Լա՛վ հարց է: Ես սպասում եմ մի ժամ, երկու ժամ, նա ինձ չի մոտենում, համբերությունս հատում է: Նա ինձ մերթ սիգար է առաջարկում, մերթ ծխամորճ, ափսոսում է, որ ես չեմ խաղում, որ ինձ համար ձանձրալի է, աշխատում է ինձ զբաղեցնել, ի՞նչ եք կարծում, ինչո՞վ. շարունակ դիմում էր ինձ և պատմում թղթախաղի իր ամեն մի հաջող և անհաջող քայլի մասին: Ես վերջապես չհամբերեցի, մոտեցա նրան և հարցրի՝ մտադի՞ր է նա այդ երեկո ինչ-որ չափով ժամանակ հատկացնել ինձ: Իսկ սիրտս ուղղակի եռում էր, ձայնս դողում: Դա կարծես նրան զարմացրեց: Նա տարօրինակ նայեց ինձ: «Լավ,— ասում է,— թող այս խաղը ավարտեմ»: Հենց որ նա այդ ասաց, ես գլխարկս վերցրի և ուզում էի գնալ, բայց նա նկատեց և կանգնեցրեց ինձ: «Խաղն ավարտվում է,— ասաց նա,— հիմա ընթրելու ենք»: Վերջապես ավարտեցին: Նա նստեց իմ կողքին ու հորանջեց. դրանով էլ սկսվեց մեր բարեկամական զրույցը: «Դու ինձ բա՞ն էիր ուզում ասել»,— հարցրեց նա: Դա ասված էր այնպիսի միապաղաղ և անզգա ձայնով, որ ես, առանց բան ասելու, միայն նայեցի նրան տխուր ժպիտով: Այստեղ նա կարծես հանկարծ կենդանացավ և հարցեր տեղաց վրաս. «Քեզ ի՞նչ է պատահել, որևէ բանի կարիք չունե՞ս արդյոք: Չե՞մ կարող մի բանով քեզ օգտակար լինել ծառայության գծով...» և այլն: Ես գլուխս օրորեցի ու ասացի, որ ուզում էի նրա հետ խոսել ոչ թե ծառայության, ոչ թե նյութական օգուտների մասին, այլ այն մասին, ինչ որ սրտիս ավելի մոտ է, մանկության ոսկե օրերի մասին, մեր խաղերի, չարությունների մասին... Նա, պատկերացրեք, նույնիսկ թույլ չտվեց, որ վերջացնեմ: «Դու դեռ, ասում է, շարունակ նույն երազողն ես», հետո հանկարծ փոխեց խոսակցությունը, կարծես դա համարելով դատարկ բան և լրջորեն սկսեց հարց ու փորձ անել իմ գործերի մասին, ապագայի նկատմամբ իմ հույսերի մասին, կարիերայի մասին, ինչպես հորեղբայրս: Ես զարմացել էի, չէի հավատում, որ մարդու մեջ կարող է այդ աստիճան կոպտանալ սիրտը: Ես ուզում էի փորձել վերջին անգամ, կառչեցի իմ գործերի մասին նրա տված հարցից և սկսեցի պատմել, թե ինչպես վարվեցին ինձ հետ: «Ականջ դիր, թե ինձ ինչ արին մարդիկ...» սկսեցի ես: «Իսկ ի՞նչ,— հանկարծ ընդհատեց նա վախեցած,— հավանաբար կողոպտե՞լ են»: Նա կարծում էր, թե սպասավորների մասին եմ խոսում. հորեղբորս պես նա էլ ուրիշ դարդ չունի. ի՜նչ աստիճան մարդը կարող է քարանալ: «Այո,— ասացի ես,— մարդիկ կողոպտել են իմ հոգին...»: Այդտեղ սկսեցի խոսել իմ սիրո, իմ տանջանքների, հոգեկան ամայության մասին... ես սկսեցի տարվել և կարծում էի, թե իմ տառապանքների պատմությունը կհալեցնի սառցե կեղևը, որ դեռ արցունքները չեն ցամաքել նրա աչքերում... Եվ հանկարծ՝ նա սկսեց քահ-քահ ծիծաղել: Տեսնեմ, նրա ձեռքին թաշկինակ կա. նա իմ պատմության ժամանակ շարունակ զսպում էր իրեն, վերջապես չդիմացավ... Ես սարսափած կանգ առա:

— Հերիք է, հերիք,— ասաց նա,— ավելի լավ է՝ օղի խմիր, և սկսենք ընթրել: Սպասավոր, օղի: Գնանք, գնանք, հա՛, հա՛, հա՛... Հրաշալի... ռոստ... հա՛, հա՛, հա՛... ռոստբիֆ... կա...— նա ուզեց թևանցուկ անել ինձ, բայց ես դուրս պրծա և փախա այդ հրեշից... Ահա թե ինչպիսին են մարդիկ, ma tante,— եզրափակեց Ալեքսանդրը, հետո ձեռքը թափահարեց ու գնաց:

Լիզավետա Ալեքսանդրովնան խղճաց Ալեքսանդրին, ափսոսաց նրա խանդավառ, բայց սխալ ուղղություն ստացած սրտին: Նա տեսավ, որ այլ դաստիարակություն և կյանքի նկատմամբ ճիշտ հայացք ունենալու դեպքում Ալեքսանդրը ինքը երջանիկ կլիներ և կարող էր երջանկացնել էլի որևէ մեկին. իսկ հիմա նա սեփական կուրության և սրտի ամենատանջալի մոլորությունների զոհն է: Նա ինքը կյանքը տանջանք է դարձնում: Նրա սրտին ինչպե՞ս ցույց տա իսկական ճանապարհը: Ո՞ւր է այդ փրկարար կողմնացույցը: Լիզավետա Ալեքսանդրովնան զգում էր, որ միայն քնքուշ, բարեկամական ձեռքը կարող էր խնամել այդ ծաղիկը:

Նրան արդեն մի անգամ հաջողվել էր զսպել ազգականի սրտի անհանգիստ պոռթկումները, բայց դա սիրո գործում էր: Այնտեղ նա գիտեր, թե ինչպես պետք է վարվել վիրավորված սրտի հետ: Ինչպես վարպետ դիվանագիտուհի, նա առաջինը նախատինք թափեց Նադինկայի վրա, նրա արարքը ասպարեզ դրեց ամենասև տեսքով, նրան գռեհկացրեց Ալեքսանդրի աչքում և կարողացավ ապացուցել նրան, որ Նադինկան արժանի չէ նրա սիրուն: Դրանով նա Ալեքսանդրի սրտից կորզեց տանջալից ցավը, այն փոխարինելով հանդարտ, թեև ոչ բոլորովին արդարացի զգացմունքով՝ արհամարհանքով: Պյոտր Իվանիչն, ընդհակառակն, աշխատում էր արդարացնել Նադինկային և դրանով նա ոչ միայն չհանգստացրեց, այլ ավելի ևս գրգռեց նրա տանջանքը, հարկադրեց մտածել, որ նախապատվություն է տրված իրենից ավելի արժանավորին:

Բայց ընկերության մեջ այլ բան է: Լիզավետա Ալեքսանդրովնան տեսնում էր, որ Ալեքսանդրի ընկերը մեղավոր էր նրա աչքում և իրավացի՝ ամբոխի աչքում: Խնդրեմ հասկացնել դա Ալեքսանդրին: Նա չվստահեց ինքը այդ խիզախությունն անել և դիմեց ամուսնուն, ոչ առանց հիմքի ենթադրելով, որ նա ընկերության դեմ փաստարկների պակաս չի զգա:

— Պյոտր Իվանիչ,— ասաց նա մի անգամ քաղցրությամբ:— Ես քեզ մի խնդիրք ունեմ:

— Ի՞նչ է:

— Գուշակիր:

— Ասա. դու գիտես, որ քո խնդիրքներին մերժում չկա: Հավանաբար Պետերհոֆյան ամառանոցի մասին է. չէ՞ որ հիմա դեռ վաղ է...

— Ո՛չ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Դե, նոր կահկարասու մասի՞ն է:

Կինը գլուխն օրորեց:

— Ինչպես կուզես, չգիտեմ,— ասաց Պյոտր Իվանիչը,— ավելի լավ է ահա վերցրու լոմբարդի տոմսը և տնօրինիր, ինչպես որ քեզ պետք է. սա երեկվա շահումն է...

Նա ուզեց հանել դրամապանակը:

— Ոչ, մի անհանգստացիր, փողերը պահիր,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— այս գործը քեզ մի կոպեկ էլ չի արժենա:

— Չվերցնել փողը, երբ տալի՛ս են,— ասաց Պյոտր Իվանիչը, դրամապանակը պահելով:— Դա անհասկանալի է: Հապա ի՞նչ է պետք:

— Պետք է միայն մի փոքր բարի կամք...

— Ինչքան կուզես:

— Գիտե՞ս ինչ. երեք օր առաջ ինձ մոտ էր Ալեքսանդրը...

— Օխ, լավ բանի հոտ չեմ առնում,— ընդհատեց Պյոտր Իվանիչը:— Հետո՞:

— Նա այնպես մռայլ է,— շարունակեց Լիզավետա Ալեքսանդրովնան,— վախենում եմ, թե հանկարծ այդ բոլորը նրան մի բանի չհասցնի՞...

— Էլի ի՞նչ է պատահել նրան: Էլի՝ դավաճանել են սիրո մեջ թե ինչ:

— Ոչ, ընկերության:

— Ընկերությա՞ն: Քանի գնում բանը դժվարանում է: Այդ ինչպե՞ս, ընկերության մեջ: Դա հետաքրքիր է, պատմիր, խնդրեմ:

— Ահա թե ինչպես:

Այստեղ Լիզավետա Ալեքսանդրովնան նրան պատմեց այն ամենը, ինչ լսել էր ազգականից: Պյոտր Իվանիչը ուժեղ թոթվեց ուսերը:

— Ի՞նչ ես ուզում, որ անեմ այստեղ: Տեսնո՞ւմ ես, նա ինչպիսին է:

— Կարեկցություն ցույց տուր, հարցրու, թե ինչ վիճակում է սիրտը...

— Ոչ, այդ արդեն դու հարցրու:

— Խոսիր նրա հետ... ինչպե՞ս ասեմ... ավելի քնքուշ, և ոչ թե ինչպես միշտ խոսում ես... մի ծիծաղիր զգացմունքի վրա...

— Չե՞ս հրամայի, որ լաց լինեմ:

— Չէր խանգարի:

— Իսկ դրանից ի՞նչ օգուտ նրան:

— Շատ... և ոչ միայն նրան...— կիսաձայն նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ի՞նչ,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

Կինը լուռ էր:

— Օխ, այդ Ալեքսանդրը. նա ահա թե որտեղ է նստած,— ասաց Պյոտր Իվանիչը վիզը ցույց տալով:

— Այդ ինչո՞վ է նա քեզ այդպես ծանրաբեռնել:

— Ինչպե՞ս թե ինչով: Վեց տարի է գլուխ եմ ցավացնում նրա հետ. մեկ նա լաց է լինում, պետք է մխիթարել, մեկ գրագրություն վարիր նրա մոր հետ:

— Իսկապես որ, խե՜ղճ: Ինչպե՞ս է վրադ թափվում: Ի՜նչ սոսկալի աշխատանք. ամիսը մեկ անգամ նամակ ստանալ պառավից և, առանց կարդալու, գցել սեղանի տակ կամ խոսել եղբորորդու հետ: Իհարկե, չէ՞ որ դա ուշադրությունը շեղում է թղթախաղից: Տղամարդիկ, տղամարդի՜կ: Եթե կա լավ ճաշ, ոսկե կնիքով լաֆիտ և խաղաթուղթ, արդեն ամեն ինչ է. էլ ոչ ոքի հետ գործ չունենք: Իսկ եթե այդ բոլորի հետ առիթ է լինում իրեն ցույց տալ, խելոք բաներ ասել, արդեն երջանիկ եք:

— Ինչպես որ ձեզ համար կոկետություն անելը,— նկատեց Պյոտր Իվանիչը:— Յուրաքանչյուրին իրենը, սիրելիս: Էլ ի՞նչ:

— Ի՜նչ: Իսկ սի՜րտը: Դրա մասին երբեք խոսք չկա:

— Այդ էր պակաս:

— Մենք շատ խելոք ենք, ինչպե՞ս զբաղվենք այդպիսի մանրուքներով: Մենք մարդկանց ճակատագիրն ենք տնօրինում: Նայում են, թե ինչ կա մարդու գրպանում և ֆրակի մերակում, իսկ մնացածի հետ գործ չունեն: Ուզում են, որ բոլորն էլ այդպես լինեն: Նրանց մեջ ճարվել է մի զգայուն սիրելու և իրեն սիրել հարկադրելու ընդունակ անձնավորություն...

— Լավ հարկադրեց նա իրեն սիրելու այդ... անունն ի՞նչ էր, Վերոչկա՞ թե ինչ,— նկատեց Պյոտր Իվանիչը:

— Գտա՜ր, թե ում դնես նրա կողքին: Դա ճակատագրի ծաղրն է: Նա միշտ, կարծես դիտմամբ, քնքուշ, զգայուն մարդուն հանդիպեցնում է սառն արարածի հետ: Խե՜ղճ Ալեքսանդր: Նրա խելքը սրտին համընթաց չի քայլում, և ահա նա մեղավոր է այն մարդկանց աչքում, որոնց խելքը շատ առաջ է վազել, ովքեր ամենուրեք ուզում են միայն խելքով գործ տեսնել...

— Համաձայնիր, սակայն, որ գլխավորը դա է. այլապես...

— Չեմ համաձայնի, ոչ մի գնով չեմ համաձայնի. դա գլխավորն է այնտեղ, գործարանում, թերևս, բայց դուք մոռանում եք, որ մարդը նաև զգացմունք ունի...

— Հինգ,— ասաց Ադուևը:— Ես դա դեռ այբբենարանում եմ սերտել:

— Եվ զայրացուցիչ է, և տխուր,— շշնջաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Դե, դե, մի բարկացիր. ես կանեմ ամեն ինչ, ինչ որ հրամայես, միայն սովորեցրու՝ ինչպե՞ս,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Նրան մի թեթև դաս տուր...

— Հանդիմանությո՞ւն: Խնդրեմ, դա իմ գործն է:

— Ի՞նչ հանդիմանություն: Դու նրան, որքան կարելի է քաղցրությամբ բացատրիր, թե ինչ կարելի է պահանջել և սպասել հիմիկվա ընկերներից. ասա, որ ընկերը այնքան մեղավոր չէ, որքան նա կարծում է... ե՞ս պիտի սովորեցնեմ քեզ: Դու այնքան խելացի ես... այնպես լավ ես խորամանկում...— ավելացրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

Վերջին խոսքի վրա Պյոտր Իվանիչը մի քիչ մռայլվեց:

— Հերիք չէ՞, ինչքան որ դուք անկեղծ զեղումներ եք ունեցել,— ասաց նա բարկացած,— քչփչում էիք, քչփչում և մինչև հիմա ամեն ինչ չեք պրծել քչփչալ ընկերության ու սիրո մասին. հիմա ինձ են մեջ խառնում...

— Բայց սա վերջին անգամն է,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— հուսով եմ, որ դրանից հետո նա կմխիթարվի:

Պյոտր Իվանիչը անվստահ օրորեց գլուխը:

— Փող ունի՞,— հարցրեց նա:— Գուցե չունի, դրանից էլ...

— Մտքիդ միայն փո՛ղն է: Նա պատրաստ կլիներ տալ բոլոր փողերը ընկերոջ մի սիրալիր խոսքի համար:

— Մեկ էլ տեսար. նրանից սպասելի՛ է: Առանց այդ էլ մի անգամ նա արդեն փող տվել է այնտեղ, իր դեպարտամենտում, մի աստիճանավորի, անկեղծ զեղումների համար... Ահա մեկը զանգահարեց, արդյոք նա չի՞: Ի՞նչ պետք է անել, կրկնիր. նրան հանդիմանությո՞ւն անեմ... էլի՞ ինչ: Փո՞ղ:

— Ի՞նչ հանդիմանություն: Հավատա, գործը ավելի կվատացնես: Ես խնդրեցի, որ ընկերության մասին խոսես, սրտի մասին, և ինչքան կարելի է՝ քաղցրությամբ, ուշադիր...

Ալեքսանդրը լուռ ողջունեց, ճաշին լուռ և շատ էր ուտում, իսկ ընդմիջումներին հացից գնդիկներ էր շինում և շշերին ու գրաֆիններին նայում էր աչքի տակով: Ճաշից հետո նա ուզեց գլխարկը վերցնել:

— Այդ ո՞ւր,— հարցրեց Պյոտր Իվանիչը,— մի քիչ նստիր մեզ հետ:

Ալեքսանդրը լուռ հնազանդվեց: Պյոտր Իվանիչը մտածում էր, թե ինչպես սկսի գործը ավելի քնքուշ ու խելացի, և հանկարծ արագախոսությամբ հարցրեց.

— Ես լսել եմ, Ալեքսանդր, որ ընկերդ քեզ հետ ինչ-որ նենգորե՞ն է վարվել...

Այդ անսպասելի խոսքերից Ալեքսանդրը գլուխը ցնցեց, կարծես նրան վերք հասցրին և կշտամբալից հայացքն ուղղեց հորեղբոր կնոջը: Սա ևս չէր սպասում, որ այդպես կտրուկ կանցնեն գործի և սկզբում գլուխը կախեց ձեռագործի վրա, ապա նույնպես կշտամբալից նայեց ամուսնուն. բայց նա գտնվում էր մարսողության և նիրհի կրկնակի հովանու տակ, այդ պատճառով էլ չզգաց այդ հայացքների շեղակի անդրադարձումը:

Ալեքսանդրը նրա հարցին պատասխանեց հազիվ լսելի հառաչանքով:

— Իսկապես որ,— շարունակեց Պյոտր Իվանիչը,— ինչպիսի՛ նենգություն: Այդ ինչ ընկեր է: Հինգ տարի կլինի չի տեսնվել և այն աստիճան սառել է, որ հանդիպելիս ընկերոջը չի խեղդել իր գրկում,

այլ կանչել է երեկոյան իր մոտ, ուզեցել է թղթախաղի նստեցնել... և կերակրել... իսկ հետո — նե՛նգ մարդ — տեսել է ընկերոջ արտահայտությունը և սկսել է հարցուփորձ անել նրա գործերի, հանգամանքների, կարիքների մասին — ի՞նչ նողկալի հետաքրքրասիրություն. և այն էլ — օ, նենգության գագաթնակե՛տ, համարձակվել է առաջարկել իր ծառայությունը... օգնությունը... գուցե և փո՛ղ. և ոչ մի անկեղծ զեղո՛ւմ: Սարսափելի է, սարսափելի: Ցույց տուր, խնդրեմ, ինձ այդ հրեշին, հինգշաբթի օրը հետդ բեր ճաշի... իսկ նա քանիսո՞վ է խաղում:

— Չգիտեմ,— ասաց Ալեքսանդրը բարկացած:— Ծիծաղեցեք, հորեղբայր. դուք իրավացի եք. մենակ ես եմ մեղավոր: Հավատալ մարդկանց, համակրություն որոնել՝ ո՞ւմ մոտ: Մարգարիտներ շաղ տալ՝ ո՞ւմ առաջ: Չորս կողմը ստորություն է, թուլահոգություն, մանրախնդրություն, իսկ ես դեռ պահպանել եմ պատանեկան հավատս բարու, առաքինության, հավատարմության նկատմամբ:

Պյոտր Իվանիչն սկսեց ինչ-որ հաճախակի ու համաչափ շարժել գլուխը:

— Պյոտր Իվանիչ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան շշուկով, քաշելով նրա թևից:— Քնո՞ւմ ես:

— Ի՞նչ քնել,— արթնանալով, ասաց Պյոտր Իվանիչը:— Ամեն ինչ լսում եմ. «առաքինություն, հավատարմություն», ո՞ւր է թե քնում եմ:

— Մի խանգարեք հորեղբորս, ma tante!— նկատեց Ալեքսանդրը:— Նա որ չքնի, մարսողությունը կխանգարվի, և աստված գիտի, թե դրանից ինչ կլինի: Մարդը, իհարկե, երկրի իշխանն է, բայց նա նաև իր ստամոքսի գերին է:

Այդ ասելիս նա ուզում էր, կարծես, դառը ժպտալ, բայց ժպտաց մի տեսակ թթու:

— Բայց ասա ինձ, ի՞նչ էիր ուզում ընկերոջիցդ: Որևէ զոհողությո՞ւն թե ինչ. որ նա պատն ի վեր բարձրանար, թե՞ լուսամուտից դուրս նետվեր: Դու ինչպե՞ս ես հասկանում ընկերությունը, ի՞նչ բան է դա,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Հիմա արդեն զոհողություն չեմ պահանջի, մի անհանգստացեք: Ես, մարդկանց շնորհիվ իջա մինչև թե՛ ընկերության, թե՛ սիրո խղճուկ ըմբռնումը... Ահա ես միշտ ինձ հետ ման էի ածում այս տողերը, որոնք ինձ թվում էին այդ երկու զգացմունքների ամենաճշգրիտ բնորոշումը, ինչպես որ հասկանում էի դրանք և ինչպես որ պետք է լինեն, իսկ հիմա տեսնում եմ, որ դա սուտ է, զրպարտություն է մարդկանց հասցեին կամ նրանց սրտի խղճուկ չիմացություն... Մարդիկ ընդունակ չեն այդպիսի զգացմունքների: Հեռո՛ւ, սրանք նենգ խոսքե՛ր են...

Նա գրպանից հանեց թղթապանակը, իսկ թղթապանակից՝ փոքր ծալած երկու թերթ գրոտած թուղթ:

— Այդ ի՞նչ է,— հարցրեց հորեղբայրը:— Ցույց տուր:

— Չարժի,— ասաց Ալեքսանդրը և ուզում էր թղթերը պատռել:

— Կարդացեք, կարդացեք,— սկսեց խնդրել Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ահա թե երկու ֆրանսիացի նորագույն վիպագիրներ ինչպես են բնորոշում ճշմարիտ բարեկամությունն ու սերը, և ես համաձայնեցի նրանց հետ, կարծում էի, թե կյանքում կգտնեմ այդպիսի էակներ և նրանց մեջ կգտնեմ… բայց ի՞նչ:— Նա արհամարհանքով թափ տվեց ձեռքը և սկսեց կարդալ. «Սիրել ոչ թե այն կեղծ, երկչոտ մտերմությամբ, որն ապրում է մեր ոսկեզօծ պալատներում, որն անդրդվելի չի մնա մի բուռ ոսկու առաջ, որը վախենում է երկդիմի խոսքից, այլ այն հզոր մտերմությամբ, որ արյան փոխարեն տալիս է իր արյունը, որը ապացուցվում է մարտերի ու արյունահեղության մեջ, թնդանոթների որոտի տակ, փոթորկի ոռնոցի ներքո, երբ մտերիմները համբուրում են վառոդից սևացած շուրթերով, իրար են փարվում արնաներկ գրկախառնությամբ... Եվ եթե Պիլադը մահացու վիրավորված է, Օրեստը, եռանդուն հրաժեշտ

տալով նրան, դաշույնի ճշգրիտ հարվածով վերջ է տալիս նրա տանջանքներին, ահեղ երդվում է նրա վրեժը լուծել և երդումը կատարում է, ապա սրբում է իր արցունքը և հանդարտվում...»:

Պյոտր Իվանիչը ծիծաղեց իր չափված, մեղմ ծիծաղով:

— Ո՞ւմ վրա եք ծիծաղում, հորեղբայր,— հարցրեց Ալեքսանդրը:

— Հեղինակի վրա, եթե նա այդ ասում է առանց կատակի և իր կողմից, իսկ հետո քեզ վրա, եթե դու իրոք այդպես էիր հասկանում մտերմությունը:

— Մի՞թե դա միայն ծիծաղելի է,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Միայն: Ներեցեք. ծիծաղելի և խղճուկ: Ասենք, Ալեքսանդրն էլ համաձայն է սրան և թույլ տվեց ծիծաղել: Նա ինքը հիմա խոստովանեց, որ այդպիսի մտերմությունը սուտ է և զրպարտություն մարդկանց հասցեին: Դա արդեն մի կարևոր քայլ է դեպի առաջ:

— Սուտ է նրա համար, որ մարդիկ ընդունակ չեն բարձրանալու մտերմության ըմբռնման մինչ այն աստիճանը, որը պետք է լինի...

— Եթե մարդիկ ընդունակ չեն, ուրեմն և չպիտի լինի...— ասաց Պյոտր Իվանիչը:

— Բայց չէ՞ որ եղել են օրինակներ:

— Դրանք բացառություններ են, իսկ բացառությունները գրեթե միշտ լավ չեն: «Արնաներկ գրկախառնությո՛ւն, ահեղ երդո՛ւմ, դաշույնի հարվա՛ծ»:

Եվ նա կրկին ծիծաղեց:

— Հապա՛ կարդա սիրո մասին,— շարունակեց նա,— նույնիսկ քունս փախավ:

— Եթե սա էլ ձեզ առիթ կտա էլի ծիծաղելու՝ համեցեք,— ասաց Ալեքսանդրը և սկսեց կարդալ հետևյալը.

«Սիրել՝ նշանակում է չպատկանել ինքն իրեն, դադարել իր համար ապրելուց, անցնել մյուսի գոյության մեջ, մի առարկայի վրա կենտրոնացնել բոլոր մարդկային զգացմունքները՝ հույսը, վախը, վիշտը, վայելքը. սիրել՝ նշանակում է ապրել անվախճանության մեջ...»:

— Սատանան գիտի, թե ինչ է,— ընդհատեց Պյոտր Իվանիչը,— բառերի ինչպիսի՛ հավաքածու:

— Ոչ, դա լավ է: Ինձ դուր է գալիս,— նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Շարունակեցեք, Ալեքսանդր:

«Չիմանալ ինչ բան է զգացմունքի սահմանը, իրեն նվիրել մի էակի,— շարունակեց Ալեքսանդրը,— և ապրել, խորհել միայն նրա երջանկության համար, վեհություն գտնել ստորացման մեջ, տխրության մեջ վայելք և տխրություն վայելքի մեջ, անձնատուր լինել ամեն տեսակ հակադրությունների, բացի սիրուց և ատելությունից: Սիրել՝ նշանակում է ապրել իդեալական աշխարհում...»:

Պյոտր Իվանիչը այդ խոսքի վրա գլուխն օրորեց:

«Իդեալական աշխարհում (շարունակում էր Ալեքսանդրը), որն իր փայլով ու հոյակապությամբ գերազանցում է ամենայն փայլ ու հոյակապություն: Այդ աշխարհում երկինքը թվում է ավելի մաքուր, բնությունն ավելի շքեղ. կյանքը և ժամանակը բաժանել երկու մասի՝ ներկայության և բացակայության, տարվա երկու եղանակի՝ գարնան և ձմռան. առաջինին համապատասխանում է գարունը, երկրորդին՝ ձմեռը, որովհետև, որքան էլ սքանչելի լինեն ծաղիկները և ջինջ լինի երկնի լազուրը, բայց բացակայության դեպքում թե մեկի, թե մյուսի ամբողջ հմայքը մթագնում է. ամբողջ աշխարհում տեսնել միայն մի էակ և այդ էակի մեջ ամփոփել տիեզերքը... Վերջապես, սիրել՝ նշանակում է դարանակալել սիրելի էակի յուրաքանչյուր հայացքը, ինչպես բեդվինն է դարանակալում ցողի ամեն մի կաթիլը, տոթից չորացած շրթունքները զովացնելու համար. նրա

բացակայությամբ հուզվել բազմաթիվ մտքերից, իսկ նրա ներկայությամբ չկարողանալ արտահայտել ոչ մի միտք, ջանալ միմյանց գերազանցել զոհաբերություններով...»

— Բավակա՜ն է, ի սեր աստծու, բավակա՜ն,— ընդհատեց Պյոտր Իվանիչը,— համբերություն չկա: Դու ուզում էիր պատռել. դե պատռիր, պատռիր շուտով: Ահա այդպես:

Պյոտր Իվանիչը նույնիսկ վեր կացավ բազկաթոռից և սկսեց ետ ու առաջ քայլել սենյակում:

— Մի՞թե եղել է այնպիսի դար, երբ առանց կատակի այդպես էին մտածում և անում էին այդ բոլորը,— ասաց նա:— Մի՞թե այն ամենը, ինչ գրում են ասպետների և հովվուհիների մասին վիրավորական հորինվածք չէ նրանց հասցեին: Եվ ի՜նչ հավաս՝ խլրտացնել ու այդպես մանրամասն վերլուծել մարդկային հոգու այդ խղճուկ լարերը… սե՜ր. այդ ամենին տալ այդպիսի նշանակություն...

Նա ուսերը թոթվեց:

— Ինչո՞ւ այդքան հեռու գնանք, հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը:— Ես ինքս իմ մեջ զգում եմ սիրո այդ ուժը և հպարտանում եմ դրանով: Իմ դժբախտությունը միայն նրանում է կայանում, որ ես չհանդիպեցի այդ սիրուն արժանի և նույնպիսի ուժով օժտված էակի…

— Սիրո ո՜ւժ,— կրկնեց Պյոտր Իվանիչը:— Միևնույն է, եթե ասեիր թուլության ուժ:

— Դա քո սրտով չէ, Պյոտր Իվանիչ,— նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան,— ուստի ուրիշների մեջ էլ չես ուզում հավատալ այդպիսի սիրո գոյությանը…

— Իսկ դո՞ւ: Մի՞թե դու հավատում ես,— հարցրեց Պյոտր Իվանիչը, մոտենալով նրան:— Դե, ոչ, դու կատակ ես անում: Նա դեռ երեխա է և չի ճանաչում ոչ իրեն, ոչ ուրիշներին, իսկ քեզ ամոթ կլիներ: Մի՞թե դու կկարողանայիր հարգել տղամարդուն, եթե նա այդպես սիրեր… Մի՞թե այդպես են սիրում…

Լիզավետա Ալեքսանդրովնան գործը թողեց:

— Հապա ինչպե՞ս,— հարցրեց նա կամացուկ, բռնելով ամուսնու ձեռքերից և դեպի իրեն քաշելով:

Պյոտր Իվանիչը կամացուկ ազատեց ձեռքերը կնոջ ձեռքերից և թաքուն ցույց տվեց Ալեքտանդրին, որը մեջքը նրանց կողմն արած կանգնել էր պատուհանի մոտ, և նորից շարունակեց իր պտույտը սենյակում:

— Ինչպե՜ս,— ասաց նա:— Կարծես դու չես լսել, թե ինչպես են սիրում…

— Սիրո՞ւմ,— կրկնեց Լիզավետա Ալեքսանդրովնան մտածկոտ և նորից դանդաղորեն անցավ իր գործին:

Մոտ քառորդ ժամ տիրում էր լռություն: Պյոտր Իվանիչը առաջինը խախտեց այդ լռությունը:

— Հիմա դու ի՞նչ ես անում,— հարցրեց նա եղբորորդուն:

— Դե… ոչինչ:

— Քիչ է: Կարդո՞ւմ ես գոնե:

— Այո...

— Իսկ ի՞նչ:

— Կրիլովի առակները:

— Լավ գիրք է. բայց, իհարկե, ո՞չ միայն դա:

— Հիմա միայն դա: Աստվա՜ծ իմ: Մարդկանց ինչպիսի՜ կերպարներ, ինչպիսի՜ ճշտություն:

— Դու ինչ-որ բարկացած ես մարդկանց վրա: Մի՞թե այդ... անունն ի՞նչ էր, նրա սերն է քեզ այդպես դարձրել...

— Օ՛: Ես նույնիսկ մոռացել էի այդ հիմարությունը: Վերջերս ես անցնում էի այն տեղերով, որտեղ այնքան երջանիկ էի եղել և այնպես տառապել, կարծում էի, թե հիշողություններից սիրտս պատառ-պատառ կանեմ:

— Եվ ինչ, պատառ-պատառ արի՞ր:

— Տեսա և ամառանոցը, և այգին, և ցանկապատը, իսկ սիրտս նույնիսկ չթրթռաց:

— Դե, ահա, չէ՞ որ ես ասում էի: Իսկ ինչո՞վ են մարդիկ քեզ այդպես ատելի:

— Ինչո՜վ: Իրենց ստորությամբ, հոգու մանրությամբ... Աստվա՛ծ իմ: Երբ մտածում ես, որքան ստորություն է պտտվում այնտեղ, ուր բնությունը այնպիսի սքանչելի սերմեր է ձգել...

— Դա քո ի՞նչ գործն է: Ուզում ես մարդկանց ուղղե՞լ, ինչ է:

— Ինչ իմ գո՞րծն է: Մի՞թե ինձ չեն հասնում այդ ցեխի ցայտերը, որում լողում են մարդիկ: Դուք գիտեք, թե ինձ ինչ պատահեց, և այդ բոլորից հետո չատել, չարհամարհել մարդկա՜նց:

— Իսկ ի՞նչ է պատահել քեզ:

— Սիրո դավաճանություն, մտերմության ինչ-որ կոպիտ, սառը մոռացում... Եվ ընդհանրապես նողկալի է, զզվելի է նայել մարդկանց, ապրել նրանց հետ: Բոլոր նրանց մտքերը, խոսքերը, գործերը, ամեն ինչ հիմնված է ավազի վրա: Այսօր վազում են մի նպատակի, շտապում են, իրար ցած գցում, ստորություններ անում, շողոքորթում, ստորանում, դավեր նյութում, իսկ վաղը՝ մոռանում են երեկվանի մասին և մի ուրիշ բանի հետևից են վազում: Այսօր մի բանով հիանում են, վաղը՝ հայհոյում. այսօր ջերմ են, քնքուշ, վաղը՝ սառն… ոչ: Որ նայում ես՝ սարսափելի, նողկալի է կյանքը: Իսկ մարդի՜կ...

Պյոտր Իվանիչը, բազկաթոռին նստած, նորից նիրհի մեջ ընկավ:

— Պյոտր Իվանիչ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան, կամացուկ բոթելով նրան:

— Մաղձոտում ես, մաղձոտում: Պետք է գործով զբաղվել,— ասաց Պյոտր Իվանիչը, աչքերը տրորելով,— այն ժամանակ մարդկանց էլ չես հայհոյի, պատճառ չունես: Ինչո՞վ լավ չեն քո ծանոթները: Բոլորը կարգին մարդիկ են:

— Հա՛: Որին մոտենաս՝ Կրիլովի առակների գազաններից մեկն է որ կա,— ասաց Ալեքսանդրը:— Մեկը երեսիդ շողոքորթում է, փաղաքշում, իսկ հետևիցդ... ես լսել եմ, թե նա իմ մասին ինչ էր ասում: Մյուսը այսօր քեզ հետ հեկեկում է քո վիրավորանքի համար, իսկ վաղը կհեկեկա քեզ վիրավորողի հետ. այսօր քեզ հետ ուրիշի վրա է ծիծաղում, իսկ վաղը ուրիշի հետ քեզ վրա… զզվելի՜ է:

— Իսկ Լունինն՞ը:

— Դրանք էլ լա՜վն են: Նա ինքը ճիշտ այն ավանակն է, որից սոխակը թռավ յոթ սարի հետև: Իսկ կինը ուղղակի բարի աղվեսի տեսք ունի...

— Ի՞նչ կասես Սոնինների մասին:

— Ոչ մի լավ բան չես ասի: Սոնինը միշտ լավ խորհուրդ է տալիս, երբ դժբախտությունն արդեն անցել է, բայց փորձեցեք նրան դիմել, երբ կարիքի մեջ եք... առանց ընթրիքի տուն կուղարկի, ինչպես աղվեսը գայլին: Հիշո՞ւմ եք, ինչպես հոլի նման պտտվում էր ձեր շուրջը, երբ ձեր միջնորդությամբ տեղ էր որոնում: Իսկ հիմա լսեցեք, թե ինչ է ասում ձեր մասին:

— Վոլոչկովն է՞լ քեզ դուր չի գալիս:

— Չնչին և, ի հավելումն, չար անասուն է...

Ալեքսանդրը նույնիսկ թքեց:

— Այ թե նախշեցի՛ր,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Էլ ի՞նչ սպասեմ մարդկանցից,— շարունակեց Ալեքսանդրը:

— Ամեն ինչ. և մտերմություն, և սեր, և շտաբ-սպայական աստիճան, և փող... Դե, հիմա եզրափակիր այդ պատկերասրահդ մեր պատկերներով. ասա, ինչպիսի՞ գազաններ ենք ես և կինս:

Ալեքսանդրը ոչինչ չպատասխանեց, բայց նրա դեմքին առկայծեց նուրբ, հազիվ նկատելի իրոնիայի արտահայտություն: Նա ժպտաց: Ոչ այդ արտահայտությունը, ոչ ժպիտը չխուսափեցին Պյոտր Իվանիչից: Նա հայացք փոխանակեց կնոջ հետ, վերջինս աչքերը ցած գցեց:

— Իսկ դու ի՞նքդ ինչ գազան ես,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Ես մարդկանց չարիք չեմ պատճառել,— արժանապատվությամբ պատասխանեց Ալեքսանդրը:— Ես նրանց նկատմամբ կատարել եմ ամեն ինչ... Ես սիրող սիրտ ունեմ. ես գիրկս լայն բաց արի մարդկանց, իսկ նրանք ի՞նչ արին:

— Այս ինչ է, ի՛նչ ծիծաղելի է խոսում նա,— նկատեց Պյոտր Իվանիչը, դիմելով կնոջը:

— Քեզ համար ամեն ինչ ծիծաղելի է,— պատասխանեց կինը:

— Եվ ես ինքս մարդկանցից չէի պահանջում,— շարունակեց Ալեքսանդրը,— ոչ բարու սխրանք, ոչ մեծահոգություն, ոչ անձնուրացություն… պահանջում էի միայն արժանին, բոլոր իրավունքներով ինձ հասանելիքը...

— Ուրեմն դու իրավացի՞ ես: Ջրից բոլորովին չոր դուրս եկար: Դե սպասիր, ես քեզ մերկացնեմ...

Լիզավետա Ալեքսանդրովնան նկատեց, որ ամուսինն սկսեց խիստ տոնով խոսել, և անհանգստացավ:

— Պյոտր Իվանիչ,— շշնջաց նա,— վերջ տուր…

— Ոչ, թող լսի ճշմարտությունը: Ես մի վայրկյանում կվերջացնեմ: Ասա, խնդրեմ, Ալեքսանդր, երբ հիմա քո ծանոթներին նշավակում էիր, անվանելով մերթ անպիտաններ, մերթ հիմարներ, սրտումդ չխլրտա՞ց խղճի խայթի նման մի բան:

— Այդ ինչո՞ւ, հորեղբայր:

— Նրա համար, որ այդ գազանների մոտ մի քանի տարի անընդհատ միշտ գտնում էիր սրտաբաց ընդունելություն. ենթադրենք այն մարդկանց առաջ, որոնցից նրանք որևէ բան էին ակնկալում, խորամանկում էին, նրանց դեմ բանսարկություններ էին անում, ինչպես դու ասում ես. իսկ քո մեջ նրանք որոնելու ոչինչ չունեին. ուրեմն ի՞նչն էր ստիպում նրանց քեզ իրենց մոտ կանչել, սիրաշահել... Լավ չէ՞, Ալեքսանդր…— լրջորեն ավելացրեց Պյոտր Իվանիչը:— Մեկ ուրիշը հենց միայն դրա համար կլռեր, եթե իմանար նրանց ինչ-որ մեղքերը:

Ալեքսանդրը ամբողջովին շառագունեց:

— Ես նրանց ուշադրությունը դեպի ինձ վերագրում էի ձեր հանձնարարականին,— պատասխանեց նա, բայց արդեն առանց արժանապատվության, այլ բավականին հնազանդ:— Ըստ որում այդ բարձրաշխարհիկ հարաբերությունները...

— Դե լավ. վերցնենք ոչ բարձրաշխարհիկ հարաբերությունները: Ես արդեն ապացուցում էի քեզ, միայն չգիտեմ ապացուցեցի՞ արդյոք, որ դեպի քո այդ… անունն ի՞նչ էր, Սաշենկան թե ինչ, դու անարդարացի էիր. դու տարի ու կես նրանց տանը յուրայինի պես էիր. այնտեղ էիր ապրում առավոտից մինչև երեկո, և դեռ սիրված էիր այդ, ինչպես դու անվանում ես նրան,

արհամարհելի անպիտան աղջկա

կողմից: Կարծում եմ, դա արհամարհանքի արժանի չի...

— Իսկ ինչո՞ւ նա դավաճանեց:

— Այսինքն՝ սիրեց ուրիշի: Այդ էլ մենք վճռել ենք բավարար ձևով: Բայց մի՞թե կարծում ես, որ եթե նա շարունակեր քեզ սիրել, դու չպետք է դադարեիր նրան սիրելուց:

— Ե՞ս: Երբեք:

— Դե, ուրեմն դու ոչինչ չես հասկանում: Առաջ գնանք: Ասում ես, որ դու բարեկամներ չունես, իսկ ես միշտ կարծում էի, որ դրանք երեքն են:

— Երե՞քը,— բացականչեց Ալեքսանդրը,— մի ժամանակ կար մեկը, այն էլ...

— Երեքը,— համառորեն կրկնեց Պյոտր Իվանիչը:— Առաջինը, սկսենք ավագության կարգով, այն **մեկն** է: Մի քանի տարի չտեսնվելուց հետո մեկ ուրիշը հանդիպելիս երեսը շուռ կտար քեզանից, իսկ նա քեզ հրավիրեց իր մոտ, և երբ դու գնացիր թթված երեսով, նա կարեկցաբար հարցուփորձ արեց, թե արդյոք որևէ բան պետք չէ՞ քեզ, քեզ առաջարկեց իր ծառայությունը, օգնությունը, և ես համոզված եմ, կտար նաև փող, այո, իսկ մեր դարում, այդ փորձաքարին դիպչելով, կսայթաքի ոչ միայն զգացմունքը... Ոչ, դու ինձ ծանոթացրու նրա հետ. կարգին մարդ է... իսկ քո կարծիքով նենգ է:

Ալեքսանդրը կանգնել էր գլուխը կախ:

— Իսկ ի՞նչ ես կարծում, ո՞վ է քո երկրորդ բարեկամը,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Ո՞վ,— տարակուսանքով ասաց Ալեքսանդրը,— ոչ ոք...

— Անխի՜ղճ,— ընդհատեց նրան Պյոտր Իվանիչը:— Հը՞, Լիզա: Եվ չի կարմրում: Իսկ ես քեզ ի՞նչ եմ գալիս, թույլ տուր հարցնել:

— Դուք... ազգական եք:

— Կարևո՜ր տիտղոս: Ոչ, ես կարծում էի՝ ավելին: Լավ չէ՜, Ալեքսանդր. դա այնպիսի գիծ է, որը նույնիսկ դպրոցական վայելչագրություններում անվանված է նողկալի, և որը, կարծեմ, Կրիլովի մոտ չկա:

— Բայց դուք միշտ վանել եք ինձ...— վարանոտ ասաց Ալեքսանդրը, առանց աչքերը բարձրացնելու:

— Այո, երբ դու ուզել ես գրկախառնվել:

— Դուք ծիծաղում էիք ինձ վրա, զգացմունքի վրա...

— Իսկ ինչի՞ համար, իսկ ինչո՞ւ,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Դուք հետևում էիք ինձ քայլ առ քայլ:

— Ա՜: Վերջապես այդտե՜ղ հասար: Հետևում էի: Փորձիր քեզ համար մի այդպիսի դաստիարակ վարձել: Ինչի՞ համար էի չարչարվում: Ես կարող էի էլի որոշ բաներ ավելացնել, բայց դա կնմանվեր գռեհիկ կշտամբանքի...

— Հորեղբա՜յր...— ասաց Ալեքսանդրը մոտենալով նրան և պարզելով երկու ձեռքերը:

— Գնա տեղդ. ես դեռ չեմ վերջացրել,— սառնորեն ասաց Պյոտր Իվանիչը:— Երրորդ և լավագույն բարեկամիդ, հուսով եմ, ինքդ կանվանես…

Ալեքսանդրը նորից նայում էր նրան և, կարծես, հարցնում էր. «Բայց ո՞ւր է նա»: Պյոտր Իվանիչը ցույց տվեց կնոջը:

— Ահա նա:

— Պյոտր Իվանիչ,— ընդհատեց նրան Լիզավետա Ալեքսանդրովնան,— ի սեր աստծու, խելքիդ զոռ մի տուր, թող…

— Ոչ, մի՛ խանգարի:

— Ես գիտեմ գնահատել իմ հորեղբոր կնոջ բարեկամությունը…— մրթմրթաց Ալեքսանդրը:

— Ոչ, չգիտես, եթե գիտենայիր, աչքերով առաստաղի վրա չէիր որոնի բարեկամիդ, այլ ցույց կտայիր նրան: Եթե զգայիր նրա բարեկամությունը՝ նրա արժանիքները հարգելով, չէիր արհամարհի մարդկանց: Քո աչքում մենակ նա կփրկագներ մյուսների թերությունները: Ո՞վ էր չորացնում քո արցունքները և նվվում քեզ հետ միասին: Ո՞վ էր կարեկից լինում, և այն էլ ինչպե՜ս կարեկից, քո ամեն մի ցնդաբանությանը: Թերևս միայն մայրը կարողանար սրտին այդքան մոտիկ ընդունել այն ամենը, ինչ քեզ էր վերաբերում, և նա էլ չէր կարողանա: Եթե դու այդ զգայիր, քիչ առաջ չէիր ժպտա ծաղրաբար, կտեսնեիր, որ այստեղ չկա ոչ աղվես, ոչ գայլ, այլ կա մի կին, որը քեզ սիրում է ինչպես հարազատ քույր…

— Ախ, ma tante!— ասաց Ալեքսանդրը շփոթված և բոլորովին ոչնչացած այդ կշտամբանքից:— Մի՞թե դուք կարծում եք, որ ես չեմ գնահատում այդ և ձեզ չեմ համարում մի փայլուն բացառություն ամբոխից: Աստվա՛ծ, աստվա՛ծ: Երդվում եմ...

— Հավատում եմ, հավատում, Ալեքսանդր,— պատասխանեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Դուք Պյոտր Իվանիչին մի լսեք. նա լուն ուղտ է դարձնում. ուրախ է, որ խելքը ցույց տալու առիթ է ներկայացել. ի սեր աստծու, վերջ տուր, Պյոտր Իվանիչ:

— Հիմա, հիմա կվերջացնեմ,— **ևս վերջին մի պատում:** Դու ասացիր, որ կատարում ես բոլո՞րը, ինչ քեզնից պահանջում են քո պարտականությունները ուրիշների նկատմամբ:

Ալեքսանդրն այլևս ոչ մի խոսք չէր պատասխանում և աչքերը չէր բարձրացնում:

— Դե, ասա. սիրո՞ւմ ես քո մորը:

Ալեքսանդրը հանկարծ աշխուժացավ:

— Ի՞նչ հարց է,— ասաց նա:— Սրանից հետո էլ ո՞ւմ պիտի սիրեմ: Ես նրան պաշտում եմ, ես նրա համար կյանքս կտայի…

— Լավ: Նշանակում է, քեզ հայտնի է, որ նա ապրում, շնչում է միայն քեզնով, որ քո ամեն մի ուրախությունն ու վիշտը ուրախություն և վիշտ է նրա համար: Նա հիմա ժամանակը հաշվում է ոչ թե ամիսներով, ոչ թե շաբաթներով, այլ քեզնից և քո մասին ստացած տեղեկություններով… Ասա տեսնեմ, վաղո՞ւց է, որ նրան նամակ ես գրել:

Ալեքսանդրը թրթփաց.

— Մի... երեք շաբաթ,— մրմնջաց նա:

— Ոչ. չո՛րս ամիս: Ինչպե՞ս կհրամայես անվանել այդպիսի քայլը: Հապա, ինչպիսի՞ գազան ես դու: Գուցե նրա համար չես ասում, որ Կրիլովի մոտ չկա այդպիսին:

— Իսկ ի՞նչ կա,— հանկարծ վախով հարցրեց Ալեքսանդրը:

— Այն կա, որ պառավը վշտից հիվանդացել է:

— Մի՞թե: Աստվա՛ծ, աստվա՛ծ:

— Ճիշտ չէ, ճիշտ չէ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան և անմիջապես վազեց դեպի գրասեղանը և այնտեղից վերցրեց մի նամակ, որը տվեց Ալեքսանդրին:— Նա հիվանդ չէ, բայց շատ է թախծում:

— Դու նրան երես ես տալիս, Լիզա,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Իսկ դու չափից ավելի խիստ ես: Ալեքսանդրը այնպիսի պատճառներ ուներ, որոնք ժամանակավորապես նրա ուշադրությունը շեղում էին...

— Մի անպիտան աղջկա համար մոռանալ մորը՝ լա՛վ պատճառներ են:

— Դե հերիք է, ի սեր աստծու,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան համոզիչ և նշանացի ցույց տալով ազգականին:

Ալեքսանդրը կարդալով մոր նամակը, նրանով ծածկեց իր դեմքը:

— Մի խանգարեք հորեղբորս, ma tante, թող նա որոտա կշտամբանքները. ես ավելի վատթարին եմ արժանի. ես հրեշ եմ,— ասում էր նա, հուսահատական ծամածռություններներ անելով:

— Դե, հանգստացիր, Ալեքսանդր,— ասաց Պյոտր Իվանիչը:— Այդպիսի հրեշներ շատ կան: Տարվել ես հիմարությամբ և առժամանակ մոռացել մորդ, դա բնական է. սերը դեպի մայրը՝ հանդարտ զգացմունք է. նա աշխարհում մի բան ունի՝ քեզ. դրա համար էլ բնական է, որ նա վշտանա: Այստեղ դեռ քեզ մահապատժի ենթարկելու բան չկա. միայն կասեմ քո սիրելի հեղինակի խոսքերով.

Քան դրացուդ այդպես ծաղրես,

Լավ չի՞ լինի դու քեզ նայես:

և ներողամիտ լինես ուրիշների թուլությունների նկատմամբ: Դա այնպիսի կանոն է, առանց որի ոչ իրեն, ոչ ուրիշին կյանք չի լինի: Ահա և բոլորը: Դե, ես կգնամ քնելու:

— Հորեղբա՛յր: Դուք բարկանո՞ւմ եք,— ասաց Ալեքսանդրը խոր զղջման ձայնով:

— Որտեղի՞ց վերցրիր այդ: Ինչո՞ւ պիտի արյունս պղտորեմ: Մտքովս էլ չէր անցնում բարկանալ: Ես միայն ուզում էի Կապիկն ու հայելին առակի արջի դերը խաղալ: Ինչ է, վարպետորեն չխաղացի՞, հը՞, Լիզա:

Նա կողքով անցնելիս ուզեց համբուրել կնոջը, բայց սա խուսափեց:

— Կարծես թե ճշտիվ կատարեցի հրամաններդ,— ավելացրեց Պյոտր Իվանիչը,— էլ ինչո՞ւ չես... հա, մոռացա, մի բան... ի՞նչ վիճակում է սիրտդ, Ալեքսանդր,— հարցրեց նա:

Ալեքսանդրը լուռ էր:

— Իսկ փող պետք չէ՞,— նորից հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Ոչ, հորեղբայր...

— Երբե՛ք չի խնդրի,— ասաց Պյոտր Իվանիչը, իր հետևից դուռը ծածկելով:

— Ի՞նչ կմտածի հորեղբայրս իմ մասին,— հարցրեց Ալեքսանդրը փոքր-ինչ լռելով:

— Նույնը, ինչ որ առաջ,— պատասխանեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Դուք կարծում եք, որ այդ ամենը նա ձեզ ասում էր սրտա՞նց:

— Հապա ինչպե՞ս:

— Ի՜: Ոչ: Հավատացեք, որ նա ուզում էր մի քիչ մեծություն ծախել: Տեսնո՞ւմ եք, ինչպես մեթոդաբար արեց նա այդ բոլորը: Ապացույցները ձեր դեմ դասավորեց կարգով. առաջ թույլ ապացույցները, հետո ավելի զորեղները, նախ հարցուփորձով իմացավ մարդկանց մասին ձեր վատ կարծիքի պատճառները… իսկ հետո արդեն... ամե՜ն տեղ մեթոդ է: Կարծում եմ, իսկույն էլ մոռացավ:

— Ինչքա՜ն խելք: Կյանքի, մարդկանց ինչպիսի՜ իմացում, ինքն իրեն տիրապետելու կարողությո՜ւն:

— Այո, շատ խելք և չափազանց շատ ինքնատիրապետման կարողություն,— մտախոհ ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան.— բայց...

— Իսկ դուք, ma tante, դուք կդադարեք ինձ հարգելուց: Բայց հավատացեք, միայն այնպիսի ցնցումները, որ տեղի ունեցան ինձ հետ, կարող էին շեղել իմ ուշադրությունը… Աստվա՛ծ: Իմ խեղճ մայրիկը:

Լիզավետա Ալեքսանդրովնան նրան մեկնեց ձեռքը:

— Ես, Ալեքսանդր, չեմ դադարի հարգել ձեր մեջ սիրտը,— ասաց նա:— Զգացմունքն է ձեզ քաշում նաև սխալների մեջ, դրա համար էլ ես միշտ կներեմ ձեզ:

— Ախ, ma tante, դուք կնոջ իդեալ եք:

— Ուղղակի կին եմ:

Ալեքսանդրի վրա բավական ուժեղ ազդեց հորեղբոր հանդիմանությունը: Նա հենց այդտեղ, հորեղբոր կնոջ հետ նստած խորասուզվեց տանջալի մտածմունքների մեջ: Թվում էր, այն հանգստությունը, որ ազգականուհին այնպիսի դժվարությամբ հաստատել էր նրա սրտում, հանկարծ լքեց Ալեքսանդրին: Զուր էր Լիզավետա Ալեքսանդրովնան սպասում որևէ չար վարմունքի, ինքն էր դրդում խայթոցների և ջանասիրությամբ կծու ծաղրի էր ենթարկում Պյոտր Իվանիչին. Ալեքսանդրը խուլ ու համր էր: Նրա վրա կարծես մի դույլ սառը ջուր էին ածել:

— Ձեզ ի՞նչ է պատահել, ինչու եք դուք այդպես,— հարցրեց հորեղբոր կինը:

— Հենց այնպես, ma tante, ինչ-որ սիրտս ուրախ չէ: Հորեղբայրս հասկանալի դարձրեց ինքս ինձ. հրաշալի բացատրեց:

— Դուք նրան ականջ մի արեք. նա երբեմն էլ ճիշտ չի ասում:

— Ոչ, մի մխիթարեք ինձ: Ես հիմա զզվելի եմ ինքս ինձ համար: Արհամարհում, ատում էի մարդկանց, իսկ հիմա նաև ինձ: Մարդկանցից կարելի է փախչել, իսկ ինքն իրենից մարդ ո՞ւր փախչի: Ամեն ինչ այնպես չնչին է. այս բոլոր բարիքները կյանքի ողջ պարապուտը, և մարդիկ, և ինքս…

— Ախ, այդ Պյոտր Իվա՛նիչը,— խոր հոգոցով ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— նա ում ասես թախիծ կպատճառի:

— Լոկ մի բացասական մխիթարություն է մնացել ինձ, որ ոչ ոքի չեմ խաբել, չեմ դավաճանել ոչ սիրուն, ոչ բարեկամությանը...

— Ձեզ չեն կարողացել գնահատել,— ասաց հորեղբոր կինը,— բայց հավատացեք, կգտնվի մի սիրտ, որ ձեզ կգնահատի. ես երաշխավորում եմ դրան: Դուք դեռ այնքան ջահել եք, մոռացեք այս ամենը, զբաղվեցեք, դուք տաղանդ ունեք. գրեցեք... Որևէ բան գրո՞ւմ եք հիմա:

— Ոչ:

— Գրեցեք:

— Վախենում եմ, ma tante…

— Ականջ մի արեք Պյոտր Իվանիչին. նրա հետ դատողություն արեք քաղաքականության, գյուղատնտեսության մասին, ինչի մասին ուզում եք, միայն ոչ պոեզիայի մասին: Նա այդ մասին երբեք ձեզ ուղիղ չի ասի: Ձեզ կգնահատի ժողովուրդը, կտեսնեք... Ուրեմն կգրե՞ք:

— Լավ:

— Շուտո՞վ կսկսեք:

— Հենց որ կարողանամ: Հիմա լոկ դրա վրա է մնացել հույսս:

Պյոտր Իվանիչը քունն առնելով, եկավ նրանց մոտ, բոլորովին հագնված և գլխարկը ձեռքին: Նա էլ Ալեքսանդրին խորհուրդ տվեց գործով զբաղվել պաշտոնավարության գծով և ժուռնալի գյուղատնտեսական բաժնի գծով:

— Կաշխատեմ, հորեղբայր,— պատասխանեց Ալեքսանդրը,— բայց ես խոստացա հորեղբորակնոջը…

Լիզավետա Ալեքսանդրովնան նրան նշան արավ, որ լռի, բայց Պյոտր Իվանիչը նկատեց:

— Ինչ, ի՞նչ խոստացար,— հարցրեց նա:

— Նոր նոտաներ բերել,— պատասխանեց կինը:

— Ոչ, ճիշտ չի. ի՞նչ է, Ալեքսանդր:

— Գրել վիպակ կամ որևէ բան...

— Դու դեռ չե՞ս հրաժարվել գեղեցիկ գրականությունից,— ասաց Պյոտր Իվանիչը, զգեստը մաքրելով փոշու հատիկներից:— Իսկ դու, Լիզա, շեղում ես նրան, իզուր:

— Ես իրավունք չունեմ դրանից հրաժարվելու,— նկատեց Ալեքսանդրը:

— Ո՞վ է քեզ ստիպում:

— Ինչո՞ւ պիտի ինքնակամ և անշնորհակալ կերպով մերժեմ այն պատվավոր դերը, որին կոչված եմ: Կյանքում լոկ մի լուսավոր հույս է մնացել, ա՞յդ էլ ոչնչացնեմ: Եթե կործանեմ այն, ինչ վերուստ դրված է մեջս, ապա կկործանեմ և ինձ...

— Այդ ի՞նչ է դրված քո մեջ, բացատրիր ինձ, խնդրեմ:

— Այդ բանը չեմ կարող բացատրել ձեզ, հորեղբայր: Ինքներդ պիտի հասկանաք: Ձեր մազերը բիզ-բիզ կանգնե՞լ են որևէ բանից, բացի սանրից:

— Ոչ,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Դե, ահա տեսնո՞ւմ եք: Փոթորկվե՞լ են ձեր մեջ կրքերը, բորբոքվե՞լ է երևակայությունը և ձեզ համար ստեղծե՞լ է գեղեցիկ ուրվականներ, որոնք ուզեցել են մարմնավորվել: Ձեր սիրտը տրոփե՞լ է հատուկ զարկերով:

— Անհեթեթ, անհեթե՛թ բան: Դե, հետո՞ ինչ,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Այն, որ ում հետ այդ չի պատահել, նրան չի էլ կարելի բացատրել, թե ինչու ես ուզում գրել, երբ ինչ-որ անհանգիստ ոգի պնդում է գիշեր ու ցերեկ, քուն թե արթուն՝ գրի՛ր, գրի՛ր:

— Բայց ախր դու գրել չգիտես:

— Հերիք, Պյոտր Իվանիչ. ինքդ չգիտես, ինչո՞ւ ես խանգարում ուրիշներին,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ներեցեք, հորեղբայր, եթե նկատեմ, որ դուք դատավոր չեք այս գործում:

— Իսկ ով է դատավոր: Սա՞:

Պյոտր Իվանիչը ցույց տվեց կնոջը:

— Նա դիտմամբ է ասում, իսկ դու հավատում ես,— ավելացրեց հորեղբայրը:

— Դուք ինքներդ էլ իմ այստեղ նոր եկած ժամանակ խորհուրդ էիք տալիս գրել, փորձել ինքս ինձ…

— Հետո՞ ինչ: Փորձեցիր՝ ոչինչ չի ստացվում, պետք է թողնել:

— Մի՞թե ինձ մոտ երբեք չեք գտել ոչ մի խելացի միտք, ոչ հաջողված բանաստեղծություն:

— Ինչպե՞ս չգտնես: Կա: Դու հիմար չես. խելոք մարդու մի քանի փուլթ ստեղծագործության մեջ ինչպե՞ս չգտնես հաջողված միտք: Բայց ախր դա ոչ թե տաղանդ է, այլ խելք:

— Ա՛խ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան, բարկությամբ շրջվելով աթոռի վրա:

— Իսկ սրտի տրոփյունը, թրթիռը, քաղցր գրկանքը և նման բաներ ո՞ւմ չի պատահի:

— Կարծում եմ, առաջինը հենց քե՛զ,— նկատեց կինը:

— Մի տե՛ս: Հիշո՞ւմ ես, երբեմն ես հիանում էի…

— Այդ ինչո՞վ: Չեմ հիշում:

— Բոլորն զգում են այդ բաները,— շարունակեց Պյոտր Իվանիչը, դիմելով եղբորորդուն,— ո՞ւմ չեն հուզում լռությունը կամ, ասենք, այգին, լճակները, ծովը: Եթե դա զգային միայն արվեստագետները, էլ մարդ չէր լինի, որ նրանց հասկանար: Իսկ այդ բոլոր զգացողություններն արտացոլել իրենց երկերում՝ դա ուրիշ բան է, դրա համար հարկավոր է տաղանդ, իսկ դու, կարծում եմ, չունես: Տաղանդը թաքցնել չի լինի, նա փայլատակում է յուրաքանչյուր տողի, վրձնի յուրաքանչյուր հարվածի մեջ...

— Պյոտր Իվա՛նիչ: Քո գնալու ժամանակն է,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Հիմա:

— Ուզում ես աչքի՞ ընկնել,— շարունակեց նա:— Դու աչքի ընկնելու բան ունես: Խմբագիրը գովում է քեզ, ասում է, որ գյուղատնտեսության մասին քո հոդվածները հրաշալի մշակված են, նրանց մեջ միտք կա. ասում է, ամեն ինչից երևում է գիտական ստեղծագործողը և ոչ թե արհեստավորը: Ես ուրախացա. «Վա՛հ, մտածում եմ, բոլոր Ադուևները գլխով մարդիկ են»,— տեսնո՞ւմ ես, ես ինքնասիրություն ունեմ: Դու կարող ես աչքի ընկնել և պաշտոնիդ մեջ, և գրողի համբավ ձեռք բերել...

— Լա՛վ համբավ է. գոմաղբի մասին գրող:

— Յուրաքանչյուրին յուրը. մեկին վիճակված է սավառնել երկնային տարածություններում, իսկ մյուսին՝ փորփրել գոմաղբը և այնտեղից գանձեր պեղել: Չեմ հասկանում, ինչո՞ւ պետք է արհամարհել համեստ կոչումը: Դա էլ ունի իր պոեզիան: Օրինակ, ծառայության մեջ աչքի ընկնեիր, աշխատանքով փող կուտակեիր, հաջող ամուսնանայիր, ինչպես մեծ մասը... Չեմ հասկանում, էլ ի՞նչ է պետք: Պարտքը կատարված է, կյանքը անց է կացված պատվով, աշխատասիրությամբ, ահա որն է երջանկությունը. իմ կարծիքով այդպես է: Ահա ես աստիճանով պետական խորհրդական եմ, արհեստով՝ գործարանատեր. իսկ որ փոխարենը ինձ առաջարկես առաջին բանաստեղծի կոչումը, աստված վկա, չեմ վերցնի:

— Լսիր, Պյոտր Իվանիչ. դու, ճիշտ որ, ուշանում ես,— ընդհատեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Շուտով ժամը տասն է:

— Իսկապես, ժամանակն է: Դե, ցտեսություն: Թե չէ աստված գիտի, թե ինչու իրեն արտասովոր մարդ են երևակայում,— փնթփնթում էր Պյոտր Իվանիչը, սենյակից հեռանալով,— և էնիքը...

II

Հորեղբոր մոտից տուն վերադառնալով, Ալեքսանդրը նստեց բազկաթոռին և մտածմունքի մեջ ընկավ: Նա վերհիշեց հորեղբոր ու նրա կնոջ հետ ունեցած ամբողջ խոսակցությունը և խիստ հաշվետվություն պահանջեց ինքն իրենից:

Ինչպե՞ս իր տարիքում, իրեն թույլ տալով ատել և արհամարհել մարդկանց, քննելով ու զննելով նրանց ոչնչությունը, մանրախնդրությունը, թուլությունները, տնտղելով իր ծանոթներից բոլորին ու ամեն մեկին, մոռացել է վերլուծել իրեն: Ինչպիսի՜ կուրություն: Եվ հորեղբայրը նրան դաս տվեց,

ինչպես աշակերտի, բնութագրեց նրան մինչև վերջ, և այն՝ կնոջ ներկայությամբ. ի՞նչ կլիներ, որ նա ինքը ետ դառնար՝ իրեն նայեր: Ինչպե՜ս պետք է հորեղբայրը շահի այդ երեկո կնոջ աչքին: Ասենք, այդ դեռ ոչինչ, դա այդպես էլ պետք է լինի, բայց ախր նա շահեց Ալեքսանդրի հաշվին: Հորեղբայրը նրա համեմատությամբ անվիճելի առավելություն ունի, ամենուրեք և ամեն ինչում: «Էլ ո՞ւր է,— մտածում էր նա,— ջահելության, թարմության, մտքի և զգացմունքի կրակոտության առավելությունը, եթե միայն որոշ փորձառությամբ, բայց չոր սրտով, առանց եռանդի մարդը ոչնչացնում է նրան ամեն քայլափոխում, այնպես, հարևանցի, անփութորեն: Ե՞րբ կլինի վեճը հավասար և վերջապես ե՞րբ գերակշռությունը կլինի Ալեքսանդրի կողմը: Այնինչ, կարծես իր կողմում է և՛ տաղանդը, և՛ հոգեկան ուժերի լիառատությունը… իսկ հորեղբայրը իր համեմատությամբ հսկա է: Ինչպիսի՜ վստահությամբ է նա վիճաբանում, ինչպես հեշտ է վերացնում ամեն մի հակաճառություն և հասնում նպատակին, կատակով, հորանջելով, ծաղրելով զգացմունքը, բարեկամության և սիրո սրտի զեղումները, մի խոսքով այն ամենը, ինչի համար տարիքավոր մարդիկ սովոր են նախանձել երիտասարդներին»:

Մտմտալով այդ ամենի մասին, Ալեքսանդրը ամոթից կարմրեց: Նա խոսք տվեց խստորեն հետևել ինքն իրեն և առաջին առիթով ոչնչացնել հորեղբորը, ապացուցել նրան, որ ոչ մի փորձառություն չի փոխարինի այն բանին, ինչ **դրված** է մարդու մեջ **վերուստ**. որ ինչքան ուզում է Պյոտր Իվանիչը քարոզի, բայց այս որոպեից չի իրականանա նրա սառն, մեթոդիկ նախագուշակություններից ոչ մեկը: Ալեքսանդրն ինքը կգտնի իր ուղին և կընթանա այդ ուղիով ոչ թե երկչոտ, այլ հաստատուն և համաչափ քայլերով: Նա հիմա այն չէ, ինչ երեք տարի առաջ էր: Նրա հայացքը թափանցել էր սրտի գաղտնարանները, դիտել էր կրքերի խաղը, իր համար ձեռք էր բերել կյանքի գաղտնիքը, իհարկե, ոչ առանց տառապանքների, բայց փոխարենը առմիշտ կոփել էր իրեն դրանց դեմ: Ապագան նրա համար պարզ է, նա բարձրացել է, թևավորվել, նա երեխա չէ, այլ տղամարդ, համարձակորեն առա՛ջ: Հորեղբայրը կտեսնի և հետագայում իր՝ փորձառու վարպետի առաջ խղճուկ աշակերտի դեր կխաղա. նա կիմանա, ի զարմանս իր, որ կա մի այլ կյանք, այլ համբավ, այլ երջանկություն, բացի խղճուկ կարիերայից, որը նա ընտրել է իր համար և որը փաթաթում է նաև Ալեքսանդրի վզին, գուցե նախանձից: Եվս, ևս մի ազնիվ ճիգ, և պայքարն ավարտված է:

Ալեքսանդրն աշխուժացավ: Նա նորից սկսեց ստեղծել մի հատուկ աշխարհ, փոքր-ինչ ավելի իմաստուն առաջինից: Հորեղբոր կինը քաջալերում էր նրա այդ տրամադրությունը, բայց թաքուն, երբ Պյոտր Իվանիչը քնած էր լինում կամ գնում էր գործարան և անգլիական ակումբ:

Նա հարցուփորձ էր անում Ալեքսանդրին նրա զբաղմունքների մասին: Եվ դա ինչպե՜ս էր դուր գալիս Ալեքսանդրին: Նա պատմում էր հորեղբոր կնոջը իր երկերի պլանը և երբեմն, խորհրդի ձևով, պահանջում էր նրա հավանությունը:

Նա հաճախ էր վիճում Ալեքսանդրի հետ, բայց ավելի հաճախ համաձայնում էր:

Ալեքսանդրը կապվեց աշխատանքին, ինչպես կապվում են վերջին հույսին: «Սրանից այն կողմ,— ասում էր նա հորեղբոր կնոջը,— չէ՞ որ արդեն ոչինչ չկա. այնտեղ մերկ տափաստանն է, առանց ջրի, առանց կանաչի, խավար, անապատ, ի՞նչ կլինի այնժամ կյանքը: Թեկուզ դագաղ մտիր»: Եվ նա անխոնջ աշխատում էր:

Երբեմն միտն էր գալիս հանգած սերը, նա փոքր-ինչ հուզվում էր և նորից գրիչը ձեռքն առնում. և գրում էր մի հուզիչ եղերերգ: Մի այլ անգամ մաղձը թափվում էր սիրտը և հատակից բարձրացնում վերջերս այնտեղ փոթորկվող ատելությունն ու արհամարհանքը դեպի մարդիկ, և մեկ էլ տեսար՝ ծնվում են մի քանի եռանդուն բանաստեղծություն: Միևնույն ժամանակ նա մտորում և գրում էր մի վիպակ: Նա դրա վրա ծախսեց շատ խորհրդածություն, զգացմունք, նյութական աշխատանք և մոտ կես տարի ժամանակ: Ահա, վերջապես, վիպակը պատրաստ է, վերանայված և մեքենագրված: Հորեղբոր կինը հիացած էր:

Այդ վիպակում գործողությունը կատարվում էր արդեն ոչ թե Ամերիկայում, այլ ուր-որ տամբովյան մի գյուղում: Գործող անձինք սովորական մարդիկ էին՝ ֆրակ հագած զրպարտիչներ, ստախոսներ

և ամեն կարգի վիժվածքներ, կորսետավոր ու շլյապավոր դավաճանուհիներ: Ամեն ինչ կարգին էր, իր տեղում:

— Ես կարծում եմ, ma tante, սա կարելի՞ է ցույց տալ հորեղբորս:

— Այո, այո, իհարկե,— պատասխանում էր Լիզավետա Ալեքսանդրովնան,— բայց ասենք... ավելի լավ չէ՞ տպագրության տաք այնպես, առանց նրա: Նա միշտ դրան դեմ է, մի բան կասի... Դուք գիտեք, դա նրան երեխայություն է թվում:

— Ոչ, ավելի լավ է ցույց տալ,— պատասխանում էր Ալեքսանդրը:— Ես ձեր դատից և սեփական գիտակցությունից հետո ոչ ոքից չեմ վախենում, այնինչ թող նա տեսնի...

Ցույց տվին: Պյոտր Իվանիչը տետրը տեսնելով, փոքր-ինչ մռայլվեց և գլուխն օրորեց:

— Այդ ինչ է, երկուսո՞վ եք հորինել,— հարցրեց նա:— Ինչ-որ շատ է. ինչքան էլ մանր է գրված. հավա՛ս ունեք գրելու:

— Դու մի շտապիր գլուխդ թափահարել,— պատասխանեց կինը,— այլ նախ լսիր: Կարդացեք մեզ համար Ալեքսանդր: Միայն թե ուշադիր լսիր, մի նիրհի և հետո ասա քո դատավճիռը: Թերություն ամեն տեղ կարելի է գտնել, եթե ուզենաս որոնել: Իսկ դու ներողամիտ եղիր:

— Ոչ, ինչո՞ւ: Եղեք միայն արդարադատ,— ավելացրեց Ալեքսանդրը:

— Ճար չկա. կլսեմ,— ասաց Պյոտր Իվանիչը հոգոց հանելով,— միայն պայմանով, նախ և առաջ, ճաշից անմիջապես հետո չկարդալ, թե չէ ինձ համար երաշխավոր լինել չեմ կարող, որ չեմ քնի: Դա, Ալեքսանդր, քեզ մի վերագրի. ճաշից հետո ինչ էլ որ կարդան, միշտ էլ քունս տանում է. և երկրորդ, եթե դա որևէ խելքը գլխին բան է, կարծիքս կասեմ, իսկ եթե ոչ, միայն կլռեմ, իսկ դուք ինչպես ուզում եք:

Սկսեցին կարդալ: Պյոտր Իվանիչը ոչ մի անգամ չնչջեց, լսում էր՝ աչքը առանց կտրելու Ալեքսանդրից, նույնիսկ հազվադեպ էր թարթում, իսկ երկու անգամ գլխով հավանության նշան արավ:

— Տեսնո՛ւմ ես,— ասաց կինը կիսաձայն:— Ես քեզ ասում էի:

Նա կնոջն էլ գլխով արավ:

Կարդում էին երկու երեկո իրար հետևից: Առաջին երեկոյին ընթերցումից հետո, ի զարմանս կնոջ, Պյոտր Իվանիչը պատմեց այն ամենը, ինչ որ լինելու է այսուհետև:

— Ինչի՞ց գիտես,— հարցրեց նա:

— Դժվա՛ր բան: Իդեան արդեն նոր չէ. հազար անգամ գրել են այդ մասին: Շարունակությունը պետք էլ չի կարդալ, բայց տեսնենք, ինչպես է այն զարգացել Ալեքսանդրի մոտ:

Երբ հաջորդ օրը Ալեքսանդրն ավարտում էր վերջին էջի ընթերցումը, Պյոտր Իվանիչը զանգահարեց: Ներս մտավ սպասավորը:

— Շորերս պատրաստիր,— ասաց նա:— Ներիր, Ալեքսանդր, որ ընդհատեցի. շտապում եմ, կուշանամ ակումբում թղթախաղից:

Ալեքսանդրն ավարտեց: Պյոտր Իվանիչը արագ դուրս գնաց:

— Դե, ցտեսություն,— ասաց նա կնոջն ու Ալեքսանդրին:— Ես արդեն այստեղ չեմ գա:

— Սպասիր, սպասիր,— բղավեց կինը,— այդ ի՞նչ է, ոչինչ չես ասում վիպակի մասին:

— Ըստ պայմանի, չպետք է ասեմ,— ասաց նա և ուզում էր գնալ:

— Դա համառություն է,— ասաց կինը:— Օ, նա համառ է, ես նրան ճանաչում եմ: Դուք մի նայեք դրան, Ալեքսանդր:

«Դա անբարյացակամություն է,— մտածեց Ալեքսանդրը:— Նա ուզում է ինձ ցեխի մեջ կոխել, քաշել իր ոլորտը: Համենայն դեպս նա խելացի աստիճանավոր է, գործարանատեր և ուրիշ ոչինչ, իսկ ես բանաստեղծ եմ...»:

— Դա բանի նման չէ, Պյոտր Իվանիչ,— սկսեց կինը գրեթե արցունքն աչքերին:— Գոնե մի բան ասա: Ես տեսնում էի, որ ի նշան հավանության թափահարում էիր գլուխդ, նշանակում է, քեզ դուր եկավ: Միայն համառությանդ պատճառով չես ուզում խոստովանել: Ինչպե՞ս խոստովանենք, որ վիպակը մեզ դուր է գալիս: Մենք չափազանց խելացի ենք դրա համար: Խոստովանիր, որ լավ է:

— Ես գլուխս թափահարում էի նրա համար, որ այդ վիպակից էլ երևում է, որ Ալեքսանդրը խելացի է, բայց նա խելացի չի վարվել, որ գրել է դա:

— Սակայն, հորեղբայր, այդ կարգի դատավճիռը…

— Լսիր. չէ՞ որ դու ինձ չես հավատում, ուրեմն վիճելու կարիք էլ չկա. ավելի լավ է՝ միջնորդ ընտրենք: Ես նույնիսկ այ թե ինչ կանեմ, որպեսզի մեկընդմիշտ վերջացնեմ սա մեր միջև. ես ինձ այս վիպակի հեղինակը կանվանեմ և կուղարկեմ իմ բարեկամին, ժուռնալի աշխատակցին. տեսնենք նա՛ ինչ կասի: Դու նրան ճանաչում ես և, հավանաբար, կհավատաս նրա դատավճռին: Նա փորձված մարդ է:

— Լավ, տեսնենք:

Պյոտր Իվանիչը նստեց սեղանի մոտ և շտապ մի քանի տող գրեց, ապա նամակը հանձնեց Ալեքսանդրին:

«Ես, օր ծերության, վճռեցի հեղինակ դառնալ,— գրում էր նա,— ի՛նչ արած, ուզում եմ հռչակվել, այստեղ էլ հաջողություն ունենալ,— խելքս թռցրել եմ: Եվ ահա ստեղծագործել եմ սույնին կից վիպակը: Աչքի անցրեք այն, և եթե պիտանի է, տպեցեք ձեր հանդեսում, հասկանալի է, փողով. դուք գիտեք, ձրի աշխատել չեմ սիրում: Դուք կզարմանաք և չեք հավատա, բայց ես ձեզ թույլ եմ տալիս նույնիսկ ստորագրել իմ ազգանունը, նշանակում է, չեմ ստում»:

Համոզված լինելով, որ վիպակի մասին նպաստավոր կարծիք կլինի, Ալեքսանդրը հանգիստ սպասում էր պատասխանի: Նա նույնիսկ ուրախանում էր, որ հորեղբայրը իր երկտողում հիշատակել էր նաև փողի մասին:

«Շատ, շատ խելոք բան է,— մտածում էր նա:— Մայրիկս գանգատվում է, որ հացը էժան է. հավանաբար շուտ չի ուղարկի փող. իսկ այստեղ շատ տեղին կլինի մեկուկես հազարի չափ ստանալ»:

Սակայն, անցավ մոտ երեք շաբաթ, և պատասխան չկար: Վերջապես, ահա, մի առավոտ Պյոտր Իվանիչին բերին մի մեծ ծրար և նամակ:

— Ա՛: Ետ են ուղարկե՛լ,— ասաց նա, խորամանկորեն նայելով կնոջը:

Նա չբացեց նամակը և կնոջը ցույց չտվեց, որքան էլ սա խնդրեց: Նույն օրը երեկոյան, նախքան ակումբ գնալը, նա ինքը ուղևորվեց եղբորորդու մոտ:

Դուռը կողպված չէր: Նա ներս մտավ: Եվսեյը խռմփացնում էր, շեղակի փռված նախասենյակի հատակին: Մոմի պատրույգը սարսափելի այրուք էր տվել և կախ ընկել մոմկալից: Նա նայեց մյուս սենյակը. մութն էր:

«Օ, գավա՛ռ»,— փնթփնթաց Պյոտր Իվանիչը:

Նա ցնցելով արթնացրեց Եվսեյին, ցույց տվեց դուռը, մոմը և սպառնաց գավազանով: Երրորդ սենյակում սեղանի առաջ նստել էր Ալեքսանդրը, ձեռքերը դրած սեղանին, իսկ ձեռքերի վրա՝

գլուխը, և նույնպես քնել էր: Նրա առաջ մի թուղթ կար: Պյոտր Իվանիչը նայեց՝ բանաստեղծություն էր:

Նա թուղթը վերցրեց և կարդաց հետևյալը:

Գարնան գեղեցիկ ժամանակն անցավ,

Հավետ չքացավ վայրկյանը սիրո,

Կրծքիս տակ սերը անդարձ մահացավ,

Արյանս մեջ չկան կայծերը հրո:

Զոհասեղանին նրա որբացած

Ուրիշ մի կուռք եմ կերտել ես վաղուց,

Եվ աղոթում եմ... նրան, բայց…

— Եվ ինքը քնե՛լ է: Աղոթիր, սիրելիս, մի ծուլանա,— բարձրաձայն ասաց Պյոտր Իվանիչը:— Քո իսկ բանաստեղծություններն են, և ինչպե՛ս են հալից գցել քեզ: Էլ ի՞նչ կարիք կա ուրիշ դատավճռի: Ինքդ ես բարբառել քեզ համար:

— Ա՛,— ասաց Ալեքսանդրը ճմլկոտվելով:— Դուք դեռ շարունակ դեմ եք իմ ստեղծագործություններին: Ասացեք, հորեղբայր, անկեղծորեն. ձեզ ի՞նչն է ստիպում այդպես համառորեն հետապնդել տաղանդը, երբ չի կարելի չխոստովանել...

— Նախանձը, Ալեքսանդր: Ինքդ դատիր. դու ձեռք կբերես փառք, պատիվ, կարող է պատահել, նաև անմահություն, իսկ ես կմնամ խավար մարդ և հարկադրված կլինեմ գոհանալ օգտակար աշխատավորի անունով: Բայց չէ՞ որ ես էլ Ադո՛ւև եմ: Ինչպես կուզես, վիրավորական է: Ես ի՞նչ եմ: Կյանքս անց եմ կացրել խաղաղ, անհայտ, կատարել եմ միայն իմ գործը և դեռ հպարտ ու երջանիկ եմ եղել դրանով: Մի՞թե խղճուկ վիճակ չէ: Երբ մեռնեմ, այսինքն այլևս ոչինչ չզգամ և իմանամ, **բայանների գուշակ լարերը** չեն խոսի իմ մասին, **հեռավոր դարերը, սերունդները, աշխարհը** չեն լցվի իմ անունով, չեն իմանա, որ աշխարհի երեսին եղել է պետական խորհրդական Պյոտր Իվանիչ Ադուև, ու ես դրանով չեմ մխիթարվի դագաղում, եթե ես և դագաղս որևէ կերպ անվնաս մնանք մինչև սերունդները: Ինչքա՜ն տարբեր ես դու. երբ, **լայն բաց արած թևերդ աղմկոտ**, կթռչես **երկնքում ամպոտ,** ես ստիպված կլինեմ մխիթարվել միայն նրանով, որ մարդկային աշխատանքի զանգվածում կա **նաև իմ կաթիլ մեղրը,** ինչպես ասում է քո սիրելի հեղինակը:

— Ի սեր աստծու, մի կողմ թողեք նրան. նա ի՜նչ սիրելի հեղինակ է: Միայն ծաղրում է մերձավորին:

— Ա՛: Ծաղրո՛ւմ է: Արդյոք այն ժամանակվանից չե՞ս դադարել Կրիլովին սիրելուց, երբ նրա մեջ տեսար քո պատկերը: A propos, արդյոք գիտե՞ս, որ քո ապագա փառքը, քո անմահությունը գրպանումս է: Բայց ես ավելի շուտ կցանկանայի, որ այնտեղ լինեին քո փողերը. դա ավելի հաստատ է:

— Ի՞նչ փառք:

— Իմ տոմսակի պատասխանը:

— Ախ, ի սեր աստծո, շուտ, տվեք: Ի՞նչ է գրում նա:

— Ես չեմ կարդացել. ինքդ կարդա, և բարձրաձայն:

— Եվ դուք կարո՞ղ էիք համբերել:

— Իսկ ի՞նձ ինչ որ:

— Ինչպե՞ս թե ինչ: Չէ՞ որ ես ձեր հարազատ եղբորորդին եմ. ինչպե՞ս չհետաքրքրվեք: Ինչպիսի՜ սառնություն: Դա եսասիրություն է, հորեղբայր:

— Կարող է պատահել. ես չեմ առարկում: Ասենք, ես գիտեմ, թե այստեղ ինչ է գրված: Ահա, կարդա՛:

Ալեքսանդրը սկսեց բարձրաձայն կարդալ, իսկ Պյոտր Իվանիչը գավազանով թխկթխկացնում էր կոշիկները: Նամակում ահա թե ինչ էր գրված.

«Այս ի՞նչ խաբեություն է, իմ ամենասիրելի Պյոտր Իվանիչ: Դուք վիպակնե՞ր եք գրում: Ո՞վ կհավատա ձեզ: Եվ դուք միտք ունեք հիմարացնել ինձ՝ հին գայլիս: Իսկ եթե, աստված մի արասցե, դա ճիշտ լիներ, եթե դուք առժամանակ ձեր գրիչը կտրեիք բառացի իմաստով թանկագին տողերից, որոնցից յուրաքանչյուրը, իհարկե, մեկից ավելի չերվոներ արժի, և դադարելով հարգարժան հանրագումարներ գրելուց, արտադրեիք իմ առջև ընկած վիպակը, այն ժամանակ էլ ձեզ կասեի, որ ձեր գործարանի փխրուն արտադրանքները շատ ավելի դիմացկուն են այս ստեղծագործությունից...»

Ալեքսանդրի ձայնը հանկարծ ցածրացավ:

«Բայց ես բացասում եմ այդպիսի վիրավորական կասկածը ձեր նկատմամբ»,— շարունակեց նա երկչոտ ու կամացուկ:

— Չեմ լսում, Ալեքսանդր, մի քիչ բարձր,— ասաց Պյոտր Իվանիչը:

Ալեքսանդրը շարունակում էր ցածրաձայն.

«Համակիր լինելով վիպակի հեղինակին, դուք, հավանաբար, ուզում եք իմանալ իմ կարծիքը: Ահա նա: Հեղինակը պետք է որ երիտասարդ լինի: Նա հիմար չէ, բայց ինչ-որ խիստ զայրացած է ամբողջ աշխարհի դեմ. ի՜նչ չարացած, դաժանացած ոգով է գրում նա, հավանաբար, հիասթափված է: Օ, աստվա՜ծ: Ե՞րբ կվերանան այդ մարդիկ: Ինչպես ափսոս է, որ կյանքի նկատմամբ ունեցած սխալ հայացքից մեզ մոտ կործանվում են շատ ձիրքեր դատարկ, անպտուղ երազանքներով, զուր ձգտումներով դեպի այն, որին նրանք կոչված չեն»:

Ալեքսանդրը կանգ առավ և շունչը ետ բերեց: Պյոտր Իվանիչը մի սիգար վառեց և բաց թողեց ծխի օղակներ: Նրա դեմքը սովորականի պես արտահայտում էր կատարյալ հանգստություն: Ալեքսանդրը շարունակում էր կարդալ խուլ, հազիվ լսելի ձայնով.

«Ինքնասիրությունը, երազկոտությունը, սրտի մղումների վաղաժամ զարգացումը և մտքի անշարժությունը իրենց ախուսափելի հետևանքով՝ ծուլությամբ, ահա այդ չարիքի պատճառները: Գիտությունը, աշխատանքը, պրակտիկ գործը, ահա ինչը կարող է սթափեցնել մեր անբան ու հիվանդ երիտասարդությանը»:

— Ամբողջ գործը կարելի էր երեք տողով բացատրել,— ասաց Պյոտր Իվանիչը ժամացույցին նայելով,— իսկ նա մտերմական նամակում մի ամբողջ դիսերտացիա է գրել: Բա պեդանտ չի՞: Շարունակությունը կարդա՞նք, Ալեքսանդր: Թող, ձանձրալի է. ես քեզ ասելիք ունեմ:

— Ոչ, հորեղբայր, թույլ տվեք բաժակն ըմպեմ մինչև մրուրը. մինչև վերջ կարդամ:

— Դե կարդա, անուշ լինի:

«Հոգեկան ընդունակությունների այդ տխուր ցավալի ուղղությունը,— կարդում էր Ալեքսանդրը,— դրսևորվում է ձեր ուղարկած վիպակի ամեն մի տողում: Ասացեք, ուրեմն, ձեր protégé-ին,

/Հովանավորյալ (ֆրանս.)։/

որ գրողը նախ և առաջ այն ժամանակ կգրի գործիմացորեն, երբ չի գտնվի անձնական հրապուրանքի կողմնակալության ազդեցության տակ: Նա պետք է հանգիստ ու պայծառ հայացքով շրջահայի կյանքին ու մարդկանց առհասարակ, այլապես կարտահայտի միայն իր **եսը**, որը ոչ ոքի պետք չէ: Այդ թերությունը խիստ գերակշռում է վիպակում: Երկրորդ և գլխավոր պայմանը՝ սա, թերևս, չասեք հեղինակին, խնայելով նրա ջահելությունն ու հեղինակային ինքնասիրությունը, բոլոր ինքնասիրություններից ամենաանհանգիստը, պետք է տաղանդ, բայց

դրա հետքն իսկ չկա այստեղ: Լեզուն, ասենք, ամեն տեղ ուղիղ և մաքուր է. հեղինակը նույնիսկ ոճ ունի...», դժվարությամբ ավարտեց Ալեքսանդրը:

— Վաղուց պետք էր այդպե՛ս,— ասաց Պյոտր Իվանիչը,— թե չէ, աստված գիտի, թե ինչե՛ր ասաց: Մնացածի մասին ես ու դու առանց նրան էլ կխորհենք:

Ալեքսանդրի ձեռները թուլացան: Նա լուռ, ինչպես անսպասելի հարվածից շշված մի մարդ, պղտոր աչքերով նայում էր ուղիղ պատին: Պյոտր Իվանիչը նամակը վերցրեց նրանից և Հ. Գ.-ում կարդաց հետևյալը. «Եթե անպայման ուզում եք այդ վիպակը զետեղել մեր հանդեսում, ձեզ համար, թերևս, ամառվա ամիսներին, երբ քիչ են կարդում, կզետեղեմ, բայց վարձատրության մասին մտածել անգամ չի կարելի»:

— Դե ինչ, Ալեքսանդր, քեզ ինչպե՞ս ես զգում,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Ավելի հանգիստ, քան կարելի էր սպասել,— ճիգով պատասխանեց Ալեքսանդրը:— Զգում եմ այնպես, ինչպես ամեն բանում խաբված մարդը:

— Ոչ, ինչպես մի մարդ, որը խաբում էր ինքն իրեն և ուզում էր ուրիշներին էլ խաբել...

Ալեքսանդրը չլսեց այդ առարկությունը:

— Մի՞թե սա էլ ցնորք է... Սա՞ էլ դավաճանեց,— շշնջում էր նա:— Դա՛ռն կորուստ: Ինչ կա որ, նոր չեմ վարժվելու խաբվելուն: Բայց չեմ հասկանում, ինչո՞ւ էին իմ մեջ դրված ստեղծագործելու այդ բոլոր անդիմադրելի մղումները...

— Ահա հենց այդ է: Քո մեջ դրել են մղումներ, իսկ բուն ստեղծագործությունը, երևում է, մոռացել են դնել,— ասաց Պյոտր Իվանիչը,— ես ասում էի:

Ալեքսանդրը պատասխանեց հոգոցով ու մտասուզվեց: Հետո հանկարծ աշխույժով նետվեց բացելու արկղները, այնտեղից հանեց մի քանի տետրակ, թերթիկներ, թղթի կտորներ և սկսեց անողոքաբար նետել բուխարիկը:

— Ահա սա չմոռանաս,— ասաց Պյոտր Իվանիչը, նրան մոտեցնելով անավարտ բանաստեղծության թերթիկը, որ ընկած էր սեղանին:

— Սա Ե՛լ այնտեղ,— ասում էր Ալեքսանդրը հուսահատ, բանաստեղծությունը նետելով բուխարիկը:

— Էլ ուրիշ բան չկա՞: Մի լավ փնտրիր,— հարցրեց Պյոտր Իվանիչը, շուրջը նայելով,— միանգամից խելոք գործ անենք: Ահա, այն ի՞նչ հեքիաթ է պահարանի գլխին:

— Սա էլ մյուսների մոտ,— ասաց Ալեքսանդրը, ցած բերելով.— սրանք հոդվածներ են գյուղատնտեսության մասին:

— Մի՛ այրի, մի՛ այրի դրանք: Տուր ինձ,— ասաց Պյոտր Իվանիչը, ձեռքը մեկնելով:— Սրանք դատարկ բան չեն:

Բայց Ալեքսանդրը չէր լսում:

— Ոչ,— ասաց նա չարությամբ:— Եթե ինձ համար կործանվեց ազնիվ ստեղծագործությունը գեղեցկի ոլորտում, ապա ես չեմ ուզում նաև մշակություն. դրանում ճակատագիրը ինձ չի բեկի:

Եվ տրցակը թռավ բուխարիկ:

— Իզուր,— նկատեց Պյոտր Իվանիչը, ընդսմին ինքը գավազանով տնտղում էր սեղանի տակի զամբյուղը, թե արդյոք էլի որևէ բան չկա՞ կրակը նետելու:

— Իսկ վիպակի հե՞տ ինչպես վարվենք, Ալեքսանդր: Նա ինձ մոտ է:

— Ձեզ պետք չէ՞ միջնորմները սոսնձել:

— Ոչ, հիմա ոչ: Չուղարկե՞մ բերելու: Եվսե՛յ: Նորից քնել է. տես, այնտեղ քթիդ տակից իմ շինելը կգողանան: Շուտ, գնա մեր տուն, Վասիլիից ուզիր այն հաստ տետրը, որ իմ առանձնասենյակում գրասեղանի վրա է, և բեր այստեղ:

Ալեքսանդրը նստել էր ձեռքին հենված և նայում էր բուխարիկին: Տետրը բերին: Ալեքսանդրը նայեց կիսամյա տքնությունների պտուղին և մտածմունքի մեջ ընկավ: Պյոտր Իվանիչը նկատեց այդ:

— Դե, վերջացրու, Ալեքսանդր,— ասաց նա,— և մի քիչ ուրիշ բանի մասին խոսենք:

— Սա էլ մյուսների մո՛տ,— բղավեց Ալեքսանդրը, տետրը շպրտելով վառարանը:

Երկուսն էլ սկսեցին նայել, թե նա ինչպես է բռնկվելու, Պյոտր Իվանիչը, ըստ երևույթին, բավականությամբ, Ալեքսանդրը՝ թախիծով, գրեթե արցունքներով: Ահա վերևի թերթը շարժվեց ու բարձրացավ, կարծես մի անտեսանելի ձեռք շրջում էր այն, նրա եզրերը ոլորվեցին, նա սևացավ, հետո կուչ եկավ և հանկարծ բռնկվեց. նրա հետևից արագ բռնկվեց մյուսը, երրորդը, ապա հանկարծ մի քանիսը բարձրացան և վառվեցին խմբովին, բայց դրանց հաջորդող տակի էջը դեռ սպիտակին էր տալիս, և երկու ակնթարթից հետո նրա եզրերն էլ սկսեցին սևանալ:

Ալեքսանդրը, սակայն, հասցրեց կարդալ. գլուխ 3-րդ: Նա հիշեց, թե ինչ էր այդ գլխում և ափսոսաց: Նա բազկաթոռից վեր ելավ և ձեռքն առավ ունելին, որպեսզի փրկի իր ստեղծագործության մնացորդները: «Կարող է պատահել դեռ...»,— շշնջում էր նրան հույսը:

— Սպասիր, ավելի լավ է ես գավազանով,— ասաց Պյոտր Իվանիչը,— թե չէ ձեռքդ կայրես ունելիով:

Նա տետրը քշեց բուխարու խորքը, ուղիղ շիկացած ածուխների վրա: Ալեքսանդրը անվճռական կանգ առավ: Տետրը հաստ էր և միանգամից չենթարկվեց կրակի ազդեցությանը: Նրա տակից նախ արձակվեց թանձր ծուխ, բոցը երբեմնակի դուրս էր պրծնում տակից, լիզում նրա կողքը, մի սև բիծ թողնում և նորից թաքնվում: Դեռ կարելի էր փրկել: Ալեքսանդրը արդեն մեկնեց ձեռքը, բայց նույն վայրկյանին բոցը լուսավորեց և բազկաթոռները, և Պյոտր Իվանիչի դեմքը, և սեղանը. ամբողջ տետրը բոցավառվեց և մի րոպե անց հանգեց, իրենից հետո թողնելով մի կույտ մոխիր, որի վրայով տեղ-տեղ վազում էին կրակե օձեր:

Ալեքսանդրը մի կողմ նետեց ունելին:

— Ամեն ինչ վերջացա՛վ,— ասաց նա:

— Վերջացա՛վ,— կրկնեց Պյոտր Իվանիչը:

— Ո՛ւխ,— ասաց Ալեքսանդրը:— Ես ազա՛տ եմ:

— Սա արդեն երկրորդ անգամն է, որ քեզ օգնում եմ բնակարանդ մաքրելու,— ասաց Պյոտր Իվանիչը:— Հուսով եմ, որ այս անգամ...

— Անվերադարձ կերպով, հորեղբայր:

— Ամե՛ն,— ասաց հորեղբայրը, ձեռները դնելով նրա ուսերին:— Դե, Ալեքսանդր, քեզ խորհուրդ եմ տալիս չհապաղել. անմիջապես գրիր Իվան Իվանիչին, որ քեզ աշխատանք ուղարկի գյուղատնտեսության բաժնի համար: Դու թարմ հետքերով, բոլոր հիմարություններից հետո, հիմա կգրես մի շատ խելացի բան: Նա շարունակ խոսք է գցում. «Այդ ի՞նչ է, ասում է, ձեր եղբորորդին...»:

Ալեքսանդրը տխուր օրորեց գլուխը:

— Չեմ կարող,— ասաց նա,— ոչ, չեմ կարող. ամեն ինչ վերջացած է:

— Հապա ի՞նչ ես անելու հիմա:

— Ի՞նչ,— հարցրեց նա և մտասուզվեց։— Հիմա առայժմ ոչինչ։

— Այդ միայն գավառում մի տեսակ կարողանում են ոչինչ չանել, իսկ այստեղ... էլ ինչո՞ւ էիր գալիս այստեղ։ Դա անհասկանալի է... Դե, առայժմ բավական է այդ մասին։ Ես քեզ մի խնդիրք ունեմ։

Ալեքսանդրը դանդաղ բարձրացրեց գլուխը և հարցական նայեց հորեղբորը։

— Չէ՞ որ դու ճանաչում ես,— սկսեց Պյոտր Իվանիչը, Ալեքսանդրին մոտեցնելով իր բազկաթոռը,— իմ գործընկեր Սուրկովին։

Ալեքսանդրը գլխով արավ։

— Այո, դու երբեմն ճաշել ես ինձ մոտ նրա հետ, միայն կարողացե՞լ ես մի լավ դիտել, թե դա ինչ պտուղ է։ Նա լավ մարդ է, բայց դատարկագույն։ Նրա գլխավոր թուլությունը կանայք են։ Իսկ ինքը, դժբախտաբար, ինչպես տեսնում ես, վատ տեսք չունի, այսինքն՝ կարմրադեմ է, ողորկ, բարձրահասակ, մազերը միշտ գանգրացրած, անուշահոտությամբ օծված, շատ գեղեցիկ հագնված. և ահա երևակայում է, թե բոլոր կանայք նրա համար խելքները թռցնում են, այնպես, պճնամոլի մեկն է։ Դե, սատանան նրա հետ, ես այդ չէի նկատի. բայց այ թե ո՛րն է դժբախտությունը. հենց որ մի սիրային պատմություն է ծագում, սկսում է վատնել։ Այստեղ նա սկսում է սյուրպրիզներ և նվերներ, և սիրաշահումներ, ինքն է նետվում պճնամոլության գիրկը, սկսում է փոխել կառքերը, ձիերը... ուղղակի սնանկացում է։ Իմ կնոջ հետևից էլ քարշ էր գալիս։ Պատահում էր, որ ես արդեն հոգ չէի տանում սպասավորին թատրոն ուղարկելու տոմսի, Սուրկովն անպայման բերում էր։ Ձիերը փոխել է պետք, թե մի հազվագյուտ բան ճարել, ամբոխի միջից ճանապարհ բացել, թե գնալ ամառանոց տեսնելու, ուր որ ուղարկես՝ ոսկի է։ Այնքա՜ն օգտակար էր. այդպիսի մեկին փողով չես վարձի։ Ափսո՜ս։ Ես դիտմամբ չէի խանգարում նրան, բայց կնոջս շատ ձանձրացրեց. ես էլ վռնդեցի։ Ահա երբ նա սկսում է այդպես վատնել, նրան արդեն տոկոսները չեն բավականացնում, նա սկսում է ինձնից փող խնդրել. մերժում ես՝ խոսք է բացում դրամագլխի մասին։ «Իմ ինչի՞ն է պետք ձեր գործարանը։ Ձեռքիս երբեք ազատ փող չկա»։. Ո՞ւր էր, թե մի որևէ կին վերցներ... Բայց չէ. շարունակ կապեր է որոնում բարձր հասարակության մեջ. «Ինձ, ասում է, հարկավոր է **ազնիվ ինտրիգ** ես առանց սիրո չեմ կարող ապրել»։ Ավանակ չի՞։ Համարյա քառասուն տարեկան է, և չի կարող ապրել առանց սիրո։

Ալեքսանդրը հիշեց իր մասին և տխուր ժպտաց։

— Նա բոլորը ստում է,— շարունակեց Պյոտր Իվանիչը։— Ես հետո վերահասու եղա, թե նա ինչի մասին է հոգ տանում։ Միայն թե պարծենա, որ նրա մասին խոսեն, թե նա կապ ունի այսինչ կնոջ հետ, որ տեսնում են այսինչի օթյակում, կամ որ նա ամառանոցում այսինչի հետ մենակ նստել էր պատշգամբում ուշ երեկոյան, այնտեղ որևէ խուլ վայրում կառքով կամ ձիով զբոսնել է, կամ դրա նման մի բան։ Մինչդեռ բանից դուրս է գալիս, որ այդ՝ այսպես կոչված ազնիվ **ինտրիգները** գրողը տանի դրանք — շատ ավելի թանկ են նստում, քան անազնիվները։ Այ թե ինչի համար է գլուխ կոտրում տխմարը։

— Իսկ ինչի՞ է հանգեցնում այդ բոլորը, հորեղբայր,— հարցրեց Ալեքսանդրը։— Ես չեմ տեսնում, թե ինչ կարող եմ անել այստեղ։

— Այ, կտեսնես։ Նորերս արտասահմանից այստեղ է վերադարձել մի ջահել այրի կին, Յուլիա Պավլովնա Տաֆաևան։ Նա շատ սիրունիկն է։ Ամուսնու հետ ես և Սուրկովը բարեկամներ էինք։ Տաֆաևը մեռավ օտար երկրներում։ Դե, գլխի ընկնո՞ւմ ես։

— Գլխի եմ ընկնում։ Սուրկովը սիրահարվել է այրուն։

— Այդպես է, բոլորովի՜ն խենթացել է։ Իսկ էլի՞։

— Էլի... չգիտեմ...

— Ինչպիսի՜ն ես։ Դե լսիր։ Սուրկովը մի երկու անգամ ինձ մոտ բերանից խոսք է թռցրել, թե շուտով իրեն փող է պետք լինելու։ Ես իսկույն հասկացա, թե դա ինչ է նշանակում, բայց թե որ

կողմից է քամին փչում՝ չկարողացա կռահել: Սկսեցի հարցուփորձ անել, թե ինչի՞ է պետք փողը: Նա տատանվեց, տատանվեց, վերջապես ասաց, որ ուզում է Լիտեյնայա փողոցում իր համար մի բնակարան կահավորել: Սկսեցի մտաբերել, թե այդ ինչ կարող էր լինել Լիտեյնայա փողոցում, և հիշեցի, որ Տաֆաևան նույնպես ապրում է այնտեղ և ուղղակի հենց այն տեղի դիմաց, որը Սուրկովն ընտրել է: Արդեն կանխավճար էլ է տվել: Անխուսափելի դժբախտություն է սպասում, եթե... չօգնես դու: Հիմա գլխի ընկա՞ր:

Ալեքսանդրը մի քիչ վեր ցցեց քիթը, հայացքը պտտեցրեց պատի, առաստաղի վրա, հետո մի երկու անգամ թարթեց և սկսեց նայել հորեղբորը, բայց լուռ էր:

Պյոտր Իվանիչը ժպտալով նայում էր նրան: Նա սարսափելի սիրում էր որևէ մեկի մեջ խելքի, ըմբռնողության վրիպում նկատել և դա զգացնել:

— Այդ ի՞նչ է պատահել քեզ, Ալեքսանդր: Եվ դեռ վիպակնե՞ր ես գրում,— ասաց նա:

— Ախ, հասկացա՛, հորեղբայր:

— Դե, փա՛ռք աստծու:

— Սուրկովը փող է խնդրում. դուք չունեք, ուզում եք, որ ես...— Եվ չավարտեց ասելիքը:

Պյոտր Իվանիչը ծիծաղեց: Ալեքսանդրը նախադասությունը չվերջացրեց և տարակուսած նայում էր հորեղբորը:

— Ոչ, այդ չէ,— ասաց Պյոտր Իվանիչը:— Մի՞թե լինում է, որ ես երբևէ փող չունենամ: Փորձիր դիմել, երբ ուզես, կտեսնես: Բայց ահա թե ինչ: Տաֆաևան Սուրկովի միջոցով ինձ հիշեցրեց ծանոթությունս նրա ամուսնու հետ: Ես անցա նրա մոտ: Նա խնդրեց, որ այցելեմ իրեն, ես խոստացա և ասացի, որ քեզ կտանեմ նրա մոտ. դե, հուսով եմ, հիմա հասկացա՞ր:

— Ի՞նձ,— կրկնեց Ալեքսանդրը, աչքերը լայն բացած հորեղբորը նայելով:— Այո, իհարկե... հիմա հասկացա...— շտապով ավելացրեց նա, բայց վերջին բառի վրա կմկմաց:

— Իսկ ի՞նչ հասկացար,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Թեկուզ սպանեք, հորեղբայր, ոչինչ չեմ հասկանում: Թույլ տվեք... գուցե նրա տունը հաճելի տուն է... ուզում եք, որ ես թախիծս փարատեմ... քանի որ տխրում եմ...

— Այ թե լա՛վ է: Դրա համար ման կածեմ քեզ տնետուն: Դրանից հետո միայն պակասում է, որ գիշերը բերանդ թաշկինակով ծածկեմ ճանճերից պաշտպանելու համար: Ոչ, այդ չէ: Ահա թե բանն ինչ է. հապա Տաֆաևային սիրահարեցրու քեզ:

Ալեքսանդրը հանկարծ հոնքերը բարձրացրեց ու նայեց հորեղբորը:

— Կատա՞կ եք անում, հորեղբայր: Դա անհեթեթություն է,— ասաց նա:

— Այնտեղ, ուր իսկապես անհեթեթություններ կան, դրանք կատարում ես շատ լրջորեն, իսկ որտեղ բանը պարզ ու բնական է, դա քեզ համար անհեթեթություն է: Այստեղ ի՞նչ անհեթեթ բան կա: Վերլուծիր, որքան անհեթեթ է սերն ինքը. արյան խաղ, ինքնասիրություն... բայց ինչ խոսեմ քեզ հետ. ու դեռ շարունակում ես հավատալ, որ անխուսափելիորեն որոշված է ում սիրելը, հավատալ հոգեհարազատությանը:

— Ներեցեք, հիմա ոչնչի չեմ հավատում: Բայց մի՞թե կարելի է սիրահարեցնել և սիրահարվել կամայականորեն:

— Կարելի է, բայց ոչ քեզ համար: Մի վախեցիր, ես քեզ այդպիսի դժվար հանձնարարություն չեմ անի: Դու միայն ահա թե ինչ արա: Սիրահետիր Տաֆաևային, ուշադիր եղիր, թույլ մի տուր Սուրկովին նրա հետ միայնակ մնալու... Դե, ուղղակի կատաղեցրու նրան: Խանգարիր նրան. նա մի խոսք կասի, դու երկուսն ասա, նա կարծիք կհայտնի, դու հերքիր: Անընդհատ շփոթիր, շշկլեցրու, ոչնչացրու ամեն քայլափոխի...

— Ինչո՞ւ:

— Դեռ էլի չե՛ս հասկանում: Նրա համար, սիրելիս, որ նա սկզբում կխենթանա խանդից ու զայրույթից, հետո կսառչի: Դա շուտ կհաջորդի մեկը մյուսին: Նա հիմարության աստիճան ինքնասեր է: Այն ժամանակ բնակարան պետք չի լինի, դրամագլուխը անխախտ կմնա, գործարանային գործերը կընթանան իրենց կարգով... դե հասկանո՞ւմ ես: Սա արդեն հինգերորդ անգամն է, որ նրա գլխին խաղ եմ խաղում. առաջ, երբ ամուրի էի և ավելի երիտասարդ, ինքս կամ բարեկամներիցս որևէ մեկին էի ուղարկում:

— Բայց ես ծանոթ չեմ Տաֆաևայի հետ:

— Հենց դրա համար էլ չորեքշաբթի օրը քեզ կտանեմ նրա մոտ: Չորեքշաբթի օրերը նրա մոտ հավաքվում են հին ծանոթներից ոմանք:

— Իսկ եթե նա պատասխանում է Սուրկովի սիրուն, այն ժամանակ, համաձայնեցեք, որ իմ հաճոյացումներն ու ուշադրությունը կկատաղեցնեն ոչ միայն Սուրկովին:

— Է, հերի՛ք: Օրինավոր կինը, հասկանալով, որ դիմացինը հիմար է, կդադարի նրանով զբաղվելուց, հատկապես վկաների ներկայությամբ. ինքնասիրությունը չի թույլ տա: Հենց այդտեղ նրա կողքին կլինի մեկ ուրիշը ավելի խելացի ավելի գեղեցիկ. նա կամաչի և ավելի շուտ կլքի: Ահա դրա համար էլ քեզ եմ ընտրել:

Ալեքսանդրը գլուխ տվեց:

— Սուրկովը վտանգավոր չէ,— շարունակեց հորեղբայրը,— բայց Տաֆաևան շատ քչերին է ընդունում, այնպես որ Սուրկովը, նրա փոքրիկ շրջանակում, հավատաս, կարող է և առյուծի, և խելացի մարդու անուն հանել: Կանանց վրա շատ է ազդում արտաքինը: Իսկ Սուրկովը հաճոյանալու վարպետ է, դե, դրա համար էլ նրան հանդուրժում են: Կինը, գուցե, կոկետություն է անում նրա հետ, իսկ նա էլ... խելացի կանայք էլ սիրում են, երբ նրանց համար հիմարություն են անում, հատկապես թանկարժեք հիմարություններ: Միայն թե նրանք ընդսմին մեծ մասամբ սիրում են ոչ թե այդ հիմարություններն անողին, այլ ուրիշին... Շատերը այդ չեն ուզում հասկանալ, այդ թվում նաև Սուրկովը. ահա դու նրան հասկացրու:

— Բայց Սուրկովը, հավանաբար, այնտեղ լինում է նաև ոչ չորեքշաբթի օրերը. չորեքշաբթի նրան խանգարեմ, իսկ մյուս օրե՞րն ինչպես:

— Ամեն ինչ պիտի սովորեցնե՛մ քեզ: Դու շողոքորթիր Տաֆաևային, մի քիչ սիրահարված ձևացրու, երկրորդ անգամից նա արդեն քեզ կհրավիրի ոչ թե չորեքշաբթի, այլ հինգշաբթի կամ ուրբաթ. դու կրկնապատկիր ուշադրությունդ, իսկ ես հետո մի քիչ կտրամադրեմ նրան, կակնարկեմ, իբր դու իսկապես էնիքը... նա կարծեմ... ինչքան կարողացել եմ նկատել... այնպես զգայուն է... երևի թուլաջիղ է... նա, կարծում եմ, նույնպես դեմ չի համակրանքին... զեղումներին...

— Այդ ինչպե՞ս կարելի է,— մտախոհ ասում էր Ալեքսանդրը:— Եթե ես դեռ կարողանայի սիրահարվել, այնպես չէ՞: Բայց չեմ կարող... և հաջողություն չի լինի:

— Ընդհակառակն, հենց այստեղ կլինի: Եթե սիրահարվեիր, չէիր կարողանա ձևացնել, նա անմիջապես կնկատեր և կսկսեր երկուսիդ հետ էլ խաղալ ու հիմարացնել: Իսկ հիմա... դու միայն կատաղեցրու Սուրկովին. ես նրան իմ հինգ մատի պես եմ ճանաչում: Հենց տեսնի, որ իր բախտը չի բանում, զուր տեղը փող չի ծախսի, իսկ ինձ միայն դա է հարկավոր... Լսիր, Ալեքսանդր, դա շատ կարևոր է ինձ համար. եթե այդ անես, հիշո՞ւմ ես այն երկու վազաները, որ քեզ դուր եկան գործարանում. դրանք քոնն են. միայն պատվանդանը ինքդ գնիր:

— Ներեցեք, հորեղբայր, մի՞թե կարծում եք, որ ես...

— Ինչո՞ւ պիտի ձրի չարչարվես, ժամանակ կորցնես: Այ քեզ լավ բա՞ն: Ոչի՛նչ. Վազաները շատ գեղեցիկ են: Մեր դարում առանց ոչնչի ոչինչ չեն անի: Երբ ես քեզ համար որևէ բան անեմ, ինձ նվեր առաջարկիր. ես կվերցնեմ:

— Տարօրինակ հանձնարարություն է,— ասաց Ալեքսանդրը անվճռական:

— Հուսով եմ, որ չես մերժի այդ բանն անելու ինձ համար: Ես էլ պատրաստ եմ քեզ համար անել ինչ որ կարող եմ, երբ փող պետք լինի՝ դիմիր... Ուրեմն չորեքշաբթի: Այդ պատմությունը կտևի մի ամիս, շատ-շատ՝ երկու: Հենց որ այլևս պետք չլինի, ես քեզ կասեմ, այն ժամանակ էլ վերջ տուր:

— Խնդրեմ, հորեղբայր, ես պատրաստ եմ. միայն տարօրինակ է... հաջողության համար չեմ երաշխավորում... եթե կարողանայի ինքս սիրահարվել, այն ժամանակ... թե չէ՝ ոչ...

— Եվ շատ լավ է, որ չես կարող, թե չէ ամբողջ գործը կփչացնեիր: Ես ինքս եմ երաշխավորում հաջողության համար: Մնաս բարո՛վ:

Նա գնաց, իսկ Ալեքսանդրը դեռ երկար նստած էր բուխարու մոտ, սիրելի մոխրի առաջ:

Երբ Պյոտր Իվանիչը տուն վերադարձավ, կինը հարցրեց.— ինչպե՞ս է Ալեքսանդրը, ինչպե՞ս է նրա վիճակը, նա կգրի՞:

— Ոչ, ես նրան բուժեցի առմիշտ:

Ադուևը նրան պատմեց նամակի բովանդակությունը, որ ստացել էր վիպակի հետ, և այն մասին, թե իրենք ինչպես այրեցին բոլորը:

— Դու խիղճ չունես, Պյոտր Իվանիչ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Կամ չես կարողանում ոչ մի բան կարգին անել, ինչ որ ձեռնարկում ես:

— Դու լա՞վ էիր անում, որ հարկադրում էիր նրան թուղթ մրոտել: Մի՞թե նա տաղանդ ունի:

— Ոչ:

Պյոտր Իվանիչը զարմանքով նայեց նրան:

— Հապա դու ինչո՞ւ էիր...

— Իսկ դու դեռ չե՞ս հասկացել, գլխի չե՞ս ընկել:

Պյոտր Իվանիչը լուռ էր և ակամա հիշեց իր տեսարանը Ալեքսանդրի հետ:

— Այստեղ չհասկանալու ի՞նչ կա: Դա շատ պարզ է,— ասաց նա, աչքերը լայն բաց արած նայելով կնոջը:

— Իսկ ի՞նչ, ասա:

— Ինչ... ինչ... դու ուզում էիր նրան դաս տալ... միայն այլ կերպ, ավելի մեղմ, յուրովի...

— Չի հասկանում, և դեռ խելոք մա՛րդ է: Ինչո՞ւ նա այս ամբողջ ժամանակ ուրախ էր, առողջ, գրեթե երջանիկ: Որովհետև հույս էր տածում: Եվ ահա ես պահպանում էի այդ հույսը. դե, հիմա պա՞րզ է:

— Ուրեմն դու շարունակ խորամանկո՞ւմ էիր նրա հետ:

— Ես կարծում եմ, դա թույլատրելի է: Իսկ դու ի՞նչ արիր: Դու նրան բոլորովին չես խղճում. խլեցիր վերջին հույսը:

— Դե լա՛վ: Ի՞նչ վերջին հույս. առջևում դեռ շատ հիմարություններ կան:

— Նա հիմա ի՞նչ է անելու: Նորի՞ց պիտի շրջի քիթը կախած:

— Ո՛չ: Չի կախի. դրա ժամանակը չի ունենա, ես նրան գործ հանձնարարեցի:

— Ի՞նչ: Նորի՞ց ինչ-որ թարգմանություն կարտոֆիլի մասին: Մի՞թե դա կարող է զբաղեցնել երիտասարդին, այն էլ, կրակոտ ու խանդավառ երիտասարդին: Դու կարող ես գոհ լինել, մենակ թե գլուխդ զբաղված լինի:

— Ոչ, սիրելիս, կարտոֆիլի մասին չէ, գործարանի հետ կապված մի բան է:

III

Վրա հասավ չորեքշաբթին: Յուլիա Պավլովնայի հյուրասենյակում հավաքվեցին տասներկու թե տասնհինգ հյուր: Չորս երիտասարդ տիկին, երկու մորուքավոր օտարերկրացի՝ տանտիրուհու արտասահմանյան ծանոթները, և մի սպա կազմում էին մի խմբակ:

Նրանցից անջատ, բերժերկայի վրա նստել էր մի ծերունի, ըստ երևույթին պաշտոնաթող զինվորական, քթի տակ ալեհեր մազերի երկու փնջով և մերակին ամրացրած բազմաթիվ ժապավեններով: Նա մի տարեց մարդու հետ խոսում էր առաջիկա վարձակալությունների մասին:

Մյուս սենյակում մի պառավ և երկու տղամարդ թուղթ էին խաղում: Դաշնամուրի առաջ նստած էր մի շատ ջահել աղջիկ, մի ուրիշ աղջիկ հենց այդտեղ խոսում էր մի ուսանողի հետ:

Հայտնվեցին Ադուևները: Քչերը կարող էին այնպես անբռնազբոս և արժանապատվությամբ մտնել հյուրասենյակ, ինչպես Պյոտր Իվանիչը: Ինչ-որ անվճռականությամբ նրան հետևում էր Ալեքսանդրը:

Ինչպիսի՜ տարբերություն նրանց մեջ. մեկը ամբողջ գլխով բարձր, բարեկազմ, գեր, ամուր և առողջ բնությամբ մի մարդ, աչքերում և շարժուձևերի մեջ ինքնավստահություն: Բայց ո՜չ մի հայացքում, ո՜չ մի շարժման, ո՜չ մի խոսքի մեջ չէր կարելի կռահել Պյոտր Իվանիչի մտքերը կամ բնավորությունը — այնպես թաքնված էր նրա մեջ ամեն ինչ նրբակրթության և ինքնատիրապետման արվեստով: Կարծես նրա մոտ չափած-ձևած էին և՛ շարժումները, և՛ հայացքները: Դժգույն, անկիրք դեմքը ցույց էր տալիս, որ այդ մարդու մեջ խելքի բռնակալ կառավարման ներքո հազվադեպ է լինում կրքերի սանձազերծում, որ նրա սիրտը տրոփում է կամ չի տրոփում գլխի դատավճռով:

Ալեքսանդրի մեջ, ընդհակառակն, ամեն ինչ ցույց էր տալիս թույլ և քնքուշ կառուցվածք. և՛ դեմքի հարափոփոխ արտահայտությունը, և ինչ-որ ծուլությունը կամ շարժումների մեջ դանդաղկոտությունն ու անհավասարությունը, և՛ փայլատ հայացքը, որն անմիջապես արտահայտում էր, թե ինչ զգացմունք էր անհանգստացնում նրա սիրտը կամ ինչ միտք էր խլրտում նրա գլխում: Նա միջահասակ էր, բայց նիհար ու գունատ՝ ոչ բնականից, ինչպես Պյոտր Իվանիչը, այլ անընդհատ հոգեկան հուզումներից. մազերը թավ անտառի պես չէին բուսնում գլխին և այտերին, ինչպես հորեղբոր մոտ, այլ քունքերից ու ծոծրակից ցած էին թափվում երկար, թույլ, բայց չափազանց փափուկ մետաքսանման փնջերով, սքանչելի երանգի բաց գույնով:

Հորեղբայրը ներկայացրեց եղբորորդուն:

— Իսկ իմ բարեկամ Սուրկովը չկա՞,— հարցրեց Պյոտր Իվանիչը, զարմացած շուրջը նայելով:— Նա ձեզ մոռացել է:

— Օ, ո՜չ: Ես շատ շնորհակալ եմ նրանից,— պատասխանեց տանտիրուհին:— Նա այցելում է ինձ: Դուք գիտեք, ես, բացի հանգուցյալ ամուսնուս ծանոթներից, գրեթե ոչ ոքի չեմ ընդունում:

— Հապա ո՞ւր է նա:

— Հիմա կգա: Պատկերացրեք, նա խոսք տվեց ինձ և ազգականուհուս անպայման օթյակ ճարել վաղվա ներկայացմանը, երբ, ասում են, ոչ մի հնարավորություն չկա... Եվ հիմա գնացել է:

— Եվ կճարի. ես երաշխավորում եմ նրա համար. նա հանճար է այդ հարցում: Նա միշտ ճարում է ինձ համար, երբ ոչ ծանոթությունը, ոչ հովանավորությունը չեն օգնում: Թե որտեղից է վերցնում և ինչ գումարներով՝ դա նրա գաղտնիքն է:

Եկավ նաև Սուրկովը: Նրա արդուզարդը թարմ էր, բայց նրա զգեստի ամեն մի ծալքում, ամեն մի մանրուքում շեշտված կերպով աչքի էր զարնում առյուծ լինելու, բոլոր մոդայամոլներին և բուն իսկ

մոդան գերազանցելու հավակնությունը: Եթե, օրինակ, մոդան պահանջում էր լայն բացվող ֆրակներ, ապա նրա ֆրակն այն աստիճան էր բացվում, որ նմանվում էր թռչունի բաց արած թևերի. եթե ետծալովի օձիքներ էին կրում, ապա նա իրեն այնպիսի օձիք էր պատվիրում, որ իր ֆրակով նմանվում էր հետևից բռնված սրիկայի, որը ուզում է դուրս պրծնել բռնողի ձեռքերից: Նա ինքն էր խրատներ տալիս իր դերձակին, թե ինչպես կարի: Երբ նա հայտնվեց Տաֆաևայի մոտ, այս անգամ նրա շարֆը շապկին էր ամրացված մի այնպիսի ահավոր մեծության քորոցով, որ դա նմանվում էր կոպալի:

— Ինչպե՞ս է, ճարեցի՞ք,— հնչեց ամեն կողմից:

Սուրկովը ուզում էր պատասխանել, բայց տեսնելով Ադուևին և նրա եղբորորդուն, հանկարծ կանգ առավ ու զարմանքով նայեց նրանց:

— Նախազգում է,— կամացուկ ասաց Պյոտր Իվանիչը եղբորորդուն:— Վա՛հ: Նա գավազանով է. այս ի՞նչ է նշանակում:

— Այդ ի՞նչ է,— հարցրեց նա Սուրկովին, ցույց տալով գավազանը:

— Նորերս իջնում էի կառքից... ոտքս ճկվեց, և մի քիչ կաղում եմ,— պատասխանեց նա հազալով:

— Սո՛ւտ է,— շշնջաց Պյոտր Իվանիչը Ալեքսանդրին:— Ուշադրություն դարձրու կոթին. տեսնո՞ւմ ես ոսկե առյուծի գլուխը: Երեք օր առաջ նա ինձ մոտ պարծենում էր, որ դրա համար Բարբյեին վեց հարյուր ռուբլի է վճարել, և հիմա ցույց է տալիս. ահա քեզ մի նմուշ այն միջոցներից, որոնք նա գործադրում է: Մարտնչիր և նրան տապալիր ահա այդ դիրքից:

Պյոտր Իվանիչը պատուհանից ցույց տվեց դիմացի տունը: — Հիշիր, որ վազաները քոնն են, և ոգեշնչվիր,— ավելացրեց նա:

— Վաղվա ներկայացման համար տոմս ունե՞ք,— հարցրեց Սուրկովը Տաֆաևային, հանդիսավորությամբ նրան մոտենալով:

— Ոչ:

— **Թո՛ւյլ տվեք հանձնել ձեզ,**— շարունակեց նա և ավարտեց **«Խելքից պատուհասի»** Զագորեցկու ամբողջ պատասխանը:

Սպայի բեղերը թեթևակի ցնցվեցին ժպտից: Պյոտր Իվանիչը աչքի պոչով նայեց եղբորորդուն, իսկ Յուլիա Պավլովնան շիկնեց: Նա սկսեց Պյոտր Իվանիչին հրավիրել օթյակ:

— Շատ շնորհակալ եմ ձեզնից,— բայց վաղը ես թատրոնում հերթապահ եմ կնոջս մոտ. բայց ահա թույլ տվեք ներկայացնել իմ փոխարեն այս երիտասարդին...

Նա ցույց տվեց Ալեքսանդրին:

— Ես ուզում էի խնդրել և նրան. մենք ընդամենը երեք հոգի ենք. ես և ազգականուհիս, մեկ էլ...

— Նա ձեզ համար կփոխարինի և ինձ,— ասաց Պյոտի Իվանիչը,— իսկ կարիքի դեպքում՝ նաև այս խելառին:

Նա ցույց տվեց Սուրկովին և սկսեց կամացուկ ինչ-որ բան ասել Տաֆաևային: Սա այդ ընթացքում երկու անգամ նայեց Ալեքսանդրին ու ժպտաց:

— Շնորհակալ եմ,— պատասխանեց Սուրկովը,— միայն վատ չէր լինի, եթե այդ փոխարինումն առաջարկվեր ավելի վաղ, երբ տոմս չկար. այն ժամանակ կտեսնեի, թե ինչպես եք փոխարինելու ինձ:

— Ա՛խ. Ես շատ շնորհակալ եմ ձեր սիրալիրության համար,— աշխուժությամբ ասաց տանտիրուհին Սուրկովին,— բայց ձեզ օթյակ չհրավիրեցի, որովհետև դուք աթոռ ունեք: Դուք, հավանաբար, կգերադասեք ուղղակի բեմի դիմաց լինել... հատկապես բալետի ժամանակ...

— Ոչ, ոչ, խորամանկում եք, դուք այդ չեք կարծում. ձեր կողքի տեղը փոխել ուրիշ տեղով՝ ո՛չ մի դեպքո՛ւմ:

— Բայց այն արդեն խոստացված է...

— Ինչպե՞ս: Ո՞ւմ:

— Մ. Ռենեին:

Նա ցույց տվեց մորուքավոր օտարերկրացիներից մեկին:

— Oui, madam m'a fait cet honneur...— */Այո, տիկինը ինձ արժանացրել է այդ պատվին (ֆրանս.):/* աշխուժորեն մրթմրթաց նա:

Սուրկովը, բերանաբաց, նայեց նրան, հետո Տաֆաևային:

— Ես կփոխանակեմ նրա հետ. ես նրան կառաջարկեմ աթոռս,— ասաց նա:

— Փորձեցեք:

Մորուքավորը ձեռքերն ու ոտքերը թափահարեց:

— Խոնարհաբար շնորհակա՛լ եմ,— ասաց Սուրկովը Պյոտր Իվանիչին, խեթ նայելով Ալեքսանդրին,— սա ես ձեզ եմ պարտական:

— Չարժե շնորհակալ լինել: Բայց չե՞ս ուզում իմ օթյակը գալ: Մենք երկուսով ենք միայն, ես ու կինս. չէ՞ որ վաղուց նրա հետ չես տեսնվել. մի քիչ կդարպասեիր:

Սուրկովը սրդողած շրջվեց նրանից: Պյոտր Իվանիչը աննկատելի մեկնեց: Յուլիան Ալեքսանդրին նստեցրեց իր կողքին և մի ամբողջ ժամ խոսում էր նրա հետ: Սուրկովը մի քանի անգամ խառնվեց խոսակցությանը, բայց ինչ-որ անհարկի: Ինչ-որ խոսք բացեց բալետի մասին և ի պատասխան այո ստացավ, երբ պետք էր ասել ոչ, և ընդհակառակն, պարզ էր, որ նրան չէին լսում: Հետո հանկարծ թռավ ոստրեներին, հավատացնելով, որ առավոտյան կերել է հարյուր ութսուն հատ՝ և նույնիսկ մի հայացք չստացավ: Նա էլի մի քանի ծամծմված բաներ ասաց և, ոչ մի օգուտ չտեսնելով, գլխարկը վերցրեց և պտտվում էր Յուլիայի մոտ, հասկացնելով նրան, որ դժգոհ է և պատրաստվում է մեկնել: Բայց Յուլիան չնկատեց:

— Ես գնո՛ւմ եմ,— ասաց նա, վերջապես, արտահայտիչ:— Մնաք բարո՛վ:

Այդ բառերում նկատվում էր վատ թաքցրած զայրույթ:

— Արդե՞ն,— պատասխանեց Տաֆաևան հանգիստ:— Վաղը գոնե մի րոպեով կերևա՞ք օթյակում:

— Ինչպիսի՛ նենգություն: Մի րոպե, երբ գիտեք, որ ձեր կողքին տեղ ունենալու համար տեղ չէի վերցնի դրախտում:

— Եթե թատերական՝ հավատում եմ:

Նա արդեն չէր ուզում մեկնել: Նրա բարկությունն անցել էր հրաժեշտի ժամանակ Յուլիայի նետած փաղաքշական խոսքից: Բայց բոլորը տեսան, որ նա հրաժեշտ է տալիս. ուզած-չուզած պետք էր գնալ, և նա գնաց, ետ-ետ նայելով շնիկի պես, որն ուզում է գնալ տիրոջ հետևից, բայց որին ետ են վռնդում:

Յուլիա Պավլովնան քսաներեք-քսանչորս տարեկան էր Պյոտր Իվանիչը ճիշտ էր հասկացել. նա իրոք թուլաջիղ էր, բայց դա նրան չէր խանգարում լինել շատ սիրունիկ, խելացի և նազելի կին: Միայն նա երկչոտ էր, երազուն, զգայուն, ինչպես ջղային կանանց մեծ մասը: Դիմագծերը քնքուշ էին, նուրբ, հայացքը հեզ և միշտ մտախոհ, մասամբ թախծոտ՝ առանց պատճառի կամ, եթե կուզեք, ջղերի պատճառով:

Աշխարհին ու կյանքին նա նայում էր ոչ բոլորովին բարեհաճ, խորհում էր իր գոյության հարցի մասին և գտնում, որ ինքը ավելորդ է այստեղ: Բայց աստված մի արասցե, եթե որևէ մեկը, նույնիսկ պատահմամբ նրա մոտ խոսք բացեր գերեզմանի, մահվան մասին՝ նա գույնը գցում էր: Նրա հայացքից խուսափում էր կյանքի լուսավոր կողմը: Այգում, պուրակում նա զբոսանքի համար ընտրում էր մութ, խիտ ծառուղին և անտարբերությամբ էր նայում ծիծաղկուն բնանկարին: Թատրոնում միշտ դիտում էր դրաման, կոմեդիան՝ հազվադեպ, վոդևիլը՝ երբեք. ականջները խցկում էր պատահմամբ նրան հասած ուրախ երգի հնչյուններից, երբեք չէր ժպտում կատակին:

Ուրիշ անգամ նրա դիմագծերն արտահայտում էին տանջանք, բայց ոչ տառապալի, հիվանդագին, այլ կարծես երանության տանջանք: Երևում էր, որ նա ներքուստ պայքարում էր ինչ-որ գայթակղեցուցիչ երազանքի դեմ և ուժասպառվում էր: Այդպիսի պայքարից հետո նա երկար ժամանակ լինում էր լուռ, թախծոտ, հետո հանկարծ անբացատրելի ուրախ տրամադրության մեջ էր ընկնում, չդավաճանելով, սակայն, իր բնավորությանը. ինչը որ նրան ուրախացնում էր, մեկ ուրիշի չէր ուրախացնի: Բոլո՛ր ջղերից էր: Իսկ որ ականջ դնեիք այդ տիկիններին, ինչե՞ր ասես չէին ասում: **Ճակատագիր, համակրություն, բնազդական հափշտակություն, անբացատրելի թախիծ, տարտամ ցանկություն** բառերն ուղղակի հրմշտում են մեկը մյուսին, բայց, համենայն դեպս, վերջանում է հոգոցով, «ջղերը» բառով և սպիրտի սրվակով:

— Ինչպե՞ս հասկացաք ինձ,— ասաց Տաֆաևան Ալեքսանդրին հրաժեշտ տալիս:— Տղամարդկանցից ոչ ոք, նույնիսկ ամուսինս չէր կարողացել մի լավ հասկանալ իմ բնավորությունը:

Իսկ բանն այն էր, որ Ալեքսանդրը ինքն էլ գրեթե այդպիսին էր: Ա՛յ թե նրա տեղն էր:

— Ցտեսություն:

Տաֆաևան նրան մեկնեց ձեռքը:

— Հուսով եմ, դուք հիմա առանց հորեղբոր իմ տան ճամփան կգտնեք,— ավելացրեց նա:

Ձմեռն եկավ: Ալեքսանդրը սովորաբար ուրբաթ օրերը ճաշում էր հորեղբոր մոտ: Բայց ահա անցել էր չորս ուրբաթ, նա չէր հայտնվում, չէր գալիս նաև ուրիշ օրեր: Լիզավետա Ալեքսանդրովնան բարկանում էր. Պյոտր Իվանիչը փնթփնթում էր, որ Ալեքսանդրը զուր տեղը հարկադրում էր մի ավելորդ կես ժամ սպասել նրան:

Մինչդեռ Ալեքսանդրն առանց գործի չէր. նա կատարում էր հորեղբոր հանձնարարությունը: Սուրկովն արդեն վաղուց չէր գնում Տաֆաևայի մոտ և ամենուրեք հայտարարել էր, որ նրանց մեջ ամեն ինչ վերջացել է, որ ինքը խզել է կապը նրա հետ: Մի անգամ երեկոյան, դա հինգշաբթի օրն էր, Ալեքսանդրը, տուն վերադառնալով, իր սեղանին գտավ երկու վազա և հորեղբոր նամակը: Պյոտր Իվանիչը նրան շնորհակալություն էր հայտնում բարեկամական ջանասիրության համար և հաջորդ օրը սովորականի պես հրավիրում էր ճաշի: Ալեքսանդրը մտածմունքի մեջ ընկավ, կարծես այդ հրավերը խախտում էր նրա ծրագրերը: Սակայն հաջորդ օրը ճաշից մի ժամ առաջ նա գնաց Պյոտր Իվանիչի մոտ:

— Քեզ ի՞նչ է պատահել: Բոլորովին չես երևում: Մեզ մոռացե՞լ եք,— հարցեր տեղացին թե հորեղբայրը, թե հորեղբոր կինը:

— Դե՛: Լավություն արիր,— շարունակեց Պյոտր Իվանիչը,— սպասածից ավելի: Այնինչ համեստություն էիր անում. «Չեմ կարող, ասում է, չե՛մ իմանում»,— չի՛ իմանում, վաղուց էի ուզում քեզ տեսնել, բայց քեզ բռնել չի լինի: Դե, շա՛տ շնորհակալ եմ: Վազաներն ստացա՞ր անվնաս:

— Ստացա, բայց ես դրանք ետ կուղարկեմ:

— Ինչո՞ւ: Ո՛չ մի դեպքում. դրանք ամենայն իրավունքով քոնն են:

— Ո՛չ,— վճռական ասաց Ալեքսանդրը:— Ես այդ նվերը չեմ վերցնի:

— Դե՛, ինչպես կուզես: Դրանք դուր են գալիս կնոջս, նա կվերցնի:

— Ես չգիտեի, Ալեքսանդր,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան խորամանկ ժպիտով,— որ դուք այդպես վարպետ եք այդ գործում... ինձ ոչ մի խոսք...

— Դա հորեղբայրս էր հնարել,— շփոթված պատասխանեց Ալեքսանդրը,— ես այստեղ ուղղակի ոչինչ եմ, նա էլ ինձ սովորեցրեց...

— Հա, հա, լսիր նրան. նա ինքը չի իմանում: Բայց այնպես մշակեց գործը… Շատ, շա՛տ շնորհակալ եմ: Իսկ իմ ցանցառը, Սուրկովը, քիչ մնաց գժվեր: Ծիծաղս բերեց: Մի երկու շաբաթ առաջ ինքն իրեն կորցրած վազում է մոտս. ես իսկույն հասկացա, թե ինչու, միայն ցույց չեմ տալիս, գրում եմ, կարծես ոչինչ չգիտեմ: «Ա՛, այդ դու ես, ասում եմ, ի՞նչ լավ բան կասես»: Նա ժպտաց, ուզեց հանգիստ ձևանալ... իսկ աչքերին համարյա արցունքներ կան: «Ոչ մի լավ բան, ասում է. ես ձեզ մոտ եմ եկել վատ լուրերով»: Ես նրան նայեցի իբր թե զարմացած: «Ի՞նչ է պատահել»,— հարցնում եմ: «Ձեր եղբորորդու մասին»,— ասում է:— «Իսկ ի՞նչ: Դու ինձ վախեցնում ես, շուտ, ասա՛»,— հարցնում եմ ես: Այստեղ նրա հանգստությունը կտրվեց. նա սկսեց բղավել, մոլեգնել: Ես բազկաթոռիս հետ ետ մղվեցի նրանից — խոսել չէր լինի, ուղղակի ցայտերը շաղ էր տալիս. «Ինքներդ եք, ասում է, գանգատվում, որ նա քիչ է պարապում, իսկ հենց ինքներդ էլ նրան վարժեցնում եք անգործության»:— «Ե՞ս», «Այո՛, դուք, նրան ո՞վ ծանոթացրեց Julie-ի հետ»: Պետք է քեզ ասեմ, որ մի կնոջ հետ ծանոթանալու հենց երկրորդ օրը նրան կիսանունով է կոչում: «Իսկ ի՞նչ դժբախտություն է դա»,— ասում եմ ես: — «Այն դժբախտությունն է, ասում է, որ նա հիմա առավոտից մինչև իրիկուն նրա մոտ է նստած...»:

Ալեքսանդրը հանկարծ կարմրեց:

— Տես թե չարությունից ինչպես է ստում, մտածում էի ես,— շարունակեց Պյոտր Իվանիչը, նայելով եղբորորդուն,— Ալեքսանդրի շատ պետքն է առավոտից մինչև երեկո այնտեղ նստելը: Ես նրան այդ չեմ խնդրել, այնպես չէ՞:

Պյոտր Իվանիչը եղբորորդու վրա կանգնեցրեց իր սառն ու հանգիստ հայացքը, որը Ալեքսանդրին թվաց ուղղակի կրակե:

— Այո... ես երբեմն... անցնում եմ...— քրթմնջաց Ալեքսանդրը:

— Երբեմն, դա տարբեր բան է,— շարունակեց հորեղբայրը,— ես հենց այդպես էլ խնդրել էի. և ոչ թե ամեն օր: Ես գիտեի, որ նա ստում է: Այնտեղ ի՞նչ պիտի անես ամեն օր: Կձանձրանաս:

— Ո՛չ: Նա շատ խելացի կին է... հիանալի դաստիարակված... սիրում է երաժշտությունը...— ասում էր Ալեքսանդրը անորոշ, կցկտուր, և քորեց աչքը, թեև քոր չէր գալիս, շփեց ձախ քունքը, հետո հանեց թաշկինակը և շրթունքները սրբեց:

Լիզավետա Ալեքսանդրովնան ուշադիր, գաղտագողի նայեց նրան, շրջվեց դեպի լուսամուտը և ժպտաց:

— Ա՛: Դե ավելի լավ,— ասաց Պյոտր Իվանիչը,— եթե քեզ համար ձանձրալի չէր. իսկ ես շարունակ վախենում էի, թե քեզ արդյոք տհաճ անհանգստություն չե՞մ պատճառել: Սուրկովին ասում եմ. «Շնորհակալություն, սիրելիս, որ հոգ ես տանում իմ եղբորորդու մասին. շատ, շա՛տ շնորհակալ եմ քեզնից... միայն թե արդյոք չե՞ս չափազանցնում գործը: Դա այնքան էլ մեծ դժբախտություն չէ...»: «Ինչպե՞ս թե դժբախտություն չէ,— բղավեց նա:— Նա, ասում է, գործով չի զբաղվում. երիտասարդ մարդը պետք է աշխատի...»: «Դա էլ դժբախտություն չէ, ասում եմ, քո ի՞նչ հոգն է»: «Ինչպե՞ս թե, ասում է, ինչ հոգն է. նա մտածել է իմ դեմ գործել խորամանկությամբ...»: «Ա՛, ահա թե որտեղ է դժբախտությունը»,— սկսեցի ձեռք առնել: «Յուլիային, ասում է, սատանան գիտի, թե ինչեր է հավատացնում իմ մասին... Նա հիմա բոլորովին փոխվել է իմ նկատմամբ: Ես ցույց կտամ նրան, այդ ծծկերին,— ներիր, նրա խոսքերն եմ կրկնում,— նրա ի՛նչ բանն է, ասում է, ինձ հետ պայքարել: Նա միայն զրպարտությամբ է հաղթել. հուսով եմ, որ դուք խելքի կբերեք նրան...»: «Կսաստեմ, ասում եմ, անպայման կսաստեմ, բայց հերիք, արդյոք ճի՞շտ է դա: Նա քեզ ինչո՞վ է բարկացրել»: Դու Տաֆաևային ծաղիկնե՞ր էիր նվիրում թե ինչ...— Պյոտր Իվանիչը նորից կանգ առավ, կարծես պատասխան սպասելով: Ալեքսանդրը լուռ էր: Պյոտր Իվանիչը շարունակեց.— «Ինչպե՞ս թե,

ասում է, ճիշտ չէ: Ինչո՞ւ է նրան ամեն օր ծաղկեփունջ տանում: Հիմա, ասում է, ձմեռ է… ինչքա՞ն արժե դա... Ես գիտեմ, ասում է, ինչ են նշանակում այդ ծաղեկեփնջերը»: Ահա թե ինչ է յուրայինը, մտածեցի ինքս ինձ. ոչ, տեսնում եմ, որ ազգակցությունը դատարկ բան չէ. դու մեկ ուրիշի համար այդպես կանհանգստանայի՞ր: «Բայց իսկապե՞ս ամեն օր,— ասում եմ:— Կաց, ես նրան կհարցնեմ. դու կարող է և խաբես»: Եվ իսկապես որ խաբել է: Այո՞: Չի կարող պատահել, որ դու...

Ալեքսանդրը ուզում էր գետինը մտնել: Իսկ Պյոտր Իվանիչը անողոքաբար նայում էր ուղիղ նրա աչքերին և պատասխանի էր սպասում:

— Երբեմն... ես իրոք... տանում էի...— ասաց Ալեքսանդրը, աչքերը խոնարհելով:

— Դե, էլի՝ երբեմն: Ոչ ամեն օր. դա իրոք որ ձեռնտու չէ: Դու, ի դեպ, ասա ինձ, թե ինչ է նստում քեզ այդ ամենը. ես չեմ ուզում, որ դու ինձ համար ծախս անես: Բավական է և այն, որ անհանգստանում ես: Հաշիվը ինձ ներկայացրու: Հա, ուրեմն երկար ժամանակ այստեղ դուրս էր տալիս Սուրկովը: «Նրանք միշտ, ասում է, միասին զբոսնում են կամ ոտով կամ կառքով, այնտեղ, որտեղ քիչ մարդ կա»:

Այդ խոսքերի վրա Ալեքսանդրը մի քիչ վատ եղավ. նա ոտները դուրս քաշեց աթոռի տակից և հանկարծ նորից կծկեց:

— Ես կասկածանքով գլուխս օրորեցի,— շարունակում էր հորեղբայրը:— «Շատ նրա պե՛տքն է ամեն օր զբոսնել», ասում եմ: «Հարցրեք, ասում է, մարդկանց...», «Ավելի լավ հենց իրեն կհարցնեմ»,— ասացի ես.. Ճիշտ չէ՞:

— Ես մի քանի անգամ... իսկապես... նրա հետ զբոսնել եմ...

— Բայց ախր ոչ ամեն օր. ես այդ չէի խնդրել. ես գիտեի, որ Սուրկովը ստում է: «Դե, ինչ մի մեծ բան է,— ասում եմ նրան:— Տաֆաևան այրի է, մոտիկ տղամարդիկ չունի. Ալեքսանդրը համեստ է, ոչ թե քեզ նման թեթևսոլիկ: Դրա համար էլ նա Ալեքսանդրին վերցնում է իր հետ. հո չի՞ կարող մենակ»: Նա ոչինչ լսել չի ուզում: «Ոչ, ասում է, ինձ չե՛ք խաբի: Ես գիտեմ: Միշտ նրա հետ թատրոնում է. ես ինքս եմ, ասում է, օթյակ ճարում, երբեմն աստված գիտի, թե ինչ դժվարությամբ, իսկ այնտեղ բազմում է Ալեքսանդրը»: Ես այստեղ արդեն չդիմացա և քահ-քահ ծիծաղեցի: «Քեզ այդպես էլ պետք է, տխմա՛ր, մտածում եմ»: Ա՛յ քեզ Ալեքսանդր: Ահա՛ եղբորորդի: Միայն անհարմար եմ զգում ինձ, որ այդպես անհանգստանում ես:

Ալեքսանդրին ասես կտտանքի էին ենթարկում: Ճակատից կաթում էին քրտնքի խոշոր կաթիլներ: Նա հազիվ էր լսում, թե ինչ է ասում հորեղբայրը և չէր համարձակվում նայել ոչ նրան, ոչ հորեղբոր կնոջը:

Լիզավետա Ալեքսանդրովնան խղճաց նրան: Նա գլուխն օրորեց ամուսնու վրա, կշտամբելով, որ սա տանջում է եղբորորդուն: Բայց Պյոտր Իվանիչը չդադարեց:

— Սուրկովը խանդից դրդված էր մտածում հավատացնել ինձ,— շարունակեց նա,— որ իբր դու նույնիսկ մինչև ականջներդ սիրահարված ես Տաֆաևային: «Ոչ, ներիր խնդրեմ, ասում եմ նրան, դա արդեն ճիշտ չէ. այն ամենից հետո, ինչ պատահել է նրան, նա չի սիրահարվի: Նա չափազանց լավ է ճանաչել կանանց և արհամարհում է նրանց...» Ճիշտ չէ՞:

Ալեքսանդրը առանց աչքերը բարձրացնելու գլխով արավ:

Լիզավետա Ալեքսանդրովնան տանջվում էր նրա համար:

— Պյոտր Իվանիչ,— ասաց նա, որպեսզի մի կերպ ընդհատի խոսակցությունը:

— Հը՞: Ի՞նչ:

— Քիչ առաջ եկել էր Լուկյանովների սպասավորը, նամակ էր բերել:

— Գիտեմ. լավ: Ինչի՞ վրա կանգ առա:

— Նորից, Պյոտր Իվանիչ, սկսել ես մոխիրը թափ տալ իմ ծաղիկների վրա: Տես, սա ի՞նչ բան է:

— Ոչինչ, սիրելիս, ասում են՝ մոխիրը նպաստում է բուսականությանը... Ուրեմն ես ուզում էի ասել...

— Ճաշելու ժամանակը չէ՞, Պյոտր Իվանիչ:

— Լավ, հրամայիր, որ տան: Այ դու լավ հիշեցրիր ճաշի մասին: Սուրկովն ասում է, Ալեքսանդր, որ դու գրեթե ամեն օր այնտեղ ես ճաշում, որ հիմա, ասում է, դրա համար ուրբաթ օրերն էլ ձեզ մոտ չի լինում, որ իբր դուք ամբողջ օրը միասին եք անցկացնում... Սատանան գիտի, թե ինչեր էր ստում, զահլա տարավ, վերջապես նրան վռնդեցի: Այդպես էլ դուրս եկավ, որ սուտ էր ասում: Այսօր ուրբաթ է, իսկ դու ահա այստե՛ղ ես:

Ալեքսանդրը ոտքը ոտքին դրեց և գլուխը թեքեց ձախ ուսին:

— Ես շատ, շատ շնորհակալ եմ քեզնից: Դա և բարեկամական, և ազգակցական ծառայություն է,— եզրափակեց Պյոտր Իվանիչը:— Սուրկովը համոզվեց, որ ոչինչ չի կարող ստանալ և ետ նահանջեց: «Յուլիան, ասում է, երևակայում է, թե նրա համար ախ ու վախ պիտի քաշեմ, սխալվո՛ւմ է: Իսկ ես դեռ ուզում էի, ասում է, հարդարել ամբողջ հարկը լուսամուտներից լուսամուտ, և աստված գիտի, թե ի՞նչ մտադրություններ ունեի. նա, ասում է, գուցե չէր էլ երազում այդպիսի երջանկության մասին, որը պատրաստվում էր նրա համար: Ես, ասում է, դեմ չէի լինի նրա հետ ամուսնանալուն, եթե նա կարողանար ինձ կապել իր հետ: Հիմա ամեն ինչ վերջացած է: Դուք, ասում է, ճիշտ էիք խորհուրդ տալիս, Պյոտր Իվանիչ: Ես կպահպանեմ և՛ փողը, և՛ ժամանակս»: Եվ հիմա բայրոնություն է անում մարդը, շրջում է այնպես մռայլ և փող էլ չի խնդրում: Ես էլ նրա հետ կասեմ, ամեն ինչ վերջացա՛ծ է: Քո գործն արված է, Ալեքսանդր, և վարպետորեն: Ես հիմա հանգիստ եմ երկար ժամանակով: Այլևս մի հոգա: Հիմա կարող ես և չանցնել նրա մոտ. պատկերացնում եմ, թե ինչպիսի՛ ձանձրույթ է այնտեղ... Ներիր ինձ, խնդրեմ... ես մի կերպ վարձահատույց կլինեմ: Երբ փող պետք լինի՝ դիմիր: Լիզա: Պատվիրիր, որ մեզ ընտիր գինի տան ճաշի հետ. կխմենք գործի հաջողության համար:

Պյոտր Իվանիչը դուրս եկավ սենյակից: Լիզավետա Ալեքսանդրովնան մի երկու անգամ գողունի նայեց Ալեքսանդրին և, տեսնելով, որ նա ոչ մի խոսք չի ասում, նույնպես դուրս եկավ, ծառաներին ինչ-որ բան պատվիրելու:

Ալեքսանդրը նստել էր կարծես ինքնամոռացության մեջ և շարունակ նայում էր ծնկներին: Վերջապես գլուխը բարձրացրեց, նայեց շուրջը՝ ոչ ոք չկա: Նա շունչը ետ բերեց, նայեց ժամացույցին՝ ժամը չորսն է: Նա արագ վերցրեց գլխարկը, ձեռքը թափահարեց այն կողմը, ուր գնացել էր հորեղբայրը, և կամացուկ, թաթերի ծայրին, չորս կողմը նայելով, հասավ մինչև նախասենյակ, այնտեղ շինելը վերցրեց ձեռքը, հապշտապ նետվեց սանդուղքից ցած և կառք նստելով գնաց Տաֆաևայի մոտ:

Սուրկովը սուտ չէր ասել. Ալեքսանդրը սիրում էր Յուլիային: Նա գրեթե սարսափով զգաց այդ սիրո, կարծես թե ինչ-որ վարակի, առաջին նոպաները: Նրան տանջում էին և վախը, և ամոթը. վախը՝ որ նորից կենթարկվի և իր, և ուրիշի սրտի բոլոր քմայքներին, ամոթը՝ ուրիշների, ամենից ավելի հորեղբոր առաջ: Նա շատ բան կտար, միայն թե թաքցներ հորեղբորից: Վաղո՞ւց էր միթե, մի երեք ամիս առաջ, նա այնպես հպարտ, վճռական հրաժարվեց սիրուց, նույնիսկ ոտանավորով դամբանական գրեց այդ անհանգիստ զգացմունքին, որը կարդացել էր հորեղբայրը, վերջապես բացահայտ արհամարհում էր կանանց, և հանկարծ՝ նորից կնոջ ոտների մոտ է: Նորից ապացույց տղայական թեթևամտության: Աստվա՛ծ: Ե՞րբ է ազատվելու հորեղբոր անխորտակելի ազդեցությունից: Մի՞թե նրա կյանքը երբեք չի ընդունի առանձնահատուկ, անսպասելի ուղղություն, այլ շարունակ կընթանա Պյոտր Իվանիչի կանխագուշակությամբ:

Այդ միտքը նրան հուսահատության գիրկն էր գցում: Նա ուրախ կլիներ փախչելու նոր սիրուց: Բայց ինչպե՞ս փախչեր: Ինչպիսի՛ տարբերություն դեպի Նադինկան և դեպի Յուլիան ունեցած սիրո մեջ: Առաջին սերը ոչ այլ ինչ էր, քան եթե սրտի դժբախտ սխալ, սիրտ, որը սնունդ էր պահանջում, իսկ այդ տարիքում սիրտն այնքա՜ն անխտրական է լինում. առաջին իսկ պատահածն

ընդունում է: Իսկ Յո՛ւլիան: Սա արդեն քմահաճ աղջիկ չէ, որը չի հասկանում ոչ Ալեքսանդրին, ոչ իրեն, ոչ սերը: Սա կատարելապես զարգացած կին է, մարմնով թույլ, բայց սիրո համար կորովի ոգով. նա համակ սե՛ր է: Երջանկության ու կյանքի համար նա ուրիշ պայման չի ճանաչում: Սիրելը իբր դատա՞րկ բան է: Դա նույնպես ձիրք է: Իսկ Յուլիան հանճար է դրանում: Ահա ինչպիսի սիրո մասին էր երազում Ալեքսանդրը. գիտակցական, խելացի, բայց միաժամանակ ուժեղ, իր ոլորտից դուրս ոչ մի բան չճանաչող սեր:

«Ես անասունի պես ուրախությունից շնչահեղձ չեմ լինում,— ասում էր նա ինքն իրեն,— շունչս չի մարում, բայց իմ մեջ կատարվում է ավելի կարևոր, ավելի բարձր պրոցես. ես գիտակցում եմ իմ երջանկությունը, խորհում եմ դրա մասին և դա առավել լիակատար է, թեև, գուցե, ավելի հանդարտ... Ինչպե՞ս ազնվորեն, անկեղծ, բոլորովին անսեթևեթ, անձնատուր եղավ Յուլիան իր զգացմունքին: Նա կարծես սպասում էր սերը խորապես հասկացող մի մարդու, և այդ մարդը հայտնվեց: Նա ինչպես օրինական տիրակալ հպարտորեն անցավ ժառանգական հարստության տիրապետմանը և ընդունում է գտել հնազանդությամբ: Ինչպիսի՞ ուրախություն, ինչպիսի՜ երանություն,— մտածում էր Ալեքսանդրը, հորեղբոր տնից նրա մոտ գնալիս,— գիտենալ, որ աշխարհում կա մի էակ, որը, ուր լինի, ինչ էլ անի, հիշում է մեր մասին, բոլոր մտքերը, զբաղմունքները, արարքները, ամե՛ն ինչ մոտեցնում է մի կետի և մի հասկացության՝ սիրած էակին: Դա կարծես մեր երկնմանակն է: Ինչ որ լսում է, ինչ որ տեսնում է, ինչի կողքով որ անցնում կամ ինչ որ անցնում է նրա կողքով, բոլորը ստուգվում է մյուսի՝ իր երկնմանակի տպավորությամբ. այդ տպավորությունը հայտնի է երկուսին, երկուսն էլ ուսումնասիրել են միմյանց և հետո այդ ձևով ստուգված տպավորությունը ընդունվում և հոգու մեջ հաստատվում է անջնջելի գծերով: Երկնմանակը հրաժարվում է սեփական զգացողություններից, եթե դրանք չեն կարող կիսվել կամ ընդունվել մյուսի կողմից: Նա սիրում է այն, ինչ որ սիրում է մյուսը, ատում՝ ինչ որ նա է ատում: Նրանք անբաժան ապրում են նույն մտքով, նույն զգացմունքով. նրանք մի հոգևոր աչք ունեն, մի լսողություն, մի խելք, մի հոգի...»:

— Աղա՛: Լիտեյնու ո՞ր տեղումն է,— հարցրեց կառապանը:

Յուլիան Ալեքսանդրին սիրում էր ավելի ուժգին, քան Ալեքսանդրը նրան: Յուլիան նույնիսկ չէր գիտակցում իր սիրո ամբողջ ուժը և չէր խորհում այդ մասին: Նա սիրում էր առաջին անգամ — դեռ ոչինչ, եթե միայն դա լիներ — չէ՞ որ չի կարելի միանգամից երկրորդ անգամ սիրել. բայց դժբախտությունն այն էր, որ նրա սիրտը զարգացած էր ծայրաստիճան, մշակված էր վեպերով և պատրաստված չէ՛ թե առաջին, այլ այն ռոմանտիկ սիրո համար, որ գոյություն ունի որոշ վեպերում և ոչ թե բնության մեջ և որը հենց այդ պատճառով էլ միշտ դժբախտ սեր է լինում, որովհետև իրականում անհնարին է: Այնինչ միայն վեպերի ընթերցմամբ Յուլիայի միտքը առողջ սնունդ չէր գտնում և ետ էր մնում սրտից: Նա ոչ մի կերպ չէր կարող պատկերացնել խաղաղ, հասարակ սեր առանց բուռն դրսևորումների, առանց անչափավոր քնքշությունների: Նա անմիջապես կդադարեր սիրելուց մի մարդու, եթե այդ մարդը հարմար առիթի դեպքում չընկներ նրա ոտքերը, եթե չերդվեր **հոգու ամբողջ ուժով, եթե համարձակվեր չայրել ու մոխրացնել նրան իր գրկում** կամ համարձակվեր, բացի սիրուց, զբաղվել ուրիշ գործով և ոչ թե միայն խմեր **կյանքի բաժակը** կաթիլ կաթիլ նրա արցունքներում և համբույրներում:

Դրանից ծնվել էր երազունությունը, որը նրա համար ստեղծել էր մի հատուկ աշխարհ: Հենց որ հասարակ աշխարհում որևէ բան կատարվում էր ոչ հատուկ աշխարհի օրենքներով, նրա սիրտը զայրանում էր, նա տառապում էր: Կնոջ առանց այն էլ թույլ օրգանիզմը ենթարկվում էր ցնցման: Երբեմն՝ չափազանց ուժեղ: Հաճախակի հուզումները գրգռում էին ջղերը և, վերջապես, հասցրին կատարյալ քայքայման: Ահա թե շատ կանանց մոտ որտեղից է այդ մտախոհությունն ու առանց պատճառի թախիծը կյանքի նկատմամբ այդ մռայլ հայացքը. ահա թե ինչու ներդաշնակ, իմաստունորեն ստեղծված և անխախտ օրենքներով ընթացող մարդկային գոյության կարգը նրանց թվում է ծանր շղթա, մի խոսքով, ահա թե ինչու է նրանց վախեցնում իրականությունը, ստիպելով ստեղծել մի աշխարհ՝ նման միրաժային աշխարհի:

Իսկ ո՞վ էր աշխատել վաղաժամ և այդպես սխալ մշակել Յուլիայի սիրտը և հանգիստ թողել միտքը... Ո՞վ: Այն դասական տրիումվիրատը մանկավարժների, որոնք ծնողների հրավերով

հայտնվում են իրենց խնամքի տակ առնելու մատաղ միտքը, նրա առաջ բացելու **բոլոր իրերի ազդեցությունն ու պատճառը,** պոկել անցյալի քողը և ցույց տալ, թե ի՞նչ կա մեր տակ, մեր վերև, մեր իսկ մեջ, դժվարի՞ն պարտականություն: Բայց դրա համար էլ երեք ազգություն էր հրավիրված այդ կարևոր սխրանքին: Ծնողներն իրենք ետ էին քաշվել դաստիարակման գործից, ենթադրելով, որ իրենց բոլոր հոգսերն ավարտվում են նրանով, որ վստահելով լավ բարեկամների հանձնարարականին, ֆրանսիական գրականություն և այլ գիտություններ սովորեցնելու համար վարձեն ֆրանսիացի Պուլեին, այնուհետև գերմանացի Շմիտին, որովհետև ընդունված է անցնել, բայց ոչ երբեք սովորել գերմաներեն. վերջապես՝ ռուս ուսուցիչ Իվան Իվանիչին:

— Նրանք բոլորն այնպես զզզվա՛ծ են,— ասում է մայրը,— միշտ այնպես վատ են հագնված, արտաքուստ լակեյից էլ վատ են, երբեմն էլ նրանցից գինու հոտ է փչում...

— Բայց ինչպե՞ս առանց ռուս ուսուցչի: Չի կարելի,— վճռեց հայրը:— Մի անհանգստացիր, ես ինքս կընտրեմ մի մաքուրի:

Ահա ֆրանսիացին գործի անցավ: Նրա շուրջը պտույտ էին գալիս և հայրը, և մայրը: Նրան տուն էին հրավիրում իբրև հյուրի, նրա հետ վարվում էին շատ հարգալից. դա թանկագին ֆրանսիացի էր:

Նրա համար հեշտ էր Յուլիային սովորեցնել. շնորհիվ դաստիարակչուհու, աշակերտուհին բլբլացնում էր ֆրանսերեն, կարդում և գրում էր համարյա անսխալ: Պուլեին մնում էր միայն նրան զբաղեցնել շարադրություններով: Նա Յուլիային առաջադրում էր զանազան թեմաներ. մե՛րթ նկարագրել արևածագը, մե՛րթ բնորոշել սերն ու բարեկամությունը, մե՛րթ շնորհավորական նամակ գրել ծնողներին կամ թախիծը արտահայտել ընկերուհուց բաժանվելու պահին:

Իսկ Յուլիան իր լուսամուտից տեսնում էր միայն, թե արևը ինչպես է մայր մտնում վաճառական Գիրինի տան հետև. ընկերուհիներից նա երբեք չէր բաժանվել, իսկ բարեկամությունն ու սերը... բայց այստեղ նրա մեջ առաջին անգամ գաղափար ծագեց այդ զգացմունքների մասին: Չէ՞ որ պետք է երբևէ իմանար այդ մասին:

Սպառելով այդ թեմաների ամբողջ պաշարը, Պուլեն վերջապես վճռեց անցնել այն նվիրական բարակ տետրակին, որի անվանաթերթի վրա խոշոր տառերով գրված էր. Cours de littérature français: */Ֆրանսերեն գրականության դասընթաց (ֆրանս.):/:* Մեզանից ո՞վ չի հիշում այդ տետրակը: Երկու ամիս անց Յուլիան անգիր գիտեր ֆրանսիական գրականությունը, այսինքն՝ բարալիկ տետրակը, իսկ երեք ամիս հետո մոռացավ: Բայց կործանարար հետքերը մնացին: Նա գիտեր, որ եղել է Վոլտեր, և երբեմն նրա վզին էր փաթաթում «Նահատակները», իսկ Շատոբրիանին վերագրում էր Dictionnaire philosophique */Փիլիսոփայական բառարան (ֆրանս.):/:* Մոնտանին անվանում էր M-r de Montaigne և նրա մասին հիշատակում էր երբեմն Հյուգոյի կողքին: Մոլիերի մասին ասում էր, որ նա գրում է թատրոնի համար. Ռասինից անգիր էր արել A peine nous sortions des portes de Trezènes */Հազիվ էինք դուրս եկել Տերեզենյան դարպասից (Ռասինի «Ֆեդրա» ողբերգությունից):/:*

Դիցաբանությունից նրան շատ էր դուր եկել Վուլկանի, Մարսի, և Վեներայի միջև խաղացված կատակերգությունը: Նա քիչ էր մնացել, որ Վուլկանի կողմը պահեր, բայց, իմանալով, որ Վուլկանը կաղ էր ու անճարպիկ, այն էլ դարբին, անմիջապես անցավ Մարսի կողմը: Նա սիրեց նաև Սեմելայի և Յուպիտերի առակը, ինչպես և առակը Ապոլլոնի արտաքսման ու երկրի վրա կատարած չարաճճիությունների մասին, այդ բոլորն ընդունելով այնպես, ինչպես գրած է և այդ հեքիաթների մեջ չկասկածելով ոչ մի ուրիշ նշանակություն: Արդյոք կասկածո՞ւմ էր ֆրանսիացին ինքը՝ աստված գիտի: Հների այդ կրոնի մասին Յուլիայի տված հարցերին, նա, ճակատը կնճռոտելով, ծանր ու մեծ պատասխանում էր. Des bêtises! Mais cette bête de Vulcain devait avoir une drôle de mine... écoutez,— ավելացրեց նա հետո, մի փոքր կկոցելով աչքը և թոթվելով Յուլիայի ձեռքը,— que feriez-vous à la place de Venus? */Հիմարությո՛ւն: Բայց այդ տխմար Վուլկանը պետք է որ դեմքի հիմար արտահայտություն ունենար: Դուք ի՞նչ կանեիք Վեներայի փոխարեն (ֆրանս.):/:* Յուլիան ոչինչ չպատասխանեց, բայց կյանքում առաջին անգամ շիկնեց իր համար անհայտ պատճառով:

Ֆրանսիացին Յուլիայի դաստիարակությունը կատարելագործում էր, վերջապես, նրանով, որ նրան ծանոթացրեց արդեն ոչ թե տեսականորեն, այլ գործնականորեն ֆրանսիական գրականության նոր դպրոցի հետ: Նա Յուլիային տալիս էր իր ժամանակին շատ աղմուկ հանած՝ «Le manuscrit vert», ««Les sept pèchès capitaux», «L'âne mort» */«Կանաչ ձեռագիր», «Յոթ մահացու մեղքեր», «Սատկած էշ» (ֆրանս.):/* և գրքերի մի ամբողջ շարան, որոնք այն ժամանակ հեղեղել էին Ֆրանսիան ու Եվրոպան:

Խեղճ աղջիկը ագահորեն նետվեց այդ օվկիանոսը: Ինչպիսի՜ հերոսներ էին թվում նրան Ժենեևները, Բալզակները, Դրուիևոները և մեծ արանց մի ամբողջ շղթա: Նրանց սքանչելի պատկերների առաջ ի՞նչ է Վուլկանի խղճուկ հեքիաթը: Վեներան այդ նոր հերոսուհիների առաջ ուղղակի անմեղ բան է: Եվ նա ագահորեն կարդում էր նոր դպրոցի գրքերը, հավանաբար կարդում է և հիմա:

Մինչ ֆրանսիացին այդքան հեռու էր գնացել, ծանրաբարո գերմանացին չէր հասցրել նույնիսկ քերականությունն անցնել. նա մեծ կարևորությամբ հոլովման, խոնարհման աղյուսակներ էր կազմում, հոլովական վերջավորությունները միտքը պահելու զանազան հետաքրքրաշարժ եղանակներ էր հորինում, բացատրում էր, որ zu մասնիկը երբեմն դրվում է վեր**g**ում և այլն:

Իսկ երբ նրանից պահանջեցին գրականություն, խեղճը վախեցավ: Նրան ցույց տվին ֆրանսիացու տետրը, նա գլուխը օրորեց ու ասաց, որ դա չի կարելի գերմաներեն սովորեցնել, այլ որ կա Ալլերի քրեստոմատիան, որի մեջ բոլոր գերմանացի գրողները իրենց երկերով առկա են: Բայց դրանով նա չազատվեց. նրան կպան, որ M-r Պուլեի պես Յուլիային ծանոթացնի զանազան երկերի հետ:

Գերմանացին, վերջապես, խոստացավ և տուն եկավ խիստ մտածմունքի մեջ ընկած: Նա բացեց կամ ավելի ճիշտ՝ հերձեց պահարանը, մի փեղկը բոլորովին հանեց, դեմ արավ պատին, որովհետև պահարանը վաղուց ի վեր ոչ ծխնի ուներ, ոչ կողպեք, այնտեղից հանեց հին կոշիկները, կես գլուխ շաքար, քթախոտի սրվակը, գրաֆինով օղի և սև հացի մի չորուկ, հետո մի կոտրված սրճաղաց, այնուհետև ածելու տուփը մի կտոր օճառի և պոմադայի բանկայի մեջ դրած խոզանակի հետ, հին տաբատակալը, գրչահատի մի սրոց և նման մի քանի զիբիլ: Վերջապես դրա հետ և երևաց մի գիրք, մի ուրիշ գիրք, երրորդը, չորրորդը, այսպես, թվով հինգ. բոլորը դա էր: Նա իրար խփեց գրքերը, փոշին քուլա-քուլա բարձրացավ ծխի նման և հանդիսավոր կերպով հովանի եղավ մանկավարժի գլխին:

Առաջին գիրքը Հեսների Իդիլիաներն էին,— gut */Լավ (գերմ.):/*,— ասաց գերմանացին և հաճույքով կարդաց կոտրված կժի իդիլիան: Բաց արեց երկրորդ գիրքը. 1804 թվականի Գոթայի օրացույցը: Նա թերթեց. այնտեղ եվրոպական թագավորների դինաստիաներն էին, զանազան ամրոցների, ջրվեժների պատկերներ, sehr gut */Շատ լավ (գերմ.);/*,— ասաց գերմանացին: Երրորդը աստվածաշունչն էր. նա մի կողմ դրեց, աստվածավախորեն մրմնջալով. Nein! */Ոչ (գերմ.);/;* Չորրորդը՝ Յունգի գիշերները. նա գլուխն օրորեց ու մրթմրթաց. Nein: Վերջինը՝ Վեյսե, և գերմանացին հաղթական ժպտաց. da habe ich's */Ահա գտա (գերմ.);/*,— ասաց նա: Երբ նրան ասացին, որ կան նաև Շիլլեր, Գյոթե և ուրիշներ, նա գլուխն օրորեց և համառորեն պնդեց. Nein!

Յուլիան հորանջեց, հենց որ գերմանացին նրա համար թարգմանեց առաջին էջը Վեյսեից, և հետո բոլորովին չէր լսում: Այդպիսով գերմանացուց նրա հիշողության մեջ մնաց միայն, որ zu մասնիկը երբեմն գրվում է վեր**g**ում:

Իսկ ռո՞ւսը: Սա գերմանացուց էլ բարեխիղճ էր անում իր գործը: Նա գրեթե արցունքն աչքերին հավատացնում էր Յուլիային, որ **գոյական անունը** կամ **բայը** այսպիսի **մասունք բանի** է, իսկ **նախդիրը՝** ահա այսպիսի, և վերջապես կարողացավ այնպես անել, որ Յուլիան հավատաց նրան և անգիր սովորեց բոլոր մասունք բանիների սահմանումը: Նա նույնիսկ կարող էր միանգամից թվել նախդիրները, շաղկապները, մակբայները, և երբ ուսուցիչը ծանրումեծ հարցնում էր. «Իսկ որո՞նք են սարսափի և զարմանքի բացականչությունները»,— Յուլիան միանգամից առանց շունչը ետ բերելու, ասում էր՝ «ա՛խ, օ՛խ, Է՛խ, ավա՛ղ, օ՛, ա՛, չէ՛, էհե՛»: Եվ ուսուցիչը հիանում էր:

Նա մի քանի ճշմարտություններ իմացավ նաև շարահյուսության մասին, բայց երբեք չէր կարողանում գործնականում կիրառել և ամբողջ կյանքում քերականական սխալներ էր անում:

Պատմությունից նա իմացավ, որ եղել է Ալեքսանդր Մակեդոնացի, որ նա շատ է պատերազմել, եղել է շատ խիզախ… և իհարկե, շատ սիրուն… իսկ թե էլի ինչ էր նշանակում նա և ինչ էր նշանակում նրա դարը, դա ոչ նրա, ոչ ուսուցչի մտքով չէր անցնում, ասենք, Կայդանովն էլ շատ չի ծավալվում այդ մասին:

Երբ ուսուցչից պահանջեցին գրականություն, նա քարշ տվեց մի կույտ հին, գործածված գրքեր: Այստեղ կային և Կանտեմիր, և Սումարոկով, հետո Լոմոնոսով, Դերժավին, Օզերով: Բոլորը զարմացան. զգուշությամբ բաց արին մի գիրք, հետո դեն գցեցին ու պահանջեցին որևէ ավելի նոր բան Ուսուցիչը բերեց Կարամզին: Բայց ֆրանսիական նոր դպրոցից հետո կարդալ Կարամզի՞ն: Յուլիան կարդաց **«Թշվառ Լիզան»,** մի քանի էջ **«Ճանապարհորդություններից»** և վերադարձրեց:

Այդ պարապմունքների միջև խեղճ աշակերտուհու համար չափազանց շատ պարապ ժամանակ էր մնում, և ոչ մի ազնիվ, առողջ սնունդ մտքի համար: Միտքն սկսում էր նիրհել, իսկ սիրտը տագնապ հնչեցնել: Ահա հենց այստեղ լույս ընկավ մի հաճկատար կուզեն և նրա համար բերեց **«Օնեգինից»** մի քանի գլուխ, **«Կովկասի գերին»** և այլն: Եվ երիտասարդ աղջիկը ճաշակեց ռուս բանաստեղծության քաղցրությունը: **«Օնեգինը»** անգիր արվեց, և չէր հեռանում Յուլիայի գլխատակից: Կուզենն էլ, մյուս դաստիարակների պես, Յուլիային չէր կարող բացատրել այդ ստեղծագործության արժանիքները: Յուլիան իր համար իբրև օրինակ վերցրել էր Տատյանային և իր իդեալին մտովի կրկնում էր Տատյանայի նամակի բոցավառ տողերը՝ ուղղված Օնեգինին, և նրա սիրտը նվում էր, տրոփում: Երևակայությունը որոնում էր մերթ Օնեգինին, մերթ նոր դպրոցի վարպետների որևէ դալկադեմ, թախծոտ, հիասթափված հերոսի…

Մի իտալացի և ուրիշ ֆրանսիացի ավարտեցին նրա դաստիարակությունը, նրա ձայնին և շարժումներին տալով ներդաշնակ չափեր, այսինքն՝ սովորեցրին պարել, երգել, նվագել կամ, ավելի ճիշտ, մինչև ամուսնությունը մի քիչ դաշնամուր նվագել, բայց երաժշտություն չսովորեցրին: Եվ ահա նա տասնութ տարեկան, բայց արդեն մշտապես մտախոհ դեմքով, հետաքրքիր դալկությամբ, եթերային իրանով, փոքրիկ տոտիկով, հայտնվեց սալոններում ի ցույց հասարակության:

Նրան նկատեց Տաֆաևը, փեսացուի բոլոր անհրաժեշտ հատկանիշներով օժտված մի մարդ, այսինքն՝ պատվական աստիճանով, լավ կարողությամբ, վզին՝ խաչ, մի խոսքով՝ կարիերայի ու բախտի տեր: Նրա մասին չի կարելի ասել, թե միայն պարզ ու բարի մարդ էր: Օ՛, ոչ: Նա կուլ գնացողը չէր, և Ռուսաստանի արդի վիճակի մասին, այն մասին, թե ինչ է պակասում նրա տնտեսական ու արդյունաբերական վիճակում, դատում էր շատ առողջ, և իր ոլորտում համարվում էր գործնական մարդ:

Դալկադեմ, մտախոհ աղջիկը, նրա պինդ նատուրայի համեմատությամբ ինչ-որ տարօրինակ հակասությամբ, նրա վրա մեծ տպավորություն էր գործել: Նա երեկույթների ժամանակ հեռանում էր թղթախաղից և խորասուզվում անսովոր մտածմունքի մեջ, նայելով իր դիմաց թռչող այդ կիսաերկնային ուրուին: Երբ Յուլիայի նվաղկոտ հայացքը ընկնում էր նրա վրա, հասկանալի է՝ պատահաբար, նա՝ սալոնական զրույցների այդ ճարպիկ գլադիատորը, շփոթվում էր երկչոտ աղջկա առաջ, երբեմն ուզում էր նրան որևէ բան ասել, բայց չէր կարող: Դա նրան ձանձրացրեց, և նա որոշեց գործել ավելի դրականորեն, զանազան մորաքույրների միջոցով:

Տեղեկություններն օժիտի մասին գոհացուցիչ դուրս եկան: «Ինչ կա որ, մենք լավ զույգ ենք,— մտածում էր նա ինքն իրեն:— Ես ընդամենը քառասունհինգ տարեկան եմ, նա՝ տասնութ: Մեր կարողությամբ լավ կապրեին ո՛չ միայն երկու հոգի: Արտաքի՞նը: Նա դեռ սովորական լավիկն է, իսկ ես, այսպես ասած… աչքի ընկնող տղամարդ եմ, ասում են, նա կրթված է. ի՞նչ կա որ: Ես էլ ժամանակին սովորել եմ, հիշում եմ, սովորեցնում էին և լատիներեն, և Հռոմի պատմություն: Դեռ հիմա էլ հիշում եմ. այնտեղ այդ կոնսուլը, անունն ի՞նչ էր… դե, սատանան նրա հետ: Հիշում եմ, որ ռեֆորմացիայի մասին էլ էինք կարդում… և այս բանաստեղծությունը. Beatus ille… ինչպե՞ս էր հետո, puer, pueri, puero… /Երանելի է այն… պատանին, պատանու, պատանուն (լատ.)։/ ոչ, այդպես չէր,

սատանան գիտի, ամեն ինչ մոռացել եմ: Բայց ախր, աստված վկա, նրա համար են սովորում, որ մոռանան: Թեկուզ մորթես ինձ, ես ասում եմ, որ ահա և՛ սա, և՛ նա, և այս բոլոր աստիճանավոր ու խելոք մարդիկ, ոչ մեկը չի ասի, թե այդ ո՛ր կոնսուլն էր... կամ որ թվին էին օլիմպիական խաղերը, նշանակում է, սովորեցնում են հենց այնպես... որովհետև այդպես է կարգը, որպեսզի միայն աչքերից երևա, որ սովորել է: Եվ ինչպե՞ս չմոռանաս. չէ՞ որ բարձր հասարակության մեջ դրա մասին հետո երբեք ոչինչ չեն խոսում, իսկ եթե որևէ մեկը խոսի, կարծում եմ, որ ուղղակի դուրս կանեն: Չէ՛, մենք լավ զույգ ենք»:

Եվ ահա, երբ Յուլիան դուրս եկավ մանկությունից, առաջին քայլին նրան դիմավորեց ամենատխուր իրականությունը՝ սովորական ամուսինը: Որքա՜ն նա հեռու էր այդ հերոսներից, որոնց ստեղծել էին նրա երևակայությունը և բանաստեղծները:

Հինգ տարի նա անցկացրեց այդ ձանձրալի քնի մեջ, ինչպես նա անվանում էր ամուսնությունը առանց սիրո, և հանկարծ հայտնվեցին ազատությունն ու սերը: Նա ժպտաց, նրան պարզեց իր ջերմ գիրկը և անձնատուր եղավ իր կրքին, ինչպես մարդ ձիավարելիս անձնատուր է լինում արագ վազքին: Նա սլանում է հզոր կենդանու հետ, մոռանալով տարածությունը: Շունչը մարում է, առարկաները ետ են փախչում. դեմքին զով է փչում. կուրծքը հազիվ է դիմանում գրկանքի զգացողությանը... կամ ինչպես մարդ նավակի մեջ անփութորեն անձնատուր է լինում ալիքների ընթացքին. արևը ջերմացնում է նրան, կանաչ ափերը փայլկտում են աչքերում, չարաճճի ալիքը շոյում է նավախելը և այնպե՜ս քաղցր շշնջում, առաջ է վազում և շարունակ հրապուրում հեռու, հեռու, ճանապարհը ցույց տալով անվերջանալի շիթով... Եվ նա տարվում է: Այնժամ ժամանակ չի լինում նայելու և մտածելու, թե ինչով կվերջանա ճանապարհը. արդյոք ձին անդո՞ւնդ կնետի, ալիքը ժայռի՞ն կխփի նավակը... Քամին տանում է մտքերը, աչքերը փակվում են, հմայքն անհաղթահարելի է... այդպես էլ Յուլիան չէր հաղթահարում այդ հմայքը, այլ շարունակ տարվում էր, տարվում... Նրա համար վերջապես հասել էին կյանքի բանաստեղծական վայրկյանները. նա սիրեց հոգու այդ մերթ քաղցր, մերթ տանջալի տագնապը, ինքն էր որոնում հուզումներ, հորինում էր իր համար և տանջանք, և երջանկություն: Նա տարվել էր իր սիրով, ինչպես տարվում են օպիումով, և ագահորեն ըմպում էր այդ սրտի թույնը:

Յուլիան արդեն հուզված էր սպասումից: Նա կանգնել էր լուսամուտի առաջ, և նրա անհանգստությունն աճում էր րոպե առ րոպե: Նա պոկոտում էր չինական վարդի թերթիկները և զայրույթով թափում հատակին, իսկ սիրտն ուղղակի նվաղում էր. դա տանջանքի պահ էր: Նա մտովի հարց ու պատասխան էր խաղում. կգա՞ թե չի գա: Նրա դատողության ամբողջ ուժը ուղղված էր այն բանին, որ լուծեր այդ խրթին հարցը: Եթե դատողությունները դրականորեն էին խոսում, նա ժպտում էր, եթե ոչ՝ գունատվում:

Երբ Ալեքսանդրը կառքով մոտեցավ, Յուլիան, գունատ, ուժասպառ ընկավ բազկաթոռին, այնքան ուժեղ էին աշխատում նրա ջղերը: Երբ Ալեքսանդրը ներս մտավ... անհնար էր նկարագրել այն հայացքը, որով Յուլիան դիմավորեց նրան, այն ուրախությունը, որ վայրկենապես տարածվեց նրա բոլոր դիմագծերում, կարծես նրանք մի տարի չէին տեսնվել, մինչդեռ տեսնվել էին նախորդ օրը: Նա լուռ ցույց տվեց պատի ժամացույցը. բայց հազիվ էր Ալեքսանդրը բերանը բաց արել, որ արդարանա, Յուլիան, առանց լսելու, հավատաց, ներեց, մոռացավ անհամբերության պատճառած ողջ ցավը, ձեռքը մեկնեց նրան, և երկուսն էլ նստեցին բազմոցին և երկար խոսում էին, երկար լռում և նայում միմյանց: Եթե սպասավորը չհիշեցներ, նրանք անպայման կմոռանային ճաշել:

Որքա՜ն վայելք: Ալեքսանդրը երբեք չէր երազել **անկեղծ**, **սրտալի զեղումների** այդպիսի լիակատարության մասին: Ամառը՝ երկուսով զբոսանքներ քաղաքից դուրս: Եթե ամբոխին որևէ տեղ էր գրավում երաժշտությունը, հրավառությունը, հեռվում ծառերի արանքում երևում էին նրանք, թևանցուկ զբոսնելիս: Ձմեռը Ալեքսանդրը գալիս էր ճաշին, և հետո նրանք մինչև գիշեր կողք կողքի նստում էին բուխարու մոտ: Երբեմն հրամայում էին սահնակ լծել և, մի քիչ սլանալով մութ փողոցներով, շտապում էին իրենց անվերջանալի զրույցը շարունակելու ինքնաեռի մոտ: Շուրջը ամեն մի երևույթ, մտքի ու զգացմունքի ամեն մի փութանցիկ խլրտում՝ ամեն ինչ նկատում ու կիսում էին երկուսով:

Ալեքսանդրը վախենում էր հորեղբոր հետ հանդիպելուց, ինչպես կրակից: Նա երբեմն գալիս էր Լիզավետա Ալեքսանդրովնայի մոտ, բայց նա երբեք չէր հաջողում Ալեքսանդրի մեջ անկեղծություն արթնացնել: Ալեքսանդրը միշտ անհանգիստ էր լինում, որ հանկարծ հորեղբայրը չհանդիպի և նորից որևէ տեսարան չսարքի, դրա համար էլ միշտ կրճատում էր իր այցելությունները: Արդյոք երջանի՞կ էր նա: Այսպիսի դեպքերում ուրիշի մասին կարելի է ասել և **այո**, և **ոչ**, իսկ նրա մասին՝ **ոչ**. նրա մոտ սերն սկսվում էր տառապանքով: Երբեմն նա կարողանում էր մոռանալ անցյալը, հավատում էր երջանկության հնարավորությանը, Յուլիային և նրա սիրուն: Ուրիշ անգամ նա հանկարծ զայրանում էր ամենաանկեղծ զեղումների պոռթկման պահին, վախով էր լսում Յուլիայի կրքոտ հիացական զառանցանքը: Նրան թվում էր, թե ահա, մեկ էլ տեսար, Յուլիան կդավաճանի, կամ ճակատագրի մի որևէ այլ անսպասելի հարված վայրկենաբար կկործանի երանության աշխարհը: Ճաշակելով ուրախությունը, նա գիտեր, որ այն պետք է փրկագնել տառապանքով, և նրան նորից տիրում էր սևամաղձությունը:

Սակայն անցավ ձմեռը, եկավ ամառը, իսկ սերը չէր վերջանում: Յուլիան ավելի ու ավելի ամուր էր կապվում նրան: Ոչ դավտճանություն, ոչ **ճակատագրի հարված** չկար. պատահեց բոլորովին այլ բան: Ալեքսանդրի հայացքը պարզվեց: Նա վարժվեց տևական կապվածության հնարավորության մտքին: «Միայն այս սերը արդեն այնքան էլ բուռն չէ...— մտածում էր նա մի անգամ, նայելով Յուլիային,— բայց դրա փոխարեն՝ հաստատուն է, գուցե հավիտենական: Այո, կասկած չկա: Ա՛: Վերջապես հասկանում եմ քեզ, ճակատագիր: Դու ուզում ես վարձատրել ինձ անցյալ տառապանքների համար և երկար թափառումներից հետո մտցնել խաղաղ հանգրվան: Ահա՜ ուրեմն որտեղ է երջանկության ապաստարանը... Յո՜ւլիա»,— բացականչեց նա բարձրաձայն:

Յուլիան ցնցվեց:

— Ի՞նչ եք ասում,— հարցրեց նա:

— Ո՛չ: Այնպես...

— Ո՛չ: Ասացեք. դուք ինչ-որ միտք ունեիք:

Ալեքսանդրը համառում էր, Յուլիան՝ պնդում:

— Ես կարծում եմ, որ մեր կատարյալ երջանկության համար պակասում է...

— Ի՞նչը,— անհանգստությամբ հարցրեց Յուլիան:

— Այնպես, ոչինչ: Մի տարօրինակ միտք ծագեց մեջս:

Յուլիան շփոթվեց:

— Ախ, մի տանջեք ինձ, շուտ ասացեք,— ասաց նա:

Ալեքսանդրը մտասուզվեց և ասաց կիսաձայն, կարծես ինքն իրեն:

— Ձեռք բերել ոչ մի որպե նրան չթողնելու, տուն չվերադառնալու, իրավունքը... միշտ և ամենուրեք նրա հետ լինել: Հասարակության աչքում լինել նրա օրինական տերը... նա ինձ իրենը կանվանի բարձրաձայն, առանց կարմրելու և առանց գունատվելու... և այդպես ամբողջ կյանքում: Եվ հավիտյան հպարտանալ դրանով...

Խոսելով այդ բարձր ոճով, խոսք խոսքի հետևից նա վերջապես հասավ **ամուսնություն** բառին: Յուլիան ցնցվեց, հետո լաց եղավ: Աննկարագրելի քնքշությամբ և շնորհակալությամբ նա ձեռքը մեկնեց Ալեքսանդրին, և երկուսն էլ աշխուժացան, երկուսն էլ հանկարծ սկսեցին խոսել: Որոշեցին, որ Ալեքսանդրը կխոսի հորեղբոր կնոջ հետ և կխնդրի օժանդակել այդ դժվարին գործում:

Ուրախությունից նրանք չգիտեին, թե ինչ անեն: Սքանչելի երեկո էր: Նրանք ճանապարհվեցին ուր-որ քաղաքից դուրս, մի խուլ վայր և, մեծ դժվարությամբ մի տեղ հատկապես գտնելով մի բլուր, ամբողջ երեկոն նստեցին այդտեղ, նայում էին մայր մտնող արևին, երազում էին ապագա

ապրելաձևի մասին, ենթադրում էին սահմանափակվել ծանոթների նեղ շրջանակով, չընդունել և դատարկ այցելություններ չանել:

Հետո վերադարձան տուն և սկսեցին խոսել տան ապագա կարգի մասին, սենյակների դասավորման և այլ բաների մասին: Հասան այն բանին, թե ինչպես կահավորեն սենյակները: Ալեքսանդրն առաջարկեց նրա զարդասենյակը դարձնել իր առանձնասենյակը, այնպես, որ դա ննջարանի մոտ լինի:

— Իսկ ի՞նչ կահ-կարասի եք ուզում առանձնասենյակում,— հարցրեց Յուլիան:

— Ես կուզենայի ընկուզենի փայտ կապույտ թավշյա ծածկոցներով:

— Դա շատ հաճելի է և կեղտակուր. տղամարդու առանձնասենյակի համար պետք է ընտրել անպայման մուգ գույներ, բաց գույները շուտով փչանում են ծխից: Իսկ ահա այստեղ, փոքրիկ միջանցքում, որը ձեր ապագա առանձնասենյակից տանում է դեպի ննջարան, ես բոսկետ */Փոքրիկ արհեստական պուրակ:/* կսարքեմ, դա սքանչելի կլինի, ճիշտ չէ՞: Այնտեղ մի բազկաթոռ կդնեմ, որպեսզի կարողանամ, դրա վրա նստած, կարդալ կամ աշխատել և ձեզ տեսնել առանձնասենյակում:

— Երկար չպետք է այսպես հրաժեշտ տամ ձեզ,— ասաց Ալեքսանդրը հրաժեշտ տալով:

Յուլիան նրա բերանը փակեց ձեռքով:

Հաջորդ օրը Ալեքսանդրը գնաց Լիզավետա Ալեքսանդրովնայի մոտ հայտնելու այն, ինչ նրան վաղուց հայտնի էր և պահանջել նրա խորհուրդն ու օգնությունը: Պյոտր Իվանիչը տանը չէր:

— Ինչ կա որ, լա՛վ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան, լսելով նրա խոստովանությունը:— Դուք հիմա փոքր տղա չեք, կարող եք դատել ձեր զգացմունքների մասին և տնօրինել ձեր անձը: Միայն մի շտապեք. մի լավ ճանաչեցեք նրան:

— Ախ, ma tante, եթե նրան ճանաչեի՜ք: Որքա՜ն արժանիքներ ունի:

— Օրինա՞կ:

— Նա այնպե՜ս սիրում է ինձ...

— Դա, իհարկե, կարևոր արժանիք է, բայց ամուսնության մեջ ոչ միայն դա է հարկավոր:

Այստեղ նա մի քանի ընդհանուր ճշմարտություններ ասաց ամուսնական վիճակի մասին, այն մասին, թե ինչպիսին պետք է լինի կինը, ինչպիսին՝ ամուսինը:

— Միայն սպասեցեք: Հիմա աշուն է գալիս,— ավելացրեց նա,— բոլորը կհավաքվեն քաղաք: Այն ժամանակ ես այցելության կգնամ ձեր հարսնացուին. մենք կծանոթանանք, և տաք-տաք գործի կանցնեմ. ես համոզված եմ, որ դուք ամենաերջանիկ ամուսինը կլինեք:

Լիզավետա Ալեքսանդրովնան ուրախացավ:

Կանայք աստված գիտե, թե ինչպես սիրում են ամուսնացնել տղամարդկանց, երբեմն նրանք տեսնում էլ են, որ ամուսնությունը մի տեսակ չի կպչում և չպետք է որ կպչի, բայց ամեն կերպ օգնում են գործին: Մենակ թե հարսանիք սարքեն, իսկ հետո նորապսակները ինչպես կուզեն: Աստված գիտի, թե ինչու են նրանք իրար անցնում:

Ալեքսանդրը հորեղբոր կնոջը խնդրեց մինչև գործի ավարտվելը ոչինչ չասել Պյոտր Իվանիչին:

Ամառն արագ անցավ, եկավ և տխուր աշունը: Վրա հասավ մյուս ձմեռը: Ադուևի տեսակցությունները Յուլիայի հետ առաջվա պես հաճախակի էին:

Յուլիայի մոտ կարծես խստորեն հաշված էին այն օրերը, ժամերն ու րոպեները, որոնք կարելի էր միասին անցկացնել: Նա որոնում, գտնում էր դրա համար բոլոր դեպքերը:

— Վաղը շո՞ւտ եք գնում ծառայության,— հարցնում էր սա երբեմն:

— Ժամը տասնմեկին մոտ:

— Իսկ տասին եկեք ինձ մոտ, միասին կնախաճաշենք: Իսկ չի՞ կարելի, որ բոլորովին չգնաք: Կարծես թե այնտեղ առանց ձեզ...

— Ինչպե՞ս թե... հայրենիքը... պարտականությունը...— Ասում էր Ալեքսանդրը:

— Հրաշալի՜ է: Իսկ դուք ասացեք, որ սիրում եք և սիրված եք: Մի՞թե ձեր պետը երբեք չի սիրել: Եթե նա սիրտ ունի, կհասկանա: Կամ այստեղ բերեք ձեր աշխատանքը. ձեզ ո՞վ է խանգարում այստեղ պարապել:

Մի այլ անգամ նրան չէր թողնում թատրոն, իսկ ծանոթների մոտ՝ վճռականորեն գրեթե երբեք: Երբ Լիզավետա Ալեքսանդրովնան նրան այցի եկավ, Յուլիան երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ, տեսնելով, թե որքան երիտասարդ ու գեղեցիկ է Ալեքսանդրի հորեղբոր կինը: Նա նրան պատկերացնում էր հենց այնպես հորեղբոր կին. տարեց, տգեղ, ինչպես հորաքույր-մորաքույրների մեծ մասը, իսկ այստեղ, շնորհ արեք, քսանվեց-քսանյոթ տարեկան կին և գեղեցկուհի՜: Նա Ալեքսանդրին տեսարան սարքեց և սկսեց նրան ավելի հազվադեպ թողնել հորեղբոր մոտ:

Բայց ի՞նչ էին նրա խանդն ու բռնակալությունը Ալեքսանդրի բռնակալության հետ համեմատած: Նա արդեն համոզված էր Յուլիայի կապվածությանը, տեսնում էր, որ դավաճանությունն ու սառչելը հատուկ չէ նրա բնավորությանը, և խանդում էր. բայց ինչպե՞ս էր խանդում. դա սիրո առատությունից բխած լացող, հառաչող, սրտի տանջալի ցավից աղաղակող, երջանկությունը կորցնելու վախից դողացող խանդ չէր, այլ անտարբեր, սառն, չար խանդ: Նա սիրուց խեղճ կնոջը տանջում էր այնպես, ինչպես ուրիշները չեն տանջում ատելությունից: Օրինակ, նրան կթվար, թե երեկոյան, հյուրերի ներկայությամբ, Յուլիան բավականաչափ երկար ու քնքուշ կամ հաճախակի չի նայում նրան, և նա գազանի պես նայում էր շուրջը, և վայ էր, թե այդ ժամանակ Յուլիայի մոտ որևէ ջահել մարդ լիներ, և նույնիսկ ոչ թե ջահել, այլ ուղղակի մարդ, հաճախ կին, երբեմն՝ իր: Վիրավորանքները, խայթոցները, սև կասկածներն ու կշտամբանքները թափվում էին կարկուտի պես: Յուլիան պետք է տեղնուտեղը արդարանար և փրկագնվեր զանազան զոհաբերություններով, անպայման հնազանդությամբ. չխոսեր այսինչի հետ, չնստեր այստեղ, չմոտենար այնտեղ, տաներ խորամանկ դիտողների խորամանկ ժպիտներն ու շշուկները, կարմրեր, դժգուներ, վարկաբեկեր իրեն:

Եթե որևէ տեղ գնալու հրավեր էր ստանում, նա, առանց պատասխանելու, ամենից առաջ հարցական հայացքն ուղղում էր Ալեքսանդրին, և սա հազիվ հոնքերը խոժոռեր՝ Յուլիան գունատված ու դողահար, նույն րոպեին հրաժարվում էր: Երբեմն Ալեքսանդրը թույլատրում էր, Յուլիան հավաքվում, հագնվում, պատրաստվում էր կառք նստել, երբ հանկարծ նա, րոպեական քմահաճույքով արտասանում էր ահեղ veto-ն */Արգելում եմ (լատ.):/,* և Յուլիան հանվում էր, կառքն արձակում: Հետո, ասենք, Ալեքսանդրը սկսում էր ներողություն խնդրել, առաջարկում էր գնալ, բայց էլ նորից ե՞րբ տուալետով զբաղվեր, ե՞րբ կառք լծեին: Այդպես էլ մնում էր: Ալեքսանդրը խանդում էր ոչ թե գեղեցիկների, ոչ թե խելքի ու տաղանդի նկատմամբ, այլ նույնիսկ այլանդակների, վերջապես նրանց նկատմամբ, որոնց դեմքը ուղղակի դուր չէր գալիս նրան:

Մի անգամ մի հյուր եկավ Յուլիայենց կողմերից, որտեղ ապրում էին նրա ծնողները: Հյուրը տարեց, տգեղ մարդ էր, շարունակ խոսում էր բերքի և իր սենատական գործերի մասին: Այնպես որ Ալեքսանդրը, ձանձրանալով նրան լսելուց, գնաց հարևան սենյակը: Խանդելու տեղ չկար: Վերջապես հյուրն սկսեց հրաժեշտ տալ:

— Լսել եմ,— ասաց նա,— որ չորեքշաբթի օրերը դուք տանն եք. թույլ չե՞ք տա միանալու ձեր ծանոթների շրջանակին:

Յուլիան ժպտաց և պատրաստվում էր ասել՝ խնդրեմ, երբ հանկարծ հարևան սենյակից լսվեց ամեն տեսակ աղաղակից բարձր մի շշուկ. «Չե՜մ ուզում»:

— Չեմ ուզում,— շտապ, բարձրաձայն կրկնեց Յուլիան, ցնցվելով:

Բայց Յուլիան տանում էր ամեն բան: Նա թաքնվում էր հյուրերից, ոչ մի տեղ չէր գնում և երես-երեսի նստում էր Ալեքսանդրի հետ:

Նրանք շարունակում էին պարբերաբար արբենալ երանությամբ: Հայտնի և պատրաստի վայելքների ամբողջ պաշարը ծախսելով, Յուլիան սկսեց հնարել նորերը, բազմազանացնել առանց այն էլ հաճույքներով հարուստ այդ աշխարհը: Հնարամտության ինչպիսի՜ ձիրք դրսևորեց Յուլիան: Բայց այդ ձիրքն էլ սպառվեց: Սկսվեցին կրկնությունները: Ցանկանալու և զգալու բան չէր մնացել:

Չկար քաղաքից դուրս մի տեղ, որ նրանք գնացած չլինեին, մի պիես, որ տեսած չլինեին, մի գիրք, որ կարդացած ու քննարկած չլինեին: Նրանք ուսումնասիրել էին միմյանց զգացմունքները, մտածելակերպը, արժանիքներն ու թերությունները, և այլևս ոչ մի բան չէր խանգարում մտադրված ծրագիրն իրագործելու:

Անկեղծ զեղումները հազվադեպ դարձան: Երբեմն նրանք ամբողջ ժամերով նստում էին առանց մի խոսք ասելու: Բայց Յուլիան երջանիկ էր նաև լռելյայն:

Նա երբեմն մի հարց էր տալիս Ալեքսանդրին ու այո կամ ոչ պատասխանը ստանում՝ և գոհ էր. իսկ եթե չէր ստանում, սևեռուն նայում էր նրան. Ալեքսանդրը ժպտում էր նրան, և նա դարձյալ երջանիկ էր: Եթե չժպտար և ոչինչ չպատասխաներ, Յուլիան սկսում էր հսկել նրա յուրաքանչյուր շարժումը, յուրաքանչյուր հայացքը և բացատրել յուրովի, և այն ժամանակ կշտամբանքին վերջ չէր լինում:

Ապագայի մասին խոսելուց դադարեցին, որովհետև այդ դեպքերում Ալեքսանդրը ինչ-որ շփոթվածություն, անհարմարություն էր զգում, որը չէր կարող բացատրել ինքն իրեն, և աշխատում էր խոսակցությունը փակել: Նա սկսեց խորհել, մտածել: Այն մոգական շրջանը, որի մեջ սերն ամփոփել էր նրա կյանքը, տեղ-տեղ պատռվել էր, և հեռվից Ալեքսանդրին երևում էին մե՛րթ բարեկամների դեմքերն ու խրախճական բավականությունների մի շարան, մե՛րթ շողշողուն պարահանդեսներ գեղեցկուհիների ամբոխով հանդերձ, մերթ շարունակ զբաղված ու գործարար հորեղբայրը, մե՛րթ լքված պարապմունքները...

Հոգու այդպիսի տրամադրությամբ մի երեկո նա նստած էր Յուլիայի մոտ: Դուրսը փոթորիկ էր: Ձյունը խփում էր լուսամուտներին և ծվեններով փախչում ապակիներին: Քամին խուժում էր բուխարու մեջ և մի վիատ երգ ոռնում: Սենյակում լսվում էր ժամացույցի ճոճանակի միօրինակ օրորվելը, և երբեմն Յուլիայի հառաչները:

Ալեքսանդրը պարապությունից հայացքը հածեց սենյակի չորս կողմը, հետո նայեց ժամացույցին՝ տասն էր, բայց դեռ պետք է մի երկու ժամ էլ նստի. նա հորանջեց: Նրա հայացքը կանգ առավ Յուլիայի վրա: Յուլիան, մեջքը բուխարուն հենած, կանգնել էր, դալուկ դեմքը ուսին թեքած, և աչքերով հետևում էր Ալեքսանդրին, բայց ոչ թե անվստահության հարցաքննության, այլ երանության, սիրո ու երջանկության արտահայտությամբ: Նա ըստ երևույթին պայքարում էր թաքուն զգացողության, քաղցր երազանքի դեմ և թվում էր հոգնած:

Ձղերն այնպես ուժեղ էին գործում, որ երանության թրթիռն իսկ նրան նետում էր հիվանդագին թալկության մեջ. տանջանքն ու երանությունը նրա մեջ անբաժան էին:

Ալեքսանդրը նրան պատասխանում էր չոր, անհանգիստ հայացքով: Նա մոտեցավ լուսամուտին և սկսեց թեթևակի թմբկահարել ապակին, փողոց նայելով:

Փողոցից նրան էր հասնում ձայների խառն աղմուկը, կառքերի գռգռոցը: Ամենուրեք լուսամուտներում կրակներ էին վառվում, ստվերներ երևում: Ալեքսանդրին թվում էր, թե այնտեղ, ուր ավելի շատ է լուսավորված, ուրախ ամբոխ է հավաքվել. այնտեղ, կարող է պատահել, տեղի է ունենում մտքերի կրակոտ, թռուցիկ զգացողությունների աշխույժ փոխանակություն. այնտեղ ապրում են աղմկոտ և ուրախ: Իսկ ահա այն թույլ լուսավորված պատուհանում, հավանաբար, մի

խելացի աշխատանքի վրա նստած է մի ազնիվ աշխատավոր: Եվ Ալեքսանդրը մտածեց, որ արդեն երկու տարի է, ինչ ինքը քարշ է տալիս պարապ, հիմար կյանք, և ահա երկու տարի դուրս ընկան կյանքի տարիների գումարից, իսկ պատճառը սերն է: Այստեղ նա հարձակվեց սիրո վրա:

«Եվ ի՜նչ սեր է սա,— մտածում էր Ալեքսանդրը:— Ինչ-որ քնեած, անեռանդ սեր: Այս կինը զգացմունքին ենթարկվեց առանց պայքարի, առանց ճիգերի, առանց արգելքների, ինչպես զոհ. թույլ, կամազո՜ւրկ կին: Իր սիրով երջանկացրեց առաջինին, ով պատահեց: Ես չլինեի, ճիշտ նույն ձևով նա կսիրեր Սուրկովին, և արդեն սկսել էր սիրել, այո՜: Ինչքան էլ պաշտպանվելու լինի, ես տեսնո՜ւմ էի: Եթե ինձնից ավելի ճարպիկ ու վարպետ մեկը գար, նա նրան կտրվեր... Դա ուղղակի անբարոյական բան է: Միթե դա՞ է սերը: Իսկ ո՞ւր է այստեղ հոգիների համակրությունը, որը քարոզում են զգայուն հոգիները: Իսկ մի՞թե այստեղ իրար չէին ձգտում հոգիները, թվում էր, թե նրանց մնում է առհավետ ձուլվել իրար, բայց արի ու տե՜ս: Սատանան գիտի, թե ինչ է, չես հասկանա»,— սրդողած շշնջում էր նա:

— Ի՞նչ եք անում այդտեղ, ինչի՞ մասին եք մտածում — հարցրեց Յուլիան:

— Այնպես...— ասաց նա, հորանջելով, և նստեց բազմոցին, Յուլիայից հեռու, մի ձեռքով գրկելով ասեղնագործած բարձի անկյունը:

— Նստեցեք այստեղ մոտիկ:

Ալեքսանդրը չնստեց և ոչինչ չպատասխանեց:

— Ձեզ ի՞նչ է պատահել,— շարունակում էր Յուլիան մոտենալով նրան:— Դուք այսօր անտանելի եք:

— Չգիտեմ...— ասաց նա թմրած,— ես ինչ-որ... կարծես թե ես...

Նա չգիտեր, թե ինչ պատասխանի Յուլիային և ինքն իրեն: Նա դեռ մի լավ չէր բացատրել, թե ինչ է կատարվում իր հետ: Յուլիան նստեց նրա կողքին, սկսեց խոսել ապագայի մասին և կամաց-կամաց աշխուժացավ: Նա ներկայացնում էր ընտանեկան կյանքի երջանիկ պատկերը, երբեմն կատակում էր և շատ քնքուշ եզրափակեց.

— Դուք իմ ամուսինն եք: Նայեցեք:— ասաց նա, ցույց տալով շուրջը,— շուտով այս բոլորը կլինի ձերը: Դուք տիրակալ կլինեք այստեղ, տանը, ինչպես իմ սրտում: Ես հիմա անկախ եմ, կարող եմ անել, ինչ ուզենամ, մեկնել ուր ուզենամ. իսկ այն ժամանակ առանց ձեր հրամանի այստեղ ոչ մի բան տեղից չի շարժվի. ես ինքս կապված կլինեմ ձեր կամքով. բայց ի՜նչ սքանչելի շղթա: Դե շղթայեցեք շուտով. էլ ե՞րբ... Ամբողջ կյանքս երազում էի այսպիսի մարդու, այսպիսի սիրո մասին... և ահա երազանքը կատարվում է... և երջանկությունը մոտ է... ես հազիվ եմ հավատում... Գիտե՞ք, սա ինձ երազ է թվում: Արդյոք պարգև չի՞ սա իմ անցյալ տառապանքների համար:

Ալեքսանդրի համար տանջալի էր լսել այդ խոսքերը:

— Իսկ եթե ձեզ դադարեի սիրելո՞ւց,— հանկարծ հարցրեց նա, աշխատելով ձայնին կատակի տոն տալ:

— Ես ձեր ականջները կքաշեի,— պատասխանեց Յուլիան նրա ականջից բռնելով, հետո հառաչեց և մտածմունքի մեջ ընկավ կատակով արված մեկ ակնարկից:

Ալեքսանդրը լուռ էր:

— Ձեզ ի՞նչ է պատահել,— հանկարծ աշխուժով հարցրեց Յուլիան,— դուք լռում եք, հազիվ եք ինձ ականջ դնում, նայում եք մի կողմ...

Այստեղ նա մոտեցավ Ալեքսանդրին և, ձեռքը նրա ուսին դնելով, սկսեց խոսել կամացուկ, գրեթե շշուկով, նույն նյութի շուրջը, բայց ոչ այնքան դրականորեն: Նա հիշեցրեց իրենց մերձեցման, իրենց սիրո սկիզբը, այդ սիրո առաջին նշանները և առաջին ուրախությունները: Նա գրեթե շնչակտուր էր լինում զգացողությունների վայելքից, նրա գունատ այտերին վառվեցին երկու

կարմիր բիծ. դրանք աստիճանաբար բոցավառվում էին, աչքերը փայլում, հետո դարձան նվաղկոտ և կիսափակվեցին. կուրծքն ուժեղ էր շնչում: Նա խոսում էր հազիվ հասկանալի և մի ձեռքով խաղում էր Ալեքսանդրի փափուկ մազերի հետ, ապա նայեց նրա աչքերի մեջ: Ալեքսանդրը լուռ՝ գլուխն ազատեց նրա ձեռքից, գրպանից հանեց սանրը և խնամքով սանրեց մազերը, որ խառնել էր Յուլիան: Յուլիան վեր կացավ և ուշադիր նայեց նրան:

— Ձեզ ի՞նչ է պատահել, Ալեքսանդր,— հարցրեց նա անհանգստությամբ:

«Ի՞նչ է կպել, պոկ չի գալիս: Ես ի՞նչ իմանամ»,— մտածում էր նա, բայց լռում:

— Դուք ձանձրանո՞ւմ եք,— հանկարծ ասաց Յուլիան, և նրա ձայնի մեջ լսվում էր և հարց, և կասկած:

«Ձանձրալի՜ է,— մտածեց Ալեքսանդրը,— բառը գտնված է: Այո՛: Սա ձանձրալի՜ է, սպանի՜չ ձանձրույթ է: Ահա արդեն մի ամիս կլինի, այս որդը մտել է սիրտս և կրծում է... Օ, աստված իմ, ի՞նչ անեմ, իսկ նա խոսում է սիրո, ամուսնության մասին: Ինչպե՞ս խելքի բերեմ նրան»:

Յուլիան նստեց դաշնամուրի առաջ և նվագեց Ալեքսանդրի սիրած պիեսներից մի քանիսը: Ալեքսանդրը չէր լսում և շարունակ իր միտքն էր անում:

Յուլիայի ձեռքերը թուլացան: Նա հառաչեց, փաթաթվեց շալով և նետվեց բազմոցի մյուս անկյունը, որտեղից անձկությամբ հայացքով հետևում էր Ալեքսանդրին:

Ալեքսանդրը վերցրեց գլխարկը:

— Այդ ո՞ւր,— հարցրեց Յուլիան զարմանքով:

— Տուն:

— Դեռ ժամը տասնմեկը չկա:

— Ես պետք է մայրիկիս նամակ գրեմ. վաղուց է չեմ գրել նրան:

— Ինչպե՜ս թե վաղուց. երեք օր առաջ գրեցիք:

Ալեքսանդրը լուռ էր. ասելու բան չկար: Նա իրոք գրել էր և այն ժամանակ հարևանցի ասել Յուլիային, բայց մոռացել էր. իսկ սերը չի մոռանում ոչ մի մանրուք: Յուլիայի աչքում այն ամենը, ինչ վերաբերում էր սիրո առարկային, կարևոր փաստ էր: Սիրող մարդու մտքում գործվում է բարդ հյուսվածք դիտողությունից, նուրբ մտահանգումներից, հիշողություններից, կռահելուց այն ամենը, ինչ շրջապատում է սիրած մարդուն, ինչ կատարվում է նրա ոլորտում, ինչ նրա վրա ազդեցություն ունի: Սիրո մեջ բավական է մի բառ, մի ակնարկ... ակնարկն ի՞նչ է, մի հայացք, շրթունքների հազիվ նկատելի մի շարժում, որպեսզի ենթադրություն կազմի, հետո դրանից անցնի մտահանգման, մտահանգումից վճռական եզրակացության և հետո սեփական մտքից տանջվի կամ երանության մեջ լողա: Սիրահարների տրամաբանությունը, երբեմն կեղծ, երբեմն զարմանալի ուղիղ, արագ է կառուցում կռահումների, կասկածանքների շենքը, բայց սիրո ուժը ավելի արագ քանդում է այն մինչև հիմքերը. հաճախ դրա համար բավական է մի ժպիտ, մի արցունք, շատ-շատ՝ երկու-երեք խոսք, և մնաք բարո՜վ կասկածանքներ: Այդ կարգի վերահսկողությունը ոչ մի բանով հնարավոր չէ ոչ թմրեցնել, ոչ խաբել: Սիրահարը մերթ գլուխը կմտցնի այնպիսի բան, որ մյուսը երազում էլ չի տեսնի, մերթ չի տեսնում այն, ինչ որ կատարվում է հենց քթի տակ, մերթ խորաթափանց է պայծառատեսության աստիճան, մերթ կուրության աստիճան անհեռատես:

Յուլիան կատվի պես վեր թռավ բազմոցից և բռնեց Ալեքսանդրի ձեռքը:

— Այդ ի՞նչ է նշանակում: Ո՞ւր եք գնում,— հարցրեց նա:

— Ոչինչ, իսկապես, ոչինչ. դե ուղղակի քունս տանում է, ես այսօր քիչ եմ քնել, ահա բոլորը:

— Քի՛չ եք քնել: Հապա ինչպես քիչ առաջ ասացիք, որ ինը ժամ քնել եք, և որ դրանից նույնիսկ ցավել է ձեր գլուխը...

Նորից լավ չստացվեց.

— Դե, գլուխս է ցավում...— ասաց նա, մի քիչ շփոթվելով,— դրա համար էլ գնում եմ:

— Իսկ ճաշից հետո ասացիք, որ գլխացավն անցել է:

— Աստված իմ, ինչպիսի՛ հիշողություն ունեք: Դա անտանելի՛ է: Դե, ուղղակի ուզում եմ տուն գնալ:

— Մի՞թե այստեղ վատ է ձեզ համար: Տանն ի՞նչ ունեք:

Յուլիան նրա աչքերի մեջ նայելով, թերահավատությամբ գլուխն էր օրորում: Ալեքսանդրը մի կերպ հանգստացրեց նրան ու գնաց:

«Ի՞նչ կլինի, եթե այսօր Յուլիայի մոտ չգնամ»,— ինքն իրեն հարցրեց Ալեքսանդրը, հաջորդ առավոտ արթնանալով:

Նա մի երեք անգամ անցուդարձ արեց սենյակում: «Իսկապես, չեմ գնա»,— ավելացրեց նա վճռականորեն:

— Եվսե՛յ: Շորերս:— Եվ գնաց թափառելու քաղաքում:

«Ի՜նչ ուրախ, ի՜նչ հաճելի է մենակ զբոսնելը,— մտածում էր նա,— գնալ ուր ուզում ես, կանգ առնել, կարդալ մի ցուցանակ, խանութի լուսամուտից ներս նայել, մտնել այնտեղ, այստեղ... շատ, շա՛տ լավ է: Ազատությունը մեծ բարիք է: Այո՛: Հենց այդպես. լայն, բարձր իմաստով ազատությունը նշանակում է զբոսնել մենա՛կ»:

Նա գավազանը թխկթխկացնում էր մայթին, ուրախ ողջունում էր ծանոթներին: Մոտակա փողոցով անցնելիս մի տան լուսամուտում ծանոթ դեմք տեսավ: Ծանոթը նրան ձեռքով հրավիրում էր ներս մտնելու: Ալեքսանդրը նայեց: Վա՛: Ախր դա Դյումե՞ն է: Եվ մտավ, ճաշեց, նստեց մինչև երեկո, երեկոյան գնաց թատրոն, թատրոնից՝ ընթրելու: Տան մասին աշխատում էր չհիշել, նա գիտեր, թե այնտեղ ինչ է սպասում իրեն:

Եվ իսկապես, երբ վերադարձավ, սեղանի վրա գտավ մոտ կես դյուժին տոմսակներ և քնած լակեին նախասենյակում: Ծառային հրամայված էր չվերադառնալ առանց նրան տեսնելու: Տոմսակներում՝ կշտամբանք, հարցաքննություն և արցունքների հետքեր: Հաջորդ օրը պետք էր արդարանալ: Նա պատճառ բռնեց պաշտոնատեղում գործ ունենալը: Մի կերպ հաշտվեցին:

Մի երեք օր անց՝ թե մեկ, թե մյուս կողմից կրկնվեց նույնը: Հետո նորից ու նորից: Յուլիան նիհարեց, ոչ մի տեղ չէր գնում և ոչ ոքի չէր ընդունում, բայց լռում էր, որովհետև Ալեքսանդրը բարկանում էր կշտամբանքների համար:

Դրանից մի երկու շաբաթ հետո Ալեքսանդրը ընկերների հետ պայմանավորվեց մի օր ընտրել և զվարճանալ ինչպես հարկն է. բայց նույն առավոտյան նա երկտող ստացավ Յուլիայից, որով խնդրում էր ամբողջ օրն իր հետ անցկացնել և որքան կարելի է շուտ գնալ: Նա գրում էր, որ ինքը հիվանդ է, տխուր է, որ ջղերը տառապում են և այլն: Ալեքսանդրը բարկացավ, բայց և այնպես գնաց նրան նախազգուշացնելու, որ չի կարող նրա հետ մնալ, որ շատ գործ ունի:

— Այո, իհարկե. Դյումեի տանը ճաշելը, թատրոնը, սարերում զբոսնելը շատ կարևոր գործեր են...— ասաց Յուլիան նվաղկոտ:

— Այդ ի՞նչ է նշանակում,— ասաց Ալեքսանդրը բարկացած:— Դուք կարծես, հետամտո՞ւմ եք ինձ: Ես այդ չեմ հանդուրժի:

Նա վեր կացավ և ուզում էր գնալ:

— Սպասեցեք, լսեցե՛ք,— ասաց Յուլիան:— Եկեք խոսենք:

— Ես ժամանակ չունեմ:

— Մի րոպե նստեցեք:

Ալեքսանդրը դժկամությամբ նստեց աթոռի եզրին:

Յուլիան, ձեռքերը ծալած, անհանգիստ ուշադրությամբ նայում էր նրան, կարծես ջանում էր նրա դեմքին նախօրոք կարդալ իր ասելիքի պատասխանը:

Ալեքսանդրը անհամբերությունից պտտվում էր տեղում:

— Շուտ արեք: Ես ժամանակ չունեմ,— ասաց նա չոր:

Յուլիան հոգոց հանեց:

— Դուք ինձ էլ չե՞ք սիրում,— հարցրեց նա, թեթևակի գլուխն օրորելով:

— Հին ե՛րգ,— ասաց Ալեքսանդրը, գլխարկը թևքով շփելով:

— Ինչպես ձանձրացրե՛լ է ձեզ այդ երգը,— պատասխանեց Յուլիան:

Ալեքսանդրը վեր կացավ և արագ քայլերով սկսեց անցուդարձ անել սենյակում: Մի րոպե հետո լսվեց հեծկլտոցի ձայն:

— Միայն դա՛ էր պակաս,— ասաց նա գրեթե կատաղած, կանգ առնելով Յուլիայի առաջ:— Քի՛չ էիք տանջել ինձ...

— Ես տանջում էի,— բացականչեց նա ու փղձկաց ավելի ուժգին:

— Սա անտանելի է,— ասաց Ալեքսանդրը, պատրաստվելով գնալ:

— Դե, չեմ անի, չեմ անի,— շտապով ասաց Յուլիան, արցունքները սրբելով:— Տեսնո՞ւմ եք, չեմ լալիս, միայն մի գնացեք, նստեցեք:

Նա ջանում էր ժպտալ, իսկ արցունքները շարունակում էին կաթել այտերին: Ալեքսանդրը խղճահարություն զգաց: Նա նստեց ու սկսեց ոտքը ճոճել: Նա մտովի սկսեց իրեն հարց հարցի ետևից տալ և հասավ այն եզրակացության, որ սառել է, չի սիրում Յուլիային: Իսկ ինչո՞ւ: Աստված գիտի: Յուլիան օր օրի վրա նրան սիրում է ավելի և ավելի ուժգին. արդյոք դրանից չէ՞: Աստվա՛ծ իմ: Ինչպիսի՜ հակասություն: Երջանկության բոլոր պայմանները կան: Ոչ մի բան չի խանգարում նրանց, նույնիսկ մի այլ զգացմունք չի շեղում, իսկ ինքը սառե՛լ է: Օ՜, կյանք: Բայց ինչպե՞ս հանգստացնի Յուլիային: Զոհաբերի՞ իրեն: Նրա հետ քա՞ղշ տա ձանձրայի, երկար օրեր. ձևացնել չի կարող, իսկ չձևացնել՝ նշանակում է ամեն րոպե տեսնել արցունքներ, լսել նախատինք, տանջել նրան և իրեն... Հանկարծ նրան ասի հորեղբոր տեսությունը դավաճանությունների ու սառչելու մասին՝ համեցե՛ք. նա ոչինչ չտեսած լալիս է, իսկ ա՛յն ժամանակ: Ի՞նչ անի:

Յուլիան, տեսնելով, որ նա լռում է, բռնեց նրա ձեռքը և նայեց աչքերի մեջ: Ալեքսանդրը դանդաղ շրջվեց և ձեռքը կամացուկ ազատեց: Նա ոչ միայն հակում չէր զգում դեպի Յուլիան, այլ նրա հպումից Ալեքսանդրի մարմնով անցավ մի սառն ու տհաճ դող: Յուլիան կրկնապատկեց փաղաքշանքները, նա չէր պատասխանում դրանց և դարձավ ավելի սառն ու մռայլ: Յուլիան հանկարծ պոկեց իր ձեռքը նրանից ու բռնկվեց: Նրա մեջ արթնացան կանացի հպարտությունը, վիրավորված ինքնասիրությունը, ամոթը: Նա շտկեց գլուխը, իրանը, զայրույթից շիկնեց:

— Թողե՛ք ինձ, — ասաց նա ընդհատ:

Ալեքսանդրն արագ դուրս նետվեց առանց մի առարկության: Բայց երբ նրա ոտնաձայնն սկսեց մարել, Յուլիան նետվեց նրա հետևից:

— Ալեքսա՜նդր Ֆյոդորիչ: Ալեքսա՜նդր Ֆյոդորիչ,— բղավեց նա:

Ալեքսանդրը վերադարձավ:

— Այդ ո՞ւր եք գնում:

— Բայց չէ՞ որ դուք հրամայեցիք գնալ:

— Իսկ դուք ուրախ եք փախչելու: Կացե՛ք:

— Ես ժամանակ չունեմ:

Յուլիան բռնեց նրա ձեռքը, և նորից հորդեցին քնքուշ, կրակոտ խոսքերը, պաղատանքը, արցունքները: Ալեքսանդրը ոչ մի հայացքով, ոչ մի խոսքով, ոչ մի շարժումով ցույց չտվեց կարեկցություն, փայտի պես կանգնել էր, մի ոտքից մյուսը փոխելով: Նրա սառնարյունությունը Յուլիային համբերությունից հանեց: Թափվեցին նախատինք ու սպառնալիքներ: Ո՞վ կճանաչեր հեզ, թուլաջիղ կնոջը: Նրա խոպոպներն արձակվել էին, աչքերը վառվում էին տենդոտ փայլով, այտերը բոցավառվում էին, դիմագծերը տարօրինակ ձևով աղավաղվել էին: «Որքա՜ն տգեղ է»,— մտածում էր Ալեքսանդրը, ծամածռությամբ նայելով նրան:

— Ես վրե՛ժ կլուծեմ ձեզնից,— ասում էր Յուլիան,— դուք կարծում եք, թե այդպես հե՞շտ կարելի է կատակ անել կնոջ ճակատագրի հետ: Կեղծավորությամբ, ձևացնելով գաղտագողի մտաք սիրտս, ամբողջովին տիրեցիք ինձ, իսկ հետո ձգեցիք, երբ ես արդեն ձեզ չեմ կարող դուրս նետել մտքիցս... Ո՛չ: Ես ձեզ չեմ թողնի: Ես ամենուրեք կհետապնդեմ ձեզ: Դուք ինձնից ոչ մի տեղ չեք գնա, գյուղ գնաք՝ ես էլ ձեր հետևից, արտասահման՝ ես էլ այնտեղ, միշտ և ամենուրեք: Ես հեշտությամբ չեմ բաժանվի իմ երջանկությունից: Ինձ համար միևնույն է. ինչպիսին էլ լինի իմ կյանքը... ես այլևս կորցնելու բան չունեմ. բայց ես կթունավորեմ և ձերը. ես վրե՛ժ կլուծեմ, վրե՛ժ կլուծեմ. պետք է որ ախոյան ունենամ: Չի կարող պատահել, որ հենց այնպես ինձ թողնեիք... Ես կգտնեմ նրան, և տեսեք թե ինչ կանեմ. դուք ուրախ չեք լինի ձեր կյանքի համար: Ինչ հաճույքով կլսեի ես հիմա ձեր կործանման մասին... ես ինքս կսպանեի ձեզ,— բղավում էր նա վայրի, կատաղի:

«Ի՜նչ հիմար, անհեթեթ բան է սա»,— մտածում էր Ալեքսանդրը, ուսերը թոթվելով:

Տեսնելով, որ Ալեքսանդրը անտարբեր է սպառնալիքներին, Յուլիան հանկարծ անցավ մեղմ, տխուր եղանակի, հետո լուռ նայում էր Ալեքսանդրին:

— Խղճացեք ինձ,— սկսեց նա:— Մի լքեք ինձ. հիմա ես ի՞նչ պիտի անեմ առանց ձեզ: Ես չեմ դիմանա անջատմանը: Ես կմեռնեմ: Մտածեցեք, կանայք սիրում են այլ կերպ, քան տղամարդիկ, ավելի քնքուշ, ավելի ուժգին: Նրանց համար սերն ամեն ինչ է, առանձնապես ինձ համար. ուրիշները կոկետություն են անում, սիրում են բարձր հասարակությունը, աղմուկը, իրարանցումը. ես սովոր չեմ դրան, իմ բնավորությունն այլ է: Ես սիրում եմ լռությունը, մենությունը, գրքերը, երաժշտությունը, բայց ձեզ՝ աշխարհում ամենից ավելի:

Ալեքսանդրը անհամբերություն ցուցաբերեց:

— Դե լավ: Ինձ չեք սիրում,— աշխուժորեն շարունակեց Յուլիան,— բայց կատարեցեք ձեր խոստումը. ամուսնացեք ինձ հետ, եղեք միայն ինձ հետ... Դուք ազատ կլինեք. ինչ ուզում եք, արեք, նույնիսկ սիրեցեք ում ուզում եք, միայն թե ես երբեմն, հազվադեպ տեսնեմ ձեզ... Օ, ի սեր աստծու, խղճացե՛ք, խղճացե՛ք...

Նա լաց եղավ և չէր կարող շարունակել: Հուզմունքը սպառեց նրան, նա ընկավ բազմոցին, աչքերը ծածկեց, նրա ատամները սեղմվեցին, բերանը ջղաձգորեն ծռմռվեց: Նա հիստերիկ նոպա ունեցավ: Մի ժամ անց նա ուշքի եկավ: Նրա մոտ իրար էր անցել աղախինը: Յուլիան նայեց շուրջը:— Իսկ ո՞ւր է...— հարցրեց նա:

— Մեկնեց:

— Մեկնե՛ց,— վիատ կրկնեց Յուլիան և երկար նստել էր լուռ ու անշարժ:

Հաջորդ օրը տոմսակ տոմսակի հետևից Ալեքսանդրին: Ալեքսանդրը չէր հայտնվում և պատասխան չէր տալիս: Երրորդ, չորրորդ օրը նույնը: Յուլիան գրեց Պյոտր Իվանիչին, իր մոտ հրավիրելով կարևոր գործով: Նրա կնոջը չէր սիրում, որովհետև նա ջահել էր, գեղեցիկ և Ալեքսանդրին հորեղբոր կին էր գալիս:

Պյոտր Իվանիչը նրան գտավ լուրջ հիվանդ, գրեթե մեռնելու վրա: Նա Յուլիայի մոտ մնաց մոտ երկու ժամ, հետո գնաց Ալեքսանդրի մոտ:

— Ի՜նչ կեղծավորն է, ա՛,— ասաց նա:

— Ի՞նչ կա,— հարցրեց Ալեքսանդրը:

— Մի տեսեք, կարծես նրա գործը չէ՞: Չի իմանում կանանց իրեն սիրահարեցնել, մինչդեռ խելքահան է անում:

— Ես չեմ հասկանում, հորեղբայր...

— Այստեղ չհասկանալու ի՞նչ կա: Հասկանո՞ւմ ես: Ես Տաֆաևայի մոտ էի. նա ինձ ամեն ինչ ասաց:

— Ինչպե՜ս,— մրթմրթաց Ալեքսանդրը, սաստիկ շփոթված:— Ամեն ինչ ասա՜ց:

— Ամեն ինչ: Ինչպե՜ս է սիրում քեզ: Երջանի՜կ մարդ: Դե տես, դու շարունակ լաց էիր լինում, որ կիրք չես գտնում. ահա քեզ և կիրք. մխիթարվիր: Նա խելագարվում է, խանդում է, լալիս է, կատաղում է: Միայն թե ինչո՞ւ եք ինձ խառնում ձեր գործին: Ահա դու սկսեցիր կանանց փաթաթել վզիս: Միայն այդ էր պակաս. ամբողջ առավոտ կորցրի նրա հետ: Մտածում էի, տեսնես ի՜նչ գործ է. նա մի անգամ ինչ-որ ասում էր ինձ... Բայց ահա՛ թե ինչ գործ. այ քեզ գո՜րծ:

— Իսկ ինչո՜ւ էիք գնացել նրա մոտ:

— Նա էր կանչել, գանգատվում էր քեզանից: Ճիշտ որ, ինչպե՞ս չես ամաչում այդպես անուշադրության մատնել: Չորս օր է երեսդ ցույց չես տալիս. կատա՞կ բան է: Խեղճը մեռնում է: Վե՜ր կաց, շուտով գնա:

— Իսկ ի՞նչ ասացիք նրան:

— Պարզ է թե ինչ. որ դու էլ նրան ես սիրում խելահեղ. որ դու վաղուց էիր որոնում մի քնքուշ սիրտ. որ քեզ սարսափելի դուր են գալիս անկեղծ զեղումները և առանց սիրո դու էլ չես կարող ապրել. ասացի, որ նա զուր է անհանգստանում. դու կվերադառնաս. խորհուրդ տվի, որ քեզ շատ չնեղի, թույլ տա, որ երբեմն էլ չարություն անես. թե չէ, ասում եմ, դուք կձանձրացնեք իրար... Դե, ինչ որ սովորաբար ասվում է այդպիսի դեպքերում: Նա այնպես զվարթացավ. բերնից խոսք թռցրեց, որ որոշել եք հարսանիք անել, որ իմ կինն էլ է այստեղ խառնվել: Իսկ ինձ ո՜չ մի խոսք, ինչպիսի՜ն եք: Դե, ի՜նչ կա որ, տա՛ աստված: Սա գոնե որոշ բան ունի. կապրեք երկուսով: Ես նրան ասացի, որ դու անպայման կկատարես քո խոստումը... Ես այսօր ջանք եմ թափել քեզ համար, Ալեքսանդը, որպես շնորհակալություն այն ծառայության համար, որ ինձ մատուցեցիր... հավատացրել եմ նրան, որ դու սիրում ես **այնպես բոցավառ, այնպես քնքուշ...**

— Ի՜նչ եք արել, հորեղբայր,— խոսեց Ալեքսանդրը, գույնը փոխելով:— Ես... ես նրան էլ չեմ սիրում: Ես չեմ ուզում ամուսնանալ: Ես սառույցի պես պաղ եմ դեպի նա... Ավելի շուտ ջուրը կընկնեմ... քան թե...

— Վա՜հ, վա՜հ, վա՜հ,— ասաց Պյոտր Իվանիչը կեղծ զարմանքով:— Այդ քե՞զ եմ լսում: Այն դու չէի՞ր ասողը, հիշո՞ւմ ես, որ արհամարհում ես մարդկային բնությունը, հատկապես՝ կանացի, որ աշխարհում քեզ արժանի սիրտ չկա... Էլի ինչ էիր ասո՞ւմ: Աստված հիշողություն տա...

— Ի սեր աստծու, ոչ մի խոսք, հորեղբայր, բավական է և այդ կշտամբանքը. ի՞նչ կարիք կա նաև բարոյախոսության: Կարծում եք, թե ես այնպես չեմ հասկանում... Օ, մարդի՜կ: Մարդի՜կ:

Նա հանկարծ սկսեց քրքջալ, իսկ նրա հետ և հորեղբայրը:

— Ահա այսպես ավելի լա՛վ է,— ասաց Պյոտր Իվանիչը:— Ես ասում էի, որ ինքդ կծիծաղես քեզ վրա, և ահա...

Եվ նորից երկուսն էլ քրքջացին:

— Հապա՛ ասա,— շարունակեց Պյոտր Իվանիչը,— հիմա ի՞նչ կարծիքի ես դու այդ... անունն ի՞նչ էր... Պաշենկա էր թե ինչ, այն գորտնուկովը:

— Հորեղբայր, դա մեծահոգություն չէ:

— Ոչ, ես միայն ասում եմ, որ իմանամ, թե դեռ շարունակո՞ւմ ես արհամարհել նրան:

— Թողեք այդ, ի սեր աստծու, այլ ավելի լավ է օգնեք ինձ հիմա այս սարսափելի վիճակից դուրս գալու: Դուք այնպես խելացի եք, այնպես դատող...

— Ա՛: Հիմա հաճոյախոսություններ, շողոքորթություն: Ոչ, դու գնա ամուսնացիր:

— Ո՛չ մի դեպքում, հորեղբայր: Աղաչում եմ, օգնեցե՛ք...

— Այդ է որ կա, Ալեքսանդր. լավ որ վաղուց եմ կռահել քո արարքները...

— Ինչպե՞ս, վաղուց:

— Հենց այնպես, ես գիտեմ քո կապի մասին սկզբից ևեթ:

— Ձեզ հավանաբար ասել է ma tante-ը:

— Ինչպե՞ս չէ: Ե՞ս եմ նրան ասել: Այստեղ զարմանալի ի՞նչ կա: Քո դեմքին ամեն ինչ գրված էր: Դե դարդ մի արա, ես արդեն օգնել եմ քեզ:

— Ինչպե՞ս: Ե՞րբ:

— Հենց այսօր առավոտ: Մի անհանգստացիր. Տաֆաևան քեզ այլևս չի անհանգստացնի...

— Բայց ինչպե՞ս արեցիք: Ի՞նչ ասացիք նրան:

— Երկար կլինի կրկնելը, Ալեքսանդր: Ձանձրալի է:

— Բայց աստված գիտի, թե ինչե՞ր եք ասել նրան: Նա ատում, արհամարհում է ինձ:

— Մի՞թե միևնույն չէ: Ես հանգստացրի նրան. այդքանը բավական է. ասացի, որ դու սիրել չես կարող, որ չարժի քեզ համար դես-դեն ընկնել...

— Իսկ նա՞ ինչ:

— Նա հիմա նույնիսկ ուրախ է, որ նրան թողիր:

— Ինչպե՞ս, ուրախ է,— մտածկոտ ասաց Ալեքսանդրը:

— Այնպես, ուրախ է:

— Դուք նրա մեջ չնկատեցի՞ք ոչ ափսոսանք, ոչ թախիծ: Նրա համար միևնո՞ւյն է: Դա բանի նման չէ:

Նա սկսեց անհանգիստ քայլել սենյակում:

— Ուրախ է, հանգի՛ստ է,— կրկնում էր նա:— Համեցե՛ք: Հենց այս րոպեիս գնում եմ նրա մոտ:

— Այ քեզ մարդի՛կ,— նկատեց Պյոտր Իվանիչը:— Ա՛յ քեզ սիրտ. դրանով ապրես՝ լավ կլինի: Այդ դու չէի՞ր վախեցողը, որ հանկարծ քո հետևից չուղարկի: Դո՞ւ չէիր, որ խնդրում էիր օգնել: Իսկ հիմա անհանգստացար, որ քեզնից բաժանվելով, չի մեռնում վշտից:

— Ուրա՜խ է, գո՜հ է,— ասում էր Ալեքսանդրը ետ ու առաջ քայլելով և չլսելով հորեղբոր խոսքերը:— Ա՜: Ուրեմն նա չէ՞ր սիրում ինձ: Ոչ թախիծ, ոչ արցունքներ: Ո՛չ, ես նրան կտեսնեմ:

Պյոտր Իվանիչը ուսերը թոթվեց:

— Ինչպես կուզեք. ես չեմ կարող այսպես թողնել, հորեղբայր,— ավելացրեց Ալեքսանդրը, գլխարկը վերցնելով:

— Դե ուրեմն նորից գնա նրա մոտ, այլևս չես պրծնի, իսկ հետո արդեն ինձնից չկպչես. ես չեմ խառնվի, հիմա էլ խառնվեցի միայն այն պատճառով, որ ես ինքս էի քեզ այդ վիճակի մեջ դրել: Դե, հերիք է, էլի ի՞նչ քիթդ կախեցիր:

— Ամոթ է աշխարհի երեսին ապրել,— հոգոց հանելով ասաց Ալեքսանդրը:

— Եվ գործով չզբաղվել,— ասաց հորեղբայրը:— Հերիք է: Այսօր եկ մեզ մոտ. ճաշի ժամանակ մի քիչ կծիծաղենք քո պատմության վրա, իսկ հետո կառքով զբոսնելով կգնանք գործարան:

— Որքա՜ն ես մանր եմ, չնչին,— մտածկոտ ասում էր Ալեքսանդրը:— Ես սիրտ չունե՜մ: Ես խղճուկ եմ, հոգով աղքա՜տ:

— Եվ բոլորը սիրո՜ւց,— ընդհատեց Պյոտր Իվանիչը:— Ի՜նչ հիմար զբաղմունք. այդ թող մի որևէ Սուրկովի: Իսկ դու խելքը գլխիդ մարդ ես. մի ավելի կարևոր բանով կարող ես զբաղվել: Հերիք է կանանց հետևից ընկնես:

— Բայց չէ՞ որ դուք սիրում եք ձեր կնոջը:

— Այո, իհարկե: Ես շատ եմ վարժվել նրան, բայց դա չի խանգարում, որ իմ գործն անեմ: Դե, ուրեմն, մնաս բարով, եկ:

Ալեքսանդրը նստել էր շփոթված, մռայլ: Աննկատելի նրան մոտեցավ Եվսեյը, ձեռքը կոշիկի մեջ խոթած:

— Բարեհաճեցեք նայել, աղա,— ասաց նա խանդաղատանքով,— ի՜նչ վաքս է. մաքրում ես, ոնց որ հայելի, իսկ ընդամենը քսանհինգ կոպեկ արժե:

Ալեքսանդրը ուշքի եկավ, մեքենայորեն նայեց կոշիկին, հետո Եվսեյին:

— Դե՛ն կորի,— ասաց նա:— Դու հիմա՛ր ես:

— Գյուղ ուղարկեիք...— նորից ասաց Եվսեյը:

— Կորիր, ասում եմ քեզ, կորի՛ր,— բղավեց Ալեքսանդրը համարյա լաց լինելով:— Հոգիս հանել ես, քո կոշիկներով ինձ գերեզման կհասցնես... դու... բարբարո՜ս...

Եվսեյը արագ քաշվեց նախասենյակ:

IV

— Այդ ինչո՞ւ Ալեքսանդրը մեզ մոտ չի գալիս: Ես նրան մի երեք ամիս է չեմ տեսել,— մի անգամ հարցրեց Պյոտր Իվանիչը կնոջը, ինչ-որ տեղից տուն վերադառնալով:

— Ես արդեն երբևէ նրա հետ տեսնվելու հույսս կորցրել եմ,— պատասխանեց կինը:

— Ի՞նչ է պատահել: Նորի՞ց սիրահարվել է թե ինչ:

— Չգիտեմ:

— Առո՞ղջ է:

— Առողջ է:

— Գրիր նրան, խնդրեմ, պետք է հետը խոսեմ: Նրա աշխատավայրում նորից փոփոխություններ են, իսկ նա, կարծում եմ, նույնիսկ չգիտի էլ: Չեմ հասկանում, ինչ անհոգություն է:

— Ես արդեն տասն անգամ գրել եմ, կանչել եմ: Նա ասում է, որ ժամանակ չունի, իսկ ինքը ինչ-որ տարօրինակ մարդկանց հետ շաշկի է խաղում կամ ձուկ որսում: Ավելի լավ է ինքդ գնայիր. կիմանայիր, ինչ է պատահել:

— Ոչ, չեմ ուզում: Ծառային ուղարկենք:

— Ալեքսանդրը չի գա:

— Փորձենք:

Ուղարկեցին: Ծառան շուտով վերադարձավ:

— Հը, տա՞նն է,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Տանն է: Բարևել հրամայեց:

— Ի՞նչ է անում:

— Պառկել է բազմոցին:

— Ինչպես, այս ժամի՞ն:

— Նա, ասում են, միշտ պառկած է:

— Այդ ի՞նչ, քնո՞ւմ է:

— Իսկի էլ չէ: Ես ինքս էլ սկզբից կարծում էի, թե քնել է, բայց աչիկները բաց էին. բարեհաճում էր առաստաղին նայել:

Պյոտր Իվանիչը ուսերը թոթվեց:

— Կգա՞ այստեղ,— հարցրեց նա:

— Իսկի էլ չէ: «Բարևիր, ասում է, զեկուցիր հորեղբորս, որ ների, իբր, այնքան էլ առողջ չեմ». ձեզ էլ, տիկին, բարևել հրամայեց:

— Էլի ի՞նչ է պատահել: Ճշմարիտ, դա զարմանալի է: Ո՞ւմ է քաշել: Հրամայիր, որ կառքը չարձակեն: Հնար չկա, պիտի գնամ: Բայց ճիշտ եմ ասում, վերջին անգամ:

Պյոտր Իվանիչն էլ Ալեքսանդրին բազմոցի վրա պառկած գտավ: Հորեղբոր ներս մտնելու վրա նա շտկվեց ու նստեց:

— Դու անառո՞ղջ ես,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Այնպես...— պատասխանեց Ալեքսանդրը հորանջելով:

— Իսկ ի՞նչ ես անում:

— Ոչինչ:

— Եվ դու կարո՞ղ ես առանց գործի մնալ:

— Կարող եմ:

— Ես այսօր լսել եմ, Ալեքսանդր, որ կարծես Իվանովը ձեր մոտից դուրս է գալիս:

— Այո, դուրս է գալիս:

— Իսկ ո՞վ է լինելու նրա տեղը:

— Ասում են, Իչենկոն:

— Իսկ դո՞ւ ինչ ես:

— Ե՞ս: Ոչինչ:

— Ինչպե՞ս թե ոչինչ: Ինչո՞ւ դու չես:

— Չեն արժանացնում: Ի՞նչ արած. հավանաբար պիտանի չեմ:

— Աստվա՛ծ սիրես, Ալեքսանդր, պետք է հոգ տանել: Դիրեկտորի մոտ գնայիր:

— Ոչ,— ասաց Ալեքսանդրը, գլուխը շարժելով:

— Ըստ երևույթին քեզ համար միևնո՞ւյն է:

— Միևնույն է:

— Բայց ախր արդեն երրորդ անգամն է, քեզ անտեսում են:

— Միևնույն է. թո՛ղ:

— Այ, տեսնենք, ի՞նչ կասես, երբ քո նախկին ստորադրյալը կսկսի քեզ հրամայել կամ երբ ներս մտնի, դու ստիպված լինես տեղիցդ վեր կենալ և ողջունել:

— Ինչ կա որ. վեր կկենամ ու կողջունեմ:

— Իսկ ինքնասիրությո՞ւնդ:

— Չունեմ:

— Սակայն ինչ-որ հետաքրքրություններ ունե՞ս կյանքում:

— Ոչ մի: Ունեի և անցան:

— Չի կարող պատահել: Մի հետաքրքրությունը փոխարինվում է մեկ ուրիշով: Այդ ինչո՞ւ քո հետաքրքրություններն անցան, իսկ ուրիշներինը չեն անցնում: Կարծես թե վաղաժամ է. դու դեռ երեսուն տարեկան էլ չկաս...

Ալեքսանդրը ուսերը թոթվեց:

Պյոտր Իվանիչը արդեն չէր էլ ուզում շարունակել այդ խոսակցությունը: Նա այդ բոլորը քմահաճույք էր անվանում. բայց նա գիտեր, որ երբ տուն վերադառնա, չի խուսափելու կնոջ հարցերից, ուստի ակամա շարունակեց.

— Դու մի բանով զբաղվեիր, լինեիր բարձր հասարակության մեջ,— ասաց նա,— գիրք կարդայիր:

— Չեմ ուզում, հորեղբայր:

— Քո մասին արդեն սկսել են խոսք ու զրույց անել, որ դու էնիքը... էսպես... խախտվել ես սիրուց, աստված գիտի, թե ինչեր ես անում, ինչ-որ տարօրինակ մարդկանց հետ ես շփվում... ես հենց միայն դրա համար կգնայի:

— Ինչ ուզում են, թող ասեն:

— Լսիր, Ալեքսանդր, կատակը մի կողմ: Դրանք բոլորը մանրուք են. կարող ես ողջունել. կամ չողջունել, այցելել բարձր հասարակություն կամ ոչ, բանն այդ չէ: Բայց հիշիր, որ քեզ, ինչպես և ամեն մեկին, պետք է որևէ կարիերա անել: Երրևէ մտածո՞ւմ ես այդ մասին:

— Ինչպե՞ս թե չեմ մտածում. ես արդեն արել եմ:

— Այդ ինչպե՞ս:

— Ես գծել եմ իմ գործողությունների շրջանակը և չեմ ուզում դուրս գալ այդ գծից: Այստեղ ես տեր եմ. ահա իմ կարիերան:

— Դա ծուլություն է:

— Կարող է պատահել:

— Դու իրավունք չունես կողքիդ պառկելու, երբ կարող ես որևէ բան անել, քանի դեռ ուժ ունես: Արդյոք քո գործն արվա՞ծ է:

— Ես գործ անում եմ: Ոչ ոք ինձ չի մեղադրի պարապության մեջ: Առավոտները ես զբաղված եմ պաշտոնավայրում, իսկ դրանից ավելի աշխատելը շռայլություն է, կամավոր պարտականություն: Ինչո՞ւ պիտի չարչարվեմ:

— Բոլորը որևէ բանի համար չարչարվում են. մեկը նրա համար, որ իր պարտքն է համարում կատարել ինչքան ուժ ունի, մյուսը փողի համար, երրորդը՝ պատվի... Դու այդ ի՞նչ բացառություն ես:

— Պատի՜վ, փո՜ղ: Հատկապես փո՜ղ: Ինչի՞ս է պետք: Չէ՞ որ ես կուշտ եմ, հագնված, այդքանին բավականացնում է:

— Հիմա վատ էլ հագնված ես,— նկատեց հորեղբայրը,— և իբր քեզ միայն ա՞յդ է հարկավոր:

— Միայն:

— Իսկ մտավոր ու հոգեկան հաճույքների շքեղությո՞ւնը, իսկ արվե՞ստը...— սկսեց Պյոտր Իվանիչը, հարմարվելով Ալեքսանդրի խոսելաձևին:— Դու կարող ես առաջ գնալ. քո կոչումն ավելի բարձր է. քո պարտքը քեզ կանչում է ազնիվ աշխատանքի... Իսկ ձգտումը բարձրին, մոռացե՞լ ես:

— Աստված նրա հե՜տ: Աստված նրա հե՜տ,— անհանգստությամբ ասաց Ալեքսանդրը:— Դուք էլ եք սկսել տարօրինակ խոսել, հորեղբայր: Առաջ այդ բանը չէր նկատվում ձեր մեջ: Ինձ համար չի՞ արդյոք դա: Զուր աշխատանք: Ես ձգտում էի բարձրին, հիշո՞ւմ եք: Եվ ի՞նչ դուրս եկավ:

— Հիշում եմ, թե ինչպես դու միանգամից ուզում էիր մինիստր դառնալ, իսկ հետո՝ գրող: Իսկ երբ տեսար, որ դեպի բարձր կոչումը տանում է երկար ու դժվարին ճանապարհ, իսկ գրողին տաղանդ է հարկավոր, ուրեմն՝ ե՞տ: Ձեր նմանները շատ են գալիս այստեղ բարձր հայացքներով, իսկ իրենց գործը քթի տակ չեն տեսնում: Հենց որ պետք է լինում մի թուղթ գրել, տեսնում ես, որ էնիքը... Ես քո մասին չեմ ասում. դու ապացուցեցիր, որ կարող ես պարապել, իսկ ժամանակի ընթացքում և մի բան լինել: Բայց ձանձրալի է երկար սպասելը: Մենք միանգամից ենք ուզում. չհաջողվեց՝ քթներս կախում ենք:

— Բայց ես չեմ ուզում բարձրին ձգտել: Ուզում եմ մնալ այնպես, ինչպես կամ. մի՞թե ես իրավունք չունեմ ընտրելու իմ զբաղմունքը, իմ ընդունակություններից ցածր լինի դա թե ոչ. ի՞նչ հոգ: Եթե ես գործը բարեխղճորեն անում եմ, իմ պարտքը կատարում եմ: Թող ինձ մեղադրեն բարձրին անընդունակ լինելու մեջ. բոլորովին չէր վշտացնի, եթե դա նույնիսկ ճշմարիտ լիներ: Ինքներդ էիք ասում, թե պոեզիա կա համեստ բախտի մեջ, իսկ հիմա ինձ մեղադրում եք, որ ընտրել եմ համեստագույնը: Ինձ ո՞վ կարգելի մի քանի աստիճան ցած իջնել և կանգնել այն աստիճանին, որն ինձ դուր է գալիս: Ես չեմ ուզում ավելի բարձր կոչում, լսո՞ւմ եք, չե՜մ ուզում...

— Լսում եմ: Ես խուլ չեմ, միայն այդ բոլորը խղճուկ սոփեստություններ են:

— Հոգ չէ: Ահա ես գտել եմ իմ տեղը և մինչև վերջ կնստեմ այդտեղ: Գտել եմ հասարակ, պարզ մարդկանց, հոգ չէ, թե մտքով սահմանափակ, նրանց հետ շաշկի եմ խաղում ձուկ որսում, և հրաշալի՜ է: Թող, ձեր կարծիքով, ես պատժվեմ դրա համար, թող զրկվեմ պարգևներից, փողից, պատիվներից, կշռից, ամեն ինչից, որ շոյում է ձեզ: Ես առմիշտ հրաժարվում եմ...

— Դու, Ալեքսանդր, ուզում ես հանգիստ ու անտարբեր երևալ դեպի ամեն ինչ, իսկ քո խոսքերում ուղղակի եռում է զայրույթը. դու նույնիսկ խոսում ես կարծես ոչ թե բառերով, այլ արցունքով: Շատ մաղձ կա քո մեջ. չգիտես ում վրա թափես, որովհետև միայն ինքդ ես մեղավոր:

— Ինչ արած,— ասաց Ալեքսանդրը:

— Հապա ի՞նչ ես ուզում: Ախր մարդ պետք է մի բան ուզի:

— Ուզում եմ, որ ինձ չխանգարեն լինելու իմ մութ ոլորտում, ոչ մի բանի համար հոգ չքաշեմ և հանգիստ լինեմ:

— Բայց մի՞թե դա կյանք է:

— Իսկ իմ կարծիքով, այն կյանքը կյանք չի, որով դուք եք ապրում. նշանակում է, ես էլ իրավացի եմ:

— Դու կուզենայիր կյանքը վերափոխել յուրովի. պատկերացնում եմ, լա՛վ կյանք կլիներ: Կարծում եմ, քո ստեղծած կյանքում, վարդի թփերի մեջ կզբոսնեին զույգերով սիրահարներ ու բարեկամներ...

Ալեքսանդրը ոչինչ չասաց:

Պյոտր Իվանիչը լուռ նայում էր նրան: Ալեքսանդրը նորից նիհարել էր: Աչքերը փոս էին ընկել: Այտերին ու ճակատին հայտնվել էին վաղաժամ կնճիռներ:

Հորեղբայրը վախեցավ: Հոգեկան տանջանքներին նա քիչ էր հավատում, բայց վախենում էր, թե այդ վիատության տակ չի՞ թաքնվում որևէ ֆիզիկական տկարության սկիզբը: «Մեկ էլ տեսար,— մտածում էր նա,— տղան կցնդի, հետո արի մոր հետ հաշիվ տես. այ թե նամակագրություն կսկսվի: Մեկ էլ տեսար՝ ինքն էլ կգա այստեղ»:

— Տեսնում եմ, որ դու հիասթափված ես, Ալեքսանդր,— ասաց նա:

«Ինչպես անեմ,— մտածում էր նա,— նրան շուռ տամ ետ, դեպի սիրած գաղափարները: Մի կաց, փորձեմ...»

— Լսիր, Ալեքսանդր,— ասաց նա,— դու շատ ես ընկել: Թոթափիր քեզնից այդ ծուլությունը: Լավ չէ: Եվ ինչո՞ւ: Դու, գուցե, սրտիդ շատ մոտ ես ընդունել, որ ես երբեմն անփութորեն եմ արտահայտվել սիրո, բարեկամության մասին: Չէ՞ որ դա արել եմ կատակով, որպեսզի քո մեջ չափավորեմ խանդավառությունը, որը մեր դրական դարում մի տեսակ տեղին չէ, մանավանդ այստեղ, Պետերբուրգում, որտեղ ամեն ինչ չափավորված է, ինչպես մոդաները, այնպես էլ կրքերը, գործերը, բավականությունները, ամեն ինչ կշռված է, իմացված, գնահատված... ամեն ինչի սահմանը նշված: Ինչո՞ւ մեկը արտաքուստ նահանջի այդ ընդհանուր կարգից: Մի՞թե իրոք դու կարծում ես, թե ես անզգա եմ, որ ես չեմ ընդունում սերը: Սերը սքանչելի զգացմունք է. չկա ավելի սրբազան մի բան, քան երկու սրտերի միությունը կամ, օրինակ, բարեկամությունը... Ես ներքուստ համոզված եմ, որ զգացմունքը պետք է լինի տևական, հավերժական...

Ալեքսանդրը ծիծաղեց:

— Ի՞նչ ես ծիծաղում,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Տարօրինակ, տարօրինակ եք խոսում, հորեղբայր: Չէի՞ք հրամայի մի սիգար: Ծխենք. դուք կշարունակեք խոսել, իսկ ես կլսեմ:

— Բայց ի՞նչ է պատահել քեզ:

— Այնպես, ոչինչ: Որոշեցիք կպչել ինձ: Իսկ մի ժամանակ ասում էիք, որ հիմար մարդ չեմ: Ուզում եք խաղալ ինձնով, ինչպես գնդակով, դա վիրավորական է: Միշտ հո պատանի չե՞մ մնալու: Ախր մի բանի պետք եկել է այն դպրոցը, որն անցել եմ: Ինչպե՜ս սկսեցիք հռետորություն անել: Կարծես թե աչք չունե՞մ: Դուք միայն աճպարարություն արիք, իսկ ես նայում էի:

«Սա իմ գործը չէր,— մտածեց Պյոտր Իվանիչը,— ուղարկեմ կնոջս մոտ»:

— Եկ մեզ մոտ,— ասաց նա,— կինս շատ է ուզում քեզ տեսնել:

— Չեմ կարող, հորեղբայր:

— Լա՞վ ես անում, որ մոռանում ես նրան:

— Գուցե շատ վատ է, բայց, ի սեր աստծո, ներեցեք ինձ և հիմա մի սպասեք: Մի որոշ ժամանակ էլ սպասեցեք, կգամ:

— Դե, ինչպես կուզես,— ասաց Պյոտր Իվանիչը: Նա ձեռքը թափահարեց ու տուն գնաց:

Նա կնոջն ասաց, որ հրաժարվում է Ալեքսանդրից, որ նա ինչպես ուզում է, թող այնպես էլ անի, իսկ ինքը՝ Պյոտր Իվանիչը, ինչ որ կարող էր, արեց, և հիմա լվանում է ձեռքերը:

Ալեքսանդրը, փախչելով Յուլիայից, նետվեց աղմկոտ ուրախությունների հողմապտույտը: Նա կրկնում էր մեր նշանավոր բանաստեղծի տողերը.

Գնանք այնտեղ, ուր խինդն է շնչում,

Ուր զվարճանքի հողմն է աղմկոտ,

Ուր ոչ թե ապրում, այլ կյանքն են վատնում:

Աշխույժ խաղերի, խրախճանքի մեջ,

Գեթ մի ժամ արբած կեղծ երջանկությամբ,

Ես կվարժվեմ երազանքին սին,

Ճակատագրիս հետ կհաշտվեմ գինով,

Կսանձեմ սրտիս հոգսերը բոլոր,

Թույլ չեմ տա ճախրեն խոհերն իմ ազատ.

Երկնքի խաղաղ ու անդորր փայլին

Թույլ չեմ տա երբեք աչքերս նայեն և այլն:

Հայտնվեց ընկերների մի ընտանիք, և նրանց հետ անխուսափելի **թասը**: Ընկերները իրենց դեմքերին նայում էին փրփրադեզ հեղուկի մեջ, հետո լաքած կոշիկների ծայրերին: «Կորչի՛ վիշտը,— բացականչում էին նրանք ցնծությամբ,— կորչեն հոգսերը: Վատնենք, ոչնչացնենք, մոխրացնենք, խմենք կյանքն ու ջահելությունը: Ուռա՛»: Բաժակներն ու շշերը զրնգոցով նետվում էին հատակին:

Մի առժամանակ ազատությունը, աղմկոտ հավաքույթները, անհոգ կյանքը, նրան հարկադրեցին մոռանալ Յուլիային և թախիծը: Բայց շարունակ նույնը և նույնը, ճաշկերույթներ ճաշարանատերերի մոտ, նույն դեմքերը պղտոր աչքերով, ամեն օր զրուցակիցների նույն հիմար ու հարբած զառանցանքը և դրան ավելացրած նաև ստամոքսի մշտական խանգարումը. ո՛չ, դա նրա բանը չէր: Ալեքսանդրի մարմնի թույլ կազմվածքը և թախծոտ, տխրության հակված հոգին չդիմացան այդ զվարճություններին:

Նա փախչում էր **ուրախ սեղանի զվարթ խաղերից** և հայտնվեց իր սենյակում, միայնակ, ինքն իր հետ, մոռացված գրքերի հետ: Բայց գիրքն ընկնում էր նրա ձեռքից, գրիչը չէր ենթարկվում ոգեշնչմանը: Շիլլերը, Գյոթեն, Բայրոնը նրան ներկայացնում էին մարդկության մռայլ կողմը, լուսավոր կողմը նա չէր նկատում:

Իսկ մի ժամանակ որքա՜ն երջանիկ էր լինում նա այդ սենյակում: Նա մենակ չէր. այն ժամանակ նրա մոտ ներկա էր սքանչելի ուրվականը և ցերեկը նրան հովանի էր լինում հոգատար աշխատանքի պահին, գիշերը արթուն հսկում էր նրա գլխավերևում: Այն ժամանակ նրա հետ

այնտեղ ապրում էին երազանքները, ապագան մշուշով էր պատած, բայց ոչ ծանր, փոթորիկ կանխագուշակող, այլ վաղորդյան, պայծառ արշալույսը ծածկող մշուշով: Այդ մշուշի տակ թաքնված էր մի բան, հավանաբար՝ երջանկությունը... իսկ հիմա՞: Ոչ միայն նրա սենյակը, նրա համար դատարկվել էր ամբողջ աշխարհը, և հենց իր մեջ ցուրտն է, թախիծը...

Ուշադիր նայելով կյանքին, հարց տալով սրտին, գլխին, նա սարսափով տեսնում էր, որ ոչ այստեղ, ոչ այնտեղ չի մնացել ոչ մի երազանք, ոչ մի վարդագույն հույս, ամեն ինչ արդեն հետևում էր. նրա առաջ տափաստանի պես փռվել էր մերկ իրականությունը: Աստված: Ինչպիսի՜ անծայրածիր տարածություն: Ինչպիսի՜ ձանձրալի անուրախ տեսք: Անցյալը կործանված է, ապագան ոչնչացված, երջանկություն չկա. ամեն ինչ միրաժ է, բայց ապրի՜ր:

Ինչ էր ուզում՝ նա ինքն էլ չգիտեր. բայց որքա՜ն շատ բան էր ուզում:

Նրա գլուխն ասես մշուշի մեջ էր: Նա չէր քնում, բայց կարծես մոռացության մեջ էր: Ծանր մտքերը անվերջանալի շարանով ձգվում էին գլխում: Նա մտածում էր.

«Ի՞նչը կարող էր գրավել իրեն: Գերիչ հույսեր, անհոգություն՝ չկա: Նա գիտեր ամենը՝ ինչ կար առաջիկայում: Մեծարա՞նք, ձգտում աստիճանների բարձրացման ճանապարհո՞վ: Նրա ինչի՞ն են պետք դրանք: Արժե՞ ինչ-որ քսան-երեսուն տարվա համար ձկան պես սառույցին խփվել: Եվ արդյոք դա ջերմացնո՞ւմ է սիրտը: Հոգիդ ուրախանո՞ւմ է, երբ քեզ մի հինգ հոգի խոնարհ ողջունում են, իսկ իրենք գուցե մտածում. «Գրողը տանի քեզ»:

Սե՞ր: Այո, ահա մի բան էլ: Նա անգիր գիտի սերը և արդեն կորցրել է սիրելու ընդունակությունը: Իսկ հաճոյակատար հիշողությունը, կարծես ծաղրելու համար, նրան հիշեցնում էր Նադինկային, բայց ոչ թե անմեղ, պարզասիրտ Նադինկային, նա երբեք չէր հիշեցնում այդ, այլ անպայման դավաճան Նադինկային ու ամբողջ իրադրությամբ, ծառերով, նեղլիկ ճանապարհով, ծաղիկներով, և այդ բոլորի մեջ այդ օձիկը, նրան ծանոթ ժպիտով, գրկանքի ու ամոթխածության շառագունով... և բոլորը ուրիշի համար, ո՛չ Ալեքսանդրի համար... Նա հառաչանքով բռնում էր սիրտը:

«Բարեկամությունը,— մտածեց նա,— մյուս հիմարությունն է: Ամեն ինչ իմացված է, ոչ մի նոր բան չկա, հինը չի կրկնվի, բայց պիտի ապրե՛ս»:

Նա ոչ ոքի և ոչնչի չէր հավատում, մոռացության գիրկը չէր ընկնում վայելքի մեջ. վայելքը ճաշակում էր, ինչպես ախորժակ չունեցող մարդն է ճաշակում համեղ պատառը, սառնորեն, գիտենալով, որ դրանից հետո գալու է ձանձրույթը, որ հոգու դատարկությունը ոչնչով չի կարելի լցնել: Վստահել զգացմունքին՝ նա կխաբի և միայն կհուզի հոգիդ ու մի քանի վերք ևս կավելացնի նախորդներին: Նայելով սիրով կապված և հիացմունքից իրենց կորցրած մարդկանց վրա, նա ծաղրաբար ժպտում էր ու մտածում. «Սպասեցեք, ուշքի կգաք. առաջին ուրախություններից հետո կսկսվի խանդը, հաշտության տեսարանները, արցունքները: Միասին ապրելով, մահու չափ կձանձրացնեք միմյանց, իսկ եթե բաժանվեք, կրկնակի լաց կլինեք: Նորից միանաք՝ ավելի վատ: Խելագարնե՛ր: Անընդհատ խռովում են, փքվում իրար վրա, խանդում են, հետո մի րոպե հաշտվում, որպեսզի ավելի սաստիկ խռովեն, դա նրանց սե՛րն է, նվիրվածությո՛ւնը: Իսկ բոլորը միասին, փրփուրը բերաններին, երբեմն հուսահատության արցունքն աչքերին, համառորեն անվանում են **երջանկությո՛ւն**: Իսկ ձեր բարեկամությունը... **հապա՛ փորձիր, մի ոսկոր նետիր, շներին էլ կգերազանցեն**:

Նա վախենում էր ցանկանալ, գիտենալով, որ հաճախ, ցանկալիին հասնելու պահին, ճակատագիրը ձեռքիցդ կխլի երջանկությունը և կառաջարկի բոլորովին մի այլ բան, ինչ ամենևին չես ուզում, այնպես, մի որևէ անպետքություն, իսկ եթե վերջապես, նույնիսկ տա ցանկալին, ապա նախ կտանջի, կհոգնեցնի, կստորացնի քեզ քո աչքին և հետո կնետի, ինչպես շան առաջ են մի բան նետում, նրան հարկադրելով նախ սողալ դեպի համեղ պատառը, նայել դրան, պահել քթի ծայրին, թավալել փոշու մեջ, կանգնել հետևի ոտների վրա, և այն ժամանակ՝ հա՜փ:

Նրան վախեցնում էր նաև կյանքում երջանկության ու դժբախտության պարբերական հորդումը: Ուրախություններ նա չէր նախատեսում, իսկ վիշտը շարունակ առջևում է, նրանից չես խուսափի. բոլորը ենթակա են մի ընդհանուր օրենքի. բոլորին, ինչպես թվում էր նրան, բաց է թողնված

հավասար չափով և երջանկություն, և դժբախտություն: Երջանկությունը նրա համար վերջացել էր, և ի՜նչ երջանկություն: Ուրվատեսիլ, խաբեություն: Միայն վիշտն է իրական, և նա առաջիկայում է: Այնտեղ և հիվանդություններ կան, և՛ ծերություն, և՛ զանազան կորուստներ, կարող է պատահել նաև կարիք... ճակատագրի այդ բոլոր **հարվածները**, ինչպես ասում է նրա գյուղի մորաքույրը, հսկում են նրան. իսկ ի՞նչ ուրախություններ կան: Բանաստեղծական բարձր կոչումը դավաճանեց. նրա վրա ծանր բեռ են բարձում և այդ անվանում են պարտականություն: Մնում են խղճուկ բարիքներ՝ փող, կոմֆորտ, աստիճաններ... Աստվա՜ծ դրանց հետ: Օ, ինչ տխուր բան է ճանաչել կյանքը, հասկանալ ինչպես է և չհասկանալ ինչի՜ համար է:

Այսպես անձնատուր էր լինում մելամաղձության և ելք չէր գտնում կասկածանքների այդ հորձանուտից: Փորձերը միայն զուր տեղը տրորեցին նրան, իսկ առողջություն չավելացրին կյանքին, չմաքրեցին այնտեղ օդը և լույս չտվին: Նա չգիտեր, թե ինչ աներ. բազմոցի վրա կողքից կողք էր շուռ գալիս, սկսեց մտքում վերականգնել ծանոթներին և ավելի սաստիկ թախծոտեց: Մեկը հրաշալի ծառայում է, պատիվ ու հռչակ է վայելում իբրև լավ կառավարիչ, մյուսը ամուսնացել է և աշխարհի բոլոր ունայն բարիքներից գերադասում է խաղաղ կյանքը, ոչ ոքի չնախանձնելով, ոչինչ չցանկանալով. երրորդը... Է՜հ, ինչ ասի: Ամենքը մի տեսակ տեղավորվել են, հիմնավորվել և գնում են իրենց հայտնի ու որոշած ճանապարհով: «Մենակ ես... բայց ի՞նչ եմ ես»:

Այստեղ նա սկսեց հարցուփորձ անել ինքն իրեն. կկարողանա՞ր արդյոք ինքը կառավարիչ լինել, հեծելավաշտի մի հրամանատար. կկարողանա՞ր արդյոք բավարարվել ընտանեկան կյանքով: Եվ տեսավ, որ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը չէին բավարարի նրան: Ինչ-որ դևիկ շարունակ խլրտում էր նրա մեջ, շարունակ շշնջում նրան, որ դա մանր է, մանր է նրա համար, որ նա ավելի բարձր կարող էր թռչել... իսկ որտեղ և ինչպես՝ չէր կարող որոշել: Հեղինակ լինելու հարցում սխալվեց: Հապա ի՞նչ անի, ի՞նչ սկսի,— հարցնում էր ինքն իրեն և չգիտեր, թե ինչ պատասխանի: Իսկ զայրույթը ուղղակի կրծում էր նրան. դե, ասենք, թեկուզ կառավարիչ կամ հեծելավաշտի հրամանատար... բայց ոչ. ժամանակն անցել է, պետք է սկսել այբուբենից:

Հուսահատությունը նրա աչքերից արտասուք քամեց, զայրույթի, նախանձի, դեպի ամենքը տածած անբարյացակամության ամենատանջալի արցունքները: Նա դառնորեն զղջում էր, որ չլսեց մորը և փախավ խուլ վայրից:

«Մայրիկս սրտով զգում էր հեռավոր վիշտը,— մտածում էր նա,— այնտեղ այս անհանգիստ պոռթկումները կքնեին անզարթնելի քնով, այնտեղ չէր լինի այս բարդ կյանքի բուռն խմորումը: Այնինչ այնտեղ էլ ինձ կայցելեին մարդկային բոլոր զգացմունքներն ու կրքերը, և՛ ինքնասիրությունը, և՛ հպարտությունը, և՛ փառասիրությունը՝ ամեն ինչ, փոքր չափերով, կշռշափեր սիրտս մեր գավառի նեղ սահմաններում, և ամեն ինչ կբավարարվեր: Գավառում առաջի՜նը. այո՜, ամեն ինչ պայմանական է: Երկնային կրակի աստվածային կայծը, որն ավելի կամ պակաս վառվում է մեզանից յուրաքանչյուրի մեջ, այնտեղ աննկատելիորեն կփայլատակեր իմ մեջ և շուտով կհանգչեր պարապ կյանքում կամ կվառվեր դեպի կինս ու երեխաներս ունեցած կապվածության մեջ: Գոյությունս թունավորված չէր լինի: Ես հպարտությամբ կկատարեի իմ կոչումը. կյանքիս ուղին հանդարտ կլիներ, կթվար պարզ և հասկանալի ինձ, կյանքը կլիներ իմ ուժերին համապատասխան, ես կդիմանայի նրա դեմ մղած պայքարին... իսկ սե՞րը: Նա փարթամ ծաղկի պես կփթթեր և կլցներ ամբողջ կյանքս: Սոֆիան ինձ կսիրեր անդորրի մեջ: Ես ոչնչի նկատմամբ հավատս չէի կորցնի, միայն վարդեր կքաղեի, չիմանալով ինչ բան է փուշը, նույնիսկ խանդ չզգալով, մրցակցության բացակայության պատճառով: Ուրեմն ինչո՞ւ այնպես ուժգին ու կուրորեն ձգտում էի դեպի հեռուն, մշուշը, ճակատագրի հետ անհավասար ու անհայտ պայքարի: Իսկ ի՜նչ հրաշալի էի հասկանում այն ժամանակ և կյանքը, և մարդկանց: Այդպես կհասկանայի նրանց և հիմա, ոչինչ չհասկանալով: Այն ժամանակ կյանքից այնքա՜ն բան էի սպասում և, մոտիկից չճանաչելով այն, մինչև հիմա էլ այնտեղ նրանից որևէ բան կսպասեի: Որքա՜ն գանձեր հայտնաբերեցի հոգումս. ո՞ւր կորան դրանք: Ես աշխարհով մեկ ցրեցի դրանք, մանրացնելով. ես տվի սրտիս անկեղծությունը, առաջին նվիրական կիրքը, և ի՞նչ ստացա: Դառն հիասթափություն, իմացա, որ ամեն ինչ խաբեություն է, ամեն ինչ անհաստատ, որ չի կարելի հույս դնել ո՛չ իր, ո՛չ ուրիշների վրա. և սկսեցի վախենալ թե՛ ուրիշներից, թե՛ ինձնից: Ես չէի կարող այդ վերլուծության

մեջ ընդունել կյանքի մանրուքները և գոհ լինել նրանցից, ինչպես հորեղբայրս և շատ ուրիշներ... Եվ ահա հիմա...»:

Հիմա նա միայն մի բան էր ցանկանում՝ անցյալի մոռացություն, անդորր, հոգու նիրհ: Նա ավելի ու ավելի էր սառչում կյանքից, ամեն ինչին նայում էր քնեած աչքերով: Մարդկանց ամբոխի, հավաքույթների աղմուկի մեջ նա ձանձրույթ էր գտնում, փախչում էր նրանցից, իսկ ձանձրույթը վազում էր նրա հետևից:

Նա զարմանում էր, թե ինչպե՞ս կարող են մարդիկ զվարճանալ, անընդհատ զբաղվել որևէ բանով, ամեն օր հափշտակվել նոր հետաքրքրություններով: Նրան տարօրինակ էր թվում, թե այդ ինչպե՞ս բոլորը չեն շրջում իր նման քնեած, լաց չեն լինում և, եղանակի մասին շաղակրատելու փոխարեն, չեն խոսում թախծի և փոխադարձ տառապանքների մասին, իսկ եթե խոսում էլ են, ապա ոտքերի կամ մի այլ տեղում ունեցած թախծի մասին, հոդացավի կամ հեմորոյի մասին: Միայն մարմինն է նրանց հոգացողության առարկան, իսկ հոգու մասին խո՛սք անգամ չկա: «Դատա՛րկ, չնչին մարդիկ, անասունն՛ե՛ր»,— մտածում էր նա: Բայց, համենայն դեպս, երբեմն խոր մտածմունքի մեջ էր ընկնում. «Նրանք այնքան շա՛տ են, այդ չնչին մարդիկ,— ասում էր նա ինքն իրեն որոշ անհանգստությամբ,— իսկ ես մենակ եմ. մի՞թե... նրանք բոլորը... դատարկ են... անիրավացի են... իսկ ե՞ս...»:

Այստեղ նրան թվում էր, թե հենց միայն ինքն է մեղավոր, և դրանից նա ավելի դժբախտ էր դառնում:

Նա դադարեց հին ծանոթների հետ տեսնվելուց. նոր անձնավորության մերձեցումը նրա վրա ցուրտ էր փչում: Հորեղբոր հետ ունեցած խոսակցությունից հետո նա ավելի խորունկ թաղվեց ապատիկ քնի մեջ. նրա հոգին սուզվեց կատարյալ նիրհի մեջ: Նա անձնատուր էր եղել ինչ-որ բութ անտարբերության, ապրում էր պարապ, համառորեն հեռանում էր այն ամենից, ինչը հիշեցնում էր կրթված աշխարհը:

«Ինչպես ուզում է անցկացնեմ, միայն թե անցկացնեմ կյանքս,— ասում էր նա,— ամեն մեկը ազատ է կյանքը հասկանալ ինչպես ուզում է, իսկ հետո, երբ մեռնես...»:

Նա փնտրում էր մաղձոտ, չարացած մտքով, դաժանացած սրտով մարդկանց զրուցակցությունը և սիրտը թեթևացնում էր, լսելով ճակատագրին հասցեագրած չար ծաղրը. կամ ժամանակն անց էր կացնում այնպիսի մարդկանց հետ, որոնք նրան հավասար չէին ոչ խելքով, ոչ դաստիարակությամբ, ավելի հաճախակի՝ ծերուկ Կոստյակովի հետ, որի հետ Զաեզժալովը ուզում էր ծանոթացնել Պյոտր Իվանիչին:

Կոստյակովն ապրում էր Պեսկիում և իրենց փողոցում ման էր գալիս լաքած կարտուզը գլխին, խալաթով, քթի թաշկինակով գոտեպնդված: Նրա մոտ ապրում էր խոհարարուհին, որի հետ երեկոները նա խաղում էր իր թղթախաղը: Եթե հրդեհ էր պատահում, նա հայտնվում էր առաջինը և հեռանում էր վերջինը: Անցնելով եկեղեցու մոտով, որտեղ հուղարկավորության կարգ էին կատարում, նա ամբոխի միջով խցկվում էր մեռելի երեսին նայելու և հետո գնում էր նրան գերեզմանատուն ուղեկցելու: Առհասարակ նա ամեն տեսակի՝ թե ուրախ, թե տխուր ծիսակատարությունների մոլի սիրահար էր. սիրում էր նաև ներկա լինել զանազան արտակարգ պատահարների, ինչպես, օրինակ, կռիվների, դժբախտ մահվան դեպքերի, կտուրների քանդվելու և այլն և մի առանձին հաճույքով կարդում էր դրանց թվարկումը լրագրերում: Բացի դրանից նա կարդում էր նաև բժշկական գրքեր, «նրա համար, ասում էր, որ իմանա, թե մարդու մեջ ինչ կա»: Ձմեռը Ալեքսանդրը նրա հետ շաշկի էր խաղում, իսկ ամառը՝ քաղաքից դուրս ձուկ էր որսում: Ծերուկը խոսում էր դեսից-դենից: Երբ արտի էին մոտենում, նա խոսում էր հացի, ցանքսի մասին. գետափին քայլելիս՝ ձկնորսության, նավագնացության մասին. փողոցով անցնելիս՝ դիտողություններ էր անում տների, շինարարության, շինանյութերի և եկամուտների մասին... ոչ մի վերացականություն: Կյանքին նայում էր իբրև մի լավ բանի վրա, երբ փող կար, և ընդհակառակն: Այդպիսի մարդը վտանգավոր չէր Ալեքսանդրի համար և հոգեկան հույզեր արթնացնել չէր կարող:

Ալեքսանդրը նույնպիսի ջանասիրությամբ աշխատում էր իր մեջ մեռցնել հոգևոր սկիզբը, ինչպես ճգնավորներն են ջանում մեռցնել մարմինը: Պաշտոնավայրում նա լռակյաց էր, ծանոթների հանդիպելիս գլուխն ազատում էր մի երկու խոսք փոխանակելով և, պատճառաբանելով զբաղվածությունը, հեռու էր փախչում: Բայց դրա փոխարեն իր բարեկամ Կոստյակովի հետ նա տեսնվում էր ամեն օր: Մերթ ծերուկը ամբողջ օրով նստում էր Ադուևի տանը, մերթ նրան կանչում էր իր մոտ շչի ուտելու: Նա Ալեքսանդրին արդեն սովորեցրել էր թրմօղի պատրաստել, սելյանկա */Սելյանկա — ձկան կամ մսի թանձր սուպ, թունդ համեմունքով:/* և գանձակ */Գանձակ — որոճող անասունների բարդ ստամոքսի առաջին մասը, ինչպես և դրանից պատրաստած կերակուր:/* եփել: Հետո նրանք միասին ճամփա էին ընկնում որևէ շրջակա գյուղ, դաշտ: Կոստյակովն ամենուրեք շատ ծանոթներ ուներ: Գեղջուկների հետ նա խոսք ու զրույց էր անում նրանց օր ու ապրուստի մասին, կնիկների հետ կատակներ էր անում, և իսկապես էլ զվարճախոս էր, ինչպես նրան ներկայացրել էր Զաեզժալովը: Ալեքսանդրը նրան խոսելու լիակատար ազատություն էր տալիս, իսկ ինքը մեծ մասամբ լռում էր:

Նա արդեն զգում էր, որ իր լքած աշխարհի գաղափարները իրեն ավելի հազվադեպ էին այցելում, գլխում պտտվելով ավելի դանդաղ և, շրջապատում չգտնելով ոչ արտացոլում, ոչ դիմադրություն, լեզվի ծայրին չէին հասնում և մեռնում առանց ծնվելու: Հոգում վայրի ու ամայի էր, ինչպես ամայացած այգում: Արդեն քիչ էր մնում, որ նա հասներ կատարյալ ընդարմացման: Եվս մի քանի ամիս՝ ու մնաս բարով. Բայց ահա թե ինչ պատահեց:

Մի անգամ Ալեքսանդրն ու Կոստյակովը ձուկ էին որսում, Կոստյակովը, արխալուղը հագին, կաշվե կարտուզը գլխին, գետափին զանազան մեծության մի քանի կարթ դրած, և ջրատակի, և լողակներով, բոժոժներով ու զանգակներով կարթեր, կարճլիկ ծխամորճ էր ծխում, իսկ ինքը, չհամարձակվելով աչքը թարթել, հետևում էր կարթերի այդ ամբողջ մարտկոցին, այդ թվում նաև Ադուևի կարթին, որովհետ Ալեքսանդրը կանգնել էր ծառին հենված և նայում էր հակառակ կողմը: Նրանք այդպես երկար կանգնել էին լուռ:

— Ձերը խփում է, տեսե՛ք, Ալեքսանդր Ֆյոդորիչ,— հանկարծ շշուկով ասաց Կոստյակովը:

Ադուևը նայեց ջրին և նորից շրջվեց:

— Ոչ, ձեզ այդպես թվաց ջրի ծփանքից,— ասաց նա:

— Տեսե՛ք, տեսե՛ք, — բղավեց Կոստյակովը,— խփում է, աստված վկա, խփում է: Այ, ա՛յ, քաշեցեք, քաշեցե՛ք: Բռնեցե՛ք:

Իսկապես, լողակը սուզվեց ջրի մեջ, կարթաթելը արագ հետևեց նրան, կարթաթելի հետևից սողաց նաև փայտե կոթը թփի վրայից: Ալեքսանդրը բռնեց փայտից, ապա կարթաթելից:

— Կամաց, թեթևակի, այդպես չէ... էդ ի՞նչ եք անում,— բղավում էր Կոստյակովը, ճարպկորեն իր ձեռքն առնելով կարթաթելը:— Աստվա՛ծ իմ: Էս ի՜նչ ծանրություն է: Ձիգ մի տվեք: Սահեցրեք, սահեցրեք, թե չէ կկտրի: Այ այդպես, դեպի աջ, դեպի ձախ, այստեղ, դեպի ափ: Ե՛տ գնացեք: Ավելի ետ. հիմա քաշեցեք, քաշեցեք, բայց ոչ միանգամից. այ, այդպես, այ այդպես...

Ձրի երեսին երևաց մի հսկայական գայլաձուկ. նա արագ օղակ կազմեց, փայլեցնելով արծաթյա թեփուկները, պոչով խփեց աջ, ձախ և նրանց երկուսին էլ ծածկեց ջրի ցայտերով: Կոստյակովը գունատվեց:

— Այ թե գայլաձո՛ւկ է,— բղավեց նա գրեթե վախեցած և փռվեց ջրի վրա, ընկնում էր, սայթաքում, կպչելով իր կարթին և երկու ձեռքով որսում ջրի երեսին պտույտ եկող գայլաձկանը:— Դե, ա՛փ հանեցեք, ա՛փ հանեցեք, այնտեղ, ավելի դենը: Այնտեղ արդեն մերը կլինի, ինչքան էլ պտույտ-պտույտ գա: Տես թե ոնց է պլստում, ոնց որ սատանա լինի: Ա՛խ, ի՜նչ ձուկ է:

«Ա՛խ»,— կրկնեց մեկը հետևից:

Ալեքսանդրը շուռ եկավ: Նրանցից երկու քայլ այն կողմ կանգնած էր մի ծերունի, նրան թևանցուկ՝ մի բարձրահասակ սիրունիկ աղջիկ, գլխաբաց և հովանոցը ձեռքին: Նրա հոնքերը թեթևակի

խոժոռվեցին: Նա մի փոքր թեքվել էր առաջ և սաստիկ հետաքրքրությամբ աչքերով հետևում էր Կոստյակովի ամեն մի շարժմանը: Նա նույնիսկ չնկատեց Ալեքսանդրին:

Ադուևին շփոթեցրեց այդ անսպասելի երևույթը: Նա ձեռքից բաց թողեց փայտը, գայլաձուկը շրմփաց ջուրը, նազելիորեն պոչը շարժեց ու սլացավ խորքը, իր հետ տանելով կարթաթելը: Այդ բոլորը կատարվեց մի ակնթարթում:

— Ալեքսանդր Ֆյոդորի՛չ: Էդ ի՞նչ արիք,— կատաղածի պես բղավեց Կոստյակովը և սկսեց որսալ կարթաթելը: Նա ձգեց ու դուրս քաշեց միայն ծայրը, բայց առանց կեռի և առանց գայլաձկան:

Նա, ամբողջովին գունատ, շուռ եկավ դեպի Ալեքսանդրը, ցույց տալով կարթաթելի ծայրը, և մի որոպե լուռ կատաղությամբ նայեց նրան, հետո թքեց:

— Անիծվա՛ծ լինեմ, թե մեկ էլ ձեզ հետ ձուկ որսալու գամ,— ասաց նա ու հեռացավ դեպի իր կարթաթելը:

Այդ ժամանակ աղջիկը նկատեց, որ Ալեքսանդրը նայում է նրան, շիկնեց ու ետ քաշվեց: Ծերունին, ըստ երևույթին աղջկա հայրը, գլուխ տվեց Ադուևին: Ադուևը մռայլ պատասխանեց ողջույնին, կարթը նետեց և այդտեղից մի տասը քայլ այն կողմ նստեց ծառի տակի նստարանին:

«Այստեղ էլ հանգիստ չկա,— մտածում էր նա:— Ահա ինչ-որ մի Էդիպ Անտիգոնեի հետ: Դարձյա՛լ կին: Ոչ մի տեղ փախչել չի լինի: Աստվա՛ծ իմ: Ինչքա՛ն կան ամեն տեղ»:

— Էխ, դուք, ձկնո՛րս,— այդ ժամանակ ասում էր Կոստյակովը, ուղղելով իր կարթերը և ժամանակ առ ժամանակ չար հայացք նետելով Ալեքսանդրին:— Որտեղի՛ ձուկ բռնողն եք: Մո՛ւկ բռնեք, այնտեղ, ձեր բազմոցին նստած. թե չէ՝ ձո՛ւկ բռնել: Որտեղի՞ց բռնես, թե որ ձեռքիցդ փախավ: Համարյա թե բերաններումս էր, էնքան որ տապակած չէր: Դեռ զարմանալի է, թե ինչպե՞ս ձեր ափսեից չի փախչում:

— Իսկ խփո՞ւմ է,— հարցրեց ծերունին:

— Դե, ահա տեսնում եք,— պատասխանեց Կոստյակովը,— հրեն իմ վեց կարթին գոնե ծաղրի համար մի անպետք աքերին խփեր. իսկ էնտեղ էդ նույն ժամանակ, զարմանք չէր լինի, թե որ ջրատակի կարթին ընկներ, բայց ախր լողակով կարթին տե՛ս թե ինչ էր ընկել. մի տասը ֆունտանոց գայլաձուկ, բայց էդտեղ էլ բերանբացություն արինք: Ահա, ասում են, գազանը հմուտ որսորդի դեմ է դուրս գալիս: Ո՞նց չէ, թե իմ կարթից պոկ գար, ես նրան ջրո՛ւմ կբռնեի. իսկ էստեղ գայլաձուկը ինքն է ատամի տակ ընկնում, իսկ մենք քնում ենք... և դեռ ձկնո՛րս են կոչում: Այդ ի՛նչ ձկնորսներ են: Ձկնորսն էդպե՞ս կլինի: Ո՛չ, իսկական ձկնորսը, թեկուզ կողքին թնդանոթ կրակեն, աչքը չի թարթի: Թե չէ սրանք ձկնո՛րս են: Որտեղի՛ ձուկ որսացողն եք:

Մինչդեռ աղջիկը կարողացել էր տեսնել, որ Ալեքսանդրը բոլորովին այլ կարգի մարդ է, քան Կոստյակովը: Ալեքսանդրի թե՛ զգեստն այնպես չէր, ինչպես Կոստյակովինը, թե՛ իրանը, թե՛ տարիքը, թե՛ շարժուձևը, թե՛ ամեն ինչ: Նա արագ նկատեց Ալեքսանդրի մեջ դաստիարակության նշաններ, դեմքին կարդաց և միտք. նրանից չխուսափեց նույնիսկ թախծի երանգը:

«Բայց ինչո՞ւ փախավ նա,— մտածեց աղջիկը:— Տարօրինակ է, կարծեմ, ես այնպիսին չեմ, որ ինձնից փախչեն...»:

Նա հպարտ շրջվեց, արտևանունքները ցած թողեց, ապա բարձրացրեց ու անբարյացակամ նայեց Ալեքսանդրին:

Նա արդեն զայրանում էր: Նա քաշեց հորը և վեհապանծ անցավ Ալեքսանդրի մոտով: Ծերունին նորից հրաժեշտ տվեց Ալեքսանդրին. բայց աղջիկը նրան նույնիսկ մի հայացքի չարժանացրեց:

«Թող իմանա, որ նրանով բոլորովին չեն զբաղվում»,— մտածում էր նա, թաքուն նայելով, թե արդյոք Ալեքսանդրը նայո՞ւմ է:

Ալեքսանդրը, թեև չնայեց նրան, բայց ակամա ավելի գեղեցիկ դիրք ընդունեց:

«Մի տեսե՛ք: Նա նույնիսկ չի նայում,— մտածում էր աղջիկը:— Ինչպիսի՜ հանդգնություն»:

Կոստյակովը հենց հաջորդ օրը Ալեքսանդրին քարշ տվեց ձուկ բռնելու, և իր իսկ խոսքով, անիծված դարձավ:

Երկու օր ոչինչ չէր խանգարում նրանց միայնությունը: Ալեքսանդրը սկզբում շուրջն էր նայում, կարծես վախվխելով. բայց, ոչ ոքի չտեսնելով, նորից հանգստացավ: Երկրորդ օրը նա մի հսկայական պերկես բռնեց: Կոստյակովը կիսով չափ հաշտվեց նրա հետ:

— Բայց էլի սա գայլաձուկ չի,— ասում էր նա հոգոց հանելով:— Երջանկությունը ձեռներիդ էր, բայց չկարողացաք օգտվել. երկու անգամ նույն բանը չի պատահի: Իսկ ես նորից ոչինչ չունեմ: Վեց կարթով՝ ոչինչ:

— Դուք էլ զանգակները զնգզնգացրեք,— ասաց ինչ-որ մի գյուղացի, որ այդտեղով անցնելիս կանգնել էր նայելու որսի հաջողությանը:— Գուցե ձուկը զանգահարության ձայնից էնիքը... գա:

Կոստյակովը չար հայացքով նայեց նրան:

— Ձենդ կտրի, անկիրթ մարդ,— ասաց նա:— Գեղացի՜:

Գեղջուկը հեռացավ:

— Դմբո՛,— նրա հետևից բղավում էր Կոստյակովը:— Անասունը անասուն կլինի: Իր նմանի հետ հանաք աներ, անիծվածը: Անասո՛ւն, ասում եմ քեզ, գեղացի՜:

Աստված հեռու տանի ձկնորսին անհաջողության ժամանակ գրգռելուց:

Երրորդ օրը, երբ նրանք լուռ որսում էին, անշարժ հայացքները ջրին հառած, հետևից մի շրշյուն լսվեց: Ալեքսանդրը շուռ եկավ ու ցնցվեց, կարծես նրան մոծակ էր կծել, ոչ ավելի, ոչ պակաս: Ծերունին ու աղջիկը այդտեղ էին:

Ադուևը, խեթ նայելով նրանց, հազիվ պատասխանեց ծերունու ողջույնին, բայց, կարծես նա սպասում էր այդ այցելությանը: Սովորաբար նա ձուկ որսալու էր գալիս շատ անփույթ հագնված. իսկ հիմա հագել էր նոր զգեստ և կոկետաբար վզին կապել էր երկնագույն թաշկինակ, մազերն ուղղել էր, նույնիսկ, կարծես մի քիչ գանգրացրել և նմանվել էր իդիլիկ ձկնորսի: Սպասելով այնքան ժամանակ, որքան պահանջում էր քաղաքավարությունը, նա գնաց ու նստեց ծառի տակ:

«Cela passe toute permission!»— */Սա անցնում է բոլոր սահմանները (ֆր.):/* մտածեց Անտիգոնեն, զայրույթից բռնկվելով:

— Ներեցեք,— ասաց Էդիպը Ադուևին,— գուցե մենք ձեզ խանգարեցի՞նք...

— Ո՛չ,— պատասխանեց Ադուևը:— Ես հոգնել էի:

— Խփո՞ւմ է,— հարցրեց ծերունին Կոստյակովին:

— Որտեղի՞ց խփի, երբ քթիդ տակ խոսում են,— պատասխանեց նա բարկացած:— Հրեն էստեղից մի սատանա անցավ, դուրս տվեց քթիս տակ և էդ ժամանակից գոնե մի՛ ձուկ խփեր: Իսկ դուք, երևի, բարեհաճում եք այս կողմերում մոտի՞կ ապրել,— հարցրեց նա Էդիպին:

— Ահա այն է մեր ամառանոցը, պատշգամբովը,— պատասխանեց նա:

— Թա՞նկ եք բարեհաճում վճարել:

— Հինգ հարյուր ռուբլի ամառվա համար:

— Կարծես լավ ամառանոց է, տնտեսության համար հարմար, բակում էլ շատ շենքեր կան: Երևի մի երեսուն հազար է նստել տիրոջը:

— Այո, դրա չափ մի բան:

— Այդպե՞ս:

— Իսկ սա ձեր աղջի՞կն է:

— Աղջիկս է:

— Այդպե՞ս: Հրաշալի՜ օրիորդ է: Բարեհաճում եք զբոսնե՞լ:

— Այո, զբոսնում ենք: Մարդ որ ամառանոցում է ապրում, պետք է զբոսնի:

— Ճիշտ է, ճիշտ է, ինչպե՞ս չզբոսնեք. լավ եղանակ է, ոչ թե անցյալ շաբաթվա պես. ի՜նչ եղանակ էր, ա՜յ, ա՜յ, ա՜յ: Աստված մի՜ արասցե: Ով գիտի, աշնանացանքը վնասվեց:

— Աստված տա՝ կլավանա:

— Աստվա՜ծ տա:

— Ուրեմն ասում եք, այսօր որսը հաջող չի՞:

— Ինձ ոչինչ չի ընկնում, իսկ նրան, հաճեցեք նայել:

Նա ցույց տվեց պերկեսը:

— Ձեզ ասեմ,— շարունակեց Կոստյակովը,— հազվագյուտ երջանիկ է նա: Ափսոս, որ դրա մասին չի մտածում, թե չէ՝ նրա բախտն ունենալով, երբեք դատարկ ձեռքով չէինք գնա այստեղից: Մարդ էդպիսի գայլաձուկը ձեռքից բա՜ց թողնի:

Նա հոգոց հանեց:

Անտիգոնեն ավելի աշխուժորեն սկսեց ականջ դնել, բայց Կոստյակովը լռեց:

Ծերունու և աղջկա հայտնվելը սկսեց ավելի ու ավելի հաճախակի կրկնվել: Եվ Ադուևը նրանց ուշադրության արժանացրեց: Երբեմն նա էլ մի խոսք էր փոխանակում ծերունու հետ, իսկ աղջկա հետ՝ ոչինչ: Աղջկա համար սկզբում դա զայրացուցիչ էր, հետո վիրավորական, վերջապես՝ տխուր: Իսկ եթե Ադուևը նրա հետ խոսեր կամ նույնիսկ ուշադրություն դարձներ, նա կմոռանար նրան. իսկ հիմա բոլորովին այլ բան է: Թվում է, մարդկային սիրտը ապրում է միայն հակասություններով. չլինեն այդ հակասությունները, կարծես սիրտ էլ չկա մարդու կրծքում:

Անտիգոնեն վրիժառության մի սարսափելի ծրագիր էր մտմտում, բայց հետո քիչ առ քիչ թողեց այդ:

Մի անգամ, երբ ծերունին ու աղջիկը մոտեցան մեր բարեկամներին, Ալեքսանդրը քիչ հետո կարթը դրեց թփի վրա, իսկ ինքը ըստ սովորականի նստեց իր տեղում և մեքենայորեն նայում էր մերթ հորը, մերթ աղջկան:

Նրանք դեպի Ալեքսանդրը կանգնել էին կողքանց: Հոր մեջ նա ոչ մի առանձին բան չհայտնաբերեց: Սպիտակ բլուզ, նանկինե շալվար և կանաչ թավիշով բոլորազարդած ցածլիկ լայնեզր գլխարկ: Բայց դրա փոխարեն՝ աղջի՜կը: Ի՜նչ նազելիորեն էր նա հենվել ծերունու թևին: Քամին երբեմն ետ էր քշում մե՛րթ մի խոպոպ նրա երեսից, կարծես դիտմամբ, որ Ալեքսանդրին ցույց տար նրա սքանչելի դեմքն ու սպիտակ պարանոցը, մե՛րթ բարձրացնում էր մետաքսե թիկնոցը և ցուցաբերում սլացիկ իրանը, մե՛րթ խաղում էր զգեստի հետ և բացում փոքրիկ տոտիկը: Աղջիկը մտախոհ նայում էր ջրին:

Ալեքսանդրը երկար ժամանակ չէր կարողանում աչք կտրել նրանից և զգաց, որ իր մարմնով մի տենդային դող է անցնում: Նա դեմքը շրջեց գայթակղությունից և ճիպոտով սկսեց ծաղիկների գլխիկները թռցնել:

«Ա՛: Ես գիտեմ, թե սա ինչ բան է,— մտածում էր նա:— Ազատություն տվիր՝ կսկսվի՜: Ահա և պատրաստ է սերը. հիմարությո՛ւն: Հորեղբայրս իրավացի է: Բայց սոսկ անասնական զգացմունքը ինձ չի գրավի, ո՛չ, ես մինչ այդ աստիճան չեմ ստորանա»:

— Կարելի՞ է մի քիչ կարթով ձուկ բռնեմ,— երկչոտ հարցրեց աղջիկը Կոստյակովին:

— Կարելի է, տիրուհի, ինչո՞ւ չի կարելի,— պատասխանեց նա, աղջկան տալով Ադուևի կարթը:

— Դե, ահա ձեզ և ընկեր,— ասաց հայրը Կոստյակովին, և, աղջկանը թողնելով, գնաց ափի երկայնքով թափառելու:

— Տես, Լիզա, այնքան ձուկ բռնիր, որ ընթրիքին բավականանա:

Մի քանի րոպե տևեց լռությունը:

— Այդ ինչո՞ւ ձեր ընկերն այդպես մռայլ է,— կամացուկ հարցրեց Լիզան Կոստյակովին:

— Երրորդ անգամ անտեսում են պաշտոնատեղում, տիրուհի:

— Ի՞նչ,— հարցրեց աղջիկը, թեթևակի հոնքերը շարժելով:

— Այսինքն՝ երրորդ անգամն է տեղ չեն տալիս:

Աղջիկը գլուխն օրորեց:

«Ոչ. չի՛ կարող պատահել,— մտածեց նա,— այդ չէ»:

— Դուք ինձ չե՞ք հավատում, տիրուհի: Անիծված լինեմ: Գայլաձուկն էլ բաց թողեց, հիշո՞ւմ եք, պատճառն էդ էր:

«Այդ չէ, այդ չէ,— մտածեց աղջիկը արդեն համոզված,— ես գիտեմ, թե ինչու բաց թողեց գայլաձուկը»:

— Ախ, ախ,— բղավեց նա հանկարծ,— տեսեք, շարժվում է, շարժվում:

Նա կարթը ձգեց, բայց ոչինչ չբռնեց:

— Պոկվե՛ց,— ասաց Կոստյակովը, կարթին նայելով,— մի տես, թե ինչպես պոկեց որդը. պետք է որ խոշոր պերկես լիներ: Իսկ դուք չեք իմանում, տիրուհի. չթողիք, որ մի լավ բռներ:

— Մի՞թե այստեղ էլ պետք է իմանալ:

— Ինչպես ամեն բան,— ասաց Ալեքսանդրը մեքենայաբար:

Աղջիկը շիկնեց և արագ շուռ եկավ, իր հերթին կարթը գցելով ջուրը: Բայց Ալեքսանդրն արդեն ուրիշ կողմ էր նայում:

— Իսկ ինչպե՞ս պետք է հասնել դրան, որ իմանամ,— ասաց նա թեթևակի թրթռացող ձայնով:

— Հաճախակի վարժություն անել,— պատասխանեց Ալեքսանդրը:

«Ա՛, ահա՛ թե ինչ,— մտածում էր աղջիկը, բավականությունից նվաղելով:— Այսինքն՝ հաճախակի գալ այստեղ, հասկանո՛ւմ եմ: Լավ, ես կգամ, բայց ձեզ մի քիչ կչարչարեմ, պ. վայրենի, ձեր բոլոր հանդգնությունների համար...»:

Կոկետությունը նրան այդպես թարգմանեց Ալեքսանդրի պատասխանը, իսկ նա այդ օրը այլևս ոչինչ չասաց:

«Աստված գիտի, թե ինչ կմտածի,— ասում էր Ալեքսանդրն ինքն իրեն:— Կսկսի սեթևեթել, կոկետություն անել... դա հիմար բան է»:

Այդ օրվանից ծերունու և աղջկա այցելությունները կրկնվում էին ամեն օր: Երբեմն Լիզան գալիս էր առանց ծերունու, դայակի հետ: Նա իր հետ բերում էր ձեռագործ, գրքեր և նստում էր ծառի տակ, կատարյալ անտարբերություն ցույց տալով Ալեքսանդրի ներկայությանը:

Նա մտածում էր դրանով դիպչել նրա ինքնասիրությանը և, ինչպես ինքն էր ասում, մի քիչ տանջել: Նա դայակի հետ բարձրաձայն խոսում էր տան, տնտեսության մասին, որպեսզի ցույց տա, որ ինքը չի էլ տեսնում Ադուևին: Իսկ Ադուևը երբեմն իրոք չէր տեսնում աղջկան, իսկ երբ տեսնում էր, չոր բարևում էր, և ո՛չ մի խոսք:

Տեսնելով, որ այդ սովորական մանևրը իրեն չհաջողվեց, Լիզան փոխեց գրոհի ծրագիրը և մի երկու անգամ ինքը խոսակցություն սկսեց նրա հետ. երբեմն նրանից վերցնում էր կարթը: Ալեքսանդրը կամաց-կամաց ավելի զրուցասեր դարձավ նրա հետ, բայց շատ զգուշավոր էր և ոչ մի անկեղծություն թույլ չէր տալիս: Արդյոք դա նրա կողմից հաշվենկատությո՞ւն էր, թե դեռ **ոչինչ չէր բուժել նախկին վերքերը,** ինչպես ասում էր նա, միայն թե նա բավական սառն էր Լիզայի հետ նաև խոսելիս:

Մի անգամ ծերունին հրամայեց գետափ բերել ինքնաեռը: Լիզան թեյ էր ածում: Ալեքսանդրը համառորեն հրաժարվեց թեյից, ասելով, որ ինքը երեկոները չի խմում:

«Այդ բոլոր թեյերը իրենց հետևից բերում են մերձեցում... ծանոթություններ... չեմ ուզում»,— մտածեց նա:

— Ի՞նչ եք ասում: Ախր երեկ չորս բաժակ խմեցիք,— ասաց Կոստյակովը:

— Ես դուրսը չեմ խմում,— շտապով ավելացրեց Ալեքսանդրը:

— Իզո՛ւր,— ասաց Կոստյակովը:— Սքանչելի թեյ է, ծաղկի, երևի մի տասնհինգ ռուբլի կարժենա: Շնորհ արեք էլի, տիրուհի, և լավ կլիներ, որ ռոմ էլ լիներ:

Բերին նաև ռոմ:

Ծերունին Ալեքսանդրին հրավիրեց տուն, բայց Ալեքսանդրը կտրականապես հրաժարվեց: Լիզան, լսելով մերժումը, շրթունքներն ուռցրեց: Նա սկսեց հարցուփորձ անել նրա մարդախուսության պատճառն իմանալու:

Որքան խորամանկորեն էր նա խոսակցությունն այդ նյութին դարձնում, Ալեքսանդրն ավելի խորամանկությամբ էր դուրս պրծնում:

Այդ խորհրդավորությունը Լիզայի մեջ միայն ավելի էր գրգռում հետաքրքրասիրությունը, գուցե և մի այլ զգացմունք: Մինչ այդ ամառային երկնքի պես պայծառ նրա դեմքին հայտնվեց անհանգստության, մտախոհության ամպիկը: Նա հաճախ Ալեքսանդրի վրա նետում էր մի թախծոտ հայացք, հոգոց հանելով մի կողմ էր դարձնում աչքերը և գետին հառում, իսկ ինքը, կարծես, մտածում էր. «Դուք դժբա՛խտ եք: Գուցե՝ խաբված... օ, ինչպե՛ս կկարողանայի ես ձեզ երջանկացնել: Ինչպե՛ս կպահպանեի ձեզ, ինչպե՛ս կսիրեի... ես ձեզ կպաշտպանեի հենց ճակատագրից, ես...» և այլն:

Այդպես է մտածում կանանց մեծ մասը և մեծ մասը խաբում է նրանց, ովքեր հավատում են սիրենների այդ երգին: Ալեքսանդրը կարծես ոչինչ չէր նկատում: Նա խոսում էր Լիզայի հետ, ինչպես կխոսեր բարեկամի, հորեղբոր հետ, ո՛չ մի երանգ այն քնքշության, որն ակամա սողոսկում է տղամարդու և կնոջ բարեկամության մեջ և այդ հարաբերությունները դարձնում է ոչ նման բարեկամության: Դրա համար էլ ասում են, որ տղամարդու և կնոջ միջև չկա և չի կարող լինել ընկերություն, որ նրանց միջև ընկերություն կոչվածը ոչ այլ ինչ է, եթե ոչ սիրո սկիզբը կամ նրա մնացորդները, կամ, վերջապես, բուն սերը: Բայց նայելով դեպի Լիզան ցուցաբերած Ադուևի վերաբերմունքին, կարելի էր հավատալ, որ այդպիսի բարեկամություն գոյություն ունի:

Մի անգամ Ադուևը լոկ մասամբ բացեց կամ ուզեց բացել իր մտածելակերպը: Նա նստարանից վերցրեց Լիզայի բերած գիրքը և բաց արեց: Դա **Չայլդ Հարոլդի** ֆրանսերեն թարգմանությունն էր: Ալեքսանդրը գլուխն օրորեց, հոգոց հանեց և լուռ գիրքը դրեց տեղը:

— Ձեզ դուր չի՞ գալիս Բայրոնը: Դուք դե՞մ եք Բայրոնին,— ասաց Լիզան:— Բայրոնն այնպիսի՛ մեծ բանաստեղծ է, և ձեզ դուր չի՛ գալիս:

— Ես ոչինչ չեմ ասում, իսկ դուք արդեն հարձակվեցիք ինձ վրա,— պատասխանեց նա:

— Իսկ ինչո՞ւ ձեր գլուխն օրորեցիք:

— Այնպես. ափսոսում եմ, որ այս գիրքն ընկել է ձեր ձեռքը:

— Ո՞ւմ եք ափսոսում. գի՞րքը թե ինձ:

Ալեքսանդրը լուռ էր:

— Իսկ ինչո՞ւ Բայրոն չկարդամ,— հարցրեց Լիզան:

— Երկու պատճառով,— ասաց Ալեքսանդրը, փոքր-ինչ լռելով: Նա իր ձեռքը դրեց նրա ձեռքին ավելի համոզի՞չ լինելու, թե այն պատճառով, որ Լիզայի թաթիկը սպիտակ ու փափուկ էր, և սկսեց խոսել կամաց, չափաբերական, աչքերը հածելով մե՛րթ Լիզայի խոպոպների, մե՛րթ պարանոցի, մե՛րթ իրանի վրա: Ըստ այդ անցումների աստիճանաբար բարձրանում էր նաև նրա ձայնը:

— Նախ նրա համար,— ասում էր նա,— որ դուք Բայրոնը կարդում եք ֆրանսերեն, և, հետևաբար, ձեզ համար կորած է բանաստեղծի լեզվի գեղեցկությունն ու հզորությունը: Տեսեք, այստեղ ինչպիսի՜ դալուկ, անգույն, խղճուկ լեզու է: Սա մեծ բանաստեղծի աճյունն է. գաղափարները կարծես ճապաղվել են ջրում: Երկրորդ, նրա համար ես ձեզ խորհուրդ չէի տա Բայրոն կարդալ, որ... նա, կարող է պատահել, ձեր հոգում կարթնացնի այնպիսի լարեր, որոնք առանց դրա հավիտյան լուռ կմնային...

Այստեղ նա ամուր և արտահայտիչ սեղմեց նրա ձեռքը, կարծես դրանով ուզում էր կշիռ տալ իր խոսքերին:

— Ձեր ինչի՞ն է պետք Բայրոն կարդալ,— շարունակեց նա:— Գուցե ձեր կյանքը կհոսի հանդարտ, ինչպես այս առուն. տեսնո՞ւմ եք, ինչպես նա փոքր է, ծանծաղ. նա իր մեջ չի արտացոլի ոչ ամբողջ երկինքը, ոչ ամպերը, նրա ափերին չկան ոչ ժայռեր, ոչ անդունդներ. նա հոսում է խայտալով. հազիվհազ լոկ թեթև ծփանքն է կնճռոտում նրա մակերեսը. նա արտացոլում է միայն ափերի կանաչը, երկնքի մի պատառ և փոքրիկ ամպերը... Հավանաբար այդպես կհոսեր նաև ձեր կյանքը, իսկ դուք զոռով ուզում եք զուր հուզումներ, փոթորիկներ, ուզում եք կյանքին ու մարդկանց նայել մռայլ ապակու միջով... Թողեք, մի՛ կարդացեք: Ամեն ինչի նայեցեք ժպիտով, հեռու մի նայեք, ապրեցեք օր ավուր, մի քննարկեք կյանքի և մարդկանց մութ կողմերը, թե չէ...

— Թե չէ ի՞նչ:

— Ոչինչ,— ասաց Ալեքսանդրը, կարծես ուշքի գալով:

— Ոչ, ասացեք ինձ. դուք, հավանաբար, զգացել եք որևէ բան:

— Ո՞ւր է իմ կարթը: Թույլ տվեք, իմ գնալու ժամանակն է:

Նա թվում էր անհանգստացած, որ այդպես անզգույշ էր արտահայտվել:

— Ոչ, ևս մի խոսք,— սկսեց Լիզան,— չէ՞ որ բանաստեղծը համակրանք պետք է արթնացնի դեպի ինքը: Բայրոնը մեծ բանաստեղծ է: Ինչո՞ւ չեք ուզում, որ համակրեմ նրան: Մի՞թե ես այնքան հիմար, աննշան եմ, որ չեմ հասկանա...

Լիզան վիրավորվեց:

— Բոլորովին այդ չէ ասածս. համակրեցեք այն, ինչ հատուկ է ձեր կանացի սրտին. որոնեցեք այն, ինչ ներդաշնակում է նրան, այլապես կարող է սարսափելի երկպառակություն պատահել... և գլխում, և սրտում:— Այստեղ նա գլուխն օրորեց, ակնարկելով, որ նա ինքը այդ երկպառակության զոհն է:

— Մեկը ձեզ ցույց կտա,— ասում էր նա,— ծաղիկը և կհարկադրի զվարճանալ նրա բույրով ու գեղեցկությամբ, իսկ մի ուրիշը ցույց կտա միայն թունավոր հյութը նրա բաժակում... այն ժամանակ

ձեզ համար կկորչեն և գեղեցկությունը և բույրը: Նա ձեզ կհարկադրի ափսոսալ, թե ինչու այնտեղ կա այդ հյութը, և դուք կմոռանաք, որ կա նաև բույրը... Տարբերություն կա այդ երկու մարդկանց միջև և նրանց նկատմամբ տածած համակրության միջև: Ուրեմն մի որոնեք թույնը, մի հասեք մինչև ակունքը այն ամենը, ինչ կատարվում է մեզ հետ և մեր շուրջը, մի որոնեք ոչ պիտանի փորձառություն. նա չէ, որ տանում է դեպի երջանկություն:

Նա լռեց: Լիզան դյուրահավատ ու մտածկոտ լսում էր նրան:

— Խոսեցեք, խոսեցեք...— մանկական հնազանդությամբ ասաց նա,— ես պատրաստ եմ ձեզ լսել ամբողջ օրերով, հնազանդվել ամեն բանում...

— Ի՞նձ,— ասաց Ալեքսանդրը սառնությամբ:— Շնո՛րհ արեք: Ես ի՞նչ իրավունք ունեմ տնօրինելու ձեր կամքը... Ներեցեք, որ ինձ թույլ տվի դիտողություն անելու: Ինչ ուզում եք, կարդացեք... **Չայլդ Հարոլդը** շատ լավ գիրք է, Բայրոնը՝ մեծ բանաստեղծ:

— Ոչ, մի ձևացրեք: Մի խոսեք այդպես: Ասացեք, ի՞նչ կարդամ:

Նա բծախնդիր լրջությամբ նրան առաջարկեց մի քանի պատմական գիրք, բայց Լիզան ասաց, որ դա պանսիոնում էլ նրան ձանձրացրել է: Այն ժամանակ Ալեքսանդրը նշեց Վալտեր Սկոտին, Կուպերին, մի քանի ֆրանսիացի ու անգլիացի գրողների ու վիպասանուհիների, ռուսներից երկու կամ երեք հեղինակի, ընդսմին աշխատելով, իբր պատահմամբ, դրսևորել իր գրական ճաշակն ու տակտը: Հետո նրանց մեջ այլևս այդպիսի խոսակցություն չեղավ:

Ալեքսանդրը շարունակ ուզում էր հեռու փախչել: «Ինչի՞ս են պետք կանայք,— ասում էր նա:— Սիրել ես չեմ կարող. նրանց համար ես իմ դարն ապրել եմ...»

«Լա՛վ, լա՛վ,— դրան առարկում էր Կոստյակովը:— Ահա ամուսնացեք, կտեսնեք: Ես ինքս, մի ժամանակ, միայն թե խաղ անեի ջահել աղջկերքի ու կնիկների հետ, իսկ հենց որ պսակի ժամանակը եկավ, ասես գլխիս ցից խփեցին, կարծես թե մեկը ուղղակի բոթում էր ամուսնանալու»:

Եվ Ալեքսանդրը չէր փախչում: Նրա մեջ խլրտացին առաջվա բոլոր երազանքները: Սիրտն սկսեց բաբախել ուժեղ տակտով: Նրա աչքին երևում էին Լիզայի մերթ իրանը, մերթ տոտիկը, մերթ խոպոպը, և կյանքը նորից մի քիչ պայծառացավ: Մի երեք օր արդեն ոչ թե Կոստյակովն էր նրան կանչում, այլ նա ինքն էր Կոստյակովին քարշ տալիս ձուկ որսալու: «Դարձյա՛լ: Դարձյա՛լ առաջվանը,— ասում էր Ալեքսանդրը:— Բայց ես ամուր եմ»,— այնինչ շտապով գնում էր գետափ:

Լիզան ամեն անգամ անհամբերությամբ սպասում էր բարեկամների գալստյան: Կոստյակովի համար ամեն երեկո պատրաստվում էր մի գավաթ բուրավետ թեյ ռոմով և, գուցե, Լիզան մասամբ այդ խորամանկությանն էր պարտական, որ նրանք ոչ մի երեկո բաց չէին թողնում: Եթե նրանք ուշանում էին, Լիզան ու հայրը գնում էին նրանց ընդառաջ: Երբ վատ եղանակը բարեկամներին պահում էր տանը, հաջորդ օրը վերջ չէին ունենում կշտամբանքները թե նրանց, թե եղանակին:

Ալեքսանդրը մտածեց, մտածեց և որոշեց առժամանակ դադարեցնել իր զբոսանքները, աստված գիտի, թե ինչ նպատակով, նա ինքն էլ չգիտեր այդ, և մի ամբողջ շաբաթ չէր գնում ձուկ որսալու: Կոստյակովը նույնպես չէր գնում: Վերջապես գնացին:

Նրանց ձուկ որսալու տեղից դեռ մի վերստ այս կողմ նրանք հանդիպեցին Լիզային ու նրա դայակին: Լիզան, նրանց տեսնելով, ճիչ արձակեց, հետո հանկարծ շփոթվեց, կարմրեց: Ադուևը սառը բարևեց, Կոստյակովն սկսեց լեզվին տալ:

— Ահա և մենք,— ասաց նա,— չէի՞ք սպասում: Խե՜, խե՜, խե՜: Տեսնում եմ, որ չէիք սպասում. ինքնաեռ էլ չկա: Վաղուց է, տիրուհի, վաղուց է չենք տեսնվել. Ձուկը խփո՞ւմ է: Ես վաղուց ուզում էի, բայց ահա, Ալեքսանդր Ֆյոդորիչին չէի կարող համոզել. նստում է տանը... կամ ոչ, ավելի ճիշտ, շարունակ պառկած է:

Լիզան կշտամբանքով նայեց Ադուևին:

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց նա:

— Ի՞նչը:

— Դուք մի ամբողջ շաբաթ չէիք գալիս:

— Այո, կարծես մոտ մի շաբաթ չեմ եղել:

— Իսկ ինչո՞ւ:

— Այնպես, չէի ուզում...

— Չէի՛ք ուզում,— ասաց Լիզան զարմացած:

— Այո, իսկ ի՞նչ կա որ:

Լիզան լուռ էր, բայց կարծես մտածում էր. «Մի՞թե դուք կարող եք չուզենալ այստեղ գալ»:

— Ես ուզում էի հայրիկիս ուղարկել քաղաք, ձեզ մոտ, բայց չգիտեի, թե որտեղ եք ապրում:

— Քաղա՞ք, ինձ մո՞տ: Ինչո՞ւ:

— Հիանալի՜ հարց,— ասաց Լիզան վիրավորված եղանակով:— Ինչո՞ւ: Իմանալու, թե ձեզ մի բան չի՞ պատահել, առո՞ղջ եք արդյոք...

— Ձե՞զ ինչ...

— Ինձ ի՞նչ: Աստվա՛ծ:

— Ի՞նչ աստված:

— Ինչպե՞ս թե ինչ... բայց ախր, ձեր գրքերն ինձ մոտ են...— նա շփոթվեց:— Մի շաբաթ չգա՛լ,— ավելացրեց նա:

— Մի՞թե ես անպայման ամեն օր պետք է լինեմ այստեղ:

— Անպայման:

— Ինչո՞ւ:

— Ինչո՛ւ, ինչո՞ւ:— Նա տխուր նայում էր Ալեքսանդրին և կրկնում:— Ինչո՛ւ, ինչո՛ւ:

Ալեքսանդրը նայեց Լիզային: Այս ի՞նչ է: Արցունքներ, հուզում և ուրախություն, և կշտամբանք: Նա գունատ է, մի քիչ նիհարել է, աչքերը կարմրել են:

«Ուրեմն ահա՛ թե ինչ: Արդե՞ն,— մտածեց Ալեքսանդրը:— Ես չէի սպասում այսպես շուտ»: Հետո նա բարձրաձայն ծիծաղեց:

— Ինչո՞ւ, ասում եք դուք: Լսեցեք...— շարունակում էր Լիզան: Նրա աչքերում փայլեց ինչ-որ վճռականություն: Ըստ երևույթին, նա պատրաստվում էր ինչ-որ կարևոր բան ասել, բայց այդ րոպեին նրանց մոտենում էր հայրը:

— Մինչև վաղը,— ասաց Լիզան,— վաղը ձեզ հետ պետք է խոսեմ. այսօր չեմ կարող, սիրտս չափազանց լիքն է…վաղը կգա՞ք: Այո, լսո՞ւմ եք: Մեզ չե՞ք մոռանա: Չե՞ք լքի...

Եվ վազեց առանց պատասխանի սպասելու:

Հայրն ուշադիր նայեց նրան, հետո Ադուևին և գլուխն օրորեց: Ալեքսանդրը լուռ նայում էր Լիզայի հետևից: Նա կարծես և ափսոսում, և զայրանում էր իր դեմ, որ աննկատելիորեն նրան հասցրել էր այդ վիճակին. արյունը խփեց ոչ թե նրա սիրտը, այլ գլուխը:

«Նա ինձ սիրում է,— մտածում էր Ալեքսանդրը, տուն վերադառնալիս:— Աստվա՛ծ իմ, ինչպիսի՜ ձանձրույթ: Ի՜նչ անհեթեթ բան է. հիմա էլ չի կարելի այստեղ գալ, այնինչ ձուկն այստեղ այնքան լավ է խփում... ցավալի է»:

Մինչդեռ, թվում է, ներքուստ չգիտես ինչու նա դժգոհ չէր դրանից, զվարթացել էր և ամեն րոպե լեզվին էր տալիս Կոստյակովի հետ:

Պատրաստակամ երևակայությունը կարծես դիտմամբ նրա առաջ պատկերում էր Լիզային ամբողջ հասակով, շքեղ ուսերով, սլացիկ իրանով, չէր մոռացել և տոտիկը: Նրա մեջ խլրտաց մի տարօրինակ զգացողություն, նորից մարմնով մի դող անցավ, բայց չհասավ հոգուն և մարեց: Նա վերլուծեց այդ զգացողությունը ակունքից մինչև ծայրը:

«Անասնակա՞ն է,— մրթմրթում էր նա ինքն իրեն:— Ահա՛ ուրեմն ինչ միտք է թափառում քո գլխում... Մերկ ուսեր, կուրծք, տոտիկ... դե, լավ, խաբեմ, իսկ հետո՞ ինչ: Նույն ձանձրույթը, գուցե, նաև, խղճի խայթ, իսկ հանուն ինչի՞: Ոչ, ոչ: Ինձ թույլ չեմ տա, նրան էլ չեմ հասցնի... օ, ես ամո՛ւր եմ: Իմ մեջ զգում եմ բավականաչափ հոգու մաքրություն, սրտի ազնվություն... Ես ցեխը չեմ ընկնի, և նրան էլ չեմ քաշի»:

Լիզան ամբողջ օրը սպասում էր նրան բավականության թրթիռով, իսկ հետո նրա սիրտը ճմլվեց. նա երկչոտեց, ինքն էլ չիմանալով՝ ինչից, տխրեց և գրեթե չէր ուզում, որ Ալեքսանդրը գա: Իսկ երբ սովորական ժամը հասավ, իսկ Ալեքսանդրը չկար, նրա անհամբերությունը ճնշող թախծի վերածվեց: Արևի վերջին ճառագայթների հետ չքացավ ամեն մի հույս. նա լաց եղավ:

Հաջորդ օրը նորից ոգի առավ, դարձյալ առավոտից ուրախ էր, իսկ երեկոյան կողմ սիրտն սկսեց ավելի սաստիկ տնքալ ու նվաղել թե վախից, թե հույսից: Նորից չեկան:

Երրորդ, չորրորդ օրը նույնն էր: Իսկ հույսը Լիզային շարունակ դեպի գետակն էր քաշում. հենց որ հեռվում մի նավակ էր երևում կամ ափին մարդկային երկու ստվեր, նա ցնցվում էր ու նվաղում ուրախ սպասումի բեռան տակ: Բայց երբ տեսնում էր, որ նավակում նրանք չեն, որ ստվերները նրանցը չեն, նա վիատ գլուխը կախում էր կրծքին, հուսահատությունն ավելի ուժգին էր ճնշում հոգին... Մի րոպե անց նենգ հույսը նորից Ալեքսանդրի հապաղման մի մխիթարական պատճառ էր շշնջում նրան, և սիրտը նորից էր տրոփում սպասումից: Իսկ Ալեքսանդրը հապաղում էր կարծես դիտմամբ:

Վերջապես, երբ նա, կիսահիվանդ, անհուսությունը հոգում, մի անգամ նստել էր ծառի տակ իր տեղում, հանկարծ մի շրշյուն լսեց. նա շուռ եկավ ու ցնցվեց ուրախալի վախից. նրա առջև, ձեռքերը կրծքին խաչած, կանգնել էր Ալեքսանդրը:

Լիզան ուրախության արցունքներով ձեռքերը պարզեց նրան և երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ: Ալեքսանդրը բռնեց նրա ձեռքերը և ագահորեն, նույնպես հուզված, ուշադիր նայում էր նրա դեմքին:

— Դուք նիհարել եք,— ասաց նա կամացուկ:— Դուք տառապո՞ւմ եք:

Լիզան ցնցվեց:

— Որքան վաղուց չկայիք,— ասաց նա:

— Իսկ դուք ինձ սպասո՞ւմ էիք:

— Ե՞ս,— աշխուժորեն պատասխանեց նա:— Օ, եթե գիտենայի՜ք...— նա պատասխանն ավարտեց ձեռքի ուժեղ սեղմումով:

— Իսկ ես եկել եմ ձեզ հրաժեշտ տալու,— ասաց Ալեքսանդրը, և կանգ առավ, հետևելով, թե ինչ կլինի Լիզային:

Սա վախեցած ու թերահավատությամբ նայեց նրան:

— Ճիշտ չէ,— ասաց նա:

— Ճիշտ է,— պատասխանեց Ադուևը:

— Լսեցեք,— հանկարծ խոսել սկսեց Լիզան, երկչոտ նայելով ամեն կողմ:— Մի՛ մեկնեք, ի սեր աստծու, մի՛ մեկնեք: Ես ձեզ մի գաղտնիք կասեմ... Այստեղ հայրիկը մեզ կտեսնի պատուհանից, գնանք մեր այգին, տաղավարը... նա դեպի դաշտ է դուրս գալիս, ես ձեզ կուղեկցեմ:

Նրանք գնացին: Ալեքսանդրը աչքը չէր կտրում Լիզայի ուսերից, սլացիկ իրանից և տենդային դող էր զգում:

«Ի՞նչ պիտի լինի որ գնամ,— մտածում էր նա, Լիզայի հետևից գնալով,— չէ՞ որ հենց այնպես... միայն կնայեմ, թե ինչպես է նրանց տաղավարը... չէ՞ որ հայրն ինձ կանչում էր. ես կարող էի գնալ ուղղակի և բացահայտ... բայց ես հեռու եմ գայթակղությունից, աստված վկա, հեռու եմ, և դա կապացուցեմ, ահա դիտմամբ եկա ասելու, որ մեկնում եմ... թեև ոչ մի տեղ չեմ մեկնում: Ո՛չ, դև: Ինձ չես գայթակղի»: Բայց այստեղ, կարծես ինչպես Կրիլովի դևիկը, վառարանի հետևից հայտնվելով ճգնավորին, շշնջաց և Ալեքսանդրին. «Իսկ ինչո՞ւ եկար դա ասելու: Դա կարիք չկար, չէիր հայտնվի և մի երկու շաբաթից հետո մոռացված կլինեիր...»:

Բայց Ալեքսանդրին թվում էր, թե ինքը ազնվորեն է վարվում, ներկայանալով անձնուրացության սխրանքի, գայթակղության դեմ երես առ երես պայքարելու: Նրա հաղթանակի առաջին ռազմավարը Լիզայից խլած համբույրն էր, հետո նա փարվեց նրա իրանին, ասաց, որ ոչ մի տեղ չի գնում, որ դա հնարել էր նրան փորձելու համար, իմանալու, թե Լիզան որևէ զգացմունք տածո՞ւմ է դեպի նա: Վերջապես, ի լրումն հաղթանակի, նա խոստացավ հաջորդ օրը նույն ժամին ներկայանալ տաղավար: Տուն վերադառնալիս նա մտածում էր իր քայլի մասին և մեկ սառչում էր, մեկ տաքություն էր գալիս վրան: Նա սարսափից քարանում էր, չէր հավատում ինքն իրեն. վերջապես որոշեց վաղը չգնալ և հայտնվեց նշանակված ժամից ավելի վաղ:

Դա օգոստոս ամսին էր: Արդեն մթնում էր: Ալեքսանդրը խոստացել էր լինել ժամը իննին, բայց եկավ ութին, մենակ, առանց կարթի: Նա գողի պես մոտենում էր տաղավարին, մերթ երկչոտ շուրջն էր նայում, մերթ շտապ վազում: Բայց ինչ-որ մեկը առաջ ընկավ նրանից: Նա նույնպես շտապ, շնչակտուր լինելով, ներս վազեց տաղավար և նստեց բազմոցին մութ անկյունում:

Կարծես Ալեքսանդրի ճամփան էին պահում: Նա կամացուկ բացեց դուռը, խիստ հուզված, ոտների ծայրին, մոտեցավ բազմոցին և կամացուկ բռնեց Լիզայի... հոր ձեռքը: Ալեքսանդրը ցնցվեց, ետ ցատկեց, ուզում էր փախչել, բայց ծերունին բռնեց նրա փեշից և բռնի նստեցրեց իր կողքին, բազմոցի վրա:

— Այդ ինչպե՞ս է, որ մտաք այստեղ, պարոնս,— հարցրեց նա:

— Ես... ձուկ բռնելու...— մրթմրթում էր Ալեքսանդրը, շրթունքները հազիվ շարժելով: Նրա ատամները կափկափում էին: Ծերունին բոլորովին սարսափելի չէր, բայց Ալեքսանդրը, ինչպես հանցանքի վայրում բռնված ամեն մի գող, դողում էր ինչպես տենդահար:

— Ձուկ բռնելո՞ւ,— կրկնեց ծերունին ծաղրաբար:— Արդյոք գիտե՞ք, ինչ է նշանակում ձուկ որսալ պղտոր ջրում: Վաղուց եմ հետևում ձեզ, և ահա, վերջապես, ճանաչեցի. իսկ իմ Լիզային ճանաչում եմ խանձարուրից. նա բարի է, դյուրահավատ, իսկ դուք, դուք վտանգավոր սրիկա եք...

Ալեքսանդրն ուզում էր վեր կենալ, բայց ծերունին պահեց նրան՝ ձեռքը բռնելով:

— Այո, պարոնս, մի զայրացեք: Դուք դժբախտ ձևացաք, կեղծաբար խուսափում էիք Լիզայից, նրան ներքաշեցիք, համոզեցիք և ուզում էիք օգտվել... արդյոք լա՞վ բան է դա: Ի՞նչ անուն տալ ձեզ:

— Երդվում եմ պատվով, ես չէի նախատեսում հետևանքները,— ասաց Ալեքսանդրը խոր համոզվածության ձայնով,— ես չէի ուզում...

Ծերունին մի քանի րոպե լուռ էր:

— Կարող է պատահել և այդպես,— ասաց նա:— Կարող է պատահել ոչ թե սիրուց, այլ այնպես, պարապությունից, մտքից շեղում էիք խեղճ աղջկան, ինքներդ չիմանալով, թե դրանից ինչ կստացվի. հաջողվեց՝ լավ, չհաջողվեց՝ հոգ չէ: Պետերբուրգում շատ կան այդպիսի կտրիճները... Գիտե՞ք ինչպես են վարվում այդպիսի ֆրանտների հետ:

Ալեքսանդրը նստել էր, հայացքը ցած հառած: Նա չէր համարձակվում արդարանալ:

— Իսկ սկզբում ես ձեր մասին ավելի լավ կարծիքի էի, բայց սխալվեցի, սաստիկ սխալվեցի: Փառք աստծո, որ ժամանակին գլխի ընկա... Լսեցեք, պետք չէ ժամանակ կորցնել. մեկ էլ տեսար, հիմար աղջիկը կգա տեսակցության: Ես երեկ հետամուտ էի ձեզ: Պետք չէ, որ նա մեզ միասին տեսնի. դուք կգնաք և, հասկանալի է, երբեք չեք վերադառնա. նա կմտածի, որ իրեն խաբել եք և դա դաս կլինի նրան: Միայն տեսեք, այստեղ երբեք չլինեք. ձուկ որսալու մի ուրիշ տեղ գտեք, եթե ոչ... ձեզ ճամփու կդնեմ ոչ սիրալիր... Ձեր բախտն է, որ Լիզան դեռ կարող է ուղիղ նայել իմ աչքերին. ես ամբողջ օրը հետևում էի նրան... այլապես դուք այս ճանապարհով չէիք դուրս գա այստեղից... Գնաք բարո՛վ:

Ալեքսանդրն ուզում էր մի բան ասել, բայց ծերունին դուռը բացեց և գրեթե դուրս հրեց նրան:

Թե ինչ վիճակում դուրս եկավ Ալեքսանդրը, թող դատի ընթերցողը, եթե միայն չի ամաչի մի րոպե իրեն նրա տեղը դնել: Իմ հերոսի աչքերից նույնիսկ արցունքներ ցայտեցին, ամոթի, ինքն իր վրա կատաղության, հուսահատության արցունքներ...

«Ինչո՞ւ եմ ապրում,— բարձրաձայն ասաց նա:— Նողկալի՛, սպանի՛չ կյանք: Իսկ ես, ես... ո՛չ: Եթե ես հաստատակամություն չունեցա գայթակղությանը դիմադրելու... ապա ուժ կունենամ վերջ տալու այս անօգուտ, խայտառակ գոյությանը...»

Նա արագ քայլերով մոտեցավ գետակին: Այն սև էր: Ալիքների վրայով սահում էին ինչ-որ երկար, ֆանտաստիկ, այլանդակ ստվերներ: Այն ափը, որտեղ կանգնած էր Ալեքսանդրը, ծանծաղ էր:

— Այստեղ մեռնել էլ չի կարելի,— ասաց նա արհամարհանքով և գնաց դեպի կամուրջը, որն այդտեղից հարյուր քայլ էր հեռու: Ալեքսանդրը կամրջի մեջտեղում հենվեց ճաղաշարին և սկսեց նայել ջրին: Նա մտովի հրաժեշտ էր տալիս կյանքին, իր հառաչանքներն էր ուղարկում մորը, օրհնում էր մորաքրոջը, նույնիսկ ներեց Նադինկային: Խանդաղատանքի արցունքները հոսում էին նրա այտերի վրայով... Նա դեմքը ծածկեց ձեռքերով... Հայտնի չէ, թե նա ինչ պիտի աներ, երբ հանկարծ կամուրջը երերաց նրա ոտների տակ. նա շուրջը նայեց. աստվա՛ծ իմ: Նա անդունդի եզերքին է. նրա առաջ բացվում է գերեզմանը. կամրջի կեսը բաժանվել է և լողում է հեռու... անցնում են գետային բեռնանավերը. ևս մի րոպե՝ և գնաս բարո՛վ: Նա հավաքեց բոլոր ուժերը և մի հուսահատ թռիչք կատարեց... դեպի մյուս կողմը: Այնտեղ նա կանգ առավ, շունչը ետ բերեց և սիրտը բռնեց:

— Ի՞նչ է, աղա, վախեցի՞ր,— հարցրեց պահակը:

— Ի՞նչ անեմ, ախպերս, քիչ մնաց մեջտեղն ընկնեի,— դողացող ձայնով պատասխանեց Ալեքսանդրը:

— Աստվա՛ծ չանի: Մեկ էլ տեսար շառի մեջ կընկնես,— հորանջելով ասաց պահակը:— Մեկել ամառ մի նավարար էտենց էլ ընկավ:

Ալեքսանդրը տուն գնաց, ձեռքը սրտին սեղմած: Նա ժամանակ առ ժամանակ ետ էր նայում գետին, բացած կամրջին և, ցնցվելով, անմիջապես շրջվում էր ու քայլերն արագացնում:

Մինչդեռ Լիզան կոկետաբար հագնվում էր, իր հետ չէր վերցնում ոչ հորը, ոչ դայակին և ամեն իրիկուն մինչև ուշ գիշեր նստում էր ծառի տակ:

Սկսվեցին մութ գիշերները. Լիզան շարունակ սպասում էր, բայց բարեկամներից ոչ մի լուր:

Եկավ աշունը: Դեղին տերևները թափվում էին ծառերից և ծածկում ափերը. կանաչը խամրեց. գետը կապարի գույն ստացավ. երկինքը շարունակ գորշ էր. փչում էր անձրևախառն ցուրտ քամի. գետափերն ու գետերը ամայացան. ափերին չէին լսվում ոչ ուրախ երգեր, ոչ ծիծաղ, ոչ զրնգուն ձայներ. նավակներն ու բեռնանավերը դադարեցին դես-դեն լողալուց: Ոչ մի միջատ չէր բզզում խոտերում, ոչ մի թռչնակ չէր ճռվողում ծառերին. միայն սերմնաքաղերն ու ագռավները իրենց կռինչով վիատություն էին բերում մարդու հոգուն. ձուկն էլ այլևս չէր խփում:

Իսկ Լիզան շարունակ սպասում էր. նրան անպայման պետք էր խոսել Ալեքսանդրի հետ. հայտնել իր գաղտնիքը: Նա կուրտիկը հագին շարունակ նստում էր ծառի տակ, նստարանին: Նա նիհարել էր, աչքերը մի քիչ փոս էին ընկել, այտերը փաթաթած էին գլխաշորով: Այդպես գտավ նրան մի անգամ հայրը:

— Գնանք, բավական է այստեղ նստես,— ասաց նա, կնճռոտվելով ու ցրտից դողալով,— տես, ձեռներդ կապտել են. դու սառել ես, Լիզա, լսո՞ւմ ես: Գնանք:

— Ո՞ւր:

— Տուն. մենք այսօր փոխադրվում ենք քաղաք:

— Ինչո՞ւ,— զարմանքով հարցրեց նա:

— Ինչպե՞ս թե ինչու: Աշուն է. մենակ մենք ենք մնացել ամառանոցում:

— Ախ, աստվա՜ծ իմ,— ասաց աղջիկը:— Այստեղ ձմեռն էլ լավ կլինի, մնանք:

— Այ թե բան ես մտածել: Հերիք է, հերիք, գնանք:

— Սպասեցեք,— ասաց Լիզան աղերսագին:— Դեռ կվերադառնան գեղեցիկ օրերը:

— Լսիր,— պատասխանեց հայրը, փայփայելով աղջկա այտը և ցույց տալով այն տեղը, որտեղ բարեկամները ձուկ էին որսում:— Նրանք չեն վերադառնա:

— Չե՞ն... վերադառնա,— կրկնեց Լիզան հարցական, տխուր ձայնով, հետո ձեռքը տվեց հորը և լռիկ, գլխահակ, տուն գնաց, երբեմնակի ետ նայելով:

Իսկ Ադուևն ու Կոստյակովը վաղուց արդեն ձուկ էին որսում ուր-որ հակառակ կողմում:

V

Կամաց-կամաց Ալեքսանդրը մոռացավ թե Լիզային, թե տհաճ տեսարանը նրա հոր հետ: Նա նորից դարձավ հանդարտ, նույնիսկ զվարթ, հաճախ հռհռում էր Կոստյակովի տափակ կատակներից: Նրա ծիծաղը բերում էր այդ մարդու հայացքը կյանքի նկատմամբ: Նրանք նույնիսկ ծրագրեր էին կազմում մեկնել մի ավելի հեռու տեղ, գետի ափին մի խրճիթ կառուցել և մնացած օրերն այնտեղ ապրել: Ալեքսանդրի հոգին նորից սկսեց թաղվել աղքատիկ հասկացությունների և նյութական կենցաղի տիղմի մեջ: Բայց ճակատագիրը քնած չէր, և նրան չէր հաջողվում բոլորովին թաղվել այդ տիղմի մեջ:

Աշնանը նա հորեղբոր կնոջից մի երկտող ստացավ, որով թախանձագին խնդրում էր ուղեկցել իրեն համերգ, որովհետև հորեղբայրը այնքան էլ առողջ չէր: Ինչ-որ դերասան էր ժամանել, եվրոպական հռչակավոր դեմք:

— Ինչպես, համերգի՜,— ասում էր Ալեքսանդրը սաստիկ տագնապով:— Համերգի, նորից այդ ամբոխի մեջ, կեղծ փայլի, ստի, կեղծիքի մեջ... ոչ, չեմ գնա:

— Հլա ով գիտի՝ հինգ մանեթ արժենա,— նկատեց Կոստյակովը, որ այդտեղ էր.

— Տոմսը տասնհինգ ռուբլի արժի,— ասաց Ալեքսանդրը,— բայց ես սիրով հիսուն կտայի, որպեսզի չգնայի:

— Տասնիհ՛նգ,— բղավեց Կոստյակովը, ձեռքերն իրար խփելով,— ա՛յ քեզ խաբեբաներ, անիծվածնե՛ր: Գալիս են էստեղ մեզ խաբելու, փողերը թալանելու: Անիծած ձրիակերնե՛ր: Մի՛ գնացեք, Ալեքսանդր Ֆյոդորիչ, թքեցեք: Ուրիշ բան, թե որ մի առարկա լիներ, տուն բերեիր, սեղանին դնեիր կամ ուտեիր. թե չէ, ականջ արիր ու ա՛ռ քեզ. վճարիր տասնհինգ մանեթ: Տասնհինգ մանեթի մի քուռակ կարելի է գնել:

— Երբեմն, որպեսզի երեկոն հաճելի անցկացնեն, վճարում են ավելի թանկ,— նկատեց Ալեքսանդրը:

— Երեկոն հաճելի՛ անցկացնել: Գիտե՞ք ինչ, գնանք բաղնիք, հրաշալի կանցկացնենք: Ամեն անգամ, որ տխրում եմ, գնում եմ բաղնիք և քեֆս գալիս է. ժամը վեցին գնում ես, էնտեղից դուրս ես գալիս տասներկուսի մոտ, համ տաքանում ես, համ մարմինդ քորում, երբեմն էլ հաճելի ծանոթություն ես սկսում. գալիս է մի հոգևոր անձ կամ վաճառական, կամ սպա. խոսք են բացում կամ առևտրի մասին, կամ աշխարհքի վերջի... դուրս չէի գա էնտեղից: Եվ ընդամենը մարդուց վաթսուն կոպեկ: Չգիտեն, թե որտեղ պետք է երեկոն անցկացնել:

Բայց Ալեքսանդրը գնաց: Նա հոգոց հանելով դուրս քաշեց վաղուց չհագած, անցյալ տարվա ֆրակը, ձեռքերին քաշեց սպիտակ ձեռնոցներ:

— Ձեռնոցները հինգ մանեթ, ընդամենը քսա՞ն,— հաշվում էր Կոստյակովը, որ ներկա էր Ալեքսանդրի հագնվելուն:— Քսան մանեթը հենց էնպես, մի իրիկվա մեջ դուրս նետեցիք: Մարդ իմանա՝ զարմա՞նք բան է: Ալեքսանդրը ետ էր վարժվել կանոնավոր հագնվելուց:

Առավոտյան նա ծառայության էր գնում հանգստավետ փոխհամազգեստով, երեկոյան՝ հին սերթուկով կամ վերարկուով: Նա ֆրակով անհարմար էր զգում. մի տեղ սեղմում էր, մի տեղ մի բան պակաս էր. վիզը խիստ շոգում էր աթլասե թաշկինակից:

Հորեղբոր կինը նրան դիմավորեց շնորհակալության զգացմունքով, որ Ալեքսանդրը վճռել էր նրա համար թողնել իր ճգնավորությունը, բայց ոչ մի խոսք նրա ապրելակերպի և զբաղմունքների մասին:

Դահլիճում տեղ գտնելով Լիզավետա Ալեքսանդրովնայի համար, Ադուևը հենվեց սյունին, մի ինչ-որ թիկնեղ երաժշտամոլի հովանու տակ, և սկսեց ձանձրանալ: Նա կամացուկ հորանջեց թևքի մեջ, բայց դեռ բերանը չէր փակել, երբ հնչեցին արտիստին ողջունելու խլացուցիչ ծափահարություններ: Ալեքսանդրը նույնիսկ չնայեց նրան:

Սկսեցին նվագել նախերգանքը: Մի քանի րոպեից հետո նվագախումբն սկսեց հանդարտվել: Նրա վերջին հնչյուններին կպան հազիվ լսելի այլ հնչյուններ, սկզբում աշխույժ, խաղացիկ, որ կարծես հիշեցնում էին մանկության խաղերը. լսվեցին կարծես մանկական ձայներ, աղմկալի, ուրախ. հետո հնչյունները դարձան ավելի սահուն, առնական. նրանք, կարծես արտահայտում էին պատանեկան անհոգություն, խիզախություն, կյանքի և ուժերի հավելուրդ: Հետո հոսեցին ավելի դանդաղ, կամացուկ, կարծես հաղորդում էին սիրո քնքուշ զեղումները, սրտալի խոսակցություն, և, կամաց-կամաց թուլանալով, դարձան կրքոտ շշունջ և աննշմարելի լռեցին...

Ոչ ոք չհամարձակվեց շարժվել: Մարդկանց զանգվածը լուռ քարացել էր: Վերջապես բոլորի բերանից մի միահամուռ ա՛խ դուրս թռավ և շշուկով տարածվեց դահլիճում: Ամբոխն սկսեց շարժվել, բայց հանկարծ հնչյունները նորից արթնացան, հոսեցին crescendo */Ուժեղանալով (իտալ.)։/,* հորձանքով, հետո փշրվեցին հազարավոր կասկադների և ցատկոտեցին, նեղելով ու ճնշելով իրար: Նրանք որոտում էին կարծես խանդի կշտամբանքներով, եռում էին կրքի կատաղությամբ. ականջը չէր հասցնում որսալ դրանք, և հանկարծ ընդհատվեցին, կարծես նվագագործիքը այլևս ոչ ուժ ուներ, ոչ ձայն: Աղեղի տակից սկսեց դուրս պոռթկալ մերթ մի խուլ ընդհատ հառաչ, մերթ լսվում էին լացող, թախանձող հնչյուններ, և ամեն ինչ վերջացավ մի ցավագին, երկարատև հոգոցով: Մարդու սիրտը կտոր-կտոր էր լինում. հնչյունները կարծես երգում էին խաբված սիրո և անհույս թախծի մասին: Նրանց մեջ լսվում էին մարդկային հոգու բոլոր տառապանքները, ամբողջ վիշտը:

Ալեքսանդրը հուզմունքից դողում էր: Նա գլուխը բարձրացրեց և արցունքի միջից նայեց հարևանի ուսի վրայով: Նիհարիկ գերմանացին իր գործիքի վրա խոնարհված, կանգնել էր ամբոխի առաջ և հզորազոր իշխում էր նրան:

Նա վերջացրեց և թաշկինակով անտարբեր սրբեց ձեռքերն ու ճակատը: Դահլիճը որոտաց ու թնդաց ահռելի ծափահարությունից: Եվ հանկարծ այդ արտիստը իր հերթին խոնարհվեց ամբոխի առաջ ու սկսեց ստորացած գլուխ տալ և շնորհակալություն հայտնել:

«Եվ նա խոնարհվում է ամբոխի առաջ,— մտածում էր Ալեքսանդրը, երկչոտությամբ նայելով այդ հազարագլուխ հիդրային,— նա, որ այնքան բարձր է կանգնած ամբոխից...»:

Արտիստը բարձրացրեց ջութակի աղեղը, և վայրկենապես ամեն ինչ լռեց: Երերալ սկսած ամբոխը նորից ձուլվեց որպես մի անշարժ մարմին: Հոսեցին այլ հնչյուններ, վեհ, հանդիսավոր. այդ հնչյուններից ունկնդրի մեջքն ուղղվում էր, գլուխը բարձրանում, քիթը վեր ցցվում. նրանք մարդու սրտում արթնացնում էին հպարտություն, երազանքներ փառքի մասին: Նվագախումբն սկսեց խուլ ձայնակցել, կարծես ամբոխի հեռավոր աղմուկ, ինչպես ժողովրդական խոսակցություն...

Ալեքսանդրը գունատվել էր և գլուխը կախել: Այդ հնչյունները, կարծես դիտմամբ, հասկանալի պատմում էին նրան անցյալը, նրա ողջ կյանքը, դառն ու խաբված:

— Սրա տեսքի՞ն նայիր,— ասաց ինչ-որ մեկը, ցույց տալով Ալեքսանդրին:— Չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի է այդպես դրսևորել իրեն. ես Պագանինիին եմ լսել, բայց հոնքս էլ չի շարժվել:

Ալեքսանդրն անիծում էր և հորեղբոր կնոջ հրավերը, և արտիստին, իսկ ամենից ավելի ճակատագրին, որ թույլ չի տալիս իրեն մոռացության մեջ ընկնել:

«Եվ ինչի՞ համար: Ի՞նչ նպատակով,— մտածում էր նա,— ի՞նչ է ուզում ինձնից: Ի՞նչ կարիք կա ինձ հիշեցնելու իմ անզորությունը, անօգուտ անցյալը, որը չես վերադարձնի»:

Հորեղբոր կնոջը մինչև տուն ուղեկցելով, նա ուզում էր գնալ իր տուն, բայց Լիզավետա Ալեքսանդրովնան նրան պահեց, ձեռքից բռնելով:

— Մի՞թե ներս չեք մտնի,— հարցրեց նա կշտամբանքով:

— Ոչ:

— Ինչո՞ւ:

— Հիմա արդեն ուշ է. մի ուրիշ անգամ:

— Եվ այդ ի՞նձ եք մերժում:

— Ձեզ առավել, քան որևէ մեկի:

— Այդ ինչո՞ւ:

— Ասելը երկար կլինի: Մնաք բարով:

— Կես ժամ, Ալեքսանդր, լսո՞ւմ եք: Ոչ ավելի: Եթե մերժեք, նշանակում է երբեք մազաչափ անգամ բարեկամություն չեք ունեցել իմ նկատմամբ:

Նա խնդրում էր այնպիսի զգացմունքով, այնպես համոզկեր, որ Ալեքսանդրը սիրտ չարեց մերժելու, և գնաց նրա հետևից, գլուխը կախ: Պյոտր Իվանիչը իր առանձնասենյակում էր:

— Մի՞թե ձեր կողմից միայն քամահրանքի եմ արժանի, Ալեքսանդր,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան, նրան նստեցնելով բուխարու մոտ:

— Դուք սխալվում եք. սա քամահրանք չէ,— պատասխանեց նա:

— Հապա ի՞նչ է նշանակում սա: Ի՞նչ անուն տամ դրան. քանի անգամ եմ գրել ձեզ, կանչել ինձ մոտ, չեք եկել, վերջապես դադարեցիք տոմսակներիս պատասխանել:

— Դա քամահրանք չէ…

— Հապա ի՞նչ է:

— Այնպես,— ասաց Ալեքսանդրը և հառաչեց:— Մնաք բարով, ma tante!

— Սպասեցեք: Ես ձեզ ի՞նչ եմ արել: Ձեզ ի՞նչ է պատահել, Ալեքսանդր: Ինչո՞ւ եք այդպես: Ինչո՞ւ եք անտարբեր դեպի ամեն ինչ, ոչ մի տեղ չեք գնում, ապրում եք ձեզ անհամապատասխան միջավայրում:

— Հենց այնպես, ma tante. այդ ապրելակերպը ինձ դուր է գալիս. այդպես ապրելը հանգիստ է, լավ. դա իմ սրտովն է...

— Ձեր սրտո՞վն է: Դուք մտքի ու սրտի համար սնունդ եք գտնում այդպիսի կյանքում, այդպիսի մարդկանց հե՞տ:

Ալեքսանդրը գլխով արավ:

— Դուք կեղծում եք, Ալեքսանդր. դուք ինչ-որ բանից խիստ դառնացած եք և լռում եք: Մի ժամանակ, առաջ, դուք գտնում էիք մեկին, որին, վստահում էիք ձեր վիշտը. դուք գիտեիք, որ միշտ կգտնեիք մխիթարություն կամ գոնե կարեկցություն. իսկ հիմա մի՞թե ոչ ոք չունեք:

— Ոչ ոք...

— Ոչ ոքի՞ չեք հավատում:

— Ոչ ոքի:

— Մի՞թե երբեմն չեք մտաբերում ձեր մայրիկին... Նրա սերը դեպի ձեզ... փաղաքշանքները... Մի՞թե ձեր մտքով չի անցել, որ, գուցե, այստեղ էլ որևէ մեկը սիրում է ձեզ, եթե ոչ այնպես, ինչպես նա, ապա գոնե ինչպես քույր կամ, ավելի շուտ, ինչպես բարեկամ:

— Մնաք բարով, ma tante,— ասաց Ալեքսանդրը:

— Գնաք բարով, Ալեքսանդր, ես ձեզ այլևս չեմ պահում,— պատասխանեց հորեղբոր կինը: Նրա աչքերին արցունքներ երևացին:

Ալեքսանդրը գլխարկը վերցրեց, բայց հետո տեղը դրեց և նայեց Լիզավետա Ալեքսանդրովնային:

— Ոչ, չեմ կարող ձեզանից փախչել, ուժս չի պատում,— ասաց նա:— Ի՞նչ եք անում ինձ հետ:

— Նորից եղեք առաջվա Ալեքսանդրը, գոնե մի րոպեով: Պատմեցեք, վստահեցեք ինձ ամեն բան...

— Այո, ես չեմ կարող լռել ձեր առաջ. ամեն բան կասեմ ձեզ, ինչ որ կա սրտումս,— ասաց նա:— Դուք հարցնում եք, թե ինչու եմ թաքնվում մարդկանցից, ինչու անտարբեր եմ ամեն բանի նկատմամբ, ինչու չեմ տեսնվում նույնիսկ ձեզ հետ... Ինչո՞ւ: Գիտցեք ուրեմն, որ կյանքը վաղուց զզվեցրել է ինձ, և ես ընտրել եմ այնպիսի կենցաղ, որտեղ կյանքը պակաս նկատելի է: Ես ոչինչ չեմ ուզում, չեմ որոնում, բացի հոգու անդորրից, քնից: Ես ճաշակեցի կյանքի ողջ դատարկությունն ու չնչինությունը և խորապես արհամարհում եմ այն: **Ով գիտե, խորհել, փորձ ունի կյանքի, նա չարհամարհել չի կարող մարդկանց:** Գործունեությունը, չարչարանքը, հոգսերը, զվարճությունը՝ ամեն ինչ ձանձրալի է ինձ: Ես ոչինչ չեմ ուզում ձեռք բերել և որոնել. ես նպատակ չունեմ, որովհետև ինչին որ ձգտես՝ կհասնես, և կտեսնես, որ ամեն ինչ ուրու է: Ինձ համար ուրախություններն անցել են, ես սառել եմ դրանց նկատմամբ: Կրթված աշխարհում, մարդկանց հետ, ես ավելի ուժեղ եմ զգում կյանքի անշահությունը, իսկ առանձնացած, մենակ, ամբոխից հեռու, ես փայտացել եմ. այն նիրհի մեջ, ինչ ուզում է պատահի, ես չեմ նկատում ոչ մարդկանց, ոչ ինքս ինձ: Ես ոչինչ չեմ անում և չեմ տեսնում ոչ ուրիշների, ոչ իմ արարքները, և հանգիստ եմ...

ինձ համար միևնույն է. երջանկություն չի կարող լինել, իսկ դժբախտությունը ինձ վրա տպավորություն չի գործի...

— Դա սարսափելի է, Ալեքսանդր,— ասաց հորեղբոր կինը:— Այդ տարիքում այդպիսի սառեցում դեպի ամեն ինչ…

— Ինչո՞ւ եք զարմանում, ma tante: Մի որպե բաժանվեցեք այն նեղ հորիզոնից, որի մեջ շրջափակված եք, նայեցեք կյանքին, աշխարհին. ի՞նչ է դա... ինչ որ երեկ վեհ էր, այսօր չնչին է. ինչ երեկ ուզում էիր, այսօր չես ուզում, երեկվա բարեկամդ այսօր թշնամի է: Արժի՞ արդյոք գլուխ ցավացնել մի բանի համար, սիրել, կապվել, խռովել, հաշտվել, մի խոսքով՝ ապրել: Ավելի լավ չէ՞ քնել և մտքով, և սրտով: Ես էլ հենց քնում եմ, դրա համար էլ չեմ գնում ոչ մի տեղ և հատկապես ձեզ մոտ… Ես բոլորովին քնել էի, իսկ դուք արթնացնում եք և միտքս, և սիրտս ու դրանք նորից հրում եք հորձանուտը: Եթե ուզում եք ինձ տեսնել ուրախ, առողջ, գուցե՝ ողջ, նույնիսկ, թերևս, ըստ հորեղբորս հասկացությունների՝ երջանիկ, թողեք ինձ այնտեղ, որտեղ հիմա գտնվում եմ: Թողեք խաղաղվեն այդ հույզերը. թողեք երազանքները հանդարտվեն, թող միտքս բոլորովին կաշկանդվի, սիրտս քարանա, աչքերս ետ վարժվեն արցունքներից, շրթունքներս՝ ժպտալուց, և այն ժամանակ, մի տարուց, երկու տարուց հետո ես կգամ ձեզ մոտ բոլորովին պատրաստ ամեն մի փորձության. այն ժամանակ չեք արթնացնի, որքան էլ ջանաք, իսկ հիմա...

Նա մի հուսահատական շարժում կատարեց:

— Տեսեք, Ալեքսանդր,— աշխուժորեն ընդհատեց հորեղբոր կինը,— դուք մի որպեում փոխվեցիք. ձեր աչքերին արցունք կա. դուք դեռ նույնն եք. ուրեմն մի ձևացրեք, մի զսպեք զգացմունքը, ազատություն տվեք նրան...

— Ինչո՞ւ: Դրանից հո ավելի լավ չե՞մ դառնա: Միայն ավելի սաստիկ կտանջվեմ: Այսօրվա երեկոն ինձ ոչնչացրեց սեփական աչքումս: Ես պարզ հասկացա, որ իրավունք չունեմ ոչ ոքի մեղադրելու իմ թախծի համար: Ես ինքս եմ խորտակել իմ կյանքը: Ես երազում էի փառքի մասին, աստված գիտե, թե ինչից ելնելով, և արհամարհեցի իմ գործը. ես փչացրի իմ համեստ կոչումը և հիմա անցյալը չեմ ուղղի. ուշ է: Ես փախչում էի ամբոխից, արհամարհում էի նրան, իսկ այդ գերմանացին իր խորունկ, ուժեղ հոգով, բանաստեղծական նատուրայով, չի հրաժարվել աշխարհից և չի փախչում ամբոխից, նա հպարտանում է նրա ծափահարություններից. նա հասկանում է, որ ինքը հազիվ նկատելի մի օղակ է մարդկության անվերջանալի շղթայում. նա էլ գիտի այն ամենը, ինչ որ ես. նրան ծանոթ է տառապանքը... Նա իմ մեջ արթնացրեց այն դառն գիտակցությունը, որ ես հպարտ եմ և... անզոր: Ախ, ինչո՞ւ կանչեցիք ինձ: Մնաք բարով, թողեք ինձ:

— Ես ինչո՞վ եմ մեղավոր, Ալեքսանդր: Մի՞թե ես կարող էի ձեր մեջ դառն զգացմունք արթնացնել, ես...

— Ահա դժբախտությունն էլ հենց այդ է: Ձեր հրեշտակային, բարի դեմքը, ma tante, հեզ խոսքերը, ձեռքի բարեկամական հպումը, այդ բոլորը հուզում ու խռովում է ինձ. ես նորից ուզում եմ լացել, ուզում եմ ապրել, տանջվել... իսկ ինչո՞ւ:

— Ինչպե՞ս թե ինչու: Մնացեք միշտ մեզ հետ. և եթե ինձ համարում եք գոնե մի քիչ ձեր բարեկամությանը արժանի, նշանակում է, դուք մխիթարություն կգտնեք և մի ուրիշ կնոջ մոտ. միայն ես չեմ այսպես... ձեզ կգնահատեն:

— Հա՛: Դուք կարծում եք, դա միշտ կմխիթարի՞ ինձ: Կարծում եք, կհավատա՞մ այս որպեական խանդաղատանքին: Դուք, իրոք, կին եք բառի ազնվագույն իմաստով. դուք ստեղծված եք հուրախություն, ի երջանկություն տղամարդու. բայց կարելի՞ է հույս ունենալ այդպիսի երջանկության: Կարելի՞ է երաշխավորել, որ նա հաստատուն է, որ այսօր, վաղը ճակատագիրը հիմնիվեր շուռ չի տա այդ երջանիկ կյանքը. ահա մի հարց: Կարելի՞ է հավատալ որևէ բանի և որևէ մեկի, նույնիսկ ինքն իրեն: Ավելի լավ չէ՞ ապրել առանց մի հույսի և հուզումների, ոչինչ չսպասել, ուրախություններ չորոնել և, հետևաբար, չողբալ կորուստները…

— Ոչ մի տեղ ճակատագրից չեք խուսափի, Ալեքսանդր, այնտեղ էլ, որտեղ գտնվում եք այժմ, նա շարունակ կհետապնդի ձեզ...

— Այո, ճիշտ է. միայն թե այնտեղ ճակատագիրը ոչնչի վրա չի կարող զվարճանալ. ավելի շատ ես եմ զվարճանում ճակատագրի վրա. մեկ էլ տեսար՝ կամ ձուկն է պոկվում կարթից, երբ արդեն ձեռքդ մեկնել ես այն բռնելու, կամ անձրև է գալիս, երբ պատրաստվել ես քաղաքից դուրս գալու, կամ եղանակը լավ է, ինքս չեմ ուզում... և ծիծաղելի է...

Լիզավետա Ալեքսանդրովնային այլևս բան չէր մնում առարկելու:

— Ամուսնացեք… կսիրեք...— ասաց նա անվճռական:

— Ամուսնանա՜մ: Այդ էր պակաս: Մի՞թե կարծում եք, որ իմ երջանկությունը կվստահեմ մի կնոջ, եթե անգամ սիրեի նրան, մի բան, որ նույնպես չի կարող պատահել: Կամ մի՞թե կարծում եք, որ հանձն կառնեի երջանկացնել մի կնոջ: Ոչ, ես գիտեմ, որ մենք կխաբենք իրար և երկուսս էլ կխաբվենք: Պյոտր Իվանիչ հորեղբայրս և փորձը ինձ սովորեցրել են...

— Պյոտր Իվա՜նիչը: Այո, նա շատ մեղավոր է,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան հոգոց հանելով:— Բայց դուք իրավունք ունեիք չլսելու նրան... և երջանիկ կլինեիք ամուսնական կյանքում...

— Այո, գյուղում, իհարկե. իսկ հիմա… Ոչ, ma tante, ամուսնությունն ինձ համար չէ: Ես հիմա չեմ կարող կեղծել, երբ դադարեմ սիրելուց, և կդադարեմ երջանիկ լինելուց. չեմ կարող նաև չտեսնել, երբ կինս կեղծի. երկուսս էլ կսկսենք խորամանկություն բանեցնել, ինչպես խորամանկություն եք բանեցնում... օրինակ, դուք և հորեղբայրս...

— Մե՞նք,— զարմացած ու վախեցած հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Այո, դուք: Ասացեք, խնդրեմ, արդյոք այնպե՞ս երջանիկ եք, ինչպես երազում էիք մի ժամանակ:

— Ոչ այնպես, ինչպես երազում էի... բայց երջանիկ եմ այլ կերպ, քան երազում էի, ավելի խելացիորեն, կարող է պատահել՝ ավելի շատ, դա միևնույն չէ՞...— շփոթված պատասխանեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Դուք նույնպես…

— Ավելի խելացիորե՞ն: Ախ, ma tante, դո՛ւք չասեիք այդ. ուղղակի հորեղբորս խոսքերն են: Գիտեմ ես այդ երջանկությունը ըստ նրա մեթոդի. այդպես ավելի խելացիորեն է, բայց արդյո՞ք ավելի շատ է: Չէ՞ որ նրա մոտ ամեն ինչ երջանկություն է, դժբախտություն չկա: Աստված նրա հետ: Ոչ: Իմ կյանքն սպառված է. ես հոգնել, բեզարել եմ ապրելուց...

Երկուսն էլ լռեցին: Ալեքսանդրը նայում էր գլխարկին, հորեղբոր կինը միտք էր անում, թե էլի ինչով կարող է նրան ետ պահել:

— Իսկ տաղա՜նդը,— հանկարծ ասաց նա աշխույժով:

— Է, ma tante: Հավա՜ս ունեք վրաս ծիծաղելու: Մոռացել եք ռուսական առածը. **ընկածին չեն ծեծի:** Ես տաղանդ չունեմ, վճռականապես չունեմ: Ես ունեմ զգացմունք, ունեի տաք գլուխ. երազանքներս ստեղծագործության տեղ էի դրել և ստեղծագործում էի: Դեռ վերջերս ես որոշ բաներ գտա հին մեղքերիցս, կարդացի և հենց իմ ծիծաղը եկավ: Հորեղբայրս իրավացի է, որ հարկադրեց վառել ինչ որ կար: Ախ, եթե կարողանայի վերադարձնել անցյալը: Այսպես չէի տնօրինի այն:

— Մի՛ հիասթափվեք մինչև վերջ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Մեզնից յուրաքանչյուրին ծանր խաչ է ուղարկված...

— Այդ ո՞ւմ է խաչ ուղարկված,— հարցրեց Պյոտր Իվանիչը, սենյակ մտնելով:— Բարև, Ալեքսանդր: Քե՞զ:

Պյոտր Իվանիչը կքվել էր և քայլում էր ոտները հազիվ փոխելով:

— Միայն թե ոչ այնպիսի, ինչպես դու կարծում ես,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— ես խոսում եմ ծանր խաչի մասին, որ կրում է Ալեքսանդրը...

— Էլ ի՞նչ է կրում,— հարցրեց Պյոտր Իվանիչը, մեծագույն զգուշությամբ ընկղմվելով բազկաթոռի մեջ:— Օխ, ի՜նչ ցավ է: Այս ի՜նչ պատիժ է:

Լիզավետա Ալեքսանդրովնան օգնեց նրան, որ նստի, կռնակի հետև բարձ դրեց, ոտների տակ՝ փոքրիկ աթոռակ:

— Ձեզ ի՞նչ է պատահել, հորեղբայր,— հարցրեց Ալեքսանդրը:

— Տեսնում ես. ծանր խաչ եմ կրում: Վա՜խ, մե՜ջքս: Ահա խաչ է որ կա. վերջը կարողացա՜ հասնել սրան: Օ՜խ, աստվա՜ծ իմ:

— Քեզ ո՞վ էր ասում այդքան նստեիր. դու գիտես այստեղի կլիման,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— բժիշկը պատվիրել է շատ քայլել, բայց չէ. առավոտը գրում է, իրիկունը թուղթ խաղում:

— Ի՞նչ պիտի բերանս բաց փողոցներում ման գամ և ժամանակ կորցնեմ:

— Դրա համար էլ պատժված ես:

— Դրանից այստեղ չես խուսափի, եթե ուզում ես գործով զբաղվել: Ո՞ւմ մեջքը չի ցավում: Դա գրեթե ամեն մի գործարար մարդու համար տարբերանշանի պես մի բան է... Օխ, մեջքս շտկել չի լինում: Է, ի՞նչ ես անում, Ալեքսանդր:

— Էլի նույնը, ինչ որ առաջ:

— Հա՜: Դե, ուրեմն քո մեջքը չի ցավի: Իսկապես, դա զարմանալի է:

— Ինչո՞ւ ես զարմանում. դու ինքդ չե՞ս մեղավոր մասամբ, որ նա այսպես է դարձել...— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ե՞ս: Դա ինձ դո՜ւր է գալիս: Ես վարժեցրել եմ նրան ոչինչ չանե՜լ:

— Ճիշտ է, հորեղբայր, դուք զարմանալու բան չունեք,— ասաց Ալեքսանդրը.— դուք շատ եք օգնել հանգամանքներին ինձ դարձնել այն, ինչ որ հիմա եմ. բայց ես ձեզ չեմ մեղադրում: Ես ինքս եմ մեղավոր, որ չէի իմանում կամ, ավելի լավ է ասել՝ չէի կարողանում ինչպես հարկն է օգտվել ձեր դասերից, որովհետև պատրաստված չէի դրանց: Դուք, գուցե, մասամբ մեղավոր եք նրանով, որ միանգամից հասկացաք իմ բնությունը և, չնայած դրան, ուզում էիք վերամշակել այն. դուք, որպես փորձված մարդ, պետք է տեսնեիք, որ դա անհնար է... դուք իմ մեջ հրահրեցիք կյանքի նկատմամբ երկու տարբեր հայացքների պայքար և չէիք կարող դրանք հաշտեցնել. ի՞նչ դուրս եկավ: Իմ մեջ ամեն ինչ վերածվեց կասկածի, ինչ-որ քաոսի:

— Ախ, մե՜ջքս,— հառաչում էր Պյոտր Իվանիչը:— Քաո՞ս: Դե, հենց քաոսից ես ուզում էի մի բան ստեղծել:

— Այո: Բայց ի՞նչ արիք: Կյանքը ինձ ներկայացրիք ամենաայլանդակ մերկությամբ և ի՜նչ տարիքում, երբ ես պետք է այն հասկանայի միայն լուսավոր կողմից:

— Այսինքն՝ ես աշխատում էի կյանքը քեզ ներկայացնել ինչպես նա կա, որպեսզի գլուխդ չմտցնեիր ինչ որ չկա: Ես հիշում եմ, թե ինչ կտրիճի պես էիր եկել գյուղից. չէ՞ որ պետք էր քեզ զգուշացնել, որ այստեղ չի կարելի այդպիսին լինել: Ես քեզ զգուշացրել եմ, գուցե, շատ սխալներից ու հիմարություններից, եթե ես չլինեի, դեռ ինչքա՜ն հիմարություններ կանեիր:

— Կարող է պատահել: Միայն թե դուք մի բան եք աչքաթող արել, հորեղբայր, երջանկությունը: Դուք մոռացել եք, որ մարդը երջանիկ է մոլորություններով, երազանքներով ու հույսերով. իրականությունը չի երջանկացնում...

— Ի՜նչ տարօրինակ բաներ ես դուրս տալիս: Այդ կարծիքը դու բերել ես ուղղակի ասիական սահմանից: Եվրոպայում վաղուց են դադարել դրան հավատալուց: Երազանքները, խաղալիքները, խաբեությունը՝ այդ բոլորը սազական են կանանց ու երեխաներին, իսկ տղամարդը պետք է գործն իմանա այնպես, ինչպես նա կա: Քո կարծիքով դա ավելի վա՞տ է, քան խաբվելը:

— Այո, հորեղբայր, ինչ էլ ասեք, բայց երջանկությունը հյուսված է պատրանքներից, հույսերից, դեպի մարդիկ ունեցած դյուրահավատությունից, իր նկատմամբ ունեցած հավատից, հետո սիրուց, բարեկամությունից... իսկ դուք ինձ պնդում էիք, թե սերը ցնդաբանություն է, դատարկ զգացմունք, որ ավելի հեշտ և նույնիսկ ավելի լավ է առանց դրան ապրել. որ կրքոտ սիրով սիրելը մեծ արժանիք չէ, որ դրանով չես գերազանցի անասունին…

— Բայց դու հիշիր, թե ինչպես էիր ուզում սիրել. հորինում էիր վատ բանաստեղծություններ, խոսում էիր օտարոտի լեզվով, այնպես որ մահու չափ ձանձրացրիր քո այդ... Գրյունա՞ էր, թե ինչ էր: Մի՞թե դրանով են կապում կնոջն իրեն:

— Հապա ինչո՞վ,— չոր-չոր հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան ամուսնուն:

— Օ՜խ, ինչպե՜ս է ծակում մեջքս,— հառաչեց Պյոտր Իվանիչը:

— Հետո դուք պնդում էիք,— շարունակեց Ալեքսանդրը,— որ խորունկ, համակրանքով լի կապվածություն չկա, այլ կա միայն սովորություն…

Լիզավետա Ալեքսանդրովնան լուռ և խորունկ նայեց ամուսնուն:

— Այսինքն՝ ես, գիտե՞ս ինչ, ես քեզ ասում էի նրա համար... որպեսզի... դու... էնիքը... օյ, օյ մե՜ջքս:

— Եվ դուք այդ ասում էիք,— շարունակեց Ալեքսանդրը,— քսանամյա մի տղեկի, որի համար սերն ամեն ինչ է, որի գործունեությունը, նպատակը, ամեն ինչ պտտվում է այդ զգացմունքի շուրջը. դրանով նա կարող է փրկվել կամ կործանվել:

— Ասես երկու հարյուր տարի առաջ ես ծնվել,— մրթմրթաց Պյոտր Իվանիչը:— Նոյի տարում պիտի ապրելիս լինեիր:

— Դուք ինձ բացատրեցիք,— ասում էր Ալեքսանդրը,— սիրո, խաբեությունների, դավաճանություն-սառեցումների տեսությունը... ինչո՞ւ: Ես այդ ամենը գիտեի առաջ, քան սկսեցի սիրել. իսկ սիրելով, ես արդեն վերլուծում էի սերը, ինչպես աշակերտն է պրոֆեսորի ղեկավարությամբ հերձում մարմինը և փոխանակ ձևերի գեղեցկության, տեսնում է միայն մկաններ, ներվեր...

— Սակայն, հիշում եմ, դա չխանգարեց, որ խելքդ թռցնեիր այդ... անունն ի՞նչ էր... Դա՞շենկայի համար... թե ինչ:

— Այո, բայց դուք չթողիք, որ ես խաբվեմ. ես Նադինկայի դավաճանության մեջ կտեսնեի դժբախտ պատահականություն և կսպասեի այնքան ժամանակ, մինչև որ այլևս սերը պետք չէր լինի, իսկ դուք անմիջապես վրա հասաք տեսությամբ և ինձ ցույց տվիք, որ դա ընդհանուր կարգ է, և ես, քսանհինգ տարեկան հասակում կորցրի հավատս երջանկության ու կյանքի նկատմամբ և հոգով ծերացա: Բարեկամությունը դուք ժխտեցիք, դա էլ սովորություն էիք անվանում. ձեզ անվանում էիք, այն էլ, հավանաբար, կատակով, իմ լավագույն բարեկամը, լոկ այն պատճառով, որ կարողացել էիք ապացուցել, որ բարեկամություն չկա:

Պյոտր Իվանիչը լսում էր և մի ձեռքով շփում մեջքը: Նա առարկում էր անփութորեն, ինչպես մի մարդ, որը, թվում է, մի խոսքով կարող է ոչնչացնել նրա վրա բարդած մեղադրանքները:

— Բարեկամությունն էլ դու լա՜վ էիր հասկանում,— ասաց նա,— դու բարեկամից ուզում էիր նույնպիսի կատակերգություն, ինչպիսին խաղացել են, ասում են, հին աշխարհում, ահա այն երկու հիմարը... անուններն ինչպե՞ս էր, որ մեկը մնում է պատանդ, մինչև նրա բարեկամը գնաց տեսնվելու... ի՞նչ կլիներ, եթե բոլորն այդպես անեին, ախր ամբողջ աշխարհը ուղղակի խելագարանոց կլիներ:

— Ես սիրում էի մարդկանց,— շարունակում էր Ալեքսանդրը,— հավատում էի նրանց արժանիքներին, հանձին նրանց տեսնում էի եղբայրների, նրանց էի պարզել ջերմ գիրկս...

— Այո, շատ հարկավո՛ր է: Հիշում եմ քո գրկերը,— ընդհատեց Պյոտր Իվանիչը,— դու այն ժամանակ դրանցով ինձ կարգին ձանձրացրել էիր:

— Իսկ դուք ինձ ցույց տվիք, թե դրանք ինչ արժեն: Նրա տեղ, որ ղեկավարեիք սիրտս կապվածության ոգով, դուք ինձ սովորեցրիք ոչ թե զգալ, այլ վերլուծել, դիտել և զգուշանալ մարդկանցից. ես մոտիկից դիտեցի նրանց ու դադարեցի սիրելուց:

— Ախր ո՛վ գիտեր քեզ: Մի տես, թե ինչ արագաշարժն ես. ես կարծում էի, թե դրանից կդառնաս ավելի ներողամիտ դեպի մարդիկ: Ահա ես ճանաչում եմ նրանց, բայց չեմ ատել...

— Իսկ ինչ, սիրո՞ւմ ես մարդկանց,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Վարժվել եմ... նրանց:

— Վարժվե՛լ ես,— կրկնեց կինը միապաղաղ:

— Նա էլ կվարժվեր,— ասաց Պյոտր Իվանիչը,— բայց նրան արդեն առաջուց խիստ փչացրել էին գյուղում մորաքույրն ու դեղին ծաղիկները, դրա համար էլ նա այսպես դանդաղ է զարգանում:

— Հետո ես հավատում էի ինքս ինձ,— նորից սկսեց Ալեքսանդրը,— դուք ցույց տվիք, որ ես ուրիշներից վատ եմ, ես ատեցի ինքս ինձ:

— Եթե գործին ավելի սառնարյուն նայեիր, ապա կտեսնեիր, որ դու ուրիշներից ոչ վատ ես, ոչ էլ լավ, այն, ինչ որ ուզում էի քեզնից, այն ժամանակ չէիր ատի ոչ ուրիշներին, ոչ քեզ, այլ միայն ավելի անտարբեր կտանեիր մարդկային հիմարությունները և ավելի ուշադիր կլինեիր քո հիմարություններին: Ես ահա գիտեմ իմ գինը, տեսնում եմ, որ լավը չեմ, բայց խոստովանում եմ, շատ եմ սիրում ինձ:

— Ա՛: Այստեղ **սիրում** ես, և ոչ թե **վարժվել** ես,— սառնորեն նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Օ՛խ, մեջքս,— թառանչեց Պյոտր Իվանիչը:

— Վերջապես դուք մի հարվածով, առանց նախազգուշացման, առանց խղճահարության կործանեցիք իմ լավագույն երազանքը. ես կարծում էի, թե իմ մեջ բանաստեղծական շնորհի մի կայծ կա. դուք դաժանորեն ապացուցեցիք ինձ, որ ես չեմ ստեղծված որպես արվեստի քուրմ. դուք ցավեցնելով դուրս կորզեցիք սրտիցս այդ փուշը, և ինձ առաջարկեցիք մի աշխատանք, որը զզվելի էր ինձ համար: Առանց ձեզ ես կգրեի…

— Եվ հայտնի կլինեիր մարդկանց որպես ապաշնորհ գրող,— ընդհատեց Պյոտր Իվանիչը:

— Ինձ ի՞նչ մարդիկ: Ես ինձ համար էի հոգ տանում, իմ անհաջողությունները ես կվերագրեի չարությանը, նախանձին, անբարյացակամությանը և կամաց-կամաց կվարժվեի այն մտքին, որ գրել հարկավոր չէ, և ինքս մի ուրիշ գործի կանցնեի: Ուրեմն ինչո՞ւ եք զարմանում, որ ամեն ինչ իմանալով, ես վհատեցի...

— Դե, ի՞նչ կասես,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Չեմ էլ ուզում խոսել. ինչպե՞ս պատասխանեմ այդ ցնդաբանությունը: Ես մեղավո՞ր եմ, որ այստեղ գալիս դու երևակայում էիր, թե այստեղ բոլոր ծաղիկները դեղին են, սեր ու բարեկամություն է. որ բոլոր մարդկանց գործն այն է, որ ոմանք բանաստեղծություն են գրում, իսկ մյուսները լսում, և միայն հազվադեպ, այնպես, զանազանության համար, ձեռնարկում են արձակի... Ես քեզ ապացուցում էի, որ առհասարակ ամենուրեք, իսկ այստեղ առանձնապես, մարդ պետք է աշխատի, և շատ աշխատի, նույնիսկ մեջքը ցավեցնելու աստիճան... դեղին ծաղիկներ չկան, կան աստիճաններ, փող. դա շատ ավելի լավ է: Ահա թե ինչ էի ուզում ապացուցել

քեզ: Ես հույսս չէի կորցնում, որ վերջապես կհասկանաս, թե ինչ է կյանքը, հատկապես այն ինչպես են հասկանում հիմա: Եվ դու հասկացար, բայց հենց տեսար, որ կյանքում քիչ կան ծաղիկներ ու բանաստեղծություն, երևակայեցիր, թե կյանքը մի մեծ սխալ է, որ դու տեսնում ես այդ, դրա համար էլ իրավունք ունես ձանձրանալու, ուրիշները չեն նկատում և դրա համար ապրում են իրենց քեֆին: Դե, ինչի՞ց ես դժգոհ: Քո ի՞նչն է պակաս: Քո փոխարեն մեկ ուրիշը կօրհներ ճակատագիրը: Ոչ կարիքը, ոչ հիվանդությունը, ոչ իսկական վիշտը քեզ չեն մոտեցել: Դու ի՞նչ չունես: Սե՞ր: Քեզ համար քի՞չ է. երկու անգամ սիրել ես և սիրված ես եղել: Քեզ դավաճանել են, դու տեղը հանել ես: Մենք պարզեցինք, որ դու ունես այնպիսի բարեկամներ, որ ուրիշները հազվադեպ են ունենում, ո՛չ կեղծ, ճիշտ է, քեզ համար ջուրը չեն նետվի, խարույկ էլ չեն բարձրանա, գրկախառնվելու էլ սիրահար չեն, բայց ախր դա ծայրահեղ հիմարություն է. հասկացի՛ր վերջապես: Բայց փոխարենը՝ խորհուրդ, օգնություն, նույնիսկ՝ փող միշտ կգտնես... Մի՞թե դրանք բարեկամներ չեն: Ժամանակին կամուսնանաս. կարիերան առջևումդ է. միայն թե զբաղվիր. և դրա հետ մեկտեղ նաև բախտը: Ամեն ինչ արա, ինչպես ուրիշները, իսկ ճակատագիրը քեզ չի զրկի. կգտնես քոնը: Ծիծաղելի է իրեն երևակայել առանձնահատուկ, մեծ մարդ, երբ այդպիսին չես ստեղծված: Դե ուրեմն ինչի՞ մասին ես դարդ անում:

— Ես ձեզ չեմ մեղադրում, հորեղբայր. ընդհակառակն, ես գիտեմ գնահատել ձեր մտադրությունները և սրտանց շնորհակալ եմ դրանց համար: Ի՞նչ անենք, որ դրանք չհաջողվեցին: Բայց մի՛ մեղադրեք և ինձ: Մենք չհասկացանք իրար, ահա թե որն է մեր դժբախտությունը: Ինչ որ կարող է դուր գալ և պիտանի լինել ձեզ, մյուսին, երրորդին, դուր չի գալիս ինձ...

— Դուր է գալիս ինձ, մյուսին, երրորդին... այն չես ասում, սիրելիս: Մի՞թե միայն ես եմ այնպես մտածում ու գործում, ինչպես քեզ էի սովորեցնում մտածել ու գործել... Նայիր շուրջդ. ուշադիր նայիր մասսային, **ամբոխին** ինչպես դու ես անվանում, ոչ այն մասսային, որ գյուղում է ապրում. այնտեղ սա երկար ժամանակ չի հասնի, այլ ժամանակակից, կրթված, խորհող ու գործող մասսային. ի՞նչ է ուզում նա և ինչի՞ է ձգտում: Ինչպե՞ս է խորհում: Եվ կտեսնես, որ հենց այնպես է, ինչպես սովորեցնում էի քեզ: Ինչ որ քեզնից պահանջում էի, իմ հնարածը չէր:

— Հապա ո՞ւմ,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Դարի:

— Ուրեմն անպայման պետք է հետևել այն ամենին, ինչ որ հնարի՞ քո դարը,— հարցրեց նա,— ամե՞ն ինչ սուրբ է, ամե՞ն ինչ ճշմարտություն է:

— Ամե՞ն ինչ սուրբ է,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Ինչպե՞ս: Ճի՞շտ է, որ պետք է ավելի դատել, քան զգալ: Ազատություն չտալ սրտին, զսպել զգացմունքների պոռթկումը: Անձնատուր չլինել և չհավատալ անկեղծ զեղումին:

— Այո,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Ամենուրեք գործել մեթոդով, քիչ վստահել մարդկանց, ամեն ինչ համարել անհուսալի և ապրել մենակ ինքն իր գլխի՞ն:

— Այո:

— Եվ ա՞յն էլ սուրբ է, որ կյանքում սերը չէ գլխավորը, օր ավելի պետք է սիրել իր գործը, քան սիրած մարդուն, չհուսալ ոչ ոքի նվիրվածությանը, հավատալ, որ սերը պետք է վերջանա սառչելով, դավաճանությամբ կամ սովորությամբ: Որ բարեկամությունը սովորություն է: Այս բոլորը ճշմարի՞տ է:

— Դա միշտ եղել է ճշմարիտ,— պատասխանեց Պյոտր Իվանիչը,— միայն առաջ չէին ուզում դրան հավատալ, իսկ հիմա դարձել է հանրահայտ ճշմարտություն:

— Սուրբ է և ա՞յն, որ պետք է ամեն ինչ մոտիկից զննել, ամեն ինչ հաշվի առնել ու կշռադատել, թույլ չտալ իրեն մոռացության մեջ ընկնել, մի քիչ երազել, հափշտակվել թեկուզ խաբեությամբ, միայն թե դրանից երջանիկ զգալ...

— Սուրբ է, որովհետև խելացի է,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Ճի՞շտ է և այն, որ պետք է խելքով գործել նաև սրտին մոտիկների... օրինակ՝ կնոջ հետ...

— Դեռ երբեք մեջքս այսպես չէր ցավել... օխ,— ասաց Պյոտր Իվանիչը, գալարվելով աթոռի վրա:

— Ա՛: Մե՛ջքդ: Լա՛վ դար է: Խոսք չկա:

— Շատ լավն է, սիրելիս. այնպես, քմահաճույքով ոչինչ չի արվում, ամենուրեք բանականություն, պատճառ, փորձ, աստիճանականություն և, հետևաբար, հաջողություն. ամեն ինչ ձգտում է դեպի կատարելությունն ու բարին:

— Ձեր խոսքերում, հորեղբայր, գուցե և կա ճշմարտություն,— ասաց Ալեքսանդրը,— բայց դա ինձ չի մխիթարում: Ես ձեր տեսությամբ ամեն ինչ գիտեմ, իրերին նայում եմ ձեր աչքերով, ես ձեր դպրոցի սանն եմ, մինչդեռ ինձ համար ձանձրալի է ապրելը, ծանր, անտանելի... այդ ինչի՞ց է:

— Նոր կարգին սովորած չլինելուց: Մենակ դու չես այդպես. հետամնացներ էլի կան. դրանք բոլորը տառապյալներ են: Նրանք իսկապես խղճալի են, բայց ի՞նչ արած: Չէ՞ որ չի կարելի մի բուռ մարդկանց համար մնալ ամբողջ մասսայի հետևում: Այն ամենի համար, որում դու հիմա ինձ մեղադրում էիր,— ասաց Պյոտր Իվանիչը փոքր-ինչ մտածելով,— ես ունեմ մեկ և գլխավոր արդարացում. հիշո՞ւմ ես, երբ առաջին անգամ հայտնվեցիր այստեղ, ես, քեզ հետ հինգ րոպե զրուցելուց հետո, խորհուրդ տվի ետ վերադառնալ: Դու չլսեցիր: Էլ ինչո՞ւ ես հիմա ինձ վրա հարձակվում: Ես կանխագուշակեցի, որ դու չես վարժվի տվյալ իրակարգին, իսկ դու հույս դրիր ինձ վրա, խորհուրդներ էիր խնդրում... բարձր ոճով խոսում էիր մտքի ժամանակակից հաջողությունների, մարդկության ձգտումների մասին… դարի գործնական ուղղության մասին, դե, ահա քեզ: Ես հո չէի՞ կարող առավոտից մինչև իրիկուն քեզ դայակություն անել. ի՞նչ կարիք ունեի. ես չէի կարող ոչ գիշերները բերանդ թաշկինակով ծածկել ճանճերից պաշտպանելու համար, ոչ քեզ խաչակնքել: Ես քեզ բան էի ասում, որովհետև դու այդ խնդրում էիր ինձնից. իսկ թե դրանից ինչ ստացվեց, դա արդեն ինձ չի վերաբերվում: Դու երեխա չես և հիմար չես. ինքդ էլ կարող ես դատել... այստեղ, փոխանակ գործդ անեիր, դու մե՛կ հառաչում ես անպիտան աղջկա դավաճանության համար, մե՛կ լալիս ես ընկերոջիցդ բաժանված լինելու համար, մե՛կ տառապում ես հոգու ամայությունից, մե՛կ զգացմունքների լիառատությունից. դե ի՞նչ կյանք է դա: Չէ որ դա կտտանք է: Հապա մի նայիր հիմիկվա երիտասարդությանը. ի՞նչ կտրիճներ են: Ինչպե՞ս ամեն ինչ եռում է մտքի գործունեությամբ, եռանդով, ինչպես հեշտ ու ճարպկորեն են նրանք հաշիվ տեսնում այն ամբողջ ցնդաբանության հետ, որը ձեր հին լեզվով կոչվում է **հուզմունք, տառապանք**… և սատանան գիտի, թե էլի ինչ:

— Ի՜նչ հեշտ ես դատում,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Եվ չե՞ս խղճում Ալեքսանդրին:

— Ոչ: Այ, եթե նրա մեջքը ցավեր, կխղճայի, դա հնարովի բան չէ, երազանք չէ, բանաստեղծություն չէ, այլ ռեալ վիշտ... օ՜խ:

— Գոնե սովորեցրեք ինձ, հորեղբայր, թե ի՞նչ անեմ հիմա: Ձեր խելքով դուք ինչպե՞ս կվճռեք այս խնդիրը:

— Ինչ անե՞ս: Դե… գյուղ գնաս:

— Գյո՜ւղ,— կրկնեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Խելքդ գլխի՞դ է, Պյոտր Իվանիչ: Նա ի՞նչ պիտի անի այնտեղ:

— Գյո՜ւղ,— կրկնեց Ալեքսանդրը և երկուսն էլ նայում էին Պյոտր Իվանիչին:

— Այո, գյուղ. այնտեղ կտեսնվես մորդ հետ, կմխիթարես նրան: Չէ՞ որ դու հանգիստ կյանք ես որոնում. տես, այստեղ ամեն ինչ քեզ հուզում է. իսկ որտե՞ղ է ավելի խաղաղ, քան այնտեղ, լճի ափին, մորաքրոջդ հետ... ճշմարիտ գնա: Իսկ ո՞վ գիտե: Կարող է պատահել, որ դու, էնիքը... օ՜խ:

Նա մեջքը բռնեց:

Մի երկու շաբաթ անց Ալեքսանդրը պաշտոնաթող եղավ ու եկավ հրաժեշտ տալու հորեղբորն ու նրա կնոջը: Հորեղբոր կինն ու Ալեքսանդրը տխուր ու լուռ էին: Լիզավետա Ալեքսանդրովնայի աչքերից արցունքներ էին կախված: Մենակ Պյոտր Իվանիչն էր խոսում:

— Ոչ կարիերա, ոչ բախտ,— ասում էր նա գլուխն օրորելով:— Արժե՞ր գալ: Խայտառակեցիր Ադուևների ցեղը:

— Դե հերիք է, Պյոտր Իվանիչ,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան.— ձանձրացրիր քո կարիերայով:

— Հապա ինչպես, սիրելիս, ութ տարում ոչի՜նչ չանել:

— Մնաք բարով, հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը:— Շնորհակալ եմ ձեզնից ամեն ինչի համար...

— Չարժե՛: Գնաս բարով, Ալեքսանդր: Ճանապարհի համար փող պետք չէ՞:

— Ոչ, շնորհակալ եմ, իմը կբավականացնի:

— Այս ի՜նչ է, երբեք չի վերցնի: Սա, վերջապես, կատաղեցնում է ինձ: Դե, աստված հետդ, աստված հետդ:

— Եվ չե՞ս ափսոսում, որ բաժանվում ես նրանից,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ը՞մմ,— մռմռաց Պյոտր Իվանիչը:— Ես... սովորել եմ նրան: Բայց հիշիր, Ալեքսանդր, որ դու ունես հորեղբայր ու բարեկամ, լսո՞ւմ ես: Եվ եթե պետք լինի պաշտոն, զբաղմունք ու անարգ մետաղ, համարձակորեն դիմիր ինձ. միշտ կգտնես և մեկը, և մյուսը, և երրորդը:

— Իսկ եթե պետք լինի կարեկցություն,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— վիշտ ունենալիս՝ մխիթարություն, ջերմ, հուսալի բարեկամություն...

— Եվ անկեղծ զեղումներ,— ավելացրեց Պյոտր Իվանիչը:

— …Ուրեմն հիշեցեք,— շարունակեց Լիզավետա Ալեքսանդրովնան,— որ դուք ունեք հորեղբոր կին և բարեկամ:

— Դե, սիրելիս, դրանից գյուղում էլ փոխ առնելու կարիք չի լինի. ամեն ինչ կա, և ծաղիկներ, և սեր, և զեղումներ, և նույնիսկ մորաքույր:

Ալեքսանդրը սրտաշարժված էր. նա ոչ մի խոսք չէր կարող ասել: Հորեղբորը հրաժեշտ տալիս, նա գիրկը բացեց, թեև ոչ այնպես աշխուժորեն, ինչպես ութ տարի առաջ: Պյոտր Իվանիչը չգրկեց նրան, այլ միայն բռնեց նրա զույգ ձեռքը և սեղմեց ավելի ամուր, քան ութ տարի առաջ: Լիզավետա Ալեքսանդրովնայի աչքերից արցունքներ հորդեցին:

— Ո՜ւխ, ուսերիցս մի սար ընկավ, փառք աստծու,— ասաց Պյոտր Իվանիչը, երբ Ալեքսանդրը մեկնեց:— Կարծես թե մեջքիս ցավն էլ թեթևացավ:

— Նա քեզ ի՞նչ էր արել,— արցունքների միջից ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ի՞նչ: Ուղղակի տանջանք է, ավելի վատ, քան բանվորների հետ. նրանց, եթե հիմարություն անեն, կթակես, իսկ սրան ի՞նչ պիտի անեի:

Հորեղբոր կինը ամբողջ օրը լաց եղավ, իսկ երբ Պյոտր Իվանիչը ճաշ ուզեց, նրան ասացին, որ սեղան չեն պատրաստել, որ տիրուհին փակվել է իր առանձնասենյակում և խոհարարին չի ընդունել:

— Եվ բոլորը Ալեքսանդրի մեղքով,— ասաց Պյոտր Իվանիչը:— Այս ի՞նչ տանջանք է նրա հետ:

Նա փնթփնթաց, փնթփնթաց և գնաց ճաշելու անգլիական ակումբում:

Վաղ առավոտյան դիլիժանսը դանդաղ շարժվում էր քաղաքից և տանում Ալեքսանդր Ֆյոդորիչին ու Եվսեյին:

Ալեքսանդրը գլուխը դուրս հանած կառքի լուսամուտից, ամեն կերպ աշխատում էր տխուր տրամադրել ինքն իրեն, և, վերջապես, մտովի մի մենախոսությամբ վերջացրեց:

Անցնում էին վարսավիրների, ատամնաբույժների, դերձակուհիների, աղայական պալատների կողքով: «Մնաս բարով,— ասում էր նա գլուխն օրորելով և բռնելով իր նոսրիկ մազերը,— մնաս բարով, կեղծ մազերի, դնովի ատամների, բնությանը բամբակե նմանողության, կլոր շլյապաների քաղաք, քաղաքավարի գոռոզության, արհեստական զգացմունքների, անկյանք իրարանցման քաղաք: Մնաս բարով, հոգու խորունկ, ուժեղ, քնքուշ ու ջերմ մղումների հոյակապ դամբարան: Ես այստեղ ութ տարի կանգնել էի ժամանակակից կյանքին երես առ երես, բայց մեջքս բնությունից շուռ տված և բնությունը շուռ է եկել ինձնից. ես կորցրի կենսական ուժերս և ծերացա քսանինը տարեկան հասակում, իսկ կար ժամանակ...

Մնաս բարով, մնաս բարով քաղաք,

Որտեղ տառապել ու սիրել եմ խոր,

Որտեղ իմ սիրտն եմ ես թաղել մի օր:

Ձեզ եմ պարզում գիրկս, լայն դաշտեր, ձեզ, լիառատ շեներ ու արոտավայրեր իմ հայրենիքի. ընդունեցեք ինձ ձեր գիրկը, և թող կենդանանամ ու հարություն առնեմ հոգով»:

Այստեղ նա կարդաց Պուշկինի բանաստեղծությունը. **«Բարբարոս նկարիչը քնեած վրձնով»** և այլն, սրբեց խոնավ աչքերը և թաքնվեց կառքի խորքում:

VI

Առավոտը սքանչելի էր: Գրաչիում ընթերցողին ծանոթ լիճը հազիվ կնճռոտվում էր թեթև ծփանքից: Մարդու աչքերը ակամա կկոցվում էին արևի շլացուցիչ ճառագայթներից. որոնք ջրի մեջ պսպղում էին մերթ ալմաստի, մերթ զմրուխտի կայծերով: Լացող կեչիները լվանում էին իրենց ճյուղերը լճում, և տեղ-տեղ լճափը ծածկվել էր բոշխով, որի մեջ թաքնվում էին լողացող լայն տերևների վրա հանգչող խոշոր դեղին ծաղիկներ: Թեթև ամպերը երբեմն ծածկում էին արևի երեսը. նա կարծես հանկարծ շրջվում էր Գրաչիից. այն ժամանակ և լիճը, և պուրակը, և գյուղը՝ ամեն ինչ վայրկենաբար մթագնում էր. միայն հեռաստանն էր պայծառ փայլում: Ամպն անցնում էր՝ լիճը կրկին սկսում էր պսպղալ, արտերի վրա կարծես ոսկի էր փռվում:

Աննա Պավլովնան ժամը հինգից նստած է պատշգամբում: Ի՞նչն է նրան դուրս կանչել. արևաձա՞գը, թարմ օդը կամ արտույտի ե՞րգը: Ո՛չ: Նա աչքը չի կտրում ճանապարհից, որն անցնում է պուրակով: Եկավ Ագրաֆենան, բանալիները խնդրելու: Աննա Պավլովնան չնայեց նրան և, աչքը ճանապարհից չկտրելով, բանալիները տվեց և նույնիսկ չհարցրեց, ինչո՞ւ: Հայտնվեց խոհարարը. Աննա Պավլովնան, նույնպես առանց նայելու նրան, բազմաթիվ հրամաններ արձակեց: Արդեն երկրորդ օրն էր, որ պատվիրվում էր սեղան պատրաստել տասը հոգու համար:

Աննա Պավլովնան նորից մենակ մնաց: Հանկարծ նրա աչքերը փայլեցին, նրա հոգու և մարմնի բոլոր ուժերը անցան տեսողությանը: Ճանապարհին ինչ-որ բան սևին տվեց: Ինչ-որ մեկը գալիս է, բայց կամաց, դանդաղ: Ա՛խ: Դա բեռնասայլ է իջնում սարից: Աննա Պավլովնան խոժոռվեց:

— Տես թե ո՛ւմ բերեց սատանան,— փնթփնթաց նա:— Չի՛ լինի, որ պտույտ գործեն. բոլորը էստեղ են խցկվում:

Նա դժգոհությամբ նորից նստեց բազկաթոռին և նորից դողդոջուն սպասումով հայացքն ուղղեց պուրակին, ոչինչ չնկատելով շուրջը: Մինչդեռ շուրջը նկատելու բան կար. դեկորացիան սկսել էր զգալիորեն փոխվել: Արևի կիզիչ ճառագայթներից շիկացած կեսօրյա օդը դառնում էր ծանր ու հեղձուցիչ: Ահա արևն էլ թաքնվեց: Մթնեց: Եվ անտառը, և հեռավոր գյուղերը, և խոտը՝ ամեն բան ինչ-որ անտարբեր, չարագուշակ գույն հագավ:

Աննա Պավլովնան ուշքի եկավ ու վեր նայեց: Աստվա՛ծ իմ: Արևմուտքից, ասես կենդանի հրեշ, ձգվում էր պղնձագույն եզրերով մի այլանդակ բիծ և արագ մոտենում էր գյուղին ու պուրակին. կարծես հսկայական թևերը տարածելով չորս կողմ: Բնության մեջ ամեն ինչ սկսեց թախծել: Կովերը գլուխները կախեցին, ձիերը պոչերն էին թափահարում, ռունգներն ուռցնում և փռնչում, բաշերը թափ տալով: Նրանց սմբակների տակից փոշին վեր չէր բարձրանում, այլ ծանր, ինչպես ավազը, շաղ էր գալիս անիվների տակ: Ամպը մոտենում էր սպառնագին: Շուտով դանդաղ դղրդաց հեռավոր որոտը:

Ամեն ինչ լռեց, կարծես սպասում էր ինչ-որ չտեսնված բանի: Ո՞ւր կորան այն թռչունները, որոնք այնպես կայտառ ոստոստում ու երգում էին արև ժամանակ: Ո՞ւր են միջատները, որ այնպես բազմաձայն բզզում էին խոտի մեջ: Ամեն ինչ թաքնվել ու լռել էր, և անշունչ առարկաները, թվում է, բաժանում էին չարագուշակ նախազգացումը: Ծառերը դադարեցին օրորվել և ճյուղերն իրար դիպցնել. նրանք շտկվեցին, միայն երբեմն կատարներն իրար էին խոնարհում, կարծես շշուկով զգուշացնում էին իրար մոտալուտ վտանգից: Ամպը արդեն պատել էր հորիզոնը և գոյացրել ինչ-որ արձիճե, անթափանց կամար: Գյուղում բոլորն աշխատում էին ժամանակին տները մտնել: Վրա հասավ համընդհանուր հանդիսավոր լռության րոպեն: Ահա անտառից ինչպես առաջապահ սուրհանդակ անցավ մի պաղ քամի, ճամփորդի երեսին զով փչեց, աղմկեց տերևների մեջ, մոտով անցնելիս շրխկացրեց մի խրճիթի դարպասի դուռը և, պտտեցնելով փողոցի փոշին, հանդարտվեց թփերում: Նրա հետևից սլանում է փոթորկալի պտուտահողմը, ճանապարհի վրա դանդաղ շարժելով փոշու սյունը. ահա խուժեց գյուղ, ցանկապատից մի քանի փտած տախտակ ցած նետեց, քշեց տարավ ծղնոտե մի կտուր, բարձրացրեց ջուր տանող մի գեղջկուհու շրջազգեստը և փողոցի երկարությամբ քշեց աքլորներին ու հավերին, ուռցնելով նրանց պոչերը:

Անցավ: Կրկին լռություն: Ամեն ինչ իրար է անցել ու թաքնվում է. միայն հիմար ոչխարը չի նախազգում. նա անտարբեր իր որոճն է անում, փողոցի մեջտեղում կանգնած, և նայում է մի կողմ, չհասկանալով ընդհանուր տագնապը. մեկ էլ մի փետրիկ ու ծղոտ, պտույտներ կատարելով ճանապարհի վրա, ճգնում էին հասնել պտուտահողմի հետևից:

Ընկավ անձրևի երկու-երեք խոշոր կաթիլ, և հանկարծ կայծակը փայլեց: Մի ծերունի վեր կացավ հողաթախտից և շտապով փոքրիկ թոռնիկներին խրճիթ տարավ. պառավը, երեսը խաչակնքելով, հապճեպ փակեց պատուհանը:

Ամպրոպը որոտաց և, խլացնելով մարդկային աղմուկը, հանդիսավոր, արքայաբար թնդաց օդում: Վախեցած մի ձի կապը կտրեց և պարանը վզին սլանում է դեպի դաշտը. գյուղացին ապարդյուն է նրան հետապնդում: Իսկ անձրևը թափվում է, ուղղակի մտրակում, ավելի ու ավելի հաճախակի, և ավելի ու ավելի ուժգին թակում տանիքներն ու ապակիները:

Մի սպիտակ թաթիկ վախվխելով պատշգամբ է հանում իր քնքուշ հոգացողության առարկան՝ ծաղիկները:

Ամպրոպի առաջին որոտին Աննա Պավլովնան երեսը խաչակնքեց և պատշգամբից հեռացավ:

— Չէ, ինչպես երևում է, այսօր զուր ենք սպասելու,— ասաց նա հոգոց հանելով,— ամպրոպի պատճառով մի տեղ կանգ է առել, գուցե գիշերվա կողմ գա:

Հանկարծ լսվեց անիվների աղմուկ, բայց ոչ թե պուրակից, այլ մյուս կողմից: Ինչ-որ մեկը կառքով բակ մտավ, Ադուևայի սիրտը նվաղեց:

«Այդ ինչպե՞ս այնտեղից,— մտածում էր նա,— մի՞թե ուզում է թաքուն գալ: Բայց ոչ, այստեղ ճանապարհ չէ»:

Նա չգիտեր, թե ինչ մտածի: Բայց շուտով ամեն ինչ բացատրվեց: Մի որոպե անց մտավ Անտոն Իվանիչը: Նրա մազերում արծաթին էր տալիս սպիտակը. ինքը հաստացել էր. թշերը այտուցվել էին անգործությունից ու շատակերությունից: Նրա հագին նույն սերթուկն էր, նույն լայն շալվարը:

— Ձեզ սպասում էի, սպասում, Անտոն Իվանիչ,— սկսեց Աննա Պավլովնան,— կարծում էի, թե չեք գա, հույսս կտրել էի:

— Մեղք է այդպիսի բան մտածելը: Մեկ ուրիշի մոտ լիներ, մե՛րս, ուրիշ բան: Ամեն մեկի մոտ ինձ հրապուրել չի լինի… Բայց ձեզ մոտ ուրիշ բան: Ուշացա ոչ իմ մեղքով. ախր այսօր մի ձիով եմ ճամփորդում:

— Այդ ինչո՞ւ,— մտացրիվ հարցրեց Աննա Պավլովնան, մոտենալով լուսամուտին:

— Ինչո՛ւ, մերս: Կնունքից ի վեր Պավել Սավիչի խայտավոր ձին սկսեց կաղալ. սատանան փչեց ձիապանի խելքին, առվի վրայով գցել ամբարի հին դուռը... աղքատ մարդիկ են, գիտե՞ք: Նոր տախտակ չունեի՞ն: Իսկ դռան վրա, տեսեք որ մեխ կար թե կեռ՝ սատանան գիտի: Ձին հենց որ ոտքը դրեց, ուղղակի մի կողմ խրտնեց և քիչ մնաց իմ վիզն էլ կոտրեր... թոկից փախածնե՛ր: Այ, էդ ժամանակվանից էլ կաղում է... Ախր լինո՛ւմ են էդպիսի ժլատներ: Չեք հավատա, մերս, թե նրանց տունն ինչ է, որոշ անկելանոցներում ավելի լավ են պահում մարդկանց: Իսկ Մոսկվայում, Կուզնեցկի Մոստի վրա, տարի չի լինի, որ մի տասը հազար քամուն չտան:

Աննա Պավլովնան նրան լսում էր ցրված, և երբ նա վերջացրեց, գլուխը թեթևակի օրորեց:

— Ես ախր Սաշենկայից նամակ եմ ստացել, Անտոն Իվանիչ,— ընդհատեց նա:— Գրում է, որ ամսի 20-ի կողմերը այստեղ կլինի. ուրախությունից ուշքս կորցրել եմ:

— Լսել եմ, մերս. Պրոշկան ասում էր, բայց ես սկզբում չհասկացա, թե ինչ է ասում, կարծեցի, թե արդեն եկել է. ուրախությունից քրտինքը երեսիս խփեց:

— Աստված ձեզ առողջություն տա, Անտոն Իվանիչ, որ մեզ սիրում եք:

— Ա՛յդ էր պակաս, որ չսիրեի: Ախր Ալեքսանդր Ֆյոդորիչին ձեռքերիս վրա եմ ման ածել. նույնն է, թե հարազատ լինի:

— Շնորհակալ եմ, Անտոն Իվանիչ. աստված ձեզ կհատուցի: Իսկ ես երկրորդ գիշերն է չեմ քնում և ծառաներին էլ չեմ թողնում, որ քնեն, մեկ էլ տեսար՝ կգա, իսկ մենք բոլորս մրափում ենք՝ լա՛վ կլինի: Երեկ և անցյալ օրը մինչև պուրակ ոտքով գնացի, այսօր էլ կգնայի, բայց անիծյալ ծերությունը չի թողնում: Գիշերը անքնությունը հալից գցեց: Նստեցեք տեսնենք, Անտոն Իվանիչ: Ամբողջովին թրջվել եք. չե՞ք ուզում մի բան խմել և նախաճաշել: Գուցե ստիպված լինենք ուշ ճաշել, սպասենք թանկագին հյուրին:

— Այնպես, գուցե մի պատառ դնեմ բերանս: Թե չէ, խոստովանանք լինի, նախաճաշելը՝ նախաճաշել եմ արդեն:

— Այդ որտե՞ղ հասցրիք:

— Ճամփաբաժնին Մարիա Կարպովնայի մոտ կանգ առա: Ախր նրանց մոտով էի ստիպված անցնելու. ավելի շատ ձիու, քան թե ինձ համար. նրան հանգիստ տվի: Հանա՞ք բան է հիմիկվա շոգին տասներկու վերստ կտրելը: Ի դեպ, այնտեղ էլ նախաճաշեցի: Լավ, որ ականջ չարի՝ չմնացի, ինչքան էլ ասացին, թե չէ ամպրոպը ամբողջ օրն այնտեղ կպահեր:

— Ինչպե՞ս է Մարիա Իվանովնան:

— Փա՛ռք աստծու: Ձեզ բարևում է:

— Մեծապատիվ շնորհակալ եմ. իսկ աղջիկը, Սոֆիա Միխայլովնան իր ամուսնյակի հե՞տ, ինչպե՞ս են:

— Ոչինչ, մերս. արդեն վեցերորդ մանկիկով է: Մի երկու շաբաթից հետո սպասում են: Խնդրում էին, որ այդ ժամանակները լինեմ նրանց մոտ: Իսկ տանն էնպիսի աղքատություն է, որ տեսնելու բան չէ: Կարծես պիտի մտածեին՝ ի՞նչ երեխայի ժամանակ է. բայց չէ՛, իրենցն են զոռում:

— Ի՞նչ եք ասում:

— Աստվա՛ծ վկա: Սենյակներում դռների շրջանակները բոլորը ծռմռվել են. հատակը ոտքերիդ տակ ուղղակի պար է գալիս. առաստաղից կաթում է: Սարքելու միջոց էլ չունեն, իսկ ճաշին մատուցում են սուպ, շոռաբլիթ և ոչխարի միս, ահա ձեզ բոլորը: Բայց ի՞նչ ջանասիրությամբ հրավիրում են:

— Էդ հալով էլ իմ Սաշենկայի վրա աչք ուներ, ագռավի մի՛նը:

— Նրա ի՞նչ բանն էր, մերս, էդպիսի բազեի մարդու գնալ: Անհամբեր սպասում եմ, թե երբ պիտի տեսնեմ. ով գիտի ինչ գեղեցիկն է: Մտքովս անցկացնում եմ, Աննա Պավլովնա, չլինի՞ այնտեղ որևէ իշխանուհու կամ կոմսուհու է հարսնախոսել իր համար, ու արդյոք չի՞ գալիս ձեր օրհնությունը խնդրելու և հարսանիքի կանչելու:

— Ի՞նչ եք ասում, Անտոն Իվանիչ,— ասաց Աննա Պավլովնան ուրախությունից հալվելով:

— Ճշմարիտ:

— Ախ, աղունիկս. աստված առողջություն տա ձեզ… Հա՛: Քիչ մնաց մտահան անեի. ուզում էի ձեզ պատմել ու մոռացա. մտածում եմ, մտածում, թե էս ի՞նչ է պտտվում լեզվիս ծերին. մեկ էլ տեսար՝ այդպես էլ անցներ: Չնախաճաշե՞ք առաջ, թե՞ հիմա պատմեմ:

— Միևնույն է, մերս, թեկուզ նախաճաշի ժամանակ. ես ոչ մի պատառ. ուզում էի ասել՝ ոչ մի բառ բաց չեմ թողնի:

— Դե, ահա,— սկսեց Աննա Պավլովնան, երբ նախաճաշ բերին, իսկ Անտոն Իվանիչը տեղավորվեց սեղանի առաջ,— մեկ էլ տեսնեմ...

— Իսկ ինքներդ մի՞թե չեք ուտելու,— հարցրեց Անտոն Իվանիչը՝

— Ի՛, ուտելու ժամանա՞կ ունեմ ես հիմա: Պատառը կոկորդովս ցած չի գնա. քիչ առաջ մի բաժակ թեյն էլ լրիվ չխմեցի: Ուրեմն, երազումս տեսնում եմ, նստած եմ էսպես, իսկ այդտեղ՝ դիմացս, մատուցարանը ձեռքին կանգնած է Ագրաֆենան: Իբր թե ես նրան ասում եմ. «Այդ ի՞նչ է, Ագրաֆենա, իբր ասում եմ, մատուցարանդ ինչո՞ւ է դատարկ».— իսկ նա լռում է ու շարունակ նայում է դռանը: «Ախ, մտածում եմ երազիս մեջ ինքս ինձ,— էդ ի՞նչ է աչքերը հառել էնտեղ»: Եվ ես էլ սկսեցի նայել... տեսնեմ՝ հանկարծ մտնում է Սաշենկան, այնպես տխուր, մոտեցավ ինձ ու ասում է, և այնպես, կարծես իրականում է ասում. «Մնաք բարով, ասում է, մայրիկ, ես մեկնում եմ հեռու, ահա այնտեղ,— և ցույց տվեց լիճը,— և այլևս,— ասում է,— չեմ գա»:— «Այդ ո՞ւր ախր, բարեկամս»,— հարցնում եմ, իսկ սիրտս ուղղակի նվում է: Նա, իբր, լսում է, բայց ինձ նայում է այնպես տարօրինակ ու խղճալի: «Բայց որտեղի՞ց հայտնվեցիր, աղավնյակս»,— իբր հարցնում եմ նորից: Իսկ նա, ջանիկս, հոգոց հանեց ու նորից լիճը ցույց տվեց: «Լճափոսից,— ասաց հազիվ լսելի,— ջրի ոգիների մոտից»: Ես ուղղակի ցնցվեցի ու արթնացա: Բարձս ամբողջովին արցունքով էր ողողված. արթմնի էլ չեմ կարողանում ուշքի գալ. նստել եմ անկողնիս ու լաց եմ լինում, ուղղակի մղկտում եմ, լալիս: Հենց որ վեր կացա, իսկույն վառեցի կանթեղը Կազանի աստվածամոր պատկերի առաջ. գուցե նա, մեր բարեգութ պաշտպանը, նրան կպահպանի ամեն տեսակի փորձանքից ու չարիքից: Այնպես կասկած է իջել վրաս, աստված վկա: Չեմ կարող հասկանալ, թե դա ինչ պիտի նշանակեր: Նրա հետ մի բան չպատահի: Տեսեք ի՛նչ ամպրոպ է...

— Այդ լավ է, մերս, երազում լաց լինելը. բարին է կատարվելու,— ասաց Անտոն Իվանիչը, ձուն կոտրելով ափսեի եզրին:— Վաղն անպայման այստեղ կլինի:

— Իսկ ես մտածում էի, նախաճաշից հետո չգնայի՞նք պուրակ, նրան ընդառաջ. մի կերպ քարշ գալով կհասնեինք. բայց տեսեք, թե հանկարծ ինչ ցեխ արեց:

— Ոչ, այսօր չի գա. ես նշան ունեմ:

Այդ րոպեին քամու ուղղությամբ լսվեցին զանգակների հեռավոր հնչյուններ և հանկարծ լռեցին: Աննա Պավլովնան շունչը պահեց:

— Ա՛խ,— ասաց նա, կուրծքը թեթևացնելով մի հոգոցով,— իսկ ես կարծեցի թե…

Հանկարծ նորից:

— Տեր իմ աստվա՛ծ: Ոնց որ թե զանգա՞կ լինի,— ասաց նա և նետվեց դեպի պատշգամբ:

— Ոչ,— պատասխանեց Անտոն Իվանիչը,— դա այստեղ մոտիկ մի քուռակ է արածում զանգակը վզին. ես տեսա ճանապարհին: Դեռ խրտնեցրի նրան, թե չէ՝ հաճարի մեջ էր մտնելու: Ինչո՞ւ չեք պատվիրում, որ բխովեն:

Հանկարծ զանգակը զրնգաց կարծես թե հենց պատշգամբի տակ և ղողանջում էր ավելի ու ավելի բարձր:

— Ախ, աստված ջան: Այդպես է որ կա. այստեղ, այստե՛ղ է գալիս: Սա նա՛ է, նա՛ է,— բղավում էր Աննա Պավլովնան:— Ա՛խ, ա՛խ: Վազեցե՛ք,— Անտոն Իվանիչ: Ո՞ւր են ծառաները: Ո՞ւր է Ագրաֆենան: Ոչ ոք չկա... Կարծես օտարի տուն է գալիս, աստվա՛ծ իմ:

Նա բոլորովին գլուխը կորցրեց: Իսկ զանգակը արդեն զնգզնգում էր կարծես թե սենյակում:

Անտոն Իվանիչը վեր թռավ սեղանից:

— Նա՛ է: Նա՛ է,— բղավում էր Անտոն Իվանիչը:— Այն էլ Եվսեյը նստիքի վրա: Բա ո՞ւր է ձեր սրբապատկերը, աղ ու հացը: Շո՛ւտ արեք, տվեք: Բա ի՞նչ եմ դուրս բերելու նրան ընդառաջ: Ինչպե՞ս կարելի է առանց աղ ու հացի: Նշան կա... այս ի՞նչ անկարգություն է ձեր տանը: Ոչ ոք չի մտածել: Իսկ ինքնե՞րդ ինչ եք կանգնել, Աննա Պավլովնա, չեք գնում ընդառաջ: Վազեցեք, շո՛ւտ...

— Չեմ կարող,— ասաց Աննա Պավլովնան դժվարությամբ:— Ոտներս թուլացան:

Եվ այդ խոսքերով նստեց բազկաթոռին: Անտոն Իվանիչը սեղանից մի կտոր հաց չանթեց, դրեց ափսեին, աղամանը նույնպես և նետվեց դեպի դուռը:

— Ոչի՛նչ չի պատրաստված,— փնթփնթում էր նա:

Բայց նույն դռնից նրան ընդառաջ՝ ներս խուժեցին երեք լակեյ և երկու աղախին:

— Գալի՛ս է: Գալի՛ս է: Եկա՛վ,— բղավում էին նրանք, գունատված, վախեցած, կարծես թե ավազակներ էին եկել:

Նրանց հետևից հայտնվեց նաև Ալեքսանդրը:

— Սա՛շենկա: Բարեկա՛մս...— բացականչեց Աննա Պավլովնան և հանկարծ կանգ առավ ու տարակուսած նայում էր Ալեքսանդրին:

— Իսկ ո՞ւր է Սաշենկան,— հարցրեց նա:

— Այս ես եմ, մայրիկ,— պատասխանեց Ալեքսանդրը, համբուրելով նրա ձեռքը:

— Դո՞ւ:

Նա ուշադիր նայեց որդուն:

— Դու ես, ճի՛շտ որ դու ես, բարեկամս,— ասաց նա և ամուր գրկեց նրան: Հետո հանկարծ նորից նայեց նրան:— Քեզ ի՞նչ է պատահել: Հիվա՞նդ ես,— հարցրեց նա անհանգիստ, բաց չթողնելով նրան գրկից:

— Առողջ եմ, մայրիկ:

— Առո՛ղջ ես: Ուրեմն ի՞նչ է պատահել քեզ, աղավնյակս: Մի՞թե քեզ այսպես ճամփու դրի:

Նա որդուն սեղմեց կրծքին և դառնագին լաց եղավ: Նա համբուրում էր Ալեքսանդրի գլուխը, այտերը, աչքերը:

— Բա ո՞ւր են քո մազիկները: Մետաքսի պես էին,— ասում էր նա արցունքների միջից,— աչքերդ լույս էին տալիս ոնց որ զույգ աստղիկներ. այտերդ՝ վարդ ու կաթ էին. դու ինքդ ամբողջովին կարծես թե հասած խնձոր լինեիր: Ուրեմն հոգիդ հանել են չար մարդիկ, նախանձել են քո գեղեցկությանն ու իմ բախտին: Բա հորեղբա՞յրդ ինչ էր մտածում: Ես էլ խելքը գլխին մարդ համարելով, ձեռքից ձեռք հանձնեցի նրան: Չի կարողացել պահպանել գանձս: Աղավնյա՛կս...

Պառավը լալիս էր և անվերջ գուրգուրում Ալեքսանդրին:

«Երևում է, երազում արցունք տեսնելը լավ չէ»,— մտածեց Անտոն Իվանիչը:

— Ի՞նչ եք գլխին շիվան անում, ոնց որ մեռելի վրա,— շշնջաց նա,— լավ չէ, մերս, նշան կա:

— Բարև՛ ձեզ, Ալեքսանդր Ֆյոդորիչ,— ասաց նա:— Աստված տվեց, որ այս աշխարհում մի անգամ էլ տեսնվեցինք:

Ալեքսանդրը լուռ նրան մեկնեց ձեռքը: Անտոն Իվանիչը գնաց նայելու, թե ամեն ինչ ցած բերե՞լ են ծածկասայլից: Հետո սկսեց կանչել սպասավորներին, որ բարի գալուստ մաղթեն աղային: Բայց բոլորն արդեն խռնվել էին նախասենյակում և հաշտում: Նա բոլորին շարեց կարգով և սովորեցնում էր, թե ով ինչպես պետք է բարևի. ով պիտի աղայի թաթիկը համբուրի, ով ուսը, ով միայն հագուստի փեշը և ինչ պիտի ասի: Մի տղայի բոլորովին վռնդեց, ասելով. «Դու գնա առաջ մռութդ լվա ու քիթդ սրբիր»:

Եվսեյը գոտին մեջքին կապած, ամբողջովին փոշու մեջ կորած, բարևում էր սպասավորներին, որոնք ամեն կողմից շրջապատել էին նրան: Նա պետերբուրգյան նվերներ էր բաժանում, որին արծաթե մատանի, որին կեչու փայտից ծխախոտատուփ: Ագրաֆենային տեսնելով, նա քարացած կանգ առավ և նրան էր նայում լուռ, հիմար հիացմունքով: Ագրաֆենան նայեց նրան կողքանց, աչքի տակով, բայց անմիջապես ակամա դավաճանեց ինքն իրեն. ուրախությունից ծիծաղեց, հետո լաց եղավ, բայց հանկարծ մի կողմ շուռ եկավ ու խոժոռվեց:

— Ի՞նչ ես լռել,— ասաց նա:— Ի՛նչ դմբոն է, չի էլ բարևում:

Բայց Եվսեյը ոչինչ չէր կարող ասել: Նա նույն հիմար ժպիտով մոտեցավ նրան: Ագրաֆենան հազիվ թույլ տվեց փարվել իրեն:

— Սատանա՛ն բերեց,— ասում էր նա բարկացած, երբեմնակի թաքուն նայելով Եվսեյին, բայց աչքերում և ժպիտի մեջ արտահայտվում էր մեծագույն ուրախություն:— Երևում է, պետերբուրգցիները... էնտեղ փչացրել են քեզ ու աղային: Տես, թե ի՛նչ բեղեր է թողել:

Եվսեյը գրպանից մի փոքրիկ թղթե տուփ հանեց ու տվեց նրան: Այնտեղ բրոնզե գինդեր էին: Հետո պարկից մի ծրար հանեց, որի մեջ փաթաթված էր մի մեծ շալ: Ագրաֆենան չանթեց և արագ, առանց նայելու թե մեկը, թե մյուսը խոթեց պահարան:

— Ցույց տվեք նվերները, Ագրաֆենա Իվանովնա,— ասացին սպասավորներից մի քանիսը:

— Էհ, էստեղ տեսնելու ի՞նչ կա: Ինչ մի չտեսնված բան է: Հեռացե՛ք էստեղից: Ի՞նչ եք թափվել իրար գլխի,— բղավում էր նա նրանց վրա:

— Ահա սա էլ,— ասաց Եվսեյը, Ագրաֆենային տալով մի ուրիշ փաթեթ:

— Ցույց տվեք, ցույց տվեք,— վրա թափեցին մի քանիսը:

Ագրաֆենան քաշեց փաթեթի թուղթը, և այնտեղից թափվեցին մի քանի կապույտ գործածված, բայց գրեթե նոր խաղաթուղթ:

— Բերելու բա՞ն է գտել,— ասաց Ագրաֆենան:— Կարծում ես բան ու գործս թուղթ խաղա՞լն է: Ո՞նց չէ: Բան է հնարել. քեզ հետ թո՛ւղթ եմ խաղալու:

Նա պահեց և խաղաթղթերը: Մի ժամ անց Եվսեյն արդեն նորից նստած էր հին տեղում՝ սեղանի ու վառարանի միջև:

— Աստվա՛ծ: Ինչպիսի՛ հանգստություն,— ասում էր նա մերթ կծկելով, մերթ ձգելով ոտները:— Ի՞նչ եմ ասել էստեղ: Իսկ մեզ մոտ, Պետերբուրգում, ուղղակի տաժանելի կյանք է: Մի բան չկա՞ ուտելու, Ագրաֆենա Իվանովնա: Վերջին կայարանից ոչինչ չենք կերել:

— Դու դեռ սովորությունդ չե՞ս թողել: Ա՛ռ: Տե՛ս թե ոնց վրա ընկավ. երևում է ձեզ էնտեղ իսկի չէին կերակրում:

Ալեքսանդրը անցավ բոլոր սենյակները, հետո այգին, կանգ առնելով ամեն մի թփի, ամեն մի նստարանի առաջ: Նրան ուղեկցում էր մայրը: Նա, նայելով որդու գունատ դեմքին, հոգոց էր հանում, բայց վախենում էր լաց լինել. նրան վախեցրել էր Անտոն Իվանիչը: Նա հարցուփորձ էր անում որդուն, բայց ոչ մի կերպ չէր կարողանում իմանալ պատճառը, թե ինչու է նա այդպես նիհարել, դժգունել և ուր են կորել մազերը: Նա առաջարկում էր նրան և ուտել, և խմել, բայց Ալեքսանդրը, հրաժարվելով ամեն ինչից, ասաց, որ ճանապարհից հոգնել է և քնել է ուզում:

Աննա Պավլովնան նայեց, թե արդյոք լա՞վ է գցած անկողինը, բարկացավ աղախնի վրա, որ կոշտ է, հարկադրեց նորից սարքել իր ներկայությամբ և այնքան ժամանակ չհեռացավ, մինչև որ Ալեքսանդրը պառկեց: Նա դուրս եկավ թաթերի ծայրին, սպառնաց ծառաներին, որ չհամարձակվեն բարձր խոսել ու շնչել և ման գան առանց կոշիկների: Հետո հրամայեց, որ Եվսեյին իր մոտ ուղարկեն: Նրա հետ եկավ նաև Ագրաֆենան: Եվսեյը խոնարհ գլուխ տվեց տիրուհուն և համբուրեց նրա ձեռքը:

— Այդ ի՞նչ է պատահել Սաշենկային,— ահեղ հարցրեց նա:— Ինչի՞ նման է դարձել նա, հը՞:

Եվսեյը լուռ էր:

— Ի՞նչ ես լռել,— ասաց Ագրաֆենան:— Լսո՞ւմ ես, տիրուհին քեզ է հարցնում:

— Ինչո՞ւ է նա այդպես նիհարել,— ասաց Աննա Պավլովնան:— Մազիկներն ո՞ւր են կորել:

— Չեմ կարող գիտենալ, տիրուհի,— ասաց Եվսեյը:— Աղայի գործ է:

— Չե՞ս կարող գիտենալ: Բա ո՞ւր էիր նայում:

Եվսեյը չգիտեր, թե ինչ պատասխանի և շարունակ լուռ էր:

— Մա՛րդ գտաք վստահելու, տիրուհի,— ասաց Ագրաֆենան, սիրով նայելով Եվսեյին:— Մարդո՛ւ վստահած լինեիք: Ի՞նչ էիր անում էնտեղ: Տիրուհուն ասա տեսնենք: Քեզ ցո՛ւյց կտա՛:

— Բա ես ջանք չէի՞ թափում, տիրուհի,— երկչոտ ասաց Եվսեյը, նայելով մերթ տիրուհուն, մերթ Ագրաֆենային:— Ծառայում էի հավատով ու ճշմարտությամբ, բարեհաճեցեք հարցնելու թեկուզ Արխիպիչին...

— Ի՞նչ Արխիպիչ:

— Էնտեղի դռնապանին:

— Տես թե ինչեր է դուրս տալիս,— նկատեց Ագրաֆենան:— Ի՞նչ եք լսում նրան, տիրուհի: Ախոռում փակեիք, էն ժամանակ կիմանար:

— Պատրաստ եմ, մենակ թե իմ տերերի աղայական կամքը կատարեմ,— շարունակում էր Եվսեյը,— թեկուզ տեղնուտեղը մեռնեմ: Սրբապատկերը ցած կառնեմ պատից...

— Խոսելու մեջ բոլորդ էլ լա՛վ եք,— ասաց Աննա Պավլովնան:— Բայց հենց որ պետք է գործ անել, մեջտեղ չկաք: Երևում է, լա՛վ ես նայել պարոնիդ. այնքան ես արել, որ նա, աղավնյակս, առողջությունն է կորցրել: Նայե՛լ ես: Այ, ես քեզ ցո՛ւյց կտամ...

Նա սպառնաց Եվսեյին:

— Ե՞ս չեմ նայել, տիրուհի: Ութ տարվա մեջ պարոնի սպիտակեղենից միայն մի շապիկ է կորել, թե չէ՝ մաշվածներն էլ եմ պահել:

— Իսկ ո՞ւր է կորել շապիկը,— զայրագին հարցրեց Աննա Պավլովնան:

— Լվացարարուհու մոտ կորավ: Ես այն ժամանակ զեկուցեցի Ալեքսանդր Ֆյոդորիչին, որ նրանից ետ պահի, բայց նա ոչինչ չասաց:

— Տեսնո՞ւմ ես սրիկային,— նկատեց Աննա Պավլովնան,— աչքը կպե՛լ է լավ սպիտակեղենին:

— Ինչպե՛ս չնայեի,— շարունակում էր Եվսեյը:— Տա աստված, որ ամեն մեկն էլ էդպես կատարի իր պաշտոնը: Պատահում էր, որ պարոնը դեռ բարեհաճում էր քնել, իսկ ես արդեն վազ էի տալիս բուլկեղենի կրպակ...

— Ի՞նչ բուլկի էր ուտում նա:

— Սպիտակ, լավերից:

— Գիտեմ որ սպիտակ, բայց կաթնահո՞ւնց:

— Ախր իսկակա՛ն գերան է,— ասաց Ագրաֆենան:— Մի կարգին խոսք չի կարող ասել. հլա պետերբուրգցի՛ է:

— Ամենևին ոչ,— պատասխանեց Եվսեյը,— պասուց:

— Պասո՛ւց. ա՛խ դու չարագո՛րծ: Հոգեկործա՛ն: Ավազա՛կ,— ասաց Աննա Պավլովնան, զայրույթից կարմրելով:— Մտքովդ չանցավ, որ կաթնահունց բուլկի դնեիր նրա համար: Նայո՞ւմ էիր:

— Բայց նա, տիրուհի, չէր հրամայում...

— Չէ՞ր հրամայում: Նրան, աղավնյակիս, միևնույն է, առաջն ինչ որ դնես, ամեն ինչ կուտի: Իսկ դա քո մտքով չանցա՞վ: Մի՞թե դու մոռացել էիր, որ այստեղ միշտ կաթնահունց բուլկի էր ուտում: Հավանաբար, փողը դու ուրիշ տե՞ղ էիր տանում: Այ, ես քեզ: Դե, էլի՞ ինչ: Ասա՛...

— Հետո, որ թեյը խմում էր,— շարունակեց Եվսեյը վախեցած,— գնում էր պաշտոնին, ես կոշիկներն էի ձեռքս առնում, ամբողջ առավոտը մաքրում էի, բոլորը մաքրում էի, մի քանիսը երեքական անգամ. երեկոյան որ հանում էր, նորից էի մաքրում: Ինչպե՞ս չէի նայում, տիրուհի. ես պարոններից ոչ մեկի ոտքին էդպիսի կոշիկ չէի տեսել: Պյոտր Իվանիչի կոշիկներն ավելի վատ էին մաքրած լինում, շատ էլ որ երեք լակեյ ուներ:

— Հապա ինչո՞ւ է նա այդպես,— փոքր-ինչ մեղմանալով, ասաց Աննա Պավլովնան:

— Երևի գրելուց է, տիրուհի:

— Շա՞տ էր գրում:

— Շատ. ամեն օր:

— Իսկ ի՞նչ էր գրում: Որևէ թո՞ւղթ թե ինչ:

— Երևի թղթեր:

— Իսկ դու ինչո՞ւ չէիր զսպում:

— Ես զսպում էի, տիրուհի. «Մի նստեք, այսինքն, ասում եմ, Ալեքսանդր Ֆյոդորիչ, բարեհաճեցեք գնալ զբոսնելու. եղանակը լավն է, շատ պարոններ են զբոսնում: Գրե՞լս որն է: Ձեր կուրծքը կցավացնեք. մայրիկը, այսինքն, կբարկանա...»:

— Բա նա՞ ինչ էր ասում:

— «Գնա կորի,— ասում էր,— հիմա՛ր»:

— Ճիշտ էլ, որ հիմա՛ր,— ասաց Ագրաֆենան:

Եվսեյը այդ խոսքի վրա նայեց նրան, հետո նորից շարունակեց նայել տիրուհուն:

— Իսկ հորեղբայրը մի՞թե չէր զսպում,— հարցրեց Աննա Պավլովնան:

— Որտեղի՞ց, տիրուհի: Գալիս էր, և եթե անգործ էր տեսնում, ուղղակի հարձակվում էր. «Ի՞նչ է, ասում էր, ոչինչ չես անում: Էստեղ, ասում էր, գյուղ չէ, պետք է աշխատել, ասում էր, և ոչ թե կողքի վրա պառկել: Շարունակ, ասում է, երազո՛ւմ ես»: Կամ դեռ հայհոյում էլ էր:

— Ինչպե՞ս թե՝ հայհոյում:

— «Գավառ...» ասում էր... ու խոսում էր ու խոսում... այնպես էր նախատում, որ շատ անգամ մարդ լսել չէր ուզում:

— Նրա տունը քանդվի,— թքելով ասաց Աննա Պավլովնան:— Իր թոկից փախածներն ունենար ու հայհոյեր: Փոխանակ զսպելու, նա... Տե՛ր իմ աստված, բարեգութ արքա,— բացականչեց նա:— Հիմա էլ ո՞ւմ վրա հույս դնես, եթե հարազատներդ էլ վայրի գազանից վատ են: Նույնիսկ շունը պահպանում է իր լակոտներին, իսկ էստեղ հորեղբայրը հարազատ եղբորորդու հոգին հանել է: Իսկ դու, տխմարի մեկը, չէի՞ր կարող հորեղբորն ասել, որ չբարեհաճի պարոնի վրա այդպես հաչել, այլ քաշվի գնա: Թող իր անզգամ կնոջ վրա բղավեր: Տես թե ո՞ւմ է գտել հայհոյելու. «Աշխատի՛ր, աշխատի՛ր»: Թող ինքը սատկեր աշխատանքի վրա: Շո՛ւն, իսկապես որ շո՛ւն, տեր քեզ մեղա: Ծառա է գտել աշխատեցնելու:

Դրան հաջորդեց լռություն:

— Վաղո՞ւց է Սաշենկան այդպես նիհարել,— հարցրեց նա հետո:

— Ահա արդեն երեք տարի կլինի,— պատասխանեց Եվսեյը:— Ալեքսանդր Ֆյոդորիչն սկսեց խիստ տխրել և սնունդ քիչ էր ընդունում. հանկարծ սկսեց նիհարել, նիհարել, մոմի պես հալվում էր:

— Բայց ինչո՞ւ էր տխրում:

— Աստված գիտի, տիրուհի: Պյոտր Իվանիչը բարեհաճում էր ինչ-որ բան ասել այդ մասին. ես ականջ էի դնում, բայց դժվար բան էր, չհասկացա:

— Իսկ ի՞նչ էր ասում:

Եվսեյը մի րոպեի չափ մտածեց, ըստ երևույթին, ջանալով ինչ-որ բան հիշել, և շարժում էր շրթունքները:

— Ինչ-որ անուն էր տալիս նրան, բայց մոռացել եմ...

Աննա Պավլովնան և Ագրաֆենան նայում էին նրան և անհամբեր սպասում էին պատասխանի:

— Հը՞...— ասաց Աննա Պավլովնան:

Եվսեյը լուռ էր:

— Դե, շշմած, մի բան ասա,— ավելացրեց Ագրաֆենան,— տիրուհին սպասում է:

— Հի... կարծես թե, հիաս…թափված...— արտասանեց վերջապես, Եվսեյը:

Աննա Պավլովնան տարակուսանքով նայեց Ագրաֆենային, Ագրաֆենան՝ Եվսեյին, Եվսեյը՝ նրանց երկուսին, և բոլորը լուռ էին:

— Ինչպե՞ս,— հարցրեց Աննա Պավլովնան:

— Հիա... հիասթափված, ճիշտ այդպես, հիշեցի,— վճռական ձայնով պատասխանեց Եվսեյը:

— Դա է՞լ ինչ փորձանք է: Տե՛ր աստվա՛ծ: Հիվանդությո՞ւն է, ինչ է,— հարցրեց Աննա Պավլովնան թախիծով:

— Ախ, դա հո չի՞ նշանակում «խանգարված», տիրուհի,— շտապով հարցրեց Ագրաֆենան:

Աննա Պավլովնան գունատվեց ու թքեց:

— Լեզուդ չորանա,— ասաց նա:— Եկեղեցի գնո՞ւմ էր:

Եվսեյը մի քիչ տատանվեց:

— Չի կարելի ասել, տիրուհի, որ շատ էր գնում...— անվճռական պատասխանեց նա,— համարյա կարելի է ասել, որ չէր էլ գնում... այնտեղ պարոնները, համարյա քիչ են գնում եկեղեցի...

— Ահա՛ թե ինչից է,— ասաց Աննա Պավլովնան հոգոց հանելով և երեսը խաչակնքեց:— Երևում է, աստծուն հաճո չէին միայն իմ աղոթքները: Երազը սուտ չի ասում, ճիշտ որ ջրափոսից է դուրս պրծել աղավնյակս:

Այդ ժամանակ եկավ Անտոն Իվանիչը:

— Ճաշը կսառչի, Աննա Պավլովնա,— ասաց նա,— ժամանակը չէ՞ Ալեքսանդր Ֆյոդորիչին զարթեցնելու:

— Ոչ, ոչ, աստված մի արասցե,— պատասխանեց նա:— Նա չպատվիրեց, որ իրեն զարթեցնեն: «Ճաշեցեք, ասում է, մենակ. ես ախորժակ չունեմ. ավելի լավ է, քնեմ, ասում է. քունն ինձ կամրապնդի, երևի երեկոյան կուզենամ»: Դուք ահա թե ինչ արեք, Անտոն Իվանիչ. չբարկանաք պառավիս վրա. ես կգնամ կանթեղ կվառեմ ու մի քիչ կաղոթեմ, քանի դեռ Սաշենկան քնած է. ես ուտելու գլուխ չունեմ. իսկ դուք ճաշեցեք մենակ:

— Լավ, մերս, լավ, կկատարեմ. վստահ եղեք ինձ վրա:

— Եվ բարեգութ եղեք,— շարունակեց Աննա Պավլովնան,— դուք մեր բարեկամն եք, այնպես սիրում եք մեզ, կանչեցեք Եվսեյին և մի կարգին հարցուփորձ արեք, թե այդ ինչի՞ց է Սաշենկան այդպես մտածկոտ դարձել և ո՞ւր են կորել նրա մազիկները: Դուք տղամարդ եք. ձեզ ավելի հարմար է... նրան հո չե՞ն վշտացրել: Ախր կան այդպիսի չարագործներ աշխարհիս երեսին... ամեն ինչ իմացեք:

— Լավ, մերս, լավ. ես հարցուփորձ կանեմ, ամենախոր գաղտնիքները կիմանամ: Ինձ մոտ ուղարկեցեք Եվսեյին, քանի ճաշում եմ՝ ամեն ինչ կկատարեմ:

— Բարև՛, Եվսեյ,— ասաց նա, սեղան նստելով և անձեռոցիկը փողպատի հետևը խրելով:

— Բարև ձեզ, պարոն: Մեր ապրուստն ի՞նչ է որ: Վատ է: Հրեն, դուք ո՞նց եք գիրացել էստեղ:

Անտոն Իվանիչը թքեց:

— Աչք մի տուր, ախպեր. մեկ էլ տեսար մեղքի մեջ կընկնես,— ավելացրեց նա և սկսեց շչին ուտել:

— Է, ինչպե՞ս էիք այնտեղ,— հարցրեց նա:

— Դե էնպես. այնքան էլ լավ չէինք:

— Գոնե մթերքը լա՞վն էր: Դու ի՞նչ էիր ուտում:

— Ի՞նչ: Կրպակից դոնդող ես առնում և սառը կարկանդակ, էդ էլ քեզ ճաշ:

— Ինչպե՞ս թե կրպակից. իսկ սեփական վառարա՞նը:

— Տանը չէինք պատրաստում: Այնտեղ ամուրի պարոնները սեղան չեն պահում:

— Ի՜նչ ես ասում,— ասաց Անտոն Իվանիչը, գդալը ցած դնելով:

— Ճիշտ. պարոնի համար էլ պանդոկից էինք բերում:

— Ա՛յ քեզ գնչուական կյանք: Ա՜: Չնիհարի՜: Առ, խմիր:

— Խոնարհաբար շնորհակալ եմ ձեզնից, պարոն: Ձեր կենացը:

Ապա հաջորդեց լռությունը: Անտոն Իվանիչն ուտում էր:

— Այնտեղ վարունգն ի՞նչ արժի,— հարցրեց նա, իր ափսեին մի վարունգ դնելով:

— Տասնյակը քառասուն կոպեկ:

— Դե լա՜վ:

— Աստված վկա. էդ ինչ է որ, պարոն. ամոթ է ասելը, պատահում է, որ Մոսկվայից աղը դրած վարունգ են բերում:

— Ախ, տե՜ր աստված: Դե՜: Դեռ չնիհարի՜:

— Էնտեղ ե՞րբ կտեսնես էսպիսի վարունգ,— շարունակեց Եվսեյը, մի վարունգ ցույց տալով,— երազումդ էլ չես տեսնի: Մանրուք, զիբիլ. էստեղ երեսն էլ չէին նայի, իսկ էնտեղ պարոններն են ուտում: Հազվադեպ տներում են հաց թխում, պարոն: Իսկ որ կաղամբի պաշար տեսնեն, միս աղեն, սունկ թթու դնեն, ոչ մի բան սովորույթ չէ:

Անտոն Իվանիչը գլուխն օրորեց, բայց ոչինչ չասաց, որովհետև բերանը լեփ-լեցուն էր:

— Հապա ինչպե՞ս,— հարցրեց նա բերանինը ծամելուց հետո:

— Խանութում ամեն ինչ կա. իսկ ինչ որ խանութում չկա, հենց էդտեղ մոտերքում, որևէ երշիկանոցում կա, իսկ եթե էնտեղ չկա, ուրեմն հրուշակարանում կա. իսկ եթե հրուշակարանում որևէ բան չկա, գնա անգլիական խանութ. ֆրանսիացիներն ամեն ինչ ունեն:

Լռություն:

— Է, իսկ խոճկորնե՞րն ինչ արժեն,— հարցրեց Անտոն Իվանիչը, ափսեին դնելով խոճկորի գրեթե կեսը:

— Չգիտեմ. չէինք գնում. ինչ-որ թանկ էր. կարծեմ, մի երկու ռուբլի...

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ: Չնիհարի՜: Ինչպիսի՜ թանկություն:

— Նրանց լավ պարոնները շատ չեն էլ ուտում. ավելի շատ աստիճանավորներն են ուտում:

Նորից լռություն:

— Բա դուք ո՞նց էիք էնտեղ, վա՞տ,— հարցրեց Անտոն Իվանիչը:

— Աստվա՜ծ մի արասցե թե ինչքան վատ էր: Հրեն էստեղ ի՜նչ կվաս է, իսկ էնտեղ գարեջուրն էլ սրանից ջրիկ էր, իսկ կվաս որ խմում էիր, ամբողջ օրը կարծես թե փորումդ եռ էր գալիս: Լավ է միայն վաքսը. էնպիսի վաքս է, որ նայելուց չես կշտանա: Եվ ի՜նչ հոտ ունի. ուղղակի կուտեի:

— Ի՜նչ ես ասում:

— Աստվա՜ծ վկա:

Լռություն:

— Բա, ուրեմն ինչպե՞ս,— հարցրեց Անտոն Իվանիչը, բերանի պատառը ծամելուց հետո:

— Էնպես, էլի՛:

— Վա՞տ էիք ուտում:

— Վատ: Ալեքսանդր Ֆյոդորիչը ուտում էր էնպես, շատ քիչ. բոլորովին ետ էր վարժվել ուտելուց. ճաշի վրա մի ֆունտ հաց էլ չէր ուտում:

— Չնիհարի՛,— ասաց Անտոն Իվանիչը:— Բոլորի պատճառն այն էր, որ թա՞նկ էր թե ինչ:

— Համ թանկ էր, համ էլ սովորություն չէ ամեն օր կուշտ ու կուռ ուտելը: Պարոններն ուտում են կարծես գողտուկ, օրական մի անգամ, էն էլ, թե հասցրին, ժամը հնգին, երբեմն վեցին մոտ. իսկ էնպես թե մի բան դնեն բերանները, դրանով էլ վերջացնում են: Նրանց համար ուտելը վերջին բանն է. առաջ բոլոր գործերն են անում վերջացնում, իսկ հետո նոր ուտում:

— Ա՛յ քեզ ապրուստ,— ասաց Անտոն Իվանիչը:— Չնիհարի՛: Զարմանալի է, թե ինչպես չեք մեռել այնտեղ: Եվ ամբողջ ժամանակ այդպե՞ս:

— Ոչ. տոն օրերին երբեմն հավաքվում են պարոնները, աստված չանի, թե ինչպես են ուտում: Գնում են որևէ գերմանական պանդոկ և հավատա մի հարյուր մանեթ ուտում են: Իսկ ո՞նց են խմում, տե՛ր աստված: Մեզնից էլ վատ: Այ կպատահեր, որ Պյոտր Իվանիչի մոտ հյուրեր էին հավաքվում. սեղան էին նստում ժամը վեցին մոտ, վեր էին կենում առավոտյան ժամը չորսի կողմ:

Անտոն Իվանիչը աչքերը չռեց:

— Ի՜նչ ես ասում,— ասաց նա:— Եվ շարունակ ուտո՞ւմ են:

— Շարունակ ուտում են:

— Մարդ գոնե տեսներ. մերի պես չէ: Իսկ ի՞նչ են ուտում նրանք:

— Էհ, ի՞նչ պիտի լինի, պարոն, վրան նայելու բան չկա: Չես էլ հասկանում, թե կերածդ ինչ է. գերմանացիները կերակրի մեջ աստված գիտի, թե ինչ են դնում. մարդ չի էլ ուզի բերանը դնել: Նրանց տաքդեղն էլ մերի պես չէ. սոուսի մեջ անդրծովյան սրվակներից ինչ-որ բաներ են լցնում... Մի անգամ Պյոտր Իվանիչի խոհարարը աղայական կերակուր հյուրասիրեց ինձ, դրանից հետո երեք օր սիրտս խառնում էր: Տեսնեմ՝ կերակրի մեջ ձիթապտուղ կա. կարծեցի, թե էստեղի ձիթապտղի պես է. կծեցի, տեսնեմ՝ մեջը փոքրիկ ձկնիկ է, զզվեցի, բերնիցս թքեցի, մի ուրիշը վերցրի, էնտեղ էլ կար. և բոլորի մեջ... ախ, ես ձեր... անիծածնե՛ր...

— Այդ ինչպե՞ս. դիտմա՞մբ են մեջը դնում:

— Աստվա՛ծ գիտի նրանց: Ես հարցրի, տղերքը ծիծաղում են, ասում են, գիտե՞ս ինչ, էդպես են բուսնում: Եվ ի՞նչ կերակուրներ են: Սկզբից տաք կերակուր են տալիս հետը կարկանդակ, բայց անունն է կարկանդակ. մատնոցի չափ. միանգամից բերանդ ես դնում մի վեց հատ, ուզում ես ծամել, մեկ էլ տեսնում ես՝ արդեն չկան, հալվել են... Տաքից հետո հանկարծ մի քաղցր բան են տալիս, հետո տավարի միս, հետո էլ պաղպաղակ, իսկ մեկ էլ ինչ-որ խոտ, մեկ էլ տապակա... իսկի չէի էլ ուտի:

— Ուրեմն ձեր վառարանը նույնիսկ չէ՞ր վառվում: Դե, էլ ինչպե՞ս չնիհարի,— ասաց Անտոն Իվանիչը, վեր կենալով սեղանից:

«Շնորհակալ եմ քեզնից, աստված իմ,— սկսեց նա բարձրաձայն, խոր հոգոցով,— զի կշտացրիր զիս երկնավոր բարիքներից... Ի՜նչ եմ ասում: Լեզուս փաթ ընկավ. երկրային բարիքներից,— և մի՛ զրկիր ինձ երկնային արքայությունից քո»:

— Սեղանը հավաքեցեք. պարոնները չեն ուտելու: Իրիկվա համար մի ուրիշ խոճկոր պատրաստեցեք... կամ թե հնդկահավ չունե՞ք: Ալեքսանդր Ֆյոդորիչը սիրում է հնդկահավ. նա ախր կսովածանա: Իսկ հիմա սենյակս խոտ բերեք, ինչքան կարելի է՝ թարմ, մի երկու ժամ հանգստանամ. թեյի ժամանակ կարթնացնեք: Թե որ էնտեղ Ալեքսանդր Ֆյոդորիչը տեղից շարժվի, էնիքը... ինձ ձեն տվեք:

Քնից վեր կենալով, նա եկավ Աննա Պավլովնայի մոտ:

— Ինչպե՞ս եք, Անտոն Իվանիչ,— հարցրեց նա:

— Ոչինչ, մերս, խոնարհաբար շնորհակալ եմ աղ ու հացի համար... և էնպե՛ս քաղցր քնեցի. խոտը էնպե՛ս թարմ, բուրավետ էր...

— Անուշ լինի, Անտոն Իվանիչ: Իսկ ի՞նչ է ասում Եվսեյը: Հարցրի՞ք:

— Ինչպե՛ս չհարցրի: Ամեն ինչ իմացա. դատարկ բան է: Ամեն ինչ կուղղվի: Ամբողջ բանն այն է, որ այնտեղ սնունդը վատն է:

— Սնո՞ւնդը:

— Այո. ինքներդ դատեցեք. վարունգը՝ տասնյակը քառասուն կոպեկ, խոճկորը երկու ռուբլի, իսկ ամբողջ ուտելեղենը հրուշակի է, կուշտ ուտել էլ չես կարող: Մարդ ինչպե՛ս չնիհարի: Մի անհանգստացեք, մերս, մենք այստեղ նրան ոտքի կկանգնեցնենք, կբուժենք: Դուք պատվիրեցեք ինչքան կարելի է կեչու թրմաջուր պատրաստեն, դեղատոմսը ես կտամ. Պրակոֆի Աստաֆիչից է մնացել ինձ. և առավոտ իրիկուն մեկական կամ երկուական ըմպանակ տվեք, ճաշից առաջ էլ լավ է. կարելի է օրհնած ջրի հետ... ունե՞ք:

— Ունենք, ունենք. չէ՞ որ դուք էիք բերել:

— Իսկապես որ՝ ես: Կերակուրն ընտրեցեք ինչքան կարելի է՝ ճարպոտ: Ես արդեն պատվիրեցի ընթրիքի համար խոճկոր կամ հնդկահավ տապակել:

— Շնորհակալ եմ, Անտոն Իվանիչ:

— Չարժե, մերս: Չպատվիրե՞մ նաև հավի ճուտեր սպիտակ սոուսով:

— Ես կպատվիրեմ...

— Ինչո՞ւ ինքներդ: Բա ե՞ս ինչի համար եմ: Հոգ կտանեմ... թողեք ինձ:

— Հոգ տարեք, օգնեցեք, հարազատ հայր:

Նա գնաց, իսկ Աննա Պավլովնան մտքերի մեջ ընկավ:

Կանացի բնազդը և մայրական սիրտը նրան ասում էին, որ սնունդը չէ Ալեքսանդրի մտախոհության գլխավոր պատճառը: Նա սկսեց վարպետ ակնարկներով կողմնակիորեն տեղեկանալ, բայց Ալեքսանդրը չէր հասկանում այդ ակնարկները և լռում էր: Այդպես անցավ երկու-երեք շաբաթ: Խոճկոր, հավի ճուտ ու հնդկահավ շատ ծախսվեց Անտոն Իվանիչի վրա, իսկ Ալեքսանդրը շարունակ մտախոհ էր, նիհար, և մազերը չէին բուսնում:

— Լսիր, իմ բարեկամ Սաշենկա,— ասաց մի անգամ մայրը,— ահա արդեն մի ամիս կլինի, որ ապրում ես այստեղ, իսկ ես դեռ չեմ տեսել, որ գոնե մի անգամ ժպտաս, շրջում ես ամպի պես մռայլ, գետնին ես նայում: Մի՞թե հարազատ հողումդ քեզ ոչ մի բան սիրելի չէ: Երևի օտար երկիրն ավելի հաճելի՞ է. կարոտո՞ւմ ես նրան, թե ինչ: Սիրտս կտոր-կտոր է լինում քեզ նայելով: Քեզ ի՞նչ է պատահել: Պատմիր ինձ. ի՞նչդ է պակաս: Ոչինչ չեմ խնայի: Քեզ մեկը վիրավորե՞լ է. նրան էլ կհասնեմ:

— Մի անհանգստացեք, մայրիկ,— ասաց Ալեքսանդրը,— սա ոչինչ, այնպես: Ես տարիքս առել եմ, ավելի խելոք եմ դարձել, դրա համար էլ մտախոհ եմ...

— Իսկ ինչի՞ց է, որ նիհար ես: Իսկ մազերդ ո՞ւր են:

— Չեմ կարող պատմել, թե ինչից է... ամեն բան պատմել չի լինի, ինչ եղել է ութ տարում... գուցե մի քիչ առողջությունս էլ է խախտվել...

— Իսկ ի՞նչդ է ցավում:

— Ցավում է և այստեղ, և այստեղ,— նա ցույց տվեց գլուխը և սիրտը:

Աննա Պավլովնան ձեռքը դրեց նրա ճակատին:

— Տաքություն չունես,— ասաց նա:— Ի՞նչ կարող է լինել դա: Գլուխդ ծակո՞ւմ է, թե ինչպես:

— Ոչ... այնպես...

— Սաշենկա: Ուղարկենք Իվան Անդրեյիչի հետևից:

— Այդ ո՞վ է Իվան Անդրեյիչը:

— Նոր բժիշկը. մի երկու տարի է, ինչ եկել է: Այնպես հմուտ է, որ հրաշք բան: Համարյա ոչ մի դեղ չի գրում. ինքն է սարքում շատ մանրիկ հատիկներ և օգնում է: Հրեն մեր Ֆոման փորի ցավ ուներ. երեք օր ձայնը գլուխ գցած գոռում էր. նա երեք հատիկ տվեց նրան, ցավը դանակի պես կտրեց: Բուժվիր, աղավնյակս:

— Ոչ, մայրիկ, նա ինձ չի օգնի. սա այնպես, կանցնի:

— Բայց ախր ինչո՞ւ ես թախծում: Այդ ի՞նչ փորձանք է:

— Այնպես...

— Ի՞նչ ես ուզում:

— Ինքս էլ չգիտեմ, դրա համար էլ թախծում եմ:

— Այ քեզ զարմանք բան, տե՜ր աստված,— ասաց Աննա Պավլովնան:— Ուտելիքն, ասում ես, քեզ դուր է գալիս, բոլոր հարմարությունները կան, և լավ աստիճան ունես... կարծես թե՝ էլ ի՞նչ, բայց թախծում ես: Սաշենկա,— ասաց նա, փոքր-ինչ լռելով, կամացուկ,— արդյոք ժամանակը չէ՞... որ ամուսնանաս:

— Ի՜նչ եք ասում: Ոչ, ես չեմ ամուսնանա:

— Իսկ ես աչքի առաջ ունեմ մի աղջիկ, իսկական տիկնիկ. վարդագույն, քնքուշ: Իրանն այնքան բարակ է, սլացիկ. սովորել է քաղաքում, պանսիոնում. յոթանասունհինգ հոգի ունի և քսանհինգ հազար էլ փող, օժիտն էլ հրաշալի օժիտ է. Մոսկվայում են պատրաստել, ազգ ու տակն էլ լավն է... Հը՞: Սաշենկա: Ես արդեն մոր հետ մի անգամ սուրճ խմելիս խոսք բաց արի ու կատակով խոսք գցեցի. նա ուրախությունից կարծես ականջները սրեց...

— Ես չեմ ամուսնանա,— կրկնեց Ալեքսանդրը:

— Ինչպե՞ս, երբե՞ք:

— Երբեք:

— Տե՜ր ողորմյա: Դրանից ի՞նչ դուրս կգա: Բոլոր մարդիկ մարդու պես են, մենակ դու, աստված գիտի, թե ինչի ես նման, իսկ ինձ համար ի՜նչ ուրախություն կլիներ: Աստված կտար՝ թոռնիկներիս կխնամեի: Իսկապես, ամուսնացիր նրա հետ. դու նրան կսիրես…

— Չեմ սիրի, մայրիկ, ես արդեն դադարել եմ սիրելուց:

— Ինչպե՞ս ես դադարել սիրելուց, առանց ամուսնանալու: Ո՞ւմ էիր սիրում այնտեղ:

— Մի աղջկա:

— Բա ինչո՞ւ չամուսնացար:

— Նա ինձ դավաճանեց:

— Ինչպե՞ս դավաճանեց: Չէ՞ որ դու դեռ ամուսնացած չէիր նրա հետ:

Ալեքսանդրը լուռ էր:

— Այ թե լա՜վն են ձեր այնտեղի աղջիկները. մինչև հարսանիքը սիրում են: Դավաճանե՜ց: Սրիկայի՜ մեկը: Երջանկությունը ինքն էր նրա ձեռքն ընկնում, բայց չգնահատեց անպիտանը: Նրան տեսնեի, ռեխին կթքեի: Բա հորեղբա՞յրդ ուր էր նայում: Մի տեսնեի, թե քեզնից լավի՞ն էր գտել էդ աղջիկը: Հետո՞ ինչ, մի՞թե մենակ նա է: Երկրորդ անգամ կսիրես:

— Ես երկրորդ անգամ էլ սիրեցի:

— Այդ ո՞ւմ:

— Մի այրի կնոջ:

— Իսկ ինչո՞ւ չամուսնացար:

— Նրան ես ինքս դավաճանեցի:

Աննա Պավլովնան նայում էր Ալեքսանդրին և չգիտեր, թե ինչ ասի:

— Դավաճանեցի՜ր...— կրկնեց նա:— Երևի անառակի մեկն էր,— ավելացրեց հետո:— Իսկապես ջրափոս, տեր, քեզ մեղա, սիրում են մինչև հարսանիքը, առանց եկեղեցական ծեսի. դավաճանում են... էս ի՜նչ է կատարվում աշխարհքում, որ շուրջդ ես նայում: Երևում է, շուտով աշխարհքի վերջն է... Դե ասա, որևէ բան չե՞ս ուզում: Գուցե կերակո՞ւրը ճաշակովդ չէ: Քաղաքից խոհարար բերել կտամ...

— Ոչ, շնորհակալ եմ. ամեն ինչ լավ է:

— Գուցե մենակ տխրո՞ւմ ես. հարևանների հետևից մարդ կուղարկեմ:

— Ոչ, ոչ: Մի անհանգստացեք, մայրիկ: Ինձ համար այստեղ հանգիստ է, լավ. ամեն ինչ կանցնի... ես դեռ շուրջս չեմ նայել:

Ահա բոլորը, ինչ կարողացավ իմանալ Աննա Պավլովնան:

«Ոչ,— մտածում էր նա,— ինչպես երևում է, առանց աստծու ոչ մի քայլ»: Նա Ալեքսանդրին առաջարկեց իր հետ պատարագի գնալ մոտակա գյուղը, բայց Ալեքսանդրը երկու անգամ քնով անցավ, իսկ նրան արթնացնել սիրտ չէր անում մայրը: Վերջապես նրան մի իրիկուն կանչեց երեկոյան ժամասացության:— Խնդրեմ,— ասաց Ալեքսանդրը, և գնացին: Մայրը մտավ եկեղեցի և կանգնեց ուղղակի դասի մոտ, Ալեքսանդրը մնաց դռան մոտ:

Արևն արդեն մայր էր մտնում և շեղ ճառագայթներ էր գցում, որոնք մերթ խաղում էին սրբապատկերների ոսկե շրջանակների վրա, մերթ լուսավորում էին սրբերի խստահայաց դեմքերը և իրենց փայլով ոչնչացնում մոմերի դողդոջ առկայծումը: Եկեղեցին գրեթե դատարկ էր. գյուղացիները աշխատում էին դաշտում. միայն մուտքի մոտ անկյունում խռնվել էին սպիտակ գլխաշորերով մի քանի պառավ: Ոմանք, դարդոտած և այտերը ձեռներին հենած, նստել էին կողմնասեղանի քարե աստիճանին և ժամանակ առ ժամանակ բարձրաձայն ու ծանր հառաչներ էին արձակում, աստված գիտի՝ իրենց մեղքերի՞, թե՞ տնային գործերի մասին: Ուրիշներ, գետնին խոնարհված, երկար պառկում էին երեսնիվայր, աղոթելով:

Ձով քամին թուջե վանդակապատից ներս էր խուժում լուսամուտ և մերթ բարձրացնում էր բեմի սեղանի ծածկոցը, մերթ խաղում էր քահանայի ալեհեր մազերի հետ կամ շուռ էր տալիս գրքի թերթերը և հանգցնում մոմը: Քահանայի և տիրացուի քայլերը ուժեղ հնչում էին, դիպչելով դատարկ եկեղեցու քարե հատակին. նրանց ձայները վիատորեն տարածվում էին կամարների

տակ: Վերևում, գմբեթում, հնչեղ կռավում էին սերմնագռավները և ծլվլում մի լուսամուտից մյուսը թռչկոտող ճնճղուկները, և նրանց թևերի աղմուկն ու զանգերի զրնգոցը երբեմն խլացնում էին ժամասացությունը...

«Քանի դեռ մարդու մեջ եռում են կենսական ուժերը,— մտածում էր Ալեքսանդրը,— քանի դեռ խաղում են ցանկություններն ու կրքերը, նա զբաղված է զգայականորեն, նա փախչում է այն հանգստացուցիչ կարևոր և հանդիսավոր հայեցողությունից, դեպի որը տանում է կրոնը... նա գալիս է կրոնի մեջ մխիթարություն փնտրելու մարած, վատնած ուժերով, խորտակված հույսերով, տարիների բեռն ուսին...»:

Ծանոթ առարկաները տեսնելով, Ալեքսանդրի հոգում տակավ առ տակավ արթնանում էին հուշերը: Նա մտովի վազեց անցավ իր մանկությունն ու պատանեկությունը մինչև Պետերբուրգ գնալը. հիշեց, թե ինչպես երեխա ժամանակ նա մոր հետևից կրկնում էր աղոթքները, ինչպես մայրը շարունակ պնդում էր նրան պահպանիչ-հրեշտակի մասին, որը կանգնած է մարդու հոգու պահակության և հավերժ թշնամի է պիղծ ոգուն. ինչպես մայրը, նրան ցույց տալով աստղերը, ասում էր, թե դրանք աստծու հրեշտակների աչերն են, որոնք նայում են աշխարհին և հաշվում մարդկանց բարի և չար գործերը. ինչպես երկնաբնակները լալիս են, երբ ստացվում են ավելի շատ չար, քան թե բարի գործեր, և ինչպես են ուրախանում, երբ բարի գործերը գերազանցում են չարերին: Ցույց տալով հեռու հորիզոնի կապույտը, նա ասում էր, որ դա Սիոնն է... Ալեքսանդրը հոգոց հանեց, սթափվելով այդ հուշերից:

«Ախ, եթե ես դեռ կարողանայի հավատալ դրան,— մտածում էր նա:— Մանկական հավատալիքներս կորցրել եմ, իսկ ի՞նչ եմ իմացել նոր, ճշմարիտ... Ոչինչ. ես գտել եմ կասկածներ, դատողություններ, տեսություններ... և ճշմարտությունից ավելի հեռու եմ, քան առաջ... ինչի՞ է պետք պառակտումը, այս իմաստակությունը... աստվա՜ծ: Երբ հավատի ջերմությունը չի տաքացնում սիրտը, մի՞թե կարելի է երջանիկ լինել: Մի՞թե ես ավելի երջանիկ եմ»:

Իրիկնային ժամասացությունը վերջացավ: Ալեքսանդրը տուն եկավ ավելի տխուր, քան գնացել էր: Աննա Պավլովնան չգիտեր, թե ինչ անի: Մի անգամ Ալեքսանդրը սովորականից վաղ արթնացավ և իր գլխավերևում շրշյուն լսեց. նա ետ նայեց. ինչ-որ պառավ է կանգնել իր վերև և շշնջում է. նա անմիջապես չքացավ, հենց տեսավ, որ իրեն նկատել են: Բարձի տակ Ալեքսանդրը ինչ-որ խոտ գտավ. իր վզից հուռութ էր կախված:

— Սա ի՞նչ է նշանակում,— հարցրեց Ալեքսանդրը մորը,— այդ ի՞նչ պառավ էր իմ սենյակում:

Աննա Պավլովնան շփոթվեց:

— Դա Նիկիտիշնան է,— ասաց նա:

— Ի՞նչ Նիկիտիշնա:

— Նա, գիտե՞ս ինչ, բարեկամս... դու չե՞ս բարկանա:

— Ի՞նչ բան է: Ասացեք:

— Նա... ասում են, շատերին է օգնում: Նա միայն մի քիչ շշնջում է ջրի վրա, մի քիչ էլ շնչում է քնած մարդու վրա, և ամեն ինչ անցնում է:

— Երեք տարի առաջ այրի Սիդորիխայի մոտ,— ասաց Ագրաֆենան,— գիշերները ծխնելույզի միջով կրակե օձ էր թռչում գալիս...

Այստեղ Աննա Պավլովնան թքեց:

— Նիկիտիշնան,— շարունակեց Ագրաֆենան,— օձին հմայեց. օձը դադարեց թռչել...

— Իսկ Սիդորիխա՞ն ինչ եղավ:

— Երեխա բերեց. երեխան այնքա՜ն նիհար ու սև էր. երրորդ օրը մեռավ:

Ալեքսանդրը ծիծաղեց, գուցե առաջին անգամ գյուղ գալուց հետո:

— Որտեղի՞ց եք ճարել այդ պառավին,— հարցրեց նա:

— Անտոն Իվանիչն է բերել,— պատասխանեց Աննա Պավլովնան:

— Հավա՛ս ունեք այդ հիմարին լսելու:

— Հիմարի՞ն: Ախ, Սաշենկա, այդ ի՞նչ ես ասում: Մեղք չէ՞: Անտոն Իվանիչը հիմա՛ր: Ինչպե՞ս պտտվեց լեզուդ: Անտոն Իվանիչը մեր բարերարը, մեր բարեկա՛մն է:

— Ահա, վերցրեք հուռութքը, մայրիկ, և տվեք մեր բարեկամին ու բարերարին, թող իր վզից կախի:

Այդ օրվանից նա սկսեց գիշերները իր դուռը կողպել:

Անցավ երկու-երեք ամիս: Կամաց-կամաց միայնությունը, տնային կյանքը և դրա հետ կապված բոլոր նյութական բարիքները օգնեցին Ալեքսանդրին կազդուրվելու: Իսկ ծուլությունը, անհոգությունը և ամենայն բարոյական ցնցման բացակայությունը նրա հոգուն բերում էին խաղաղություն, որն այնպես իզուր որոնում էր Ալեքսանդրը Պետերբուրգում: Այնտեղ, փախչելով գաղափարների, արվեստի աշխարհից, բանտարկված քարե պատերի մեջ, նա ուզում էր քնել խլուրդի քնով, բայց նրան անընդհատ արթնացնում էին նախանձի հուզումները և անզոր ցանկությունները: Ամեն մի երևույթ գիտության և արվեստի աշխարհում, ամեն մի նոր հռչակավոր մարդ նրա մեջ արթնացնում էին մի հարց. «Այդ ինչո՞ւ ե՛ս չեմ դա, ինչո՞ւ ե՛ս չեմ»: Այնտեղ ամեն քայլափոխում մարդկանց մեջ նա հանդիպում էր իր համար անձեռնտու համեմատությունների... այնտեղ այնքա՛ն հաճախ էր ընկնում, այնտեղ տեսավ, ինչպես հայելու մեջ, իր թուլությունները... այնտեղ էր անողոք հորեղբայրը, որը հետապնդում էր նրա մտածելակերպը, ծուլությունը և ոչնչի վրա չհիմնված փառասիրությունը. այնտեղ նրբագեղ աշխարհն էր և բազմաթիվ օժտված մարդիկ, որոնց մեջ նա ոչ մի դեր չէր խաղում: Վերջապես այնտեղ աշխատում են կյանքը հարմարեցնել որոշակի պայմանների, լուսաբանել նրա մութ և հանելուկային տեղերը, թույլ չտալով զգացմունքների, կրքերի ու երազանքների սանձարձակություն, դրանով կյանքը զրկելով բանաստեղծական գրավչությունից, ուզում են նրա համար ստեղծել ինչ-որ ճանձրալի, չոր, միօրինակ և ծանր ձև...

Իսկ այստեղ ի՜նչ ազատություն է: Ինքը բոլորից լավ, բոլորից խելացի է: Այստեղ նա համընդհանուր կուռք է մի քանի վերստ շրջապատում: Ընդ որում այստեղ ամեն քայլափոխի, բնությանը դեմ հանդիման, նրա հոգին բացվում էր խաղաղ, հանգստացուցիչ տպավորություններին ընդառաջ: Ալիքների զրույցը, տերևների շշուկը, զովը և երբեմն բնության լռությունն իսկ՝ ամեն ինչ ծնում էր խոհ, արթնացնում զգացմունք: Այգում, դաշտում, տանը նրան այցելում էին մանկության և պատանեկության հուշերը: Աննա Պավլովնան, երբեմն նրա կողքին նստած, կարծես կռահում էր նրա մտքերը: Նա որդուն օգնում էր հիշողության մեջ նորոգելու կյանքից վերցրած նրա սրտին մոտիկ մանրուքներ կամ պատմում էր այն, ինչ Ալեքսանդրը բոլորովին չէր հիշում:

— Ահա այս լորենիները,— ասում էր նա, ցույց տալով այգին,— քո հայրն է տնկել: Ես քեզնով հղի էի: Պատահում էր, որ նստում էի այստեղ պատշգամբում, և նայում էի նրան: Նա աշխատում էր, աշխատում, մեկ էլ նայում էր ինձ, իսկ քրտինքը կարկուտի պես թափվում էր նրանից: «Ա՛, դու այստեղ ես,— կասեր:— Ես էլ ասում եմ՝ ինչո՞ւ եմ այսքան ուրախ աշխատում»,— ու նորից էր գործի անցնում: Իսկ ահա այն մարգագետինը, որտեղ դու մի ժամանակ խաղում էիր երեխաների հետ. այնքան բարկացկո՛տն էիր. հենց որ մի բան քեզ դուր չէր գալիս, բարձր գոռում էիր: Մի անգամ Ագաշկան, որը հիմա Կուզմային է մարդու գնացել, նրա խրճիթը գյուղի ցանկապատից հաշված՝ երրորդն է, քեզ հանկարծ բռթեց, և քիթդ արյունջարդ արեց. հայրդ ճիպոտով ծեծեց, ծեծեց նրան, ես աղաչանքով հազիվ ազատեցի աղջկան:

Ալեքսանդրը մտովի լրացնում էր այդ հիշողությունները այլ հուշերով. «Ահա այն ծառի տակի նստարանին էի նստում Սոֆիայի հետ,— մտածում էր նա,— և երջանիկ էի այն ժամանակ: Իսկ ահա այնտեղ, եղրևանու երկու թփերի միջև, նրանից ստացա առաջին համբույրը...» Եվ այդ

ամենը աչքի առաջ էր: Նա ժպտում էր այդ հուշերին և ամբողջ ժամերով նստում էր պատշգամբում, դիմավորելով կամ ճամփու դնելով արևը, ունկնդիր լինելով թռչունների երգին, լճի ճողփյունին և անտեսանելի միջատների բզզոցին:

«Աստվա՛ծ իմ: Ի՜նչ լավ է այստեղ,— ասում էր նա այդ կարճ տպավորությունների ազդեցության տակ,— հեռու իրարանցումից, այդ մանրախնդիր կյանքից, այն մրջնանոցից, որտեղ մարդիկ

...այդպես կուտակված, պարսպապատված,

չեն շնչում այգի կենարար զովը,

ոչ գարնանային դաշտերի բույրը:

Ինչպես հոգնում ես այնտեղ ապրելուց և ինչպես հանգստանում ես հոգով այստեղ, այս հասարակ, պարզ, անխրթին կյանքում: Սիրտդ նորոգվում է, կուրծքդ շնչում է ավելի ազատ, իսկ միտքդ չի ծվատվում տանջալից խոհերից և սրտի հետ վարած անվերջանալի դատավեճերից. թե մեկը, թե մյուսը հաշտ են: Մտածելու բան չկա: Անհոգ, առանց տանջալից խոհի, նիրհող սրտով ու մտքով և թեթև թրթիռով հայացքդ սահեցնում ես պուրակից դեպի արտը, արտից դեպի բլուրը և հետո խորասուզում երկնի անհուն կապույտի մեջ»:

Երբեմն նա փոխադրվում էր այն լուսամուտի մոտ, որը բացվում էր դեպի բակ և դեպի գյուղի փողոցը: Այնտեղ այլ պատկեր է, տենյերյան */Տենյեր Դավիդ (1610—1690), ֆլամանդացի նկարիչ, կենցաղային նկարների վարպետ:/* պատկեր, լի ընտանեկան հոգսաշատ կյանքով: Բարբոսը տոթից փռվում է բնի մոտ, դունչը թաթին դրած: Տասնյակ հավեր դիմավորում են առավոտը իրար հետ մրցելով, կչկչոցները գցած. աքաղաղները կռվում են: Փողոցով նախիրը քշում են արոտ: Երբեմն մի ետ մնացած կով թախծալի բառաչում է փողոցի մեջտեղ կանգնած և չորս կողմը նայելով: Գեղջուկներն ու գեղջկուհիները, փոցխերն ու գերանդիներն ուսերին, գնում են աշխատանքի: Քամին երբեմն նրանց խոսածից երկու-երեք բառ է խլում ու հասցնում լուսամուտին: Այնտեղ գռգռոցով մի գյուղական սայլ է անցնում կամրջակից, նրա հետևից ծուլորեն սողում է խոտ բարձած մի սայլ: Խարտյաշ ու կոշտամազ մանկիկները, շապիկները բարձրացրած, թափառում են ջրափոսերի մեջ: Այդ պատկերին նայելով, Ալեքսանդրն սկսեց հասկանալ **գորշ երկնքի, ջարդված ցանկապատի, դարպասի դռնակի, կեղտոտ լճի և դոփապարի** պոեզիան: Պճնամոլի նեղ ֆրակը նա փոխարինեց տանը կարած լայն խալաթով: Եվ այդ խաղաղ կյանքի ամեն մի երևույթի, և առավոտվա, և երեկոյի, և ուտելու ու հանգստի ամեն մի տպավորության մեջ ներկա էր մայրական սիրո անքուն աչքը:

Նա չէր դադարում ուրախանալուց, տեսնելով, թե ինչպես էր չաղանում Ալեքսանդրը, ինչպես նրա այտերին վերադառնում էր կարմիրը, ինչպես աչքերն աշխուժանում էին խաղաղ փայլով: «Միայն մազիկները չեն բուսնում,— ասում էր նա,— մետաքսի պես էին»:

Ալեքսանդրը հաճախ էր զբոսնում շրջակայքում: Մի անգամ նա հանդիպեց գյուղացի կանանց ու աղջիկների, որոնք անտառ էին գնում սունկի, միացավ նրանց և ամբողջ օրը ման եկավ: Տուն վերադառնալով, նա գովեց Մաշա անունով մի աղջկա ճարպկության ու արագաշարժության համար, և Մաշան վերցվեց աղայական տուն, **պարոնին սպասավորելու**: Երբեմն գնում էր դաշտային աշխատանքները նայելու և փորձով իմանում այն, ինչի մասին գրում և թարգմանում էր ժուռնալի համար: «Ինչքան հաճախ մենք ստեր էինք ասում այնտեղ...»,— մտածում էր նա գլուխն օրորելով, և սկսեց ավելի ուշադիր ու խորը թափանցել գործի մեջ:

Մի անգամ վատ եղանակին նա փորձեց գործով զբաղվել, նստեց գրելու և գոհ մնաց աշխատանքի սկզբով: Տեղեկանքների համար ինչ-որ գիրք պետք եկավ. նա գրեց Պետերբուրգ, գիրքն ուղարկեցին: Նա լրջորեն զբաղվեց: Էլի գրքեր դուրս գրեց: Իզուր Աննա Պավլովնան սկսեց համոզել նրան, որ չգրի, որպեսզի **կրծքիկը չճմլվի.** Ալեքսանդրը լսել անգամ չէր ուզում: Մայրն Անտոն Իվանիչին ուղարկեց. Ալեքսանդրը նրան էլ չլսեց և շարունակ գրում էր, երբ անցավ երեք-չորս ամիս, բայց նա գրելուց ոչ միայն չնիհարեց, այլ ավելի հաստացավ, Աննա Պավլովնան հանդարտվեց:

Այդպես անցավ մոտ մեկուկես տարի: Ամեն ինչ լավ կլիներ, բայց այդ ժամկետի վերջում Ալեքսանդրը նորից սկսեց մտախոհ դառնալ: Նա ոչ մի ցանկություն չուներ, իսկ եթե մի ցանկություն էլ ունենար, դժվար չէր դա բավարարելը. դրանք ընտանեկան կյանքի սահմաններից դուրս չէին գալիս: Նրան ոչ մի բան չէր անհանգստացնում. ոչ հոգսը, ոչ երկմտանքը, բայց նա թախծում էր: Նրան քիչ-քիչ ձանձրացրեց ընտանեկան նեղ շրջանակը. մոր հաճոյակատարությունը տաղտկալի էր դարձել, իսկ Անտոն Իվանիչը զզվեցրել էր նրան, ձանձրացրել էր նաև աշխատանքը և բնությունը չէր գերում նրան:

Նա լուռ նստում էր պատուհանի մոտ և արդեն անտարբեր նայում էր հոր լորենիներին, սրդողած լսում էր լճի ճողփյունը: Նա սկսեց խորհել այդ նոր թախծի պատճառի մասին և հայտնագործեց, որ կարոտում է՝ Պետերբո՞ւրգը: Հեռանալով անցյալից, նա սկսեց ափսոսալ այն: Արյունը դեռ եռում էր նրա մեջ, սիրտը տրոփում, հոգին ու մարմինը ուզում էին գործունեություն... նորից խնդիր: Աստվա՜ծ իմ: Նա քիչ մնաց լաց լիներ այդ հայտնագործությունից: Նա կարծում էր, որ այդ թախիծը կանցնի, որ կընտելանա գյուղում, կսովորի. չէ՜. որքան ավելի էր ապրում այնտեղ, սիրտն ավելի ծանր էր տնքում և նորից էր ուզում նետվել հորձանուտ, որն այժմ արդեն ծանոթ էր նրան:

Նա հաշտվեց անցյալի հետ. նրան սիրելի դարձավ այդ անցյալը: Ատելությունը, մռայլ հայացքը, մռայլությունը, մարդախույս բնավորությունը մեղմացել էին մենակությունից, խորհրդածություններից: Անցյալը նրան ներկայացավ զտված լույսի տակ և նույնիսկ դավաճան Նադինկան գրեթե շողերի մեջ: «Եվ ի՞նչ եմ անում այստեղ,— զայրույթով ասում էր նա:— Ինչի՞ համար եմ թառամում: Ինչո՞ւ են հանգչում իմ ձիրքերը: Ինչո՞ւ այնտեղ չփայլեմ իմ աշխատանքով... Հիմա ավելի խելոք եմ դարձել: Հորեղբայրս ինձնից ինչո՞վ է լավ: Մի՞թե ես չեմ կարող ինձ համար ճանապարհ գտնել: Ասենք թե մինչև հիմա չի հաջողվել, ուժիցս վեր գործի եմ ձեռնարկել, հետո՞ ինչ: Հիմա ուշքի եմ եկել. ժամանակն է, ժամանա՜կը: Բայց ինչպե՜ս կվշտացնի իմ մեկնումը մայրիկիս: Այնինչ անհրաժեշտ է մեկնել. հո չի՞ կարելի այստեղ կործանվել: Այնտեղ սա ու նա՝ բոլորը մարդ են դարձել... իսկ իմ կարիերան ու բա՞խտը... մենակ ես եմ ետ մնացել... հանուն ինչի՞: Ախր ինչո՞ւ»: Նա անձկությունից դես-դեն էր նետվում և չգիտեր, թե մորն ինչպես ասի մեկնելու իր մտադրության մասին:

Բայց մայրը շուտով նրան ազատեց այդ դժվարությունից. նա մեռավ:

Ահա, վերջապես, ինչ էր գրում նա հորեղբորն ու հորեղբոր կնոջը՝ Պետերբուրգ:

Հորեղբոր կնոջը.

«Պետերբուրգից մեկնելուց առաջ դուք, ma tante, արտասվաթոր աչքերով ինձ ողջերթ էիք մաղթում թանկագին խոսքերով, որոնք խոր նստել են հիշողությանս մեջ: Դուք ասացիք. «Եթե երբևէ ինձ պետք կլինի ջերմ բարեկամություն, անկեղծ կարեկցություն, ապա ձեր սրտում միշտ մի փոքրիկ անկյուն կմնա ինձ համար»: Հասել է այն րոպեն, երբ ես հասկացա այդ խոսքերի ամբողջ արժեքը: Այդ իրավունքները ձեր սրտի նկատմամբ, որ այնպես մեծահոգաբար ինձ տվիք, ինձ համար իրենց մեջ պարփակում են խաղաղության, անդորրի, մխիթարության, հանգստության, թերևս իմ ամբողջ կյանքի երջանկության առհավատչյան: Մի երեք ամիս առաջ վախճանվեց մայրիկս. այլևս ոչ մի խոսք չեմ ավելացնի: Դուք նամակով ճանաչում եք նրան, թե ի՜նչ էր նա ինձ համար, և կհասկանաք, թե ինչից եմ զրկվել հանձին նրա... Ես հիմա այստեղից փախչում եմ ընդմիշտ: Բայց ո՞ւր պիտի ուղղեի ճանապարհս ես, միայնակ թափառականս, եթե ոչ այն վայրերը, որտեղ դուք եք... Ասացեք մի բառ. հանձին ձեր արդյոք կգտնե՞մ այն, ինչ թողել էի մոտ տարիուկես առաջ: Արդյոք ինձ չե՞ք վռնդել ձեր հիշողությունից: Արդյոք կհամաձայնե՞ք մի տխուր պարտականության՝ ձեր բարեկամությամբ, որն արդեն մի անգամ չէ, որ ինձ փրկել է վշտից, ամոքել մի նոր ու խորունկ վերք: Ամբողջ հույսս դնում եմ ձեր և մի այլ հզոր դաշնակցի՝ գործունեության վրա:

Դուք զարմանում եք, ճիշտ չէ՞: Ձեզ համար տարօրինակ է ինձնից այս բանը լսելը: Կարդալ այս տողերը, որ գրված են հանդարտ, ինձ ոչ հատուկ եղանակով: Մի՛ զարմացեք և մի վախեցեք իմ վերադարձից. ձեզ մոտ կգա ոչ թե մի խենթ, երազող, հիասթափված, գավառցի, այլ ուղղակի մի մարդ, ինչպիսիք Պետերբուրգում շատ կան և ինչպիսին, վաղուց ժամանակն է, որ ես դառնամ:

Այդ առթիվ հատկապես զգուշացրեք հորեղբորս: Երբ նայում եմ անցած կյանքիս, անհարմար եմ զգում, ամաչում եմ և ուրիշներից, և ինձնից: Բայց այլ կերպ չէր էլ կարող լինել: Ահա թե երբ միայն սթափվեցի, երեսուն տարեկան հասակում: Պետերբուրգում անցած դժվարին դպրոցը և խորհրդածությունը գյուղում ինձ համար լիովին պարզեցին իմ ճակատագիրը: Հորեղբորս դասերից և սեփական փորձիցս հեռանալով մի պատկառելի տարածություն, ես դրանք ըմբռնեցի այստեղ, անդորրում, ավելի պարզ, և տեսնում եմ, թե վաղուց ուր պիտի հասցրած լինեին դրանք ինձ, տեսնում եմ, թե ինչպես խղճալիորեն ու անմտաբար խուսափում էի ուղիղ նպատակից: Ես հիմա հանգիստ եմ. չեմ տանջվում, չեմ մաշվում, բայց դրանով չեմ պարծենում. գուցե այդ հանգստությունը առայժմ բխում է եսասիրությունից. զգում եմ, սակայն, որ շուտով կյանքի նկատմամբ իմ հայացքը այն աստիճան կպարզվի, որ կգտնեմ հանգստության մի այլ՝ ավելի ջինջ աղբյուր: Հիմա ես դեռ չեմ կարող չափսոսալ, որ արդեն հասել եմ այն սահմանագծին, որտեղ, ավա՜ղ, ավարտվում է ջահելությունը և սկսվում է խորհրդածությունների ժամանակը, ամեն մի հուզմունքի ստուգումն ու վերլուծությունը, գիտակցելու ժամանակը:

Թեև, գուցե, մարդկանց ու կյանքի մասին իմ կարծիքը մի քիչ փոխվել է, բայց շատ հույսեր են թռել, շատ ցանկություններ են անցել գնացել, մի խոսքով, պատրանքներս կորել են, հետևաբար այնքան էլ շատերի և շատ բաների նկատմամբ չէ, որ պիտի առիթ ունենամ սխալվելու և խաբվելու, իսկ դա մի կողմից շատ մխիթարական է: Եվ ահա ես ավելի պայծառ եմ առաջ նայում. ամենածանրը հետևումն է. հուզումները սարսափելի չեն, որովհետև այդպիսիք քիչ են մնացել. ամենագլխավորներն անցել են, և ես օրհնում եմ դրանք: Ամաչում եմ մտաբերել, ինչպես, ինձ տառապյալ երևակայելով, անիծում էի իմ բախտը, կյանքը: Անիծո՜ւմ էի: Ինչպիսի՜ խղճուկ մանկամտություն և անշնորհակալություն: Ինչպես ո՜ւշ տեսա, որ տառապանքները մաքրում են հոգին, որ միայն դրանք են մարդուն տանելի դարձնում թե իր, թե ուրիշների համար, վեհացնում են նրան... Հիմա ընդունում եմ, որ անմասն լինել տառապանքներին, նշանակում է անմասն լինել կյանքի ողջ լիակատարությանը. նրանցում շատ կարևոր պայմաններ կան, որոնց լուծմանը, թերևս, մենք այստեղ չենք հասնի: Ես այդ հուզումների մեջ տեսնում եմ նախախնամության ձեռքը, որը, կարծես, մարդուն առաջադրում է անվերջանալի խնդիր՝ ձգտել առաջ, հասնել վերուստ նախանշված նպատակին, ամեն րոպե պայքարելով խաբուսիկ հույսերի, տանջալից խոչընդոտների դեմ: Այո, տեսնում եմ, թե կյանքի համար ինչպես անհրաժեշտ են այդ պայքարն ու հուզումները, ինչպես առանց դրանց կյանքը կլիներ ոչ թե կյանք, այլ անշարժություն, երազ... Պայքարը վերջանում է, տեսնում ես, որ վերջանում է նաև կյանքը. մարդը զբաղված էր, սիրում էր, վայելում, տառապում, հուզվում, արել է իր գործը և, հետևաբար, ապրե՛լ է:

Տեսնո՞ւմ եք, ինչպես եմ դատում. ես դուրս եմ եկել խավարից, և տեսնում եմ, որ մինչև հիմա ողջ ապրածս եղել է ինչ-որ դժվարին նախապատրաստություն իսկական ուղու, կյանքի դժվարիմաց գիտություն: Ինչ-որ մի բան ինձ ասում է, թե մնացած ուղիս կլինի ավելի հեշտ, հանդարտ, հասկանալի... Մութ տեղերը լուսավորվել են, դժվարիմաց հանգույցները լուծվել իրենք իրենց. կյանքն սկսում է թվալ բարիք և ոչ թե չարիք: Շուտով նորից կասեմ՝ ինչ լա՜վ է կյանքը: Բայց կասեմ ոչ որպես րոպեական հաճույքից արբեցած պատանի, այլ նրա վայելքների ու դառնության լիակատար գիտակցությամբ: Ուստի և սարսափելի չէ նաև մահը. նա ինձ չի պատկերանում որպես խրտվիլակ, այլ որպես սքանչելի փորձ: Արդեն հիմա էլ հոգուս փչում է մի անճանաչելի անդորր. մանկական սրդողություններս, խոցված ինքնասիրության բռնկումներս, մանկական դյուրագրգռությունս և կոմիկական զայրույթս աշխարհի մարդկանց վրա, որը նման էր փղի վրա հաչող շնիկի զայրույթին՝ իսպառ չքացել են:

Ես նորից բարեկամացել եմ նրանց հետ, որոնցից վաղուց կտրել էի բարեկամությունս,— մարդկանց հետ, որոնք, հարևանցի նկատեմ, այստեղ էլ նույնն են, ինչ որ Պետերբուրգում, միայն ավելի կոշտ, ավելի կոպիտ, ավելի ծիծաղելի: Բայց ես այստեղ էլ չեմ բարկանում նրանց վրա, իսկ այդտեղ առավել ևս չեմ նեղանա: Ահա ձեզ իմ հեզության մի նմուշ. մեզ մոտ հյուր է գալիս մի խենթավուն մարդ՝ Անտոն Իվանիչը, իբր իմ վիշտը կիսելու, վաղը նա կգնա հարևանիս տուն՝ հարսանիք, նրա ուրախությունը կիսելու, այնտեղից՝ մի ուրիշ տուն, տատմեր կնոջ պարտականություն կատարելու: Բայց ո՜չ վիշտը, ո՜չ ուրախությունը նրան չեն խանգարում, որ բոլորի տանը օրական չորս անգամ սեղան նստի: Ես տեսնում եմ, որ նրա համար միևնույն է՝

մարդը մեռե՞լ է, ծնվե՞լ է, թե ամուսնացել, և ես չեմ զզվում նրան տեսնելուց, չեմ զայրանում... ես հանդուրժում եմ նրան, չեմ վռնդում... Բարի նշան է, ճիշտ չէ՞, ma tante: Ի՞նչ կասեք, կարդալով սեփական անձիս ուղղած այս գովաբանական խոսքը»:

Հորեղբորը.

«Ամենասիրելի, ամենաբարի իմ հորեղբայր և, միաժամանակ, ձերդ գերազանցություն:

Ինչպիսի՜ ուրախությամբ իմացա, որ ձեր կարիերան էլ ավարտված է խիստ գովարժան. բախտի հետ դուք համերաշխ էիք արդեն վաղուց: Դուք իսկական պետական խորհրդական եք, դուք ատյանի դիրեկտոր եք: Կհամարձակվե՞մ արդյոք հիշեցնել ձերդ գերազանցության ձեր խոստումը, որ տվիք ինձ մեկնելուս ժամանակ. «Երբ պետք կլինեն պաշտոն, զբաղմունք կամ փող, դիմի՛ր ինձ»,— ասացիք դուք: Եվ ահա, ինձ պետք եղավ և պաշտոն, և զբաղմունք. պետք կլինի, իհարկե, նաև փող: Խեղճ գավառացին համարձակվում է խնդրել տեղ և աշխատանք: Ի՞նչ բախտ է սպասում իմ խնդիրքին: Արդյոք ո՞չ այնպիսի, որին մի ժամանակ արժանացավ նամակը Զաեզժալովի, որը խնդրում էր հոգալ իր գործի մասին… Ինչ վերաբերում է **ստեղծագործությանը**, որի մասին հիշեցնելու դաժանությունն էիք ունեցել ձեր նամակներից մեկում, ապա… մեղք չե՞ք գործում, փորփրելով վաղուց մոռացված հիմարությունները, երբ ես ինքս եմ կարմրում դրանց համար... Է՛խ, հորեղբայր, Է՛խ, ձերդ գերազանցություն: Ո՞վ չի եղել երիտասարդ և մասամբ հիմար: Ո՞վ չի ունեցել մի որևէ տարօրինակ, այսպես ասած **նվիրական** երազ, որին երբեք չի վիճակված իրականանալ: Ահա իմ աջակողմյան հարևանը իրեն պատկերացնում էր հերոս, հսկա-որսորդ աստծու առաջ… նա ուզում էր աշխարհը զարմացնել իր քաջագործություններով... և վերջացավ նրանով, որ նա պաշտոնաթող եղավ պրապորշչիկի աստիճանով, առանց պատերազմ գնալու, և հաշտ ու խաղաղ կարտոֆիլ է աճեցնում և շաղգամ ցանում: Մյուսը՝ ձախակողմյանս, երազում է յուրովի վերափոխել ամբողջ աշխարհը և Ռուսաստանը, իսկ ինքը, մի որոշ ժամանակ պալատում թղթեր գրոտելուց հետո, հեռացավ այստեղ և մինչև հիմա չի կարողանում վերափոխել հին ցանկապատը: Ես կարծում էի, թե վերուստ իմ մեջ դրված է ստեղծագործական ձիրք, և ուզում էի աշխարհին հայտնել նոր, անհայտ գաղտնիքներ, մտքիցս չանցկացնելով, որ դրանք արդեն գաղտնիքներ չեն և որ ես մարգարե չեմ: Մենք բոլորս ծիծաղելի ենք. բայց ասացեք, ո՞վ, առանց կարմրելու իր արարքից, սիրտ կանի ամոթալի հայհոյանքով նշավակել այդ պատանեկան, ազնիվ, խանդավառ, թեկուզև ոչ այնքան չափավոր երազանքները: Իր հերթին ո՞վ չի ունեցել անպտուղ ցանկություն, իրեն չի դարձրել փառապանծ սխրագործության հանդիսավոր երգի, հռչակ հանած վիպակի հերոս: Ո՞ւմ երևակայությունը չի սլացել դեպի առասպելական, հերոսական ժամանակները: Ո՞վ չի լացել, համակրելով վսեմն ու գեղեցիկը: Եթե կգտնվի այդպիսի մի մարդ, թող քար շպրտի ինձ վրա, ես նրան չեմ նախանձում: Ես կարմրում եմ իմ պատանեկան երազների համար, բայց հարգում եմ դրանք, սրտի մաքրության գրավականն են դրանք, բարուն հակամետ՝ ազնիվ հոգու նշան:

Ձեզ, գիտեմ, չեն համոզի այս փաստարկումները, ձեզ հարկավոր է դրական, գործնական փաստարկում. խնդրեմ. ահա նա. ասացեք, ինչպե՞ս կճանաչվեին և մշակվեին ձիրքերը, եթե երիտասարդ մարդիկ իրենց մեջ ճնշեին այդ վաղ հակումները, եթե ազատություն ու արձակություն չտային իրենց երազներին, այլ ստրկորեն հետևեին ցույց տրված ուղղությանը, առանց ուժերը փորձելու: Վերջապես դա բնության ընդհանուր օրենքը չէ՞, որ ջահելությունը պետք է լինի տագնապալի, եռուն, երբեմն խելառ, հիմար և որ ամեն մեկի երազները ժամանակի ընթացքում կհանդարտվեն, ինչպես հիմա հանդարտվել են իմ երազները: Իսկ ձեր սեփական երիտասարդությունը մի՞թե զերծ է այդ մեղքերից: Մտաբերեցեք, փորփրեցեք ձեր հիշողությունը: Այստեղից տեսնում եմ, թե ինչպես ձեր հանգիստ, երբեք չխռովվող հայացքով, օրորում եք ձեր գլուխը և ասում. ոչի՜նչ չկա: Բայց թույլ տվեք ձեզ բռնել թեկուզ սիրո մեջ… հրաժարվո՞ւմ եք: Չե՜ք հրաժարվի. փաստանշանը իմ ձեռքին է... Հիշեցեք, որ ես կարող էի գործը հետաքննել գործողության վայրում: Ձեր սիրային արկածների թատերաբեմը իմ աչքի առաջն է, այս լիճը: Նրա վրա դեռ բուսնում են դեղին ծաղիկները. մի ծաղիկ, պատշաճ ձևով չորացրած, պատիվ ունեմ ուղարկելու ձերդ գերազանցության՝ քաղցր հուշերի համար: Բայց ավելի սարսափելի զենք կա ձեր կողմից ընդհանրապես սիրո և հատկապես իմ սիրո հալածանքների դեմ. դա փաստաթուղթ է… Դուք խոժոռվո՞ւմ եք: Եվ ինչպիսի՜ փաստաթուղթ: Գունատվեցի՞ք: Ես հափշտակեցի այդ

թանկագին զառամությունը մորաքրոջիցս, նրա նույնքան զառամ կրծքից, և բերում եմ ինձ հետ որպես հավիտենական հանցանշան ձեր դեմ և որպես ինձ պաշտպանելու միջոց: Դողացե՛ք, հորեղբայր: Այդ դեռ քիչ է, ես մանրամասնությամբ գիտեմ ձեր սիրո ամբողջ պատմությունը. մորաքույրս ամեն օր պատմում է ինձ առավոտյան թեյի և ընթրիքի ժամանակ, քնելուց առաջ, մեկական հետաքրքիր փաստ, իսկ ես այդ բոլոր թանկարժեք նյութերը մտցնում եմ մի հատուկ հուշատետրի մեջ: Ես չեմ հապաղի դրանք ձեզ հանձնել անձամբ՝ իմ գյուղատնտեսական աշխատությունների հետ, որոնցով զբաղվում եմ այստեղ արդեն մոտ մեկ տարի: Ես իմ կողմից պարտք եմ համարում մորաքրոջս հավատացնել հարատևությանը դեպի նա տածած ձեր զգացողությունների, ինչպես ասում է ինքը: Երբ կարժանանամ իմ խնդիրքի առթիվ ձերդ գերազանցության կողմից բարենպաստ պատասխան ստանալուն, ապա պատիվ կունենամ ձեզ ներկայանալ չորացրած մորու և մեղրի նվերով և մի քանի նամակներ ներկայացնելով, որոնք ինձ մատակարարել խոստանում են հարևաններս իրենց կարիքների մասին, բացի Զաեզժալովից, որը մեռավ նախքան իր դատավարության ավարտվելը»:

ԷՊԻԼՈԳ

Ահա թե ինչ էր կատարվում այս վեպի գլխավոր գործող անձանց հետ, Ալեքսանդրի՝ երկրորդ անգամ Պետերբուրգ գալուց չորս տարի հետո:

Մի առավոտ Պյոտր Իվանիչը ետ ու առաջ էր քայլում իր առանձնասենյակում: Սա արդեն առաջվա առույգ, գեր և բարեկազմ Պյոտր Իվանիչը չէր, միշտ միօրինակ հանգիստ հայացքով, հպարտորեն վեր բարձրացրած գլխով և շիտակ մեջքով: Տարիքի՞ց էր արդյոք, թե՞ հանգամանքներից, բայց նա կարծես թե ընկել էր: Նրա շարժումներն այնպես առույգ չէին, հայացքը այնպես հաստատ ու ինքնավստահ չէր: Այտամորուքների մեջ և քունքերին շատ սպիտակ մազեր էին փայլում: Երևում էր, որ նա տոնել է իր կյանքի հիսնամյա հոբելյանը: Նա քայլում էր փոքր-ինչ կքված: Առանձնապես տարօրինակ էր այդ անկիրք և հանդարտ մարդու երեսին, ինչպես մենք ճանաչում էինք նրան մինչև հիմա, տեսնել ավելի քան հոգատար, գրեթե թախծոտ արտահայտություն, թեպետ այդ արտահայտությունն ուներ Պյոտր Իվանիչին հատուկ բնույթ:

Նա կարծես տարակուսանքի մեջ լիներ: Մի երկու քայլ էր անում և հանկարծ կանգ էր առնում սենյակի մեջտեղում կամ արագ քայլերով երկու-երեք անգամ անցնում էր մի անկյունից մինչև մյուսը: Կարծես թե նրան մի անսովոր մտածմունք էր պաշարել:

Սեղանի մոտ բազկաթոռին նստել էր ոչ բարձրահասակ, գեր մի մարդ, վզին խաչ, մինչև վերջ կոճկած ֆրակը հագին, մի ոտքը մյուսին դրած: Ձեռքին պակասում էր միայն ոսկե կոթով գավազանը, այն կլասիկ գավազանը, որից, ընթերցողը, մի ժամանակ, վեպերում և վիպակներում անմիջապես ճանաչում էր բժշկին: Գուցե և բժշկին սազական է այդ գավազանը, որը պարապությունից ձեռքն առած, հետիոտն զբոսնում է փողոցներում և ամբողջ ժամերով նստում հիվանդների մոտ, մխիթարում է նրանց և հաճախ իր անձի մեջ միավորում է երկու-երեք դեր. բժշկի, պրակտիկ փիլիսոփայի, տան բարեկամի և այլն: Բայց այդ ամենը լավ է այնտեղ, որտեղ ապրում են ազատ, արձակ, հազվադեպ են հիվանդանում և որտեղ բժիշկը ավելի շուտ շքեղություն է, քան թե անհրաժեշտություն: Իսկ Պյոտր Իվանիչի բժիշկը պետերբուրգցի բժիշկ էր: Նա չգիտեր ինչ բան է հանգիստ ման գալը, թեև հիվանդներին նշանակում էր ոտքով զբոսանք: Նա ինչ-որ խորհրդի անդամ է, ինչ-որ ընկերության քարտուղար, և պրոֆեսոր է, և մի քանի պետական հաստատությունների բժիշկ, և աղքատների բժիշկ, և բոլոր կոնսուլտացիաների անպայման այցելու. նա ունի և հսկայական պրակտիկա: Նա նույնիսկ ձեռնոցը չի հանում ձախ ձեռքից. չէր հանի նաև աջից, եթե պետք չլիներ զարկերակը շոշափել: Երբեք ֆրակի կոճակները չի արձակում և գրեթե չի նստում: Բժիշկը արդեն մի անգամ չէ, որ անհամբերությունից մերթ ձախ ոտքն էր աջին դնում, մերթ՝ աջ ոտքը ձախին: Վաղուց նրա գնալու ժամանակն է, իսկ Պյոտր Իվանիչը ոչինչ չի ասում: Վերջապե՜ս:

— Ի՞նչ անեմ, բժիշկ,— հարցրեց Պյոտր Իվանիչը հանկարծ կանգ առնելով նրա առաջ:

— Գնացեք Կիսսինգեն,— պատասխանեց բժիշկը,— միակ միջոցն է: Ձեր նոպաներն սկսել են կրկնվել չափազանց հաճախակի...

— Է՛: Դուք շարունակ իմ մասին եք խոսում,— ընդհատեց Պյոտր Իվանիչը:— Ես ձեզ կնոջս մասին եմ ասում: Իմ հիսունն անց է, իսկ նա փթթուն տարիքում է, նա պետք է ապրի, և եթե նրա առողջությունն սկսում է հանգչել հիմիկվանից…

— Բա՛ն ասացիք, հանգչե՛լ,— նկատեց բժիշկը:— Ես ձեզ հաղորդեցի միայն իմ անհանգստությունը ապագայի համար, իսկ հիմա դեռ ոչինչ չկա… Ես միայն ուզում էի ասել, որ նրա առողջությունը… կարծեք թե աննորմալ վիճակում է...

— Մի՞թե միևնույն չէ: Դուք հարևանցի արիք ձեր նկատողությունը և մոռացաք, իսկ ես այն ժամանակվանից ուշադիր հետևում եմ նրան և ամեն օր հայտնաբերում եմ նրա մեջ նոր, անմխիթարական փոփոխություններ,— և ահա երեք ամիս է հանգիստ չունեմ: Ինչպե՛ս չէի տեսնում առաջ՝ չեմ հասկանում: Պաշտոնս ու գործերս ինձնից խլում են թե ժամանակս, թե առողջությունս... իսկ հիմա, ահավասիկ, նաև կնոջս:

Նա նորից սկսեց քայլել սենյակում:

— Դուք այսօր հարցուփորձ արի՞ք նրան,— հարցրեց Պյոտր Իվանիչը մի փոքր լռելուց հետո:

— Այո. բայց նա ոչինչ չի նկատում իր մեջ: Ես սկզբում ֆիզիոլոգիական պատճառ էի ենթադրում. նա երեխաներ չի ունեցել... բայց կարծես թե ոչ: Գուցե, պատճառը զուտ հոգեբանական է...

— Ավելի՛ հեշտ բան,— նկատեց Պյոտր Իվանիչը:

— Իսկ գուցե ոչինչ էլ չկա: Վճռականապես ոչ մի կասկածելի նախանշաններ չկան: Դա այնպես… դուք չափազանց երկար եք նստած մնացել այս ճահճային կլիմայում: Մեկնեցեք հարավ. կթարմանաք, կլցվեք նոր տպավորություններով և կտեսնեք, թե ինչ կլինի: Ամառն ապրեցեք Կիսսինգենում, ջրերի կուրս ընդունեցեք, իսկ աշնանը Իտալիայում, ձմեռը՝ Փարիզում. հավատացնում եմ ձեզ, որ լորձերի կուտակումը, դյուրագրգռությունը բոլորովին կչքանան:

Պյոտր Իվանիչը գրեթե չէր լսում նրան:

— Հոգեբանական պատճառ,— ասաց նա կիսաձայն ու գլուխն օրորեց:

— Այսինքն, գիտե՞ք ինչու եմ ասում հոգեբանական,— ասաց բժիշկը,— մեկ ուրիշը, ձեզ չճանաչելով, այստեղ կարող էր կասկածել որևէ հոգս… կամ ոչ թե հոգսեր… այլ ճնշված ցանկություններ… երբեմն լինում է կարիք, պակասություն… ես ուզում էի ձեզ հուշել մի միտք...

— Կարիք, ցանկությունն՞ր,— ընդհատեց Պյոտր Իվանիչը:— Նրա բոլոր ցանկությունները կանխվում են. ես գիտեմ նրա ճաշակը, սովորությունները: Իսկ կարիք... հը՛մ: Դուք տեսնո՞ւմ եք մեր տունը, գիտե՞ք ինչպես ենք ապրում...

— Լավ տուն է, հիանալի տուն է,— ասաց բժիշկը,— հրաշալի... խոհարար ունեք և ինչպիսի՛ սիգարներ: Իսկ ինչ, ձեր այն բարեկամը, որ Լոնդոնում է ապրում… դադարե՞լ է ձեզ խերես ուղարկելուց: Ինչ-որ այս տարի ձեզ մոտ չեմ տեսնում...

— Որքան նե՛նգ է ճակատագիրը, բժիշկ: Մի՞թե զգույշ չէի նրա հետ,— սկսեց Պյոտր Իվանիչը իրեն ոչ հատուկ տաքարյունությամբ:— Թվում է, կշռում էի ամեն մի քայլս... Ոչ, մի որևէ տեղ կդավաճանի, և այն էլ ե՞րբ: Բոլոր հաջողությունների, այսպիսի կարիերայի պայմաններում... Ա՛:

Նա ձեռքը թափահարեց և շարունակեց քայլել:

— Ի՞նչ եք այդպես անհանգստանում,— ասաց բժիշկը:— Վճռականապես ոչ մի վտանգավոր բան չկա: Ես ձեզ կրկնում եմ նույնը, ինչ որ ասել էի առաջին անգամ, այսինքն, որ նրա օրգանիզմը չի խախտված, ավերիչ նախանշաններ չկան: Արյան պակասություն, ուժերի որոշ անկում... ահա և բոլորը:

— Դատա՛րկ բան,— ասաց Պյոտր Իվանիչը:

— Նրա անառողջությունը բացասական է և ոչ թե դրական,— շարունակեց բժիշկը:— Իբր մենակ նա՞ է: Նայեցեք բոլոր ոչ այստեղ ծնվածներին. ինչի՞ նման են դրանք: Մեկնեցեք, մեկնեցեք այստեղից: Իսկ եթե չի կարելի մեկնել, զվարճացրեք նրան, մի թողեք պարապ մնալ, հաճոյացեք, տնից դուրս բերեք. ավելի շատ շարժում թե՛ մարմնին, թե՛ հոգուն. նրա թե՛ մարմինը, թե՛ հոգին անբնական նիրհի մեջ են: Իհարկե, ժամանակի ընթացքում դա կարող է անցնել նրա թոքերին կամ…

— Գնաք բարով, բժիշկ: Ես կգնամ նրա մոտ,— ասաց Պյոտր Իվանիչը և արագ քայլերով գնաց կնոջ առանձնասենյակը: Նա կանգ առավ դռան մոտ, կամացուկ ետ քաշեց վարագույրը և կնոջ վրա նետեց մի անհանգիստ հայացք:

Կինը... ի՞նչ մի առանձնահատուկ բան էր նկատել բժիշկը նրա մեջ: Ամեն մեկը, նրան առաջին անգամ տեսնելով, հանձին նրա կգտներ մի կնոջ, ինչպիսիք շատ են Պետերբուրգում: Դժգույն է, այդ ճիշտ է. հայացքը փայլատ է, բլուզը ազատ ու հարթ փռված է տափակ ուսերին և հարթ կրծքին. շարժումները դանդաղ են, գրեթե թմրած... Բայց մի՞թե կարմրությունը, աչքերի փայլը և շարժումների կրակոտությունն են մեր գեղեցկուհիների տարբերիչ նշանները: Իսկ ձևերի գեղեցկությունը… Ո՛չ Ֆիդիասը, ոչ Պրակսիտելը այստեղ չէին գտնի Վեներաներ իրենց հատիչի համար:

Ո՛չ, հյուսիսային գեղեցկուհիների մեջ պլաստիկ գեղեցկություն չպետք է որոնել. նրանք արձաններ չեն. նրանց չեն տրվել անտիկ կեցվածքներ, որոնցում հավերժացել է հույն կանանց գեղեցկությունը. և ոչինչ էլ չունեն, որոնցով կարողանային ստեղծել այդ կեցվածքները, չունեն մարմնի այն անբասիր ճիշտ ուրվագծերը... Զգայականությունը չի հորդում նրանց աչքերից ջեռ շողերի հորձանքով. կիսաբաց շուրթերին չի մարում այն միամիտ հեշտասեր ժպիտը, որով վառվում են հարավային կնոջ շուրթերը: Մեր կանանց բաժին է տրված այլ՝ բարձրագույն գեղեցկություն: Հատիչի համար անորսալի է մտքի այդ փայլը նրանց դիմագծերում, կամքի ու կրքի այդ պայքարը, հոգու մղումների՝ լեզվով չարտահայտվող խաղը, խորամանկության, կարծեցյալ պարզասրտության, զայրույթի ու բարության, թաքցրած ուրախությունների և տառապանքների... համակենտրոն հոգուց ժայթքող այդ բոլոր փութանցիկ կայծակների անհամար նրբին երանգներով հանդերձ...

Ինչ էլ լիներ, բայց Լիզավետա Ալեքսանդրովնային առաջին անգամ տեսնողը ոչ մի խանգարում չէր նկատի նրա մեջ: Միայն նա, ով առաջ ճանաչում էր նրան, ով հիշում էր նրա դեմքի թարմությունը, հայացքի փայլը, որի տակ, երբեմն, դժվար էր որոշել նրա աչքերի գույնը — այնպես սուզվում էին այդ աչքերը լույսի շքեղ, դողդոջուն ալիքների մեջ — ով հիշում էր նրա փարթամ ուսերն ու պիրկ կուրծքը, նա այժմ ցավագին զարմանքով կնայեր Լիզավետա Ալեքսանդրովնային, կարեկցությունից սիրտը կճմլվեր, եթե օտար չէր նրան, ինչպես այժմ, թերևս ճմլվեց Պյոտր Իվանիչի սիրտը, որ վախենում էր ինքն իրեն խոստովանել:

Նա կամացուկ մտավ առանձնասենյակ և նստեց կնոջ կողքին:

— Ի՞նչ ես անում,— հարցրեց նա:

— Ծախսերի գրքույկն եմ նայում,— պատասխանեց կինը:— Պատկերացրու, Պյոտր Իվանիչ. անցյալ ամիս միայն սննդի վրա ծախսվել է մոտ հազար հինգ հարյուր ռուբլի. դա բանի նման չէ:

Պյոտր Իվանիչը, առանց մի խոսք ասելու, գրքույկը վերցրեց նրա ձեռքից և դրեց սեղանին:

— Լսիր,— սկսեց նա,— բժիշկն ասում է, որ իմ հիվանդությունն այստեղ կարող է սաստկանալ. նա խորհուրդ է տալիս մեկնել հանքային ջրերը՝ արտասահման: Ի՞նչ կասես:

— Ի՞նչ ասեմ: Այստեղ, կարծում եմ, բժշկի խոսքն ավելի կարևոր է, քան իմը: Պետք է մեկնել, եթե նա խորհուրդ է տալիս:

— Իսկ դո՞ւ: Դու կցանկանայի՞ր այդ ճամփորդությունը կատարել:

— Թերևս:

— Բայց, գուցե, ավելի շուտ դու կցանկանայիր այստե՞ղ մնալ:

— Լավ, ես կմնամ:

— Բայց երկուսից ո՞րը,— հարցրեց Պյոտր Իվանիչը որոշ անհամբերությամբ:

— Տնօրինիր թե՛ քո, թե՛ իմ անձը, ինչպես կուզես,— պատասխանեց կինը վիատ անտարբերությամբ:— Հրամայես՝ կմեկնեմ, ոչ՝ կմնամ այստեղ...

— Այստեղ մնալ չի կարելի,— նկատեց Պյոտր Իվանիչը,— բժիշկն ասում է, որ քո առողջությունն էլ մի փոքր տուժել է... կլիմայից:

— Որտեղի՞ց գիտի բժիշկը,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Ես առողջ եմ, ես ոչինչ չեմ զգում:

— Երկարատև ճանապարհորդությունը,— ասաց Պյոտ Իվանիչը,— նույնպես կարող է հոգնեցուցիչ լինել քեզ համար. չե՞ս ուզում մի քիչ ապրել Մոսկվայում, մորաքրոջդ մոտ, մինչ ես արտասահմանում կլինեմ:

— Լավ. ես, գուցե, Մոսկվա կգնամ:

— Կամ երկուսս էլ ամառը Ղրիմ չգնա՞նք:

— Ղրիմն էլ լավ է:

Պյոտր Իվանիչը չդիմացավ. նա վեր կացավ բազմոցից և սկսեց, ինչպես իր առանձնասենյակում, անցուդարձ անել սենյակում, հետո կանգ առավ կնոջ առջև:

— Քեզ համար միևնո՞ւյն է, թե որտեղ լինես,— հարցրեց նա:

— Միևնույն է,— պատասխանեց կինը:

— Բայց ինչո՞ւ:

Կինը, դրան ոչինչ չպատասխանելով, սեղանից կրկին վերցրեց ծախսերի գիրքը:

— Ինչպես կուզես, Պյոտր Իվանիչ,— սկսեց նա,— մենք պետք է կրճատենք մեր ծախսերը. ինչպե՛ս, հազար հինգ հարյուր ռուբլի միայն սննդի...

Պյոտր Իվանիչը նրանից վերցրեց տետրը և նետեց սեղանի տակ:

— Դա ինչո՞ւ է քեզ այդպես զբաղեցնում,— հարցրեց նա:— Թե՞ ափսոսում ես փողը:

— Ինչպե՞ս չզբաղեցնի: Չէ՞ որ ես քո կինն եմ: Չէ՞ որ ինքդ ես ինձ սովորեցրել... իսկ հիմա նախատում ես, որ զբաղվում եմ: **Ես իմ գործն եմ կատարում**:

— Լսիր, Լիզա,— ասաց Պյոտր Իվանիչը կարճատև լռությունից հետո:— Դու ուզում ես վերափոխել քո բնավորությունը, բռնանալ կամքիդ... դա լավ չէ: Ես երբեք քեզ չեմ հարկադրել. դու ինձ չես հավատացնի, թե այդ չնչին հոգսերը (նա ցույց տվեց տետրը) կարող էին զբաղեցնել քեզ: Ինչո՞ւ ես ուզում նեղել քեզ: Ես լիակատար ազատություն եմ տալիս քեզ:

— Աստվա՛ծ իմ: Ինչի՞ս է պետք ազատությունը,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— ի՞նչ պիտի անեմ այդ ազատությունը: Դու մինչև հիմա այնքան լավ, այնքան խելացի էիր կառավարում թե ինձ, թե քեզ, որ ես ետ վարժվեցի իմ կամքից. շարունակիր այսուհետև էլ. իսկ ազատություն ինձ պետք չէ:

Երկուսն էլ լռեցին:

— Վաղուց է,— նորից սկսեց Պյոտր Իվանիչը,— ես քեզնից չեմ լսել, Լիզա, ոչ մի խնդիրք, ոչ մի ցանկություն, քմահաճույք:

— Ինձ ոչինչ պետք չէ,— նկատեց կինը:

— Դու չունե՞ս ոչ մի առանձնահատուկ... թաքուն ցանկություն,— հարցրեց նա կարեկցաբար, ուշադիր նայելով կնոջը:

Կինը տատանվում էր, ասի՞, թե՞ չասի:

Պյոտր Իվանիչը նկատեց այդ:

— Ասա՛, ի սեր աստծու, ասա՛,— շարունակեց նա:— Քո ցանկությունները կլինեն իմ ցանկությունները, ես դրանք կկատարեմ ինչպես օրենք:

— Դե լավ,— պատասխանեց կինը,— եթե կարող ես ինձ համար այդ բանն անել... ապա... վերացրու մեր ուրբաթ օրերը... այդ ճաշկերույթները հոգնեցնում են ինձ...

Պյոտր Իվանիչը մտածմունքի մեջ ընկավ:

— Դու առանց այդ էլ փակված կյանք ես վարում,— ասաց նա, փոքր-ինչ լռելով,— իսկ երբ մեր բարեկամները կդադարեն ուրբաթ օրերը մեր տանը հավաքվելուց, դու միանգամայն անապատում կլինես: Սակայն, խնդրեմ. դու այդ ուզում ես, կկատարվի: Իսկ ի՞նչ կանես:

— Դու ինձ հանձնիր քո հաշիվները, մատյանները, գործերը... ես կզբաղվեմ...— ասաց կինը և ձգվեց սեղանի տակ ծախսերի տետրը բարձրացնելու:

Պյոտր Իվանիչին դա թվաց վատ թաքցրած կեղծիք:

— Լի՛զա...— կշտամբանքով ասաց նա:

Գրքույկը մնաց սեղանի տակ:

— Իսկ ես մտածում էի, արդյոք չե՞ս նորոգի մի քանի ծանոթություններ, որոնք մենք բոլորովին թողել ենք: Դրա համար ուզում էի պարահանդես տալ, որպեսզի ցրվեիր, ինքդ էլ տնից դուրս գայիր:

— Ախ, ոչ, ոչ,— վախեցած խոսեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Ի սեր աստծու, պետք չէ: Ինչպե՛ս կարելի է... պարահանդե՛ս...

— Ինչո՞ւ է դա քեզ այդպես վախեցնում: Քո տարիքում պարահանդեսը չի կորցնում իր հետաքրքրությունը: Դու դեռ կարող ես պարել...

— Ոչ, խնդրում եմ քեզ, Պյոտր Իվանիչ, մի ձեռնարկի,— ասաց նա աշխույժով:— Հոգալ զգեստի մասին, հագնվել, ընդունել ամբոխին, տնից դուրս գալ, աստված հեռո՛ւ տանի:

— Դու կարծես ամբողջ կյանքդ ուզում ես բլուզ հագա՞ծ ման գալ:

— Այո, եթե թույլ տաս, ես չէի հանի բլուզը: Ինչո՞ւ զուգվեմ: Եվ փողի ծախս է, և ավելորդ չարչարանք առանց մի օգուտի:

— Գիտե՞ս ինչ,— հանկարծ ասաց Պյոտր Իվանիչը:— Ասում են, այս ձմեռվա համար այստեղ է հրավիրված Ռուբինին. մենք մշտական իտալական օպերա կունենանք. ես խնդրել եմ մեզ համար օթյակ պահել:

Կինը լուռ էր:

— Լի՛զա...

— Իզուր...— ասաց նա երկչոտ,— վախենում եմ, որ դա էլ ինձ համար հոգնեցուցիչ լինի... ես հոգնում եմ...

Պյոտր Իվանիչը գլուխը կախեց, մոտեցավ բուխարուն և, հենվելով նրան, նայում էր կնոջը... ինչպե՞ս ասենք, թախիծ, ոչ թե թախիծով, այլ տագնապով, անհանգստությամբ ու վախով:

— Ինչի՞ց է, Լիզա, այդ,— սկսեց նա և չավարտեց. «անտարբերություն» բառը լեզուն չզորեց ասել:

Նա երկար, լուռ նայում էր կնոջը: Նրա անկենդան, փայլատ աչքերում, կենդանի մտքի և զգացմունքների խաղից զուրկ դեմքին, նրա ծույլ կեցվածքի և դանդաղկոտ շարժումների մեջ նա կարդաց այն անտարբերության պատճառը, որի մասին հարցնել վախենում էր. նա պատասխանը կռահեց դեռևս այն ժամանակ, երբ բժիշկը հենց նոր ակնարկեց իր երկյուղի մասին: Նա այն ժամանակ սթափվեց և սկսեց գլխի ընկնել որ մեթոդիկ ձևով կնոջը պատնեշելով բոլոր շեղումներից, որոնք կարող էին վնասել իրենց ամուսնական շահերին, միաժամանակ իր անձով նրան չի տրամադրել փոխհատուցող պայմաններ այն, գուցե և օրենքով չարտոնված ուրախությունների փոխարեն, որոնց կինը կհանդիպեր ամուսնությունից դուրս, որ նրա տնային աշխարհը, շնորհիվ Պյոտր Իվանիչի մեթոդի, ոչ այլ ինչ էր, քան գայթակղության համար անառիկ ամրոց, բայց դրա փոխարեն այդ ամրոցում ամեն քայլափոխի հանդիպում էին ուղեփակոցներ և պարեկներ նաև ամեն մի օրինական զգացմունքի արտահայտման դեմ...

Պյոտր Իվանիչի՝ դեպի կինն ունեցած վերաբերմունքի մեթոդականությունն ու չորությունը առանց իր գիտության կամքի հասել էին մինչև սառն և նուրբ բռնակալության, և ինչի՞ վրա՝ կնոջ սրտի՜: Այդ բռնակալության փոխարեն նա կնոջը վարձատրում էր հարստությամբ, շքեղությամբ, երջանկության բոլոր արտաքին և իր մտածելակերպին համապատասխանող պայմաններով. սարսափելի՜ սխալ, առավել ևս սարսափելի, որ այն կատարված էր ոչ թե չգիտենալուց, ոչ թե նրա կոպիտ հասկացողությունից սրտի մասին — նա գիտեր ինչ է սիրտը — այլ անփութությունից, եսասիրությունից: Նա մոռանում էր, որ կինը չի ծառայում, թուղթ չի խաղում, որ նա գործարան չունի, որ հիանալի սեղանը և լավագույն գինին գրեթե արժեք չունեն կնոջ աչքին, մինչդեռ նա կնոջը հարկադրում էր ապրել այդ կյանքով:

Պյոտր Իվանիչը բարի էր. և եթե ոչ դեպի կինն ունեցած սիրուց, ապա արդարացիության զգացմունքից դրդված, աստված գիտի, թե ի՜նչ կտար, որպեսզի ուղղեր չարիքը, բայց ինչպե՞ս ուղղեր:

Այն օրվանից, երբ բժիշկը նրան իր երկյուղն էր հայտնել կնոջ առողջության վերաբերյալ, շատ անքուն գիշերներ էր անցկացրել նա, ջանալով կնոջ սիրտը նրա ներկա վիճակի հետ հաշտեցնելու միջոցներ գտնել և վերականգնել նրա մարող ուժերը: Հիմա էլ բուխարու մոտ կանգնած նա մտմտում էր նույն բանի մասին: Նրա մտքով անցավ, թե գուցե կնոջ մեջ արդեն թաքնված է վտանգավոր հիվանդության սաղմը, որ նա սպանված է անգույն և դատարկ կյանքի պատճառով...

Սառն քրտինք էր դուրս տալիս Պյոտր Իվանիչի ճակատին: Նա գլուխը կորցնում էր միջոցներ որոնելով, զգալով, որ դրանք հնարելու համար ավելի շատ սիրտ է պետք, քան թե գլուխ: Իսկ որտեղի՞ց վերցներ այդ սիրտը... Ինչ-որ բան նրան ասում էր, որ եթե ինքը կարողանար ընկնել կնոջ ոտները, սիրով պարուրեր նրան իր գրկում և կրքի ձայնով նրան ասեր, որ ապրել է միայն նրա համար, որ բոլոր աշխատանքների, չարչարանքների, կարիերայի վաստակի նպատակը եղել է նա, որ իր մեթոդիկ վերաբերմունքը դեպի կինը իրեն ներշնչել է միայն բոցավառ, համառ, խանդոտ ցանկությունը՝ կնոջ սիրտը առմիշտ կապել իրեն... նա հասկանում էր, որ այդպիսի խոսքերը գալվանիզմի ներգործություն կլինեին դիակի վրա, որ կինը հանկարծ կփթթեր առողջությամբ, երջանկությամբ, և հանքային ջրերը գնալու կարիք չէր լինի:

Բայց ասելն ու ապացուցելը երկու տարբեր բաներ են: Դա ապացուցելու համար պետք է կիրք ունենալ, այնինչ իր հոգին փորփրելով, Պյոտր Իվանիչը այնտեղ կրքի հետք իսկ չգտավ: Նա զգում էր միայն, որ կինն անհրաժեշտ է իրեն, այդ ճիշտ է, բայց կյանքի այլ անհրաժեշտություններին հավասար, անհրաժեշտ է ըստ սովորույթի: Նա, թերևս, դեմ չէր լինի սիրեկանի դեր խաղալ ձևացնել, որքան էլ ծիծաղելի լիներ հիսուն տարեկան հասակում հանկարծ կրքի լեզվով խոսելը. բայց արդյոք կնոջը կխաբե՞ս կրքով, երբ այդ կիրքը չկա: Հետո այնքան հերոսություն և կարողություն կունենա՞, որպեսզի այդ դերը ուսերին առած քարշ տա մինչև այն սահմանագիծը, որից այն կողմ լռում են սրտի պահանջները: Եվ արդյոք կնոջը չի՞ սպանի վերջնականապես

վիրավորված ինքնասիրությունը, երբ նա նկատի, որ այն, ինչը մի քանի տարի առաջ նրա համար կախարդական խմիչք կարող էր լինել, այժմ նրան մատուցվում է որպես դեղ: Ոչ, Պյոտր Իվանիչը յուրովի որոշակի կշռադատեց ու քննարկեց այդ ուշացած քայլը և սիրտ չարեց դրան դիմել: Նա մտածում էր անել, թերևս, նույն բանը, բայց այլ կերպ, այնպես, ինչպես դա հիմա պետք էր և հնարավոր: Արդեն երեք ամիս է նրա գլխում խլրտում էր մի միտք, որը առաջ նրան կթվար անհեթեթություն, իսկ հիմա՝ ուրի՛շ բան: Նա այդ միտքը ծայրահեղ դեպքի համար էր պահում, ծայրահեղ դեպքը հասել էր, և նա վճռեց կատարել իր ծրագիրը:

«Եթե դա չօգնի,— մտածում էր նա,— այն ժամանակ փրկություն չկա, ինչ լինելու է, թող լինի»:

Պյոտր Իվանիչը վճռական քայլերով մոտեցավ կնոջը և բռնեց նրա ձեռքը:

— Դու գիտես, Լիզա,— ասաց նա,— թե ես ինչպիսի դեր եմ խաղում պաշտոնավայրումս. ես համարվում եմ մինիստրության ամենաբանիմաց աստիճանավորը: Այս տարի ներկայացվելու եմ գաղտնի խորհրդականի աստիճանին և, իհարկե, կստանամ: Չկարծես, թե դրանով իմ կարիերան ավարտվում է. ես կարող եմ էլի առաջ գնալ... և կգնայի...

Կինը զարմացած նայում էր նրան, սպասելով, թե խոսքը ուր կտանի:

— Ես երբեք չէի կասկածում քո ընդունակություններին,— ասաց նա:— Ես շատ հավատացած եմ, որ դու կանգ չես առնի կես ճանապարհին, այլ կգնաս մինչև վերջ...

— Ոչ, չեմ գնա. ես օրերս պաշտոնաթողության խնդիրք կտամ:

— Պաշտոնաթողությա՞ն,— հարցրեց կինը զարմացած, շտկվելով:

— Այո:

— Ինչո՞ւ:

— Լսիր էլի: Քեզ հայտնի է, որ ես հաշիվներս մաքրել եմ ընկերակիցներիս հետ, և գործարանը միայն ինձ է պատկանում: Նա ինձ քառասուն հազարի մաքուր եկամուտ է բերում, առանց մի գլխացավանքի: Նա բանում է լարած մեքենայի պես:

— Գիտեմ, հետո՞ ինչ,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ես այն կծախեմ:

— Ի՞նչ ես ասում, Պյոտր Իվանիչ: Քեզ ի՞նչ է պատահել,— աճող զարմանքով ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան, վախեցած նայելով նրան:— Ինչի՞ համար է այդ ամենը: Ես ուշքի չեմ գալիս, չեմ կարող հասկանալ:

— Մի՞թե չես կարող հասկանալ:

— Ո՛չ...— տարակուսանքով ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Դու չես կարող հասկանալ, որ, նայելով, թե ինչպես ես թախծում, ինչպես առողջությունդ տուժում է... կլիմայից, ես կափսոսամ կարիերաս, գործարանս, քեզ այստեղից չե՞մ հեռացնի... Լի՛զա: Մի՞թե դու ինձ զոհողության անընդունակ էիր համարում...— ավելացրեց նա կշտամբանքով:

— Ուրեմն դա ինձ համա՛ր է,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան, հազիվ ուշքի գալով:— Ոչ, Պյոտր Իվանիչ,— աշխույժով սկսեց խոսել նա, սաստիկ անհանգստացած:— Ի սեր աստծու, ո՛չ մի զոհողություն ինձ համար: Ես դա չեմ ընդունի, լսո՞ւմ ես: Վճռականորեն չեմ ընդունի: Որպեսզի դու դադարես աշխատել, աչքի ընկնել, հարստանալ, և ի՛նձ համա՛ր: Աստված մի՛ արասցե: Ես չարժեմ այդ զոհողությանը: Ներիր ինձ. ես մանր էի քեզ համար, չնչին, թույլ, որպեսզի կարողանայի հասկանալ ու գնահատել քո բարձր նպատակները, ազնիվ տքնությունը... Քեզ այսպիսի՛ կին չէր պետք...

— Դեռ մեծահոգությո՛ւն,— ասաց Պյոտր Իվանիչը, ուսերը թոթվելով:— Իմ մտադրությունն անփոփոխ է, Լիզա:

— Աստվա՛ծ, աստվա՛ծ, այս ի՞նչ արեցի: Ես քարի պես ընկած էի քո ճանապարհին. ես քեզ խանգարում եմ... ի՞նչ տարօրինակ է իմ ճակատագիրը,— ավելացրեց նա գրեթե հուսահատ:— Եթե մարդ չի ուզում, չպետք է ապրի... Մի՞թե աստված չի խղճա, չի վերցնի ինձ: Քեզ խանգարել...

— Իզուր ես կարծում, որ այդ զոհողությունը ծանր է ինձ համար: Բավական է ապրենք այս փայտացած կյանքով: Ես ուզում եմ հանգստանալ, հանդարտվել. իսկ որտե՞ղ կհանդարտվեմ, եթե ոչ միայնության մեջ՝ քեզ հետ... Մենք կգնանք Իտալիա:

— Պյոտր Իվանիչ,— ասաց կինը գրեթե լաց լինելով:— Դու բարի ես, ազնիվ... ես գիտեմ, դու ի վիճակի ես մեծահոգաբար ձևացնելու... բայց, գուցե, զոհողությունն անօգուտ է, գուցե, արդեն... ուշ է, իսկ դու գործերդ մի կողմ թողնես...

— Խնայիր ինձ, Լիզա, և մի՛ հասնի այդ մտքին,— առարկեց Պյոտր Իվանիչը,— այլապես դու կտեսնես, որ ես երկաթից չեմ շինված... Ես քեզ կրկնում եմ, որ ուզում եմ ապրել ոչ միայն գլխով. իմ մեջ դեռ ամեն ինչ չի սառել:

Կինը նայում էր նրան սևեռուն, թերահավատությամբ:

— Եվ դա... անկե՞ղծ է,— հարցրեց նա փոքր-ինչ լռելով:— Դու իրո՞ք հանգիստ ես ուզում, մեկնում ես ո՞չ միայն իմ պատճառով:

— Ոչ. նաև ինձ համար:

— Իսկ եթե ինձ համար է, ես ոչ մի, ոչ մի գնով...

— Ոչ, ո՛չ: Ես անառողջ եմ, հոգնել եմ... ուզում եմ հանգստանալ...

Կինը նրան մեկնեց ձեռքը: Նա կրակոտ համբուրեց:

— Ուրեմն գնո՞ւմ ենք Իտալիա,— հարցրեց նա:

— Լավ, գնանք,— միապաղաղ պատասխանեց կինը:

Կարծես թե Պյոտր Իվանիչի ուսից մի սար գլորվեց: «Տեսնենք ինչ կլինի»,— մտածեց նա:

Երկար նստած էին նրանք, չիմանալով, թե ինչ ասեն միմյանց: Հայտնի չէ, թե առաջինը ով կխախտեր լռությունը, եթե էլի երկուսով մնային: Բայց ահա հարևան սենյակում լսվեցին շտապ քայլեր: Հայտնվեց Ալեքսանդրը:

Ինչպե՜ս էր նա փոխվել: Ինչպե՜ս էր գիրացել, ճաղատացել, ինչպե՜ս կարմրաթուշ էր դարձել: Ինչպիսի՜ արժանապատվությամբ է կրում նա իր ուռուցիկ փորը և վզի շքանշանը: Նրա աչքերը շողում էին ուրախությունից: Նա առանձին զգացմունքով համբուրեց հորեղբոր կնոջ ձեռքը և սեղմեց հորեղբոր ձեռքը:

— Որտեղի՞ց,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Գտե՜ք,— պատասխանեց Ալեքսանդրը նշանակալից:

— Դու այսօր ինչ-որ առանձնահատուկ կայտառ ես,— ասաց Պյոտր Իվանիչը, հարցական նայելով նրան:

— Գրազ կգամ, որ չեք գտնի,— ասաց Ալեքսանդրը:

— Մի տասը թե տասներկու տարի առաջ, մի անգամ դու, հիշում եմ, ահա այսպես ներս վազեցիր ինձ մոտ,— նկատեց Պյոտր Իվանիչը,— դեռ ինչ-որ մի բան էլ ջարդեցիր... այն ժամանակ ես իսկույն գլխի ընկա, որ սիրահարված ես, իսկ հիմա... մի՞թե նորից: Ոչ, չի կարող պատահել. դու չափազանց խելացի ես, որպեսզի...

Նա նայեց կնոջը և հանկարծ լռեց:

— Չե՞ք կռահում,— հարցրեց Ալեքսանդրը:

Հորեղբայրը նայում էր նրան և շարունակ մտածում:

— Հո... չե՞ս ամուսնացել,— ասաց նա անվճռական:

— Հասկացա՛ք,— հանդիսավոր բացականչեց Ալեքսանդրը:— Շնորհավորեցեք ինձ:

— Իսկապե՞ս: Ո՞ւմ հետ,— հարցրին հորեղբայրը և հորեղբոր կինը:

— Ալեքսանդր Ստեպանիչի աղջկա հետ:

— Մի՞թե: Բայց ախր նա հարուստ հարսնացու է,— ասաց Պյոտր Իվանիչը:— Եվ հայրը... ոչի՞նչ:

— Ես հիմա նրանց մոտից եմ գալիս: Հայրը ինչո՞ւ չհամաձայնի: Ընդհակառակն, նա արցունքն աչքերին լսեց իմ առաջարկությունը. գրկեց ինձ և ասաց, որ, հիմա կարող է հանգիստ մեռնել. որ նա գիտի, թե ում է վստահում իր դստեր երջանկությունը... «Գնացեք, ասում է, միայն ձեր հորեղբոր հետքերով»:

— Նա ասա՞ց այդ: Տեսնո՞ւմ ես, այստեղ էլ առանց հորեղբոր չի անցել:

— Իսկ ի՞նչ ասաց աղջիկը,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Դե... նա... գիտեք, այնպես, ինչպես բոլոր աղջիկները,— պատասխանեց Ալեքսանդրը:— Ոչինչ չասաց, միայն շիկնեց. իսկ երբ նրա ձեռքը բռնեցի, նրա մատները կարծես դաշնամուր էին նվագում իմ ձեռքի մեջ... կարծես դողում էին:

— Ոչինչ չասա՞ց,— նկատեց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Մի՞թե նեղություն չքաշեցիք այդ մասին նրանից իմանալ մինչև ձեր առաջարկությունը: Ձեզ համար միևնո՞ւյն է: Ուրեմն ինչո՞ւ եք ամուսնանում:

— Ինչպե՞ս թե ինչու: Շարունակ այսպես թրև չե՞մ գալու. ժամանակն է, ma tante, տեղում նստել, հիմնավորվել, սեփական տուն ունենալ, կատարել պարտքը... իսկ հարսնացուն լավիկն է, հարուստ... Դե, հորեղբայրս ձեզ կասի, թե ինչու է պետք ամուսնանալ, նա այնպես հիմնավոր է պատմում...

Պյոտր Իվանիչը կնոջից ծածուկ, ձեռքով նշան արավ Ալեքսանդրին, որ նա իրեն չվկայակոչի և լռի, բայց Ալեքսանդրը չնկատեց:

— Բայց կարող է պատահել, որ դուք նրան դուր չեք գալիս,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան:— Գուցե նա չի կարող ձեզ սիրել, սրան ի՞նչ կասեք:

— Հորեղբայր, ի՞նչ ասեմ: Դուք ինձնից լավ եք ասում... Դե, ես հենց ձեր խոսքերը կասեմ,— շարունակում էր նա, չնկատելով, որ հորեղբայրը պտտվում էր տեղում և նշանակալից հազում, որպեսզի կոծկեր այդ խոսակցությունը:— Եթե ամուսնանում ես սիրելով,— ասում էր Ալեքսանդրը,— սերն անցնում է և սկսում ես ապրել սովորույթի ուժով. ամուսնանում ես առանց սիրո՝ նույն արդյունքին ես հանգում, սովորում ես կնոջդ: Սերը սեր է, իսկ ամուսնությունը՝ ամուսնություն. միշտ չէ, որ համընկնում են այդ երկուսը, և լավ է, երբ չեն համընկնում... Ճիշտ չէ՞, հորեղբայր: Չէ՞ որ դուք այդպես էիք սովորեցնում:

Նա նայեց Պյոտր Իվանիչին և հանկարծ կանգ առավ, տեսնելով, որ հորեղբայրը նրան նայում է կատաղի: Ալեքսանդրը բերանը բաց, տարակուսանքով նայեց հորեղբոր կնոջը, հետո նորից հորեղբորը և լռեց: Լիզավետա Ալեքսանդրովնան մտածկոտ օրորեց գլուխը:

— Դե, ուրեմն ամուսնանո՞ւմ ես,— ասաց Պյոտր Իվանիչը:— Հիմա արդեն ժամանակն է, աստված հետդ: Թե չէ ուզում էիր քսաներեք տարեկան հասակում:

— Ջահելություն էր, հորեղբայր, ջահելությո՛ւն:

— Այդ է, որ ջահելություն:

Ալեքսանդրը մտածմունքի մեջ ընկավ, հետո ժպտաց:

— Ի՞նչ ես ժպտում,— հարցրեց Պյոտր Իվանիչը:

— Այնպես. մտքովս անցավ մի անհեթեթություն...

— Ինչպիսի՞...

— Երբ ես սիրում էի...— պատասխանեց Ալեքսանդրը մտախոհ,— այն ժամանակ ամուսնանալ չէր հաջողվում...

— Իսկ հիմա ամուսնանում ես, բայց սերը չի հաջողվում,— ավելացրեց հորեղբայրը, և երկուսն էլ ծիծաղեցին:

— Դրանից հետևում է, հորեղբայր, որ դուք իրավացի եք, երբ սովորությունը համարում եք գլխավորը...

Պյոտր Իվանիչը նորից գազանային արտահայտությամբ նայեց նրան: Ալեքսանդրը լռեց, չիմանալով, թե ինչ մտածի:

— Ամուսնանում ես երեսունհինգ տարեկան հասակումդ,— ասաց Պյոտր Իվանիչը,— դա ընդունված կարգ է: Բայց հիշո՞ւմ ես, ինչպես էիր այստեղ ջղաձգության մեջ ընկած դիվոտում, բղավում էիր, որ քեզ վրդովում են անհավասար ամուսնությունները, որ հարսնացուին քարշ են տալիս ինչպես ծաղիկներով ու ալմաստներով զարդարված զոհի, և մղում են տարիքավոր, մեծ մասամբ տգեղ, ճաղատ մարդու գիրկը: Հապա՛ ցույց տուր գլուխդ:

— Ջահելություն էր, ջահելությո՛ւն, հորեղբայր: Չէի հասկանում գործի էությունը,— ասաց Ալեքսանդրը, ձեռքով մազերը կոկելով:

— Գործի էությունը,— շարունակեց Պյոտր Իվանիչը:— Իսկ մի ժամանակ, հիշո՞ւմ ես, ինչպես էիր. սիրահարված, այդ անունն ի՞նչ էր... Նատաշայի՞ն թե ինչպես: «Կատաղի խանդ, խոյանքներ, երկնային երանություն»... ո՞ւր կորավ այդ բոլորը...

— Դե, դե, հորեղբայր, բավական է,— ասում էր Ալեքսանդրը կարմրելով:

— Ո՞ւր է «վիթխարի կիրքը, արցունքները»...

— Հորեղբա՛յր:

— Ի՞նչ: Բավական է անձնատուր լինել «անկեղծ զեղումներին», բավական է դեղին ծաղիկնե՛ր քաղել: «Միայնությունը ձանձրացրել է...»:

— Օ, եթե այդպես է, հորեղբայր, ես կապացուցեմ, որ մենակ ես չեմ սիրել, դիվոտել, խանդել, լացել... Թույլ տվեք, թույլ տվեք, ես գրավոր փաստաթուղթ ունեմ...

Նա գրպանից հանեց թղթապանակը և, բավական երկար քրքրելով թղթերը, դուրս քաշեց ինչ-որ շատ հին, գրեթե քայքայված ու դեղնած մի թերթիկ:

— Ահա, ma tante,— ասաց նա,— ապացույց, որ հորեղբայրս միշտ չի եղել այսպես դատող, ծաղրասեր և դրական մարդ: Նա էլ է ունեցել անկեղծ զեղումներ և դրանք հաղորդել է ոչ դրոշմաթղթի վրա, ըստ որում՝ հատուկ թանաքով: Չորս տարի ես հետս ման էի ածում այս պատառիկը և շարունակ առիթի էի սպասում հորեղբորս մերկացնելու: Ես նույնիսկ մոռացել էի սրա մասին, բայց ինքներդ հիշեցրիք:

— Ի՞նչ ցնդաբանություն է: Ես ոչինչ չեմ հասկանում,— ասաց Պյոտր Իվանիչը, թղթի պատառիկին նայելով:

— Ահա, ուշադիր նայեցեք:

Ալեքսանդրը թուղթը մոտեցրեց հորեղբոր աչքերին: Հանկարծ Պյոտր Իվանիչի դեմքը մթագնեց:

— Տո՛ւր, տո՛ւր, Ալեքսանդր,— բղավեց նա շտապ և ուզում էր խլել թղթիկը: Բայց Ալեքսանդրը ճարպկորեն ետ քաշեց ձեռքը: Լիզավետա Ալեքսանդրովնան հետաքրքրությամբ նայում էր նրանց:

— Ոչ, հորեղբայր, չեմ տա,— ասում էր Ալեքսանդրը,— մինչև չխոստովանեք այստեղ, ձեր կնոջ ներկայությամբ, որ դուք էլ մի ժամանակ սիրել եք, ինչպես ես, ինչպես բոլորը... Կամ այլապես այս փաստաթուղթը կհանձնվի նրա ձեռքը, ի հավերժական նախատինք ձեզ:

— Բարբարո՜ս,— բղավեց Պյոտր Իվանիչը:— Ի՞նչ ես անում ինձ հետ:

— Չե՞ք ուզում:

— Դե, դե, սիրել եմ: Տուր:

— Ո՛չ, թույլ տվեք, որ դուք դիվոտե՞լ եք, խանդե՞լ:

— Դե, խանդել եմ, դիվոտել...— կնճռոտվելով ասում էր Պյոտր Իվանիչը:

— Լացե՞լ եք:

— Ոչ, չեմ լացել:

— Ճիշտ չէ՞: Ես լսել եմ մորաքրոջիցս. խոստովանեցեք:

— Լեզուս չի պտտվում, Ալեքսանդր, տես, գուցե հիմա լաց լինեմ:

— Ma tante! Համեցեք փաստաթուղթը:

— Ցույց տվեք, այդ ի՞նչ է,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան, ձեռքը մեկնելով:

— Լացե՛լ եմ, լացել: Տո՛ւր,— հուսահատ բղավեց Պյոտր Իվանիչը:

— Լճի վրա՞:

— Լճի վրա:

— Եվ դեղին ծաղիկնե՞ր եք քաղել:

— Քաղել եմ: Այ դո՛ւ... Տո՛ւր:

— Ոչ, սա բոլորը չէ, ազնիվ խոսք տվեք, որ հավիտենական մոռացության կմատնեք իմ հիմարությունները և կդադարեք դրանք աչքս խոթել:

— Ազնիվ խոսք:

Ալեքսանդրը տվեց թղթի պատառիկը: Պյոտր Իվանիչը խլեց այն, մի լուցկի վառեց և տեղնուտեղը թուղթն այրեց:

— Գոնե ասացեք ինձ, թե ինչ էր դա,— հարցրեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

— Ոչ, սիրելիս, դա նույնիսկ ահեղ դատաստանի օրը չեմ ասի,— պատասխանեց Պյոտր Իվանիչը:— Եվ մի՞թե ես եմ գրել այդ: Չի՛ կարող պատահել...

— Դո՛ւք, հորեղբայր,— ընդհատեց Ալեքսանդրը:— Ես, հավատա, կասեմ, թե ինչ է գրած այդտեղ, ես անգիր գիտեմ. «Իմ սիրելի հրեշտակ»:

— Ալեքսա՜նդր: Ընդմի՛շտ կխռովենք,— բղավեց Պյոտր Իվանիչը բարկացած:

— Կարմրում են ինչպես հանցագործությունից, և ինչի՛ համար,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— առաջին քնքուշ սիրո:

Նա ուսերը թոթվեց և երեսը շրջեց նրանցից:

— Այդ սիրո մեջ այնքան շատ է... հիմարությունը,— ասաց Պյոտր Իվանիչը մեղմ, շողոքորթաբար:— Ահա իմ ու քո մեջ խոսք չի եղել անկեղծ զեղումների, ծաղիկների, զբոսանքների մասին լուսնի շողերով... բայց չէ՞ որ դու ինձ սիրում ես...

— Այո, ես շատ եմ... սովորել քեզ,— մտացրիվ պատասխանեց Լիզավետա Ալեքսանդրովնան:

Պյոտր Իվանիչը մտածմունքի մեջ սկսեց այտամորուսները շոյել:

— Ինչ է, հորեղբայր,— հարցրեց Ալեքսանդրը շշուկով,— դա այդպես էլ պե՞տք է:

Պյոտր Իվանիչը նրան աչքով արեց, կարծես ասելով. «Լռի՛ր»:

— Պյոտր Իվանիչին ներելի է այդպես մտածել և վարվել,— ասաց Լիզավետա Ալեքսանդրովնան,— նա վաղուց է այդպիսին, և կարծում եմ, ոչ ոք նրան չի ճանաչել այլ կերպ իսկ ձեզնից, Ալեքսանդր, ես չէի սպասում այդ փոփոխությունը...

Նա հոգոց հանեց:

— Ինչի՞ մասին հոգոց հանեցիք, ma tante,— հարցրեց Ալեքսանդրը:

— Առաջվա Ալեքսանդրի,— պատասխանեց նա:

— Մի՞թե կուզենայիք, ma tante, որ մնայի այնպես, ինչպես տասը տարի առաջ էի,— առարկեց Ալեքսանդրը:— Հորեղբայրս ճիշտ է ասում, որ դա հիմար երազականություն է...

Պյոտր Իվանիչի դեմքն սկսեց ցասկոտել: Ալեքսանդրը լռեց:

— Ոչ, ոչ այնպես,— պատասխանեց Լիզավետա Ալեքսանդրովնան,— ինչպես տասը տարի առաջ, այլ ինչպես չորս տարի առաջ, հիշո՞ւմ եք, ինչպիսի նամակ էիք գրել ինձ գյուղից: Որքա՜ն լավն էիք դուք այնտեղ:

— Ես, կարծեմ, այնտեղ էլ էի երազում,— ասաց Ալեքսանդրը:

— Ոչ, չէիք երազում: Այնտեղ դուք հասկացել, ձեզ բացատրել էիք կյանքը. այնտեղ դուք սքանչելի էիք, ազնիվ, խելացի... Ինչո՞ւ այդպես չմնացիք: Ինչո՞ւ դա միայն խոսքով էր, թղթի վրա, այլ ոչ թե գործնականում: Այդ սքանչելին փայլատակեց ինչպես արևը ամպի տակից՝ մի րոպեով...

— Դուք ուզում էիք ասել, ma tante, որ ես հիմա... խելացի չեմ և.. ազնիվ չեմ...

— Աստված մի՛ արասցե: Ո՛չ: Բայց հիմա դուք խելացի և ազնիվ եք... այլ կերպ, ոչ իմ ձևով...

— Ի՜նչ արած, ma tante,— ասաց բարձր հոգոցով Ալեքսանդրը:— Դարն է այդպես: Ես գնում եմ դարին համընթաց. չէ՞ որ չի կարելի ետ մնալ: Ահա ես կվկայակոչեմ հորեղբորս, մեջ կբերեմ նրա խոսքերը:

— Ալեքսա՜նդր,— կատաղի ասաց Պյոտր Իվանիչը:— Մի րոպեով գնանք առանձնասենյակս. քեզ պետք է մի խոսք ասեմ:

Նրանք գնացին առանձնասենյակ:

— Այդ ի՞նչ քամի է փչել քեզ այսօր ինձ վկայակոչելու,— ասաց Պյոտր Իվանիչը:— Դու տեսնո՞ւմ ես, ինչ վիճակում է կինս:

— Ի՞նչ է պատահել,— վախեցած հարցրեց Ալեքսանդրը:

— Դու ոչի՞նչ չես նկատում: Այն, որ ես թողնում եմ պաշտոնս, գործերս, ամեն ինչ, և նրա հետ մեկնում եմ Իտալիա:

— Ի՜նչ եք ասում, հորեղբայր,— զարմացած բացականչեց Ալեքսանդրը:— Չէ՞ որ այս տարի դուք գաղտնի խորհրդական եք դառնալու...

— Բայց տեսնո՞ւմ ես, գաղտնի խորհրդականի կինը վատ է…

Նա մի երեք անգամ մտախոհ անցուդարձ արեց սենյակում:

— Ոչ,— ասաց նա,— իմ կարիերան ավարտված է: Գործն արված է. ճակատագիրը թույլ չի տալիս առաջ գնալու… թո՛ղ:— Նա ձեռքը թափահարեց:

— Ավելի լավ է, քո մասին խոսենք,— ասաց նա,— դու, կարծես, գնում ես իմ հետքերով…

— Հաճելի կլիներ, հորեղբայր,— ավելացրեց Ալեքսանդրը:

— Հա՛,— շարունակեց Պյոտր Իվանիչը:— Երեսունը մի քիչ անց՝ կոլեգիական խորհրդական, պետական լավ ռոճիկ, կողմնակի աշխատանքներով լավ փող ես վաստակում, դրա հետ էլ ժամանակին ամուսնանում ես հարուստ աղջկա հետ… Այո, Ադուևևներն իրենց գործը գիտեն: Դու ամբողջովին ինձ ես քաշել, միայն պակասում է մեջքիդ ցավը…

— Դե արդեն երբեմն ծակում է…— ասաց Ալեքսանդրը, մեջքը շոշափելով:

— Այդ բոլորը սքանչելի է, իհարկե, բացի մեջքի ցավից,— շարունակեց Պյոտր Իվանիչը:— Խոստովանում եմ, ես չէի կարծում, թե քեզնից խելքը գլխին մի բան կստացվի, երբ դու եկար այստեղ: Դու շարունակ գլուխդ էիր մտցնում անդրշիրիմյան հարցեր, սլանում էիր երկինք… բայց ամեն ինչ անցավ՝ և փա՛ռք աստծու: Ես քեզ կասեի. շարունակիր ամեն ինչում ընթանալ իմ հետքերով, միայն թե…

— Միայն թե ի՞նչ, հորեղբայր…

— Այնպես… ես կուզենայի քեզ մի քանի խորհուրդ տալ… քո ապագա կնոջ կապակցությամբ…

— Ի՞նչ խորհուրդ: Դա հետաքրքիր է:

— Դե, ո՛չ,— շարունակեց Պյոտր Իվանիչը, փոքր-ինչ լռելով:— Վախենում եմ, հանկարծ ավելի վատ չստացվի: Վարվիր, ինչպես ինքդ գիտես. գուցե գլխի կընկնես… Ավելի լավ է, խոսենք քո ամուսնության մասին: Ասում են, հարսնացուդ երկու հարյուր հազար օժիտ ունի, դա ճի՞շտ է:

— Այո, երկու հարյուր հայրն է տալիս, հարյուր էլ մորից է մնացել:

— Դա երեք հարյո՛ւր է անում,— բղավեց Պյոտր Իվանիչը գրեթե վախեցած:

— Մեկ էլ նա այսօր ասաց, որ հենց հիմա մեր լիակատար տնօրինությանն է հանձնում իր բոլոր հինգ հարյուր հոգին, պայմանով, որ նրան վճարենք տարեկան ութ հազար: Ապրելու ենք միասին:

Պյոտր Իվանիչը բազկաթոռից վեր թռավ իրեն ոչ հատուկ աշխուժությամբ:

— Սպասիր, սպասի՛ր,— ասաց նա:— Դու ինձ շշմեցրիր. ես ճի՞շտ լսեցի: Կրկնիր, ինչքա՞ն:

— Հինգ հարյուր հոգի և երեք հարյուր հազար դրամ…— կրկնեց Ալեքսանդրը:

— Դու… կատակ չե՞ս անում:

— Ի՞նչ կատակ, հորեղբայր:

— Եվ կալվածքը… գրավ չի՞ դրված,— հարցրեց Պյոտր Իվանիչը կամացուկ, առանց տեղից շարժվելու:

— Ոչ:

Հորեղբայրը, ձեռքերը կրծքին խաչած, մի քանի րոպե հարգանքով նայում էր եղբորորդուն:

— Եվ կարիերա, և բա՛խտ,— ասաց նա գրեթե ինքն իրեն, Ալեքսանդրով հիացած:— Եվ ի՜նչ բախտ: Եվ միանգամից: Ամե՜ն ինչ: Ամե՜ն ինչ Ալեքսանդր,— հպարտ, հանդիսավոր ավելացրեց նա:— Դու իմ արյունն ես, դու Ադուևևն ես: Թող այդպե՜ս լինի, գրկի՛ր ինձ:

Եվ նրանք գրկախառնվեցին:

— Սա առաջի՞ն անգամն է հորեղբայր,— ասաց Ալեքսանդրը:

— Եվ վերջի՞ն,— պատասխանեց Պյոտր Իվանիչը:— Սա արտասովոր դեպք է: Հը՛, մի՞թե հիմա էլ քեզ պետք չէ անարգ մետաղը: Գոնե մի անգամ դիմիր ինձ:

— Ա՛խ, պետք է, հորեղբայր. բազմաթիվ ծախսեր կան: Եթե կարող եք տալ մի տասը, տասնհինգ հազար...

— Հազի՛վ, առաջի՞ն անգամ,— ազդարարեց Պյոտր Իվանիչը:

— Եվ վերջի՞ն, հորեղբայր. սա արտասովոր դեպք է,— ասաց Ալեքսանդրը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Գոնչարովի «Սովորական պատմությունը» պատկանում է ռուս գրականության դասական երկերի թվին: Բելինսկին այս վեպը գնահատել է որպես «սարսափելի հարված ռոմանտիզմին, երազականությանը, սենտիմենտալությանը, գավառայնությանը»՝ ճորտատիրական կացութաձևի այդ արգասիքներին:

«Սովորական պատմության» մեջ Գոնչարովը քննադատության է ենթարկել ռեակցիոն-ռոմանտիկ տրադիցիաները գրականության մեջ, դեմ է դուրս եկել այսպես կոչված «արվեստն արվեստի համար» տեսության, որն այդ ժամանակ դեռևս բավական ուժեղ ազդեցություն ուներ:

Մեծ քննադատի կարծիքով «Սովորական պատմությունը» Գոնչարովին դասել է «նատուրալ դպրոցի» ռեալիստ գրողների շարքը: Նա նշել է, որ «նատուրալ դպրոցի» հիմքը եղել է Գոգոլի ռեալիզմը և որ դրա գլխավոր սկզբունքները կայանում են «հասարակական կյանքի տարբեր կողմերը», իրականության բացասական կողմերը քննադատաբար պատկերելու ձգտման մեջ: Բելինսկին պնդում էր, որ քննադատական ռեալիզմը, իրականության նրա ժխտումը սուր զենք է ճորտատիրության և ինքնակալության դեմ մղվող պայքարում:

Ռեակցիոն ռոմանտիզմի էությունը Գոնչարովն արտահայտել է «Սովորական պատմության» հիմնական հերոս Ալեքսանդր Ադուևի միջոցով:

Իր վեպում Գոնչարովը չի սահմանափակվել ռեակցիոն ռոմանտիզմի գաղափարական էության մերկացմամբ, այլ նաև գեղարվեստական կերպարների ու պատկերների միջոցով բացահայտել է նրա սոցիալական և պատմական նախադրյալները: Այն հողը, որի վրա աճում էր այդ երևույթը, Գոնչարովը համարում էր կյանքի ճորտատիրական կացութաձևը, կալվածատիրական դաստիարակությունը:

«Սովորական պատմության» մեջ գրողը դատապարտում է ճորտատիրությունը, նահապետական-ավատական հարաբերություններն ու բարքերը:

Աննա Պավլովնա Ադուևայի կալվածքում տիրող կյանքի ու կենցաղի պատկերների պարզորոշ պատկերումը մեզ թույլ են տալիս պարզ տեսնելու այն սոցիալ-տնտեսական պայմանները, որոնք որոշել են Ալեքսանդր Ադուևի բնավորությունն ու հոգեբանությունը:

Գրաչին՝ Ադուևների կալվածքը, մինչռեֆորմյան ճորտատիրական էկոնոմիկայի մի կտորն է:

Ադուևը, որը դաստիարակվել է ճորտատիրական ազնվականության համար տիպիկ պայմաններում, կյանքի նպատակն ու երջանկությունը տեսնում է ոչ թե հասարակության բարօրության համար կատարվող աշխատանքի և ստեղծագործության մեջ, այլ «բարձր» գոյության, հոգեկան հաճույքի անընդհատ ազդեցության, փառքի, սխրանքի, սիրո մասին ունեցած անպտուղ երազանքների մեջ, այն ամենի մեջ, ինչ նրան «քաղցր դող» է պատճառում:

«Ադուևը,— գրում է Գոնչարովը իր «Լավ է ուշ, քան երբեք» հոդվածում,— վերջացրեց այնպես, ինչպես մեծ մասն այն ժամանակ՝ լսեց հորեղբոր պրակտիկ իմաստությանը, սկսեց աշխատել պաշտոնավայրում, գրում էր ժուռնալներում (բայց արդեն ոչ բանաստեղծություններ) և, վերապրելով պատանեկան շրջանի հուզումները, հասավ դրական բարիքների, ինչպես մեծամասնությունը, պաշտոնավայրում հաստատուն

դիրք գրավեց և ձեռնտու ամուսնացավ, մի խոսքով իր գործը տեսավ: Հենց դրանում էլ կայանում է «Սովորական պատմությունը»:

«Երբ ես գրում էի «Սովորական պատմությունը»,— ասում է Գոնչարովը նույն հոդվածում,— ես, իհարկե, նկատի ունեի նաև ինձ, և ինձ նման շատերին, որոնք սովորել են տանը կամ համալսարանում, ապրել են անդորրում, բարի մայրերի թևի տակ, հետո կտրվել են գրկանքից, տան օջախից, արցունքներով ճամփա դրվելով (ինչպես «Սովորական պատմության» առաջին գլուխներում) և հայտնվել են գործունեության գլխավոր ասպարեզում՝ Պետերբուրգում: Եվ այստեղ, մեղմաբարո, ծուլությունից ու աղայությունից երես առած երազող եղբորորդու և գործնական հորեղբոր հանդիպման մեջ ակնարկվում է այն մոտիվը, որը նոր-նոր սկսել է զարգանալ ամենաաշխույժ կենտրոնում՝ Պետերբուրգում: Այդ մոտիվը **աշխատանքի**, իսկական, ոչ թե հնապաշտական, այլ **կենդանի գործի** անհրաժեշտության գիտակցության թույլ առկայծումն է: Դա արտացոլվել է իմ փոքրիկ հայելու մեջ՝ չինովնիկական միջին շրջանում: Անկասկած նույնը, նույն ոգով, նույն եղանակով ու բնույթով, միայն տարբեր չափերով տեղի է ունեցել նաև այլ, ռուսական կյանքի թե բարձր, թե ստորին ոլորտներում...»

Գոնչարովի այս ասույթը շատ բան է պարզաբանում, երբ նա ձգտում է ապացուցել ռոմանտիկ Ադուևևի «դրական» մարդ դառնալու հնարավորությունը: Բելինսկին բացասաբար վերաբերվեց այդ դրույթին: Նրա կարծիքով ամենից լավ կլիներ կրտսեր Ադուևևին սլավոնաֆիլ դարձնել. «Այն ժամանակ հերոսը կլիներ միանգամայն ժամանակակից ռոմանտիկ,— նշում էր քննադատը,— և ոչ ոքի մտքով չէր անցնի, որ այդ կոփվածքի մարդիկ հիմա արդեն գոյություն չունեն» («Ակնարկ 1847 թվականի ռուս գրականությանը»):

Բացառված չէ, իհարկե, որ կյանքում ազնվական-կալվածատիրական երիտասարդության միջավայրից ելած ռոմանտիկները վերջացնեին հենց այնպես, ինչպես նկարագրված է վեպում: Բայց ավելի տիպական և քաղաքականապես սուր կլիներ Բելինսկու նշած ֆինալը, որովհետև այն ժամանակ հենց սլավոնաֆիլներն էին ռեակցիոն ռոմանտիկայի մարտնչող պրոպագանդիստները:

Գոնչարովի մտահղացմամբ Պյոտր Իվանովիչ Ադուևևի կերպարը մտցված է վեպի մեջ, որպեսզի գլխավոր հերոսի հետ իր հակադրությամբ ավելի ուժեղ ընդգծի նրան և «նախազգուշացնի» անպտուղ, ռոմանտիկ հափշտակություններից, որոնք երիտասարդությանը կտրում էին պրակտիկ գործունեությունից:

Բելինսկին նշում էր, որ ավագ Ադուևևը ոչ թե վերացական գաղափար է, այլ համարձակ, լայն ու ճշմարիտ նկարած կենդանի անձնավորություն: Սակայն այդ կերպարի մեջ մարմնավորված բուրժուական պրակտիցիզմի ու գործունեության որոշ իդեալը խորթ էր մեծ քննադատին, որովհետև նա հրաշալի տեսնում էր բուրժուազիայի ողջ անմարդկային ու բարոյազուրկ էությունը: Ահա թե ինչու Բելինսկին հետևցնում էր, որ հորեղբոր անձնավորությունը «դաս է դրական մարդկանց, առողջ բանականության ներկայացուցիչների», այսինքն՝ բուրժուականորեն սահմանափակ մարդկանց համար:

Պետք է նշել,որ չնայած Գոնչարովը որոշ չափով իդեալականացնում էր ավագ Ադուևևի պրակտիցիզմն ու գործունեությունը, վեպի վերջում ցույց է տվել նրա ողջ չորությունն ու անհոգությունը: «Նայում է, թե ինչ կա մարդու գրպանում և ֆրակի մերակին, իսկ մնացածի հետ գործ չունի, մտքում միայն փողն է»,— Պյոտր Իվանովիչի մասին ասում է նրա կինը:

«Սովորական պատմության» վրա Գոնչարովն աշխատել է 3 տարի և վեպն առաջին անգամ տպագրվել է 1847 թ., այն ժամանակվա առաջավոր «Սովրեմեննիկ» ժուռնալում: Նշելով Գոնչարովի երկի նորարարական բնույթը, Բելինսկին իր «Ակնարկ 1847 թվականի ռուս գրականությանը» հոդվածում գրում էր. «Սովորական պատմության» հեղինակը մեր գրականության մեջ միանգամայն նոր, բայց նրանում արդեն առաջին տեղերից մեկը գրաված դեմք է»: Դեմոկրատական քննադատության մեծ մասը ողջունում էր նոր տաղանդը: Սակայն սլավոնաֆիլական «Մոսկվիտյանինը» և բուլգարինյան ռեակցիոն «Սևեռնայա պչելան» հարձակվում են Գոնչարովի վրա: Նրանք միանգամից հանձին նրա ճանաչեցին իրենց հակառակորդին: Գոնչարովը բացասաբար էր վերաբերվում սլավոնաֆիլների ձգտումներին, որոնք փորձում էին վերածնել հնացած, իր դարն ապրած կացութաձևը և ետ շրջել Ռուսաստանը: Նույն ձևով Գոնչարովը մերժում էր բուրժուական կոսմոպոլիտիզմի գաղափարները, կոսմոպոլիտիզմ, որը անտեսում է ռուս ժողովրդի կենսական ազգային շահերը և թերագնահատում է նրա հոգևոր ուժերն ու ընդունակությունները ինքնուրույն զարգացման համար:

Գոնչարովը ամեն ինչում խորապես ռուս, յուրօրինակ գրող էր: Նրա ստեղծագործության մեջ որևէ նմանողության բացակայությունը, որպես

կարևոր արժանիք, նշում էին և Բելինսկին, և Դոբրոլյուբովը: Չերնիշևսկին նույնպես Գոնչարովի արժանիքն էր համարում այն, որ նա իր բոլոր երկերում մնում է «նա ինքը»:

Գոնչարովի ստեղծագործությունը հարստանում էր ռուս գրականության ռեալիստական տրադիցիաներով: Ասելով, որ «ռուս գրականության մեջ հիմա Պուշկինից ու Գոգոլից դեռևս ոչ մի կերպ չես կարող զերծ մնալ», Գոնչարովը ռեալիստական արվեստի խնդիրը ձևակերպում էր հետևյալ կերպ. «Մարդկային բնության մեջ պատկերել միայն լավը, լուսավորը, ուրախալին՝ նշանակում է սքողել ճշմարտությունը: Այսինքն՝ պատկերել ոչ լիակատար, ուստի և սխալ... Լույսը առանց ստվերի պատկերել չի կարելի...»: Ուստի արվեստը, վիպասանի կարծիքով, «մարդու համար պետք է լինի նաև նրա հիմարության, այլանդակության, կրքերի անշողոքորթ հայելին, մի խոսքով՝ լուսաբանի կյանքի բոլոր խորունկները, բացատրի նրա թաքուն հիմքերը և ամբողջ մեխանիզմը»:

Գեղարվեստական պատկերման հենց այդ մեթոդն է, որ պայմանավորել է «Սովորական պատմության» մեջ իրականության վարպետ պատկերումը, նրա կերպարների տիպականությունն ու ճշմարտացիությունը:

«Սովորական պատմության» առանձնահատուկ արժանիքների շարքը պետք է դասել այդ ստեղծագործության լեզուն՝ «վճիտ, ուղիղ, թեթև, ազատ, հոսուն լեզուն» (*Բելինսկի*): Որպես խոսքի իսկական վարպետ, Գոնչարովը խորապես ընկալել և յուրովի ստեղծագործաբար հարստացրել է Պուշկինի ստեղծած՝ ռուս գրական լեզվի նվաճումները: